

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՉՈԼԱՔԵԱՆ ՅԱԿՈՒ ՄԱՐՏԱՅԻ

ՔԵՍԱՊ

(ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Ատենախոսություն

Է. 00.04 «Ազգագրություն» մասնագիտությունը
պատմական գիտություններում դոկտորի
գիտական աստիճանի համար

ԵՐԵՒԱՆ –2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.....	3
ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՔԵՍԱՊԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԾՐՁԱՆԸ	19
1.1 Գաղթավայրի կազմությունը	19
1.2. Տարածքը, բնակչությունը եւ բնակավայրերը	30

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՔԵՍԱՊԻ ՇՐՋԱՆԸ 19-ՐԴ ԴԱՐԷՆ ԵՏՔ	63
2.1. Յարանու անակ ան քաժանու մներ եւ ազգայ ին զարթունք	63
2.2. 1908-ի Օսմանեան սահմանադրու թենէն ետք	69
2.3. Վերապրողներու տուն դարձ եւ ֆրանսական գաղութատիրութիւն	86
2.4. Քեսապը Սուրիոյ անկախացումէն ետք	96
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՆԻԲԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ.....	120
3.1. Երկրագործութիւն	120
3.2. Անասնապահութիւն	149
3.3. Արհեստներ եւ առեւտուր	161
3.4. Տունը	168
3.5. Տարազը	183
3.6. Խոհանոցը	190
3.7. Տուրքեր	201
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՀՈԳԵԻՈՐ ՄՇԱԿՈՅԹ.....	205
4.1. Հասարակական յարաբերութիւններ	205
4.2. Ընտանիքի կազմութիւնը	215
4.3. Տօները	238
4.4. Խաղերը	256
4.5. Ժողովրդական բժշկութիւն	269
4.6. Հաւատալիքներ	273
ՎԵՐՋԱԲԱՆ	286
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ	289
ՅԱԲԵԼՈՒԱԾ	306

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պատմական Անտիոք, Սելեւկիա, Աֆամիա եւ Լաւոդիկէ-Լաթաքիա քաղաքներու աշխարհագրական շրջանակին մէջ հայ տարրի մը գոյութեան փաստը մինչեւ Տիգրան Մեծի իշխանութեան տարիները փնտռելով հանդերձ, ուսումնասիրողներու մօտ կը տիրէ այն կարծիքը, թէ Անտիոքի շրջանի մէջ հայութիւնը խիտ հաւաքականութիւն մը կը ներկայացներ յատկապէս 9-12-րդ

դարերուն: Յայ, բիւզանդացի, արաբ ու լատին մատենագիրները, պատմագիրներն ու ժամանակագիրները բաւականաչափ վկայ ու-թիւններ կու տան Անտիոքի շրջանի միջնադարու հայ հոծ գաղթականութեան ու ընդհուլ կը խօսին Անտիոքի մէջ լրիւ անկախութեան հասնելու անոր նպատակներուն մասին¹:

Անտիոքի լատին դքսութեան կործանումէն ետք, յատկապէս մեմլուքեան արշաւներուն, ապա օսմանեան իշխանութեան հաստատուելուն ու մեծաթիւ թուրքմէն քոչուորներու տարածաշրջանին մէջ հուրով ու սուրով կայք փնտռելու հետեւանքով մեծապէս կը փոխուի հայ ազգաբնակչութեան պատկերը, որ 19-դ դարուն մեզի կը ներկայանայ հետեւեալ հինգ գիւղախումբերով.

ա.- Պէյլանի գաւառակը, տասնեակ մը զուտ հայաբնակ ու մէկերկու հայ-թուրք խառն բնակչութեամբ բարբառախօս գիւղերով:

բ.- Սուէտիոյ գաւառակը, եօթը զուտ հայաբնակ բարբառախօս գիւղերով:

գ.- Քեսապի գաւառակը, կեդրոնական ւանով ու տասնեակ մը զուտ հայաբնակ բարբառախօս գիւղերով:

դ.- Ռուճի հովիտի եւ Քիւրտ տաղի վրայ ցրուած գիւղակները (Եագուպիէ, Գնիէ, Արֆալի, Եամատի, Արմանճօ, Կէօջչու, Վերին Թընզըրի եւ այլն) զուտ հայաբնակ արաբախօս գիւղերով:

ե.- Լաւոդիկէի մերձակայ շրջանները, ուր մնացած էին միայն Արամօ եւ Ղնեմիէ զուտ հայաբնակ բարբառախօս գիւղերը (քարտեզը՝ Յաւելուած թիւ 1):

Ասոնք, ընդհանուր սերտգիծեր պահելով հանդերձ, 19-րդ դարուն արդէն կը ներկայանան իբրեւ ազգագրական տարբեր շրջանակներ՝ իրենց առանձին բարբառներով, բնահիւսութեամբ, պատմութեամբ, տնտեսութեամբ, աշխատանքի տեսակներով, վարչական, թեմական ու ճակատագիրի որոշակի տարբերութիւններով, նիւթական եւ հոգեւոր

¹ Անտիոք քաղաքի ու շրջակայքի միջնադարու հայ հոծ գաղթականութեան մասին տե՛ս **Յ. Չոլպեան**, Անտիոքի մերձակայ Ռուճի Հովիտի Յայերը, Պատմագագագրական Ուսումնասիրութիւն, Անթիլիաս, 2006, էջ 27-88:

մշակոյթի առանձնայն առկու թիւ ներոյ:

1909-ի Աղետին, 1915-ի Մեծ Եղեռնին, 1939-ի Աղեքսանդրէթի սանճաքի Թուրքիոյ կցումին, 1947-ի հայրենադարձութեան եւ յետագայ տարիներու արտահոսքին հետեւանքով այս գուտհայ քնակ շրջանակներէն ոմանք հայաթափեղան, իսկ միւսները կորսնցուցին իրենց բնակչութեան միատարր պատկերը: Աղեքսանդրէթի սանճաքի նախկին տարածքին մէջ միակ հայաքնակ գիւղը մնաց ու կը շարունակէ իր գոյութիւնը Սուէտիոյ ՎագրՖ (ՎագրՖլի) գիւղը: Սուրիոյ տարածքին մէջ մնացած Որոնդէսի հովիտի հայ բնակավայրերէն իրենց գոյութիւնը շարունակեցին Եագուպիէ (կիսով լատինադաւան) եւ Գնիէ (ամբողջապէս լատինադաւան) արաբախօս գիւղերը: Ղնեմիէ եւ Արամօ գիւղերը 1947-ի հայրենադարձութեան հետեւանքով կորսնցուցին իրենց գուտհայ քնակ շրջանակները լիւալ ու հանգամանքը ու կամաց-կամաց գրեթէ հանգեցան:

Սուրիական վերջին ու դեռ շարունակուող պատերազմին՝ Եագուպիէ եւ Գնիէ գիւղերը ինկան իսլամ ծայրայեղականներուն ձեռքը: Տեղացիք ապաստանեցան արտասահման կամ երկրի աւելի ապահով վայրերը: Ղնեմիէ գիւղէն եւս հեռացան վերջին քանի մը ընտանիքները:

Քեսապի գիւղախումբի բնակչութիւնը ծանօթէն կրեց հայ ժողովուրդին վիճակուած վերջին մէկ-մէկուկէս դարուն ծանօթ պատմական բոլոր ցնցումները: Կը բաւէ յիշել, որ երեք անգամ՝ 1909-ի Կիլիկեան կոտորածներուն, 1915-1918-ին՝ Մեծ Եղեռնի տարիներուն, ու 2014-ին, ամբողջապէս ենթարկուեցաւ տեղահանութեան ու տարագրութեան, կորսնցուց թիւ, նիւթական հսկայական կորուստներ ունեցաւ, բայց միշտ կարողացաւ վերադառնալ ու վերականգնել իր տունն ու տեղը:

Ներկայիս Սուրիոյ Լաթաքիոյ նահանգին մաս կազմող Քեսապի գաւառակն է միայն, որ համանուն աւանով ու շրջակայ տասնեակ մը գիւղերով կը պահէ բնիկ բնակչութեան մը գերակշռութիւնը՝ իր բարբառով, նիւթական ու հոգեւոր մշակոյթի իր աւանդներով,

եկեղեցական, կրթական ու ազգային կառոյցներով եւ հայ ինքնութեան բարձր գիտակցութեամբ:

Մեր անենախօսութեան նպատակն է համապարփակ ուսումնասիրութեամբ ներկայացնել Քեսապի հայ գաղթավայրի, իբրեւ պատմա-ազգագրական ինքնուրոյն միջավայրի մը, պատմութիւնն ու ազգագրութիւնը:

Ուսումնասիրութեան **արդիականութիւնը** իր հնչեղութիւնը չէ կորսնցուցած երկրորդ Աշխարհամարտի աւարտէն ի վեր, երբ հայրենադարձութեան ու արտագաղթի պատճառով շրջանը սկսաւ կորսնցնել իր զուտ հայաբնակ ըլլալու հանգամանքը, իսկ տնտեսութեան հիմնական փոփոխութիւններու հետեւանքով կենցաղէն դուրս մնացին աշխատանքի բազմաթիւ տեսակներ, նիւթական եւ հոգեւոր մշակոյթի շատ տարրեր: Քեսապը իբրեւ հայութեան պատմա-ազգագրական ուրոյն շրջանակ, մասնակի պատկերացումներով կը ներկայանար հայագիտութեան տարբեր բնագաւառներուն՝ պատմութեան, ազգագրութեան, բանագիտութեան ու բարբառագիտութեան: Մինչեւ վերջին շուրջ քառասուն տարիներուն ընթացքին մեր կատարած եւ հրատարակած ուսումնասիրութիւնները, համապարփակ ուսումնասիրութիւններ չկային գաղթավայրի պատմութեան ու բարբառին մասին: Բոլորովին անծանօթ կը մնային յատկապէս ազգագրութիւն ու բանահիւսութիւնը: Վերջերս, սուրիական տագնապին ստեղծած իրադրութեան մէջ, օրհասական պահեր ստեղծուեցան Քեսապի հայութեան համար: Վտանգը կը սպառնար ոչ միայն հայկական գաղթավայրի մը գոյութեան, այլ հայկական տոհմիկ մշակոյթի մը գոյատեւումին: Անգամ մը եւս հրամայական անհրաժեշտութիւն կը դառնար համապարփակ ու գիտական ձեւով ու շարժութեան առարկայ դարձնելու Քեսապի շրջանի հայոց պատմութիւնն ու ազգագրութիւնը:

Ահա այդ թելադրանքով կատարուած է այս ուսումնասիրութիւնը;

Անենախօսութեան **նպատակն** ու **խնդիրները** եղած են

Ներկայացնել .

- Անտիոքի շրջանի 18-19-րդ դարերուն հինգ խմբաւորումներով ներկայացող հայու թիւնը՝ իբրեւ 9-12-րդ դարերուն Անտիոքի շրջանին մէջ հաստատուած հայ հոծ բնակչութեան մնացորդացը:

- Քեսապի հայկական գաղութի կազմաւորումը Անտիոքի շրջանի հայու թյան 15-16-րդ դարերուն ապրած ներքին տեղաշարժերուն հետեւանքով:

- Էթնո-լեզուական եւ Էթնո-կրօնական տարբեր հաւաքականութիւններուն օղակին մէջ գոյատեւելու համար հայերէն բարբառի ու ազգագրական տարրերուն իւրայատկութեան դերի բացայայտումը:

- Եգիպտոսի տասնամեայ իշխանութեան տարիներուն (1832-1842) Սուրիոյ մէջ քրիստոնեայ բնակչութեան տնտեսական, հասարակական եւ կենցաղային փոփոխութիւններուն արտաքին եւ ներքին պատճառները:

- Օտարադաւանութեան մուտք գործելու ներքին (ներհայկական) եւ արտաքին (արտահայկական) պատճառները:

- Ազգային գաղափարական-եղափոխական շարժումներուն դերը միջ-յարանուանական հակամարտութիւններուն նահանջին, ազգային կրթութեան տրուած կարելորութեան եւ ազգային արժէքներուն վերագնահատման մէջ:

- 1909-ի աղետը, անոր յաջորդող վերելքի տարիներն ու 1915-ի տարագրութիւնը:

- 1919-1922 անիշխանութեան տարիներուն տուն դարձած քեսապի վերապրողներուն ինքնապաշտպանութեան փորձառութիւնը:

- Ներքին եւ արտաքին ուժերուն դերը 1939-ին Յաթայի պետութեան կազմէն Քեսապի շրջանին դուրս գալու եւ սուրիական պետութեան մասկազմելու գործին մէջ:

- Կուսակցական հակամարտութիւններուն արտացոլումը յարանուանական-եկեղեցական, միութենական ու կրթական կյանքին մէջ:

- 1947-ի գանգուածային հայրենադարձութեան պատճառներն ու

հետեւ անքնները:

- Քեսապի կապուածութիւնը Լաթաքիոյ, Յալէպի ու Պէյրութի թեմական-եկեղեցական, կրթական ու մշակութային-միութենական կեդրոններուն հետ: Լիբանանի, Արաբական ծոցի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Քանադայի քեսապցիներու ներդրումը Քեսապի գաղութի պահպանման ի խնդիր:

- Յայկական ինքնութեան պահպանման գործին մէջ բարբառին եւ ազգագրութեան տոհմիկ տարրերու դիմաց հայ եկեղեցւոյ, դպրոցի ու ակումբի դերի գերազանցութիւնը արդի կեանքին մէջ:

- 21 Մարտի 2014-ին ծայրահեղ իսլամական միաւորումներու Թուրքիայէն Քեսապներխուժումը եւ անոր հետեւ անքնները:

- Երկրագործութեան ու անասնապահութեան մէջ քեսապցիների աշխատանքի հիմնական տեսակները, միջոցները, բերքերն ու արտադրութիւնները մինչեւ 1950-ական թուականները:

- Ապրանքափոխանակութեամբ, կիսրարութեամբ ու քառորդով ապրուստ հայ թայթելու կերպերը փակ տնտեսութեան պայմաններուն մէջ:

- Դարաւոր անդոյթներու արտայայտութիւնները աշխատանքի որոշ տեսակ-ներու, գործիքներու եւ իրերու անուանումներուն եւ հայ գիւղացիի ըմբռնումներուն մէջ:

- 19-րդ դարու կէսերէն մինչեւ 1939 թուական, երբ Քեսապը նոր սահմանագծումի հետեւ անքով մեկուսացաւ, գիւղատնտեսական արտադրութիւններու հաւաքման ու արտածման մէջ Քեսապի շուկային կատարած առաջատար դերին գաղտնիքները:

- Տնայնագործութեան ու արհեստներու պատկերը հին Քեսապի մէջ:

- Քեսապի տան ու յարակից բաժիններու կառոյցն ու յարդարանքը, տարազի նկարագրութիւնը, մթերքներ պատրաստելու եղանակներն ու խոհանոցին առօրեայ եւ ծիսական պատկերը:

- Յասարակական յարաբերութիւններուն, ընտանիքի կազմութեան, տոնակատարութիւններուն, խաղերուն, ժողովրդական բժշկութեան հետ կապուած բոլոր ծեսերն ու արարողութիւնները,

կերպերը, տեսակները, անոնց առնչուող ըմբռնումներն ու հաւատալիքները, որոնք բազմաթիւ երանգներով կը լրացնեն հայ ազգագրութեան հարուստ գանձարանը;

- Վեր հանել ազգագրական շատ երեւոյթներու հետ կապուած ժողովրդական բառ ու բանի, երգ ու պարի, խաղ ու ծեսի առկայութիւնը, առանց որոնց թերի ու նոյնիսկ անիմաստ կը դառնան անոնք:

- 20-րդ դարու կէսերուն շրջան հասած ճարտարագիտութեան ու հողորդակցութեան բերած փոփոխութիւնները տնտեսութեան մէջ, աշխատանքի նախկին ձեւերու եւ միջոցներու մոռացութեան մատնուիլը, կենցաղի հին ու տոհմիկ շերտի եւ բարբառի մաշումը, ընտանիքի կազմութեան, տոնակատարութիւններու, խոհանոցային ան-դոյթներու, ծեսերու եւ հասարակական յարաբերութիւններու մէջ նկատուած փոխակերպումը կամ նախկինէն որոշ տարրերու մասնակի պահպանումը իբրեւ ինքնութեան իւրայատուկ դրսեւորում:

Ուսումնասիրութեանս հիմնական աղբիւրները նախ եղած են **տպագիր նիւթերը**: Գաղթավայրի մասին առաջին գրաւոր յիշատակութիւնները կու գան 19-րդ դարու կէսերէն: Ճանապարհորդներն ու թղթակիցները, Կ. Պոլսոյ մէջ հռչակուած Ազգային Սահմանադրութեան լոյսին տակ, ցոյց կու տան հայոց, իմա՝ հայ առաքելական համայնքի տնտեսական, եկեղեցական ու կրթական անմիփթար վիճակը, եւ փրկութիւնը կը տեսնեն Յայ Առաքելական եկեղեցւոյ թեմական իշխանութիւններու վերահաստատման մէջ: Քեսապին կ'անդրադառնան Երուսաղէմի «Սիօն»ը, Կ. Պոլսոյ «Մասիս»ը, Չմիւռնիոյ «Արեւելեան Մամուլ»ը եւ այլն: Այդ գրուածքներէն կարելոր են հետեւեալները.- Չաքարիա Վարդապետ, Լադաքիոյ Յայաբնակ Գիւղօրէից Ստորագրութիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը («Սիօն», 1866, թիւ 7, 1 Յունիս, էջ 97-103), Անստորագիր, Թղթակցութիւն Լադաքիոյ («Սիօն» ամսագիր, Երուսաղէմ, 1866, թիւ 10, 1 Յունիս, էջ 150-154), Անստորագիր, Կիլիկիոյ Վիճակը, («Արեւելեան Մամուլ», Չմիւռնիա, 1880,

Սեպտեմբեր, էջ 298-301), Կ. Ղազանճեան, ճամբու Նօթեր, («Մասիս», Կ. Պոլիս, թիւ 2523, 12 Յունուար 1880)², Թղթակից Բերիոյ, Կիլիկեան Սոցցուած Անկիւններ («Արեւելեան Մամուլ», 1906, թիւ 49, 29 Նոյեմբեր, էջ 1199-1203), Թղթակից Բերիոյ, Կիլիկեան Յարցեր, («Արեւելեան Մամուլ», 1907, թիւ 5, 31 Յունուար, էջ 134-136): Անտիոքի շրջանի հայոց մասին բոլոր տեղեկութիւնները կը տրուին միշտ Կիլիկիոյ շրջագիծին մէջ:

1909-ի Կիլիկեան կոտորածները պատճառ կը հանդիսանան, որ Կիլիկիոյ, մասնաւորաբար Անտիոքի շրջանի շատ բնակավայրեր առաջին անգամ ըլլալով համազգային ուշադրութեան առարկայ ըլլան: Քեսապի Աղէտին մասին Կ. Պոլսոյ «Բիւզանդիոն»ը իր Մարտէն Յունիս ամիսներու թիւերուն մէջ յաճախակի լուրեր կը հաղորդէ Քեսապի շրջան կատարուած ներխուժումին, կողոպուտին, քեսապցիներուն Լաթաքիա տեղահանութեան, ապա խաղաղութեան հաստատման ու գաղթականներուն տունդարձին մասին: Կարելորէն Անստորագիրի մը կողմէ «Քեսապի Դէպքը (Ականատեսի Պատմութիւն)» («Լուսաբեր-Արեւ», Գահիրէ, 13 Մայիս 1909) յօդուածը, Լաթաքիոյ ամերիկացի միսիոնարուհիներ համահեղինակակից Մաթի Ուիլիքի Եւ Չատա Փաթընի տեղեկագիրը, Սթիֆէն Ռ. վան Թրոպիճի «Քեսապի Կողոպուտը» յօդուածը³: Քեսապի Աղէտին մասին առատնիւթերուն Յակոբ Յ. Թէրզեանը «Կիլիկիոյ Աղէտը» տեղեկագրական գիրքին (Կ. Պոլիս, 1912) եւ Լաթաքիոյ դատարանի անդամ Եոսէֆ Էլ-Յաքիմը «Սուրիա Ուա Էլ-Աիտ Էլ-Ուսմանի» (Սուրիան եւ Օսմանեան Դարաշրջանը) արաբերէն յուշագրութեան մէջ (Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1980, էջ 179-181) եւ այլն: Քեսապցիներուն տունդարձին ու վերականգման աշխատանքներուն մասին կը պատմէ Վահան քին. Կիւլտալեանի «Կիլիկիոյ Աղէտէն Վերջ» յօդուածը («Տաթեւ» կրօնական տարեցոյց, Յալէպ, Դ. տարի, 1928, էջ 232):

Յետեղեռնեան շրջանին որոշ կարելորութիւն կը ներկայացնեն

² Տես նաեւ Կ. Ղազանճեան, Խառն Նամակներ Ուղեւորութեան, Կ. Պոլիս, 1886:

³ M. Wylie, and Z. Patton, News of Churches Abroad, Olive Trees, U. S. A., 1909, pp. 151-152; S. Trowbridge, The Sack of Kesab, Olive Trees, U. S. A., 1909, pp. 205-210.

յատկապէս հին բնայավայրերու շրջագիծին մէջ նաեւ Քեսապին անդրադարձող Գր. Գապէնճեանի «Սուրիա Քաղաքական, Կրօնապատմական, Կրթական եւ Տնտեսական Տեսակետով» («Տաթեւ» տարեգիրք, Զալէպ, Բ. տարի, 1926, էջ 274-312 եւ Գ. տարի, 1927, էջ 224-256), Արշակ Ալպոյաճեանի «Յայ Գաղութներու Ներկայ Կացութիւնը» («Յայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 1929, թիւ 3-7), Բիւզանդ եղիայեանի «Յայեր Սուրիոյ եւ Լիբանանի Մէջ» («Յայաստանի Կոչնակ», 1948, թիւ 29, էջ 677-679) յօդուածները: Քեսապի ներքին կեանքին մասին շարք մը թղթակցութիւններ ունին Աղեքսանդրէի «Չարթօնք» թերթի 1923-ի թիւերը:

1920-ական թուականներու վերջերէն սովորութիւն կը դառնայ Քեսապի յարանուանական-եկեղեցական, կրթական-միութենական կեանքի պարբերական պատկերները, իբրեւ թղթակցութիւն, տարին մէկ-երկու անգամ տալ Սուրիոյ եւ Լիբանանի համապատասխան պաշտօնաթերթերուն (Անթիլիասի «Հասկ» ամսագիր, աւետարանականներու «Նոր Աւետարտ», ապա «Չանասեր», կաթողիկէներու «Աւետիք», «Մասիս» «Չուարթնոց», Զալէպի օրաթերթերէն «Եփրատ» եւ «Արեւելք»): 1970-ական թուականներէն ետք տարեկան թղթակցութիւններու ձեւով նիւթեր կ'երեւին Պէյրութի «Ազդակ», «Չարթօնք» ու «Արարատ» օրաթերթերուն, եւ աւելի յաճախ՝ Զալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ: Այդպիսի նիւթեր ունի նաեւ Ամերիկայական Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան Kessabtzis հասցեագիրք-տարեգիրքը:

1940-ական թուականներէն ետք կը հրատարակուին նաեւ առանձին գիրքեր, ինչպէս՝ տեղւոյն աւետարանական համայնքի համառօտ պատմականը ընող Վեր. Կարապետ Ս. Թիլքեանի «Իննսու նիինգամեակ Քեսապի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ, 1853-1948» (Պէյրութ) գիրքը, Ալպէռ Ս. Թեմիրեան «Քեսապ» գիրքին (Պէյրութ, 1956) մէջ գլխաւորաբար նիւթ կ'ընէ 1890-1940-ական թուականներու իրադարձութիւնները: Մովսէս Շահպազեանի «Յայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհ-համարտին (1917-1920)» (Սուրիա-Քեսապ, 1965) գրքոյ կը կը ներկայացնէ քեսապցի լեգէոնականներու մարտական կեանքի եւ

Քեսապի Ազգային Միութեան (1919-1922) գործունեութեան ամփոփ պատկերը: Ուշագրաւ է Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէյրուսի Մասնաճիւղի հրատարակած «Ալպոմ Քեսապի Եւ Շրջակայից» (Պէյրուս, 1955) պատկերագիրքը՝ իր հակիրճ, բայց Քեսապի կեանքի զանազան երեսները ընդգրկող տեղեկութիւններով: Առանձին յօդուածներով կամ առանձին գիրքերու անջատ գլուխներով կը տրուին Քեսապի տարբեր համայնքներու պատմականը, ինչպէս հ. Պետրոս Ադամեանի «Անտիոքի Անտոնեան Թեմը Եւ Քեսապի Ու Շրջակայքի Հայ Կաթողիկէ Առաքելութիւնը (1851-1948)» («Աւետիք», Պէյրուս, 1948, թիւ 7-8), Վեր. Տիգրան Ճ. Խլիոբեան, «Ոսկեմատեան Հայ Աւետարանական Միութեան Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու», Ա. հատոր (Պէյրուս, 1950), ուր հանգամանօրէն կը տրուի նաեւ Քեսապի եւ շրջակայքի հայ աւետարանական եկեղեցիներու պատմութիւնը: Սուրիահայ գաղութի պատմութեան նուիրուած լուրջ ուսումնասիրութիւններ են.- **A. K. Sanjian**, *The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion*, Harvard University Press, 1965, **Յ. Թովուզյան**, *Սիրիայի և Լիբանանի հայ կական գաղթօճախների - պատմություն (1841-1946)*, Երևան, 1986: Ասոնք այդ շրջագիծին մէջ անդրադարձած են նաեւ Քեսապի շրջանին եւ այլն:

Քեսապի բարբառը ուշադրութեան արժանացած է հայ բարբառագիտութեան հիմնադիր Հրաչեայ Աճառեանի կողմէ՝ Կիլիկիոյ բարբառի ըհդհանուր շրջագիծին մէջ: Արարատ Ղարիբեան հայրենադարձ քեսապցիներէ քաղուած նիւթերով կը բերէ բարբառի իր համառօտ նկարագրութիւնը. «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջ» (Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ Հասարակական Գիտությունների, 1952, թ. 8) եւ «Հայ բարբառագիտութիւն» (Երևան, 1953, էջ 443-457) ուսումնասիրութիւններով: Լոյս կը տեսնէ նաեւ

Տիգրան Անդրեասեանի «Սվեդիայի բարբառը կամ Քիստինիգիլեզուն» (Երևան, 1967), որ կ'անդրադառնայ նաեւ Քեսապի բարբառին ու Անտիոքի հայոց ծագման հարցերուն:

Քեսապ գեղարուեստական բնոյթի գրականութեան մէջ առանձին հատորներով կը սկսի երեւիլ Ալպերթ Աբելեանի «Անտիոքցիները»

անգլերեն վեպով (**A. S. Apelian**, *The Antiochians*, Boston, 1960) եւ Գեորգ Աբելեանի «ՅԷԼԷ՛, ՅԷԼԷ՛, ՅԷԼԷ՛... Քեսապ» պատմուածք-ներու ժողովածուով (ՊԵՅՐՈԼԹ, 1968): Ասոնց մէջ ազգագրական նիւթի լայն օգտագործմամբ առանձնապէս ուշագրաւ են «Արարատ» օրաթերթին մէջ 1980-1990-ական թուականներուն լոյս տեսած Յովհաննէս Պաճազեանի ակնարկներն ու պատմուածքները⁴:

Պետք է նշել, որ շրջանի գլխաւորաբար պատմական դէպքերուն, եկեղեցական համայնքներուն ու բարբառին անդրադարձող այս նիւթերը մասնակի անդրադարձումներ են ու չունին համապարփակ ու ամբողջական ըլլալ ու միտումներ:

Աղբիւրներու երկրորդ խումբը կը ներկայացնեն **անտիպ գործերն եւ արխիւային նիւթերը**: Մենք յայտնաբերած, օգտուած ու ամբողջական հրատարակուած արժանաւորուած ենք մինչ այդ անտիպ մնացած ուսումնասիրական որոշ գործեր, յուշագրու-թիւններ, բաւական առատ արխիւային նիւթեր ու թղթածրարներ, ինչպէս Մովսէս վրդ. Ոսկերիչեանի 1911-ի մարդահամարը⁵, Տոքթ. Աւետիս Ինճեճիքեանի «Քեսապը եւ Իր Բարբառը», Մարիամ Սարամազեան-Չիլրիքեանի «Ինքնակենսագրութիւն», Սիմոն Այանեանի 1920-ի մարդահամարը, Մաղաքիա Պապուճեանի «Քեսապը Յայաստանում», լատին համայնքի Յալեպի առաջնորդարանի, Ֆրանսական բանակի, Աւետարանական համայնքի Յալեպի սթասիոնի, Բերիոյ Թեմի Քաղաքական ժողովի փասթաթուղթերու Քեսապին վերաբերող թղթածրարները⁶ եւ այլն: Մենք օգտագործած ենք նաև Ալպերթ Աբելեանի 1913-ին գրած «Քեսապ եւ Իր Գիւղերը» պատմա-ազգագրական բնոյթի փոքրիկ ձեռագիր տետրակը⁷:

Մեր աղբիւրներուն **երրորդ խումբը** կը ներկայացնեն **մեր հաւաքած դաջտային** նիւթերը, որոնք կարելի է խմբաւորել հետեւեալ ձեւով.

⁴ Տե՛ս նաեւ **Յ. Պաճազեան**, «Գիւղական Պատկերներ», ՊԵՅՐՈԼԹ, 2002:

⁵ Մարդահամարի հրատարակութիւնը տե՛ս **Յ. Չոլսքեան**, Քեսապ, Ա. հատոր, Յալեպ, 1995, էջ 393-455:

⁶ Այս նիւթերը տե՛ս **Յ. Չոլսքեան**, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004:

⁷ Գիրքը առանձին հատորով լոյս տեսաւ Եր. Յ. Քասունիի յառաջաբանով ու ընդարձակ ծանօթագրութիւններով, ՊԵՅՐՈԼԹ, 2002:

ա.- Միջավայրի դիտումներ ու սերտողութիւն, հին տուներու, գոմերու, հնձանե-րու, կամուրջներու, ջրհորներու, ու խաւայրերու եւ այլ կառոյցներու չափագրութիւն-ներ ու վիմագրական արձանագրութիւններ, անոնց մասին պատմող անհղութիւններ ու գրոյցներ, հին գործիքներու եւ իրերու լուսանկարներ ու գծանկարներ: Պէտք է նշել, որ գրականութեան մէջ գրեթէ ոչ ինչ կար Քեսապի նիւթական մշակոյթի մասին:

բ.- Բնակավայրերու կազմութեան, տոհմագրութեան ու տնտեսութեան նկարագրութեան հետ կապուած անհղութիւնները, ընտանեկան գրոյցներն ու տարեցներու վկայութիւնները, որոնք երբեմն իրարամերժ ըլլալով մէկտեղ՝ անփոխարինելի արժէք մը կը ներկայացնեն, մանաւանդ այնպիսի պարագաներու, երբ փաստաթուղթեր եւ յիշատակարաններ առհասարակ կը բացակային: Վկայութիւններ արձանագրած ենք նաեւ մեծ իրադարձութիւններու ակնատեսներէ, ինչպէս 1909-ի Աղետէն ու Մեծ Եղեռնէն վերապրողներէ, տարագրութենէն տունդարձ կատարած ու վերականգնումի դժուար տարիներու սերունդի ներկայացուցիչներէն:

գ.- Բնահիւսական նիւթերու ձայնագրութիւններ ու գրառումներ ոչ միայն Քեսապէն, այլ եւ Յայաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Միացեալ Նահանգներու ու Քանադայի տարբեր շրջաններու մէջ ապրող նախկին քեսապցիներէն: Մինչ այդ, բացի մէկ-երկու հեքիաթէ, տասնեակ մը առած-ասացուածքէ, նոյնքան մը խաղիկներէ ու Բարսեղ Կա-նաչեանի «Յել է Յել է (Քեսապի Պարերգ)»-էն, ոչ ինչ ծանօթ էր Քեսապի հարուստ բանաւոր մշակոյթէն⁸:

⁸ Քեսապի հեքիաթներէն տարուած առաջին նմոյշը գրի առնուած է **Տ. Մանճիկեանի** կողմէ («Յակ» ամսագիր, Անթիլիաս, 1936, թիւ 6-8, էջ 70): 11 առած ունի **Ս. Ս. Շոցիկեան** («Արեւմտահայ Աշխարհ», Նիւ Եորք, 1947): Երկու խաղիկ եւ չորս ասացուածք ունի վեր. **Կ. Ս. Թիլքեան** իր «Իննսունհինգամեակ Քեսապի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ, 1853-1948» գիրքին մէջ (Պէյրուս, 1948, էջ 21-24): Յինգ խաղիկ ալ ունի **Ա. Ս. Թմիրեան** իր «Քեսապ» (Պէյրուս, 1956) հատորին մէջ: 25 առած ունի **Ս. Սարգիսեան** (տե՛ս իր «Առածներ Քեսապի ժողովրդային Բարբառով» յօդուածը, «Ազդակ» օրաթերթ, Պէյրուս, 26 Դեկտ. 1964, էջ 2) եւ այլն: Աւելի ուշ՝ **Մ. Մինաեան** հրատարակած է «Նմոյշներ Քեսապի ժողովրդական Երգերէն» («Յակ» Յայագիտական Տարեգիրք, 1983-1984, Անթիլիաս, 10 մանկական խաղերգ, 1 ընդարձակ երգ-անէծք, 1 աղօթք, 2 օրօրոցային, 11 յանկերգ) եւ «Նմոյշներ Քեսապի ժողո-

դ.- Բարբառի հնչիլնական կազմը, քերականութիւնն ու բառապաշարի տարբեր շերտերը համալրող նիւթերու հաւաքում եւ ուսումնասիրութիւն, տրուած ըլլալով որ մինչ այդ բարբառի մասին եղած ուսումնասիրութիւնները համառօտ նկարագրութիւններ էին միայն:

Նիւթերու հաւաքագրումներս ու անոնց յաջորդող ուսումնասիրական աշխատանք-ներս կը կատարէի գլխաւորաբար առաջնորդուելով հայ բարբառագիտութեան, բանագիտութեան ու ազգագրութեան մեթոտական գրականութեամբ:

Իբրեւ փորձ՝ Պէյրուի «Ահեկան» մշակութային եռամսեայ հանդէսի երկու թիւե-րուն մէջ (1969, թիւ 4, էջ 23-58 եւ 1970, թիւ 1-2, էջ 91-108) ընդարձակ ներածականով, բնագիրով, վերածումով ու ազգագրական բնոյթի ծանօթագրութեամբ հրատարակեցի փունջ մը առակներ, հեքիաթներ, խաղիկներ ու պարերգներ: Բանահիւսական ու ազգագրական նիւթերու հաւաքչական աշխատանքներու մասին յօդուածներով հանդէս եկայ Պէյրուի «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ (Գրադատական - Սոնա Չէյթեանի «Մուսա Լերան ժողովրդական Յեքիաթներ», 9 Փետրուար 1975, թիւ 5, էջ 6; Բանահաւաքումը՝ Անհրաժեշտութիւն, 13 Ապրիլ 1975, թիւ 14, էջ 4): Փորձառական գետնի վրայ կարելոր իրագործում եղաւ 1978-ին Քեսապի ժողովրդային Գրադարանի մէջ իմ պատրաստած ազգագրական իրերու ցուցահանդէսը, որ լայն հետաքրքրութիւն ստեղծեց նաեւ արաբ շրջանակներու մէջ ու առաջ քաշեց Քեսապի ազգագրական թանգարան ունենալու անհրաժեշտութիւնը: Լոյս ընծայեցի «Քեսապի ժողովրդական Երգարուեստը» (Յալէպ, 1980, 124 էջ) գիրքը՝ ժիրայր Ռէիսեանի ձայնագրութիւններով: Գիրքը առաջին անգամ ըլլալով կը ներկայացներ Քեսապի շրջանի հայոց երգային բանահիւսութենէն փունջ մը յանկերգներ, խաղիկներ, երգեր, մանկական

վրդական խաղիկներէն» (Յայկագեան Յայագիտական Յանդէս, Ժ. հատոր, 1984, Պէյրուի, 43 խաղիկ): Վ. Սվազլեան գրած է 91 առած-ասացուածքներ, 11 խրատական ասացուածքներ, 8 անէծքներ, 8 օրհնանք-մաղթանքներ, հեքիաթ մը՝ «Յամբերոյթյան քարը», աւանդութիւն մը, երկտող ու քառատող խաղիկներ (տե՛ս Վ. Սվազլյան, «Կիլիկիա - Արևմտահայոց բանավոր ավանդույթ ունը» Երևան, 1994):

խաղերգներ, ողբեր, ողջերթներ, հոռոզվել: Ունի գիտական գործիքակազմ՝ բնագրային վերածումներ եւ ծանօթագրութիւններ երգողներու, կատարման տեղի, առիթի ու այլ ազգագրական երեւոյթներու մասին: Ունի ներածութիւն:

Յետագայ աշխատանքներու ս հանրագումարը եղան Քեսապի բարբառին լիակատար նկարագրութիւնը եղող «Քեսապի Բարբառը» (Յալէպ, 1986, Բ. լրացուած վերահրատարակութիւնը՝ Երեւան, 2009, 380 էջ) եւ «Քեսապ» աշխատասիրութեան երկու հատորները (Ա. հատոր, Յալէպ, 1995, 570 էջ; Բ. հատոր, Յալէպ, 1998, 568 էջ): Ա. հատորը կ'ընդգրկէ Քեսապի տեղագրութիւնը, բնակավայրերը, բնակչութիւնը, պատմութիւնն ու տնտեսութիւնը: Յատորի ներածութիւնը գրած է Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոսը: Բ. հատորը կը ներկայացնէ ազգագրութիւնն ու բանահիւսութիւնը: Յետագային հրատարակեցի Գ. հատորն ալ (Յալէպ, 2004, 672 էջ), որ կ'ընդգրկէ իմ կողմէ յայտնաբերուած՝ վերոնշեալ անտիպ մնացած ուսումնասիրական փորձերու, յուշագրութիւններու, մեծաթիւ ու բազմաթիւ արխիւային նիւթերու ամբողջական հրատարակումը:

Իմ «Անտիոքի Մերձակայ Ռուճի Յովհովհի Յայերը. Պատմա-ազգագրական Ուսումնասիրութիւն» (Անթիլիաս, 2006, 260 մեծադիր էջ) հատորը, թէեւ նուիրուած է Ռուճի հովհովհի ու անոր շրջակայ քի հայ մնացորդացիին, գլխաւորաբար եագուալիէ ու Գնիէ գիւղերու պատմութեան ու ազգագրութեան, բայց առաջին երկու գլուխներուն մէջ հայ, արաբ, բիւզանդացի եւ խաչակիր պատմիչներու հարուստ գրականութեան մը հի-ման վրայ կը ներկայացնէ պատմութիւնը Անտիոքի շրջանի հայ հին գաղթականութեան, գլխաւորաբար 9.-15-րդ դարերու, որուն մնացորդացը կը նկատուի ինչպէս Քեսապի, այդպէս ալ Անտիոքի շրջանի հայ միւս գիւղախումբերու հայ բնակչութիւնը:

Յայկական Յեղասպանութեան 100-ամեակին առթիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրատարակած «Արեւմտեան Յայաստանի եւ Կիլիկիոյ Յուշամատեններ» մատենաշարի 8-րդ հատորը

նուիրուած է Քեսապին: Մատենաշարին խմբագիրն է ժիրայր Դանիէլեան: Յատորը կը կրէ «Քեսապ» վերնագիրը (Անթիլիաս, 2015, 1348 էջ) ու կ'ընդգրկէ իմ «Քեսապ» նախկին երկու հատորները: Ընդարձակած եմ «Ընդհանուր ակնարկ Անտիոքի եւ շրջակայքի հայ գաղթականութեան պատմութեան վրայ» գլուխը: Առանձին գլուխ մը յատկացուցած եմ ծայրայեղ իսլամականներու 21-23 Մարտ 2014-ին Թուրքիայէն Քեսապ կատարած ներխուժումին ու հայոց վերջին տեղահանութեան, ցրուումին, շրջանին մէջ շարունակուող կռիւներուն, քաղաքական իրադարձութիւններուն, շրջանի ազատագրումին ու քեսապի գաղթականներու տունդարձին: Յատորը օժտուած է ձայնագրութիւններով, քարտեզներով, գծանկարներով եւ նկարներու բաժինով. ունի օգտագործուած աղբիւրներու, անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր⁹:

Ահաւասիկ, այս աշխատասիրութիւններուս պատմութեան ու ազգագրութեան վերաբերող հսկայական նիւթն ալ կը ներկայացնէ ուսումնասիրութեանս երրորդ ու վերջին աղբիւրը:

Ուսումնասիրութեան **գիտական նորույթը** այն է, որ ան առաջին անգամ ըլլալով գիտական շրջանառութեան մէջ կը դնէ Քեսապի հայկական գաւառակի պատմութիւնն ու ազգագրութիւնը իր բոլոր երեսներով՝ վերարժեւորելով տպագիր ու անտիպ նիւթերու հսկայական քանակը տուեալ աշխատանքի սահմաններուն մէջ: Ասիկա իր հերթին կ'ամբողջացնէ արեւմտահայութեան, ի մասնաւորի հայ աշխարհի ծայր հարաւ-արեւմտեան շրջանի հայ զանգուածի մասին մեր պատկերացումը ու առհասարակ նորութիւն է հայոց պատմութեան ու հայ ազգագրութեան համար:

Աշխատութեան արդիւնքները կարելոր նշանակութիւն ունին քանի մը յարանուա-նութիւններու բաժնուած ազգային հաւաքականութիւններու նկատմամբ վարուելիք քաղաքականութեան մշակման ու անոր իրագործման տեսակէտէն:

- Աշխատութիւնը կը համալրէ Սփիւռքի

⁹ Տե՛ս նաև **3. Չոլսքեան**, «Քեսապի Երեք Օրերը, 21-23 Մարտ 2014», Երեւան, 2014:

առանձնայն առկու թիւ նկերու եւ օրինաւ ահու թիւ նկերու վերաբերեալ մեր պատկերացումները, պարզելու սփիւռքահայ համայնք *kynumb sql server*ներու հաւաքական վարքի տիպերը քաղաքական-հասարակական եւ մշակութային տարբեր պայմաններու մէջ:

- Աշխատութիւնը կ'օգնէ պարզելու հայ կական Սփիւռքի մեկուսի խումբերու գոյատեւման սպառնացող վտանգները եւ գտնելու այդ վտանգները յարթահարելու տեղական ու համահայկական կարելիութիւնները:

- Աշխատութիւնը 1909-ի Աղէտի, Մեծ եղեռնի, 1939-ի Ալեքսանդրէի սանճաքի հետ կապուած դէպքերու եւ 2014-ի երրորդ մեծ տեղահանութեան լոյսին տակ կ'ապացուցէ, որ Թուրքիոյ համար Յայոց ցեղասպանութիւնը շարունակական երեւոյթ է, պետական քաղաքականութիւն, եւ միայն միջոցներն են, որ կրնան տարբեր ըլլան՝ ըստ ժամանակաշրջաններու:

- Աշխատութիւնը հայ ազգագրութեան մէջ առաջին անգամ այսքան համապարփակ ձեւով կը պատկերացնէ Անտիոքի հեռաւոր այդ շրջանին մէջ դարերով մեկուսի ապրած հայ հաւաքականութեան աշխատանքի տեսակները, արտադրութիւնները, գործիքներն ու կենցաղի տարբեր երեսները՝ տունը, տարագը, խոհանոցը եւ այլն:

- Դարձեալ առաջին անգամ է, որ կը ներկայացուին ու գիտական շրջանառութեան մէջ կը դրուին Քեսապի հայութեան հոգեւոր մշակոյթի բոլոր կողմերը՝ հասարակական յարաբերութիւնները, ընտանիքի կազմութիւնն ու բնոյթը, տներն ու տնակատարութիւնները, խոհանոցը, խաղերը, ժողովրդական բժշկութիւնն ու հաւատալիքները:

Ուսումնասիրութիւնը ունի **տեսական եւ գործնական նշանակութիւն**, տեսականօրէն պատճառաբանուած են մեկուսացման դատապարտուած շրջանակներու ազգային ու կրօնական պատկանելիութիւնը պահելու ընթացքին մէջ ազգագրական շատ երեւոյթներու դերը, այլ ադաւանութեան քաղաքական ու տնտեսական պայմաններէ թելադրուած ըլլալը, ազգային գաղափարախօսութեան

դերը կրօնական յարանուանութանց բաժնուած ազգային հաւաքականութիւններու միասնականութեան ամրապնդման եւ այլ բազմաթիւ երեւոյթներու մէջ: Գիտագործնական նշանակութիւնն այն է, որ հայկական դաւանանքային և գաղափարական տարբեր հաւաքականութիւններու վարքի ու փորձառութեան ուսումնասիրութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ նման հաւաքականութիւններու համերաշխ կեցութեան ու աւելի մեծ նպատակներու, օրինակ՝ հայապահպանման շուրջ համախմբուելու, ծրագրեր մշակել:

Կրնայ գործնական նշանակութիւն ունենալ ազգագրական շատ երեւոյթներու՝ աշխատանքի նախկին տեսակներու, վար ու ցանքի, տարազի, խոհանոցի, տան կառոյցի եւ այլ կողմերու համեմատական քննութեան համար, բանագիտութեան, բարբառագիտութեան որոշ երեւոյթներու պարզաբանման ու ընդհանրացման համար:

Յետեւաբար այս աշխատանքը կրնայ աղբիւր ծառայել յիշեալ տարածաշրջանի հայոց կեանքի տարբեր կողմերն ու երեւոյթները հետազօտողներուն համար: Յայտնենք նաեւ, որ թեմային առնչուող մեր հրատարակուած աշխատութիւնները պարբերաբար կ'օգտագործուին թե՛ հայ, թե՛ օտար պատմաբաններու, ազգագրագէտներու, բանագէտներու, երաժշտագէտներու եւ լեզուաբաններու կողմէ:

Ուսումնասիրութեան **մեթոտաբանական հիմք** ծառայած են, երբ խօսքը գաղթավայրի պատմութեան կը վերաբերի, փաստական ու փաստագրական հարուստ նիւթի վրայ կատարուած պատմաճանաչողական եւ պատմահամեմատական սկզբունքը, վերլուծական-համադրական եւ պատճառա-հետեւանքային մեթոտաբանութիւնը:

Նիւթական ու հոգեւոր մշակոյթի պարագային մենք առաւելաբար աշխատած ենք դաշտային դիտման, հարցման, նկարագրման, տիպաբանական, քարտեսագրման (չափագրում, գծանկար ու լուսանկար), համեմատական ու մասամբ փաստաթուղթերու վերլուծութեան մեթոտներով:

Մեզի համար թե՛ մեթոտական, թե՛ գործնական նշանակություն ունեցան են Երուանդ Լալայեանի, Արշակ Ալաթյանի, Խորեն Գաբրիելյանի, Բիլգանդ Եղիայեանի աշխատասիրությունները, ՀՀ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի հրատարակությունները:

Քեսապի ազգագրությունը ներկայացնել գրեթե անհնար բան է առանց բանահիւսության ու բարբառի ոլորտներն ներս մտնելու: Աշխատանքի ու կենցաղի շատերելոյթներուն հետկապուած են որոշ ասոյթներ, կանչեր, երգեր, ունին բարբառային ինքնատիպ տարազ ու մանուն: Մենք հարազատորեն արձանագրած ենք երգային նիւթերը, նկարագրած ու տուած յայտնի երաժիշտներու՝ անոնց թղթային ձայնագրությունները ապահովելու համար, իսկ բարբառային առնչակից նիւթերը արձանագրած, ստուգաբանած ու գրական լեզուի վերածած՝ միշտ նկատի ունենալով Հր. Աճառեանի, Արարատ Ղարիբեանի, Գեորգ Ջահուկեանի աշխատասիրությունները ու հայ բարբառագիտության մեթոտական ուղեցոյցերը:

Աշխատանքը բաղկացած է չորս գլուխներէ, վերջաբանէ, օգտագործուած աղբիւրներու ու գրականության ցանկէ եւ յաւելուածէ:

Քեսապի նուիրուած մեր բոլոր աշխատությունները, Սփիւռքի թէ Հայաստանի մէջ տպուած, գրուած են հայերէնի արեւմտահայ տարբերակով ու աննդական ուղղագրութեամբ: Հոս եւս նոյնը կ'ընենք՝ պահելով աննդական ուղղագրութեան լրիւ կանոնակարգը, բացի նոր ուղղագրութեամբ տպուած գիրքերու յղումներէն եւ անոնցմէ կատարուած մէջբերումներէն: Գլխագրուած են (մեծատառով գրուած) շաբթուան օրերը, ամիսները, բաղադրեալ յատուկ անուններու, գրքի վերնագիրներու բաղադրիչ բառերը: Տարեթիւերն ու դասական թուականները արձանագրուած են Սփիւռքի մէջ ընդունուած ձեւով: Նիւթի շարադրանքին մէջ, գրական լեզուով համարժէք չունեցող բարբառային եւ օտարամուտ անուանումներն ու բառերը նախբերուած են հարազատ ձեւով, ապավայակոչուած են բարբառի հնչիւնական օրէնքներուն հարազատ վերածումով,

ինչպես՝ **խե՛նտուօկ՝ խանտակ** (գետ կամ գետահուն), **տիէխայ՝ տեխայ** (որսորդական մածուցիկ մը), **մէ՛րէ՛արւ՝ մարապա** (քառորդով աշխատող մշակ), **պէ՛րուՆ՝պարոն** (կալուածատէր): Քեսապի բարբառի հնչիւնական համակարգէն հոս յաճախ անհրաժեշտ եղած է գործածել **է՛** հնչիւնը, որ աւելի բարձր է քան **քմայ ին ա՛ն**: Բարբառային բառերուն մէջ **իւ** կապակցու թիւնը կ'արտայայտէ արեւմտահայ երէնի նոյն ձայնաւորը՝ **սիւն, ձիւն**: Չուտ արեւմտահայ երէն կամ գլխաւորաբար արեւմտահայ երէնին յատուկ բառերու արեւելահայ երէն հոմանիշը երբեմն փակագիծերու մէջ տալ անհրաժեշտ համարած ենք, ինչպես՝ **ազգական** (բարեկամ), **դրացի** (հարեւան), **մականուն** (ազգանուն) եւ այլն:

ՔԵՍԱԿԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆԸ

1.1 – ԳԱՂՁԱԿԱՅՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ա Քեսապի հայ ու թիւերը իբրեւ Անտիոքի Թ-ԺԲ դարերու հայ հոծ գաղթականութեան մէկ մնացորդացը.- Ըստաւ անդու թեան՝ Քեսապի հայոց նախնիները նախապրած են շրջանի արեւելքը գտնուող Ներքի-Գիւղին մէջ, որ նաեւ կը կրէ Էսկիւրէն (Էսկի Էօրէն, թրքերէնով՝ հին բնակավայր) անուանը: Աւանդութեան տարբերակներէն մէկը կ'ըսէ, թէ եօթը ընտանիքներ եկած կ'ըլլան Կիլիկիայէն, իսկ ուրիշ տարբերակներ պարզապէս կ'ըսեն՝ «Քաղաքի կողմերէն»: Քաղաքը՝ Անտիոքն է: Յետոյ Ներքի Գիւղի բնակիչները նոր կայք կը հաստատեն այժմու Քեսապաւ անի տեղը եւ գայն կը կոչեն Գիւղ (գիւղ):

Այս աւանդութեան հիման վրայ Քեսապի կազմութեան շուրջ խօսող առաջին հեղինակները միշտ նկատուին աւանդութեան մէջ յիշուող կիլիկեան տարբերակը: Առաջինը Ալպերթ Ս. Աբելեանն է: Ըստ անոր՝ «քեսապցիներուն նախնիները կիլիկեցիներ էին, որոնք երկար շրջան մը ապրելով Սոււէտիակամ ալ Կասիոսի շուրջը՝ իվերջոյ խմբուեցան ի մի գիւղ, որ Ներքի Գիւղն է կամ Էսկիւրէնը: Գիւղը հիմնուած պէտք է ըլլայ 16-րդ դարուն սկիզբը (1500-1525)»: Ապա շարունակելով կը գրէ. «Ըստմեր ծերերուն աւանդութեան՝ 350-400 տարի առաջ մի քանի ընտանիքներ թողուցին Ներքի Գիւղը ու Կասիոսի ճիշդ հարաւային կողմը, ձորի մը մէջ հաստատուելով, հիմնեցին այսօրուան Քեսապը»¹⁰: Նոյն աւանդութիւնը օգտագործող այլ հեղինակներ եւս առաջ կը քաշեն քեսապցիներուն Կիլիկիայէն եկած ըլլալու վարկածը՝ գլխաւորաբար յենելով Հաճնոյ եւ Չէյթունի բարբառներուն Քեսապի բարբառին հետուսեցած նմանութեան վրայ ¹¹:

¹⁰ Մեր տրամադրութեան տակ եղած է Տոքթ. Ալպերթ Ս. Աբելեանի «Քեսապ եւ իր Գիւղերը», ձեռագիր տետրակը, գրուած հեղինակի ուսանողութեան շրջանին՝ 1913-ին: Ձեռագիրը Երուանդ Հ. Քասունիի խմբագրութեամբ, յառաջաբանով եւ ընդարձակ ծանօթագրութիւններով լոյս տեսաւ շատ ուշ. տե՛ս **Ա. Ս. Աբելեան**, Քեսապ եւ իր Գիւղերը, Պէյրուս, 2002:

¹¹ **Յ. Յ. Պողոսեան**, Հաճնի Ընդհանուր Պատմութիւնը եւ Շրջակայ Գօգան-Տաղի Հայ Գիւղերը, Լոս Անճելըս, 1942, էջ 75; **Գ. Գապէնճեան**, Սուրիա Քաղաքական, Կրօնապատմական, Կրթական եւ Տնտեսական Տեսակետով, «Տարեւ» տարեցոյց, Հայ Էպ. Գ. տարի, 1927, էջ 240; (**Անստրազի**), Քեսապ, «Սուրիահայ Տարեցոյց», Հայ Էպ. Բ. տարի, 1928, էջ 224; **A. K. Sandjian**, The Armenian Communities in Syria Under Ottoman

Քեսապցիներու ծագումին վերաբերեալ կիլիկեան վարկածը առաջին անգամ իրաւացիօրէն կը հերքուի վեր. Տիգրան Անդրեասեանի կողմէ: Ան Անտիոքի շրջանին բարբառները (Քեսապ-Սուէտիա) կը դիտէ որպէս ամբողջութիւն մը ու անոնց կու տայ ժողովուրդին կողմէ տրուած անունը՝ քիստինակ, այսինքն՝ «քրիստոնեայի լեզու»: Բառը Քեսապի բարբառին մէջ ունի **քիստինուօկ**, իսկ Սուէտիոյ բարբառին մէջ՝ **քիսթինիգ** ձեւերը: Ան քննական համեմատութիւն մը կը կատարէ քիստինակի եւ կիլիկեան բարբառներուն միջեւ (Մարաշ, Յաճըն, Չէյթուն) ու կ'ենգրակացնէ, որ այս բարբառային նիւթերը հիմնովին «կը բաժնեն քիսթընըզը կիլիկեան բարբառներէն եւ բոլորովին անընդունելի կը դարձնեն Սուէտիա-Քեսապի հայութեան Կիլիկիայէն գաղթած ըլլալու տեսութիւնը»¹²:

Յետագային՝ հայ լեզուաբաններու Անտիոքի կամ ծայր հարաւարեւմտեան բարբառներու, ինչպէս եւ կիլիկեան բարբառներու գիտականօրէն կատարած նկարագրութիւնները վստահելի գետին կը պատրաստեն բարբառային դասակարգումներ կատարելու համար: Գէորգ Չահուկեան իր առաջարկած բարբառներու բազմայատկանիշ վիճակագրական դասակարգումին մէջ Անտիոքի կամ ծայր հարաւարեւմտեան բարբառախումբին տակ կը դնէ երկու բարբառներ՝ Քեսապ-Սուէտիոյ բարբառ եւ Պէյլանի բարբառ: Քեսապ-Սուէտիոյ բարբառին մէջ ան կը մտցնէ Քեսապի, Քապուսիէի, Եողուն-Օլուգի, Յաճի Յապիպիի եւ Արամոյի խօսուածքները¹³: Արամոյին հետ պէտք է նկատի ունենալ նաեւ Ղնեմիէն:

Այսպիսով իրաւացի կը դառնայ Վեր. Տիգրան Անդրեասեանի վարկածը, որ քիստինակը ոչ թէ կիլիկեան բարբառներէն ծագած է, այլ՝ բարբառային զատգոյացութիւն մըն է: Սահինքնին կ'ենթադրէ, որ այդ բարբառներով խօսող հայերը Կիլիկիայէն չեն գաղթած, այն ալ կիլիկեան թագաւորութեան անկումէն շատ ետք, այլ՝ երկար դարերէ ի վեր Անտիոքի շրջանին մէջ համատեղ ապրած հայութեան մը բեկոր-

Dominion, Harvard University Press, 1965, p. 53; **Ա. Գ Աբրահամյան**, Յամառոտ ու ըվագիծ հայ գաղթավայրերի պատմութիւն, Բ. հատոր, Երևան, 1967, էջ 18:

¹² **Տ. Անդրեասյան**, Սվեդիայի բարբառը կամ Քիստինիգի լեզուն, Երևան, 1967, էջ 312:

¹³ **Գ. Չահուկյան**, Յայ բարբառագիտութիւնն աներածութիւն, Երևան, 1972, էջ 132:

ներն են:

Սուբտիացիք, քեսաացիք, արամոցիք, ղնեմիէցիք ու, ինչպէս ծերերն ալ կը վկայէին, այժմ արաբախօս եագուպիէցիք եւ գնիէցիք եւս լեզուական ոչ մէկ դժուարութիւն ունէին իրարու հետյ արաբերութեան ընթացքին, կը հասկնային զիրար՝ առանց միջնորդ լեզուի մը:

Իվերջոյ, Անտիոքի 9-12-րդ դարերու հայ հոծ գաղթականութեան վերաբերող բաւական առատ պատմական վկայութիւններու հիման վրայ կը ստեղծուի երրորդ տեսութիւնը, ըստ որուն՝ Անտիոքի շրջանակին մէջ գոյատեւող փոքրիկ գաղթօճախները գլխաւորաբար այդ գաղթականութեան մնացորդներն են, առանց ժխտելու Տիգրան Մեծի օրերէն այդ կողմերը գոյատեւող հայութեան, ինչպէս նաեւ յետագային՝ Յայաստանի եւ Կիլիկիոյ տարբեր վայրերէն հոն կայք հաստատած հայութեան մասին ըսուածները¹⁴:

Քեսապի հայերն ալ Անտիոքի միջին դարերու հայ հոծ գաղթականութեան յետնորդներն են, մասամբ՝ հնագոյն ժամանակներէն իվերնոյն վայրին մէջ մնացած, իսկ միւսները՝ Անտիոքի շրջանին մէջ կատարուած տեղաշարժերուն իբրեւ հետեւանք այնտեղ հաստատուած հայեր: Քեսապի բարբառին ու տեղւոյն հայոց կենցաղին մէջ շատ բաներ կան, որ ատիկակ'ապացուցեն: Յիշենք քանի մը հատը.

- Իրանեան **թաթ** ցեղանունն գործածութիւնը՝ իբրեւ ծածկանունն ալ եւ իներունն եւ «չարքաշ» իմաստով ածական: Այս բառը չէր կրնար վերջին դարերու ներմուծութիւնն ըլլալ:

- Անտիոք կամ Անթաքիա քաղաքը **Քաղուօք** (քաղաք) անունով ճանչնալը:

- Ճսըր ծուղուր քաղաքը **Պազուօր** (պազար՝ շուկայ) անունով ճանչնալը: Ծանօթ է, որ այս վայրը, Որոնդէս գետի կամուրջին երկու կողմերը, Արզաքան եւ Քաջահան բերդերու մօտիկ, դեռ 12-րդ դարէն կը յիշուէր երեքշաբթի օրուան պազար ըլլալը: Յետագային, երբ կը

¹⁴ **Յ. Չոլպեան**, Անտիոքի Մերձակայ Ռուճի Յովիտի Յայերը. Պատմա-ազգագրական Ուսու մնասիրութիւն, Անթիլիաս, 2006, էջ 27-88:

ձեւաւորուի ճսըր Շուղուր քաղաքը, քեսապցիք կը շարունակեն գայնկոչել Պազուօր, իբր արծագանգայ դիեռաւոր անցեալին:

- **Ասսա** (Ասի) Որոնդէս գետի յատուկ անունը իբրեւ հասարակ գոյական գործածելը՝ «գետ, հոսող առաջուր» իմաստով: Քեսապցիք առօրեայ շփում չունին այդ գետին հետ, բայց բառին այդպիսի գործածութիւնը կու գայ դարերու խորքին մէջ մնացած մօտիկութենէ մը:

- Լաթաքիա (Լաթգիէ, Լազգիէ) քաղաքը **ԼԵ՛տէկ** անուամբ կոչելը: Ասիկա հնագոյն անուան (Լաւոդիկէ, Լաւոտիս) աւելի մօտիկ է ու միւս յետին ձեւերէն բոլորովին անկախեւ բնականաբար վաղ միջնադարեան շփումի մը հետեւ անքկրնայ նկատուիլ:

- Քեսապցիք, ինչպէս նաեւ Անտիոքի շրջանի միւս բնակավայրերու հայերը Վարդավառի տունը կը կոչեն **Պարլու՛մ** կամ **Պալլու՛մ**, համանուն ուխտավայրի անունով: Յայր Ղեւոնդ Ալիշան ուխտավայրը կը յիշատակէ իբրեւ վանք Պարլերոյ լերին (Abbatiam Montis Parleri)¹⁵: Վանքը հաւանաբար կապուած է Ս. Պարլամի յիշատակին հետ: Յայոց Վարդավառի համաժողովրդական ուխտագնացութիւնը կու գայ դարերու խորքէն: Միայն 16-17-րդ դարերուն այս կողմերը յայտնուած հայերը չէին կրնար ժառանգել ուխտագնացութիւնն ու ուխտավայրի անունը: Կապը կու գայ շատաւելի հինէն, Անտիոքի շրջանի հայ հոծ գաղթականութեան դարերէն: Ուխտավայրը այնքան սերտօրէն կը կապուի շրջակայքի հայոց, որ կը դառնայ հայոց հինգ տաղաւար տներէն մեկուն յատուկ անունը: **Պարլու՛մ** կամ **Պալլու՛մ** նախ Ս. Վարդավառի տունն է, ապա՝ ուխտավայրը, որ երբեմն կը կոչեն **Պարլամու՛ն/Պարլամո՛ն** (ուն/ոն վերջոյ թը տեղանուններ կը կազմէ):

- Անտիոքի շրջանի բոլոր բարբառախօս հայերը (Քեսապ, Սուէտիա, Արամօ, Ղնեմիէ) կալուածատէր-հողատէրը, որ **մարապա** (քառորդով աշխատող) կը պահէ իր կալուածներուն մէջ, կը կոչեն **աբ՛րուն** (պարոն), թրքերէն՝ **աղա** Այդ իմաստով ու կիրառութեամբ Պարոն (baron) բառը շրջանի հայոց կրնար փոխանցուիլ միայն Անտիոքի լատին դքսութեան ժամանակակից հայ հին գաղութէն:

¹⁵ **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 424:

- Անտիոքի շրջանի բոլոր բարբառախօս հայերը իրենց հայերեն խօսուածքները **քիստիսնոլ** կը կոչեն, ու անով ալ, իբրեւ ամբողջութիւն, կը զանազանեն իրենք զիրենք հայութեան միւս հատուածներէն:

Բ. Օսմանեան իշխանութիւնը եւ հայութեան ներքին տեղաշարժերը.- 1516-ին սուլթան Սելիմ Ա. կը գրաւէ Անտիոքը մեմլիկութներու ձեռքէն: Երկու դար տեւած մեմլիկութեան գերեզմարութեանց ու հարստահարութեանց դիմացած քրիստոնեաները ծանր պայմաններու մէջ կ'իյնան: Ատիկա ամենէն առաջ կու գայ օսմանեան բանակին ընկերակցող ու պարբերաբար կրկնուող թուրքմէն հոծ գաղթականներու հոսքով: Սուլթան Սելիմի բերած առաջին հինգ հազարնոց խումբին պետն էր Գարամանլա անունն աղան: Ասոր կը յաջորդէ Գարամանլա Էմին աղայի տասը հազարնոց թուրքմէն խումբը: Շրջանին մէջ երկար ժամանակաշրջան մը կը տիրէ կամայական կարգ ու սարք: Բանակը կ'օգնէ թուրքմէններու տեղաւորման գործին: Թուրքմէն ցեղեր բնակութեան նոր վայրեր կը փնտռեն՝ շրջանին մէջ կոտորածներ կազմակերպելով, բռնութեամբ տիրանալով գիւղերու եւ ագարակներու: Այս թուրքմէններու ն իբրեւ բնակութեան տեղ կը տրուին յատկապէս Անտիոքի հարաւարեւմտեան՝ Գուսէյրի, Օրտուի, Պեզկէի, Պայիրի եւ Պասիթի շրջանները: Պայիրի Մանլա Օղլուները, Օրտուի Յասան ու Շերիֆ աղաները, Պեզկէի Գալթախ շէխերը, Թընզըրիի Թիրիաքիները, Պուճագի (Պասիթ) Յաճիները եւ Յաֆեզները այս թուրքմէններու սերունդներն են¹⁶: Յայ, յոյն եւ ասորի գիւղեր իսպառ վերացան ջարդերու, բռնի տեղահանութիւններու եւ իսլամացումի հետեւանքով: Յայոց կալուածները բռնագրաւուեցան թուրք, քիւրտ եւ արաբ ատաւերերու կողմէ: Թուրքմէն-թուրք աղաներու ծանր ազդեցութեան շրջաններ կը դառնան նախապէս քրիստոնեայ բնակչութիւն ունեցող Պայիրը, Պուճագը (Կասիոսի հարաւային շրջաններ), Օրտուն եւ Եայլա Տաղը (Կասիոսի արեւելեան շրջաններ): Քրիստոնեաները յայտնա-

¹⁶ **Ա. Ինճեճիքեան**, Քեսապեւ իր Բարբառը. տե՛ս **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Գ. հատոր, Յալէպ, 2004, էջ 47:

ալես ծանր կացութեան կը մատնուին: Ասորի տարրը գրեթէ ամբողջա-
ալես կ'անհետի Անտիոքի շրջանէն: Յոյները մանր կղզեխումբեր կը
ծեւացնեն Որոնդէսի հովիտին մէջ եւ հարաւի լեռներուն վրայ:
Յոյներու պատրիարքը կը լքէ Անտիոքը եւ կը հաստատուի Դամաս-
կոս՝ պահպանելով «Պատրիարք Անտիոքի» տիտղոսը: Յետգիտէ կը
պարպուին վաղեմի հայ ահոժ շրջաններն ու քաղաքները: Անտիոքի, Ա-
ֆամիոյ եւ Լաթաքիոյ հայոց եպիսկոպոսութիւնները կը վերանան:

Քեսապի շրջանին շուրջ գտնուող բազմաթիւ թուրքմէն գիւղե-
րու եւ վայրերու անուններն ու անոնց կապուած գրոյցները՝ այդ
հին բնակչութեան գոյութեան լաւագոյն ապացոյցներն են, ինչպէս
շրջանի արեւելքին՝ **Օրտու** (բնակ. աւան, ուր 1516-ին կայք հաստա-
տած թրքական բնակը սուրբ կ'անցընէ տեղւոյն յոյն ու հայ բնակ-
չութեան երեւելիները), **Գազուզլու** (ցից. վայր՝ Տուզաղաճ գիւղի
մօտիկ, ուր քրիստոնեաները իբր ցիցերով կը գամեն գետնին), **Գարա-
քիլիսէ** (սեւ եկեղեցի. Գուրաշէ գետի ձորին մէջ լքուած գիւղատե-
ղի մը), **Թորոսիլեռ** (Պայիրի շրջանին մէջ), Պուճագի շրջանին մէջ՝
Պեսրուսիէ (Պեսրոսի գիւղ, ուր մինչեւ 198 թուական մեկ-երկու
տուն հայեր կ'ապրէին), **Քեշիշ** (քահանայ. գիւղ), **Կեալուր Գըրան** (ան-
հաւատ՝ քրիստոնեայ ջարդող. գիւղ), հիւսիսային կողմերը՝ Պեզկէի
շրջանին մէջ **Ուռուֆէլ** (Ռաֆայէլ. գիւղ), **Տանկ** (վանք), **Մուսալէք/
Մուղուսլօգ** (Մուսճարակ. գիւղ), **Գիրագուս** (Կիրակոս. գիւղ), **Ջաղը-
նէն** (ջաղացքները), **Միաւօն** (Միատուն. գիւղ) եւ այլն: Այդ վայրե-
րու մասին պատմուող աւանդութիւնները կը յուշեն, որ անոնց նախ-
կին բնակիչները հայեր եւ հռոմներ էին¹⁷:

Անտիոքի բովանդակ շրջանին մէջ քրիստոնեայ մնացորդացը
ինքզինք պաշտապանելու համար կամաց-կամաց քովէ քով հաւաքուե-
լով փոքրիկ կղզեխումբեր կը կազմէ: Մնացորդացին այս ներքին տե-

¹⁷ Այժմ, 1939-ի սահմանագծումով, այդ թուրքմէնական շրջաններէն Գուսէյրը, Պեզկէն, Օրտուն եւ ԵայլաՏաղը կը գտնուին Թուրքիոյ կողմը, իսկ Պայիրն ու Պուճագը՝ Սուրիոյ: Թուրքմէնները ոչինչով կը տարբերին թուրքերէն: Թուրքմէն անուանումը կը վերաբերի միայն Սուրիամնացածներուն: Այդպէս կը ճանչցուին անոնք սուրիական պաշտօնական մարմիններէն, նաեւ Թուրքիոյ կողմէ, որ սուրիական տազնապին մէջ հրահրեց գանոնք Թուրքմէնական Լեռներու Ինքնավարութեան երազով, որ փաստօրէն այդ տարածքներուն հանդէպ Թուրքիոյ ունեցած պիտրժակն է:

ղաշարժը կը շարունակուի օսմանեան իշխանութեան բովանդակ շրջանին: Այսպէս է, որ կազմուած է Քեսապի վերջին հայ գաղթօճախը: Կասիոս Լերան հարաւ-արեւմտեան խիստ Լեռնային ու մեկուսի դիրքը Լաւ ապաստան մը պիտի ըլլար քիչ թէ շատ վտանգուած այդ հայոց համար:

Քեսապի շրջանին մէջ մեզի յայտնի հայերէն առաջին արձանագրութիւնը կը վերաբերի 1770 թուականին. ան կը գտնուի Գարատուրանի Ս. Գեորգ խոնարհած եկեղեցւոյ մէջ: Ծրջանին մէջ կը գտնուին ուրիշ խոնարհած եկեղեցիներ եւս, որոնք տակաւին ու խտատեղիներ են ու ժողովուրդին կողմէ **կիղիցիկ** կամ **կղիցիկ** կը կոչուին: Այս կիղիցիկներէն ոմանք կը ճանչցուին անուկով, ինչպէս Գարատուրանի Մանճիկեան թաղի Ս. Աստուածածինը, Ներքի Գիւղի Ս. Աստուածածինը, Քեօրքիւնէի Ս. Ստեփանոսը, Քեսապի մօտիկ Ս. Ստեփանոսն ու Ս. Մարութէն եւ այլն: Ոմանք տակաւին գործող գերեզմանատուներ են: Ոմանք կը գտնուին ամբողջապէս Լքուած բնակավայրերու տարածքին մէջ, ինչպէս Գարատուրանի ծովեզերքին Ս. Սարգիսն ու Ս. Գեորգը, Ներքի Գիւղի արեւելքին՝ Սիվտիկի եւ Գարատուրանի Տընվըննի կոչուած հնավայրերուն կիղիցիկները եւ այլն: Այս կիղիցիկները մեծաւ մասամբ խոնարհած են 19-րդ. դարու կեսերէն առաջ ու չեն վերականգնուած օսմանեան իշխանութիւններուն արգելքին, ապա նորակազմ այլադաւան հայերու յարուցած դժուարութիւններուն պատճառով: Անոնցմէ միայն Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցին վերականգնած է քանի մը անգամ հիմնովին վերանորոգուելով, այնպէս որ հին շրջանէն արձանագրութիւններ չեն մնացած: Ներքի Գիւղի կիղիցիկէն, հիմքերէն բացի, մնացած է խոյակ մը եւ պատուանդան մը: Խաչքարը յետոյ տեղադրուած է աղբիւրի խորանածեւ կառոյցին մէջ: Ան, ըստ Րաֆֆի Քորթոշեանի՝ 15-16-րդ. դարերու խաչքար է, սովորական տեղական ճերմակ քարի վրայ տաշուած¹⁸:

Մեզի ծանօթ է, թէ 15-16-րդ. դարերէն առաջ, Քեսապի շրջանը հայ բնակչութիւն ունեցած է, թէ ոչ: Աւելի ետգացող յիշատակութիւն մը կու գայ Յայր Ղեւոնդ Ալիշանէն: Ան Անտիոքի Ռենալ տղուքսին պատկանող պարգեւագիրէ մը կը քաղէ շարք մը «հայալուր» բնակա-

¹⁸ **Ր. Քորթոշյան**, Քեսապի շրջանի պատմական հուշարձանները, Երևան, 2014, էջ 33:

վայրեր: Ասոնց մեջ կը յիշատակուին **Մուևձարակ** կամ **Մուևսարակ** եւ **Կորկոնէ** (Corcona) տեղանունները եւ Պարլերոյ լերին վանքը (**Abbatiam Montis Parleri**), «որոյ ոչ յիշի սրբազան անուն»¹⁹: Ասոնք կրնան ըլլալ նոյն Մուևալէք/Մուևրսալաք կամ Մուևղուսլուօկ եւ - Քէօրքիւնէ/Քուրքիւնու //Քորքոնագիւղերը Քեսապի տարածքին մեջ, իսկ Պարլերոյ լերին վանքը նոյն Պարլու մ կամ Պալլու մ ուխտավայրն է, Կասիոսի հարաւ-արեւելեան լանջին: Այս յիշատակութենէն անկախ՝ այս կիղիցիկներուն գոյութիւնն ալ կը փաստէ, որ ճիշդ չէ այն անդումը, որ Քեսապի միւս գիւղերը հիմնուած են ժԹ. դարուն, աւելի առաջ միայն որպէս ամառնային ագարակներ²⁰ յիշատակուելով: Կան շատ ընտանիքներ, որ չունին այդպիսի անանդութիւններ, կը նկատուին բնիկ, իսկ անդին կան բազմաթիւ ուրիշներ՝ տոհմերու գերդաստաններ, որոնք չքացեր են վերջին երկու դարերու ընթացքին: Տոհմերը չկան, բայց անոնց անունով լքուած գիւղատեղիներ, ձորեր, արտեր, լեռներու աղբիւրներ կան, ինչպէս Փենընլէք, Նաւալլէք, Աճամիկունց արտը, Չագալենց ձորը, Խաչապենց աղբերակը, - Չանթալենց պաղչան եւ այլն: Օսմանեան շրջանին գիւղ եւ ագարակ անուանումները վարչական բաժանումներ էին: Գիւղը կապուած էր գաւառակին՝ նահիէին: Զայաբնակ միակ գիւղը Քեսապն էր, իսկ միւս բնակավայրերը Քեսապին կապուած ագարակներ էին: Ագարակներու բնակիչները, մեծ մասով, պարոններու կալ-ուածներուն վրայ ապրող մարապաներ (քառորդով աշխատող) էին:

Պէտք է նշել, որ տեղաշարժի հետեւ անքով Քեսապի շրջանին մեջ կայք հաստատուելու ընթացքը շարունակուած է յետագայ դարերուն եւս: 19-րդ դարէն եկող յիշողութիւններ կան այդ մասին: Օրինակ, յատկապէս հարաւի շրջաններէն՝ Լաթաբիոյ մերձակայ Քիւրտ Տաղի ու Պոտամայի հայ գիւղերէն որոշ ընտանիքներ կը տեղափոխուին Քեսապ, տեղաւորուելով արդէն տեղաբնիկ ու հին նկատուած ընտանիք-

¹⁹ **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 424:
²⁰ Յ. Պաճագեան խօսելով Գարատուրան գիւղի մասին, առանց աղբիւրագիտական յստակ նշումի, կը գրէ. «Երեք դար առաջ, ըստ հին ձեռագիրի մը, Թաղէոս Վարդապետ Վանեցի ուսուցիչ եղած է Սարգիս աղաՍուլաքեանի գերդաստանին: Եւ մեծ շուքով տոնուեր է Ս. Սարգիս եկեղեցւոյ յիսունամեակը: Այժմ կը մնան եկեղեցւոյ աւերակները միայն» (**Յ. Պաճագեան**, Գիւղական Պատկերներ, ՊԷՅրութ, 2002, էջ 15): Զեղինակը նամակով մը ինձի կը յայտնէ, թէ այդ տղեկութիւնը պարունակող ձեռագիրը անհետ կորսուած է Լիբանանի քաղաքացիական կռիւներու ընթացքին (1975-1978):

ներու կողքին, ինչպէս Արամոյ Էն՝ Արամալ Եանները Վարի Պաղճաղագի, Ղնեմիէ Էն՝ Սարամազ Եանները Վերի Պաղճաղագի, Քիւրտ Տաղ Էն՝ Քորթեանները Եւ Ղնեմիէ Էն՝ Մահտես Եանները Քեսապի մէջ Եւ այլն:

Օսմանեան իշխանութեան հաստատումէն ետք վարչական յարափոփոխ բաժանումներու ենթարկուած է ամբողջ շրջանը: Ռուճի մէջ Շուղըրը կը ձեւացնէ գազա (արաբ.՝ **qasra** գաւառ) մը, որուն կեդրոնը կ'ըլլայ Շուղըր գիւղը, արդէն աւերակ դարձած նոյնանուն բերդին կից: Գազայի գիւղերը այնքան կը նուազին, որ ան 1596-ին ունի միայն երեք գիւղ Եւ երկու ազարակ: Անտիոքի Եւ Շուղըրի գազաները ունէին իրենց կառավարիչները, որոնք կը նշանակուէին ուղղակի օսմանցի սուլթանին կողմէ ու միայն անոր հաշուետու էին: Քեսապի շրջանը պարբերաբար կը մտնէ այս երկու կառավարութիւններու շրջագիծէն ներս: 16-դ դարու երկրորդ կիսուն, Անտիոքի շրջանին մէջ կը ձեւաւորուին նաեւ աղայութիւններ, որոնք ժառանգական կարգով դարեր շարունակ տիրեցին իրենց շրջաններուն ու հաշուետու չեղան Յալէպի կուսակալին: Ճանապարհորդ Քորանչէզ (Corancez, Itineraire de l'Asie Mineure, Paris, 1816) կը վկայէ, որ 1809-ին շրջանին մէջ գոյութիւն ունէին շարք մը աղայութիւններ կամ անկախ կառավարութիւններ, որոնք կապուած էին Բարձրագոյն դրան, ինչպէս Տերթուշը, Շուղըրը, Արիհան Եւ Անտիոքը⁵⁷:

Ճսըր Շուղըր քաղաքը (նախկին Շուղըրի փոխարէն) կը ձեւաւորուի 17-րդ դարու կէսին, Եւ հետզհետէ մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ Ռուճի Եւ Անտիոքի հարաւային շրջաններու բնակչութեան համար: Ան կը դառնայ կեդրոնը Շուղըր գազայի, որուն սահմանները արեւելքէն կը հասնէին մինչ Եւ Իտլիպու Արիհա, իսկ արեւմուտքէն՝ մինչ Եւ Միջերկրական ծով: 1737-ին՝ Մուհամմետ Իպն Ռոսթոմը գայմազամն էր Իտլէպի, Արիհայի Եւ Շուղըրի (կամ Ճսըր Շուղըրի): Ան ամէն տեսակ բռնութիւն ու կողոպուտ կազմակերպեց: Ձեռք դրաւ տրից (հարկային) տետրակներուն վրայ: Ժողովուրդի բողոքին վրայ, 1744-ին սուլթանական ֆերմանով հեռացուեցաւ պաշտօնէն, յետոյ

⁵⁷ **Տ. Գոսարա** Ալ-Րահիպա Ֆի Մուհաֆազաթ Իտլէպ (արաբ.՝ Ճանապարհորդները Իտլիպի Նահանգին մէջ), Բ. հատոր, Յալէպ, 1988, էջ 113:

նշանակուեցաւ նոյն շրջանի Աուքաֆի մութալէլի (վերակացու) ու երկրորդ անգամ սուլթանական հրամանով հաշուետուութեան կանչուեցաւ: Սակայն Ռոսթոմ տոհմը շարունակեց իր թաւանջիական գործունէութիւնը: 19-րդ դարու սկիզբը Մահմուտալէկ Իպս Ռոսթոմը ճսըր Շուղուրի մէջ այնքան առաջ գնաց, որ լրիւ անկախ իշխանութիւն մը հռչակեց: Ռոսթոմները քանիցս չվճարեցին տուրքերը, մինչեւ որ սուլթանը հրամայեց Յալէպի վալիին՝ կարգադրել իրավիճակը կանոնաւոր ձեւով²¹: Անտիոք եւ ճսըր Շուղուր մտան Յալէպի կուսակալութեան մէջ իբրեւ առանձին գազաներ:

Ռոսթոմները իրականութեան մէջ քիւրտացեղ մը կը ներկայացնէին եւ ունէին բազմաթիւ աղայական կեդրոններ: Անոնք սերտգործակցութեան մէջ էին շրջանի թուրքմէն աղայութիւններուն հետ: Փաստօրէն, ճսըր Շուղուրը Անտիոքի հարաւային շրջաններուն՝ Պայիրի, Պուճագի, ՔիւրտՏաղի եւ Որոնդէսի հովիտի թուրքմէններուն մայրաքաղաքն էր:

1816-ին Ալի աղա Ռոսթոմը սպանեց իր հօրեղբօրորդին ու տիրեց ճսըր Շուղուրի եւ Լաթաքիոյ, գրաւեց պետական բոլոր հարստութիւնները, մինչեւ իսկ անգլիական եւ ֆրանսական հիւպատոսարանները²²: Ճսըր Շուղուր փաստօրէն կը գործէր Յալէպի վալիին բոլորովին անկախ ու ինքնիշխան կերպով: Կը կարծենք, որ Բարձրագոյն Դուռը անտես կ'առնէր այս բոլորը՝ Ռոսթոմներուն միջոցով թուրքմէններուն ազդեցութիւնը աւելի բարձր պահելու համար շրջանին մէջ:

Ծանր պայմաններ կը տիրէին Սուրիոյ մէջ: Յատկապէս գիւղացիութիւնը շատ կը տուժէր: Քրիստոնեաները կ'ենթարկուէին եուսուճ փաշայի հրատարակած 1802-ի հրամանագիրին, որ փաստօրէն կազմուած էր առաջին խալիֆաներու հռչակած օրէնքներուն ոգիով²³: Անոնց վիճակը աւելի եւս կը ծանրանայ, երբ սուլթանը իր մերձաւոր Պեքիր աղա Չոլախը Բարձրագոյն Դուռէն հեռացնելով կը նշանակէ Անտի-

²¹ **Տ. Գոսարա** նոյնը, էջ 152-154:

²² Նոյնը, էջ 152:

²³ **Յ. Խ Թոփուզյան**, Սիրիայի և Լիբանանի հայ կական գաղթօճախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 87:

ոքի կառավարիչ: Անտիոք կառավարիչ ին բացարձակ տնօրինու մներու
լն ու հրահանգներուն ենթակայ վիճակ մը կ'ապրի: Պեքիր աղայ ին կը
յաջորդէ իր որդին՝ Փաշա աղա Չոլ ախը, որ աւելի կեդրոնախոյս ի-
շխանութիւն մը կը հաստատէ ու նոյնիսկ կը յաջողի գինք գսպել ու
համար դրկուած ջոկատ մը չարաչար պարտութեան մատնել Քեսապի
մօտտեղի ու նեցած ճակատամարտի մը մէջ:

Պեքիր եւ Փաշա աղաները լայն արտօնութիւններ տուած էին
շրջանի թուրք ու քիւրտ աւատապետերուն, որոնք աւելի եւս կը
սաստկացնէին յատկապէս քրիստոնեաներուն նկատմամբ իրենց դա-
ժան վարմունքը: Քրիստոնեաները անզօրութեան մատնուած էին: Բա-
րձրագոյն Դրան կամ թեմական կեդրոններուն իրենց դիմումները
յանցագործութիւն նկատուելով՝ չարաչար կը պատժուէին: Այդպէս
է, որ Փաշա աղան Անտիոքի մէջ եկեղեցի մը կառուցել ու համար Կ. Պո-
լսէն \$երման բերող մելքիթ (յոյն կաթողիկէ) քահանայ մը կախաղան
կը բարձրացնէ պարզապէս գինք անտեսած եւ ուղղակի սուլթանին դի-
մած ըլլալ ու ն համար²⁴:

Յալէպի կուսակալութիւնը կացութեան տէր ըլլալէն ետք եւս
շատ բան չի փոխուիր Անտիոքի յատկապէս հարաւային շրջաններու
հայոց ու հռոմոց կեանքին մէջ:

Ռոսթոմներէն մեծապէս տուժեցին յատկապէս ճսըր Շուղուրէն
մինչեւ Յարեմ գտնուող բնակավայրերու, Պոտամայի սարահարթի, Ք-
իւրտ Տաղի եւ Օրտուի հայերը: Որոնդէսի հովիտին մէջ, ճսըր
Շուղուրի մօտիկ, կրցան գոյատելել միայն Եագուպիէ եւ Գնիէ
հայկական գիւղերը: Պոտամայի սարահարթի գիւղերը արդէն
պարարւած էին
20-րդ դարու սկիզբը: Քիւրտ Տաղի վրայ գտնուող բազմաթիւ
գիւղերէն մնաց միայն Ղնեմիէն, աւելի հարաւ-արեւելք՝ Արամօ
գիւղը: Օրտուի շրջանին մէջ, անոր արեւմուտքին, Քեսապը կը
դիմանար, բայց Օրտուի արեւելքին հետզհետէ կը խամրէին Արմանճօ,
Կեօջջու, Վերին Թընզըրի, Արֆալի ու Եամատի գիւղերը: 1915-էն ետք

²⁴ **Ն. Ուարտ** Յատարաթ Անթաքիա Ապր ալ -Ուսուր (արաբ.՝ Անտիոքի
Քաղաքակրթութիւնը Դարերու Ընթացքին), Սան Փաուլ օ, 1956, էջ 158-159:

վերականգնած Արֆալի գիւղն ալ հայաթափ կ'ըլլայ 1939-ի նոր սահմանագծումի հետեւանքով:

Քեսապի պարոնները (բրբռ.՝ **աբ'րուև**. աղա) անպայման դեր մը ունէին հայ գիւղացիներուն ճակատագիրին մէջ: Ըստ պատմուող գրոյցներու՝ Քեսապի մէջ իշխող առաջին աւատապետական մեծ ընտանիքը կը կոչուի Պետիրեան կամ Յաճի Պետիրեանք: Ասկէ ճիւղաւորուած են Յաճաղափնք (Կարպուշեան), Տէ'լպետիրինք, Թե'գէ'վըրինք, Պուլյաճինք, Ադամինք, Խըլլըտինք, Մե'րկուսինք, Տերսէ'կինք, Տերէ'րթինինք, Մանճի-կուևք, Պոյմուշաղինք եւ այլն: Կը պատմուի, որ այս տոհմը մինչեւ 1850-ական թուականները քառասուն քահանայ տուած է Քեսապին: 17-րդ դարուն Սողոմոն անուն նահապետ մը, Յաճնոյ կողմերէն, խաշնարած բազմանդամ ընտանիքով կը յայտնուի Քեսապի կողմերը: Տեղացի հայերը կ'ընդդիմանան ու կը փորձեն հեռացնել զայն շրջանէն: Նորեկները Օրտուի Յասան աղաներու միջնորդութեամբ կը տեղաւորուին Ներքի Գիւղի շուրջ: Սողոմոնեաններու ազդեցութիւնն ու կարողութիւնը հետզհետէ կը մեծնան: Սողոմոնեան եւ Պետիրեան ընտանիքներու պայքարը երկար կը տւէ: Անոնց զօրակցութիւն կը յայտնէին իրարու դէմ հակամարտող թուրքմէն աղաները: Այսպէս. Օրտուի Շերիֆ աղաները Պետիրեաններու զօրակից էին, իսկ Յասան աղաները՝ Սողոմոնեաններու տոհմէն Սողոմոն քեհիայի: 18-րդ դարու վերջը, անգամ մը, Յասան աղան հիւրաբար կ'իջնէ Սողոմոն քեհիայի տունը: Շերիֆ աղայի մարդիկ, Պետիր քեհիայի մարդոց հետ, կը յարձակին տան վրայ, կը սպաննեն Շերիֆ աղան, չորս հետեւորդները եւ Սողոմոն քեհիան: Սողոմոնեան տոհմէն կը սերին Սուղմընինք, Սիփկուևք, Աշգարինք, Կիւզէ'լինք, Տէլկավըրինք, Թե'մըրինք, Պուճիկուևք, Գագուսինք, Յանէսքեհինք, Յադուղինք, Մերճէ'նինք եւ Գապաճինք²⁵: Ամբողջ շրջանը թուրք աղաներու հակակշռին տակ կը գտնուէր: Թուրք աղաներու հակամարտութիւններէն, որոնք երբեմն արիւնալի բախումներու կը վերածուէին, կ'օգտուէին հայերը,

²⁵ **Ա. Ինճեճիքեան**, Քեսապ եւ իր Բարբառը, տե'ս **3. Չուլսքեան**, Քեսապ, Գ. հատոր, Յալէպ, 2004, էջ 48-50:

երբեմն կը վնասուէին ալ : Հակամարտութիւններու մէջ էին նաեւ հայ պարոնները: 19-րդ դարու սկիզբները արդէն խամբերու նահապետական փոքր ընտանիքներու մասնատուեր էին Հաճի Պետիրները, դարու երկրորդ կիսուն մասնատուեցան նաեւ Սողոմոնեանները՝ հրապարակը ձգելով Սերգօ աղաներուն (Մահտեսեան):

1.2 – ՏԱՐԱՃԲԸ, ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Ա Աշխարհագրական տեղեկանք եւ բնակչութեան պատկեր.– Սուրիական արեւմտեան լեռնաշղթայի հիւսիսը, Որոնդէսի հովիտին ու գետաբերանին յարող իր դիրքով, կը գտնուի շրջանի բարձրագոյն գագաթը՝ Կասիոսը (1750 մ.): Լեռը հնագոյն ժամանակներէն իվեր սրբացուած է տեղւոյն բնիկներուն կողմէ: Ուկարիթի Ք. ա. 14-13-րդ դարերուն վերաբերող բաբելական աստուածներու ցանկ մը պարունակող արձանագրութիւն մը զայն կը կոչէ Խազի, ուր կը բնակի Անաթը՝ շանթի ու մրրիկի աստուածուհին, իսկ քանանական աստուածներու ցանկ մը պարունակող այլ արձանագրութիւն մը լեռը կը կոչէ Սաֆոն, ուր կը բնակի Պապլ աստուածը, որ նոյնպէս շանթի ու մրրիկի աստուած էր: Անաթ աստուածուհին Ուկարիթի Էլ Է մեծագոյն աստուծմէ կը խնդրէ, որ տուն մը կառուցէ իր եղբօր՝ Պապլի համար, Սաֆոն լեռան գագաթը: Հելլէնիստական շրջանին լեռը կը կոչուի Կասիոս (Խազի-Կասիոս), ու կը նկատուի Չելս աստուծոյ սուրբ լեռը: Սելեուկեան պետութեան թագաւորները, հռոմէացի կայսրեր եւ զօրավարներ Չելսին զոհեր մատուցելու համար Կասիոս կը բարձրանային: Անոր հարաւարեւելեան մէկ բլուրին վրայ (1250 մ.) գտնուող աւերակները կը վերագրեն Չելսի տաճարին: Անոր վրայ հաւանաբար կառուցուած ըլլայ Անտիոքի լատին դքսութեան ատեն հռչակ վայելած Պարլերի լեռան վանքը (Abbatiam Montis Parleri)՝ Անտիոքի շրջանի բովանդակ հայոց Ս. Վարդավառի տօնի համաժողովրդական ու խոսովայր Պարլու մը²⁶:

²⁶ Կասիոս լեռան մասին տե՛ս **G. Downey**, Ancient Antioch, Princeton University Press, New Jersey, 1963: Տեսած ենք Դոկտ. Իպրահիմ Նասիայի արաբերէն թարգմանութիւնը՝

Արաբական իշխանութեան ատեն լեռը կոչուած է ճեպել Ագրա, այսինքն՝ ճաղատլեռ, գագաթը բոլորովին լերկ ըլլալուն համար: Ասկէ կու գայ քեսապցիներուն անոր տուած անուանումը՝ ճըպրագլա:

Քեսապի շրջանը կը տարածուէր Կասիոսի շուրջ բոլորը, հիւսիսէն ու արեւելքէն կ'իջներ մինչեւ անոր բարձրադիր լանջերը, մինչեւ Ուռուֆէլ, Պեգլէ, Չանտուր, Տեսթուր եւ Օրտու թրքական գիւղերը: Քեսապցիներ արեւելքէն կը շրջանցէր Կասիոս լեռը, թրքական այս գիւղերը, կ'անցներ Որոնդէս գետն ու Լաֆշիան (բրբռ.՝ Լէֆշէք), ուրկէ վեր Մուսա Լերան հայ գիւղերն էին: Նոյն կողմէն կ'ուղղուէր նաեւ դէպի Անտիոք: Մինչեւ Անտիոք՝ թրքական գիւղեր են: Ճսրը ծուղուր գացող ճամբան, թուրք, քիւրտու արաբ բնակչութեամբ գիւղերէն բացի, կ'անցներ Արֆալի, Եամատի, Կէօչչու, Գնիէ եւ Եագուպիէ արաբախօս հայ գիւղերու մերձակայքէն:

Շրջանը արեւմուտքէն կը տարածուէր մինչեւ ծով, Անթը Գարամաղարա կոչուող քարայրներով հարուստ լեռնապատը, որմէ հիւսիս՝ Որոնդէսի հովիտին մէջ գտնուող ալեւիական Միատուն բնակավայրի կալուածներն էին: Ասկէ Սուէտիատանող արահետը կարելի էր գործածել միայն հետիոտն ճամբորդութեան պարագային: Սուէտիա երթալու համար կը գործածուէր նաեւ ծովային ճամբան:

Շրջանի հարաւային սահմանը կը հասներ մինչեւ Լեղի Ջուր (բրբռ.՝ Լըղըջէօր) կոչուող հովիտը: Ասկէ դէպի Լաթաքիա իջնող ճամբուն ձախկողը Պուճագի թրքաբնակ գիւղերն էին, ուրկէ անցնելով քեսապցիներն արկապուրիլ Ղնեմիէ եւ Արամօ հայաբնակ գիւղերուն, իսկ աջին՝ փռուած էին Քեսապի հարաւային Պայըրի թրքաբնակ գիւղերը: Ասոնցմէ յատկապէս կարելոր են Ֆագը Յասանը, Քեշիշը եւ Սարայան, ուր կեդրոնացած էին թուրք աղաները: Ասոնց մէջ եւ Պասիթի հրուանդանին մօտկը գտնուին ալեւի կարգ մը գիւղեր, որոնք օսմանեան շրջանին կախեալ վիճակի մէջ էին թուրք աղաներէն:

Շրջանի ծովափը թրքաբնակ Պետրուսիէ գիւղէն մինչեւ Գարատուն եւ Գարատունէն մինչեւ Անթը Գարամաղարա, ուղիղ գիծով

Ճիլ անվիլ Տաւուսի, Անթաքիա ալ-Գատիմա, Գահիրէ, 1967, էջ 46-47; J. Mésérian, S. J., Expédition archéologique dans L'Antioche Occidentale, Beyrouth, 1964, P. 61-67.

շուրջ 15 քիլոմետր, ամբողջապես լեռնապատ է. ծով ելլող միակ վայրը Գարատուրանի ձորաբերանն է:

Քեսապի շրջանը իր այս սահմաններով հեռու էն լեռնակղզիի մը կը նմանի, որ տիրական դիրք ունի բոլոր կողմերուն վրայ:

1939-ին Աղեքսանդրէթի սանճաքին հետ թուրքիոյ կը կցուի նաեւ ճեպէլ Ագրան կամ Կասիոս լեռը: Ծրջանի արեւմուտքէն, հիւսիսէն ու արեւելքէն թուրքիոյ կցուած այս ընդարձակ տարածութիւնները կը կազմէին շրջանին աւելի քան մէկ երրորդը: Հոն էր շրջանին բնակչութեան կալուածներուն մեծամասնութիւնը՝ արօտավայրերը, արտերն ու պարտեզները, քանի մը կարելի որ աղբիւրներ, Պարլու մի համաժողովրդական ուխտավայրը: Այսպիսով Քեսապի շրջանէն Սուրիոյ կը մնայ միայն հարաւային եւ հարաւ-արեւմտեան մասը, ուր ալ կը գտնուին շրջանի տասնեակ մը բնակավայրերը:

Ծրջանի դէպի արեւելք յարող լեռնային գոգաւորութիւններուն ու ստորին հովիտներուն մէջ տեղադրուած բնակավայրերն են - **Քեսապ** (բրբռ.՝ Քէ'սուօպ, արաբ.՝ Քա-սապ)²⁷, **Սեւ Աղբիւր** կամ **Գայ անըզ** (բրբռ.՝ Սիվաղբուօյր, արաբ.՝ Սախրա), **Ներքի Գիւղ** կամ **Էսկիւրէն** (բրբռ.՝ Նըրքը Գիէղ, արաբ.՝ Աղլալ), **Խայ իթ** (նկատուած է Ներքի Գիւղի թաղերէն մին), **Չինարճըզ** կամ **Չինար** (բրբռ.՝ Չընուօր, արաբ.՝ Այն Էլ-Տըլալէ), **Չագալ ճըզ** (բրբռ.՝ Չագալ ճօզ, արաբ.՝ Ղագալէ), **Տուգաղան** (արաբ.՝ Շաճարա), **Քէօրքիւնէ** (բրբռ.՝ Քուրքուսու, արաբ.՝ Ռապուլէ), **Էքիզօլուք** (բրբռ.՝ Քուզուլօզ, արաբ.՝ Նապէյն): Անոնց արեւմուտքին, դէպի ծով կ'երկարի ուրիշ լեռնագօտի մը՝ Տախասա, Սելտրան եւ Գըլղըր գագաթներով: Այս լեռնագօտիին հիւսիսային կողմը կ'երկարի **Գարատուրանի** (բրբռ.՝ Գէ'րէ'տըրուն, արաբ.՝ Սամրա) հովիտը համանուն գիւղի իրարմէ քանի մը քիլոմետր հեռու գտնուող թաղերով, եւ **Պաշորտ** գիւղը (այժմ՝ լքուած), իսկ հարաւային կողմը կը գտնուին **Վերի Պաղճաղազ** եւ **Վարի Պաղճաղազ** (բրբռ.՝ Վըրը Պաղ, Նըրքը Պաղ, արաբ.՝ Մուշրիֆէ) գիւղակները: **Աճամը**՝ Էքիզօլուքի,

²⁷ Այսուհետեւ փակագիծերու մէջ դրուած են տեղանունն բարբառային տարբերակը եւ 1964-ին՝ նահանգային հրամանագիրով ընդունուած արաբերէն վերանունումը:

Գարատաքը՝ Գարատուրանի, իսկ **Գալան** Քեսապի թաղերը կը նկատուին (քարտեզը՝ յաւելուած թիւ 2):

Քեսապի շրջանի առանձին գիւղերու բնակչութեան թիւեր մեզի կու գան դեռ 19-րդ դարու կեսերէն: 1893-ին բնակչութեան ընդհանուր թիւն է 9000²⁸: 1895-1896 տարիներու համիտեան բռնութիւններու հետեւ անքով մեծ թիւով քեսապցիներ կը հեռանան շրջաւնէն: 1906ին Քեսապի շրջանը ուներ 1318 տուն զուտ հայ բնակչութիւն, որմէ՝ առաքելականները՝ 678 տուն, աւետարականները՝ 531 տուն, կաթողիկէները՝ 66 տուն, լատինները՝ 43 տուն. ասիկա ուներ հետեւեալ պատկերը. Քեսապ՝ 450 առաքելական, 320 աւետարանական, 30 կաթողիկէ, ընդամենը՝ 800 տուն. Գարատուրան՝ 120 առաքելական, 48 աւետարանական, 12 կաթողիկէ տուն. Սել Աղբիւր՝ 25 առաքելական, 21 աւետարանական, 4 կաթողիկէ տուն. Ներքի գիւղ՝ 17 առաքելական, 5 աւետարանական, 8 կաթողիկէ տուն. Զինար՝ 28 առաքելական, 10 աւետարանական, 12 կաթողիկէ տուն. Զագալ ճըգ՝ 20 առաքելական, 45 աւետարանական տուն. Քեօրթիւնէ՝ 10 առաքելական, 28 աւետարանական տուն. Էթիզօլուք՝ 50 աւետարանական տուն. Տուգաղաճ՝ 6 առաքելական, 9 աւետարանական տուն. Վերի Պաղճաղաճ՝ 2 առաքելական, 15 աւետարանական տուն, Վարի Պաղճաղաճ՝ 43 լատին տուն²⁹:

1909-ի Աղէտին Քեսապի բոլոր գիւղերը կողոպուտի կ'ենթարկուին, հրոյ ճարակ կ'ըլլան: Լաթաքիա ապաստանած ոչ բոլոր քեսապցիները կը վերադառնան. ոմանք կ'արտագաղթեն: 1911-ին, ըստ Լաթաքիոյ Երուսաղիմապատկան Զոգետան տեսուչ եւ Լաւոդիկէի, Անտիօքի եւ ճըսըրի վիճակաց Առաջնորդ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի կատարած մարդահամարին՝ գիւղերը ունին բնակչութեան հետեւեալ պատկերը.

Քեսապ	543 տուն	2797 անձ
Գալատուրան	237 տուն	1290 անձ

²⁸ **Յ. Շնորհոքեան**, Օթուգ Սէքիգ Սէնէ Էվվէլին Քեսապը, «Նոր Աւետարեր» (հայատառ թրքերէն՝ Երեսուն երկու տարի առաջ ունի Քեսապը), 1931, թիւ 18, էջ 435):

²⁹ «Արեւելեան Մամուլ», 1906, թիւ 50, էջ 1228-1231:

Քեօքիւնէ	67 տուև	338 անձ
Չինարճըգ	38 տուև	176 անձ
Էսկիւրէն	33 տուև	178 անձ
Տուգաղաճ	22 տուև	113 անձ
Էքիգօլուք	59 տուև	312 անձ
Գայաճըգ	71 տուև	445 անձ
Պաղճաղազ	22 տուև	121 անձ
Պաշուրտ	13 տուև	85 անձ
Ֆագը Յասան	52 տուև	260 անձ
Ընդհ. թիւ՝	1157 տուև	6115 անձ ³⁰

Նշենք, որ 1911-ի մարդահամարը 1906-ի դիմաց կու տայ 161 տուև նուազ:

1914-ին, ըստ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին՝ ամբողջ շրջանը ունի 8736 անձ բնակչութիւն³¹, մինչև նոյն թուին արլսական ուրիշ աղբիւր մը ընդհանուր բնակչութիւնը կը գնահատէ իբր 13,450 անձ³². Իոս հաւանաբար նկատի առնուած են Քեսապէն դուրս գտնուող կամ Ամերիկաներ անցած քեսապցիներն ալ:

Մեծ Եղեռնի տարիներուն՝ Սուրիոյ խորերը, մինչեւ Տեր Զօրու Թատմոր ու մինչեւ Յորդանան տարագրուած քեսապցիները մարդկային մեծ կորուստներ կ'ունենան: 1920-ի Յունիսին ուսուցիչ Սիմոն Այանեան կը ձեռնարկէ վերապրող քեսապցիներու մարդահամարին: Դժբախտաբար իր տեղ չեն գտած կամ կորսուած են Գարա-տուրանի եւ Պաշորտի տուեալները: Անոնք տարագրութենէն Քեսապ վերադարձան 1920-ի ամրան: Ըստ անոր՝ Քեսապ եւ շրջակայ գիւղերը ունին թուական հետեւեալ պատկերը.

Քեսապ 473 տուև 1629 անձ, որմէ դուրս են 88 ան

³⁰ **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Ա. հատոր, Յալէպ, 1995, Էջ 53, իսկ մարդահամարի ամբողջական տուեալները՝ Էջ 393-455: Վարի Պաղճաղազ գիւղը նշուած է Ֆագը Յասան անուն տակ, որ Վարի Պաղճաղազի երկու թաղերէն հեռու (Գապաչիկար եւ Չաթալլէք) թրքաբնակ գիւղ է: Վերի Պաղճաղազ գիւղը նշուած է պարզապէս Պաղճաղազ ձեւով:

³¹ **R. H. Kévorkian et P. B. Paboudjian**, Les arméniens dans L'Empire Ottoman à la veille du Génocide, Paris, 1992, p. 58.

³² **Թեոդիկ**, «Ամենուև Տարեցոյցը», Ը. տարի, Կ. Պոլիս, 1914, Էջ 322-323:

Գայ աճ ըզ	32 տուև	102 անձ,	որմէ դուրս են 8 անձ
Տիւ գաղաճ	8 տուև	30 անձ,	որմէ դուրս են 4 անձ
Չինարճ ըզ	40 տուև	108 անձ,	որմէ դուրս են 33 անձ
Ներքի Գիւղ	25 տուև	74 անձ,	որմէ դուրս են 24 անձ
Չագալ ճ ըզ	16 տուև	51 անձ,	որմէ դուրս են 27 անձ
Քեօրքիւնէ	37 տուև	99 անձ,	որմէ դուրս են 20 անձ
Էքիզօլ ուք	50 տուև	147 անձ,	որմէ դուրս են 54

անձ

Վերի Պաղճաղազ	14 տուև	41 անձ,	որմէ դուրս են 4 անձ
Վարի Պաղճաղազ	32 տուև	82 անձ,	որմէ դուրս են 17 անձ
Ընդհ. թիւ`	727 տուև	2369 անձ,	որմէ դուրս են 779 անձ ³³

Այս հաշուով դուրս ունենաւ քեսապիներուն թիւն է 2369: Ասիկանախկինին մէկ երրորդն իսկ չէ:

1947-ին հայրենիք կը ներգաղթէ Քեսապի բնակչութեան շուրջ կէսը³⁴.

	առաք.	աւետ.	կաթողիկէ	
ընդհ.				
Քեսապ	367	176	230	773
Գայ աճ ըզ	169	38	18	225
Ներքի Գիւղ	56	2	20	78
Չինարճ ըզ	28	4	87	119
Չագալ ճ ըզ	14	18	-	29
Տիւ գաղաճ	55	-	-	55
Քեօրքիւնէ	17	41	5	63
Էքիզօլ ուք	-	20	-	20
Գարատուրան	639	78	87	804
Պաշորտ	46	-	-	46
Վերի Պաղճաղազ	47	18	16	81
Վարի Պաղճաղազ	-	-	114	114

³³ **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Ա. հատոր, Զալէպ, 1995, էջ 114, իսկ մարդահամարի ամբողջական պատկերը` տե՛ս Գ. հատոր, Զալէպ, 2004, էջ 237-292:

³⁴ Ալպոմ Քեսապի եւ Շրջակայից, էջ 27:

Ընդհ. թիվ 1435 395 577 2407

1955-ին Քեսապ մնացած բնակչու թիվնը մեծ անկում մը կը ներկայացնէ.

	առաք.	աւետ.	կաթողիկէ	
ընդհ.				
Քեսապ	311	231	111	653
Գայ աճըզ	30	14	-	44
Ներքի Գիւղ	14	4	50	68
Չինարճըզ	23	17	20	60
Չազալ ճըզ	20	18	-	38
Տիւզաղաճ	15	9	-	24
Քէօրքիւնէ	-	96	-	96
Էքիզօլ ուք	-	141	-	141
Գարատուրան	270	71	57	398
Պաշորտ	-	-	-	-
Վերի Պաղճաղազ 7		34	-	41
Վարի Պաղճաղազ 15		-	54	69
<i>Ընդհ. թիւ</i>	<i>705</i>	<i>635</i>	<i>292</i>	<i>1632</i>

Նոյն թուին Սուրիա եւ Լիբանան կը գտնուին 1251 անձ, Ամերիկաներ՝ 880³⁵:

Չայրենադարձութենէ ետք շրջանի հայութեան թիւը միշտ եղած է 1200-1500-ի միջեւ: 1993-ի եւ 2007-ի կատարուած հաշուումները ցոյց կու տան հետեւեալ պատկերը.

	1993 ³⁶		2006 ³⁷	
	տուս	անձ	տուս	անձ
Քեսապ եւ Գալա	135	482	88	427
Գարատուրան				
եւ Գարատաշ	47	185	44+33	169+104
Սեւ Աղբիւր	9	46	18	72
Ներքի Գիւղ				
եւ Խայիթ	34	162	30+10	111+46

³⁵ Ալարմ Քեսապի եւ շրջակայից, Էջ 27: Ընդհանուր գումարները կատարուած են մեր կողմէ:

³⁶ **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Ա. հատոր, Չալէպ, 1995, Էջ 143:

³⁷ **Ս. Ասատուրեան-Մանճիկեան**, Քեսապ շրջանի Չայրութեան Վիճակագրութիւն, 2006-2007, Չալէպ, 2010, ընտանիքի թիւ՝ Էջ 9, անձի թիւ՝ Էջ 8:

Չինարճըգ	18	71	19	71	
Չագալ ճըգ	13	48	9	36	
Քեօրքիւնէ		18	57	15	47
Տուգաղաճ	15	64	22	86	
Էքիգօլ ուք եւ Աճամ	35	124	33	109	
Վերի Պաղճաղազ 4	17		6	21	
Վարի Պաղճաղազ 6	21		6	20	
<i>Ընդհ. Գուճար`</i>	<i>334</i>	<i>1277</i>	<i>368</i>	<i>1319</i>	

Բ. Բնակավայրերը.

1. **Քեսապ** աւանը կը գտնուի ծովէն 800 մ. բարձրութեան վրայ, Կասիոս լեռան հարաւային մէկ գոգաւորութեան անկիւնը: 1850-ական թուականներուն աւանի երեք թաղերը լայն կիսաշրջանակ մը կը ներկայացնէին: Բոլոր տուներուն թիկունքը լեռնածոցը կազմող լեռներուն կողմնէր, իսկ ճակատը՝ դէպի հարաւ-արեւելք իջնող հովիտը: Տուները խիտէին, իրար կից, պատը՝ պատին տուած: Կեդրոնական եւ արեւմտեան թաղերուն տուները կը սկսէին ճիշդ լեռան ստորոտէն, իսկ արեւելեան թաղի տուներուն թիկունքը արտեր էին: Տուները շարք-շարք վար կ'իջնէին: Իւրաքանչիւր երկու շարք տուներուն մէջէն կ'անցնէր գռիհը (նեղ փողոց), որ ընդհանրապէս սալ արկուած էր: Գռիհին վարի շարքի տուները, տեղանքի զառիթափ ըլլալուն պատճառով, ետեւէն կ'էս գետնափոր կը թուէին, կռնակէն պատուհան, դուռ ու պատշգամ չունէին: Միայն արկ տուներուն տանիքը մէկ ոստումով կարելի էր բարձրանալ: Երթեւեկութիւնը եւ բեռներուն փոխադրութիւնը դիւրացնելու համար անկիւնադարձներուն գրեթէ բոլոր տուները կոր, դէպի ներս քաշուած շարուածք ունէին:

Քեսապ անունը ոմանք կը կապեն **Քասաթէլլա**/**Գազաթէլլա** (գեղեցիկ տուն), **Քասափս/Քասափս** եւ **Գազեմաթէլլա/Գազամաթէլլա** բառերուն հետ եւ նոյնիսկ արաբերէն **Քասապ**՝ «շահող» բառին հետ³⁸:

³⁸ Անուան այս տարբերակները տե՛ս **Ա. Ս. Աբէլեան**, Քեսապ եւ իր Գիւղերը, Պէյրուք, 2002, էջ 160; **A. S. Apelian**, The Antiochians, Boston, 1960, pp. 9-10; **Բ. Յ. Գ(ալ Ֆայեան)**, Քեսապ Դարերու Ընթացքին, «Ձանասէր» (Պէյրուք), Սեպտ.-Դեկտ. 1941, էջ 95; **Վեր. Կ. Ս. Թիլքեան**, Իննսունհինգամեակ Քեսապի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ, 1853-1948, Պէյրուք, 1848, էջ 11 եւ 124; **Տ. Ճ. Կրլոբեան**, Ոսկեմատեան Յայ Աւետարանական Միութեան, Ա. հատոր, Պէյրուք, 1950, էջ 347, հմմտ. **P. Jacquot**,

Բնագրային տարբերակներ են Գազամպել և Գազեմպել անունները, որմէ քաղուած են Քասապել և կամ Գազապել և (լատիներէն՝ գեղեցիկ տուն) ստուգաբանութիւնները: Յարց է, թէ Գազամպել /Գազեմպել տեղանունը ինչպէ՛ս կը նոյնացուի Քեսապի հետ, մանաւանդ որ անոր տեղադրութեան մասին ճշգրիտ նշումներ ալ չկան: Խաչակրաց արշաւանքներուն մէջ յիշատակուող Գազամպելը աւելի տրամաբանական կը թուի փնտռել խաչակիրներուն փոքր-ասիական ճանապարհին վրայ տեղմը, Կիլիկիայէն արեւմուտք: Քեսապաւնէն շուրջ մէկ քիւլոմէթր արեւմուտք, Գալայի (Բերդ) և ճանանցքին մէջ տակաւին կ'երեւին հիմքերը ամրոցի մը, որուն յունահռոմէական թէ աւելի վաղ շրջանի մը պատկանելուն մասին յստակ բան չկայ: Հոն խաչակրական հետքեր չկան:

Քասապիս կամ Քասապիս ձեւը դարձեալ ստուգաբանական յօրինում մըն է, որ կը վերագրուի Լաթաքիոյ մէջ գործած միսիոնար դոկտ. Տոտի. ըստ անոր՝ Cassius և Երան յունարէն տարբերակն է Casseos, որուն eos=վոս վերջոյ թը տեղացի արաբները կ'արտասանեն վ>սօրինաչ ափական հնչիւնափոխութեամբ՝ տալով **Քասապս** արտասանութիւնը, որմէ կ'առաջանայ **քասաքասապ** ձեւը, «ոս» վերջոյ թի անկումով³⁹: Երուանդ Յ. Քասունի կը բերէ նաեւ Դոկտ. Իտմըրի մէկ վարկածը: Վերջինը ուսումնասիրելով Էալայի (Ք. ա. 3-րդ հազարամեակ) քաղաքակրթութիւնը՝ կը գտնէ, որ արքայներէն **քասարւմ** կը նշանակէ արծաթ: Աքքատեան Սարկոն արքան Տաւրոսեան և ճաները կը կոչէ Արծաթէ և ճաներ: Դոկտ. Իտմըր արքայներէն **քասարւմ** բառին մէջ արաբերէնի պէս յաւելուած հնչիւններ կը նկատէ «ոլ» եւ «մ» հնչիւնները, արմատը՝ **քասապ** «-Հիւսիսային գիւղերէն մէկուն Քասապ անուանումը փաստմըն է, որ

Antioche, centre de tourisme, Beyrouth, 1931. t. III, Paris, 1931, p. 537); Ալպոմ Քեսապի Եւ Շրջակայից, հրատարակութիւն Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէյրութի մասնաճիւղի, Պէյրութ, 1955, էջ 7; **S. Անդրեասյան**, Սվեդիայի բարբառը կամ Քիստիսիգիլեզուն, Երևան, 1967, էջ 198; **R. Grousset**, Histoire des Croisades, t. I., Paris, 1934, p. 563; **Կ. Սասնէ**, Հայերու Ներկայութիւնը Սուրիական Շովափին Վրայ, «Գեղարդ» տարեգիրք, Բ. տարի, Հալէպ, 1978, էջ 275: Պատմաբան Կ. Սասնէ իբր աղբիւր կը բերէ **E. Rey**, Les Colonies Franques de Syrie, Paris, 1883, p. 395 եւ **R. Rührich**, Geschichte des Königreichs Jerusalem, Innsbruck, 1897, s. 137. **Gauthier le Chancelier**, Galteri Cancellari Bella Antiochena, Innsbruck, 1896, t. II, p. 9; **Guillaume de Tyr**, XII, p. 11; **F. de Schrader**, Atlas de Géographie Historique, Paris, Librairie Hachette et C^{ie}, 1896, Etats Francs de Syrie au XII^{me} Siècle, p. 137.
³⁹ Տե՛ս **Ա. Ա. Արէլեան**, Քեսապեւ Իր Գիւղերը, Պէյրութ, 2002, էջ 163, Եր. Յ. Քասունիի թիւ 14 ծանօթագրութիւնը:

շրջանը հարուստ էր արժաթի հանքերով» կ'աւելցնէ ան⁴⁰: Քեսապը ո՛չ Անատոլիայի մէջ է, ոչ ալ Տաւրոսեան լեռնաշղթայի վրայ, այլ՝ Եաւլայէն արեւմուտք (եւ ոչ թէ հիւսիս), Կասիոս լեռան արեւմտեան եւ հարաւային լանջերուն վրայ, ուր ... արժաթ երբեք չէ գտնուած, ոչ ալ արժաթի սպառած հանքերու հետքեր նկատուած են:

Ըստ անդու թեան, ինչպէս տեսանք, Քեսապը հիմնողները եղած են Ներքի Գիւղի նախկին բնակիչները: Ատիկապէտք է ըլլայ Ժ2. դարէն սկսեալ, երբ ապահովութեան նկատառումներով Քեսապէն մինչեւ Ներքի Գիւղու շրջակայքը ցրուած մանր բնակավայրերու բնակիչները կը մեկտեղուին այս լեռնածոցին մէջ: Քեսապէն քիչ վար՝ Ս. Ստեփանոս, Սամասի Ս. Մարութեւ Ներքի Գիւղի Ս. Աստուածածին անուամբ «կիղիցիկ»ները (խոնարհած եկեղեցի) ասոր ապացոյց կրնան նկատուին: Քեսապի շրջանին գրեթէ բոլոր յայտնի գիւղերուն լքուած բնակավայրերու տարածքին մէջ ժողովուրդին կողմէ սրբացուած բազմաթիւ «կիղիցիկ»ները նոյն բանին վկաներն են:

Քեսապի զարգացումը հետեւեալ գլխաւոր հանգրուաններէ անցած է.

ա.- Իպրահիմ փաշայի իշխանութեան օրօք (1832-1842) Քեսապի բրել գիւղ կը մտնէ Զալեպի կուսակալութեան Անտիոքի գայմագամութեան (գաւառի) Օրտուի կամ ճեպէլ Ագրայի նահիէին (գաւառակ) մէջ: Քրիստոնեաներու համար կը ստեղծուին բարենպաստ պայմաններ: Ապահովութիւն կը տիրէ: Գիւղատնտեսութիւնը կը զարգանայ ու կը կազմաւորուի Քեսապի շուկան, կեդրոնական թաղին մէջ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մօտէն մինչեւ արեւմտեան թաղի վերին գռիհները: Երկու թաղերը իրարմէ բաժնող ձմեռնային գետահունը ունէր փայտեայ կամուրջ մը:

բ.- 1850-1860-ական թուականներուն Քեսապ կը մտնեն բողոքական ու կաթոլիկ քարոզչութիւնները: 1853-ին պետական ճանաչում կը ստանայ **վրոթեսթան միլլէթը** (աւետարանական համայնք), իսկ 1858-ին՝ **կաթոլիկ միլլէթը** (կաթոլիկէ համայնք): 1859-1860

⁴⁰ **Դոկտ Իտ Մըր**, Առեւտուրը Եաւլայի մէջ, «Պատմական Ուսումնասիրութիւններ» (Զանդէս Դամասկոսի Զամալ սարանի), ԺԴ. տարի, թիւ 45-46, 1993, էջ 61 (արաբերէն):

թուականներուն կը կառուցուի 1000-է աւելի մարդը նդգրկող աւետարանական եկեղեցին գիւղի հրապարակին՝ Խոդին կից, իսկ կաթողիկէ համայնքը արեւելեան թաղին կեդրոնը 1861-ին կը կառուցէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, երիցատունն ու դպրոցը: Շինարարական այս թափը կը շարունակուի նաեւ եօթանասունական թուականներուն, երբ ամերիկեան ՊորտԱռաքել ու թիւնը իր կեդրոնը Անտիօքէն Քեսապ կը տեղափոխէ ու կը կառուցէ իր շէնքը Խոդի մէջ: Կղմինտրածածկ ու թեք տանիքներով երկյարկանի շէնքեր կ'երեւին յատկապէս արեւմտեան թաղին ու Խոդի մէջ:

Մայր եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող գերեզմանատունը կռուափնձոր կը դառնայ: Ծնունդով աւետարանական մեռելները միեւնոյն գերեզմանատան մէջ թաղելու պարագան կը յուզեր մայր համայնքը, որ ատկա իր եկեղեցւոյ դաւանանքին նկատմամբ անարգանք կը նկատէր: Օրտուի միւտիրը (գաւառակի կառավարիչ) 30 հեծեալ զինեալներով կ'ելլէ Քեսապ ու Խոդի մօտիկ բլուրին վրայ կայնած՝ զայն գերեզմանատան համար կը բաժնէ երեք համայնքներուն միջեւ: Ողջերը բաժնող բռնաւորը մեռելները կը միացնէ...: 1880-ին կեդրոնական թաղի հայոց փոքրիկ մատուռին տեղ, բակի գերեզմանատան մէկ մասն ալ ներառելով, կը կառուցուի այժմու եռախորան եկեղեցին, որ սակայն հողէ ծածկ կ'ունենայ: Աճիւնները կը հաւաքուին արեւմտեան դրան առջեւ, հասարակաց փոսի մը մէջ: Տապալաքարեր չեն պահուած:

1870-էն ետք Օրտուի նահիէն կը մտնէ ճսըր Շուղուրի գազային մէջ⁴¹: Քեսապի շրջանին մեծ մասը ճսըր Շուղուրի հայ կական միւս գիւղերուն հետ կը մտնէ միեւնոյն գազային մէջ՝ մինչեւ 1922 թուականը:

Այս շրջանին մեծապէս կը զարգանայ Քեսապի շուկան, որ իրեն կը քաշէ ԵայլաՏաղի, Պայիրի, Պուճագի եւ Պասիթի թուրքմէն ու ալեւի բնակիչները: Ասիկա իր կարգին կը բերէ կենցաղի փոփոխութիւն մըն ալ: Կամաց-կամաց կը զգացուի Քեսապ անի ու շրջակայ

⁴¹ **Ֆ. Գոսպրա**, Ալ-Բահիալ ա Ֆի Մուհաֆազաթ Իտլէպ (արաբ.՝ ճանապարհորդները Իտլիպի նահանգին մէջ), Բ. հատոր, Յալէպ, 1988, էջ 113:

գիւղերու հակադրու թիւնը:

գ.- 1909-ի Աղէտին Քեսապի հայերը քանի մը ժամ դիմադրելէ ետք փախուստի կը դիմեն դէպի Գարատուրան: Տուներն ու շուկան կը կողոպտուին, կը հրկիզուի ամէն բան, աւետարանական, կաթողիկէ ու լատին համայնքներու եկեղեցական ու դպրոցական շէնքերը լրիւ կը քանդուին: 1910-ին շինարարական մեծ թափմը կը սկսի. կը կառուցուին աւետարանական համայնքի դպրոցական երկու շէնքերը, երիցատունը, ժողովրդային Գրադարանը, Սահակեան Ազգ. Վարժարանը, կողքին՝ երիցատունը, Պօղոսեան Ազգ. Աղջկանց Վարժարանը, լատինաց նախկին վանքը եւ այլն: Մեծ Եղեռնի հետեւանքով երկար տարիներ առանց ծածկի մնացած աւետարանական համայնքի Ս. Երրորդութիւն եկեղեցին (Սպիտակ եկեղեցի) շինարարական գլուխգործոց մըն է: Կայ արձանագրութիւն. «Ս(ուրբ) ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ / 1909»: Տեղացի քարտաշներ եւ որմնադիրներ՝ ուրֆացի Ուստաճրճիի եւ այնթապցի ՈւստաՆազար Ուստագարայեանի գլխաւորութեամբ առաջին անգամ ըլլալով կը բանան Պաշոբոտի սպիտակ մարմարի քարահանքը: Լայնօրէն կ'օգտագործուի սրբատաշ ու քանդակազարդ քարը:

Շուկային համար կը ստեղծուի բաւական երկար փողոց մը՝ արեւմտեան թաղի կեդրոնէն մինչեւ կեդրոնական թաղի կեդրոնը: Ժողովրդային Գրադարանին բակի պարիսպին եւ Սահակեան դպրոցի երկյարկ շէնքի հարաւային եւ արեւմտեան պատին կը բացուին խանութներ ու վարձով կը տրամադրուին փափաքողներուն:

Արեւմտեան թաղին մէջ շուկան կը զբաղեցնէր վերին գռիհը: Ասոր վերի տուներու ետին կը գտնուէին երկաթագործներու եւ պղնձագործներու կրպակները: Ասոնք կռթնած էին լերան ու շատերը կէս ժայռափոր խանութներ էին:

Երկու թաղերը բաժնող ձմեռնային գետահունին վրայ այնթապցի ՈւստաՆազար Ուստագարայեան Պաշոբոտի սրբատաշ քարով կամուրջ կը կառուցէ, որ օժտուած էր նոյն քարով շինուած բազրիքով: Կամուրջը կը դառնայ իւրօրինակ հրապարակը շուկային ու զայն կը բաժնէ երկու թւերու: Խանութներու բաժանումն ալ կը կատարուի որոշակի սկզբունքով:

Շաբաթ օր Քեսապի շուկայի օրն էր, մօտիկ եւ հեռաւոր գիւղերու բնակիչներուն շուկայի օրը:

դ.- 1919-1920 տարիներուն տուն կը վերադառնան Մեծ Եղեռնէն վերապրողները եւ կը նորոգեն իրենց տուները: Տեղւոյն Ազգային - Միութիւնը կը կազմակերպէ վերականգնումի ու ապահովութեան գործերը: Ֆրանսական իշխանութիւնները շրջան կը մտնեն 1922-ին ու Քեսապի շրջանը վարչականօրէն կը բաժնեն Օրտուէն՝ անոր տալով անկախ գիւղախումբի կամ գաւառակի (նահիէ) կարգավիճակ: Քեսապ կը դառնայ Աղեքսանդրէթի սանճաքի Անտիոքի գայմագամութեան (գաւառ) համանուն նահիէի կեդրոնը: Քեսապի շուկան շուտով ձեռք կը բերէ նախապատերազմեան իր աշխոյժ վիճակը:

Քեսապի հայ ազգի միւտիւրները հոգ կը տանին գիւղի բարեգարդման, կը բարեկարգեն փողոցներն ու խողովակները: Քաղաքապետարանի (արաբ.՝ պէլետիէ) բոլոր մարմինները՝ կառավարիչ-քաղաքապետը, ոստիկանութիւնը, հաշտարար դատաւորը, մաքսաւորները, ծխախոտի մենաշնորհի ֆրանսական ընկերութեան՝ Րեժի ներկայացուցիչը, քաղաքապետարանի բժիշկը, նամակատուն-հեռագրատունը կ'ունենան իրենց կեդրոնները: 1928-ին կը սկսի գործել Քեսապ-Անտիոք եւ Քեսապ-Լաթաքիա ինքնաշարժի ճամբան: Բաւական աշխոյժ կը գործէ Գարատուրանի նաւահանգիստը, որ բեռնափոխադրութիւն կը կատարէ Քեսապի շուկային համար Քեսապէն Մերսին, Աղեքսանդրէթ, Լաթաքիա, - Զայ ֆաժովային ուղիներով:

Այս շրջանին Քեսապի բնակչութիւնը դոյզն չափով մը կը կորսնցնէ իր միատարրութիւնը: Զոս իրենց ընտանիքներով կ'ապրին պետական տարբեր կառոյցներու պաշտօնեաներ, ալ եւ ի մարապաներու գործաւորներ, հոռոմ արհեստաւորներ ու առեւտուրով զբաղողներ: Քեսապի մէջ կայ ք կը հաստատեն նաեւ ոչ քեսապցի հայեր:

Քաղաքապետարանի ջանքերով Քեսապի մէջ կը գործէ մագուրէ շարժիչով բանող մեծ ջաղացք մը: 1932-ին աղբիւրի ջուրը գիւղին մէջ կը հոսի երկու ծորակով, մին՝ մայր եկեղեցւոյ ետեւ, իսկ միւսը՝ արեւմտեան թաղին մէջ:

Շինարարական գետնի վրայ աչքի կը գարնեն յատկապէս Ամերիկա-

յ էն վերադարձած քեսապցիներուն կառուցած երկյարկանի, բազմասե-
նեկանոց ու կղմինտրաւոր շէնքերը: 1927-ին կը կառուցուի Ուսում-
նասիրաց Միութեան Ուսումնասիրաց Վարժարանը: 1925-ին վարպետնա-
զար Ուստազարայեանի ղեկավարութեամբ Քեսապի արեւմտեան թաղին
վերեւ գտնուող լեռնածոցին մէջ Պաշտօնի ճերմակ մարմարով կը կա-
ռուցուի լատինաց վանքի նոր համալիրը՝ վանքը եւ դպրոցը, որ իր
ճարտարապետական իւրայատուկ ոճով ու տիրական դիրքով նոր
հմայք մը կուտայ Քեսապի ընդհանուր տեսքին:

Ե.- 1939-ի նոր սահմանագծումի հետեւանքով Քեսապի շուկան կը
կորսնցնէ իր նշանակութիւնը: Զամաշխարհային Բ. պատերազմին ու
1947-ի հայրենադարձութեան հետեւանքով Քեսապ կ'անշքանայ: Մեծ
ջանք կը տարուի, որ Քեսապ դառնայ Սուրիոյ մէջ յայտնի ամառանոց
մը: Լաթաքիոյ, Դամասկոսի, բայց մանաւանդ Զալէպի հայութիւնը, բա-
րեսիրական, մարզական, սկաւտական ու երիտասարդական միութիւն-
ները ամառնային ճամբարներ կ'ունենան Քեսապի մէջ: Կ'երեւին
նաեւ օտարներ, որոնք վարձակալութեան կողքին նաեւ ձեռք կը բե-
րեն սեփական տուն ու կալուածներ: Գիւղը կ'օժտուի քաղաքատիպ ա-
ւանի մը հիմնական յարմարութիւններով՝ ջուրի եւ էլեկտրակա-
նութեան ամբողջական ցանցերով, կոյուղիով: Կը բարեկարգուին փո-
ղոցներն ու ճամբաները:

1950-ական թուականներուն լայնօրէն կը սկսին իւրացուիլ եր-
կաթն ու պէթոնը, նաեւ աղիւսը՝ շինարարութեան մէջ: Մարդիկ ի-
րենց նոր բնակարանները կը նախընտրեն շինել հին թաղերէն
դուրս. կ'ընդարձակուին աւանին չափերը, կամաց-կամաց կ'այլ ափոխու-
լի աւանին դիմագիծը: Զին թաղերուն մէջ կ'աւելնան աւերակոյ տե-
րը, լքուած տուները:

1972-ին կը կառուցուի Քեսապի մզկիթը ամառանոց էլ լող ու պաշ-
տօնեայ սիւննի իսլամ հաւատացեալներուն համար: 1915-ի տարագրու-
թեան պատճառով անաւարտ մնացած հայ աւետարանական Ս. Երրորդու-
թիւն եկեղեցւոյ շինարարութիւնը Վեր. Արտաշէս Գերպապեանի ջան-
քերով 1970-ին կ'ամբողջանայ նոր յատկագիծի մը իրագործմամբ: Ա-
ւանը կ'օժտուի քանի մը բարեկարգ պանդոկներով ու զբօսավայրե-

րով: Շուկան ու արհեստանոցները կը բաւարարեն տեղական պահանջները:

գ.- 1970-ական թուականներուն բոլորովին կ'անշքանայ Քեսապի հին շուկան: Նոր վաճառատուները կը սկսին կամաց-կամաց տեղափոխուիլ Խոդի հրապարակը, նոր կառուցուած վարի կամուրջէն դեպի արեւելեան թաղ տանող փողոցին երկու կողմերը նոր-նոր կառուցուող շէնքերու գետնայ արկերուն, աւետարանական եկեղեցւոյ ետին, հրապարակին շուրջ:

Կառավարիչն ու ոստիկանութիւնը, քաղաքապետութիւնը եւ նամակատուն-հեռագրատունը կ'ունենան իրենց սեփական շէնքերը Քեսապի մէջ, իսկ պետական դարմանատունը կը հաստատուի արեւմտեան բարձունքին՝ Գալայի մէջ: Չբօսաշրջութիւնը մեծ չափերու կը հասնի: Մեծաթիւ ընտանիքներ Քեսապ ամառանոց կ'ելլեն ինչպէս Սուրիոյ տարբեր քաղաքներէ, այլ եւ Արաբական ճոցի երկիրներէ: Ամենուրեք, բայց մանաւանդ աւանի արեւելեան ու արեւմտեան բոլոր արտերը կը լեցուին առանձնատուներով ու բազմայարկ շէնքերով: Երբեմնի գիւղը կը վերածուի քաղաքի, կ'ընդարձակուի ու կը բարեկարգուի:

Նոր քաղաքի ձեւաւորման հետ մարդիկ մտահոգուեցան հինն ալ պահել ու անհրաժեշտութեամբ: Պետք է բան մը պահպանուէր հայկական այդ հին բնակավայրի տոհմիկ դիմագիծէն: Այդ գետնի վրայ կարելորդեր կատարեց ֆրանսահայ երկիր եւ Մշակոյթ Միութիւնը, որ 1980-ականներուն գնեց եւ կարելի հարազատութեամբ վերանորոգեց կեդրոնական թաղի քանի մը տուները, ինչպէս՝ Աշգարեանին եւ Սըդդիկեց տուները: Վերջինս նախատեսուած էր ազգագրական թանգարանի համար: Հայ աւետարանական համայնքը վերանորոգեց հրապարակին կից գտնուող մանչերու նախկին վարժարանը (կառուցուած՝ 1910-ին) ու վերածեց Միսաքեան Մշակութային Կեդրոնի: 2014-ի իսլամ ծայրայեղականներու ներխուժումին շէնքը հրկիզուեցաւ ու քանդուեցաւ:

Քեսապ աւանը հինէն իվեր պահեց շրջանին համար հոգեւոր եւ կրթական կեդրոն ըլլալ ու իր հանգամանքը: Գաւառակին կեդրոնա-

կան եկեղեցիներն ու դպրոցները կը գտնուին Քեսապի մէջ:

Նշենք, որ ձմրան հազիւ 500-ի հասնող բնակչութեան թիւը ամրան եղանակին կը հասնի քանի մը տասնեակ հազարի, հիմնականին մէջ՝ արաբներ:

2.- **Սեւ Աղբիւր** կամ **Գայ աճըզ** գիւղը Քեսապի լեռնային գոգաւորութեան արեւելքը կը գտնուի: Քեսապի յարող իրենց դիրքով կը գտնուէին կեդրոնական երկու-երեք թաղերը: Գիւղին թաղեր կը նկատուէին նաեւ Կուճու Գույրուօզը՝ հիւսիսային լեռան մէկ թեւին վրայ, եւ արեւելեան բարձունքի հակադիր լանջին գտնուող Տեսթուրը, որ ունէր հայ-թուրք խառն բնակչութիւն:

Տարագրութենէն վերադարձէն ետք գիւղը հետզհետէ կը վերականգնի: 1939-ին պետական նոր սահմանը կ'անցնի Կուճու Գույրուօզի մօտէն. Տեսթուր թուրքիոյ կողմը կը մնայ: Տեսթուրի հայ ընտանիքները կը լքեն գիւղը ու կու գան Քեսապ:

Սեւ Աղբիւր տասնեակ մը հայ ընտանիքներ հաշուող գիւղ մըն է ներկայիս: Գիւղին բարձրադիր վայրերը մշտական բնակութիւն հաստատած ու կալուածներու տեր եղած են ալ եւիները:

Ներկայիս գիւղացիներուն հիմնական զբաղումներն են պտղաւազակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

Գիւղի Աւետարանական Վարժարանը (հիմնուած՝ 1850-ական թուականներուն) գործած է ընդհատաբար⁴²: Կը գործէ նաեւ 1905-1915 եւ 1928-1942 թուականներուն.: Ազգ. Վարժարանը կը գործէ 1910-1915 եւ 1925-1947 թուականներուն, Զիթապսըզէնց թաղին մէջ: Այս դպրոցը եղած է նաեւ գիւղին հնչակեաններուն ակումբը:

3.- **Ներքի Գիւղ եւ Խայ իթ.** Քեսապէն հարաւ-արեւելք, իսկ Սեւ Աղբիւրէն հարաւ, երկու քիլոմէթր հեռաւորութեամբ կը գտնուի Ներքի Գիւղը կամ Էսկիւրէնը, Տափակոչուող լեռան հարաւային ստորոտը: Գիւղին արեւելքին նախկին արտերը կը հասնէին մինչեւ Օրտուի սահմանները: 1939-ի սահմանագծու մով բնական սահման հանդիսացաւ Սիվտիկիի ու խտավայրը: Արտերուն մեծ մասը մնաց թուրքիոյ կողմը:

⁴² Այս մասին տե՛ս **Տ. Ճ. Կրլոբեան**, Ոսկեմատեան..., Ա. հատոր, Էջ 369; **Ե. Ս. Քառուկի**, Լուսաշաւիղ, Էջ 215:

Սիվտիկին ու խտավայր է, ուր Աստուածածնայ Կիրակի օրը պատարագ կը մատուցուի յոյն օրթոտոքսներու ծեսով: Լաթաքիոյ յոյներուն սրբավայրը կը նկատուի: Տօնակատարութեան ժողովրդային բաժինը կը կատարուի Ներքի Գիւղի աղբիւրին առջեւ: Ուխտաւորները կու գան Լաթաքիայէն, Յալէպէն եւ այլ տեղերէ: Գիւղին եւ մատուռին միջեւ գտնուող բլուրին վրայ Գամիշլիի յոյն օրթոտոքս եւ հայ կաթողիկէ համայնքները այս դարասկիզբին կառուցեցին մեկական վանքեր՝ ամառը իրենց համայնքներու փոքրիկները հոն բերելու համար:

Աւանդութիւններով հարուստ ազտիկ գիւղ մըն է Ներքի Գիւղը կամ Եսկիւրէնը, որ կը նկատուի շրջանին առաջին հայ գիւղը: Յորդաբուխ աղբիւրի խորանած եւ կառոյցին մէջտեղը դրուած խաչքարը իբր առնուած է քովի սրբատեղիէն եւ կ'ենթադրուի ըլլալ 15-16-րդ դարերու գործ (Յալէպուած թիւ 25):

Աղբիւրին առջեւ կը գտնուի շրջանին ամենէն վիթխարի սօսի ծառը, որուն բունը ունի 6,20 մէթր շրջագիծ: Աղբիւրի հրապարակին կից գիւղի սրբատեղին է՝ Կիղիցիկը, որ եղած է գիւղին հին մատուռը ու արդի գերեզմանատունը: 1959-ին քիչ անդին կառուցուեցաւ Ս. Աստուածածին մատուռը, ուր մեծ հանդիսաւորութեամբ կը կատարուի վերափոխումն Ս. Աստուածածնայ տօնի ուխտագնացութիւնը:

Ներքի Գիւղին մէջ ազգային տարրական վարժարան մը գործած է 1910-1915 եւ
1921-1930-ական թուականներուն: Ծենքը այժմ ուխտավայրի խհանոցն է:

1928-ին բացուած Քեսապ-Օրտու ինքնաշարժի հողէ առաջին ճամբան կ'անցներ Ներքի Գիւղէն: 1939-էն ետք թուրքի ամուտի այս ճամբան կը լքուի ու կը փակուի: 1940-ին կը բացուի Տուզադաճ-Քեսապ վերջին ճամբան, որ կ'անցնի Խայիթէն:

Ներքի Գիւղի առջեւ էն իջնող ձորի արեւմտեան թեքութիւնները ու հարթարտերը Խայիթ կը կոչուին: Այստեղ, ճիշդ Ներքի Գիւղի դիմաց, 19-րդ դարուն թաղ մըն ալ ձեւաւորուած էր: Ըստ շրջող գրոյց-

ներու, իսկ ի թը ու Քեսապէն արեւելք իջնող ամբողջ հովիտը կալուածն է ներքի Գիւղի նախնիներուն, որոնց սերունդները (Սողոմոնեան-Յովսէփեան-Պիւճիքեան) տակաւին կը պահեն իրենց կալուածներուն մէկ մասը:

Վերջին երկու-երեք տասնամեակին արագ զարգացող գիւղակ մը եղաւ ան: Ճամբան երիզուած է նորակառոյց շէնքերով ու առանձնատուներով: Իսկ ի թի մէջ կառուցուած է Քեսապի շրջանի ժողովրդային պտղասառնարանի առաջին շէնքը: Ճամբու եզրին կան արհեստանոցներ ու վաճառատուներ:

Ներքի Գիւղի եւ իսկ ի թի բնակչութեան թիւերը միշտ համատեղ տրուած են:

Գիւղացիներուն հիմնական զբաղումներն են պտղամշակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

4.- Չինարճը կամ **Չինար** գիւղը ծուարած է Գուրոմլերան հարաւարեւելեան ստորոտին: Տարագրութենէն առաջ ուներ երկու գլխաւոր թաղեր՝ աղբիւրի թաղն ու Գաթապեաններու թաղը: Տարագրութենէն վերադարձէն ետք ձորի աջին կը ձեւաւորուի նոր թաղ մը՝ Անթը-Չընուօրը:

Գիւղը նշանաւոր է իր յորդաբուխ աղբիւրով, բանջարանոցներով ու պարտէզներով: Գիւղի ակունքներէն սկիզբ կ'առնէ Գուրաշէ գետակը, որ Յիւսիսային Մեծ Գետին (արաբ.՝ ալ-Նահր ալ-Քապիր ալ-Շիմալի) հարկատուներէն մէկն է: Ձորին մէջ կային երկու ջրաղացներ, որոնք կը գործէին ձմրան եւ գարնան միայն:

Այստեղ գործած է Ազգային Վարժարան մը 1910-1915 թուականներուն, Գաթապեան թաղի բարձունքին վրայ: Տարագրութենէն վերադարձէն ետք կը գործէ 1923-1943 թուականներուն: Լատինաց Վարժարանը գործած է 1904-1915, 1921-1946 թուականներուն: 1909-ի Աղէտին գիւղին հետդպրոցն ալ կը հրկիզուի: 1912-ին կը շինուի նոր շէնքը, աղբիւրին մօտիկ: 1946-ին դպրոցը կ'անցնի Քեսապի Յայ Կաթողիկէ ժողովրդապետութեան հսկողութեան տակ: 1947-ին կը փակուի⁴³:

⁴³ Յիշատակութիւն ունի «Աւետիք», 1947, թիւ 1-2, էջ 32:

5.- Չագալ ճըգ. Չինարեն մեկ քիլոմետր արեւմուտք կը գտնուի: Նշանաւոր է իր աղբիւրով ու անոր առջեւ գտնուող վիթխարի սօսիով: Աղբիւրի պէտքէ կամարած եւ կառոյցի ճակատին գետեղուած մարմարէ սալին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «**Շինեցաւ աղբիւրս ջրոյ զովութեան / ջանիւք եւ ծափիւք որդւոցն մեծին / Թրթեան գերդաստանին վեհագունի / ի լոյս յիշատակ լուսաբնակ / հարցն իւրեանց ամսեանն Օգոստոսի / ի թուին Քրիստոսի 1969**»:

Գիւղին հիմնական բնակիչները Թրթեաններն են: Ասոնց նախնին հոս կայ ք հաստատած է ԺԹ. դարու առաջին քառորդին: Կամաց-կամաց ձեւ կ'առնէ թաղը ու կը դառնայ Թրթեան գերդաստանի գլխաւոր օճախը:

Գիւղացիք զբաղած են երկրագործութեամբ ու խաշնարածութեամբ: Յայտնի եղած են այս գիւղի որմնադիրները:

19-րդ դարու վերջաւորութեան գիւղը գրեթէ ամբողջութեամբ կը յարի բողոքականութեան ու մաս կը կազմէ Քէօրքիւնէ գիւղի աւետարանական համայնքին:

Չագալ ճըգէն դեպի արեւմուտք, Տուզաղաճին յարող բլուրի մը վրայ կը գտնուէր Մաթըսլէք՝ Մաթոսեաններու թաղը:

Գիւղին նախկին տնտեսութիւնը կը վերականգնի, ընտանիքները կը բազմանան, բնակչութիւնը կ'աւելնայ: 1934-ին Թրթեան գերդաստանի շարք մը ընտանիքներ զանգուածային կերպով կը վերադառնան Մայր Եկեղեցւոյ գիրկը:

Չագալ ճըգ 1990-2000 թուականներուն վերածուեցաւ գեղեցիկ ամառանոցի մը: Շուրջ երկու տասնեակ առանձնատուներ հաշուող թաղամաս մը բարձրացաւ գիւղի թիկունքին, մասամբ նաեւ աղբիւրին կից: Ասոնց տերերը գլխաւորաբար Յալէպէն հայերու նախկին քեսապիներն են:

Գիւղն ունէր աւետարանական վարժարան մը, որ գործած է 1910-1915 եւ 1928-1934 թուականներուն:

Ներկայիս գիւղի բնակիչներուն հիմնական զբաղումներն են պողամշակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

6.- Քէօրքիւնէ գիւղը կը գտնուի Չագալ ճըգի հարաւակողմը,

բարձրագույն փոքրիկ հարթավայրի մը վրայ : Բոլոր կողմերէն համեմատաբար ընդարձակ հորիզոն ունի : Անտիոքի Ռենալ տ դուքսին կողմէ պատրաստուած պարգեւագրի մը մէջ, Անտիոքի հարաւը յիշուած այլ գիւղերու շարքին կը հանդիպինք նաեւ Corcona անունով գիւղի մը⁴⁴ : Անունը կը համընկնի նաեւ Քէօրքիւնէի բարբառային ձեւին՝ Քուրքունու : Բարբառին մէջ նախաշեշտօ-ն եւ բառավերջին ա-ն օրինաչափօրէն կ'ըլլան ու : Գիւղին շուրջ հոս ու հոն հանդիպող հնու թեանց փշրանքները կը հաստատեն, թէ հին բնակավայր մը եղած է Քէօրքիւնէն :

Գիւղին հարաւ-արեւելեան կողմը մինչեւ 19-րդ դարուն սկիզբը կանգուն եղած է Ս. Ստեփանոս մատուռը, որուն աւերակներուն շուրջ գիւղացիք տակաւին կը թաղեն իրենց մեռելները : Խորանը կանգուն կը մնար : Անասուններու համաճարակէ ու այլ հիւանդութիւններէ վախցած գիւղացիք իրենց այծերու հօտերը կը քէէին ու խտատեղի : Խորանի պատու անդանին վրայ ցատկող առաջին կենդանին մատաղցու կ'ընտրէին ու տեղւոյն վրայ կը զենէին : Ըստ հաւատալիքներու՝ այս մատաղց հօտը հիւանդութիւններէ կը փրկէր : Այժմ խորանի քարերը կը նկատուին հոն աճած հաստաբեստ փշոտ կաղնիի մը կոճղին մէջ :

Մինչեւ հայրենադարձութիւն՝ համեմատաբար խիտ տուններով գիւղ մըն էր Քէօրքիւնէ, ուր տարբեր գերդաստաններու թաղերը իրար կից էին : Չէլէպեանները կը նկատուին գիւղին առաջին բնակիչները :

Աբելեաններու նախնին, Աբել անուն, Քեսապէն գալով՝ Քէօրքիւնէ կը հաստատուի 18-րդ դարուն : Աբել էն կը սերին Աբելեան, Պետիրեան եւ Խաղրեան մեծ ընտանիքները : Ասոնք մեծ կալուածատէրեր էին ու շուկայի մարդիկ : Ասոնց պարոնները (աղա) միշտ կը համագործակցէին գիւղի ու Քեսապի իրենց գործերուն մէջ :

1890-ական թուականներէն սկսեալ հայրենի գիւղին զարգացման մէջ մեծ երախտիք կ'ունենայ Տոքթ. Սողոմոն Աբելեան, որ շաբթուայ

⁴⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 424 :

որոշ օրերուն հիւանդներ կ'ընդունի նաեւ գիւղի իր տան մէջ: Անոր ջանքերով 1898-ին կը կառուցուի Քետրօքիւնէի հայ աւետարանական եկեղեցին:

Գիւղին մէջ 1936-էն ետք մինչեւ հայրենադարձութիւն կը գործէ ձեթի գործարան մը, ուր իրենց ձիթապտուղը կը բերէին ոչ միայն Քեսապի, այլեւ դրացի շրջաններուն բնակիչները: Քարէ ճմլիչը (պարօս) այժմ գետեղուած է աղբիւրին տանիքը:

1930-ական թուականներուն Քեսապի շրջանի աւետարանական համայնքներուն մէջ նկատուած պառակտումը հոս աւելի ցցուն արտայայտութիւն կ'ունենայ: Շարք մը ընտանիքներ կը վերադառնան Մայրեկեղեցիին գիրկը: Յետ հայրենադարձութեան գիւղը կը սկսի խառն բնակչութիւն մը ունենալ: Դեռ 1920-ական թուականներուն, աշխատող ձեռքի պակասը լրացնելու համար կարգ մը կալուածատերեր իրենց հողերուն վրայ կը հաստատեն Քեսապ ապաստանած ալեւի ընտանիքներ: Անոնք ներկայիս կը կազմեն բնակչութեան շուրջ կէսը:

Ներկայիս գիւղացիներուն գլխաւոր զբաղումներն են պտղամշակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները: 1990-ական թուականներուն գիւղին մէջ բացուեցան դպիներ ձեթով օճառի գործարան մը եւ 25000 սնտուկ տարողութեամբ պտղասառնարան մը, արհեստանոց ու խանութ: Գիւղը մեծապէս կը բարեկարգուի: Հին տուներէն ոմանք վերանորոգուած են, առանձնատուները եւ շէնքերը տարուէ տարի կը բազմանան: Գիւղի արեւելեան կողմը մեծ թիւ մը կը ներկայացնեն օտարականներու կողմէ ամառանոցային նպատակներով կառուցուող շէնքերը:

Գիւղի աւետարանական վարժարանը գործած է 1898-1915 եւ 1930-1981 թուականներուն: 1922-1930-ին գործած է Ազգային Միութեան հսկողութեան տակ: Ունեցած է բարեկարգ շէնք: Հայրենադարձութենէն առաջ եղած է լրիւ նախակրթարան: 1934-1939-ին գործած է նաեւ Միացեալ Վարժարանը, երբ աւետարանական համայնքէն բաժնուած քանի մը ընտանիքներ կը հեռանան համայնքի դպրոցէն ու կը հիմնեն իրենց դպրոցը, իբրեւ մասնաճիւղը Քեսապի Միացեալ Վարժարանին: Գիւղին մէջ կը հիմնուի Սուրիահայ Օգնութեան Խաչի մասնաճիւղ, որ կը մա-

տակարար է այս դպրոցը:

7.- Էքիզոլ ուք գիւղը ծնւարած է Քեօրքիւնէէն հարաւ-արեւ-մուտք, Պոտուրանի ձորի վերին գոգաւորութեան մէջ, այժմու եկեղեցւոյ քովն ի վեր: Բնակչութեան հիմնական մասը Մարտիրեան հին տոհմի ճիւղաւորումներն են:

Գետնախնձորի մշակութիւնը առաջին անգամ կը սկսին Էքիզոլ ուքի մէջ, 19-րդ դարու երկրորդ կիսուն: Ջրաբքի գետնախնձորը առատ բերք կու տայ հոս: Գիւղը ունի յորդաբուխ աղբիւր: Գիւղացիք երկրորդաբար զբաղած են նաեւ արհեստներով: Տարագրութենէն առաջ գիւղին մէջ եղած են կօշկակարի, կերպասավաճառի ու մանրավաճառի կրպակներ:

Էքիզոլ ուք արդէն լիովին կազմաւորուած ու մնայուն բնակչութիւն ունեցող գիւղ էր, երբ 1855-ին, գրեթէ ողջ բնակչութեամբ, 80 հոգի, բողոքականութեան կը յարի: Գիւղը շրջանին մէջ ձեռք կը բերէ «Բողոքական Գիւղ» (Փորտուստան Գիւղ) անունը⁴⁵:

1904-ին Անտիոքի առաջնորդութեան վիճակներու ցանկին մէջ Էքիզոլ ուքն ալ կը յիշուի, բայց առանց եկեղեցւոյ, թէեւ այդ ատեն գիւղը ամբողջապէս աւետարանական համայնքին մաս կը կազմէր⁴⁶: Յաւանաբար ունեցած են փոքրիկ մատուռ մը այժմու գերեզմանատան բլուրին վրայ, որ Չիրաթօ (փոքրիկ սրբատեղի) կը կոչուի: Աւետարանական եկեղեցւոյ շէնքը կը կառուցուի վարի թաղին առջեւ ու մինչեւ տարագրութիւն կը գործածուի նաեւ որպէս դպրոց: Մարմարեայ քարը ունի հետեւեալ հայատառ թրքերէն արձանագրութիւնը. «**Խանէմ ճեմիի ազվամա հպատէթ խանէ սիր. հշա 56;7. Էքիզոլ ուք, ինճիլի էրմէնիեան վորթեսթան քիլիսաաը, 1882**» (Իմ տունս բոլոր հեթանոսներուն աղօթքի տուն կոչեցի: Եսայի, 56;7, Էքիզոլ ուք, հայ աւետարանական բողոքականներու եկեղեցի, 1882):

Վեր. Յովհաննէս Էսքիճեանը (1882-1916) 1909-ին կը կառուցէ երկյարկանի ու կղմինտրածածկ երիցատուն մը, իսկ 1911-ին կը ձեռնարկէ

⁴⁵ **Կ. Ս. Թիլքեան**, Իննսուն հինգամեակ Քեսապի Հայ Աւետարանական եկեղեցւոյ, 1853-1948, Պէյրուս, 1948, էջ 45:

⁴⁶ «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1904, էջ 390:

Էմմանուել Էկեղեցւոյ շինութեան, որ վերահաս պատերազմի պատճառով կիսաւարտ կը մնայ : Շինարարութիւնը կ'աւարտի 1956-ին⁴⁷: Դրան վրայ կայ արձանագրութիւն . «ԱՃ. ՍԷՐ Է. ԷՄՄԱՆՈՒԷԼ . 1911»:

Էքիզօլ ու ք շրջանի առաջին գիւղն է, որ 1950-ական թուականներու սկիզբը տնտեսական պայմաններու հիմնական փոփոխութեան առաջին քայլերը կ'առնէ: Գիւղացիներու ջանքերով 1951-ին ջուրը տուն կը հոսի, 1960-ին Քեսապի քաղաքապետարանի յատկացումներով՝ Քեսապ-Էքիզօլ ու ք ճամբան կը վերանորոգուի ու կը կուպրապատուի: 1961-ին գիւղացիներուն, օդափոխութեան եկող հալէպահայերուն եւ ամերիկաբնակ Էքիզօլ ու քցիներու նիւթական ջանքերով գիւղը կ'ունենայ Էլեկտրական իր խոշոր շարժիչը եւ անոր սպասարկող մնայուն պաշտօնեան: Կ'ընդարձակուի ու կը կուպրապատուի նաեւ Էքիզօլ ու ք-Պաղճաղազ-Պասիթ նախկին հողէ ճամբան, որով քառորդ ժամէն իրարու կը կապուին ծովափն ու հովոցները: Ասիկա Քեսապի շրջանի ամառանոցները կ'օժտէ բացառիկ առաւելութեամբ: Էքիզօլ ու քի մէջ կը գործեն խանութներ, քանի մը սրճարան ու ճաշարան, պանդոկ եւ փուն:

Մեկ քիլոմետր արեւմուտք գտնուող Լեռնային գոգաւորութիւնը Աճամն է, ուր կը վերջանար Յալէպի վիլայէթը Օսմանեան կայսրութեան շրջանին: Աճամի արտերը 1960-ական թուականներուն կը ծածկուին խնձորի այգիներով: Քանի մը տեղացի ընտանիքներ հոս կայք կը հատատեն: Կը ձեւաւորուի Էքիզօլ ու քի կապուած նոր թաղ մը:

Գիւղացիներու հիմնական զբաղումներն են պտղամշակութիւնը, բանջարաբուծութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

Գիւղին միակ դպրոցը՝ աւետարանական վարժարանը, գործած է 1855-1915 եւ 1932-1981 թուականներուն, Քէօրքիլնէի եւ Էքիզօլ ու քի հայ աւետարանական միացեալ Էկեղեցւոյ հոգեւոր հովիւի տնօրէնութեամբ: 1919-1928 թթ. գործած է Ազգային Միութեան հսկողութեան տակ: Ներհամայնքային պառակտումներու հետեւանքով եղած է ան-

⁴⁷ (Անստրագիր), Վեր. Յովհ. Եսքիճեան, «Ձանասեր», 1956, թիւ 17-18, էջ 45-48:

կախ դարձրոց մը՝ Յակոբ Նաճարեան վարժարան (1928-1932), ամերիկաբնակ համագիւղացի բարերարի անունով: Այս շրջանին կարգ մը ընտանիքներ կը վերադառնան մայր համայնքին:

Էքիզօլ ու քի մէջ գործած են Յայ Աւետարանական Քրիստոնէական Ջանից Ընկերակցութեան մասնաճիւղը, Տիկնանց Ուսումնասիրաց (1940-ական թուականներուն) եւ «Վերելք» միութիւնները (1976-1978): Վերջին երկուքը մշակութային թեքումով միութիւններ են: Գիւղը ունի գրադարան:

8.- Տուգաղաճի հովիտին արեւմտեան եւ հիւսիսային կողմերը - Քեսապի շրջանին բարձունքներն են, իսկ արեւելեան կողմը՝ շրջանին բնական սահմանը հանդիսացող Լեռները: Ան շրջանի մեծագոյն հարթավայրն է:

Հովիտը ջրառատ է, կան քանի մը յորդաբուն խաղբիւրներ: Հարթավայրին մէջ քանի մը տասնեակ մեթր խորութեամբ արթեզեան ջրհորները կը մատակարարեն Քեսապի ըմպելի ջուրը:

19-րդ դարու 40-ական թուականներուն Լաթաքիացի յոյն Սաատընտանիքին մեծաւորը հոս երկու մեծ սղոցարաններ կը հաստատէ: Որոշ կապալառուներ, վերակացուներ եւ բանուորներ կու գան Քեսապէն եւ շրջակայ գիւղերէն: Անտառահատումին հետեւանքով բացուած տարածութիւնները կը ձեւակերպուին իբրեւ խոպան գետիններու կը վաճառուին: Սաատները կը տիրեն Լեղի Ջուրին, իսկ հայերը՝ Տուգաղաճին: Հոս որոշ կապալառու ընտանիքներ կը սեփականացնեն հսկայական տարածութեամբ արտեր, զորս շահագործելու համար մարապաներու (քառորդ բերքի դիմաց աշխատող մշակ ընտանիք) կը յանձնեն: Կամաց-կամաց կը ձեւաւորուին աւել Տուգաղաճ գիւղը՝ երեք թաղերով:

Անտառային տնտեսութիւնը իր կարեւորութիւնը կորսնցնելէ ետք գիւղացիներուն գլխաւոր զբաղումները կ'ըլլան երկրագործութիւնը, բանջարաբուծութիւնը, շերամաբուծութիւնն ու խաշնարածութիւնը:

19-րդ դարու կէսերուն գիւղ կը մտնէ բողոքական քարոզչութիւնը ու կը յաջողի քանի մը ընտանիք դաւանափոխութեան ենթարկել:

Գիւղը ունի գերեզմանատուն:

1919-1920 թուականներուն գիւղ կը վերադառնայ գիւղին նախկին բնակչու թեան հազիւ մէկ հինգերորդը: Ասոնց մէջ կան նաեւ նորեկներ տարբեր գիւղերէ: Այս հաշունով գիւղի նախկին բնիկներէն վերադարձած է միայն 17 հոգի: Ամբողջապէս զոհուած են բողոքականները: Ամերիկայը գտնուի միայն Յովսէփ Յովհաննէսի Թրթռեանը, որ յետոյ հայրենի գիւղ կը վերադառնայ ու կը վերակենդանացնէ Տուգաղաճի այսօր 8 ընտանիք հաշունով Թրթռեան գերդաստանը:

1927-ին կը բացուի Լաթաքիա-Անտիոք ինքնաշարժի ճամբան, որ կ'անցնի Տուգաղաճէն, իսկ 1940-ին կը բացուի Քեսապ-Տուգաղաճ ճամբան:

1939-ի սահմանագծումով Տուգաղաճի արեւելեան մասը, կէսէն արեւելի, Թուրքիայ կը մնայ: Թուրքիայ կը մնան նաեւ Գուրաշէ գետակին վրայ գտնուող երեք ջրաղացները: Սահմանը անապահով կը դառնայ:

Քեսապի ամբողջ շրջանին մէջ նկատուած երկրագործական հիմնական փոփոխութիւնը իր առաջին յուսատու պտուղը կուտայ Տուգաղաճի մէջ: Պտղաբուծութիւնը, բանջարաբուծութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները նոր յոյսեր կը ներշնչեն: Ալեւի եւ սիւննի արաբ քանի մը ընտանիքներ մնայուն բնակութիւն կը հաստատեն հոն:

Տեղացիք իրենց նոր տուները կառուցած են մայր ճամբուն մօտիկ:

Այստեղ հայ արեւտարանական վարժարանը մը կը հիմնուի 19-րդ դարուն կէսերուն, իբրեւ Քեսապի դպրոցին մասնաճիւղը⁴⁸ ու կը գործէ մինչեւ 1910: Ազգային (առաքելական) վարժարանը գործած է 1910-1915 եւ 1924-1942 թուականներուն: Գաղափարական-կուսակցական պառակտումներուն հետեւանքով հոս 1934-1937 թուականներուն կը գործէ ԶԲԸՄ-ի նպաստընկալ ազգ. վարժարան մը եւս:

9.- Վերի Պաղճաղազ գիւղը կը գտնուի Էքիզօլուքէն Պասիթ գացող ճամբու 5-րդ քիլոմետրին վրայ, Սելտրան Լերան հարաւային քա-

⁴⁸ Յիշատակութիւն ունի **Ե. Ս. Քառուկի**, Լուսաշաւիղ..., էջ 215-216:

րափին տակ, դեպի Մեղրաձոր իջնող և եռնալ անջի մեկ հարթութեան վրայ : Ունի բարձր ու տիրական դիրք: Գիւղին հիմնական բնակիչները կազմած են Սարըմազը (Սարմազեան) գերդաստանի ընտանիքները: - Գիւղին միւս ընտանիքները հոս կայ ք հաստատած են 19-րդ դարուն:

Վերի Պաղճաղազ ընդարձակուելու եւ մեծնալու բնական պայմաններ չունէր, ամբողջապէս և եռնային շրջապատին պատճառով: Բնակիչները զբաղած են անասնապահութեամբ, շերամաբուծութեամբ եւ ցանքով:

Բողոքականութիւնը գիւղին մէջ մուտք կը գործէ 1856-ին՝ 23 անձով⁴⁹: Սարմազեան գերդաստանը ամբողջութեամբ բողոքական կը դառնայ ու կը կապուի Էքիզօլուքի աւետարանական եկեղեցւոյ:

Վերի Պաղճաղազ կը մտնէր Լաթաքիոյ մութասարիֆութեան մէջ ու կապուած էր Սարայայի միւտիրութեան: 1909-ին գիւղացիք թեւ կը միանան միւս գիւղերու փախատականներուն, բայց խուժանը չի հասնիր հոն: Գիւղացիք քանի մը օր ետք կը վերադառնան իրենց տուները, որոնք մինչ այդ կը կողոպտուին Պասիթիթուրքերուն կողմէ:

1975-ին, գիւղէն անցնող Պասիթ-Էքիզօլուք նորաբաց ճամբան եւ գիւղ հասած ել եկտրականութիւնը ետկեանքի կը կոչեն այս գիւղակը: Հիմնական զբաղումներն են պողամշակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

Գիւղին գերեզմանատունը կը գտնուի սրբավայրի մը մէջ, զոր «Կիղիցիկ» կը կոչեն: Գիւղը ունեցած է իր աւետարանական դպրոցը (1880՝ -1915, 1932-1967). նկատուած է Էքիզօլուքի դպրոցին մասնաճիւղը: 1920-1932 թթ. գործած է իբրեւ Ազգային Միութեան Միացեալ վարժարան: Եղած է նաեւ և ատինաց վարժարան մը (1930-1946), որ 1946-1947 տարեշրջանին անցած է Վարի Պաղճաղազի հայ կաթողիկէ ժողովրդապետութեան ու փակուած:

10) Վարի Պաղճաղազ շրջանի հարաւի ամենայն տին գիւղն է իր երկու թաղերով՝ Գապաչիւնար եւ Չաթալլէք: Ոմանք Վարի Պաղճաղազը սելով կը հասկնան Գապաչիւնարը, իսկ Չաթալլէքը կը նկատեն

⁴⁹ **Տ. Ճ. Կրլոբեան**, Ոսկեմատեան..., Ա. հատոր, Էջ 370: Համայնքին եւ դպրոցին մասին յիշատակութիւններ ունի **Կ. Ս. Թիլքեան**, Իննսուկիսնգամեակ..., Էջ 48:

անջատ բնակավայր: Վերջինը իր անունը կ'առնէ Չաթալեան ընտանիքէն: Տեղւոյն հայոց նախնիները այստեղ հաստատուած են աւելի ուշ քան Վերի Պաղճաղագի հայերը: Այդ օրերուն թուրք աղաները ձեռք ձգած էին եղեւնի անտառներուն շահագործման արտոնութիւնը: Փայտահատները, սղոցապանները եւ ջորեպանները հայեր էին: Անոնք արտոնութիւն կը ստանային բացուած անտառներուն տեղ կայք հաստատելու, բայց ոչ իրենց մեռելները այդ տեղերը թաղելու: Թաղումները կատարած են 2-3 քիլոմէթր վեր՝ Վերի Պաղճաղագի գերեզմանատունը: Հայ բնակիչները թրքախօս էին: Անոնք իրենց մուխթարութեան տոմարներուն մէջ արձանագրուած են առանց **եան** մասնիկի, ինչպէս՝ Արամանլը, Քելեաղուպ, ճապուր, Հանաշ եւ այլն: Անոնք կը նկատուէին թրքական Ֆագը Հասան գիւղի բնակիչները:

19-րդ դարու երկրորդ կիսուն անտառահատման աշխատանքները գրեթէ կը վերջանան: Հայերէն շատեր արդէն կազմակերպած են իրենց անկախ տնտեսութիւնը, որ յենած է երկրագործութեան եւ խաշնարածութեան վրայ: Ոմանք դուրս ելած էին թուրք աղաներու ծառայութենէն: Ասիկալաւ աչքով չի դիտուիր թուրք աղաներու կողմէ, որոնք արդէն բացայայտօրէն կը նեղեն հայ բնակիչները ու իրենց կամքը կը պարտադրեն անոնց: Հնչակեան քարոզչութիւնը հոս մեծ թիւով հաւատաւորներ կ'ունենայ: Թուրք աղաները նախ կը զգուշանան, բայց 1896-ին, հնչակեաններու հեռանալէն ետք, կը խստանան ճշունները գիւղացիներուն վրայ: Տասնեակ մը գիւղացիներ Լաթաքիա կը բանտարկուին, իսկ տասնեակ մը ուրիշներ կը փախին Ամերիկա:

1896-ին այս թաղերը կ'այցելէ մարաշցի Լիոնարտօ Ագիլեան ֆրանչիսկեան վարդապետը: Գիւղին մէջ լատինացում մը կը սկսի: Լաթաքիոյ ֆրանչիսկեան միաբանութեան լատին հայրերը 1904-ին հոս վանք մը կը հաստատեն ու իրենց պաշտպանութեան տակ կ'առնեն հայ բնակչութիւնը: Նոյն թուին կը ձեւաւորուի Վարի Պաղճաղագի լատին մուխթարութիւնը (գիւղապետութիւն): Հայերը, իբր լատին համայնք, հոգեւոր ու վարչական անկախութիւն ձեռք կը բերեն: Գիւղը կ'անկախանայ Ֆագը Հասանէն ու կը կապուի Սարայայի

միւ տիրութեան (գաւ առակ): Կ'ու նենայ իր գերեզմանատունը:

1909-ի Աղետին, Քեսապի հարաւ-արեւելեան գիւղերուն հալածական հայերը կը հաւաքուին լատինաց վանքը, ապա լատին վարդապետներու առաջնորդութեամբ կ'անցնին Պասիթ, ուրկէ նաւերով կը փոխադրուին Լաթաքիա:

Տարագրութենէ վերադարձէն անմիջապէս ետք կը վերաբացուի լատինաց վանքը: Քեսապէն՝ Ազգային Միութեան կամաւորներու փոքրիկ խումբեր միշտ ներկայ են գիւղին մէջ ու կ'օգնեն, որ վերապրողները արագօրէն տեղաւորուին ու պաշտպանուած զգան դրացի թրքական գիւղերէն: Կամաւորները ծանրօրէն կը պատժեն հայերուն վրայ բռնացողները: 1920ին, Ս. Աստուածածնայ Երկուշաբթին, մեռելոցի օրը, գիւղի ինքնապաշտպանական ջոկատը խիզախ դիմադրութեամբ մը խայտառակ պարտութեան կը մատնէ հայկական շրջան մտնել փորձող շուրջ 300 հոգի նոց խուժանը:

1922-էն սկսեալ, Վերին Վարի Պաղճաղագ գիւղերը իբրեւ մէկ մուխթարութիւն կը մտնեն Լաթաքիոյ նահանգի Գասթալ Մասֆի, իսկ 1953-ին՝ Քեսապի միւ տիրութեան մէջ:

Հայրենադարձութենէ ետք Չաթալլէք գրեթէ ամբողջապէս կը պարպուի: Ալեւի ընտանիքներ մշտական բնակութիւն կը հաստատեն հոն:

Գապաչինարի մէջ, որ այսօր կը ճանչցուի Վարի Պաղճաղագ անունով, Սուրիոյ տարբեր քաղաքներու մէջ ապրող բնիկներ կը պահեն ու կը խնամեն իրենց կալուածները: Ծախուած կալուածները ընդհանրապէս կը պատկանին հալէպցի եւ լաթաքիացի հայերու: Գիւղացիներուն հիմնական զբաղումներն են պողամշակութիւնն ու ամառանոցային ծառայութիւնները:

Բաւական բարեկարգ վիճակի մէջ է լատինաց նախկին վանքը՝ Մանասթըրը: Հալէպի Հայ Կաթողիկէ Առաջնորդարանը 1967-ին վանքին կից կառուցել տուաւ երկյարկանի շէնք մը, որ կը ծառայէ Սուրիոյ հայ կաթողիկէ վիճակներուն պատկանող միութեանց իբրեւ ամառնային կեդրոն:

Լատին Ֆրանչիսկեան Թերրա Սանթա առաքելութեան դպրոցը կը

գործէ 1904-1915 եւ 1919-1946 թուականներուն, իսկ 1946-1948-ին կը գործէ իբրեւ տեղւոյն հայ կաթողիկէ ժողովրդապետութեան դպրոց: 1955-ին գիւղացիներուն դիմումին վրայ Քեսապի հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը հոս կը բանայ տարրական նախակրթարան մը՝ մանկապարտէզով, որ միայն երկու տարի կը գործէ, քանի որ 1957-ին նպաստը կը կտրուի: Կարգ մը ընտանիքներ կը վերադառնան Մայր Եկեղեցիին գիրկը, եւ դպրոցը երեք տարի, 1957-1960, կը գործէ Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Վարժարանին իբրեւ մասնաճիւղ:

11) Գարատուրան կամ **Գալատուրան**, երկու ձեւին ալ կը հանդիպինք բերանացի եւ գրաւոր խօսքի մէջ: Բարբառային ձեւը **Գէ'րէ'տըրու** է: Բարդութեան մէջ **գարա**(սեւ) կամ **գալ ա**(բերդ) ըլլալու պարագային, ինչպէս ոմանք կը կարծեն, ինչիւն ափոխութիւն պիտի չկատարուէր, այսինքն՝ **աձայ** նաև որը վերին բարձրութեան քմային ա-ի (**է'**) պիտի չվերածուէր, այլ պիտի մնար նոյնը, ինչպէս շատ թրքերէն տեղանուններ՝ Գարատաշ, Գարաքիլիսա, Գարամաղարա, Գալաճըզ եւ այլն: Ոմանք գայն կը նոյնացնեն լատիներէն Corridorion կամ իտալերէն Corridore բառին հետ, այսինքն՝ «միջանցք»: Այս բացատրութիւնը համոզիչ դարձնելու համար կ'ըսուի, թէ Գարատուրանի ձորը այն միջանցքն էր, որ կը կապէր նաև ահանգիստը Գալայի բարձունքին գտնուող բերդին: Յետեւաբար անուանը տրուած կը նկատեն Անտիոքի լատին դքսութեան շրջանին: Այս տեսակէտը գրականութեան մէջ քանի մը տեղ կը կրկնուի՝ առանց պատմական վկայութիւն մը յիշատակելու⁵⁰: Այս ալ ժողովրդական ստուգաբանութենէ մը անդին չ'անցնիր:

Արեւելեան Միջերկրականի հելլէնիստական նաև ահանգիստները ցոյց տուող քարտէզներու մէջ կայ **Karadrus** անունը, Լաւոդիկէի եւ Սելեւկիոյ միջեւ, Պոսէյդոնէն (Պասիթ) հիւսիս: Ասիկա կը համընկնի Գարատուրանին, որով ծովափին գտնուող պարսպապատ կառոյցի մը անունն է հաւանաբար ան: Աւերակներուն մէջ գտնուած են հռոմէական շրջանի դրամներ, քանդակներ ու լատինատառ արձանագրութիւններու պատառիկներ: Անուան us-ուս վերջոյ թը հոմանիշ է ուն/ոն

⁵⁰ Ալպոմ Քեսապի եւ Նոյնակայ ից, էջ 9; **S. Անդրեայան**, Սվեդիայի բարբառը, էջ 19:

վերջոյ թին (Իսկէրտեր-ոն, Պոսէյդ-ոն), հետեւաբար **Գարարուս-Գե՛րե՛տըրուս**, ինչպէս՝ Տարսուս-Տարսոն:

Քեսապէն արեւմուտք, Գարատաշի ձորաբերանէն վար, շուրջ 900 մ. բարձրութենէն մինչեւ ծով կ'իջնէ Գարատուրանի ձորը 9 քլմ. երկայնքով ու 0.5-1.5 քլմ. լայնքով մը: Ձորը եզերող լեռնաշղթաները նախքլրածեւ են, իսկ ձորի կիսուն կը հասնին առաւելագոյն բարձրութիւններու:

Գարատուրանի մէջ, գէթ մինչեւ Մեծ Եղեռն, գերդաստանական տուներու վեցեօթը խմբաւորումներ կային, որոնք ալ մեծ թաղերը կը կազմէին: Հիները մինչեւ տասնչորս թաղ կը հաշուէին: Հովիտին ամենէն նեղ տեղը կը գտնուի Ծովու թաղը, ուր կը գանազանէին **Հանկըլ Էք** եւ **Պարուճլ Էք** թաղերը: Հոս 1890-1948 թթ. գործած է Նուպարեան Ազգ. Վարժարանը, 1908-ին կառուցուած է Ս. Ստեփանոս եկեղեցին: Թաղը հայրենադարձութենէն առաջ ունեցած է շուրջ քառասուն տուն բնակչութիւն, այժմ՝ ունի ընդամենը երկու ընտանիք: Գերեզմանոցը կը գտնուի երկու քիւովմէթր վար, լքուած բնակավայրի մը մէջ գտնուող Ս. Գեորգ «կիղիցիկ»ին առջեւ: Հոն կայ նաեւ Ս. Ստեփանոս կիղիցիկը, իսկ ծովափի բարձունքի Ս. Սարգիսը մեծ չափերով եկեղեցի մը ըլլալու էր: Գիւղացիներուն կալուածներուն մեծ մասը կը գտնուէր Տունակ լերան հակադիր՝ ծովադէմ լանջերուն վրայ ու ձորերուն մէջ:

Ծովային ճամբորդութիւններու եւ փոխադրութեան համար Ծովու թաղը եղած է կարեւոր կայան մը: 1896-էն ետք օսմանեան իշխանութիւնները հոս մնայուն պահակատուն կը հաստատեն: Գիւղացիք Նոյնիսկ ծովափի պարտեզներուն մէջ ազատ աշխատիլ չեն կրնար: 1920-ական թուականներուն ծովային երթելէ կը կրկին կ'աշխուժանայ: Թրիփոլիէն, Լաթաքիայէն, Սուէտիայէն, Աղեքսանդրէթէն եւ Կիլիկոյ նաւահանգիստներէն հոս ափ կ'ելլեն ճամբորդատար ու բեռնատար նաւեր:

1980-ական թուականներուն ֆրանսահայ երկիր եւ Մշակոյթ Միութեան ջանքերով վերանորոգուեցան Ծովու թաղի տուներէն մէկը եւ Ս. Ստեփանոս մատուռը: Հոգ կը տարուի նաեւ Ս. Գեորգ մատրան, զոր ամեն

տարի կը մաքրեն թու փերէն ու մացառներէն:

Վարի Գարատուրանի մէջ (**Նորքը Գե'րե'տըրուն**) Տունակ լերան ստորոտին կային **Զահդարլ Էք, Սուլըլ Էք, Դըդըզլ Էք** կից թաղերը: Տեղանքը յաճախ գետնասահքի ենթարկուած է. ատոր հետեւանքով մէկ քիլոմէթր վեր կազմուած է նաեւ **Վերի Դըդըզլ Էք** թաղը: Հոս գործած են Ազգային (1934-1947) եւ լատինաց Սան Ֆրանսուա (1933-1938) եւ հայ կաթողիկէ (1950-1960) մանկապարտէզներ: Արեւելքին, Կիւնիկ լերան ստորին մէկ բազուկին վրայ կայ ուխտավայր մը՝ «կիղիցիկ»: Գիւղացիներուն կալուածներուն մեծ մասը կը գտնուէր Տունակ լերան հակադիր՝ հարաւային լանջերուն վրայ ու ձորերուն մէջ:

Կեդրոնական թաղերն էին **Սաղտըճլ Էք, Եարալլ Էք, Կուվճըլ Էք, Լրջիսց թուօղը, Քէօրքըլ Էք, Գազըլ Էք**: Ասոնք բազմամարդ թաղեր էին: Թաղեցիներուն կալուածները կը գտնուէին Կիւնիկ լերան, ինչպէս նաեւ հարաւային լեռնաշղթային երկու լանջերուն ու ձորերուն մէջ: Սաղտըճեան թաղի մուտքին կը գտնուէր այս թաղերուն եւ Վարի Գարատուրանի գերեզմանատունը՝ «կիղիցիկ»ի մը առջեւ, որ այս թաղերու եկեղեցին եղած էր: 1860-ական թուականներուն յարանուանական ներքին պայքարի հետեւանքով գերեզմանատունը եւ եկեղեցին կը լքուին: Բողոքականները եւ միւս համայնքները կ'ուսենան անջատ գերեզմանատուներ, որոնք տակաւին կը գործեն: Լրջեւսց թաղին մէջ 1873-ին աւետարանական համայնքը կ'ուսենայ իր դարոց-ժողովարանը, իսկ 1908-ին՝ իր մեծ եկեղեցին: 1890-ին Գազեւսց (Գազազեւս) թաղին կից կը կառուցուի առաքելական Ս. Աստուածածին եկեղեցին, որ գետնասահքի հետեւանքով կը խոնարհի 1942-ին: Նորը կը կառուցուի աւետարանական եկեղեցւոյ կից՝ 1961-ին, որ հիմնովին կը վերակառուցուի 2009-ին: Թաղին մէջ գործած են աւետարանական (1873-1981), Ազգ. Մեսրոպեան (1890-1964) եւ Միացեալ Նախակրթարանները (1934-1973): 23 Յունուար 1942-ին եւ 23 Մարտ 1997-ին պատահած գետնասահքերը կործանած են Գազազեւս եւ Եարալլեան թաղերը: Այս բազմամարդ թաղերէն այստեղ այժմ կը բնակի ընդամենը վեց ընտանիք:

Վերի Գարատուրանին մէջ իրար կից էին **Ղազարլ Էք, Սանճիկլ Էք, -**

Գալ ամսերը Էք, Տեր Արթինը Էք թաղերը: Յոս կը գտնուին Ս. Աստուածածին «Կիղիցիկ»ը եւ թաղերուն գերեզմանատունը: «Կիղիցիկը» այժմ ամբողջապէս քանդուած է: Յիմքի մնացորդներէն կարելի է ենթադրել, որ ունեցած է 7x3 մ. տարածութիւն: Յատակը ծածկուած է եղած խճասալերով: Խորանը կը գտնուի հիւսիս-արեւելեան պատին մէջ: Սովորական գետաքարի մը հարթ մակերեսին քանդակուած է փոքրիկ խաչ մը: Շատ հաւանաբար այս մատուռն ալ շինուած ըլլայ բուրձնեղէնով հնավայրի մը մէջ, որովհետեւ անոր շուրջ՝ հողի աշխատանքներու եւ տուններու հիմքեր բանալու ընթացքին, երեւան ելած են հնութիւններու կարասի ձեւով հին գերեզմաններ⁵¹: Եկեղեցին վերջին անգամ կը վերանորոգուի 1860-ին: Բայց երկար ատեն կանգուն չի մնար: Տեր Յարութիւն քահանան եւ գիւղին մեծաորը՝ Յովհաննէս Ղալանտեր, կաթուղի կութեան կը յարին: Վերջինս քանդել կուտայ եկեղեցին: Վեճերը կը սաստկանան: 1862-ին Պոլսոյ Ազգային-Վարչութեան միջոցով յատուկ հրամանագիր (\$երման) կը բերուի եկեղեցւոյ շինութեան համար, բայց Օրտուի միւտիրը արգելք կը հանդիսանայ⁵²:

Երկար դատերէն ձանձրացած մայր համայնքը կը կառուցէ վերը նշուած եկեղեցին: Թաղերուն նոր գերեզմանատունը կը գտնուի եր-

⁵¹ Ֆրանսացի հնագետներ եկեղեցւոյ պատկանելիութիւնն ու տարիքը թւրիմացաբար կը կապեն շրջակայքի հնագիտական գտածոներուն հետ: Անոնք կը գրեն. «Կասիոսի հիւսիսային զառիվարին վրայ գտնուող Գարատուրան գիւղին մէջ ծառագարդ արւակով վայր մը կայ, որ կը վայելէ շրջանի հայերուն մասնաւոր հոգածութիւնը եւ ուր ոչխարներ կը զոհուին անոնց կողմէ: Ճիշդ այս վայրին մէջ կրցանք գտնել բիւզանդական շրջանէն մնացած եկեղեցիի մը հետքերը: Իր կառոյցէն մնացած է միայն հիմնաքար մը՝ փոքր չափագրութիւններով: Երկարութիւնն է 9.50 մ., իսկ լայնքը՝ 6.25 մ.: Միակ գաւիթը կը վերջանայ արեւելեան ուղղութեամբ կիսաշրջանակաձեւ ծայրամասով: Տեղւոյն վրայ գտանք խճաքարի մաս մը, զանազան խորանարդաձեւ գունաւոր քարերով (սեւ, դեղին, ճերմակ եւ կղմիւտրագոյն), որոնք ազուցուած են թանձր շաղախի վրայ: Գտանք նաեւ քար մը բարձրաքանդակ խաչով, որուն չափերն էին 20 սմ. բարձրութիւն եւ 16 սմ. լայնք: Մօտակայ դաշտին մէջ գտնուեցան բազմաթիւ հին անօթներ եւ բիւզանդական շրջանէն դրամներ: Արդէն անցեալին այս վայրին մէջ գտնուած էին գերեզմանաքար մը եւ տապանաքարի մը մէկ կտորը» (L. Jalabert et R. Mouterde, Inscriptions Greques et Latines de Syrie, tome III, Paris, 1953, Inscriptions No. 1232 et 1233. Նոյնը տե՛ս՝ **Կ. Սասնէ**, Յայերու Ներկայութիւնը Սուրիական Ծովափին Վրայ, «Գեղարդ» տարեգիրք, Բ. գիրք, Յալէպ, 1976-1978, էջ 273): Օտար հնագետները չափագրութեան մէջ նկատի առած են մատուռէն դուրս գտնուող պատեր եւս: Յոս կան երկու տապանաքարեր, մէկը՝ ջարդուած, իսկ միւսը անվնաս մնացած վիճակով, երկուքն ալ նոր են, 1885 եւ 1888 թուակիր հայատառ թրքերէն արձանագրութիւններով:

⁵² «Սիօն», 1866, թիւ 10, 1 Յոկտեմբեր, էջ 152:

կու քիլոմետր վեր՝ Սուսի կոչուած վայրը: Յին եկեղեցւոյ վայրը բոլոր համայնքներուն համար սիրելի ու խոսկայր կը մնայ:

Ղազարեան թաղին մէջ 1957-ին կը կառուցուի Դաշնակցութեան - Ռուբէն Տէր Մի-նասեան ակումբի եւ Միացեալ Վարժարանին նոր շէնքը: Ունի գրադարան: Գալ ամտերեան թաղին մէջ գործած է լատինաց - Սան Անթուան վարժարանը (1905-1948), որ 1946-ին անցաւ հայ կաթողիկէ ժողովրդապետութեան: Տեղւոյն աղբիւրներէն մէկը (այժմ՝ ցամքած) կը գտնուի հարաւային զառիթափին վրայ: Վերանորոգուած է 1905-ին, ունի կամարածեւ, շուրջ երեք մետր բարձրութեամբ կառոյց, երկաթէ ջրդոն ու քարէ գունձ: Ճակատին մարմարէ սալի մը վրայ կայ արծանագրութիւն. «**Նորոգեցաւ աղբիւրս ի թւի Փրկչի 1905 ի Սեպ ամսեան երիս**»:

Վերի Գարատուրանէն մինչեւ Քեսապաւանի սահմանները՝ Գալա, արտեր էին: 1942-ի Գարատուրանի սահանքէն ետք այստեղ՝ Գարատաշի մէջ, կը հաստատուին աղետեալ Գազազեան, Լնդեան ու Ղազարեան ընտանիքներէն ոմանք: Յետագային այստեղ ամառանոցային տուներ կը կառուցուին գլխաւորաբար հալէպահայերու կողմէ: Գարատաշը այսօր մեծ գիւղի մը տպաւորութիւնը կը թողու:

19-րդ դարու երկրորդ կիսուն քեսապցի վաճառականներն ու կապալառուները գրաւի, պարտքի եւ կանխիկ գումարներու միջոցով կը տիրեն Գարատուրանի ընտիր կալուածներու մեծամասնութեան: Գիւղացիներուն կը մնան այժերու հօտերն ու լեռնային ժեռուտ ու դժուար մշակելի, ցած բերքատուութեամբ արտերը եւ կամ, մեծ կալուածատերերու մօտ քառորդ բերքի դիմաց վարձակալութիւնը: Շատեր նոր արտեր կը բանան իրենց տուներէն շուրջ մէկ, մէկուկէս ժամ հեռաւորութեամբ լեռնային վայրերու մէջ՝ հասնելով մինչեւ հարաւի գիւղերուն մօտակայքը, իսկ հիւսիսէն՝ մինչեւ Անթը Գարամաղարինա:

Գարատուրանը շրջանին ամբողջ տարածքին մէկ երրորդը կը ներկայացներ: Միշտալ եղած է շրջանին ամէնէն բազմամարդ գիւղը:

Քեսապէն Գարատուրանի ծով հասնող ճամբան 1970-ականներուն կը կուպրապատուի: Ելեկտրականութիւնը, հեռաձայնային կապն ու

չուրի քաղաքապետական ցանցը գիւղ կը հասնին: Վերջին երկու տասնամեակին զբօսաշրջիկներու համար Գարատուրանը դարձաւ Սուրիոյ ամենէն տեսարժան վայրերէն մէկը: Յովիտը, զայն եզերող լեռներուն իւրայատուկ գեղեցկութիւնը, ծովը եւ անկէ բացուող տեսարանը դեպի Սուսալեռ՝ հեքիաթային աշխարհ մըն է զբօսաշրջիկներու համար: Գիւղին մէջ արագօրէն զարգացան ամառանոցային եւ զբօսաշրջիկութեան պայմանները:

Գարատաշ եւ Նախկին վերին ու կեդրոնական թաղերը զգալի զարգացում, բնակչութեան աճ ու բարեզարդում մը ապրեցան մինչեւ սուրիական վերջին տագնապի տարիները: Գարատուրան կը շարունակէ մնալ շրջանին մեծագոյն գիւղը՝ իր տարածքով, բնակչութեամբ ու կարելիութիւններով: Սակայն ներկայիս թաղերը այլեւս չունին Նախկին գերդաստանական խմբաւորումներն ու խտութիւնը:

12.- Պաշորտ Գարատաշ էն դեպի արեւմուտք երկարող ճամբան սարահարթերու վրայ էն ուղիղ գիծով մը կը տանի շուրջ 5 քիլոմետր արեւմուտք գտնուող Պաշորտ (Պաշուրտ) գիւղը, ծովէն շուրջ ինը հարիւր մետր բարձրութեան մը վրայ: Յարաւը Գարատուրանէն զինք բաժնող լեռնաշղթան է, իսկ հիւսիսը՝ Կասիոսի բարձր լեռնաբազուկները:

Պաշորտը սկզբնապէս եղած է հովիւներու **ալ աշ ոխը** (հովուական կայք): Կիթի շրջանին հովիւները հոս կը զարնէին իրենց վրանները: Միակ աղբերակը ժայռափոր խորշ մըն էր, որուն առաստաղէն կաթ-կաթ ջուր կը հոսէր գումին մէջ ու հոն կը հաւաքուէր: Ունէր նաեւ ջրհոր մը: Ամէն ընտանիք ունէր ջրամբար: Ասիկա փաստօրէն 5-6 մետր խորութեամբ ու բաւական լայն, պատերը լաւապէս սուաղուած գետնափոր աւազան մըն էր, ուր կը հաւաքէին զառիթափերէն հոսող ձմեռնային ջուրերը: Գիւղացիք այժերու հօտերը ջուրի կը տանէին Գարատուրանի, Սուսալեքի եւ Գարամաղարաներու **սուլլափները** (անասնոց ջրտուքի վայր):

1939-ին, նոր սահմանագծումով, գիւղացիք կը կորսնցնեն իրենց արտերուն մէկ մասը ու կը զրկուին Սուսալեքի աղբիւրէն: Այժերու հօտեր պահելը գրեթէ անկարելի կը դառնայ այս նեղ սահմաններուն մէջ: 1947-ին պաշորտցիները ամբողջ գիւղով Յայրենիք կը ներգաղ-

թեն⁵³: Գիւղը ամբողջ ասէս կը լքուի:

Պաշտօնի դպրոցական փոքրիկները կը յաճախէին Գարատուրանի - Մեսրոպեան, Նուպարեան եւ Քեսապի Սահակեան վարժարանները: Գիւղին մէջ 1935-1947 թուականներուն կը գործէր ՀԲԸՄ-ի նպաստընկալ վարժարան մը:

Գիւղի գերեզմանատունը կը գտնուէր արեւելեան մուտքին մօտ, բլուրի մը վրայ:

⁵³ Ալ պոմ Քեսապի եւ Նոյնակայ ից, էջ 27:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՔԵՍԱԿԻ ՇՐՋԱՆԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒ ԿԵՍԷՆ ԵՏՔ

2.1.- ՅԱՐԱՆՈՒ ԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒ ՄՆԵՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐԹՈՆՔ

Ա Իպրահիմ փաշայի Սուրիոյ գրաւումը եւ անոր հետեւ անքները.- 1832-ին Եգիպտոսի օսմանեան կառավարիչ Սուհամմետ Ալիի որդին՝ Իպրահիմ փաշան գրաւեց Սուրիան: Ան Անտիոքը Սուրիոյ մայրաքաղաքը վերածելու նպատակադրութեամբ հոն զօրանոց հաստատեց ու բարեկարգութիւններ մտցուց Սուրիոյ մէջ: Առեւտուրը, ճամբաները եւ մաքսատուները կանոնաորելու համար 1839-ին արգիլեց քրիստոնեաներէ գանձուող խիայի հարկը բոլոր մաքսատուներուն մէջ¹, սահմանափակեց աւատապետերու իրաւունքները եւ վերջ տուաւ անոնց սանձարձակ զաւթումներուն, արդարութիւն հաստատեց տարբեր համայնքներու միջեւ եւ քրիստոնեաներուն իրաւունքները ճանչցաւ: Ան աղքատ գիւղացիներուն դրամագլուխյատկացուց իրենց տուներն ու ագարակները բարեկարգելու համար եւ երեք տարուան տուրքերը զեղչեց: Գիւղացիութիւնը եւ մասնաւորապէս քրիստոնեաները մեծապէս օգտուեցան անոր իշխանութենէն: Չինուորական ծառայութիւնը պարտադիր էր, թէեւ քրիստոնեաները կրնային ծառայութեան փոխարէն դրամական փրկագին վճարել²:

Քեսապի շրջանը եւս զարգացման արագ թափի մը մէջ կը մտնէ: Գիւղացիք կ'ընդարձակեն ու կը բարեկարգեն իրենց կալուածները, զարկ կու տան գիւղատնտեսական մշակութիւններուն: Ճատեր նոր հողեր կը գնեն թուրք աւտապետերէն ու ագարակներ կ'ունենան

¹ **Տ. Գոսարա** Ալ-Բահիալ ա Ֆի Սուհաճազաթ Իտլէպ (արաբ.՝ ճանապարհորդները Իտլիպի Նահանգին մէջ), Բ. հատոր, Էջ 152: Տե՛ս նաեւ՝ **Ն. Պափաշ**, Ախպար Յալապ (արաբ.՝ Յալէպի Լուրեր), Յալէպ, 1985, Էջ 105:

² **Ն. Ուսրտ** Յատարաթ Անթաքիա Ապրալ-Ուսուր (արաբ.՝ Անտիոքի Քաղաքակրթութիւնը Դարերու Ընթացքին), Սան Փաուլլօ, 1956, Էջ 159-161: Իպրահիմ փաշայի իշխանութեան եւ Սուրիոյ մէջ անոր մտցուցած բարեկարգութիւններուն մասին տե՛ս նաեւ՝ **Անանուն հեղինակ**, Սուզաքարաթ Թարիխիէ Ան Յամլէթ Իպրահիմ Փաշա Ալա Սուրիա (արաբ.՝ Պատմական Յիշողութիւններ Իպրահիմ Փաշայի Սուրիա Կատարած Արշաւանքի Մասին), խմբագրեց ու յառաջաքանը գրեց փաստաբան Ահմատ Ղասսան Իսպանօ, «Գութէյպէթ» հրատարակչատուն: Տե՛ս նաեւ **Ղ. Ի. Պիթար**, Ալ-Լազգիէ Ապր-ըլ Ուսուր (արաբ.՝ Լաթաքիան Դարերու Ընդմէջէն), Ա. հատոր, Դամասկոս, 2001, Էջ, 215:

բնակավայրերէն բաւական հեռու վայրերու մէջ, կը բարեկարգուին տուներն ու ճամբաները, կը խնամուին ու խտատեղիներն ու փոքրիկ եկեղեցի-ները:

Շատ արագ կերպով կը մեծնայ Քեսապի շուկան, որ նախապէս տեղի եւ շրջակայ հայ գիւղակներուն կենցաղային եւ գիւղատնտեսական իրերու պահանջները գոհացնող շարք մը մանրավաճառ խանութներէ ու արհեստաւորներու կրպակներէ կը բաղկանար: Արդ՝ տեղւոյն գիւղական արտադրութիւններուն ամբողջական հաւաքումն ու արտածումը կ'անցնին քեսապցի վաճառականներուն ձեռքը:

Բ. Աւետարանական եւ կաթողիկէ համայնքներու ստեղծումը.-

Օսմանեան իշխանութեան վերահաստատումէն ետք Քեսապցիները իրենց շահերը պաշտպանելու համար հիմառուրիշ ու ժիպէտք ունեին - եւ ատիկա՝ ամենէն առաջ եւրոպայի կամ Արեւմուտքի ներկայ ու թիւններ, որ Յալէպի կուսակալութեան տարբեր քաղաքներուն մէջ՝ Յալէպ, Այնթապ, Անտիոք, ինչպէս նաեւ Լաթաքիոյ մէջ կ'երեւէր իր հիւպատոս-ներով, առեւտրական ընկերութիւններով եւ հետզհետէ աշխուժացող միսիոնարութիւններով, որոնց ազդեցութիւնը տակաւաւ տակաւ կը մեծնար տեղական իշխանութիւններուն վրայ: 1840-ական թուականներուն դէպի Այնթապ իրենց ճամբուն վրայ ամերիկացի միսիոնարներ Քեսապի մէջ կանգ կ'առնէին, ծանօթութիւններ կը հաստատէին, Նոր Կտակարանի հայատառ թրքերէն հրատարակութիւններ կը ցրուէին ու սերտողութիւններ կը կատարէին: Ասոր հետեւ անքով Քեսապի մէջ կը ստեղծուի Ս. Գիրքի սերտողութիւններ կատարող խմբակ մը, որ հայ աւետարանական եկեղեցիներու պատմիչներուն ծանօթ է «Եօթներու խմբակ» անունով: Անոր մայր համայնքէն անջատուելու գործին մէջ ամերիկացի միսիոնարները առաջնորդի դեր կը կատարեն: 1850-ին Քեսապ կը հասնի միսիոնար Ֆորտ՝ - «կացութեան տեղեկանալու եւ պէտք եղած կարգադրութիւնները - ընելու դիտումով»³: 1853-ի գարնան Յալէպի կուսակալը կը հրահանգէ Օրտուի կառավարիչին, որ ճշդէ բողոքական տրատուներու-

³ **Տ. Ճ. Կրլ ոբեան**, Ոսկեմատեան ..., Ա. հատոր, Էջ 350:

ւն ցանկը (57 տրատու) եւ զանոնք ճանչնայ իբր անշատ «**Վրոթեսթան միլլէթ**» (բողոքական համայնք): 23 Մայիս 1853-ին կը հիմնուի Քեսապի Յայ Աւետարանական Եկեղեցին Վերապատուելի Լէտ Վուտի հսկողութեան տակ⁴: Քեսապէն դուրս աւետարանական համայնքներ կը ստեղծուին Գարատուրանի (1873), Էքիզօլուքի (1882) եւ Քէօրքիլնէի մէջ (1898): Ասոնք կ'ուսենան իրենց եկեղեցական առանձին շէնքերն ու հոգեւոր հովիւները: Միւս մանր գիւղերը կ'ուսենան ժողովարան-դպրոցներ, բայց կապուած կ'ըլլան Քեսապի եւ Էքիզօլուք-Քէօրքիլնէ միացեալ եկեղեցիներէն մէկն ու մէկուն: Քեսապ Կիլիկիոյ Յայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան մէջ ներկայացած է երկու՝ Քեսապի եւ Էքիզօլուք-Քէօրքիլնէի միացեալ եկեղեցիներով:

1840-ական թուականներէն սկսեալ ամերիկացի միսիոնարները առանձին չէին Քեսապի մէջ: Անտոնեան Միաբանութեան վարդապետները Լիբանանի Չմմառէն ու Պէյթ Խաշարյէն գալով իրենց կեդրոն դարձուցին Անտիոքը, ու Յալէպի Լատին միսիոնարներուն նիւթակաւն Լայն օժանդակութիւնները վայելելով՝ քարոզչական աշխատանք տարին Քեսապի, Չինարճըզի եւ Գարատուրանի մէջ: 1857-ին Յալէպի կուսակալին հրամանով Օրտուի կառավարիչը պաշտօնապէս գործուսեութեան իրաւունք կու տայ «**կաթոլիկ միլլէթ**»ին (կաթոլիկէ համայնք): Կը կազմուի Քեսապի հայ կաթոլիկէ ժողովրդապետութիւնը, որ կը կապուի Անտոնեան հայրերու Անտիոքի թեմին:

Յայութեան երեք «միլլէթ»ներու (համայնք) բաժանումը իրեն հետ կը բերէ նաեւ վարչական փոփոխութիւններ: Քեսապի, Քէօրքիլնէ-Էքիզօլուքի միացեալ «Փրոթեսթան միլլէթ»ները կ'ուսենան իրենց առանձին մուխթարները (արաբ.՝ ընտրեալ. համայնքի ներկայացուցիչ, գիւղապետ, թաղապետ)՝ միւս գիւղերու իբրեւ առանձին համայնք չձեւաւորուած բողոքականներն ալ ներկայացնելով: Ամբողջ շրջանին մէջ կը ձեւաւորուի մէկ «կաթոլիկ միլլէթ», որ կը ներկայացուի մէկ մուխթարով: «Էրմենի միլլէթ»ը (հայ՝ առաքել-

⁴Նոյնը, էջ 349:

ական համայնք) կը ձեռառորուի երկու համայնքով՝ Քեսապ ու Գարատուրան, մեկական մուխթարով: Մուխթարները ունեին իրենց - գիւղական խորհուրդը՝ մեծլիսը, որուն անդամները կը կոչուէին ազա (արաբ.՝ **ատու**. անդամ): Ազաները գիւղի տարբեր թաղերու ներկայացուցիչներն էին:

Գ. Ազգային շարժումները եւ լարին համայնքի ստեղծումը.-

Միջյարանուանական բաժանուածութեան ու անհանդուրժողութեան շրջանին Քեսապ կը հասնի Յնչակեան կուսակցութիւնը: 1891-ին Աղասի (Կարապետ Թուրսարգիսեան) Կիլիկիա կու գայ, յատկապէս դէպի Կիլիկիա եւ Յայաստան գէնք ներմուծելու ճամբայ մը գտնելու համար⁵: Երբ Աղասի Կարմիր լեռներուն վրայ կը դեգերէր, իր զինեալ խումբին մէջ կար նաեւ «ասպատակ մը Քեսապէն»: Այս անյայտ ֆիտային հաւանաբար մեծ դեր կատարած է Աղասիին ու շարժողութիւնը Քեսապի վրայ դարձնելու ուղղութեամբ: 1893-ին ան իր ընկերներով - քանի մը անգամ կ'այցելէ Քեսապի շրջանը ու կը յաջողի ժողովուրդը իր բոլոր խաւերով ու յարանուանութիւններով Յնչակեան կուսակցութեան ու խտագրել: Յնչակեան կուսակցութիւնը կրցած էր վերջ տալ միջհամայնքային թշնամանքին ու ատելութեան, ազգային նպատակներու շուրջ համախմբել ժողովուրդը եւ համագործակցութեան մղել եկեղեցականները: Արական սեռի չափահաս մարդոց 90 տոկոսը հնչակեան կ'ուխտագրուի: Ամէն տեղ դաստիարակչական ու քարոզչական ժողովներ կ'ըլլան եւ զինավարժութեան փորձեր կը կատարուին:

1894-էն ետք հնչակեանները կիսանկախ վիճակ ստեղծեցին Մուսալերան եւ Քեսապի մէջ: Այլ ազգի աւազակներ եւ աւազակախումբեր Ջելլատի խմբակին կողմէ կը պատժուէին ամէնէն խիստ կերպով: Թուրք աղաները զսպեցին իրենց ախորժակները եւ բարձրաստիճան - պաշտօնեաներ, աւելորդ գլխացաւէ հեռու մնալու համար, չփորձեցին բախլի հայոց հետ: Ոստիկանները չէին մօտենար հայոց գիւղերուն: Տուրքերը կը հաւաքուէին գիւղացիներուն կողմէ ու

⁵ **Աղասի** (Կարապետ Թուրսարգիսեան), Դրուագներ Սուէտիոյ Անցեալ Էն (1893-1895), մէջբերուած է Ալպէռ Ս. Թէմիրեանի «Քեսապ» գիրքէն, Պէյրուտ, 1956, էջ 136:

կը յանձնուէին կառավարիչին: Դատերը կը տեսնուէին տեղւոյն վրայ: Թուրք պաշտօնեաներու համար կաշառքի աղբիւրները ցամքած էին: Նախապէս հայ գիւղացիք կը վախնային Քեսապէն, Արամոյէն, Ղնեմիէն եւ Եագու-պիէէն Անտիոք երթալէ, իսկ հիմա միևնա՛յն ու գիտուած կ'անցնէին թրքական գիւղերուն մէջէն:

1894-ին Աղասի կ'անցնի Չէյթուն: Մուսալեռ եւ Քեսապ գիւնք փոխարինելու կու գան Սիսակ Վանլեանի եւ Շաարշ Շիշմանեանի խումբերը: 1896-ի Յունուարին Չէյթունի ապստամբութիւնը կը վերջանայ բարեոք ձեւով: Օսմանեան իշխանութիւնները արդ իրենց ուշադրութիւնը կը դարձնեն Սուէտիոյ եւ Քեսապի շրջաններուն վրայ՝ պահանջելով որ հնչակեան գործիչները անձնատուր ըլլան: Ժողովուրդը տրամադիր չէ անձնատուութեան: Յալէպի, Անտիոքի եւ Լաթաքիոյ մէջ եւրոպական երկիրներու հիւպատոսները կը միջամտեն ու կարելի կ'ըլլայ համոզել ժողովուրդը, որ ամերիկահայ գործիչները յանձնուին օտար հիւպատոսներուն, որոնք ալ պիտի ապահովեն անոնց ապահով եւ արտօնեալ ելքը արտասահման, եւ թէ բանակը հայկական շրջանները պիտի չմտնէ ու ժողովուրդը գերծ պիտի մնայ ամէն պատասխանատուութենէ: Սակայն, 20 Մարտ 1896-ին, ի հեճուկս տրուած խոստումներուն, հնչակեան գործիչները կը ձերբակալուին ու շղթայակապ կը տարուին Յալէպի բանտը: Քեսապի եւ շրջակայ գիւղերուն մէջ կը սկսին ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները: Կը կազմալուծուին հնչակեան տեղական մասնաճիւղերը: Առաջին անգամ ըլլալով Քեսապի շրջանին կարելոր մուտքերուն վրայ օսմանեան պահակատուներ կը կառուցուին:

Յայ երեք համայնքներու իշխանութիւնները անգօր են բան մը ընելու: Այս ալ առիթ կը ստեղծէ, որ ժողովուրդը պաշտպանութիւն փնտռէ ուրիշներու մօտ, որ այս անգամ կ'ըլլայ Լատին Ֆրանչիսկեան Միաբանութիւնը: Ժողովուրդը Լատին փաթերաներու հովանիին տակ ինքզինք աւելի ապահով կը զգար:

1904-ին Քեսապ կու գան Լատին Ֆրանչիսկեան Թերրա Սանթա Առաքելութեան հայրերը ու կը կազմեն երկու համայնք: Կ'ունենան երկու վանքեր՝ մանասթըր, մէկը Վարի Պաղճաղազի, իսկ միւսը՝ Բ-

Եսապի մէջ, արեւելեան թաղին վրան: Ասոնք հոգեւոր եւ բարեսիրական աշխատանքներու կողքին կը հոգան նաեւ լատին եւ կաթողիկէ համայնքներուն կրթական միասնական գործը⁶:

Դ. Առաքելական համայնքի վիճակը.- Այս շրջանին Լաթաքիոյ Երուսաղիմապատկան վանքի տեսուչ Թադէոս Վրդ. Եկաւեան Լաթաքիոյ վիճակէն (Լաթաքիա, Արամօ եւ Ղնեմիէ) բացի կը հովուէ նաեւ Անտիոքի նախկին առաջնորդութեան վիճակները՝ Քեսապ, Անտիոք, Սուէտիա, Եագուպիէ-Գնիէ: Ասոնք սակայն պաշտօնապէս մաս կը կազմեն Յալէպի առաջնորդութեան: Պոլսոյ Պատրիարքարանն ալ կարծես լուռ կ'անցնի այս կարգադրութեան վրայէն: Ասկէ ետք՝ Թադէոս Վարդապետ եւ իր յաջորդը՝ Մովսէս Վրդ. Ոսկերիչեան, կը կրեն «Լաթաքիոյ, ճիսիր Շուղուրի եւ Անտիոքի Կաթողիկոսական Փոխանորդ» կամ «Առաջնորդ» տիտղոսները: Մայր Եկեղեցւոյ հաւատարիմ մնացած հատուածը դժգոհ է այս կարգադրութենէն: Համայնքի շուրջ 3500 անձի անունով խնդրագիր մը կը յղուի Պոլսոյ Պատրիարքարանին Թադէոս Վրդ. Եկաւեանի դէմ: «Բիւրակն»ին հասած թղթակցութիւն մը ահաթէ ի'նչ կը գրէ այդ մասին. «Ժողովուրդը լատինականութեան եւ բողոքականութեան կը դիմէ: Քահանաներն անկարող են այդ հոսանքի առաջքն առնելու: Դիւրակեցիկ դասը հեռացած է իր մայրենի եկեղեցիէն: Վարժարանը գոցուելու վրայ է պիւտճէի անձկութենէն: Մայր Եկեղեցիէն հեռացածներու տղաքը բողոքականներու վարժարան կը յաճախեն: Աղքատ դասն անբաւական է վարժարան մը պահելու: Այս ամենուն պատճառը նոյն Թադէոս Վարդապետի ապկարութիւնն է, թուլութիւնն է. «ինչ ո՞ւր է պետք»: Բայց պտղիներ ժողովելու մասին այդպէս չի խորհիր: Քանի մը անգամ դիմումներ եղան դարձեալ Պատրիարքարան՝ դպրոցին դասագիրք հայթայթելու. սա ալ անլսելի մնաց: Գէթ ապագայ սերունդը օտարներու կրթական լուծէն ազատենք: Վա՛րճ անցանք Թադէոս Վ.ի խնդրէն»⁷:

Անտիոքի հայ առաքելական վիճակը՝ եռեակ իշխանութեան մը խառնաշփոթութիւնը կ'ապրէր, ուր ամեն կողմ իր շահերը կը

⁶ Ա. Ս. Թեմիրեան, Քեսապ, էջ 168-180:
⁷ «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, թիւ 25, էջ 399:

հետապնդեր: Յստակ է, որ թե՛ Սսոյ կաթողիկոսարանը եւ թե՛ Երուսաղէմը լուռ կերպով կը հակադրուէին Պոլսոյ Պատրիարքարանին, բայց ժողովուրդին կարիքներուն համար անմիջական պատասխանատուութիւններ ընդունելէ կը խուսափէին, իսկ Պոլսոյ Պատրիարքարանը կարծես կը սպասէր, որ սահմանադրական իշխանութիւնները հաստատող ոյժերը վիճակին տէր ելլեն թեմերուն մէջ ու յետոյ ինք միջամտելու եւ օգնելու տրամադրութիւններ ունենայ:

Մայր համայնքը կը պահէ իր թուային գերակշռութիւնը, սակայն միայն երկու եկեղեցիներով: Դարասկզբի պոլսական տարեցոյց մը, վիճակին տեղեակ ըլլալով հանդերձ, Անտիոքի Առաջնորդութեան թեմեր կը նկատէ Քեսապ, Գարատուրան, Էքիզօլուք, Քէօրքիւնէ, Չինարճըզ, Ներքի Գիւղ, Սեւ Աղբիւր, Պաղճաղազ⁸, փաստօրէն բոլոր այն գիւղերը, ուր փոքրիկ մատուռներ կը գործէին անցեալ դարու քառասունական թուականներուն եւ անկէ առաջ, բայց որ այժմ մասամբ կամ ամբողջութեամբ այլ աղաւան էին:

Յակառակ յարանուանական այս մասնատուածութեան՝ Յնչակեան կուսակցութեան հաստատած կարճատեւ իշխանութեան շրջանն ալ (1893-1896) կը բաւէր, որ քեսապցիք ապրին ազգային իրաւ զարթօնք մը, յարանուանական եւ այլ խնդիրներէ վեր դասեն ազգային-գաղափարական իտեալները ու լեցուին ջերմ հայրենասիրութեամբ:

Դաշնակցութիւնը Քեսապի մէջ կը կազմուի 1906-ին⁹: Ան շրջան կը մտնէ տեղացի երիտասարդներու միջոցով ու խիստ գաղտնի կը գործէ: Այդ օրերուն, Քեսապի մէջ կային տասնեակ մը գուլէճական եւ համալսարանական կրթութիւն ստացած երիտասարդներ, բարձրագոյն նախակրթարաններէ շրջանաւարտներ եւ ուրիշներ, որոնք ուսանած էին Տարսուսի, Այնթապի եւ Պէյրութի ամերիկեան գուլէճներուն մէջ:

⁸ «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Յիւանդանոցին», Կ. Պոլիս, 1904, էջ 390: Քէօրքիւնէ գիւղը գրուած է Քէօրքիւտ, իսկ Ներքի Գիւղը՝ Ներքի:

⁹ Ալ պոմ Քեսապի եւ Շրջակայից, էջ 25: Կ. Ս. Թիլքեան կու տայ 1904 թուականը (Իննսունհինգամեակ..., էջ 29): Սիմոն Չաւարեան Քեսապի մէջ կազմակերպչական աշխատանք չէ տարած. ան ժողովուրդին ներկայացած է իբրեւ ռուս վաճառական՝ ՉաւարօՖ անունով: Ամէն պարագայի՝ անոր մեկնումէն ետք Սերգօ աղա կասկածամտութեամբ ըսած է. «Այդքան ալ վաճառականի չէր նմաներ»:

Անոնք մօտիկէն ծանօթ էին Դաշնակցութեան (ՊԵՂՐՈՒԹԻ ՄԷՋ Դաշնակցութիւնը կազմակերպուած է 1904-ին):

2.2. 1908-Ի ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒ ԹԵՆԷՆ ԵՏՔ

Ա. 1909-ի Աղէտը.- 1908-ի Յուլիսին Օսմանեան Սահմանադրութեան վերականգնումի լուրը Քեսապի մէջ լուռ վերապահութեամբ կ'ընդունուի, մինչ Օրտուի մէջ, ուր կը նստեր միւտիքը, պետական շուքով հանդէսներ կը կազմակերպուին: Անկէ Օրտուի եւ շրջակայ գիւղերու երեւելիները կ'ելլեն Քեսապ ու ծափողջոյններով, ողջագուրումներով ու ձեռքի սեղմումներով կը շնորհաւորեն Քեսապիները: Յեղափոխութիւնը կու գար օսմանեան բազմազգ պետութեան ժողովուրդներուն, տարբեր կրօններուն ու համայնքներուն միջեւ խաղաղ համակեցութիւն ստեղծելու, մարդոց միջեւ արդարութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն հաստատելու համար: Շրջակայ թուրքերը ասոր ցուցական մէկ օրինակը կ'ընէին - Քեսապի մէջ: Ժողովուրդը կը թափի փողոցները, Խոփի հրապարակին վրայ կը փչէ զուռնան, կը թնդայ թմբուկը, ճառեր կը խօսուին, հայ, թուրք, ալ եւի եւ յոյն թեւանցուկ շուրջապար կը բռնեն: Սահմանադրութիւնը կը գինովցնէ Քեսապիները:

Այդ օր Այսամանճիկ աղան կ'ըսէ.

- Տեսնենք թէ սաթմբուկին կոթը յետոյ որո՞ւն գլուխին պիտի կոտրի:

Ու տարի մը չանցած կը պայթին Կիլիկեան ջարդերը: 9/16 Ապրիլ 1909, Երկուշաբթի գիշեր, Անտիոքի հայերը սոսկալի ջարդի կ'ենթարկուին¹⁰: Քեսապի մէջ բազմաթիւ ընտանիքներ արդէն սուգի մատնուած են՝ Անտիոք, Մերսին, Այաս, Փայաս ու Աղեքսանդրէթ գտնուող իրենց հարազատներուն, ընդհանրապէս՝ հայրեր, սպանու-

¹⁰ **Յ. Յ. Թերզեան**, Կիլիկիոյ Աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 255; **Տ. Ճ. Կըլոբեան**, Ոսկեմատեան, Ա. հատոր, էջ 335; (**Անստորագիր**), Սրտամլիկ Լուրեր Անտիոքէն, «Տաճար», Բ. տարի, թիւ 4, 31 Յունուար, 1911, որ կը յայտնէ. «70-80 տուն հայերէն հազիւ 10-13 հոգի մազապուրծ ազատած են»; **Պ. Մառուռեան**, 1909-ի Աղէտը եւ Մուսալեռ, «Յուշամատեան Մուսալեռան», ՊԵՂՐՈՒԹ, 1970, էջ 300; **Ն. Ուարտ**, Հատարաթ Անթաքիա Ապրիլ-Ուսուր (արաբ.՝ Անտիոքի Քաղաքակրթութիւնը Դարերու Ընթացքին), էջ 161:

թեան գոյ ժերը լսած ըլլալով¹¹: Լուրեր կը հասնին, թէ մահմետական ամբոխներ՝ թուրքեր, թուրքմեններ, չեչեններ, արաբներ եւ քիւրտեր, Օրտու եւ Քեսապի հիւսիս-արեւելեան թրքական բնակավայրերու մէջ կը հաւաքուէին՝ գալով ճսըր Շուղուրէն, Գուսէյրէն, Անտիոքէն, մինչեւ իսկ հեռու արեւելք գտնուող Իտլիաքն, Քեսապի վրայ յարձակում կազմակերպելու համար:

Քեսապի եւ շրջակայից մեծամեծները եւ հոգեւոր հայրերը հանդիպում մը ունենալով լուր կը դրկեն միւտիրին՝ Յիւսէին Յասան աղային, որ Քեսապ ելլէ, իսկ միւտիրն ալ իր կարգին իբր Քեսապ գալէն վախճալով, կ'առաջարկէ, որ հանդիպումը տեղի ունենայ Օրտուի եւ Քեսապի միջեւ գտնուող Էսկիւրէն (Ներքի Գիւղ) գիւղին մօտ: Հանդիպում կ'ըլլայ 9 Ապրիլին, Յինգշաբթի օրը: Կողմերը կը հաւաստիացնեն, որ նման «վտանգ չի սպառնար իրենց կողմէն»¹²:

Ներքի Գիւղի մէջ կայացած հանդիպումին յաջորդ առտուն, 10/23 Ապրիլին, Ուր-բաթ, գիւղացիք կը նկատեն Օրտուէն ելլող բազմահազար ամբոխի մը յառաջխաղացքը դէպի Քեսապի արեւելեան գիւղերը: - Սեւ Աղբիւրի, Ներքի Գիւղի, Խայիթի եւ Չինարճըգի բնակիչները հազիւ կը կարողանան հասնիլ Քեսապ: Կ'որոշուի անմիջապէս քաշուիլ դէպի արեւմուտք, Գարատուրանի լեռները, ծովէն օգնութիւն մը ստանալու յոյսով: Փախստականներու թիկունքը ապահով դարձնելու նպատակով կ'որոշուի անմիջապէս ինքնապաշտպանութեան դիմել: Բոլոր զինեալները, շուրջ երեք հարիւր հոգի, աւանէն դուրս դիրքեր կը բռնեն:

Աւանին վրայ յարձակողներու թիւը կը գնահատուի աւելի քան հինգ հազար, բոլորն ալ «մարթին» հրացաններով զինուած: Անոնց մէջ կային տարազաւորներ, օսմանեան բանակի զինուորներ: Այդ հինգ հազարին կը հետեւէին ուրիշ բազմահազարնոց ամբոխներ, որոնք թուփառ թուփ, քար առ քար կը խուզարկէին՝ կողոպտելու, հայ

¹¹ Ա. Ս. Թեմիրեան, Քեսապ, էջ 53:

¹² (Անստորագիր), Քեսապի Դէպքը (Ականատեսի Պատմութիւն), «Լուսաբեր-Արեւ», 13 Մայիս 1909:

մը սպանել ու ահա ուր մոլ ու ցքեն բռնուած:

Քեսապի վրայ յարձակու մը միսիոնար Սթիֆըն Ռ. վան Թրոպրիճ - հետեւեալ ձեւով կը նկարագրէ. «Ուրբաթ արշալոյսին, արեւածագէն առաջ, զԷնքի պայթու մները գուժեցին թշնամիին յառաջացումը: Երեք տարբեր լեռնային արահետներէ՝ հիւսիսէն, հիւսիս-արեւելքէն եւ արեւելքէն, հազարաւոր զինեալ իսլամներ խուժեցին ձորն ի վեր: Անոնց մարթինի հրացաններու գնդակները կը տեղային Քեսապի տուներուն վրայ, մինչ գիւղի ինքնապաշտպանութեան համար դիրք բռնած 300 քրիստոնէաներու որսորդական հրացանները չէին կրնար կտրել այնքան երկար միջոց: Յուսահատ պայքար մըն էր, եւ քեսապցիք անդրադարձան այս դժուարութեան: ...Յինգ ժամ հրացանած գութիւնը շարունակուեցաւ կատաղի վճռակամութեամբ: Կեսօրէ ետք Անտիոքի գիւղերու թուրքերը հաւաքուեցան հիւսիս գտնուող Ագրալ երան շուրջ, իշխել ու համար Քեսապի դիրքին վրայ: Արաբները յարձակած էին աւանին հարաւ-արեւելքէն: Այս միջոցին Օրտուի իսլամներու բանակի յառաջապահը գրաւած եւ այրած էր Քեսապէն վար գտնուող գիւղերը եւ հրդեհած երեք տուներ աւանի վերջաւորութեան: Անոնց պոռչը-տուքներն ու մոլեռանդ սպառնալիքները յստակօրէն կը լսուէին»¹³:

Չորս-հինգ ժամ ետք ինքնապաշտպանական կռիւները յոյս չեն ներշնչեր: Յայ գինեալները կռուելով կը նահանջեն դէպի Գարատուրանի լեռները: Ականատեսը կը գրէ. «Խուժանը գիւղը թալանելէ ու կողոպտելէ վերջ՝ կրակի տուաւ, ծերերը ու պառաւները ու փոքր տղաքը բոցերու մէջ նետեցին, շատ աղջիկներ ու կիներ առեւանգեցին»¹⁴:

¹³ **S.Trowbridge**, *The Sack of Kesab, "Olive Trees"*, 1909, pp. 205-250. Թարգմանութիւնը, ծանօթագրութեամբ հանդերձ՝ տե՛ս **3.Չոլ սքեսն**, Քեսապ, Գ. հատոր, էջ 381:

¹⁴ **(Անստրապիը)**, Քեսապի Դէպքը, «Լուսաբեր-Արեւ», 13 Մայիս 1909: Դժբախտաբար ինքնապաշտպանական կռիւներուն մասին մանրամասնութիւններ չեն տրուած: Կը պատմուի, թէ գինեալները երեք դիրքեր գրաւած են գիւղին արեւելքը: Կռիւներուն առաջին իսկ ժամուն հոն կը հասնի Գարատուրանի Տէր Պետրոս Քահանան խումբ մը զինեալներով ու ճակատէ ճակատ վազելով կ'աշխատի դիմադրութիւնը երկարած գել, որպէսզի ժողովուրդին նահանջը դէպի Գարատուրան խուճապի չվերածուի: Պատմաբանները այդպէս ալ կը գնահատեն Քեսապի ինքնապաշտպանութեան կռիւները. «Չի կարելի հպարտութեամբ չնշել, կը գրէ Ծ. Թ. Թորոսեան, Չեյթունի, Չորք Մարգպանի, Յաճընի, Սսի, Քեսապի, Ֆընտրճագի, Շեյխ Մուրատի հերոսական ինքնապաշտպանական կռիւները, որի շնորհիւ անխուսափելի ջարդից ու կողոպուտից փրկվեցին հազարաւոր անմեղ

Միսիոնար Սթիֆըն Ռ. վան Թրոպրիճ հետևեալ ձեւով կը նկարագրէ Քեսապա անի անկումը. «Արաբներն ու թուրքերը խուժեցին աւանին թաղամասերը: Անոնք այնքան լեցուած էին կողոպտելու - ցանկութեամբ, որ նոյնիսկ չհալածեցին գիւղի վերջամասը - պաշտպանող քրիստոնեաները: Բարկութեամբ լեցուն էին կողոպուտի տեսարանները, ուր թալանչիները իրարու ձեռքէ կը խլէին - պահեստասենեակներու մէջ ամբարուած մետաքսի հումքը, որ Քեսապի գլխաւոր արտադրութիւնն է: Արջառ, ջորիներու երամակներ, պղինձե ամաններ, անկողիներ, հագուստներ եւ գորգեր տարուեցան թուրքերու կողմէ տենդոտ արագութեամբ, եւ տուները մէկիկ-մէկիկ կրակի մէջ ձգուեցան: Քանի մը տարիքոտ հայեր, փախչելու անկարող, իրենց տուներուն մէջ բռնուեցան ու բարբարոսութեամբ սպանուեցան: Ուրիշներ, որոնք ուշացան փախչելու քանի մը արժեքաւոր իրեր հաւաքելու եւ յետոյ փախչելու միտումով՝ նոյնպէս սուրբ անցուեցան: Կացիները եւ դանակները վերջացուցին այն ինչ որ կողոպուտը չէր վերցուցած: Սակայն փախչելու - բնագոյր շատ զօրաւոր է քրիստոնեաներու մէջ, եւ այլ ազգիները կողոպտելու ազահութեամբ այնքան յախշ տակուած էին, որ ամբողջ օրու ան կռիւէն ետք միայն 153 հայեր զոհուեցան, բայց բազմաթիւ թուրքեր սպանուեցան»¹⁵:

Նոյն օրը, ժամը 10-ին, ահագին բազմութիւն մը Քեսապէն ելլելով կը խուժէ Գարատուրան: Կը կարգադրուի, որ ժողովուրդը ապաստանի հիւսիսային եւ հարաւային լեռներուն՝ Կիւնիկ եւ Տիւնակ լեռներուն մէջ: Այրերը խմբուելով կը փորձէին խափանել խուժանի ճամբան, բայց գիւղի պարպումէն ետք իրենք եւս կը նահանջեն: Փախստականները գիշերով կ'անցնին լեռնաշղթան ու կը մտնեն Լաթաքիոյ մութասարիֆութեան սահմաններէն ներս, դէպի Պասիթի հրուանդանը:

Լաթաքիոյ մութասարիֆութեան պատկանող Պետրուսիէ գիւղին մ-

հայեր» (**Շ. Թ. Թրոսյան**, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987, էջ 330):

¹⁵ **S.Trowbridge**, The Sack of Kesab, "Olive Trees", 1909, pp. 205-250. թարգմանութիւնը տե՛ս **Յ. Չոլպեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 382):

եծաւ որը՝ Ռիֆաաթ աղան ճամբայ տալ կը խոստանայ, պայմանաւ որ հայերը իրենց 300 կտոր գէնքերն ու գինամթերքը յանձնեն իրեն¹⁶: - Կը սկսի սոսկալի ու խուճապահար փախուստ մը նախ դէպի ծով, ապա աւազներուն վրայ են դէպի հարաւ, Լաթաքիահասնել ու յոյսով մը:

Քեսապի հարաւային եւ արեւմտեան շրջանի գիւղերը փախուստի ուրիշ ճամբայ մը կ'ընտրեն: Ուրբաթ, 10/23 Ապրիլի առաւօտուն Չագալ ճըզի, Քէօրքիւնէի եւ Տուզաղաճի բնակիչները իրենց կարգ մը իրերը արտերուն մէջ պահելով կը բարձրանան Էքիզօլուք: Թուրքերը քայլ առ քայլ խուզարկելով կը մօտենան Էքիզօլուք գիւղին: Հոս հաւաքուած բոլոր գիւղացիները կ'ուղղուին դէպի արեւմուտք ու Լաթաքիոյ մութասարիֆութեան մաս կազմող Վերի Պաղճաղազի հայոց հետ կ'ապաստանին Վարի Պաղճաղազի լատինաց վանքը, ապա լատին վարդապետներու առաջնորդութեամբ կ'իջնեն Կոնկորայի (բրբռ.՝ Կիւնկիւրու) ձորը՝ Լաթաքիա ուղղուելու նպատակով: Այդտեղ՝ Ֆագը Հասանի թուրքերը կը կտրեն ճամբան ու մինչեւ վերջին գոյքը իրենց ձգելու պայմանով միայն կը յօժարին ճամբայ տալ: Փախստականները կը հասնին Քեշիշ թրքական գիւղը, որուն աղան չ'արտօներ, որ հայերը գիւղ մտնեն: Փախստականներու այս խումբը Պասիթի ծովեզերք կը հասնի անպատմելի վախերով ու տառապանքներով: Աւազակներ կը շարունակեն իրենց գայլի հարսանիքը, երբ մութին մէջ են, դէս են ու դէն են, կը կրակեն ծովեզերքը խմբուած գիւղացիներուն վրայ:

Ուրբաթ լոյս Շաբաթ գիշերով առանձին միջոցներով Լաթաքիա կը հասնին լատինաց վանքի վանահայր հայր Սապաթիւսօտել Կայծօեւ Տոքթ. Սողոմոն Աբելեան հանդիարումներ կ'ունենան Լաթաքիոյ օտար հիւպատոսներուն հետեւ շտապօգնութիւն կ'ուզեն ժողովուրդը փրկելու համար: Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիոյ հիւպատոսները անմիջապէս գործի կ'անցնին, որպէսզի ամենէն առաջ Միջերկրականի մէջ պտտող իրենց երկիրներու շոգենաւերն ու յածանաւերը փրկութեան գործին ձեռնարկեն: Ֆրանսայի հիւպատոսը անմիջական

¹⁶ **Մ. Սարամազեան-Չիւրիքեան**, Ինքնակենսագրութիւն, էջ 205:

պէտքեր առած՝ կը մեկնի Պասիթ:

Փրկութեան գործին կը մասնակցին Մեսաժերի Մերիթիմ ընկերութեան Նիժէ փոխադրանաւը (յիշատակուած է Նիկեր, Նիժեր, Վիկեր անուններով - Յ. Չ.), ժիւլ Ֆերի յածանաւը եւ Միշըլէ ռազմանաւը¹⁷:

Ականատեսը Նիժէի փրկարարական գործը կը ներկայացնէ այսպէս. «Ֆրանսացի նաւազները ողջ մնացած հայերը նաւ փոխադրեցին եւ ծովը խեղդուածները եւ սպանուածները ծովեզերքը աւազին մէջ թաղեցին: Մէկ օր նաւուն մէջ կերակրելէ վերջ Լաթաքիահանեցին խեղճ հայերը»¹⁸:

Լաթաքիոյ ամերիկեան միսիոնարութեան կին անդամները փրկարարական գործը այսպէս կը ներկայացնեն. «Ֆրանսական շոգենաւ մը եւ զրահաւոր մը Լաթաքիահասան ամսուն 25-ին եւ ետդրկուեցան: Անոնք բերին փախտականներ, որոնց թիւը մինչեւ ամսուն 27-ի առաւօտեան՝ հասած էր 7000-ի: Մեծամասնութիւնը տեղաւորուեցաւ (Առաքելութեան) երեք շէնքերուն մէջ եւ կերակրուեցաւ կառավարութեան հացով. նոյնպէս մնացեալ բոլոր խումբերուն ուտելիք - դրկուեցաւ: Անոնք պիտի փոխադրուէին անձնական տուներ, սակայն - կառավարիչը ապահով նկատեց մնալ այնպիսի տեղեր, ուր ինք կրնար պահակներ տրամադրել»¹⁹: Փախտականները կը տեղաւորուին հայոց Յոգետունը, բերդին, լատինաց վանքին, ամերիկեան միսիոնարներու կեդրոններուն ու խաներու մէջ: Կառավարութիւնը օրը մէկ ժուճաշ կը տրամադրէ, իսկ Լաթաքիոյ տարբեր համայնքները, լատին եւ ամերիկացի միսիոնարները կ'օգնեն հագուստեղէն եւ ուտեստեղէն տրամադրելով: Յիշուած է, որ օրինակ, Տոքթ. Պալ Ֆի ամերիկեան

¹⁷ **Գ. Խորասանեան**, Նիժէ Շոգենաւին մէջ, «Բիւզանդիոն» օրաթերթ, Կ. Պոլիս, 28 Ապրիլ 1909, էջ 1, Բ. սիւնակ:

¹⁸ **(Անտրազիր)**, Քեսապի Դէպքը, «Լուսաբեր-Արեւ», 13 Մայիս 1909: Տե՛ս նաեւ G. Brozél, Les turcs ont passé-là. La vérité sur les massacres d'Adana de 1909, Paris, 1911, pp. 264-265. «Գիւղացիներուն կորուստը կ'ըլլայ 161 հոգի, որոնց ստուար մեծամասնութիւնը դէպքի օրերուն դուրսը՝ թրքական շրջաններուն մէջ կը գտնուէր գործի բերումով» (Ալարմ Քեսապի եւ Շրջակայից, էջ 11): Արդարեւ միայն Անտիոքի մէջ կը գոհուին «Գէջիկունց Պետրոս եւ Խաչիկ, Չէնթէլինց ճորճի, Քէբըտից ճորճի, Մուշինց Նշան, Քիլաղալից Սարգիս, Եագուպից Մինաս, Չուննաճինց Աբրահամ, Պուլատից Սէկէ, Մինասէնց երկու եղբայրները եւ շատ ուրիշներ» (**Ա. Ա. Թէմիրեան**, Քեսապ, էջ 53):

¹⁹ **M. Wylie and Z. Patton**, News of Churches Abroad, էջ 377-378:

հիւանդանոցին եւ աղջկանց դպրոցներուն մէջ պատսպարուած է 400 հոգի, տղոց դպրոցին մէջ՝ 115 հոգի, իսկ նոյն շրջապատին մէջ ծաղկախտի պատճառով առանձնացուած է աւելի քան 150 հոգի²⁰:

Աղետին երրորդ օրը մութասարիՖ Մուհամմետ Ալի Այնի բեկի - հրամանով քննական յանձնախումբ մը կը կազմուի Լաթաքիոյ մութասարիՖու թեան սահմաններէն ներս հայերուն պատահած անարդարութիւնները հաստատելու ու այդ ուղղութեամբ դատական գործեր բանալու համար: Յանձնախումբի անդամներն են բանակի - սայայ, դամասկոսցի Սուպիի պեկ Էլ-Սամատի, Շէյխ Մուհամմետ Էֆենտի Էլ-Աճճան, Տոքթ. Իլիաս Աշշի եւ Լաթաքիոյ դատարանի անդամ Եուսէֆ Էլ-Յաքիմ: Յանձնախումբը կը կարողանայ ձերբակալել Պետրուսիայի եւ Ֆազը Յասանի մեծաւորները եւ հայոց վերադարձնել գողցուած զէնքն ու ապրանքը²¹:

Նոյնը չի պատահիր Յալէպի վիլայեթի դատական ատեաններուն մէջ: Պոլսոյ Պատրիարքարանի միջոցով եղած դիմումները, բողոքները եւ դատական գործերը շօշափելի արդիւնք չեն տար: Մարդասպաններէն շատեր չեն ձերբակալուիր: Բեսայի Աղետի անմիջական պատասխանատու կը նկատուին ճսըր Շուղուրի գայմագամի փոխանորդն ու Օրտուի միւսիքը: Տեղեկագիրները կը յայտնեն, որ «ճսըր Շուղուրի գայմագամի փոխանորդն ու Օրտուի միւսիքը բացարձակ կերպով քաջալերեր են ժողովրդեան յարձակումը, մինչեւ իսկ անոնցմէ վերջինը ժողովրդեան առջեւ ինկեր եւ փողի ձայնով յարձակման նշան տուեր է»²²: Միով բանիլ՝ ջարդերուն բուն պատասխանատուները Անտիոքի, ճսըր Շուղուրի, Յարեմի, Օրտուի եւ Պայիրու Պուճագ շրջաններու պետական բարձրաստիճան պաշտօնեաներն ու աղաներն էին: Կառավարական թնսիչ Յանձնաժողովին մանրամասնօրէն ներկայացուած ցուցակէն շատեր ազատ կը մնան, իսկ քանի մը բանտարկեալներն ալ 20 Դեկտ. 1912-ին ընդհանուր ներման կ'արժանանան²³:

²⁰ Նոյն տեղը:

²¹ **Ե. Էլ-Յաքիմ**, Սուրիա Ուա Էլ-Աիտ Էլ-Ուսմանի (արաբ.՝ Սուրիան եւ Օսմանեան դարաշրջանը), Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1980, էջ 179-181:

²² «Բիւզանդիոն», 24 Ապրիլ 1909, էջ 3, Բ. սիւնակ:

²³ **Յ. Թերզեան**, Կիլիկիոյ Աղետը, էջ 794-795 եւ 836:

Ապրիլի 10/23-ին Քեսապներխուժած խուժանը 2-3 օրեն քաշուել են ետք՝ Յալեալեն, հարիւրապետի մը հրամանատարութեամբ, ջոկատ մը զինուոր կը դրկուի Քեսապ՝ ժողովուրդը «պաշտպանելու» նպատակով: Լատին միսիոնար Յայր Սապաթինօ տէլ Կայծօ, այս ջոկատին ակնարկելով, կը գրէ. «Քանի մը թրքական զինուորներ Յալեալեն դրկուած էին: Ասոնք ըրին այն ինչ որ նախապէս թալլողները չէին կրցած ընել»²⁴:

Մայիսի 2-ին եւ 3-ին ժողովուրդին մեծամասնութիւնը իտալական Փիեմոնթ, ֆրանսական Միշըլէ եւ ժիլլ Ֆերի գրահանաւերով կը վերադարձուի Պասիթ, ուր ոմանք շուրջ երկու ամիս կը մնան վրաններու տակ: Ոմանք ուղղակի Քեսապ՝ իրենց տուները կ'երթան: Ոմանք, որոնք բոլորովին անկայք մնացեր էին, Լաթաքիակը մնան շուրջ տարի մը:

Քեսապ վերադարձողները սահմուկած էին պարզուած վիճակէն, իրենց մոխրացած ու փլատակ դարձած բնակարաններու տեսարանէն: Թրոպիճ կը պատմէ. «Իրենց ցորենի ամբարները, գարին ու բրինձը այրած էին, հագուստները, եփելու ամանները, կահ-կարասին եւ գործիքները չկային, իրենց այծերը, կովերն ու ջորիները գողցուած էին: Իրենց մետաքսի ճարտարարուեստը կոխկռտուած էր, իրենց սիրելի եկեղեցիները աւերակոյտերու վերածուած էին, իրենց ընկերներուն եւ ազգականներուն դիակները դեռ չէին թաղուած»²⁵: Բոլոր աղբիւրները կը խօսին մեծ կորուստներու մասին, բայց Թրոպիճի ցանկը աւելի ամբողջական կը թուի: Կը գրէ. «Բոլոր վաճառականներու խանութները եւ առել տրականներու մթերանոցները այրած էին: Իրականութեան մէջ՝ ամբողջ շուկան մոխիրներու տակ էր: Յռոմեական կաթոլիկներու եւ բողոքականներու եկեղեցիները ամբողջովին այրած էին: Վերջինը՝ ընդարձակ շէնք մըն էր, 1800 հաւատացեալներու նստարաններով: Այրած էին Ամերիկ-

²⁴ Սապաթինօ տէլ Կայծոյի նշուած նամակը տե՛ս **Ա. Ս. Թեմիրեան**, Քեսապ, Էջ 64: Նշուած ջոկատին հրամանատարն է հագարապետ (պիւպաշի) Ահմէտ ԱրէՖ ԷՖէնտին, որ 26 Ապրիլին 400 զինուորներով Անտիոքէն կու գայ Գնիէ, բայց յաջորդ առաւօտն իսկ, 27 Ապրիլին, կը մեկնի Քեսապ (**Յ. Չոլսպեան**, Քեսապ, Գ. Յատոր, Էջ 370-371):

²⁵ **S. Trowbridge**, The Sack of Kesab, Էջ 390-391:

եան Առաքելութեան բնակարանը, ուր կ'ապրէր Օր. Չեմպրոզ, Նոյնաբէս՝ աղջկանց բարձրագոյն դպրոցը (ամերիկեան կալուած), տղոց տարրական դպրոցը եւ բողոքականներու երիցատունը: 530 տուն, Քեսապի բոլոր հարուստընտանիքներու տուները, Նոյնաբէս այրած էին: Մնացեալ 700 տուները կողոպտուած էին, բայց չէին հրդեհուած: Ասոնք պզտիկ, մեկ-երկու սենեակնոց տուներ են գործաւորներու եւ աղքատներու պատկանող: Էքիզօլուքի մէջ 38 տուներ այրած էին, 22-ը մնացած, Գարատուրանի մէջ՝ 65-ը այրած, 135-ը մնացած, Տուզաղաճի մէջ՝ 28-ը այրած, 1-ը մնացած, Քէօրքիւնէի մէջ՝ 55-ը այրած, 45-ը մնացած»²⁶: Աղէտէն անմիջապէս ետք «Լաթաքիայէ Սովսէս Վ. Ոսկերիչեան, գիւղերու մէջ գտնուած եւ այրած տուներու մանրամասն մեկ ցուցակն ղրկած է Պատրիարքարան: Այլ եւ այլ գիւղերու մէջ այրած տուներու թիւը կը յանգի 1544-ի եւ կողոպտուածներու թիւն է 5604»²⁷:

Բ. Վերականգնումի տարիները. Աղէտին հետեւ անքով այս՝ մինչ այդ ոչ այնքան ծանօթ շրջանը մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ: Յայ եւ օտար բարեսիրական հաստատութիւններ օգնութեան կը փութան տարաբախտ ժողովուրդին: Նպաստից յանձնաժողովներ կը կազմուին աղէտեալ եւ ոչ աղէտեալ շրջաններու մէջ, ինչպէս Լաթաքիա, Պէյրուլթ, Այնթապ, Քիլիս, Յալէպ, որոնք հագուստեղէն, ուտեստեղէն եւ դրամ կը հաւաքեն: Նպաստներ կը հասնին նաեւ Պոլսոյ Յայոց Պատրիարքարանէն եւ ՅԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութենէն: Նպաստից ստացման ու բաշխման յանձնախումբերուն կը նախագահէ Բերիոյ թեմի Առաջնորդական Տեղապահ Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանը: Քեսապի մէջ եւս կը կազմուի նպաստից յանձնախումբ մը, որուն նպատականուն թիւնը կ'ըլլայ Քեսապի հասած նպաստներու բաշխումը:

Քեսապի մէջ կը բացուին որբանոց եւ այրիանոց: Այրի մնացած կիներուն աշխատանք հայթայթելու համար հիւսուածեղէնի պզտիկ

²⁶ Նոյնը, էջ 387. Թրոպիճ այս շրջանին Քեսապ կ'անցընէ ու ամէն ինչէ քաջատեղեակ է: Մայիսի 23-ին, Շարաթ կ'եսօրէ ետք, աւետարանական եկեղեցւոյ մօտ, ծառերուն տակ, դէպքէն ճիշդ մեկ ամիս ետք կը կատարուի առաջին պաշտամունքը, որուն քարոզիչը ինք կ'ըլլայ:

²⁷ «Բիւզանդիոն», 24 Ապրիլ 1909, էջ 3, Բ. սիւնակ:

գործարան մը կը բացուի:

Կը կազմուի Շինարարական Յանձնախումբ: Քեսապու շրջակայ գիւղերը յառաջիկայ հինգ տարիներուն ընթացքին կ'ապրին շինարարական մեծ թափ մը, կը կառուցուին տուներ, դպրոցական բազմաթիւ շէնքեր, եկեղեցիներ: Ամբողջապէս կը վերակառուցուի Քեսապի շուկան:

Աղետն ետք յառուկ ու շարքութեան կ'արժանանայ առաքելական համայնքի կրթական գործը: Յայտնենք, որ Քեսապի մէջ առաջին դպրոցը սկսած է գործել 1848-ին, բայց չէ կրցած կանոնաւոր կերպով գործել, որովհետեւ մէկ տարի անց ուսուցիչը բողոքականութիւն տարածելու ամբաստանութեամբ դուրս կը դրուի: Բողոքական անջատողականները կը բանան իրենց դպրոցը ու մեծ եռանվով կը գործեն ամբողջ շրջանին մէջ: Այնթապէս եկած ուսուցիչ-քարոզիչներ եռանդուն աշխատանք կը տանին Քեսապի մէջ: Պաշտօնապէս ճանչցուած նորակազմ համայնքը 1855-ին կը կանոնաւորէ իր կրթական գործը. կը բացուին աղջկանց եւ տղոց առանձին դպրոցներ, իսկ մեծահասակներու համար՝ երեկոյեան եւ գիշերային դասընթացքներ: 1857-ին բոլոր չափու հասակի եւ սեռի պատկանող աշակերտներուն թիւը 251 հոգի է²⁸:

Աւետարանական վարժարաններ կը բացուին բոլոր այն գիւղերուն մէջ, ուր քանի մը աւետարանական ընտանիքներ գոյացեր էին: 1906-ին աւետարանականները ունէին մէկական դպրոց Գարատուրանի, Սել Աղբիւրի, Չագալ ճըգի, Քէօրթիւնէի, Էթիզօլուքի եւ Վերի Պաղճաղագի մէջ, իսկ Քեսապ անին մէջ՝ երկու տարրական, մէկ միջնակարգ եւ երկու (մանչերու եւ աղջկանց) երկրորդական վարժարաններ, գումար՝ 11²⁹:

Երկրորդական դպրոցի (high school) շրջանաւարտները համալսարանական ուսման համար կը դրկուէին Տարսոն, Այնթապ, Մա-

²⁸ Աւետարանական համայնքի կրթական գործին մասին տե՛ս **Տ. Ճ. ԿՐԼՈՐԵԱՆ**, Ոսկեմատեան..., Ա. հատոր, էջ 356: Տե՛ս նաեւ **Ե. ՔԱՌՈՒՆԻ**, Լուսաշաւիղ, էջ 215:

²⁹ Մինչ լատին-կաթոլիկէ միացեալ վարժարանները չորսն էին՝ Քեսապի, Չինարի, Գարատուրանի եւ Վարի Պաղճաղագի մէջ, իսկ առաքելականները ունէին միայն երկու արական վարժարաններ Քեսապի եւ Գարատուրանի մէջ («Արեւելեան Մամուլ», 1906, թիւ 50, էջ 1228-1231):

րաշ, Պէյրուս, Անգլիա ու Ամերիկա: Աղջիկները սովորաբար կը դրկու-
ւէին Մարաշի Աղջկանց Բարձրագոյն Վարժարանը: Մինչեւ տարագրու-
ւթիւն արդէն մեծ թիւով բնիկ բժիշկներ, ատամնաբոյժներ, գիւղա-
տնտեսներ ու աստուածաբաններ, համալսարանական կրթութեան տէր
ուսուցիչներ տուած է Քեսապը: Ասոնք մեծ մասով իրենց նախակրթ-
ութիւնը ստացած են Քեսապի ւսուցարանական վարժարաններէն: 1910-
ին, երկրորդական եւ համալսարանական ուսման համար արտասահման-
կը գտնուէին 40 ուսանողներ:

Քեսապի աշակերտութեան մեծամասնութիւնը կը յաճախէր ւսու-
ցարանական վարժարանները: 1914-ին անոնց աշակերտութեան ընդհա-
նուր գումարն է 900 երկսեռ աշակերտ³⁰: Համեմատական պատկեր մը գո-
յացնելու համար ըսենք, որ 1910-ին բոլոր դպրոցներուն աշակեր-
տութիւնը եղած է 1100 հոգի³¹:

Հայերէն աշխարհաբարի ուսուցումը Կիլիկիոյ Հայ Աւետարանա-
կան Եկեղեցիներու Միութեան 1893-ի որոշումէն վերջ միայն տեղ կը
գրաւէ դասացուցակին մէջ³²: Վեր. Տիգրան Գունտազճեանի ղեկավար-
ութեամբ գործող յանձնախումբ մը, որ 1905-1915 թուականներուն յա-
ջող աշխատանք տարած է համայնքի 800 երիտասարդներու խօսակցակա-
ն լեզուն տեղական բարբառէն աշխարհաբարի անցընելու կապակցու-
թեամբ³³:

Հայ կաթողիկէ համայնքը 1864-ին Քեսապի մէջ կ'ուսենայ աղջ-
կանց եւ տղոց իր առանձին վարժարանները³⁴: Մանր դպրոցներ ունե-
ցած է նաեւ Չինարճըգի եւ Գարատուրանի մէջ: 1880-էն ետք կաթողիկէ-
է համայնքը կը պահէ մանչերու աննշան նախակրթարան մը միայն:
1904-ին Թերրա Սանթա Առաքելութիւնը կը ստանձնէ կաթողիկէ եւ լա-
տին համայնքներու կրթական գործը ու կը պահէ չորս փոքրիկ դ-
պրոցներ ամբողջ շրջանին մէջ՝ Քեսապ, Գարատուրան, Չինարճըգ եւ
Վարի Պաղճաղազ: Այս դպրոցներու աշակերտութեան թիւը եղած է

³⁰ **Կ. Ս. Թիլքեան**, Իննսուսնիսնգամեակ..., էջ 48:

³¹ Ալ պոմ Քեսապի եւ Շրջակայից, էջ 16:

³² **Ե. Քառուսի**, Լուսաշաւիղ, էջ 159:

³³ **Կ. Ս. Թիլքեան**, Իննսուսնիսնգամեակ..., էջ 69-70:

³⁴ **P. Atamian**, Histoire de la communauté arménienne de Damas, Beyrouth, 1964, pp. 49.

սահմանափակ, հարիւրը չէ անցած³⁵:

Մայր համայնքին կրթական գործը մինչեւ դարասկիզբը անմիջապէս վիճակ մը ունեցած է: 1848-էն ի վեր պարբերաբար գործող Քեսապի Ազգային Վարժարանէն զատ՝ 1890-ին կը սկսի գործել Գարատուրանի Ազգային Վարժարանը: Այս վարժարանները յաճախած են քանի մը տասնեակ մանչեր միայն՝ վստահուած մէկ կամ երկու ուսուցիչներու խնամքին: Օրինակ՝ Գարատուրանի դպրոցը յաճախած են միայն 22 աշակերտներ³⁶, երբ գիւղի մայր համայնքը կրնար 150-200 աշակերտութեամբ դպրոց մը ունենալ: Իսկ Քեսապի դպրոցը դարավերջին «գոցուելու վրայ է պիտոճէի անձկութենէն»³⁷: 1906-ին բնակչութեան կեսէն աւելին ներկայացնող համայնքին կրթական գործը կը մնայ խեղճուկ: Համեմատութեան համար ըսենք, որ 1906ին շրջանը ունէր 1318 տուն գուտ հայ բնակչութիւն, որմէ՝ առաքելականները՝ 678 տուն, երկու դպրոց, անտարանականները՝ 531 տուն, տասնմէկ դպրոց, կաթողիկէները՝ 66 տուն, լատինները՝ 43 տուն: Վերջին երկու համայնքները միասնաբար ունին երեք դպրոց³⁸:

1909-ի Աղետէն վերջ սկսուած վերականգնումի աշխատանքներուն մէջ աննախընթաց կարեւորութիւն կը տրուի **ազգային դաստիարակութեան**: 1910-ին եկեղեցւոյ կից դպրոցական նորակառոյց շէնքը կը վերանուանուի մանչերու Սահակեան Վարժարան, կը հիմնուի Պօղոսեան աղջկանց վարժարանը, Գարատուրանի դպրոցէն բացի, մինչեւ տարագրութիւն, մէկական մանկապարտէզ-ծաղկոցներ կը գործեն նաեւ Չինարճըգի, Սեւ Աղբիւրի, Ներքի Գիւղի, Ծովու թաղի եւ Տուզաղաճի մէջ: Ազգային վարժարանները լուրջ բարելաւումի մէջ են: 1911 Մայիսի թուականով տեղեկագիր մը հետեւեալը կը պարզէ գործող դպրոցներուն մասին. Քեսապի ազգային աղջկանց (նորաբաց) եւ մանչերու վարժարանները ունին մանկապարտէզ կամ ծաղկոց, նախակրթարան՝ տարրական, միջին եւ բարձրագոյն վեցամեայ դասընթացքներով, սատարող՝ Հայոց Միացեալ Ընկերութիւնը, Չինարճըգ՝ մանկա-

³⁵ Ալարմ Քեսապի եւ Շրջակայից, էջ 16; «Աւետիք», 1946, թիւ 7-8, էջ 148:

³⁶ **Գարատուրան**, Հ. Ս. Էփրիկեան, «Բնաշխարհիկ Բառարան», Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Վենետիկ, 1903-1905, էջ 496:

³⁷ «Բիւրակն», 1899, թիւ 25, էջ 399:

³⁸ «Արեւելեան Մամուլ», 1906, թիւ 50, էջ 1228-1231:

պարտեզ կամ ծաղկոց, սատարող՝ Այնթապի Կրթասիրաց Յանձնաժողով, - Գայանըզ (Սեւ Աղբիւր)՝ մանկապարտեզ կամ ծաղկոց, սատարող՝ Այնթապի Կրթասիրաց Յանձնաժողով, Գարատուրան՝ մանկապարտեզ կամ ծաղկոց եւ տարրական նախակրթարան երկամեայ դասաընթացքով, սատարող՝ գիւղացիք³⁹:

Ազգային դպրոցներու բաւարար ցանցը եւ անոնց թէ՛ իբրեւ շէնք եւ թէ՛ իբրեւ ուսուցչակազմ գոհացուցիչ պայմաններ ունենալը՝ կը միտէր դպրոց բերել համայնքին բոլոր փոքրիկները ու կրթական գործին մէջ ետ չմնալ միւս յարանուանութիւններէն: 15 Նոյեմբեր 1909-ին, Քեսապի մայր եկեղեցւոյ մէջ արտասանուած ճառի մը մէջ կ'ըսուի⁴⁰. «Դպրոցը մեր ցեղին գոյութեան կենսանորոգ ու ժիւղբիւրն է, ուրկէ արգասաւորիչ տարրեր կը բաշխուին ցեղին ու ճացումը մշտնջենաւորելու: Կ'ուզե՞ս որ տղադ բարեկիրթ ըլլայ՝ դպրո՞ց դրկէ: Կ'ուզե՞ս որ տղադ գիտուն ըլլայ՝ դպրո՞ց դրկէ: Կ'ուզե՞ս որ տղադ թշուառ չըլլայ՝ դպրո՞ց դրկէ: Կ'ուզե՞ս վերջապէս որ տղադ մարդ ըլլայ՝ դպրո՞ց դրկէ»⁴¹:

Ճառախօսը շարունակելով իր խօսքը, կ'ըսէ. «Կիլիկիոյ զանազան վայրերուն մէջ գտնուող օտար կրթական հաստատութիւններ, որոնք այնքան ջերմ ասպնջականութիւն ցոյց կու տան մեր զաւակներուն, որոշ չափով մը պատճառ չէ՞ն եղած մեր ազգային նկարագրին խորթացումին: ... Հաստատութիւնները՝ օտար, հաստատութեան վարիչները՝ օտար, պաշտօնական լեզուն՝ օտար. միթէ հնա՞ր է հոն դաստիարակուող տղան չօտարանայ իր զգացումներով: Եւ միթէ կ'արժե՞ք քանի մը գիտութիւններու եւ լեզուներու սիրուն համար մոռնալ կամ նոյնիսկ ուրանալ մեր ազգային թանկագին անհները, որոնց է՛ն վերի կողմը կը մնայ լեզուն: Կարծես տան ու դպրոցին մէջ դաւադիր դաշնակցութիւն մը կայ, որով մայրը օրօրոցի մօտ, ուսուցիչը գրասեղանին ք-

³⁹ Տ. Պողոս քհն. Աթիկեանի տեղեկագիրը Քեսապի դպրոցներու մասին, տե՛ս **Յ. Չոլսքեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 465-466: Տե՛ս նաեւ **Վ. Քհն. Կիւլտպեան**, Կիլիկիոյ Աղէտէն Վերջ, «Տաթեւ», Դ. տարի, 1928, էջ 557:

⁴⁰ «**Ազատ Բեմի Խօսքեր**» (Ա. շարք, 1912): Հինգ ճառեր պարունակող 45 էջանի գրքոյ կ'ընէ, որուն նորոգուած կողքին վրայ կայ վերիվերտառութիւնը: Վերջին երեք ճառերը խօսուած են Քեսապի մէջ: Ճառախօսը հաւանաբար Ազգ. Սահակեան Վարժարանի տեսուչն է՝ երգնկացի Մանուկ Գոլյումճեանը: Ուսուցչուհի բարերոցի Մարիամ Գոլյումճեանը կիսն է: Գրքոյ կը կը բացուի փոքրիկ տղու մը նկարով՝ «Քեսապի որբ տղայ մը» եւ **Մ. Գ.** ստորագրութեամբ ոտանաւորով մը՝ «**Ազատու սանողին երգը**»:

⁴¹ Ազատ Բեմի Խօսքեր, էջ 27:

ով՝ մասնաւոր ջանք մը ունին տղուն ներշնչելու օտար զգացումներ, օտար բարբառներ եւ օտար սովորութիւններ»: Բանախօսը այս ընդհանուր դիտողութիւնները կատարելէ ետք, իբրեւ բացառութիւններ կը դրուատէ առանձին երեւոյթներ, ամերիկացի միսիոնարներ, «որոնք նոյնացան հայ ցաւերուն հետեւ հայ զգացումներով տոգորուած՝ ամբողջ կեանքերնին սպաս դրին անոր բազմախոց վերքերուն դարմանին համար»: Յոս կը յիշէ նաեւ ամերիկացի միսիոնարուհի միս Չեմպրոզը, որ «քիչ կեանք չսպառեց խեղճ հայ ութեան ցաւերը մեղմացնելու համար, մասնաւոր այս վերջին երկու տարին Քեսապի ընդհանուր հայ ութեան նախախնամութիւնը դառնալով»⁴²: Միս Չեմպրոզ աւետարանական Աղջկանց Բարձրագոյն Վարժարանին տնօրէնուհին էր եւ մեծ նպաստներ յատկացուցած էր նաեւ ազգային դպրոցներուն՝ բարեսիրական այլ ազան ծառայութիւններու կողքին:

1910-ին Քեսապի եւ շրջակայ գիւղերուն մէջ կը գործէին քսան վարժարաններ՝ 11 աւետարանական, 5 ազգային, 4 լատին-կաթոլիկէ: Տասը փոքրիկ բնակավայրերու համար քսան դպրոցը աւելորդ էր. անոնց գոյութիւնը կը բացատրուէր ու կ'արդարացուէր միայն ու միայն յարանուանութիւններու գոյութեամբ: Յարանուանութիւններու նախաձեռնած եւ անոնցմով առաջ տարուած դպրոցաշինական այս թափը այլ եւս դրականէն աւելի բացասական հետեւանքներ կ'ունենար. այսպէս՝ կը սրէր արդէն իսկ գոյութիւն ունեցող միջ-յարանուանական պառակտիչ եւ ազգավնաս վեճերը, դուռ կը բանար անազնիւ մրցակցութիւններու, յատկապէս ընտանիքներու դպրոցականներ «որսալու» վտանգաւոր փորձերու: Մէկ-երկու տասնեակ աշակերտութիւն ունեցող դպրոցները չեն կրցած անհրաժեշտ որակը ապահովող ուսուցչակազմ գտնել եւ դպրոցական պիտոյք հայ թայթել:

Ահա ասիկայս պայմաններուն մէջ կը ստեղծուի Քեսապի Ուսումնասիրաց Ընկերութիւնը, 1910-ին: Ուսումնասիրաց Ընկերութիւնը արդար քննադատութեամբ հանդէս գալով՝ կ'առաջարկէ հիմնական փոփոխութեան մը իր ծրագիրը, որն է **կրթութեան ու դաստիարակու-**

⁴² Նոյնը, 32-36:

թեան հիմնական գիծն ու նպատակը դարձնել ազգայինը եւ ոչ յարանուանականը. միացնել գիւղերու մէջ գոյութիւն ունեցող մէկեւելի դարոցները ու յարանուանական իշխանութիւնները հեռացնել կրթական գործերը վարելու իրաւաութենէն, Քեսապի մէջ բնակ բարձրագոյն նախակրթարան մը կամ երկրորդական վարժարան մը՝ շրջանի բոլոր նախակրթարաններէն եկող շրջանաւարտներուն համար: Ուսումնասիրաց ընկերութեան նպատակը եղաւ «կարելիութիւնը ստեղծել հիմնել ու ոչ յարանուանական, ազգային բարձրագոյն նախակրթարան մը կամ երկրորդական վարժարան մը եւ աշխատիլ միացնել ու նոյն ծրագրով գիւղերու տարբեր յարանուանութեանց պատկանող նախակրթարանները, առաջ քն առնել ու համար շատ մը ամուլ եւ անօգուտ մրցակցութիւններու»⁴³:

Գ. Տարագրութիւնը. Ահաւասիկ, 1909-ի Ադէտին յաջորդող վերականգնումի չորս-հինգ տարիները վերջ կը գտնեն համազգային մեր մեծագոյն աղետով՝ Մեծ եղեռնով:

Աքսորի հրամանը Քեսապ կը հասնէր 25 Յուլիս 1915-ին: Յրամանը կը յայտնէր, որ հինգ օրէն ժողովուրդը պէտք է տեղահանուէր⁴⁴: Նոյն օրը Քեսապի եւ Գարատուրանի մէջ կը բացուին **Սեվգիէթի** (տարագրութեան պետական մարմին) մասնաւոր գրասենեակներ՝ աքսորի եւ անշարժ գոյքերու հարցերը կարգաւորելու համար:

Ժողովուրդը աքսորի հրամանը զայրոյթով կ'ընդունի: Յրամանին չենթարկուելու տրամադրութիւններ կը յայտնուին: 1910-էն ի վեր Քեսապի մէջ գործող գերմանական որբանոցին տնօրէնը՝ Յըրթըր կոչեցեալը, բաւական գործ կը տեսնէ երեւելիներն ու ղեկավարութիւնը համոզելու գործին մէջ՝ մէյ մը Սեվգիէթի պաշ-

⁴³ **Ա. Յ. Գարտաշեան**, Նիւթեր Սուրիոյ Յայ Գաղութիւն Պատմութեան համար, «Գեղարդ» տարեգիրք, Գ. գիրք, Յալէպ, 1985, էջ 283-284:

⁴⁴ Ըստ Յ. Գ. Պուրսալեանի՝ Քեսապն ու արուարձանները տարագրութեան պաշտօնական հրամանը կը ստանան 26 Յուլիսին, Երկուշաբթի, իսկ ճեպել Սուսան՝ 30 Յուլիսին, Ուրբաթ (տե՛ս **Յ. Գ. Պուրսալեան**, Սուսա Լերան Յերոսամարտը, Յալէպ, 1954, էջ 28), իսկ ըստ վեր. Տիգրան Անդրեասեանի՝ հրամանը Քեսապ կը հասնի 28 Յուլիսին (տե՛ս **Տ. Անդրեայան**, Չեյթունի տարագրութիւնը և Սվեդիայի ապստամբութիւնը, Գ. հրատարակութիւն, Երևան, 2015, էջ 33), որ չի կրնար ճիշդ ըլլալ, որովհետեւ տարագրութեան հրամանը յետս կոչելու ակնկալութեամբ Քեսապէն Յալէպ մեկնող պատուիրակութիւն մը 27 Յուլիսին Անտիոք կը գտնուէր արդէն (**Ա. Ս. Թեմիրեան**, Քեսապ, էջ 80):

տօնեաներուն եւ մէյ մըն ալ հայոց մօտվագելով: Ան կը համոզէ, եւ Սեվգիէթի պաշտօնեաներն ալ կը հաւաստիացեն, թէ արքայը առայժմ միայն լուսաւորչական եւ կաթողիկէ համայնքներուն համար է, աւետարանականները հաւանաբար երբեք չտեղահանուին: Գարատուրանի Տէր Պետրոս Քին. Փափուճեան լուր կը ղրկէ Քեսապ, թէ Գարատուրան մտադիր է Տիւնակ լեռը քաշուելու եւ տարագրութեան հրամանին չենթարկուելու: Երեկոյեան Քեսապէն խիստ պատասխան կու գայ Տէր Զօր, որ «խելօք նստի իր տեղը» եւ ժամանակ տայ բանակցութիւններ կատարելու իշխանութիւններուն հետ: Սեվգիէթի պաշտօնեաները կը զգան, որ ապստամբութիւն մը կրնայ ծայր առնել Գարատուրանէն: Այդ պատճառով 29 Յուլիսի առաւօտուն սեվգիէթի Քեսապի մեծաւորը տեղւոյն երեւելիներէն ու ղեկավարութենէն խուժք մը դեմքեր Գարատուրան կը տանի՝ հաւաստիացնելով, որ երկրին ապահովութեան համար արքայի հրամանին իրագործումը անհրաժեշտութիւն կը նկատեն ծովամերձ գիւղերուն համար: Անկէ ետք՝ հաւանաբար կարիք չըլլայ նոր տեղահանումներու: Տէր Զայրը կը պնդէ, թէ ապստամբելու համար տակաւին ուշ չէ, սակայն ան սպառնալիքով լռութեան կը դատապարտուի⁴⁵:

30 Յուլիսին գարատուրանցիները ճովութադէն սկսելով կը բաժնուին իրենց հայրենի գիւղէն: Կը տեղահանուին Պաշորտ գիւղի բնակիչները եւս: Նոյն օրը, 30 Յուլիսին, արքայի հրամանը կը հասնի Սուէտիա, որ եօթը օրէն պէտք է պարպուէր:

Գարատուրանի պարպումէն ետք տեղահանութեան գործողութիւնները կը դանդաղին: Ճրջան ընող լուրերը յուսալքումէ յուսալ-

⁴⁵ Տարագրութեան հրամանին կապակցութեամբ գրաւոր ու բանաւոր յուշերու մեջ շատ կը խօսուի Տոքթ. Աւետիս Ինճեճիքեանի մասին, որ փեսան էր այդ շրջանին Անտիոք բնակող Տոքթ. Սողոմոն Աբելեանի: Անտիոքի հանդիպումին՝ վերջինս ապստամբութեան մասին «յոյս չէր տար, նկատելով որ Աւետիս Ինճեճիքեան Երզրումի Զ. Յ. Դ. ընդհանուր ժողովին մասնակից ըլլալով, հոն որոշում գոյացած էր ոչ մէկ տեղ ապստամբութեան խնդիր յարուցանելու եւ սպասել դէպքերու զարգացման ընթացքին» (**2. Իսկէստրեան**, ժողովուրդը Ինչո՞ւ Չենքին Փարեցա, «Յուշամատեան Սուսաւերան», էջ 317-318): Տոքթ. Ա. Ինճեճիքեան կը մեղադրուի անմիջապէս ապստամբութեան հրահրող Գարատուրանի Տէր Պետրոս Քահանան յանդիմանելու ու լռեցնելու հարցով, իսկ հրաման գալու պարագային՝ ապստամբութեան տրամադիր սուէտիացիներուն համար կ'ըսէ, թէ «քիչ մը օղին աւելի փախցուցեր են, որ գիրենք մեծ-մեծ խօսիլ կու տայ» (**Ա. Ս. Թեմիրեան**, Քեսապ, էջ 79):

քում կը տանին ժողովուրդը: Տեղահանութենէն փրկուելու համար ժողովուրդէն կը պահանջուի անձ գլուխկէս ոսկի: Իվերջոյ, շրջանի միւս գիւղերու առաքելականներն ու կաթողիկէները կը տարագրուին 20 Օգոստոսին:

Աւետարանական համայնքին մէջ տակաւին մարդիկ կը հաւատան, - որ պիտի չտեղահանուին, մինչ Սեվգիէթի պաշտօնեաները փրկագինը - կը բարձրացնեն մէկ օսման-եան ոսկիի...⁴⁶: Օգոստոսի վերջաւորութեան, երկրորդ կարաւանէն մէկ շաբաթ տք, վերջին կարաւանն ալ ճամբու կը դրուի. Քեսապի ամբողջ շրջանը հայ աթափեղած է...

Քեսապի տարագիրներու երեք կարաւաններն ալ մինչեւ Յամա հինգ-վեց օրուան ճամբան կ'անցնին միեւնոյն ձեւով: Գլխաւոր կայաններն էին Օրտու, Յամարուշ, ճսըր Շուղուր, Մըտըգ Գալէ, Սէյգար - եւ վերջապէս՝ Յամա: Այս կայաններուն մէջ տարագիրները սովորաբար կը մնային մէկ գիշեր՝ Սեվգիէթի տրամադրած վրաններուն մէջ, բայց երբեմն՝ աւելի երկար: Կարաւաններուն հսկող ոստիկանախումբը՝ կայանէ կայան կը հերթափոխուէր:

Յամամեծ գաղթակայան մըն էր, ուր հաւաքուած էին Յալէպի վիլայէթի եւ Փոքր Ասիոյ արեւմտեան նահանգներու հայ տարագիրները: Յոսորոշ ժամանակ մը տարագիրները պահելէ տք կը քշէին տարբեր ուղղութիւններով, որ կը դառնար իսկական մահուան ճանապարհը: Տէր Ներսէս Քին. Թաւուզճեան կը պատմէ. «Իւրաքանչիւր վրանի տակը մեռելի տունի կը նմանէր, որովհետեւ կիներ, աղջիկներ եւ տղաք հետիոտն քալելու էին, եւ այնպէս ալ եղաւ: Այսչափ անկարգ գործ միայն այս երկրին մէջ կը գտնուի: Ոչ մէկ քաղաք բոլորովին պարտուած է եւ ոչ մէկ քաղաքացի իր հայրենակիցներուն - հետ չ'երթար, միշտ՝ խառնի խումբ: Այնպէս կ'ըլլայ, որ եղբայրը քրոջմէն, հայր-մայր իր զաւակներէն կը զատուի: Ամեն օր ցաւ ու տառապանք աւելնալու վրայ է... Ոստիկանները կու գան ու կը սկսին մտրակել, արաբերէն ու թրքերէն քֆրելով եւ հայ հոյելով: 200 տուն պէտք է ելլէ, 2000 տուն կը տանջուի, որովհետեւ ոչ ոք գիտէ թէ ով

⁴⁶ **Մ. Սարամազեան-Չիւրիքեան**, Ինքնակենսագրութիւն, էջ 210:

պիտի ելլէ»⁴⁷:

Գարատուրանցիներէն եւ պաշորոտցիներէն կազմուած առաջին կարաւանը Յամայէն խումբ առ խումբ կը քշեն դէպի Յոմս, անկէ՝ Նապըք, Եապրուտ, Գթէյ Ֆիէ, Տումա, Մուատտամիէ ու կը բերեն Դամասկոսի գաղթակայան, իսկ անկէ Տարաա: Ոմանք ցրուեցան Յաուրանի գիւղերը, իսկ միւսները քշուեցան Յորդանան, նախ Իրապիտ, ապա Ամման: Յորդանան հասած տարագիրները, մեծ մասով գարատուրանցիներ, հոն ապրեցան երեք տարի, գործ ու ապրուստի միջոցներ գտնելու համար ցրուեցան Յորդանանի բազմաթիւ գիւղերու մէջ, ինչպէս՝ Ուատի Սիր, Ուատի Արար, Ֆէս, Ռմմէն, Ռմէնին, Սալթ, Ամմանի մօտիկ, գուրատուրանցիներու վերանուանած Մաղարիներն (բարբառ՝ քարայրները) ըսուած հնավայրին եւ Սուվէյլիէ արուարձանին մէջ⁴⁸:

Քեսապցի հայոց վերջին կարաւաններուն համար Յամակատարեալ սպանդանոց մը դարձած էր: Բազմաթիւ վարակիչ հիւանդութիւններ մէկ կողմէ, իսկ միւս կողմէ ճամբու յոգնութիւնը, սովը, տաքը եւ ծեծը օրական բազմաթիւ մահեր կը խլեն: Միայն իր կատարած թաղումները հաշուելով՝ Տ. Ներսէս Թաւուզճեան կը գրէ, թէ «Սեպտ. 8-ին 84 մեռել թաղեցինք, Սեպտ. 15-ին 70-է աւելի ննջեցեալ թաղեցինք»⁴⁹:

Երկրորդ կարաւանի քեսապցիները դարձեալ կը քշուին հարաւ՝ Նապըքէն անդին արաբ գիւղերու մէջ՝ Գթէյ Ֆիէ, Մուատտամիէ, կամ կը քշուին դէպի արեւելք՝ անապատի խորը, Սատաթ ու Թատմոր (Փալմիրա): Դեկտեմբերին՝ տեղաշարժը կը կենայ: Վերջին-ները կը լքուին Յոմսէն Նապըք ճամբաներուն վրայ, բոլորովին բացօթեայ: - Ձիւն, անձրեւ, սառնամանիք եւ կատարեալ սով: Այդ ձմեռայ ստեղծատմահեր կը պատահին: «Չէինք կրնար թաղել մեր մեռելները» կը պատմէ Յովհ. Մաթոսեան, որուն 33 հոգի հաշուող գերդաստանէն ողջ կը մնայ երեք հոգի միայն:

Քեսապէն ելած վերջին՝ աւետարանական համայնքի կարաւանը

⁴⁷ **Տ. Ն. Քին. Թաւուզճեան**, Տառապանքի Օրագիր, Պէյրութ, 1991, էջ 73-74:

⁴⁸ Յորդանան հասած գարատուրանցի գաղթականներուն մասին տե՛ս **Ժ. Թիթիզեանի** պատմածը, **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 494:

⁴⁹ **Տ. Ն. Քին. Թաւուզճեան**, Տառապանքի Օրագիր, էջ 83:

Նախկը մասնատու ի ճսըր Շուղուր, Յալ Էպու Յամա: Ապատարագիրները տարբեր խումբերով կը քշուին դէպի Մեսքենէ եւ Տէր Չօր: Այս կողմերը քշուածները կ'ապրին Մեծ Եղեռնի ամենէն քստմնելի սարսափները, կ'ենթարկուին կողոպուտի, մանուկներ եւ երիտասարդներ կ'առեւանգուին, իսկ ուրիշներ կը սպանուին սուրով, զենքով ու կրակով, երբեմն՝ հաւաքաբար: Տէր Չօր հասած քեսապցիներէն շատ քիչ երվերապրելու բախտ կ'ունենան (տարագրութեան ճամբաներու քարտէզը՝ յաւելուած թիւ 3):

2.3.- ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՏՈՒՆԴԱՐՁ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԹԻՒՆ

Ա Տու նդարձ եւ Ազգային Միութիւն.- 1918-ին Նապլ ուսի ճակատին վրայ թրքական բանակներու պարտութենէն ետք՝ վերապրողները կամաց-կամաց կ'ուղղուին դէպի Քեսապ: Տէր Չօրի, Մեսքենէի, ճապարուլի վերապրողները կը վերադառնան Յալ Էպու անկէ՝ Արիհա-ճսըր Շուղուրի ճամբով կը մօտենան Քեսապի: Յամա-Յոմսի շրջակայքը գտնուողները Քեսապ կը դառնան ճսըր Շուղուրի վրայով: Յորդանան հասած գարատուրանցիները կ'անցնին Պաղեստին, ուրկէ կը տեղափոխուին Փոր Սաիտի գաղթակայ անը, մուսալեռցիներու մօտ եւ ուր կը մնան մինչեւ 1920:

Ովսաննա Սողոմոնեան կը պատմէ. «Պատերազմէն ետք, 1919-ին, քեսապցիները տարագրութենէն քիչ-քիչ սկսան վերադառնալ: Եկան Յալ Էպի կողմերէն, Յամայէն, Յոմսէն, Նապլքէն, Դամասկոսէն: Նախկին աւելի քան 8000 հոգիէն հազիւ 1500 հաւաքուեցանք Քեսապի եւ գիւղերուն մէջ: Քեսապցիները շատ զոհեր ունէին: Մեր ընտանիքէն ես ու մայրս միայն ողջ մնացինք: Շատ դժուար էր մեր վիճակը: Կալուածները փճացած էին, տուները՝ քանդուած, աշխատող ձեռքերը՝ խեղճուկ: Ապրուստ չկար, միջոց չկար: Տարագրութենէ ելլելէ առաջ բոլոր հայերը ինչ ունէին-չ ունէին՝ կենդանիներ, մթերքներ, կահ-կարասի, գործիքներ, յանձներ էին դրացի թուրք գիւղերուն, վերադարձին առնելու պայմանով: Բայց անոնք երես չտուին մեզի, ծուռ-ծուռ նայեցան, վախցուցին: Ո՛չ մեր, ոչ ալ մեր ազգականներուն ապրանքն-

երը կրնայ ինք առնել»⁵⁰:

Հայ կական Լեգեոնի քեսապի Լեգեոնականները Կիլիկիա ոտք կոխել են ետք ա՛լ չէին կրնար համբերել ու վայրկեան առաջ կ'ուզեին Քեսապ հասնիլ: Եւ անոնք խուճբ-խուճբ հեռանալով Լեգեոնէն՝ շարժեցան դէպի Քեսապ: Լեգեոնէն առաջին հեռացողները կ'ըլլան Ուլսիա Սաղտըճեանը (Գարա Օղլան կամ Տայի) եւ Միսաք Կիրակոսեանը (Միսաքօ կամ Սագգալ լը): 1919-ին, նոյն ձեւով Լեգեոնէն հեռանալով՝ Քեսապ հասան եւս երկու խուճբեր⁵¹: Անոնք մեծապէս օգտակար եղան վերապրողներու տուճարձը կազմակերպելու, վերականգնումի ու ապահովութեան գործին:

Կացու թիւնը խաղաղ չէր Անտիոքի շրջանին մէջ: Ֆրանսական բանակը 7 Դեկտ. 1918-ին, գլխաւորաբար հայ Լեգեոնականներով, թեւ մտած էր Անտիոք, բայց երկար չէր մնացած: Գուսէյրի թուրքերը, օգտուելով տիրող պարապութենէն՝ Հաքքի եւ Ասիմ պէյերու ղեկավարութեամբ չէթեական խուճբեր կազմած էին եւ ահուսարսափ կը տարածէին շրջակայ ալեւի, արաբ եւ յոյն բնակչութեան վրայ: 1920-ին թուրք ու թուրքմէն հրոսակախուճբերը փաստօրէն տերն էին Անտիոքէն մինչեւ Լաթաքիա երկարող տարածութեան ու իրենց որջը դարձուցած էին Օրտուն: Նախկին բնակայ իններեւ սպաներ անցած էին ասոնց գլուխը ու կազմած «Ճեպէլ Աքրա Տեվքիլ Ատէ Քոմանտանը» (Ճեպէլ Ագրայի Բարձրագոյն Հրամանատարութիւն) անունով զինուորական մարմին մը⁵²:

Ալեւիները ծանր պայմաններու մէջ էին: Թուրք աղաներուն հրոսակախուճբերը մտան անոնց բնակավայրերը, սպանեցին շատերը, կողոպտեցին ու կրակի տուին անոնց տուները: Ալեւիներէն շատեր իրենց ընտանիքներով եւ հարազատներով ապաստանեցան Քեսապ: Քեսապիք սիրով ընդունեցին զանոնք ու տեղաւորեցին տարբեր գիւ-

⁵⁰ Ռ. Սողոմոնեանի պատմածը, տե՛ս **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 502:
⁵¹ Տե՛ս **Մ. Շահապէան**, Հայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920), էջ 47: Հայ կական Լեգեոնի կազմութեան եւ գործունէութեան մասին տե՛ս՝ **Տ. Պոյաճեան**, Հայ կական Լեգեոնը, Պատմական Յուշագրութիւն, Ուոթըրթաուն, 1965; **Բ. Եղիայեան**, Ատանայի Հայոց Պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 429-430: **Հ. Խ Թովուզյան**, Սիրիայի և Լիբանանի հայ կական գաղթածախներ ի պատմութիւն (1841-1946), էջ 132:
⁵² **Մ. Շահապէան**, Հայ Կամաւորական Շարժումը..., էջ 32:

դերու մեջ:

Նոյն շրջանին Օրտուի արաբախոս յոյներու փոքրիկ գաղութն ալ ամենօրեայ սարսափի մեջ կ'ապրէր: Յոյները կ'ուզէին Քեսապ ապաստանիլ: Քեսապէն 70-80 հոգիսոց զինեալ խումբ մը կ'երթայ Օրտու եւ բոլոր յոյները՝ շուրջ 60 հոգի կազմող 20 ընտանիք, կը տեղափոխէ Քեսապ:

1920-ի Օգոստոսին Ֆրանսան լուծարքի ենթարկեց Յայկական Լեզեոնը: Քեսապի վերջին լեզեոնականներն ալ Քեսապ եկան: Կամաւորները եւ ժողովուրդի ղեկավարները ալ անյետաձգելի կը նկատեն Քեսապի ինքնապաշտպանութեան գործը կազմակերպուած կերպով վարելու հրամայականը: Արտաքին վտանգի կողքին ներքին անիշխանութիւն մըն ալ երեւան սկսած էր ելլել շրջանին մեջ: Անմիջապէս կը գումարուի ընդհանուր ժողով մը, որուն կը մասնակցին ոչ միայն նախկին լեզեոնականները, այլ եւ գրեթէ բոլոր այրերը: Ժողովը կը հռչակէ **Չինուորական Իշխանութիւն**: Կ'որոշուին Չինուորական Իշխանութեան անդամները: Ընդհանուր հրամանատար կը նշանակուի Մովսէս Ծահապազեանը (Ծահապազ):

Չինուորական Իշխանութիւնը Քեսապի երեք յարանուանութիւններու երեւելի անձերէն կը նշանակէ վեց հոգիսոց Ազգային Միութիւն մը:

Չինուորական Իշխանութիւնը պիտի հոգար ժողովուրդի պաշտպանութիւնն ու ապահովութիւնը, իսկ Ազգային Միութիւնը Չինուորական Իշխանութեան հետ համախորհուրդ պիտի վերակազմակերպէր - գիւղերու հոգեւոր եւ կրթական գործերը, զբաղէր որբերու եւ այրիներու կարիքներով, նորակազմ ընտանիքներու եւ վերադարձողներու տեղաորումով, պարենաւորումով, անտէր մնացած կալուածներու օգտագործման եւ ժառանգական հարցերով⁵³:

Օրտուն հետզհետէ բանակավայրի մը տեսքը կը ստանար: Այդ պատճառով ալ Քեսապի Չինուորական Իշխանութիւնը իր ուժերուն մեծ մասը դրած էր Օրտուի դիմաց: Թուրքերը Քեսապի դէմ կը գրգռեն նաեւ

⁵³ Մ. Ծահապազեան, Յայ Կամաւորական Ծարժումը..., Էջ 32:

Լաթաքիոյ մօտիկ Սահեռուն գիւղի բնակիչները, որոնց մեծաւորը շուրջ 300 մոլեռանդ մարդոց գլուխն անցած՝ ճամբայ կ'ելլէ դէպի Քեսապ: Գամբուն վրայ թուրքեր կը միանան ամբոխին: Անոնց նպատակն էր պատժել հայերն ու ալեւիները եւ կողոպտել Քեսապը: Օրը՝ 1920, Աստուածածնայ Վերափոխման Երկուշաբթին էր, մեռելոցի օրը:

Ամբոխը հարաւ էն կը մօտենայ Քեսապի շրջանին: Տեղացիք ալ եւ ի պատսպար-եալներու հետ հերթափոխութեամբ կը հսկէին Չաթալէքի եւ Վարի Պաղճաղազի տասնեակ մը դիրքերը: Անմիջապէս լուր կը ղրկուի Քեսապ՝ կամաւորական ջոկատ մը հասցնելու համար: Երկու դիրքերու վրայ ծանր բախումներ կ'ըլլան: Ամբոխը բոլորովին խելակորոյս կը բռնէ փախուստի ճամբան: Ատկէ ետք թշնամին Քեսապի հարաւային սահմաններէն ոչ մէկ անգամ կը համարձակի յարձակում կազմակերպելու:

Ներքին կեանքը կարգ ու կանոնի ենթարկելու համար Ազգային Միութիւնը որոշ մարմիններ առաջացուցած էր: Կազմուած էր **նստիկանութիւն** Յակոբ Փանոսեանի (Օնպաշի) ոստիկանապետութեամբ: Համըգէ եւ Հաճի Կիւրեխեանները **անդապահ**ներ էին: Յանցագործները կը ներկայացուէին **դատարան**:

Պարէնն ու զինական ւժիւղերը ընդհանրապէս կը բերէն Կիլիկիայէն: Ազգային Միութեան կողմէ զենքի ու զինամթերքի խնդրանքով Չորք Մարգպան եւ Մերսին ղրկուած ներկայացուցիչները երբեք ձեռնունայն չեն վերադառնար: Ատանայի Ազգային Միութիւնը նաւակ մը լեցուն զենք ու պաշար կը ղրկէ Քեսապ, Գարատուրանի ծովափը: Քանի մը հոգի Մերսինէն արմտիք եւ հացահատիկ կը բերէն: Ժողովուրդը զինուած էր, ապրուստը՝ ապահովուած: Ամերիկայէն վերադարձած երիտասարդներ նիւթապէս կրցան օգտակար ըլլալ թէ՛ զենք եւ թէ՛ ուտեստեղէն հայթայթելու տեսակէտէն:

Ազգային իշխանութիւնը կարգաւորեց նաեւ կրթական գործը եւ հիմնեց առաքելական ու աւետարանական համայնքներու **միացեալ վարժարան**ներու ցանցը, որուն ընդհանուր տեսչութիւնը կը վարէ Ամերիկայի Այովայի Երկրագործական Համալսարանէն շրջանաւարտ, նախկին լեգէոնական եւ Ազգային Միութեան քարտուղար Ժոզէֆ Հե-

քիմեանը, բնիկ քեսապի:

Ուսուցիչ Ս. Փ. Ա. (Սիմոն Փանոսի Այանեան) կը ձեռնարկէ նոր - մարդահամարի մը, որուն համաձայն՝ 1920 Յունիս-Յունլիսին, Քեսապի եւ շրջակայ գիւղերուն մէջ կ'ապրէր 1584 անձ, իսկ դուրսը՝ 779 անձ: Այս հաշուով բոլոր քեսապիներուն թիւն է 2363 հոգի⁵⁴: Ասիկանախկինին մէկ երրորդն իսկ չէ:

1921-ի համար կը տրուի 2500 հոգի⁵⁵: 1923-ին բնակչութեան թիւը արդէն բարձրացած է 3500 հոգի⁵⁶:

Բ. Տրանսական իշխանութեան մուտքը եւ վարչական նոր վիճակը.-

Արտաքին ճակատին վրայ Ազգային Միութեան տարած ինքնապաշտպանական յաղթական գործողութիւններուն հակառակ՝ Քեսապի ներքին կեանքը խաղաղ չեղաւ այս շրջանին: Բախումներ եղան Սերգօ աղայի ընտանիքին եւ Ազգային Միութիւնը ներկայացնող մարդոց միջեւ: Ժ. Թ. դարու առաջին կիսուն միջ-աւատապետական պայքարին մէջ Սերգօ ընտանիքը ինքզինք հաստատած էր, ու երկրորդ կիսուն, ինքզինք դեմ յանդիման կը գտնէր Քեսապի մէջ շուկայական յարաբերութեան - բերումով ձեւաւորուած գիւղական պուրժուախաւին, որուն ազդեցութիւնը կը մեծնար ժողովուրդին վրայ ու պատճառ կը հանդիսանար իր աւատապետական իշխանութեան սեղմումին ու կրճատումին: Շուկային մէջ դիրք գրաւած խաւը կազմուած էր մեծամասնութեամբ աւետարանական համայնքի մարդոցմէ: Պատերազմէն առաջ տարագրութեան հրամանին նախառաքելական հայե-րուն, այսինքն՝ իր ընտանիքին գալը, Սերգօ աղան կը նկատէր իրեն հանդէպ աւետարանականներու պատրաստած դաւադրութիւնը: Ան Ազգային Միութեան վարչութեան բոլոր անդամները իր ոսոխները կը նկատէր ու անոր իշխանութիւնը չէր ճանչնար: Սերգօ աղայի եւ Ազգային Միութեան առաջին բախումը տեղի կ'ունենայ Օգոստոս 1920-ին, Մուղուսլոք (Մուսալէք/Մուրսալէք) գիւղէն բռնագրաւուած, հայոց պատկանող ապրանքը բաժնելու - առթիւ: Կ'ըլլան դարանակալ սպանութիւններ: Ոչ ոք կրնայ մարել

⁵⁴ Տե՛ս **3. Չոլսքեան**, Քեսապ, Ա. հատոր, էջ 204, իսկ ամբողջական պատկերը՝ Գ. հատոր, էջ 233-291:

⁵⁵ «Յայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 1921, թիւ 14, էջ 487:

⁵⁶ Նոյնը, 1923, թիւ 46, էջ 1459:

հրդեհը:

Ֆրանսական Տեղեկատուական Վարչությունը Լաթափայ Էն կը հետևել էր դեպքերուն: Կը թուի, թէ ան մէկ կողմէն Չինուորական Իշխանութիւնը անհրաժեշտ կը գտնէ շրջանի թուրք ուժերը զսպելու, իսկ միւս կողմէ կասկածի տակ կ'առնէ անոր քաղաքական նպատակները: Ֆրանսական բանակի Լաթափոյ Տեղեկատուական Վարչութեան սպայի մը 25 Փետրուար 1921 թուակիր տեղեկագիրը կը նկատէ, որ Յայկական Լեգէոնէ դասալիքներէ կազմուած Չինուորական Իշխանութիւնը կը կիրարկէ «իսկական բռնակալութիւն մը: Սերգոյ Էն Եւ անոր հաւատարիմներէն ձերբազատուելու համար ան ետջի մնարոճիրներ գործել է եւ հրդեհներ ձգել է... Ներկայիս անոնք կազմակերպած են պզտիկ սարսափ մը: Անոնց ներշնչած վախը ամէն մարդու կ'արգիլէ բան մը խօսիլ: Բոլորին Լեգուոն կը բացուի այն ատեն, երբ անգամ մը Քեսապէն դուրս ելլեն»: Կ'եզրակացնէ. «Իվերջոյ կարելորէ չարտօնել, որ Քեսապի մէջ կազմուի իսկական պետութիւն մը (un véritable état), վարձուած կամ վճարուած՝ չենք գիտեր՝ ուրկէ»: Մէկ կողմէ՝ տեղեկագիրը դեմ է ամբողջ շրջանը զինաթափ ընելուն, որովհետեւ «իրենք (քեսապցիները) անմիջապէս յարձակումի պիտի ենթարկուին չէթէներէ, շրջակայքի ամբողջ թրքութեան աջակցութեամբ, որովհետեւ անոնք՝ քեսապցիները, շատ ուրջ արգելք մըն են շրջանի ըմբոստներուն համար եւ իրենց ընդդիմութիւնը կ'ապահովէ ամբողջ թրքական շրջանի խաղաղութիւնը ճեպէլ Ագրայ Էն դէպի հարաւ»: Միւս կողմէ՝ տեղեկագիրը պատշաճ կը գտնէ «չստիպել Սերգօ աղային հեռանալ շրջանէն, ինչ ալ ըլլայ անոր ընտանիքին յանցանքը, որպէսզի միշտ արթուն մարդիկ ունենանք Քեսապի Չինուորական Վարչութեան գործունէութեան վրայ իսկելու»: Կը թուի, որ Ֆրանսացիներուն համար ձեռնտու էր այս վիճակը՝ մինչեւ այն ատեն, որ իրենք տակաւին տէր չեն կացութեան:

Քեսապի մէջ պատահած այս կռիւները առանձին երեւոյթ չէին: Նման սուր բախումներ կային նաեւ ամբողջ Կիլիկիոյ տարածքին, մանաւանդ դրացի Սուէտիոյ մէջ: Այդ բախումները Քեսապէն կը իլ Են 27, իսկ Սուէտիայ Էն՝ 32 զոհ: 10 Սեպտեմբեր 1921 թուակիր իր տեղե-

կագիրին մեջ Արշակ Չօպանեան հետեւեալ հաստատումը կը կատարէ. «Կիլիկեան հայ ու թեան մեծագոյն խոցերէն մին է կուսակցական պայքարը, այլանդակ ու անմիտ ծայրայեղութեան մը հասած, որ ֆրանսացւոց եւ թուրքերուն մօտ կը խայտառակէ եւ կը վարկաբեկէ հայ ու թիւնը: Այդ չարիքին առաջը առնելու համար Ազգ. Պատուիրակութիւնը ջանալու է ընել ամէն ինչ որ կարելի է»⁵⁷: Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան Փարիզի Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Գաբրիէլ Նորատուկեանին յղած 5 Մայիս 1922 թուակիր նամակին մէջ կը գրէ. «Սուէտիոյ մէջ ալ շփոթութիւնք անպակաս են, թշնամիէն ազատուող եւ հերոսի անուն վաստակող ժողովուրդը հիմագիրար սպանելու քաջագործութեան մէջ են, Յաճի Յապիալի եւ Պիթիաս իրարու դէմ զինուած, երկու երիտասարդներ Յաճի Յապիալիէն սպանուած, փոխըմբռնող համար անխուսափելի է նոր բախումը. պատուիրակութիւն մը դրկեցի, որ աշխատի հաշտեցնել եւ զենքերը վար դնել: Ի՞նչ կը մնայ ըսել օտար թշնամիին, երբ մենք ալ բնաջնջելու կ'աշխատինք: Քեսապալ վարդագոյն, արիւնագոյն է ըսել պիտի ուզեմ, հոն միջցեղային կռիւն ու ոճիրը անպակաս են: Պատուիրակութեան հրահանգեցինք, որ Քեսապահանդիպի եւ հաշտարարական դերը շարունակէ հոն: Իշխանութեանց անտարբերութիւնը կասկած կու տայ, թէ կ'ախորժի ներքին պառակտումներէն»⁵⁸:

1922-ի սկիզբը վերջնականապէս կը կազմաւորուի Ալեքսանդրէթի Կառավարութիւնը: Ֆրանսական զօրքերը կը մտնեն Քեսապ: Սերգօ աղային ընտանիքը ամբողջութեամբ կը տարագրուի Ալեքսանդրէթ: Ազգային Միութիւնն ու անոր զինուորական, ոստիկանական եւ միւս մարմինները լուծարքի կ'ենթարկուին: Երկու կողմերուն դերերը կ'աւարտին ֆրանսացիներուն համար:

1922-ին, ֆրանսական իշխանութիւնները խաղաղութիւն հաստատելու եւ անկարգութիւններուն վերջ տալու համար ազդու միջոցներ ձեռք կ'առնեն: Ֆրանսացի սպայի մը հրամանատարութեան տակ կը

⁵⁷ **Վալերագրեր հայ եկեղեցու պատմության**, գիրք Դ., Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան, կազմող՝ Ս. Բեհբունդյան, Երևան, 1997, էջ 335:

⁵⁸ Նոյնը, էջ 379-380:

դրուելի գիտությունների շնորհիվ բաղկացած թուրք, պուլի, քրիստոնեայ, հայ, բայց մեծամասնութեամբ քեսապցի գիտություններ:

Արտաքին վտանգը վերացնելու նպատակով ֆրանսական իշխանութիւնները կը փոխեն շրջանին վարչական կարգավիճակը: Քեսապ կ'անջատուի Օրտուէն ու կը ներկայանայ իբրեւ առանձին միւտիքութիւն կամ նահիէ, որուն կեդրոնը կ'ըլլայ Քեսապ քաղաքը: Միւտիքը քաղաքապետի եւ կառավարիչի իրաւասութիւններ ունէր: Անոր տրամադրութեան տակ կը գտնուէր ոստիկանական շնորհիվ: Նորակազմ նահիէին ենթակայ կ'ըլլան Սուրսալէք թրքաբնակ գիւղը եւ շրջանի հայկական գիւղերը, բացի Վերի Պաղճաղազ, Վարի Պաղճաղազ եւ Չաթալէք գիւղակներէն, որոնք կը մնան Լաթաքիոյ կառավարչութեան Պասիթի նահիէի (գաւառակ) կազմին մէջ: Ասոր նոր կեդրոնն է Գասթալ Մասֆ գիւղը: Քեսապի նահիէն կը մտնէ Աղեքսանդրէթի սանճաքի Աստիոքի գազային մէջ: 1924-ին կը հիմնուի Սուրիական Պետութիւնը, որուն վարչականօրէն կը կապուի Աղեքսանդրէթի սանճաքը:

Ֆրանսական իշխանութիւններուն հաստատուելէն ետք համայնքները կը վերակազմուին իրենց նախապատերազմեան թեմական վիճակը ստանալով: Կանուխամուսնութիւնն ու բազմազանութիւնը կը քաջալերուին բոլորին կողմէ: Գիւղերը կը շէննան, ընտանիքները կը բարգաւաճին, աւերակ տուները նոր կեանքով կը լեցուին, նոր տուներ կը կառուցուին: Տնտեսութիւնը ոտքի կ'ելլէ: Հողագործութեան մէջ նախկին մշակութիւնները կը վերականգնին, ծխախոտի, շերամի եւ դափնեծէթի արդիւնաբերութիւնը՝ նոյն-պէս: Անասնապահութեան մէջ յատկապէս կը մեծնան ու կը բազմանան այծերու հօտերը: Հին արհեստները կրկին կը ծաղկին: Քեսապ պատերազմէն առաջ եղածին պէս կը դառնայ շրջակայ ու հեռաւոր շրջաններուն առեւտուրի կեդրոնը: Շուկան կը նորոգուի, փողոցները կը սալայատակուին: 1927-ին կը բացուի Աստիոք-Լաթաքիա խճուղին, որ կ'անցնէր Օրտուէն: Քեսապցիք խճուղին Օրտուէն Գայափունար, իսկ անկէ՝ Ներքի Գիւղի մէջէն միացուցին Քեսապի: 30 Հոկտ. 1928, Երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը մեկին առաջին ինքնաշարժը մտաւ Քեսապ:

Գ.- Աղեքսանդրէթի Սանճաքի պարտւմը եւ Քեսապի փրկութիւնը.-

Քեսապ Աղեքսանդրէթի սանճաքին մաս կազմելով վարչական իմաստով յեղյեղուկ վիճակ մը ունէր: 10 Մայիս 1930-ին Սուրիոյ եւ Լիբանանի գերագոյն կոմիսարի հրամանագիրով կրկին կը հաստատուի Աղեքսանդրէթի սանճաքի «յատուկ վարչական վիճակը» Սուրիոյ Պետութեան կազմին մէջ⁵⁹: Դամասկոսի վերահսկողութիւնը գրեթէ ձեւական-բնոյթ ունէր: Սանճաքի ընդհանուր կառավարիչը կամ մութասարիֆը կը նշանակուէր թուրք համայնքէն, պետական պաշտօնէաներու 65 տոկոսը թուրքերէին: Թրքերէնը սանճաքին մէջ արաբերէնին եւ ֆրանսերէնին նման պաշտօնական լեզու էր: Կառավարութեան մէջ թուրք պաշտօնէութեան այս գերակշռութիւնը կու գար օսմանէան շրջանէն եւ երբեք չէր կրնար արտայայտել սանճաքի ժողովրդագրութեան իսկական պատկերը: Թուրքերը երբեք բնակչութեան մեծամասնութիւնը չէին կազմեր՝ ինչպէս որ իրենք կը փորձէին ներկայացնել⁶⁰:

Հակառակ մարդահամարի խօսուն պատկերին՝ օրէ օր աւելի բացայայտ կը դառնայ ինչպէս Սանճաքը Թուրքիոյ յանձնելու ֆրանսական տրամադրութիւնները: 27 Մայիս 1937-ին Ազգերու Լիկան հաստատեց Ֆրանսայի եւ Թուրքիոյ համաձայնութեամբ ստեղծուած Աղեքսանդրէթի սանճաքի նոր կարգավիճակը, որով բոլորովին ձեւական կը դառնար Սուրիոյ գերիշխանութիւնը անոր վրայ:

2 Յունիս 1938-ին, սանճաքը դրուեցաւ Թուրքիոյ եւ Ֆրանսայի համատեղ վերահսկողութեան տակ: Փաստօրէն Աղեքսանդրէթի սանճաքը անջատուեցաւ Սուրիայէն: Դամասկոս, Հալէպ, Պէյրութ եւ այլ տեղեր սանճաքի պաշտպանութեան կոմիտէներ ստեղծուեցան: Սուրիացիներուն այս պայքարին ամէն տեղ գործօն մասնակցութիւն բերին հայերը:

5 Յունիս 1938-ին ֆրանսական իշխանութիւնները անտեսելով հանրաքուէին արդիւնքները եւ շրջանցելով Ազգերու Լիկան՝ համաձայնեցան, որ Թուրքիա զօրքերը մտցնէ Աղեքսանդրէթի սանճաք՝

⁵⁹ **Լ. Հ. Հովհաննիսյան, Հ. Ս. Սարգսյան**, Սիրիան անկախութեան համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, էջ 181-182: Աղեքսանդրէթի սանճաքի հարցին մասին ընդհանրապէս՝ տե՛ս **Ա. Ա. Բայրամյանի** «Աղեքսանդրէթի սանճաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.)», Երևան 1998:

⁶⁰ **Հ. Խ Թովուզյան** նշ. աշխ., էջ 235. իր աղբիւրն է The Middle East Journal, 1956, No. 4, p. 380.

«կարգ ու կանոնը» պահպանել ու համար: «Վերսկսվեցին սանձարձակ - բռնությունները, ահաբեկչական գործողությունները ոչ թուրք ազգաբնակչության, հատկապես հայերի և արաբների դեմ: Ազգերի Լիկայի՝ հանրաքվեի ընթացքին հետևող միջազգային յանձնաժողովը բողոքելով այդ աղաղակող ապօրինի արարքի դեմ, հեռացավ սանջակից»⁶¹:

Թրքական ջոկատներ Քեսապ մտան: Ֆրանսացիները հեռացան: - Թուրք զինուորները տեղափոխվեցան բոլոր պահակատուներուն մեջ եւ նոր պահակատուներ նշանակուեցան սահմանին վրայ :

1938 Օգոստոսին թրքական բանակի սուլիներուն տակ եղած «պառլամենտական ընտրութիւններուն» բնակչութեան 23 տոկոսը կազմող թուրքերը յանկարծ դարձան 63 առ հարիւր: Նոր խորհրդարանը իր առաջին իսկ նիստին՝ Սեպտ. 2-ին, Աղեքսանդրէթի սանձաքը հռչակեց Զաթայի Պետութիւն⁶²:

Աղեքսանդրէթը կատարեալ թրքացումի կ'երթար: Զայեր, արաբներ, յոյներ, քիւրտեր, չերքէզներ սկսան հեռանալ սանձաքէն: Սկսաւ գանգուածային արտագաղթ մը: Աղեքսանդրէթի, Պէյլանի գիւղերուն, Գրըգխանի, Անտիոքի եւ միւս շրջաններուն հայերը անցան Լիբանան եւ Սուրիա:

Թրքական իշխանութիւնը հետզհետէ կը բրտանար: Քեսապ «տարի մը ամբողջ ճաշակեց Զաթայի կառավարութեան «բարի պտուղները»: - Թուրք սպաներն ու զինուորները ինչ ապրանք որ կար Քեսապի շուկային մեջ՝ բոլորն ալ աւելեցին ու տարին: Յետոյ սկսան ժողովուրդին վրայ տեսակ-տեսակ ճնշում բանեցնել, տուներ խուզարկել ու պատրուակին տակ ապօրինութիւններ կատարել: Մի քանիները «թուրք սպաննած է» ըսելով հալածեցին եւ բռնածները մեռցնել ու աստիճան ծեծեցին, շատեր փախան իրենց տուներէն եւ լեռները ապաստանեցան»⁶³:

Փարիզի մեջ ֆրանսացիները կը կազմեն Միջերկրականեան Կո-

⁶¹ Նոյնը, էջ 236:

⁶² Նոյնը, էջ 238:

⁶³ Ա. Ս. Թեմիրեան, Քեսապ, էջ 202-203:

միտե, որոնք գլխաւոր պարտականութիւնները զբաղիլ արեւելեան Միջերկրականի հարցերով: Կոմիտէի անդամ էր հայ յայտնի գրագետու - հասարակական գործիչ Արշակ Չօպանեանը: Կիւիկիոյ Կաթողիկոսարանը մեծ դեր ունեցաւ այս կոմիտէի կազմութեան մէջ⁶⁴:

Միջերկրականեան Կոմիտէն Ֆրանսայի, Սուրիոյ ու Լիբանանի - Գերագոյն Կոմիտարութեան արտոնութեամբ Քեսապէս Սուէտիակը ղրկէ երկու յայտնի դեմքեր՝ ծերակուտական Կիւսթաւ Կոթերօ եւ գրող Փոլ տը Վեու:

Լիբանանի մէջ պապական նուիրակ մոնսեներո Ռեմի Լըփրեթի, Անթիլիասի կաթողիկոսարանի, Արշակ Չօպանեանի, Փոլ տը Վեուի, - Կիւսթաւ Կոթերոյի, բարի կամքի տէր ուրիշ Ֆրանսացիներու եւ - հայ կական կազմակերպութիւններու աշխատանքը որոշ արդիւնք պիտի տար: 14 Մայիս 1939-ին Պէյրութի մէջ Գերագոյն Կոմիտարութեան ընդհանուր քարտուղարը կը հաղորդէր, թէ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը հաղորդած է, որ Սուրիոյ եւ Թուրքիոյ նոր սահմանագծում մը կատարելու եւ այդ սահմանագծումով Քեսապի շրջանը - Սուրիոյ կցելու համաձայնութիւն գոյացած է Ֆրանսական իշխանութիւններուն եւ թուրքերուն միջեւ⁶⁵:

Սակայն թուրքերը ուրիշ խնդիրներ կ'ուզէին լուծել նոր սահմանագծումով: Թրքական սպասարկութիւնները ներքին կարգով թելադրած էին Պայիրի եւ Պուճագի գիւղերու մուխթարներուն, որ ստորագրութիւններ հաւաքեն փափաք յայտնելով որ կ'ուզեն իրենց - շրջանները կցել Յաթայի Պետութեան: Ատիկա իրագործուելու պարագային, իրօք, անկարելի պիտի ըլլար Քեսապի անջատումը Յաթայի Պետութեանէն ու անոր կցումը Սուրիոյ Լաթաքիոյ նահանգին: Խումբ մը հայ, քրիստոնեայ եւ արաբ երիտասարդներ մէկ շաբթուայ ընթացքին ահաբեկումի կ'ենթարկեն հարաւի թուրքմէն գիւղերու մուխթարները ու ձախողութեան կը մատնեն անոնց ծրագիրը⁶⁶:

⁶⁴ «Տասնամեակ Կասիոսի Յայրենակցական Միութեան, 2 Նոյ. 1941 – 23 Նոյ. 1951», Պէյրութ, 1951, էջ 8-9; **Պ Մառուռեան**, Յայրենի Կտուրին Տակ, տե՛ս «Յուշամատենան Սուսաւերան», էջ 491-493:

⁶⁵ Տասնամեակ Կասիոսի Յայրենակցական Միութեան, էջ 8-9:

⁶⁶ **Ա Տեմիրճեան**, Փելթեք Չաուշի Չգետնումը (Աբրահամ Չոլաքեանի Մահուան Առթիւ), «Նայիրի» պարբերաբերթ, Պէյրութ, 4 Ապրիլ 1998, էջ 5:

23 Յուլիս 1939-ին Հայաստանի Պետությանը պաշտոնապես կը լուծու-
լի եւ Աղեքսան-դրեթի սանճաքը կը կցուի Թուրքիոյ իբրեւ անոր 63-
րդ վիլայէթը: Թուրքիա եւ Ֆրանսա «կը լուծէին» նաեւ սահմանային
հարցերը: Անով՝ Քեսապի արդի սահմաններով կ'անցնէր Սուրիոյ
կազմէն ներս, թէեւ թուրքերու կողմը կը մնային շրջանին մէկ ե-
րրորդ տարածութիւնը, Քեսապի նահիէին պատկանող Մուսալէք թրքա-
կան գիւղը, Կասիոս լեռը ու մինչեւ Քեսապի բնակավայրերուն կից
հայոց բոլոր կալուածները: Հայ կական բնակավայրերը կը դրուէին -
թրքական սահմանին սեղմ քցանին մէջ:

27 Ապրիլ 1946-ին Սուրիա կ'ազատագրուի ֆրանսական գաղութատի-
րութենէ: Քեսապցիները ցնծութեամբ ու ցոյցերով կ'ընդունին Սու-
րիոյ անկախութիւնը:

2.4.- ՔԵՍԱՊԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱՒԱՅՈՒՄԷՆ ԵՏՔ

Ա Հայ րենադարձութիւնը.- Չանգուածային հայ րենադարձութան
աւետիսը Քեսապի շրջան հասաւ մեծ ուրախութիւն ու խանդավառու-
թիւն ստեղծելով: Ժողովուրդին մեծամասնութիւնը ներգաղթելու -
պատրաստակամութիւն ցուցաբերեց: Ասիկա ունէր իր պատճառները.

1.- Այն բուն հայ րենասիրութիւնը, որով համակուած էր այս ժո-
ղովուրդը դեռ
1890-ական թուականներէն սկսեալ: Անոր մէջ արմատնետած էր իր ճա-
կատագիրը Հայաստան երկրին կապելու գիտակցութիւնը: Վերջ ի վեր-
ջոյ Քեսապն ալ գաղթավայր էր, իսկ հայը պէտք է ապրէր ու յարատե-
ւէր իր հայրենիքին մէջ:

2.- 1939-ի նոր սահմանագիծով շատեր կորսնցուցած էին իրենց ե-
թէ ոչ բոլոր, գէթ լաւագոյն արտերը, Քեսապի շուկան չունէր իր -
նախկին եռու գեռն ու նշանակութիւնը: Ծառարհեստաւորներ անգոր-
ծութեան մատնուած էին:

3.- Բ. Համաշխարհային Պատերազմի տարիներուն ստեղծուած
ունտեսական ճգնաժամը կը շարունակուէր: Ո՛չ գործ կար, ո՛չ հեռան-
կար:

4.- Քեսապցիք, ինչպէս Սուրիոյ ողջ հայութիւնը, ցնծութեամբ

ողջունեցին Սուրիոյ անկախութիւնն ու ֆրանսական ուժերու հեռացումը, սակայն նորանկախ երկիրը նոր մտահոգութիւններ ալ կը բերէր: Ի՞նչ պիտի ըլլար հայոց ճակատագիրը վաղուան Սուրիոյ մէջ:

5.- Խորհրդային Յայաստանի «փրոփանկանտը» ամէն ինչ վարդագոյն կը ներկայացնէր այնտեղ: Արտագաղթի հետեւանքով քեսապցի բազմաթիւ ընտանիքներ երկփեղկուած վիճակի մէջ էին: Յայրենիքին մէջ վերամիաւորուելու գաղափարը կը հմայէր շատերը:

Ներգաղթի արձանագրութիւնները կատարուեցան 1946-ի առաջին կիսուն: Ներգաղթի Կոմիտէի ներկայացուցիչներուն հաւաստիացումով, քեսապցիք պէտք է գաղթէին 1946-ին: Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մէջ աշխատող քեսապցիներ, գործ ու պաշտօն ձգած, վերադարձան ծննդավայր՝ իրենց ընտանիքներուն հետ Յայրենիք երթալու համար: Սակայն ներգաղթը յետաձգուեցաւ յաջորդ տարուան:

Ներգաղթի օրերուն մեծագոյն հարցերէն մէկը, անկասկած, այսօր քան մեծաթիւ մեկնողներու անշարժ կալուածներն էին: Քեսապցին դրամական հարստութիւն չունէր: Իր հարստութիւնը իր անշարժ գոյքներ՝ տունը, արտերն ու պարտեզները: Օտարականներ քեսապափանցելով մեկնողներու տունն ու կալուածները գնելու պատրաստակամութիւն կը յայտնէին: Ուստի երեք յարանուանութիւններու հովանաւորութեան տակ, մեկնող ու մնացող քեսապցիներէն կազմուեցան երկու մարմիններ՝ ներգաղթողներու **կալ-ուածները վաճառող մարմին** եւ ներգաղթողներու **կալ ուածները գնող մարմին**: Բոլոր կալուածները ցուցակագրուեցան⁶⁷: Համաձայնութիւն գոյացաւ, որ վաճառող կողմը պիտի բաւարարուի խորհրդանշական գումարով մը, որ պիտի ծախաուի մարմնին կողմէ ներգաղթողներու փոխադրութեան ատեն ուտեստի ու ճանապարհածախսի համար, իսկ գնող կողմը կը խոստանայ հողերը առանց շահի բաժնել կարիքաւոր մնացողներուն ու գիւղ վերադառնալ ուզող, Սուրիոյ եւ Լիբանանի տարբեր

⁶⁷ **Լրաւու**, Քեսապը Մեր Մէջ, «Մասիս» շաբաթաթերթ, Պէյրութ, 29 Ապրիլ 1947, էջ 14; **Քեսապցի**, Քեսապ, «Մասիս», 3-7 Մայիս 1947, էջ 3. նաեւ նոյնէն, «Մասիս», 28 Մայիս 1947, թիւ 22:

քաղաքները գաղթած հողագուրկ ընտանիքներուն: Վերջինները հողին գինը պիտի տային մասնավճարով:

Պահանջուած գումարը գոյացնելու համար գնող մարմինն օժանդակեցին Սուրիոյ եւ Լիբանանի եկեղեցական մարմինները, միութիւնները ու գլխաւորաբար Սուրիահայ Օգնութեան Խաչի Հալէպի մասնաճիւղը: Գնահատուեցաւ ոչ թէ հողը, այլ՝ անկէ ստացուող տարեկան եկամուտը: Օրինակի համար, «Եթէ ծխախոտի արտում կամ պարտէզում հարիւր սիրիական թղթադրամի եկամուտ կար, հաշուի առնուեց 40-45 տոկոսը հաւաքողին է իբրեւ վարձատրութիւն, 15-20 տոկոսը՝ կորուստ բերքի, մնացած 35 տոկոսը տրուեց ներգաղթողին»⁶⁸: Տասնութ տարեկանէն վեր ներգաղթողէն ներգաղթի Կոմիտէն վերցուց 150 սուրիական դրամ իբրեւ ճանապարհածախս, Քեսապէն Պէյրութիւրաքանչիւր հակի փոխադրողէն էքզանձեց 12 ս.ո.: Մաղաքիա Պարւճեանը կը յայտնէ, որ քեսապցիներէն գանձուած է 55 000 ս.ո., որը մեծ գումար էր, մինչ յետոյ յայտնի կը դառնայ, որ նախորդ կարաւաններէն «ո՛չ մի ներգաղթողից ո՛չ մի սանթիմ գումար չի վերցուել, բացի Քեսապի ժողովրդից»⁶⁹: Գիւղական վայրերու տուները լքուեցան, չվաճառուեցան, որովհետեւ այդ վայրերուն մէջ բնակիչ չմնաց: Քեսապաւանին տուներուն շատ չնչին գումար մը տրուեցաւ: Փաստէ, որ քեսապցին «դատարկ ձեռքով» ներգաղթեց Հայրենիք⁷⁰:

Կարգ մը գիւղացիներ վրդովեցան ու նախընտրեցին քանդել իրենց տուները, ջարդել ու փճացնել իրենց պարտէզները ու լքել երթալ: Հարցը հասաւ Սուրիոյ կառավարութեան ու Կիլիկիոյ Գարեգին Ա.Կաթողիկոսին⁷¹:

Յետագային՝ գնող մարմինը հողերու հապճեպ բաժանումին պատճառով չկրցաւ գոհացնել հողին պէտք ունեցողները ու ժողովուր-

⁶⁸ Մ. Պարւճեան, Քեսապը Հայաստանում, տե՛ս **3. Չոլսքեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 329:

⁶⁹ Նոյնը, էջ 330:

⁷⁰ Նոյնը, էջ 329:

⁷¹ Դիւան Բերիոյ Թեմի Առաջնորդարանի, Քաղաքական ժողովի ատենագրութիւններ, տոմար, 59. 25 Յունուար 1945, օրակարգ 12, 13, 14; տոմար 60, 3 Մարտ 1947-ի նիստէն, էջ 33-34; Ապրիլ 1947-ի նիստէն, օրակարգ 3, էջ 43-44; տե՛ս նաեւ **3. Չոլսքեան**, Քեսապ, Գ. հատոր, 474-476:

դին կողմէ արդար քննադատութեան ենթարկուեցաւ ⁷²:

Քեսապէն Պէյրու ժողովուրդի և ինքնավար երկրի մարդատար եւ բեռնատար ինքնաշարժներով ու տեւեց երեք օր: Առաջին կարաւանը՝ շարժեցաւ 22 Յունիս 1947-ին: Այդ օր, Քեսապի եւ գիւղերուն բոլոր եկեղեցիներուն զանգերը երկարօրէն հնչեցին: Ամէն գիւղ տեղէ մը կը շարժէր: Զոն պէտք էր տեսնել մարդոց արցունքն ու ողջագուրումը, պէտք էր լսել օր մը անպայման հայրենի հողին վրայ հանդիպել ու մաղթանքներն ու խոստումները:

Ներգաղթողները փոխադրուեցան Պէյրու թի նաւահանգիստին կից Քարանթինա թաղամասը ու տեղաւորուեցան մէկ տարի առաջ ներգաղթած հայոց պարաստնակներուն մէջ: 25 Յունիս 1947-ին, երեկոյեան ժամը 6:30-ին, Փոպետանաւը քեսապցիները ուսած կը բաժնուէր Լիբանանի ափերէն:

Զայրենիք կը ներգաղթէ Քեսապի շրջանի այդ օրերուն ընդհանուր բնակչութեան երկու երրորդը: Ուրիշ աղբիւր մը կը յայտնէ, որ 1946-ի եւ 1947-ի գոյգ կարաւաններով, Պէյրու թէն եւ Քեսապէն, Զայրենիք մեկնած են 3800 քեսապցիներ ⁷³:

Բ. Քեսապի գաղութը պահպանել ու համար. - Զայրենադարձութեան պատճառով բոլորովին պարպուած էր Պաշտօտ գիւղը: Միւս գիւղերուն եւ Քեսապաւանին մէջ տարուէ տարի կ'աւելնային աւերակոյտերը, խոպանացող ու թփուտներու վերածուող արտերն ու պարտեզները, անանցանելի կ'ըլլային հեռաւոր արտերուն ու պարտեզներուն կածաններն ու ճամբաները:

Բնակչութեան թիւին նուազումը ամէնէն առաջ բացասական կերպով ազդեց յատկապէս գիւղական շրջաններուն կրթական գործին վրայ: Դպրոցները կը գոցուէին կամ ա՛լ չէին գոհացներ ծնողները: Կարգ մը հեռաւոր գիւղերու բնակիչները փոքրիկներուն կրթութեան համար Քեսապ տեղափոխուելէն աւելի հեռանկարային կը նկատէին մեծ քաղաքները: Այդ շրջանին ամէն տարի գէթ 50 քեսապցի աշակերտներ կը գտնուէին Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի գիշերօթիկ

⁷² Տասնամեակ Կասիոսի Զայրենակցական Միութեան, Էջ 22:

⁷³ Ա. Ս. Թէմիրեան, Քեսապ, Էջ 269:

դարոցներուն մէջ, Անթիլիասի, Չմմառի, Ս. Ղազարի եւ Վիեննայի դարեվանքներուն մէջ եւս: Քիչ չէին նաեւ պարտադիր գինուորական ծառայութենէն խոյս տուողները: Չաւակներուն ետեւէն կ'երթային ծնողները, որոնք, վերջին հաշուով, գիւղական աշխատանքի նախկին պայմաններուն տակ ինքնաբաւ ըլլալ չէին կրնար ըլլալ:

Տեղացի աշխատող ձեռքերու պակասին պատճառաւ ոմանք, մասնաւորաբար արտագաղթողները, իրենց կալուածները ալ եւի ընտանիքներու վարձակալութեան տուին: 1962-ին հրատարակուած պետական օրէնքէ մը օգտուելով՝ ասոնք տիրացան այդ հողերուն ու դարձան Քեսապի բնակչութեան մնայուն երկրորդ տարրը: Քեսապ, Սեւ Աղբիւր, Տուգաղաճ, Չինարճըզ, Քէօրքիւնէ եւ Չաթալլէք հայրենադարձութենէն ետք միատարր բնակչութիւն չունեցան: Ծրջանը կորսնցուց գուտհայաբնակ ըլլալու իր դարաւոր յատկութիւնը: Օտար տարրը ներկայիս շրջանի մնայուն բնակչութեան շուրջ մէկ երրորդը կը ներկայացնէ:

Այս միջոցին որոշ փոփոխութիւններ դրական կերպով անդրադարձան շրջանի բնիկ հայ տարրին վրայ եւ օգնեցին, որ գոյատեւէ Քեսապի հայ կական գաղութը: Յիշենք երկու հատը միայն.

1.- Չայրենադարձութենէն ետք տեղի եւ դուրսի քեսապցիները ջանացին զբօսաշրջութեան եւ ամառանոցի ցանկալի վայր մը դարձնել Քեսապը: Լաթաքիոյ, Դամասկոսի, յատկապէս Չալէպի հայերը նոյնապէս աշխատեցան այդ ուղղութեամբ: Բազմաթիւ ընտանիքներ նախ իբրեւ վարձակալ օդափոխութեան համար Քեսապէլան, ապա արտերու տուներ գնեցին, ամառանոցային տուներ կառուցել տուին ո՛չ միայն Քեսապի, այլ եւ Էքիզօլուքի, իսկ 70-ական թուականներէն սկսեալ՝ գրեթէ բոլոր գիւղական շրջանակներուն մէջ: Նոյնիսկ մնայուն բնակութիւն հաստատող ոչ քեսապցի հայ ընտանիքներ եղան: Սուրիա եւ Լիբանան գտնուող քեսապցի ընտանիքներ վերակենդանացուցին իրենց Քեսապի տնտեսութիւնը:

Ամառանոցային պահանջները նպաստեցին, որ մինչեւ 1980-ական թուականները շրջանի բոլոր գիւղերուն մէջ ալ ելի արագ թափով բարելաւուին կեանքի եւ աշխատանքի պայմանները, քաղաքի ու գիւղի -

տարբերութիւնները հիմնովին վերանան:

2.- Զիմնովին փոխուեցաւ գիւղատնտեսութիւնը: Գիւղացիք հետզհետէ լքեցին իրենց բարձր լեռնային կալուածները ու գիւղամերձ տարածութիւններու մէջ, գնումով կամ փոխանակումով, ընդարձակեցին իրենց հողերը: Աստիճանաբար հրաժարեցան աշխատող ձեռքի առատութիւն պահանջող կամ լեռնային պայմաններու մէջ ոչ այնքան հասութեամբ մշակութիւններէն ու խաշնարածութենէն: Շրջանը կտրականապէս պողամշակութային գիւղատնտեսութեան անցաւ: Ասոր նպաստեցին.

ա.- ճամբաներու եւ փոխադրական միջոցներու առկայութիւնը: - Զեռաւոր պարտեզներու ն համար գիւղացիք ճամբայ բացին իրենց միջոցներով: Փոքր, միջակ ու մեծ չափի բեռնատար մեքենաներ բերքը - օրը օրին պարտեզներէն հաւաքելով կը փոխադրեն Լաթաքիա ու Զալէպ:

բ.- Գիւղատնտեսական աշխատանքի մէջ մեքենաներու օգտագործումը:

1970-ական թուականներէն սկսեալ կը գործածուին հերկող ու կրող թրաքթորները, ջրհան ու դեղող շարժիչները եւ այլ մեքենաներ: Մաճն ու արօրը բոլորովին վերացան, չքացան հերկող ու կրող կենդանիները:

գ.- Պտուղի սառնարաններու առկայութիւնը: Քեսապի առաջին սառնարանը կառուցուեցաւ ժողովրդային բաժանորդագրութեամբ գոյացած գումարով: Արտասահմանի քեսապցիներն ալ նպաստեցին: Այժմ կը գործեն աւելի փոքր տարողութեամբ անհատական սառնարաններ եւս: Գիւղացին պարտեզները ջրաբի դարձուց արտեզեան ջրհորներ փորելով կամ այլ միջոցներով ջուր հայթայթելով: Տարագրութենէն ետք առաջին անգամ ըլլալով քեսապցիք կարողացան տնտեսապէս ինքնաբաւ պայմաններ ստեղծել:

Բնիկ հայերը հողի աշխատանքի կողքին կը վարեն պաշտօններ, կը զբաղին նաեւ արհեստներով, համալ սարանական մասնագիտութեամբ, առեւտուրով, արդիւնաբերութեամբ եւ ամառանոցային զանազան ծառայութիւններով: Շրջանին պանդոկները, ճաշարանները, սրճարանն-

երը, գթօսավայրերը, վաճառանոցները, արհեստանոցները, սառնարանները, քանի մը գործարանները, փոխադրական ծառայութիւններ մատուցող գրասենեակներն ու հասարակաց փոխադրամիջոցները մեծ մասով բնիկներուն կը պատկանին:

Այսօր Քեսապ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Լաթաքիոյ նահանգին մէջ վարչական առանձին միաւոր մըն է՝ նահիէ: 1955-ին Վերի Պաղճաղազ, Վարի Պաղճաղազ եւ Չաթալլէք գիւղակները նահանգային կարգադրութեամբ կ'անջատուին Գասթալ Մասֆի նահիէէն ու կը կցուին Քեսապի նահիէին:

Քեսապիք ներկայիս մեծ սփիւռք ունին: Պետք է նշել, որ տնտեսական եւ քաղաքական պայմաններու բերումով արտագաղթած քեսապիները իրենց կապը երբեք չեն խզած Քեսապի հետ, կազմակերպուած ու փորձած են նպաստ մը բերել անոր վերականգնումի ճիգերուն:

Այդ իմաստով քեսապիները լաւապէս կազմակերպուած են հետեւեալ երկիր-ներուն մէջ.

- Լիբանան. **ՊԵՂՐՈՒԹՅՈՒՆ** եղած է Արաբական Արեւելքի մէջ քեսապի արտագաղթողներուն ամենէն սիրելի քաղաքը: Տարագրութենէն առաջ հոս եղած են տասնեակ մը քե-սապի ուսանողներ: ՊԵՂՐՈՒԹԻ Ամերիկեան Համալսարանի շրջանաւարտ առաջին հայ բժիշկը Սողոմոն Աբելեանն է, 1890-ին: 1928-էն ետք Քեսապի շրջանէն մեծ արտագաղթը պատճառ կ'ըլլայ, որ բազմաթիւ անհատներ ու ընտանիքներ գաղթեն մասնաորաբար ՊԵՂՐՈՒԹ, իսկ 1960-ական թուականներուն՝ աւելի եւս: 1930-ական թուականներէն իվեր մինչեւ օրս Քեսապ-ՊԵՂՐՈՒԹ (320 քիւլոմէթր) ամենօրեայ երթեւեկութիւն կայ:

Քեսապիները լիբանանահայ գաղութի ազգային-եկեղեցական, կրթական եւ մշակութային, գրական թե մամուլի կեանքին մէջ միշտ ներկայութիւն եղած են: Մեծ թիւով ուսանողներ եղած են Անթիլիասի ու Չմմառի դպրեվանքերուն եւ ՊԵՂՐՈՒԹԻ մէջ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանին (NEST) մէջ: Սփիւռքի մէջ հոժ ներկայութիւն մը ներկայացնող քեսապի հոգեւորականները՝ առաւելաբար կու գան Լիբանանէն, մասամբ նաեւ Երուսաղէմի

Ժառանգաւորացէն, Ս. Ղազարի եւ Վիեննայի Միփթարեան Միաբանութենէն: Քեսապի է Մեծի Տանն Կիլիկիոյ, ապա Ամենայն Յայոց Կաթողիկոս Գարեգին Սարգիսեանը: Պէյրուծի ֆրանսական - Սէն Ժոզէֆ, Ամերիկեան եւ Յայկազեան համալսարաններէն քեսապի - բազմատասնեակ շրջանաւարտներ կան՝ բժիշկներ, երկրաչափներ, - տնտեսագէտներ, ճարտարագէտներ, ուսուցիչ-դասախօսներ եւ այլն:

Արաբական Արեւելքի գաղութներուն մէջ Պէյրուծը միակ տեղն է, ուր քեսապի-ները կանուխէն կազմակերպուել ու փորձեր կը կատարեն ու կը հիմնեն հետեւեալ միութիւնները.

- **Քեսապիներու Յայրենակցական Միութիւն.** կը հիմնուի 1938-ին, նպատակ ունենալով օգնել գործի, բնակարանի, նիւթականի կարիք ունեցող պէյրուծաբնակ հայրենակիցներու եւ կարելի միջոցներով օգտակար ըլլալ Քեսապի շրջանին:

- **Կաթիոսի Յայրենակցական Միութիւն.** կը հիմնուի 1941-ին, հնչակեաններուն կողմէ: Միութիւնը նպաստած է Քեսապի շրջանին մէջ ՅԲԸՄ-ի Նպաստընկալ Ազգային վարժարաններուն: Յրատարակած է տարեկան օրացոյցներ ու «Տասնամեակ Կաթիոսի Յայրենակցական Միութեան, Պէյրուծ, 23 Նոյ. 1941-23 Նոյ. 1951» վերնագիրով գրքոյ կը:

- **Քեսապի Ուսումնասիրաց Միութիւն.** հիմնուած է 1950-ին: Ունի հրատարակուած ծրագիր-կանոնագիր. իր նպատակը եղած է օգնել Լիբանանի չքաւոր ընտանիքներու դպրոցականներուն, իսկ համալսարանականներուն նպաստյատկացնել, նիւթապէս օգնել Քեսապի բարեգարդման եւ Քեսապի դպրոցներուն, իմասնաւորի Գարատուրանի Ազգային Միացեալ եւ Քեսապի Ուսումնասիրաց Միացեալ վարժարաններուն: Տարեկան յատկացումներէ բացի՝ արտակարգ հանգանակութիւլներով հասած է դպրոցներու պէտքերուն, մասնակի կամ ամբողջական նորոգութիւլներուն, կամ ընդհանրապէս՝ շրջանի միւս ձեռնարկներուն:

Ուսումնասիրաց Միութիւնը Պէյրուծի մէջ 1950-էն իվեր պահած է գիշերային վարժարան, ուր յաճախած են ոչ միայն քեսապիներ: Գլխաւոր դասանիւթը եղած է անգլերէնը, որ այնքան կը պահանջուէր - Միացեալ Նահանգներու Քանադա գաղթել ու գողներէն: Յրատարակած

Ե օրացոյցներ եւ «Ալ արմ Քեսապի եւ Շրջակայ ից» (ՊԵՅՐՈԼԹ, 1955) պատկերագիրքը:

Լիբանանի 1975-1990 թթ. քաղաքացիական կռիւներուն մեծ եղաւ արտագաղթողներուն թիւը: Այսուհանդերձ ՊԵՅՐՈԼԹի քեսապցիները ներկայիս կրկին հոծ ներկայութիւն մըն են: Ճատընտանիքներ Քեսապի մէջ կը պահեն կալուածներուն տուն:

- **Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ Քանադա** 1890-ական թուականներու վերջաւորութեան **Ամերիկայի Միացեալ Նահանգներ** ու մէջ, գլխաւորաբար՝ Նիւ Եորք եւ Պոսթոն գտնուող քեսապցիներուն թիւը 150-ի կը հասներ: Ասոնք, յատկապէս 1910-էն ետք, հանգանակութիւններ կը կատարեն Քեսապի համար: 1916-ին ոմանք կ'անդամագրուին Յայկական Լեգէոնին, կը վերադառնան Քեսապ, ուրիշներու ալ բարի օրինակ հանդիսանալով⁷⁴: **ԱՄՆ**-ի մէջ, քեսապցիներուն թիւը շատ արագ մագլցում մը ունեցաւ 1960-ական թուականներուն, երբ Քեսապէն, ՊԵՅՐՈԼԹԵՆ, Սուրիայէն, աւելի ուշ նաեւ Յայաստանէն, բազմաթիւ ընտանիքներ հաստատուեցան հոն: Սուրբ թիւ մը գոյացաւ **Քանադայի** մէջ՝ Մոնթրէալ, Թորոնթօ, յատկապէս Օթթաւա եւ անոր շրջակայքը: Օթթաւայի մօտիկ Քեմպրիճ քաղաքը ոմանք «Նոր Քեսապ» կը կոչեն: Ուրիշներ մեկնեցան Աւստրալիա:

Քեսապցիները կազմակերպելու եւ հայրենի Քեսապի նիւթական նպաստները կանոնաւորելու նպատակով 1957-ին **Լոս Անճելըսի** մէջ կը հիմնուի **Միացեալ Նահանգներու եւ Քանադայի Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութիւնը**: Ան ներկայացուցիչներուն ի ԱՄՆ-ի, Քանադայի եւ Աւստրալիոյ՝ քեսապցիներու որոշ խտութիւն մը ներկայացնող վայրերուն մէջ: Միութեան մեծ իրագործումը կ'ըլլայ տարեգիրք-հասցեարանի մը հրատարակութիւնը՝ Directory-Yearbook – Kessabtzis in U.S.A. and Canada, որ 1960-էն ի վեր անընդմէջ կը հրատարակուի եւ այդ իմաստով նմանը չունի ամերիկահայ իրականութեան մէջ: Ճուրջ 200 էջանի այս հասցեագիրքը լաւագոյն կապն է Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Քանադայի քեսապցիներուն միջեւ: Յա-

⁷⁴ **Մ. Շահապէան**, Յայկամաւորական ճարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920), Սուրիա, 1965, էջ 47:

սցեարանին վերջին թիւերուն մէջ իրենց հասցէները ունին շուրջ - հազար երկու հարիւր քեսապի ընտանիքներ: Զոն տեղ կը գտնեն - միութեան տարեկան տեղեկագիրները, նուիրատուներու ցանկեր, նաեւ լուրեր քեսապէն եւ տարասփիւռ հայրենակիցներէն: Յօդուածները կը հրատարակուին հայերէն եւ անգլերէն լեզուներով: Միութիւնը հրատարակած է նաեւ Յակոբ Զոլաքեանի «Քեսապ» եռաշաբաթու սուլմնասիրութեան վերջին երկու հատորները: Միութիւնը մասնակաւ Գաբրիէլ Ինճեճիքեանի ջանքերուն շնորհիւ 1969-ին կը գնէ ընդարձակ կալուած մը՝ Քէմք քեսապ, որ իբրեւ բանակաւայրու զբօսաւայր կը ծառայէ ամերիկահայ այլ միութիւններու եւս: Գաբրիէլ Ինճեճիքեանի նախածեռնութեան պտուղը եղած է նաեւ ԱՄՆ-ի առաջին հայ կական ամէնօրեայ դպրոցը՝ Լոս Անճելոսի Ազգ. Ֆերահեան Վարժարանը, 1964-ին: Միութիւնը կը նպաստէ ինչպէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու, այդպէս ալ Սուրիոյ քեսապի համալսարանականներու, հայ կական դպրոցներուն, քեսապ Քէմքին եւ քեսապի երեք դպրոցներու ֆոնտերուն: Միութիւնը քեսապի կարիքներուն համար՝ դպրոցական օթոպիւս, եկեղեցական շէնքի նորոգութիւն եւ այլն, կատարած է արտակարգ նուիրահաւաքներ: Ուսուլմնասիրաց - Միութիւնը նաեւ յատկացումներ կը կատարէ համահայ կական կարիքներուն համար⁷⁵:

- **Արաբական Միացեայ Էմիրութիւններ.** 1970-ական թուականներուն քեսապիներ հետզհետէ մեծ թափով կայք հաստատեցին ու տուլտեղ եղան Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ՝ յատկապէս **Շարժա Ասրւ Տապի** ու **Տուպայ**: Ասոնք ընդհանրապէս արհեստաւորներ էին, մասնագէտներ, գործարար մարդիկ: Ոմանք մեծ յաջողութիւններ ունեցան: Ասոնք կարելորդեր կատարեցին իրենց նոր գաղութներու կազմակերպչական կեանքին մէջ: Արաբական Ծոցի քեսապի տղաքը մեծապէս օգտակար եղած են քեսապաբնակ իրենց հայրենակիցներուն, քեսապի եկեղեցական ու կրթական հաստատութիւններուն, յատ-

⁷⁵ Տե՛ս նաեւ Ուսուլմնասիրաց Միութեան հարիւրամեակի եւ Զասցեագիրքի յիսունամեակին առթիւ Միութեան հրատարակած «Քեսապն Ու քեսապին» պատկերազարդ յօդուածներու ժողովածուն, Քէքսթիր, Միչըկըն, 2011:

կապես Ուսումնասիրաց ճեմարանի եւ Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնանորոգման մէջ, մասնակցած համահայ կական ձեռնարկներուն ու ներդրումներ կատարած Յայաստանի Յանրապետութեան մէջ⁷⁶:

Գ. Հոգեւոր եւ կրթական տեսութիւն.- 1915-ի տարագրութենէն վերադարձէն ետք, 1920-ական թուականներուն, Քեսապի շրջանի **հոգեւոր եւ եկեղեցական կեանքը** շուտով կը վերագտնէ նախապատերազմեան իր վիճակը: Քեսապի հոգեւոր պետքերուն կը հոգայ Անտիոքի Կաթողիկոսական Փոխանորդ, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ Լաթաքիոյ տեսուչ վարդապետը: Վերստին կը գործեն մայր համայնքի Քեսապի եւ Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցիները եւ վերջին գիւղի Ս. Ստեփանոս մատուռը, ուր ամիսը անգամ մը կը պատարագէր Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ քահանան: Փոխադարձ համաձայնութեամբ ու Ամենայն Յայոց Գեորգ Ե. Սուրենեան Կաթողիկոսին հաւանութեամբ, 25 Ապրիլ 1929-ին Երուսաղէմի Պատրիարքարանը Սուրիա-Լիբանանի իր միւս վիճակներուն հետ Լաթաքիոյ իր թեմն ալ կը փոխանցէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Բերիոյ (Յալէպի) թեմին:

1932-ին Քեսապի շրջանը կը մտնէ նորակազմ Անտիոքի կամ Լաթաքիոյ Առաջնորդական թեմէն ներս⁷⁷: 1939-ին Աղեքսանդրէի սանճաքի Թուրքիոյ կցուելուն պատճառով տեղի հայերը կը գաղթեն եւ թեմը կը լուծուի: Սուրիոյ կցուած Քեսապի շրջանը 18-20 Դեկտեմբեր 1939-ին կայացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եպիսկոպոսական ժողովին որոշումով կը միացուի Բերիոյ թեմին⁷⁸:

Քեսապի աւետարանական համայնքը Վեր. Եղիա Ս. Քասունիի (1930-1932) եւ Վեր. Յակոբ Ծնորհօքեանի (1932-1935) օրով ներքին խռովութիւններու բուռն շրջան մը կ'ապրի: Յամայնքին մէջ դեռ 1910-էն

⁷⁶ Քուէյթի հայ գաղութի մասին տե՛ս **Յ. Զոլսպեան**, Ոսկեմատեան Քուէյթի Ազգային Վարժարանի, 1961-2011, Քուէյթ, 2011, իսկ Արաբական Միացեալ Էմիրութեանց հայ գաղութի մասին տե՛ս՝ **Շ. Աշըգեան**, Քառորդ Դար Յայերը Տուպայի եւ Յիւսիսային Էմիրութեանց Մէջ, Տուպայ, 2008:

⁷⁷ **Վ. Եպ. Տեմիրճեան**, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Յայոց Թեմերու Առաջնորդութեանց, Ա. հատոր, Անթիլիաս, 1980, էջ 319:

⁷⁸ Նոյնը, էջ 327-328; տե՛ս նաեւ «Յասկ» ամսագիր, Անթիլիաս, 1939, թիւ 11-12, էջ 175:

սկսած եւ Ազգային Միութեան շրջանին աւելի զօրացած ազգայնական հոսանք մը (դաշնակցական) կառչած կը մնար տեղւոյն առաքելական եւ աւետարանական համայնքներուն միացեալ աշխատանքի մը տեսլականին՝ գեթ կրթական մարզին մէջ: Այս հոսանքը 1933-ին երկփեղկում կը ստեղծէ համայնքին մէջ: Կը ստեղծուի ազգայնական աւետարանական հոսանք մը, որ տեր կ'ելլէ համայնքի կարգ մը շէնքերուն, կը հիմնէ Միացեալ վարժարան մը, իսկ հոգեւոր պաշտամունքները կը կատարէ նոյն եկեղեցւոյ մէջ, բայց տարբեր ժամու: Համայնքի 731 անդամէն

345-ը կ'անցնին ազգայնական հատուածին կողմը: Կացու թիւնը փրկելու համար Սուրիոյ եւ Լիբանանի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութիւնը ձեռք կը դնէ Քեսապի եկեղեցիին վրայ եւ իրաւական միջոցներով կը յաջողի վերականգնել իրեն հաւատարիմ հատուածին իշխանութիւնը: Ազգայնականներէն շատեր կը վերադառնան Առաքելական եկեղեցւոյ գիրկը⁷⁹: Նոյն հոսանքը կայնաւ գիւղերու աւետարանական համայնքներուն մէջ: Երկու պատուելիներ կը հովուեն Քեսապի, Գարատուրանի, Քէօրքիւնէի եւ Էթիզօլուքի չորս եկեղեցիները:

Ազգայնական շարժում մը ծայր կ'առնէ նաեւ Լատինու կաթողիկէ համայնքներուն մէջ: Գրիգոր-Պետրոս Ժե.Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքի ջանքերով եւ պապական հրամանով մը Լատին համայնքները կը Լուծուին ու կը միանան հայ կաթողիկէ համայնքներուն: 30-Յունիս 1946-ին Քեսապի շրջանին Լատինաց վանքերը, դպրոցներն ու կալուածները կ'անցնին Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան: Հայ կաթողիկէ համայնքը Քեսապի մէջ կը Լքէ իր հին եկեղեցին ու կը սկսի գործածել Լատինաց եկեղեցին: Հայրե-Նադարծութենէն ետք Վարի Պաղճաղազի եկեղեցին չի գործեր իբրեւ ժողովրդապետութիւն⁸⁰: Այստեղ որոշ ընտանիքներ կը վերամիանան Մայր Համայնքին:

Կրթական կեանքը մեծ վերիվայրումներ կ'ունենայ: Ազգային -

⁷⁹ **Տ. Ճ. Կրլոբեան**, Ոսկեմատեան..., Ա. հատոր, էջ 359-363; տե՛ս նաեւ «Նոր Աւետարեր», Հայ Էպ, 1928, թիւ 26, էջ 205; 1931, թիւ 5, էջ 85; թիւ 7-8 (հայատառ թրք.), էջ 143; թիւ 13, էջ 335-336; 1932, թիւ 31. 1934, թիւ 1, էջ 19:

⁸⁰ «Աւետիք» ամսագիր, Պէյրուք, 1946, թիւ 7-8, էջ 148:

Միու թեան Միացեալ վարժարանները չեն կրնար երկար գոյատեւել : 1923-ին Քեսապ կ'այցելէ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանը : Ան կը գրէ . «Քեսապ, Գարատուրան եւ շրջակայ գիւղերը եւ ագարակները, տարագրու թենէ առաջ 9000 անձերէ կը բաղկանար բնակչութիւնը, այժմ հազիւ 3500 հոգի կը հաշուեն : Յայ քահանայ, կաթոլիկ վարդապետ, լատին փաթերա եւ հայ բողոքական քարոզիչ մը կը հովուեն իրենց հօտը : Բուռ մը ժողովուրդ չորս կտոր եղած են, այնուամենայնիւ կարգ մը թղթակիցներու կամ կուսակցական մաղձոտներու մութ նկարագրութիւններուն հակառակը գտանք : Չորս յարանուանութիւնք սիրով եւ համերաշխութեամբ կ'ապրին, տիրող տարրը հայերն են : Մերայնոց մէջ դպրոցի շուրջ քիչ մը խռովութիւններ կան, ոմանք կը փախաքին դպրոցը բողոքականաց հետմիացնել, ինչպէս նախորդ երկու տարիները եւ ոմանք բաժնել կ'ուզեն, գոհ մնալով հանդերձ Միացեալ իարդիւնքէն : Մենք նկատելով որ դպրոցի բաժանումը պիտի տկարացնէ - համերաշխութիւնը, յորդորեցինք ու պատուիրեցինք չխզել միութիւնը եւ հոգ տանիլ իրենց զաւակաց բարոք զարգացման»⁸¹ :

Միացեալ վարժարանները կը լուծուին 1924-ին, ու կը վերաբացուին յարանուանական դպրոցները՝ ազգային (առաքելական), աւետարանական ու լատին-կաթողիկէ : Յարանուանական մտածողութիւնն ու շահերը կը յաղթեն⁸² :

1932-ին ազգային վարժարաններէն ոմանք կը դառնան Յ. Բ. Ը. Միութեան Նպաստընկալ Ազգային Վարժարան ու կ'անցնին միութեան տեղական մասնաճիւղերուն հսկողութեան տակ⁸³ : Ասիկա մեծ դժգոհութիւն կ'առաջացնէ Դաշնակցութեան ու մանաւանդ Ուսումնասիրաց - Միութեան շրջանակներուն մէջ : Ուսումնասիրաց Միութիւնը 1925-ին հիմնած էր Ուսումնասիրաց Երկրորդական Վարժարանը, ճիշդ այն տարին, երբ կը կազմալուծուին Ազգային Միութեան Միացեալ վարժա-

⁸¹ «Յայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 1923, թիւ 46, էջ 1459:
⁸² 1920-ական թուականներու դպրոցներուն մասին տուեալներ ունին՝ **(Անստրագիր)**, Քեսապ, «Սուրիահայ Տարեցոյց», Յալէպ, Բ. տարի, 1925, էջ 223: **Ա Այսրյանէան**, Յայ Գաղութներու Ներկայ Կացութիւնը, «Յայաստանի Կոչնակ», 1929, թիւ 3, էջ 74:
⁸³ «Յակ», 1932, թիւ 8-10, էջ 42: Տե՛ս նաեւ «Ամսօրեայ Տեղեկագիր Յայ Բարեգ. Ընդի. Միութեան Եգիպտոսի Շրջանակին», Գահիրէ, Ա. տարի, Ապրիլ 1938, էջ 37-38; Գ. տարի, Փետրուար 1940, էջ 38-39:

րանները ու կը վերաբացուին յարանուանականները: Այս դրու թեամբ Ուսումնասիրաց Երկրորդական Վարժարանը պիտի կորսնցներ իրեն հիմք ներկայացնող նախակրթարաններու ցանցը: Դաշնակցութիւնը, ինչպէս աւետարանական, այդպէս ալ ազգային վարժարաններու նմէջ այդ ուղղութեամբ քայլեր կ'առնէ: Ատոր հետեւանքը կ'ըլլայ Քեսապի աւետարանական համայնքի երկփեղկումը ու Միացեալ Վարժարանի հիմնումը՝ 1933-ին: Քայլ մը եւս առնելով՝ Միացեալ Վարժարանի կողմնակիցները կը վերադառնան Մայր Եկեղեցւոյ գիրկը: Ազգային եւ ԶԲԸՄ-ի նպաստընկալ վարժարաններ յաճախող դաշնակցական ընտանիքներու զաւակներ Միացեալ վարժարան կը տեղափոխուին: Իսկու թեան մէջ միութեան ծրագիրով առաջ ելած շարժումը փաստօրէն նոր երկփեղկում կ'առաջացնէ՝ յարանուանական հակամարտութեան կողքին աւելցնելով նաեւ կուսակցական-գաղափարական հակամարտութիւնը:

Ուսումնասիրաց Երկրորդական Վարժարանը 1936-ին կը կորսնցնէ իր վերի կարգերը ու կը վերածուի միջնակարգ վարժարանի, 1938-ին կը կցուի Միացեալ Վարժարանին: Ուսումնասիրաց-Միացեալ Վարժարանը յետագային կը վերածուի նախակրթարանի:

1940-ին շրջանին մէջ կը գործեն 26 նախակրթարաններ եւ մանկապարտէզներ կամ ծաղկոցներ՝ 1280 երկսեռ աշակերտներով: Ասոնք կը մտնէին աւետարանական, ազգային, ԶԲԸՄ-ի ազգային-նպաստընկալ, Լատինաց-կաթողիկէ, Միացեալ-Ուսումնասիրաց վարժարաններու ցանցերուն մէջ:

Յետ հայրենադարձութեան, 1950-ին, շրջանը ունի 12 դպրոց՝ ազգային, աւետարանական, ԶԲԸՄ-ի նպաստընկալ ու կաթողիկէ:

Միջնակարգ-Երկրորդական դպրոց ունենալու անհրաժեշտութիւնը չափազանց մեծ է: Այդ նպատակով ամեն տարի շուրջ յիսուն աշակերտ Քեսապէն կը հեռանար Լաթաքիա ու Զալէպ, Լիբանան ու Կիպրոս: Յարանուանական ու գաղափարական հիմունքներով գործող նախակրթարանները այդ ուղղութեամբ համագործակցելու եզրեր չէին գտներ: Արդարեւ, Բերիոյ Թեմի Քաղաքական ժողովը 18 Նոյեմբեր 1959-ի նիստին Քեսապի հայ համայնքէն

իրեն յղուած այսպիսի հարց մը կը քննէ: Կը պատասխանուի. «Քեսապի մեր վարժարանները ըստ առաջնոյն շարունակէն պահել նախկին գոյակիճակը, մենք սկզբունքով հակառակ ենք խնդրոյ առարկայ չորս վարժարաններու միացման գաղափարին»⁸⁴:

1965-ին Քեսապի մէջ կը հիմնուի պետական միջնակարգ վարժարան: 1977-ին կը վերածուի և ընդունուի Երկրորդական վարժարանի: Աշակերտութեան 85 տոկոսը տեղացի հայեր են: Ան մեծ բարիք մը եղաւ այն իմաստով, որ տեղւոյն նախակրթարաններէ շրջանաւարտ աշակերտ-աշակերտուհիները հոն կրցան շարունակել իրենց ուսումը, մասնակցիլ պրովէի (9-րդ դասարան) եւ պաքալորիայի (12-րդ դասարան) պետական քննութեանց: Այս դպրոցը մասամբ կասեցուց գլխաւորաբար ուսման նկատառումներով քեսապի աշակերտներու արտահոսքը կամ ամբողջ ընտանիքով տեղափոխութիւնը Լաթաքիա, Յալէպ, Պէյրութ կամ այլուր: Այսուհանդերձ պետական վարժարանը չէր գոհացներ ծնողները, որովհետեւ հոն հայերէնի ուսուցում չկար: Այդ իսկ պատճառով ոմանք իրենց զաւակները դրկեցին Յալէպ՝ միջնակարգ-երկրորդական ուսում ստանալու համար Ազգ. Քարէն Եփփէ ու Կիլիկեան ճեմարաններուն եւ ՅԲԸՄ-ի Լազար Նաճարեան Վարժարանին մէջ: Ասիկա ծանր բեռ էր ծնողներուն համար:

1970-ական թուականներուն գիւղերը կ'ուսնենան ինքնաշարժի բանուկ ճամբաներ, իսկ Քեսապի վարժարանները՝ մէկական ինքնաշարժ: 1981-ին կը փակուին գիւղական վերջին դպրոցները՝ Գարատուրանի, Էքիզօլուքի եւ Քէօրքիլէի աւետարանական մանկապարտէզները: Անկէ ետք եւ մինչեւ այսօր ամբողջ շրջանին համար Քեսապի մէջ կը գործեն մէկական ազգային, աւետարանական եւ կաթողիկէ նախակրթարաններ: 1980-ական թուականներուն աւետարանական եւ ազգային վարժարանները առանձնաբար ունին 85-100 աշակերտ եւ 8-10 ուսուցիչ-ուսուցչուհի, իսկ կաթողիկէ վարժարանը՝ 40-50 աշակերտ եւ 4-5 ուսուցիչ-ուսուցչուհի:

1990-ական թուականներուն տեղւոյն Ուսող մնասիրաց-Միացեալ

⁸⁴ Բերիոյ Թեմի Առաջնորդարան, Քաղաքական ժողովոյ Տոմար, 18 Նոյեմբեր 1959, օրակարգ 2:

նախակրթարանը աշակերտութեան թիւի մագլցում մը կ'ունենայ, մինչ միւս երկու նախակրթարանները կը կորսնցնեն իրենց հայ աշակերտութեան կարելոր մէկ թիւը ու տեղ կու տան տեղւոյն արաբ ընտանիքներու դպրոցականներուն:

2003-ին պարտադիր կրթութիւնը իննամեայ դարձնելու պետական օրէնքէն օգտուելով՝ Ուսումնասիրաց-Միացեալ Վարժարանը ունեցաւ միջնակարգ բաժին, իսկ 2005-ին՝ երկրորդական բաժին: Վերջին բաժինը 2008-ին տուաւ իր առաջին շրջանաւարտութիւնը: Բոլոր համայնքները, կեդրոնները ու ժողովուրդը ողջունեցին բացումը Ուսումնասիրաց-Միացեալ Ճեմարանին, ուր, նախակրթարանէ ետք, վեց տարի եւս հայ եցի դաստիարակութիւն պիտի ապահովուէր քեսապի դպրոցականին: Իրականացած էր հարիւրամեայ երազը:

* * *

1920-ական թուականներուն Քեսապի հայոց կեանքին մէջ բուռն եղաւ կուսակցական գործունէութիւնը: Դաշնակցութիւնը կը վերակազմուի 1921-ին ու կը պաշտպանէ Ազգային Միութեան եւ Ուսումնասիրացի գործունէութիւնները, իսկ Ազգային Միութեան կազմալուծումէն ետք կը շարունակէ պաշտպանել Միացեալ վարժարաններու գաղափարը: Ամբօրէն կազմակերպուած կուսակցութիւն է: 337 Ուսանողական Միութիւնը, հիմնուած 1925-ին, գաղափարական ու մշակութային եռուն գործունէութիւն կ'ունենայ: Այժմ կը գործէ Սուրիահայ Երիտասարդական Միութեան (ՍԵՄ) մասնաճիւղը:

Դաշնակցութեան կողմէ կը հովանաւորուէր Ուսումնասիրաց Տիկնանց Միութիւնը, հիմնուած՝ 1926-ին: 1932-ին ան կը լուծուի Սուրիահայ Օգնութեան Խաչի (ՍՕԽ) Քեսապի մասնաճիւղին մէջ: Մինչեւ 1934 մասնաճիւղեր կ'ունենայ Գարատուրանի եւ Քէօր-քիւնէի մէջ: ՍՕԽ-ը գլխաւորաբար բարեսիրական նպատակներ կը հետապնդէ ու նպաստներ կը յատկացնէ Միացեալ վարժարաններուն: 1934-ին 3այ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (ՅՄԸՄ) իր մասնաճիւղը կ'ունենայ - Քեսապի մէջ, կը կազմուի սկաւառներու եւ արեւոյշներու կազմեր: 3ամազգայինի Քեսապի 3ամօ Օհանջանեան մասնաճիւղը կը հիմնուի 1988-ին: Դաշնակցութեան հովանին վայելող ու անոր ազդեցութեան -

ուլորտները ընդարձակող այս բուլոր միութիւնները Քեսապի մէջ կ'օգտագործեն ժողովրդային Տուներ (Գրադասանա), իսկ գիւղական - շրջանակներու մէջ՝ Միացեալ վարժարաններու շէնքերը:

Հայ կական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՅԲԸՄ) Քեսապի մասնաճիւղը կը հիմնուի 1924-ին: 1932-ին շրջանի ազգային վարժարանները կը դառնան ՅԲԸՄ-ի նպաստընկալ վարժարաններ: Միութիւնը մասնաճիւղ կը հիմնէ նաեւ Գարատուրանի մէջ: Կ'ուսենայ նաեւ տիկնանց յանձնախումբեր: Մինչեւ 1964՝ կը գործէ մեծ եռանդով: Անկէ ետք գործած է պարբերաբար:

Հնչակեան կուսակցութիւնը կը վերակազմուի 1926-ին ու մինչեւ հայրենադարձութիւն քանի մը մասնաճիւղեր կ'ուսենայ Սել Աղբիւրի, Վարի Պաղճաղագի, Գարատուրանի, Քեսապի եւ Տուգաղաճի մէջ: Կ'ուսենայ ուսանողական եւ կանանց միութիւններ, ինչպէս «Կայծակ» ուսանողական Միութիւնը, «Ծաբէ» եւ «Մարօ» կանանց մասնաճիւղերը: Հնչակեանները եւ ՅԲԸՄ-ի մասնաճիւղերը իբրեւ կեդրոն գործածած են շրջանի Ազգային եւ ՅԲԸՄ-ի նպաստընկալ վարժարանները:

Ռամկավար Ազատական եւ Համայնավար կուսակցութիւնները Քեսապի մէջ կազմակերպուած մասնաճիւղեր չեն կրցած ուսենալ: Համայնավարները թիւի մեծ մազլցում մը կ'ուսենան 1946-1947-ի հայրենադարձութեան տարիներուն:

Սուրիոյ մէջ հայ ազգային կուսակցութիւնները 1960-ական թուականներէն սկսեալ կը գործեն անպաշտօն կերպով: Մարզական, մշակութային, բարեսիրական եւ այլ միութիւնները կը գործեն եկեղեցւոյ հովանիին տակ: Քեսապի մէջ եւս միութիւնները կամ միութիւններու մասնաճիւղերը կուսակցութեանց եւ յարանուանութեանց կողմէ ստեղծուած ըլլալով՝ ազգային, կրթական, բարեսիրական, մշակութային եւ մարզական հե-տաքրքրութիւններ կը գոհացնեն ու հաւաքական կեանք կը ստեղծեն: Քեսապը Սփիւռքի գաղութներուն մէկ մանրանկարն էր արդէն:

Դ. Քեսապի վերջին աղետը եւ անոր հետեւ անքները. 2011-ի Մարտին բռնկեցան Սուրիոյ քաղաքացիական կռիւները: Սուրիական տագնապը շուտով թեւակոխեց անօրինակ պատերազմի մը շրջանը: Ռազմական

թեժ շրջանները հետզհետե՛ ընդարձակուեցան, անապահովութիւնը տիրեց ամբողջ երկրի տարածքին վրայ: «Արաբական գարունը», ինչ-պէս ամէն տեղ, Սուրիոյ մէջ ալ չէր կրնար ողբերգութեան չվերածուիլ:

Ընդդիմադիրներու Ազատ Բանակի հրամանատարութիւնը կը գործէր Թուրքիոյ մէջ: Թուրքիա ուղղակի սուրիական սահմանին մօտիկ ստեղծած էր գաղթականներ սուրիացի փախստականներու համար: Թուրքիակը պահանջէր ազատգօտի մը ստեղծել Սուրիոյ ամբողջ հիւսիսային սահմանին վրայ՝ իբր իր հողերուն մէջ ապաստանած գաղթականները հոն պատսպարելու համար:

Քեսապ-Լաթաքիա ճամբուն արեւելեան կողմը Պայիրի շրջանն է, իսկ արեւմուտքը, մինչեւ ծովեզերք՝ Պուճազի շրջանը: Պուճազէն (ներկայ իս՝ Պասիթի շրջան) հիւսիս, անոր եւ Թուրքիոյ սահմանին միջեւ սեղմուած է Քեսապի հայկական շրջանը: Պայիր ու Պուճազ մեծամասնութեամբ թուրքմէն գիւղերու շրջաններ են՝ ծովամերձ տասնեակ մը ալ եւ ի գիւղերու բացառութեամբ, ու կը կոչուին ճեպէլ Թուրքմէն (Թուրքմէններու լեռ):

2012-ի Յուլիսին Վարի Գասթալի գրաւումէն անմիջապէս ետք ընդդիմադիրներու ձեռքը անցան Պայիրի շրջանի թուրքմէնական գիւղերը: Սթանպուլի մէջ կը խօսուէր թուրքմէնական շրջանի կամ ճեպէլ Թուրքմէնի ինքնավարութեան մասին: Տեղեկատուական աղբիւրներու մէջ յաճախ կը լսուէր Թուրքմէնական Ազատ Բանակի մասին, «ինքնավար» շրջանի դրօշակը կ'երեւէր համացանցի էջերուն վրայ: Անոնք Ռապիաաւ անը հռչակած էին իրենց մայրաքաղաքը: Թուրքմէնները յստակօրէն հակապետական դիրք ճշդած էին: Իրենց թիկունքին Թուրքիոյ սահմանը բաց էր իրենց, ինչպէս նաեւ Սուրիաներխուժող տարազգի ծայրայեղական իսլամ խմբաւորումներու համար:

Թուրքմէնական Ինքնավար Յանրապետութեան մասին յայտարարութիւնները, որքան ալ անիրագործելի ու փքուն ըլլային, կը մտահոգէին Քեսապի հայերը, որովհետեւ այդ տրագը կը հովանաւորուէր Թուրքիոյ կողմէ, իսկ Քեսապի շրջանը կ'իյնար այդ երեւակայական քարտեզի սահմաններէն ներս: Ասիկա հին տրագ մըն էր՝ Հաթայի Պե-

տու թեան ասեն, Ալեքսանդրէթի սանճաքի ճակատագիրը սեղանի վրայ դրուած օրերուն: Լաթաքիոյ նահանգի հիւսիսային շրջաններու - թուրքմէնները թուրքիոյ կազմին մէջ մտնելու եւ թուրք-սուրիական սահմանը շատաւելի հարաւ առնելու մասին կը խօսէին: Այդ ծրագիրը ձախողեցաւ Քեսապի շնորհիւ, ու հիմա, Սուրիան քայքայելու այս պատեհ առիթին՝ նոյն երազներ, որ առաջ կը քաշուէր:

Պայիրի թուրքմէն գիւղերու անկումէն ետք՝ Քեսապ-Լաթաքիա ճամբան, մինչեւ Պասիթի խաչմերուկը, բնականաբար կը դառնար սահման մը պետական ուժերու եւ ընդդիմադիրներու միջեւ: Որեւէ պահու ընդդիմադիրները անկէ կրնային ներխուժել Պասիթ (նախկին՝ - Պուճագի շրջան), ուր, բնականաբար, գրկաբաց պիտի ընդունուէին թուրքմէնական գիւղերուն կողմէ եւ հասնէին մինչեւ ծովափ՝ ներգրաւելով Քեսապի շրջանին կից ծովամերձ Ֆագը Յասան եւ Պետրուսիէ գիւղերը: Քեսապպիտի յայտնուէր ամբողջական շրջափակման մէջ:

8 Օգոստոս 2012-ին վտանգը Քեսապի աւելի մօտեցաւ: Այդ գիշեր - յարձակում կ'ըլլայ Տուզադաճ գիւղի սահմանին վրայ: Նոյն օրը ընդդիմադիրները կը գրաւեն նաեւ Պուճագի շրջանի կեդրոն Գասթալ Մասֆ գիւղաքաղաքը: Սկսան պատերազմական ահեղ գործողութիւններ: Բանակը խիստ վարուեցաւ: 8 Օգոստոս 2012-ին փակուեցաւ Տուզադաճի եւ Գասթալ Մասֆի մէջէն անցնող միջազգային ճամբան: - Քեսապցիք սկսան օգտագործել Քեսապ-Պասիթ-Լաթաքիա աւելի երկար ճամբան, միակելքը:

Քեսապ յաճախ հոս-հոն ինկած հրթիռներու ցնցումներով կ'արթննար, բոլորը կը զգային անխուսափելին: Բնիկներէ կազմուեցան գիւղերու մուտքերը հսկող խմբակներ՝ Գարատուրան, Գարատաշ, Քեսապ, Սել Աղբիւր, Ներքի Գիւղ, Չինար, Քէօրքիւնէ, Տուզադաճ, Էքիզօլուք, Պաղճաղազ բնակավայրերուն մէջ: Գլխաւոր վախը թուրքիոյ կողմէն կատարուելիք ներխուժում մըն էր, ու այդ պատճառով՝ տեղացի զինեալներու պահած դիրքերը՝ թուրքիայէն եկող կածաններու եւ ճամբաներու վրան էին:

21 Մարտ 2014, Ուրբաթ առաւօտ ժամը 5:45ին, Քեսապի շրջանը

Թուրքիոյ կողմէն՝ հիւսիսէն ու արեւելքէն եւ ընդդիմադիրներու ձեռքը անցած Պայիրի կողմէն կը սկսի հրթիռակոծուիլ ու ռմբակոծուիլ: Յրասանդեր ու հրթիռներ կը տեղան Սել Ադբիւրի, Քեսապի, Չինարի, Քէօրքիւնէի եւ Տուզադաճի կողմերը: Կը թուէր, թէ պաշտպանուած անկիւն չէր մնացած շրջանին մէջ: Արկերն ու հրթիռները կը պայթէին տուներուն մօտիկ, բնակավայրերու շրջակայ պարտէզներուն ու անտառներուն մէջ: Ասոնց կ'ընկերանայ դիպուկահար արծակազէններու ստեղծած սարսափը:

Քեսապի վրայ 21 Մարտին յարձակող ահաբեկիչներուն ակնարկելով՝ սուրիական պաշտօնական աղբիւրները «մեծ թիւով» կը գնահատէին անոնց քանակը: Կէսօրին լսուած լուրերէն կը խօսուէր ճապհաթ Նուսրայի, Շամալ-Իսլամ եւ Անսարալ-Շամարմատական ծայրայեղական շարժումներու միասնական գործողութեան մասին: Անոնք իրենց այդ ներխուժումը կը կոչէին «Մարաքաթալ-Անֆալ» կամ «Ղազուլաթալ-Անֆալ»: Սա Գուրանին մէջ յիշատակուող ճակատամարտի մը անունն է, որ փոխանուանաբար գործածեցին Քեսապի գործողութեան համար: Բառացի կը նշանակէ «Արդարացի կամ Սրբազան Աւարման ճակատամարտկամ ներխուժում»: Թշնամիները կը միտէին, ըստիրենց յայտարարութեան, հիւսիսէն մտնելով հասնիլ Լաթաքիա: Չինուորական աղբիւրներ կը յայտնէին, թէ այս գործողութեան ղեկավարը թուրք-զօրավար մըն է: Պաշտօնի քարահանքի մօտի եւ Թեքնեճոքի թրքական սահմանապահ զօրանոցներէն մինչեւ սահմանադուռը երկարող այս գիծին վրայ ամէն շարժում միայն թրքական բանակի հրամանով, հսկողութեամբ ու առաջնորդութեամբ կրնար ըլլալ, իսկ անոր ծանր հրետանին մասնակցութիւնը պարզ աչքով կ'երեւէր:

Շրջանի ամբողջ արեւելեան տարածքը երեք կողմերէն կրակի հովանիի տակ առած այս գործողութիւնը խուճապի կը մատնէ բոլոր բնակիչները, ու ամէն ոք փախուստի կը դիմէ դէպի արեւմուտք: Փախուստի միակ ճամբան Էքիզօլուքէն կ'անցներ: Փախուստի խուճապը շուտով կը սկսի ամէն տեղ, գրեթէ բոլոր գիւղերուն մէջ միաժամանակ: Ամէն ոք իր տնեցիները հաւաքած փախուստի կը դիմէ՝ ինչով որ պատահի, սեփական ինքնաշարժ, թրաթոր, մոթորսիքլէթ, փոքր ու մեծ

բեռնատար: Մարդիկ, այ դ պահուեն, ոչ մէկ բան վերցնելու մասին կր-
ցած էին մտածել: Ոմանք տունէն դուրս նետուած էին առանց նոյնիս-
կ անձնական փաստաթուղթերու եւ գումարի: Ոմանք կարճ ժամանակի
մը համար տունէն հեռանալու հարկադրանք մը կը նկատէին ասիկա, -
կարծելով որ շուտով կը խաղաղի ամեն բան ու իրենք տուն կը վերադ-
առնան: Փախուստը կը կատարուէր սարսափելի հրթիռակոծումի ու
գնդակներու տարափին տակ:

Բնակչութեան մեծամասնութեան փախուստը եւ Էքիզօլուքէն ա-
նցնիլը քառասուն րոպէի մէջ եղած վերջացած էր արդէն: Գիւղերէն
Էքիզօլուք հասած ժողովուրդին փախուստը ինքնեկ էր, խուճապայի-
ն: Փախուստի անձնական միջոցներ չուներ ուներ հետիոտն ճամբայ ե-
լած էին: Ծերեր, անկարներ ու անտեղեակներ տունը մնացած էին:

Հայ եւ ալ եւ ի դիրքապահները միայն Սեւ Աղբիւրի մօտ, թրքական
գօրանոցին մօտիկ, առճակատում մը կ'ունենան թշնամիին հետ:
Կէսօրուան մօտ տեղ կը հասնին զինուորական ջոկատները:
Թուրքիոյ կողմէն ու Պայիրի շրջանէն ներխուժում չի նկատուիր:

Շաբաթ կէսօրէ ետք ծանր հրետանին հռնդաց: Ծուտով բուռն կ-
ռիւներ սկսան: Ամենէն առաջ ինկաւ սահմանադուռը, բախումները -
շուտով տեղափոխուեցան կեդրոնական շրջաններ՝ Քեսապի, Չինարի -
մատոյցներուն վրայ, Քէօրքիւնէի առջեւ. սակը նշանակէր, որ շրջա-
նի արեւելեան կէսը՝ Սեւ Աղբիւրը, Ներքի Գիւղը, Տուգաղաճը, թշնա-
միի հակակշիռին տակ էր: Թուրքիոյ գործը վերջացած կը թուէր՝ ը-
նդդիմադիրները ներս մղելով: Սուրիացի զինուորին արիւնը կը հո-
սէր Քեսապի հողին վրայ: Թշնամին մեծ արագութեամբ կը մտնէր
հայ կական պարպուած բնակավայրերը:

Կիրակի օր թշնամին ներխուժեց նաեւ Գարատուրան: Սուրիական
գօրքերը կարողացան թշնամին կասեցնել հայ կական շրջանի
հարաւային սահմանին վրայ եւ արգելք ըլլալ Պուճազի կամ Պասիթի
շրջանի գրաման:

Սակայն ամբողջ Քեսապը հայ աթափուած էր: Մարտ 23-ի երեկոյ եան
յայ տնի դարձաւ, որ Քեսապ մնացած են 35 հայեր՝ մեծ մասով ծերեր
ու անկարներ: Երկու երիտասարդներ կը սպաննուին տեղւոյն վրայ: -

Չորս ծերունի կանանց ու այրերու կ'արտոնուի երթալ Յալէայու Լաթաքիա: 26 հոգի՝ ծերունիներ ու անկարներ, կը տարուին Մուսալեմ՝ ՎազըՖ գիւղը: Յոն անոնք կը պատսպարուին տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովանիին տակ, կը վայելեն ՎազըՖի հայոց գուրգուրոտ վերաբերմունքը: Քեսապ կը մնան երեք տարեցներ:

Պարզ էր, որ թէ՛ ընդդիմադիրները եւ թէ՛ թրքական իշխանութիւնները այս ծերերու պարագան պիտի օգտագործէին իրենց նպատակներուն համար: Ընդդիմադիրները անոնց խօսքը պիտի օգտագործէին հակապետական նպատակներով, իսկ Թուրքիան՝ իր «մարդասիրական» արարքը ցուցադրելով: Այդպէս ալ ըրին: Սակայն Թուրքիոյ կարգ մը լրատու գործակալութիւններ, որոշ ընդդիմադիրներ ու մանաւանդ թրքահայ մամուլն ու երեւանի «Սիվիլնէթ» լրատու գործակալութիւնը կարողացան ճշմարտութեան արձագանգել:

Լաթաքիոյ մէջ փախստականներուն մեծամասնութեան համար մէկ հասցէ կար. հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակը՝ Յոգետունը (տեղւոյն արաբներուն խօսուածքով՝ Քետունը): Ժողովուրդին մեծամասնութիւնը խռնուած կը մնար հայոց եկեղեցւոյ ելկից՝ Ազգային Նահատակաց Վարժարանի շրջափակին մէջ:

Գաղթականները տեղաւորելու եւ օգնութիւն կազմակերպելու աշխատանքին գլուխն անցած Քեսապի եւ Լաթաքիոյ Շտապ Օգնութեան Մարմինները համագործակցաբար աշխատեցան: Շուտով եկեղեցի հասան Լաթաքիոյ պետական, նահանգային, մարդասիրական, կրօնական, բժշկական ու ապահովական հաստատութիւններու ներկայացուցիչները ու շտապ կարգով կազմակերպեցին փախստականներուն օգնութեան հասնելու գործը:

Քեսապի (բնիկ եւ ոչ բնիկ հայ) գաղթականներու թիւը, ըստ Շտապ Օգնութեան հրապարակած առաջին տուեալներուն՝ 371 ընտանիք էր՝ 1359 անձով⁸⁵:

Ապրիլի սկիզբին սուրիական բանակը վերագտած էր ինքզինք ու

⁸⁵ Ազգային Առաջնորդարան Բերիոյ Թեմին, Սուրիահայութեան Տագնապը եւ Քեսապահայութեան Տեղահանութիւնը - Ամփոփ Տեղեկագիր, «Յասկ», թիւ 5, Մայիս, 2014, էջ 484:

Քեսապի տարածքը վերագրաւ ել ու գործողութիւններու անցած: Սուրիական բանակը յամառ կռիւներէ ետք ձեռք կ'անցընէ հարաւի բարձունքները՝ Գլղըրի գագաթը, Սելտրանը ու Չալման: Միւս կողմէ, բանակը ծովէն ելլելով մտաւ Գարատուրան, վերագրաւ եւ ծովափին գտնուող ծովայիններու եւ ոստիկաններու երկու յենակետերը ու բարձրանալով վեր՝ հասաւ մինչեւ Սուլեան թաղ: Ծանր բախումներ եղան կեդրոնական թաղին՝ երկու եկեղեցիներու գծին վրայ, ուր ամրացած էին ընդդիմադիրները:

Յուսիսի երկրորդ շաբթունս բանակային զօրքերը անցան նոր-յարձակման: Ծաբաթ, 16 յուսիսի գիշեր բանակը առաջ կը շարժի եւ առաւօտուն, 15 Յուսիսին, կը հասնի Քեսապի հրապարակը եւ Սուրիոյ դրօշակը կը բարձրացնէ քաղաքապետարանի շէնքին վրայ: Ճապիաթ Նուսրայի օգնութեան կանչերը անպատասխան կը մնան, ու ճարահատ՝ կը նահանջէ: «Ալ-Սաֆիր»ի թղթակիցին ընդդիմադիր մը կը յայտնէ, թէ «Քեսապի ճակատի արագ անկումին պատճառներուն մասին պատասխան չունի»:

Սուրիոյ բանակի ընդհանուր հրամանատարութիւնը կը հրապարակէ հաղորդագրութիւն մը՝ յայտարարելով, թէ «Քեսապ քաղաքին մէջ ապահովութիւնն ու կայունութիւնը վերականգնուած են»: Բանակը ականներ կը վնասազերծէ, զինապահեստներ կը պայթեցնէ: Իբրեւ նախապատրաստութիւն քեսապցիներու տունդարձին, բանակին հետ Քեսապ կը մտնեն ենթակառոյցներու՝ ել եկտրականութեան, ջուրի եւ հեռաձայնի գիծերն ու խողովակները վերականգնող խմբակները⁸⁶:

Քեսապցիներ կը վերադառնան տուն, ուր աւելի կորուստու աւեր կը գտնեն, քան կրնային երեւակայել ..., քան՝ ինչ որ կը ներկայացնէր մամուլը: Քեսապի երեք, Գարատուրանի երկու եւ Էքիզօլուքի մէկ եկեղեցիները պղծուած ու ներքնապէս քարուքանդ վիճակ ունէին, կարգ մը գերեզմանատուներու մէջ խաչքարեր ու տապանաքարեր մէկիկ-մէկիկ ջարդուեր էին: Մայր եկեղեցւոյ բակին մէջ գետեղուած Ամենայն Յայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի պրոնզածոյլ կիսանդրին տ-

⁸⁶ «Ազդակ», 16 Յուսիս 2014, էջ 1:

արուած էր: Կաթողիկէ համայնքի վանքին մէջ նոր բացուած «Կիլիկիա» ազգագրական թանգարանի իրերէն ոմանք գողցուած, ոմանք ջարդուած էին: Վանքին բակին մէջ գտնուող միփթարեան միաբան Յայր Յամագասպ Գլընճեանի գերեզմանը բացուած ու աճիւնները դուրս-թափուած էին: Քեսապի հրապարակի շէնքերը, «Անմար» պանդոկը, խաւով թնետրու շարքերը հրոյ ճարակ եղած էին, Միսաբեան Մշակութային Տան 1910-ին կառուցուած պատմական շէնքը՝ նոյնպէս, բոլոր խաւով թնետրը, արհեստանոցները, պանդոկները, ճաշարանները պարպուած էին, կարասին՝ մեծ մասով ջարդուած: Յատկապէս մեծ էր տուներուն վնասը: Տուները մէկիկ-մէկիկ բացուած ու կողոպտուած էին առաւել կամ նուազ չափով, յատկապէս ելեկտրական սարքերը, գիւղատնտեսական բոլոր գործիքները՝ թրաքթորներ, դեղող գործիքներ, ելեկտրածին շարժիչներ, ելեկտրական սղոցներ, հնձող գործիքներ, սարքեր, պղնձեայ իրեր ու ամաններ, համակարգիչներ, տպիչներ, լուացքի մեքենաներ, սառնարաններ, հեռատեսիլներ...: Գողօնին մէկ մասը գտնուեցաւ ճամբաներուն վրայ կամ ամբարուած՝ որոշ տուներու մէջ: Աւարառուները չէին կրցած փախուստի խուճապին մէջ վերցնել զանոնք: Կապուտին մեծ մասը ծախուած էր հրապարակաւ՝ Օրտուի մէջ:

Տուները մեծ մասով անբնակելի էին: Օրերու աշխատանք պէտք էր զանոնք մաքրել ու, կոտրտուած կարասին նորոգել ու, աղտեղութիւնները մաքրել ու եւ մանաւանդ՝ գրեթէ բոլոր տուներու, հասարակական շէնքերու եւ սրբավայրերու պատերուն վրայ արձանագրուած արաբատառ գրութիւնները՝ խմբաւորու մներու անուններ, սպառնալիքներ, հայ հոյանք, վերացնել ու աշխատանքը: Ենթակառոյցներու՝ ելեկտրականութեան, ջուրի, հեռածայնի, վերականգման աշխատանքները մէկ օրէն միւսը ըլլալիք բաներ չէին:

Վերականգնումը տակաւ առ տակաւ զգալի կը դառնայ, սակայն հոգեբանական գետնի վրայ աւերածութիւնները աւելի մեծ կ'երեւին: Ընտանիքներու երիտասարդ անդամները մեծ մասով դուրսն են, ու մնացեալներն ալ դուրս ելլելու ճամբաներ կ'որոնեն: Միւս կողմէ՝ կը մտածեն, որ եղած նպաստներով կարելի չէ շուտով վերականգնել

իրենց տունն ու տնտեսութիւնը առաջուն պէս: Քաղաքական ու տնտեսական պայմանները կը շարունակուին նոյնը մնալ ու թերեւս աւելի վատթարանան: Մանաւանդ նոյնը կը մնան թուրքիոյ նկրտումները հիւսիսային Սուրիոյ, մասնաւորաբար Յալէպի եւ Իտլիպի նահանգներուն նկատմամբ: Լաթաքիոյ հիւսիսը, հակառակ սուրիական բանակին որոշակի յաղթանակներուն ու ռուսական զինուժի հարուածներուն՝ Պայիրը մեծ մասով տակաւին ուղղակի թուրքիոյ կողմէ ղեկավարուող թուրքմէն զօրքերու հսկողութեան տակ է եւ ոչ ոք կրնայ հաւաստիացնել, որ թուրքմէնները հրաժարած են թուրքմէնական շրջանի իրենց ինքնավարութեան երազէն: Սակը նշանակէ, որ Քեսապի վրայ վտանգը կը շարունակէ գոյութիւն ունենալ: Ներխուժման նոր ալիք մը կրնայ կրկնուիլ, բոլոր տուեալները կան իրական գետնի վրայ: Ոմանք ճամարուկները դրած են դրան ետին:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՆԻՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ

3.1.- ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա- Հողն ու ջուրը.- Երկրագործությունը դժուար, բայց հիմնական զբաղում եղած է Քեսապի մեջ, որովհետև շրջանը գրեթե ամբողջապես լեռնային շրջան մըն է, իրարու այնքան մօտիկ ու իրարմէ ճիւղաւորուած նեղ լեռնաշղթաներու ամբողջութիւն մը, ուր քնդարձակ հարթավայրեր գրեթէ չկան: Գետինը ամէն տեղ ունի մեղմ ու շատ անելի սուր ու քարքարոտ թեքութիւններ: Ձորերու նման լեռներուն վրայ եղած հարթութիւնները փոքրիկ տարածութիւններ են, որոնք ժողովուրդը **դուօյր** (դոյր՝ հարթ գետին) կը կոչէ:

Հողագործութեան զարգացման միւս գլխաւոր անպատեհութիւնն ալ անտառն է: Հարաւարելելեան շրջանին մէջ անտառային գլխաւոր ծառը մայրին է, իսկ միւս կողմերը՝ դափնին, փշոտ կաղնին, խոզակաղնին (խըզիրա), ծրդին, բելեկնին, ուռնին, խնկենին եւ բազմատեսակ ծառեր, թուփեր ու մացառներ: Գիւղացին իր արտը տարին մէկ-երկու անգամ պարտաւոր է մաքրել օտար բոյսերէն, մոլախտերէն, երելան ելած քարերէն ու պաշտպանել զայն հեղեղներէն ու մաշումէն:

Քեսապի շրջանին մեծ մասը կը կազմէին անտառային գետիններն ու արօտավայրերը (**արագի մէթրուքէ**), որոնք կը պատկանէին սուլթանին եւ առուծախի ենթակայ չէին: Բնակչութեան աճին հետ գիւղացին ստիպողաբար պիտի իւրացներ անտառային գօտիներն ու արօտավայրերը եւ զանոնք վերածէր մշակելի հողերու: Կապալ առուներ որոշ կապալով պետութենէն ձեռք կը բերէին անտառահատման իրաւունք՝ փայտի, ածուխի, տախտակի ու գերանի արդիւնաբերութեան համար: Այս կապալ առուները գործը յաջողութեամբ առաջ տանելու համար (գործաւորներ գտնել, ատաղձը տեղափոխել, վերակացու ըլլալ) տեղացի ազդեցիկ հայերու աջակցութիւնը կը փնտռէին: Հայոց գլխաւոր շահը այն կ'ըլլար, որ բացատր կը ձեւակերպուէր իբրեւ խոպան հող (**արագի մէվաթ**), գորմշակելու եւ օգտագործելու համար հայրը **թախու** (սեփականութեան փաստաթուղթ) ձեռք կը ձգէր: Ասիկա պայ-

մանական սեփականությունները: Թափուլի համար միանուագ կը վճարու-
ւ էր սահմանուած գումարը: Եթէ երեք տարի հողը անմշակ մնար, ապա
թափուլին իրաւունքը կը կորսուէր եւ հողը կրնար ուրիշին սեփակա-
նութիւնը դառնալ:

Խոպանը ձեռք ձգած կալուածատէրը զայն օգտագործելի կը դա-
րձնէր իր ընտանիքին աշխատող ձեռքերով կամ ալ աշխատավարձով աշ-
խատողներով: Կրնար վարձակալութեան (**մուքապա**) տալ: Այս պարագային, ուրիշ գիւղացիներ հողը օգտագործելի ու մշակելի դարձնե-
լէ ետք, ըստ համաձայնութեան՝ կ'առնէին բերքին կէսը, մէկ երրոր-
դը, քառորդը կամ աւելի քիչ: Կամ ալ՝ որոշ պայմանաժամով հողը կը
վարէին **կիսրարութեամբ**, ապա կը յանձնէին տիրոջ: Նոր արտեր բանա-
լու աշխատանքին մէջ աւելի տարածուած էր հողաբաժին ստանալու կ-
երպը: Այսպէս է, որ գրեթէ բոլոր գիւղացիները արտեր կ'ունենային
նախկին արօտավայրերուն ու անտառներուն մէջ:

Մինչեւ 19-րդ դարուն վերջը հողեր բացուած են գրեթէ ամեն տե-
ղ, ուր որ հնարաւոր էր սեղանաչափ արտմը գոյացնել, ափմը ցորեն
ցանելու չափկտոր մը հող հայթայթել՝ ծովադէմիլ եռնալ անջերու-
ն, հեռաւոր լեռներուն վրայ, ձորերուն մէջ, մինչեւ իսկ Սելտրան
լեռան գագաթին ու Կասիոսի գագաթամերձ լանջերուն վրայ: Գրեթէ
ամբողջապէս լերկացած են նախկին անտառային գօտիները:

1947-ի հայրենադարձութենէն ետք հետզհետէ լքուեցան այդ հո-
ղերը: Յիսունական թուականներուն դեռ կ'երեւէին հեռաւոր ու
բարձր տեղերուն արտերուն պատերը: Հիմա անտառն ու թփուտները կր-
կին ծածկած են խոպան ձգուած տարածութիւնները, ուրկէ անցնիլ
իսկ հնարաւոր չէ այլեւս:

Նոր գետին բանալը (**գիսէն իբուօց**) չափազանց դժուար աշխա-
տանք էր: Այդ աշխատանքը կը կոչուէր **սէ'քնիլ** (տականել): Ասիկա գե-
տինը շատ խորունկ փորելն ու դարձնելն էր՝ կէսէն մինչեւ մէկ
մէթր, երբեմն աւելի խորութեամբ: Փաստօրէն հողը կը մաղուէր. մե-
կիկ-մէկիկ արմատախիլ ըլլալով կրակի կը տրուէին վնասակար խոտե-
րը, սեզնու վարսակը, մորմենին ու մրտենին, մացառներն ու թուփե-
րը, արմատները. հատ-հատ կը հաւաքուէին խոշոր խիճերը, քարերը, կը

վշրու էին ժայռերը: Արտեն պեղուած աւելորդ քարերուն՝ մանր ու խոշոր խիճերուն կոյտը կը կոչէին **չաղըլ նուց**: Չկար պարտեզ, որ չաղըլ նուց չունենար: Բրիչի իւրաքանչիւր հարուածէն ետք հողը մաքրելու մեծ գործ կար: Մեծ կոճղերուն ու ժայռերուն շուրջը կը բանային ու ճեղքատելով մաս առ մաս կը հանէին: Կը ճանչնային քարին «երակը», ուր տրուած ծանր մուրճի զօրաւոր հարուածը բաժան-բաժան կ'ըներ զայն: Քարը ճեղքելու համար նոյն գիծի վրայ քանի մը չիւ (մետաղեայ շեղբ) կը գամէին: Երբեմն ժայռին վրայ խարոյկ կը վառէին: Տաքցած ժայռին վրայ պաղջուր կը թափէին, ու ժայռը կը ճաթատէր, ու կը դիւրանար զայն մէջտեղէն հանելու գործը: Այսպէս՝ մէկ մեթր հող ունենալու համար գիւղացին օրեր ու օրեր կ'աշխատէր ոգի ի բռին:

Բայց ասով չէր վերջանար **գետին բանալ** ու գործը: Հողը պէտք էր պաշտպանուէր հեղեղներէն, գետնասահքէն ու արտաքին մաշու մէն: Ասոր համար ալ պէտք էր պատքաշել, բաց ու գոց առուններ շինել: Պատը անպայման պէտք է թեսապի բոլոր հողերուն համար: Պատերուն բարձրութիւնը եւ անոնց ետեւ բացուած արտին լայնութիւնը կապուած են տեղի թեքութեան հետ: Եթէ տեղը շատ է թեք՝ ապա պատերը կ'ըլլային բարձր՝ մինչեւ 2-3 մեթր: Նախ կը բացուէր լայն ու խոր հիմը, քարը քարին շարունոյ պատին ետեւ մինչեւ մէկ մեթր խորութեամբ մանր քարեր ու խիճեր կը լեցնէին: Ասիկա կ'աւելցընէր պատին դիմադրականութիւնը: Ծարք-շարք բարձրացող պատին ետեւ հողը կը դիզուէր ու կը ստեղծուէր հարթ ու մաքուր տարածութիւն մը, ապա կարգը կու գար յաջորդ պատին: Այսպէս՝ աստիճանած եւ կը բարձրանային քեսապցիին արտերը, խորունկ ձորերէն մինչեւ լեռնային բարձունքները: Իւրաքանչիւր դարաւ անդ կը կոչուէր **ըրրաֆ**:

Կը նայիս, վարէն մինչեւ լերան գագաթը լայնքին ձգուած պատեր, պատեր ու պատեր ու անոնց ետեւ տարբեր մեծութեամբ հողաշերտեր, երբեմն այնքան նեղ ու փոքր, որ արօր չէր մտնէր: Գիւղացին սերմը գրպանին մէջ դրած, պատէ պատմագլցելով, օրեր, շաբաթներ շարունակ իր փետատով ցորեն կը ցանէր իր ափաչ ափ արտերուն մէջ: Ու երբեմն՝ աշնան տեղատարափ անձրեւներուն, ժայռի մը տակ ա-

պատանած կը հսկեր, թէ անձրեւ աջ ու ընդ ուր կէ հեղեղած եւ կ'իջներ: Քանի մը քար կը շարեր ու հաւ աքուած հողին մէջ քանի մը հատիկ թափելով կ'ելլէր վերի պատին...¹:

Արտի պատշարելը արհեստ մը չէր, բայց շնորհք էր եւ որոշ վարպետութիւն կը պահանջէր: Առատ անձրեւներու պատճառած հեղեղները երբեմն կը փլէին պատերը: «Այսինչին պատը փլաւ» արտայայտութիւնը վիրաւորական կը թուէր: Յիացումով կը յիշուին այն նախնիները, որոնց շարած պատերը տակաւին կանգուն կը մնան իբրեւ միաձոյլ հիւսուածք: Յին պատերուն մէջ անհաւատալի մեծութեամբ ու ծանրութեամբ քարերու շատկարելի է հանդիպիլ:

Բացուող արտերուն եզերքը անհրաժեշտութեան պարագային առուններ կը բանային, որպէսզի հեղեղները արտը չկոխէին: Կարգ մը գետիներ մինչեւ ամառնամուտ չափազանց թաց կը մնային հոսկէ-հոնկէ բխող ձմեռնային աղբիւրներու (**Խիվեօկ` խելուկ**) եւ ողողումներու պատճառով: Այդպիսի գետիներ սահանքի վտանգին ենթակայ էին, իսկ հողն ալ պիտանի չէր ըլլար ցանքի համար: Այս ջուրերը մակերեսէն չքացնելու համար պէլ (**պիէլ**) կը բանային: Պելը կէս կամ մէկ մարդահասակ խորութեամբ լայն առուն մըն էր, որ կը բացուէր ջուրի ուղղութեամբ, առուի բերանը կու տային արտը եզերող առուին: Պելը երեք քառորդով կը լեցնէին մանր ու միջակ մեծութեամբ քարերով ու կը ծածկէին արտի հողով: Արտաքին ջուրերը շուտով կը սուզուէին պէլին մէջ ու կը բխէին արտէն դուրս:

Նոր բացուած մշակելի հողը **մասմէօր գիտէն** (շինուած գետին) կը կոչէին: Բացուող արտերը կը կոչուէին. ա) **թարլ ու** (յոզն.՝ **թարլ ի-նա**)՝ բաւականին լայն, հարթ կամ քիչ թեքութեամբ միակտուր գետին, ցանքի համար. բ) **խուվուօռ** (յոզն.՝ **խուվուռնա, խուվուռ-կըննիր**)՝ փոքր տարածութեամբ արտ, ընդհանրապէս նեղ ձորերուն ու լեռան թեք ու անկանոն լանջերուն վրայ բացուած, ուր արօրի մը խփը կրնար բանիլ. գ) **փանա**՝ փոքրիկ արտ, դ) **չաքրափկըննիր**՝ շատ փոքր տարածութեամբ, լեռնային ապարներու մէջ ծուարած հողեր, ուր ցանքը -

¹ Այս մասին տե՛ս նաեւ **Յ. Պաճաղեան**, Սերմնացանը Լեռներուն, «Արարատ» օրաթերթ, 19 Դեկտ. 1990:

կը կատարուէր միայն բրիչով:

Ծխախոտի մշակութեան համար բացուած գետինները կը կոչուէին **հագուրա** որ աւելի ընդարձակ գետին է, երկար, մինչեւ 100 մէթր պատերով ու հողի 20-25 մէթր լայնքով մը: Հագուրան նեցողները ընդհանրապէս հարուստ հողատերերն էին:

Ամբողջ շրջանին մէջ տարագրութենէն առաջ իբրեւ պետական կալուած (**արագի մէթրուքէ**) կը մնան քանի մը արօտավայրեր եւ Գարատուրանի Տիւնակ լեռը, որ հարուստ դափնիի անտառներով:

Քեսապի մէջ հինէն իվեր փոքր թէ մեծ հողատերեր կամ աղաներ գտնուած են: Աղան բարբառով **աբ'րուս** (պարոն) կը կոչուէր, իսկ կիսը՝ **վե'րադակէն** (վարպետ-կիս): Պարոնը գիւղին հովանաւորողն էր, օսմանեան իշխանաւորները ընդունողը, հարկային գանձումները կատարողը, համայնքին հոգեւոր ու կրթական պետքերուն համար հրամաններ կարգադրողը: Գիւղացին թէ ոչ անպայման նիւթապէս, գէթ բարոյապէս պարտական կը զգար անոր հանդէպ, անոր համար ալ գիւղացի ընտանիքին անդամները՝ այր ու կին եւ զաւակներ, ամէն առիթի ծառայութեան կը փութային պարոնին եւ վարպետկնոջ: Գիւղացին իր մուլքն ու տնտեսութիւնը բռնագրաւումներէն ու իշխանաւորներու չարաշահութիւններէն զերծ պահելու համար ինք կը փնտռէր այս կամ այն պարոնին, յաճախ շատ ազդեցիկ թուրք աղաներու հովանաւորութիւնը:

Մեծ հողատիրութեան զարգացման պայմաններուն տակ մանր հողատերերը այլեւս չէին կրնար իրենց տնտեսութիւնը ոտքի պահել միայն մէկ-երկու օրավար հողերով: Ուստի ոմանք կը դառնան մեծ-կալուածատերերու վարձակալները (կէս եկամուտով աշխատողներ), նոյնիսկ մարապաները, որոնք հանդերձ ընտանեօք կ'ապրէին մեծ կալուածատիրոջ կալուածներուն վրայ՝ բաւարարուելով բերքի քառորդով միայն: Այնքան կը շատնայ այս զանգուածը, որ շատ ընտանիքներ ծառայութեան մէջ կը մտնեն հեռաւոր շրջաններու թուրք ու արաբ կալուածատերերուն մօտ իբրեւ մարապա՝ պահելով հանդերձ Քեսապի իրենց տունն ու քանի մը օրավար հողերը: Ոմանք ընտանիքով կը գաղ-թեն:

Գեթ մինչեւ 19-րդ դարու կեսերը շատերը ունեցած են իրենց տնտեսութիւնը ոտքի պահելու համար բաւարար հող: Աւանի բնակիչները լլային թէ գիւղացիներ՝ տուն ու տան տեղ, կտոր մը ածու, արտու պարտեզ ունէին: Հողը գիւղացիին մուլքն էր, սեփականութիւնը, կ'ուզէր՝ կը վաճառէր, գրաւի կը դնէր, ժառանգ կը ձգէր, կիսարտութեան կու տար (**ըդկիէս**), կը նուիրէր կամ մարապակ'աշխատցներ վրան:

Ձմրան յորդառատ ու երկարատեւ անձրեւներուն՝ ձորերը կը դղրդան ահաւոր ու կործանարար հեղեղներէն, ջրվեժները կը գահավիժին բարձունքներէն, ճամբաները քարուքանդ կ'ըլլան: Ամէն պատի տակէն աղբիւր մը կը բխի: Այս եղանակին քեսապցին պարտաւոր է միշտ զգոյշ մնալ, որպէսզի հաւանական հեղեղէ մը պաշտպանէ իր արտը, ճամբան եւ տունը: Գրեթէ անկարելի է տեղու մներու հետեւանքով գետնասահքին եւ մեծ փլուզու մներուն առաջքը առնել: Գետնասահքը աղետի կը վերածուի, երբ կ'ըլլայ արագ ու կարճ ժամանակի մը ընթացքին անճանաչելի կը դարձնէ տարածութիւն մը՝ սահանքի միջոցին կուլ տալով պարտեզներն ու տուները եւ երբեմն խլելով մարդկային զոհեր: Վերջին հարիւրամեակին քանի մը մեծ ու յանկարծակի սահանքներ կը պատահին Գարատուրան գիւղին մէջ: Թեք տեղանքի եւ առատ տեղու մներու հետեւանքով գրեթէ ամէն տարի սահանք մը կը պատահի հոս ու հոն: Այս վայրերը քեսապցին «**խաղոն-Լօծ**» կը կոչէ, այսինքն խաղած՝ սահած գետին:

Հեղեղներն ալ երբեմն աղետաբեր եղած են: Ձմեռնային գետահունները (**խէ'նսուօկ**՝ խանտակ) յորդած են ու իրենց կլափին մէջ առած եզերքի պարտեզները՝ պատերով, ծառերով ու հողով: Կասիոսի բարձրադիր լանջերէն հոսող ձմեռնային ջուրերը կ'անցնին քեսապի կեդրոնէն: 1960-1970 թուականներուն մեծ հեղեղներ երկու անգամ վնասներ պատճառեցին, քանդեցին քարաշէն մեծ կամուրջը, գետը եզերող պարիսպը եւ շարք մը խանութներ ու տուներ:

Վերջին յորդառատ անձրեւները սովորաբար կը պատահին Մայիսին: Անկէ ետք գետերը ամբողջութեամբ կը ցամքին, ձմեռնային գետերուն հունները կ'երեւին իրենց լերկութեամբ: Պատերուն տակէն ժայթքող աղբիւրները (**խիվէօկ**) շուտով կ'անհետին: Աղբիւրները կա-

մաց-կամաց կը սմբին, կը նիհարնան ու շատեր երբեմն ամբողջապէս կը ցամբին: Ջուրի տագնապը կը սկսի: Ասկէ ետք մինչեւ ուշ աշուն քեսաացիին գլխաւոր հոգը կու՛մ մը ջուրը կը դառնար, որ կը գտնէր ահաւոր դժուարութեամբ:

Ջուրը կեանք է ու ծարաւ մարդուն գաւաթ մը ջուր տուողին մատները ամէն օրհնութեան արժանի են: Քեսաացի ժողովրդային «**Ախջէօր մը**» պարերգը այդպիսի օրհնութիւն մըն է.

Ախջէօր մը, եանաեանա,

Ախջուր մը, եանաեանա,

Պուօղջէօր մը, եանաեանա,

Պաղջուր մը, եանաեանա,

Ինծիկջէօր մը տուողին

Ինծիջուր մը տուողին

Տումին ալ էք մէ՛տօնքը:

Ապրին բոլոր մատները,

Օ՛ ֆ, օյ օյ պուօղջէօր մը:

Օ՛ ֆ, օյ օյ պաղջուր մը:

Քեսաացին իր ջուրը հայթայթած է գլխաւորաբար աղբիւրներէն, հորերէն եւ ջրամբարներէն:

Քէօրքիւնէ, Չինարճըգ, Տուգաղաճ եւ Էքիգօլուք գիւղերը կը կազմեն Քեսաացի համեմատաբար ջրառատ շրջանը: Հոս բոլոր գիւղերը ունին իրենց մէկէ ալ ի աղբիւրները, որոնց համար դժուար է յորդահոս ըսելը: Չինարճըգ, Քէօրքիւնէ եւ Էքիգօլուք գիւղերուն առջեւ ձգուող ձորերուն մէջ եղած են քանի մը ջրաղացներ, որոնք բանած են միայն մինչեւ ուշ գարուն: Ջուրին ամբարուած վայրերը կը կոչէին **պանտ** Ջրաղացները կ'աշխատէին միայն պանտը բանալու պարագային: Չինարճըգի եւ Տուգաղաճի ակերէն կը կազմուի Գուրաշէ վտակը, որ քիչ անդին դուրս կ'ելլէ շրջանի արեւելեան սահմաններէն: Օգտագործուած է միայն ոռոգումի նպատակով:

Շրջանի հարաւային սահմանը՝ Լըղըջէօր (Լեղիջուր) կոչուող հարթավայրէն մինչեւ ծովափնեայ Պետրուսիէ գիւղը նոյնպէս ջրառատ է: Հոս է Պոխուլտարայի (Մեղրա-ձոր) ջրառատ նեղ ձորը: Մեղրա-ձորի ջուրերը օգտագործուած են միայն ոռոգումի նպատակով: Ասոնցմէ կազմուած վտակը Ֆագը Հասան թրքական գիւղին քով կը կոչուի Կիւնկիւրաու քիչ անդին կը թափի ծով: Յորդաբուխ աղբիւր մը ունի նաեւ Պետրուսիէ թրքական գիւղը: Քեսաացին կ'ըսէ. «Թուրքը ակին վրայ եուրտկը գարնէ, հայը՝ քարին վրայ»:

Իբրեւ շինուածք՝ աղբիւրներուն մէջ ամենէն տարածուն տեսակը կու փնէ (**Կէօփ**): Կու փը առաւել ագոյնը կէս մեթր խորութեամբ բացուած փոս մըն է, ուր կը հաւաքուի տեղւոյն չափազանց տկար ջուրը: Կու փերը ընդհանրապէս բնակավայրերէն հեռու տեղեր են: Կու փի ջուրը կ'առնէին ամանը մէջը «մխել»ով եւ գգոյշ կ'ըլլային, որ չաղտորի: Զաւաքուած ջուրը սպառելով կ'ըսէին. «Կէօփը պուղուօծի» (Կու փը պեղած է), այսինքն՝ պարպուած է ու կը սպասէին ժամեր, երբեմն օր, որ կու փը կրկին լեցուէր: Կու փի մաքրութեան հոգ կը տանէին, սպառերը կը ծեփէին ցեխով, որ ջուր չփախցներ: Ըմպելի ջուր ունենալու համար երբեմն փշոտ թուփով մը կը ծածկէին, որ անասունները չաղտոտեն: Գետնասահքի ենթարկուած գետիներուն մէջ ակերը վստահելի չեն ու ամեն տարի կը չքանան, կը ցրուին կամ տեղ կը փոխեն: Անոնց համար ամեն տարի նոր կու փ կը բանային:

Կային **խանտակի աղբիւր** կոչուածները: Ասոնք ձմեռնային հեղեղներուն բացած գետահուններուն մէջ կը գտնուին: Ասոնց յատակին ջուրերը ամեն տարի այլ տեղէ մը ակ դուրս կու տան: Գիւղացիները ուշ գարնան կ'իջնեն գետահունին մէջ ու լայնքին փորելով-փորփորելով կը պեղեն ակը ու անոր ցրուած ջուրերը առուի մը մէջ հաւաքելով՝ կը բերեն գետահունին մէկ անկիւնը ու բերանը ջրդոն մը կը դնեն: Այսպիսի աղբիւրներ են Գարատուրանի Գազինց աղբուօյր (- Գազագետաններու աղբիւրը) եւ Գըզլար փինարը (Աղջիկներու աղբիւրը) կոչուող ակերը:

Երրորդ խումբին մէջ կը մտնեն մնայուն շինուածք ունեցող աղբիւրները, որոնք ըստակի՝ կ'ըլլան երկու տեսակ՝ բնական ակեր եւ պեղուած ակեր: Առաջիններուն կառոյցը դրուած կ'ըլլայ ուղղակի ակին բերանը: Այդպիսիք են Չալմայի, Չագալ ճըգի, Քէօրքիւնէի, Տուգաղաճի Խանջիին եւ Քեսապի աղբիւրները: Պեղուած աղբիւրները ջրդոնին կը հասնին ստորգետնեայ արհեստական առունով մը, ինչպէս Ներքի Գիւղի, Տուգաղաճի, Չինարճըգի, Էքիգօլուքի, Վարի Պաղճաղազի, Գարատուրանի Եարալեան թաղի աղբիւրները եւ ուրիշներ: Բուն ակը գտնելու համար նախ բացուած է խորունկ խրամատ մը մինչեւ որ ակը գտնուած է ամուր գետնի մը մէջ կամ ժայռի մը տակ, ապա

առուևն պատուած է սալ քարերով ու թաղուած: Պեղուած աղբիւրներէն ոմանք կու գան խորունկ խորշէ մը: Խորշին մէջ առուևն ունի մայթ: Խորշին երկու կողմերը պատ է, իսկ առաստաղը ծածկուած է հսկայ սալ քարերով, ապահողի թանձր շերտով մը: Ջրդոնին վրայ խորշը ունի մուտք: Տարին մէկ-երկու անգամ գիւղացի մը ներս սողալով կը մաքրէ առուևն: Եարալեան թաղի աղբիւրը ունէր շուրջ 10 մեթր խորութեամբ խորշ մը: 1998-ի սահանքին պատճառով ջուրը անհետկորսուեցաւ:

Կարգ մը աղբիւրներ խորշին փոխարէն ունին ծածկուած ջրամբար մը, որուևն պատերուևն տակէն կը պլ պլ ան ակին ջուրերը: Մուտքը կրկին ջրդոնին վրայ էն է: Այսպիսի աղբիւրները **գապ** կը կոչուին: Միայն Գարատուրանի մէջ կան երկու գապեր, մին՝ ծովու ափին, իսկ միւսը՝ Գալեմտերեան թաղին կից: Մնայուն կառոյց ունեցող աղբիւրներուևն ճակատը երբեմն կրաշաղախով պատուած փակ պատմըն է: Գապերը մեծ հնութիւն ունեցող աղբիւրներ են ու կը գտնուին հնավայրերու կից:

Կարգ մը աղբիւրներ ունին գեղեցիկ կառոյց: Տարածուած էր ընդհանրապէս կամարածել՝ մէկուկէս մարդասասակ բարձրութեամբ ու շուրջ 1.5-2 մեթր ստորին լայնքով շինուածքը: Շրջագիծը պատած կ'ըլլար սրբատաշ ու դեպի առջեւ եկած քարերով, որոնք կառոյցին խորանի ձեւ մը կ'ապահովէին: Մէջտեղը դրուած կ'ըլլար քարէ ջրդոնը, իսկ անոր մէկ կողմը՝ աղբիւրի մնայուն ջրամանին խորշը (**ախ'տը-հուևն**): Կամարին տակ սրբատաշ քարի մը, իսկ երբեմն մարմարէ սալի մը վրայ կը փորագրէին խաչ ու արձանագրութիւն մը: Գուռը երբեմն ուղղակի շարուած կ'ըլլար աղբիւրին հետ: Կարգ մը աղբիւրներ ունէին փայտէ կամ քարէ գուռեր: Երբեմն գուռին երկու կողմերը կը գետեղէին քարէ նստատեղիներ, ուր գիւղացին նստելով՝ կուժը կը բռնէ ջրդոնին տակ: Այդպիսի գեղեցիկ կառոյց ունէր Ներքի Գիւղի (Էսկիւրէն) աղբիւրի նախկին շինութիւնը: Անոր ճակատին ագուցուած էր քովի սրբավայրէն պեղուած ԺԵ.-ԺԶ. դարերու հայկական փոքրիկ խաչքար մը: Նոյնքան գեղեցիկ են Գարատուրան գիւղի Մանճիկեան թաղի ցամքած աղբիւրը, Էքիզօլուքի աղբիւրին նախկին կառոյ-

ցը, Չագալ ճըգի, Քեօրքիւնէի, Թեքնեճոքի եւ Քուճաճլէքի աղբիւրները:

Աղբիւրները ընդհանրապէս կ'ուսենան ընդարձակ հրապարակներ: Չալմայի, Չինարճըգի, Չագալ ճըգի եւ Ներքի Գիւղի այս հրապարակներուն մէջ տնկուած մէկական սօսիները հարիւր տարեկանէն աւելի կան: Այս տեղերը գեղեցիկ զբօսարաններ են, ուր դպրոցական եւ սկաւտական խումբեր ու զբօսաշրջիկներ կ'այցելեն: Ներքի Գիւղի աղբիւրին հրապարակը նաեւ ուխտավայր է:

Աղբիւրէն հեռու գտնուող բնակավայրերուն կիները ամրան շրջանին լուացք ու լոգանք կ'ընէին աղբիւրին առջեւ, Շաբաթօրերուն: Ամէն աղբիւր իր մոխրանոցը (**մախըրնուց**) ունէր, այսինքն՝ կանանց լուացք ընելու տեղը:

Ջուրի մատակարարման երկրորդ գլխաւոր միջոցը ջրհորն է: Կարգ մը թաղեր ու գիւղեր դեռեւս միայն ջրհորի ջուր կը գործածեն: Անձնական ջրհորներէն բացի կային ամբողջ թաղին կամ գերդաստանի ընտանիքներուն պատկանող ջրհորներ: Ասոնք հասարակաց սեփականութիւն էին: Չաւակներուն կալուածներ կտակող հայրը ջրհորը բոլորին կը ձգէր:

Ջրհոր բնալ ու համար նախանհրաժեշտեր որոշել տեղը: Ջուրին տեղը գտնելու ամէնէն տարածուած հնարներէն մէկը նռնենիի ճիւղով մը կը կատարուի: Մարդը նռնենիին ոստը երկու ծայրերէն կ'առնէ իր ափերուն մէջ, անոր կու տայ աղեղի ձեւ ու կը պտտի արտին մէջ: Ստորգետնեայ ջուրին հոսանքին վրայ հասնելուն պէս նռնենիի ոստը արտակարգ կերպով շարժիլ կը սկսի՝ մարդուն մեծ ցնցումներ պատճառելով: Այդ ցնցումներէն ելլելով ոմանք մինչեւ իսկ ջուրին խորութիւնը կը գուշակեն: Այս ցնցումները ամէն անձի չեն պատահիր: Այս հնարքը մինչեւ այսօր ալ կը գործածուի. հաւատացողներ կան: Ամէն պարագայի՝ ջրհորը բախտ կը նկատուի, ջրհոր բացողը բախտախաղ խաղցողի հետ կը համեմատեն:

Ջրհորին տեղը որոշելէն ետք՝ քիչ անդին կը դիզուի ջրհորին համար անհրաժեշտ քարը: Ջրհոր մը պատելու համար անհրաժեշտ երկու տեսակի քար: Պատը կը շարուի երկար, մինչեւ կէս մետր երկար

րու թեամբ քարերով, որոնց ետին՝ շուրջ կես մեթր, երբեմն աւելի տարածութեամբ տեղ կը լեցնեն միջակ մեծութեամբ քարեր: Այս բաժինը ջրհորին պատը կը պաշտպանէ գետնի թեթեւ սահանքէ կամ հրումէ եւ ջրհոր իջնող արտաքին ջուրերը կը զտէ: Առանց քարէ պատի ջրհոր չկայ Քեսապի տարածքին մէջ:

Ջրհորը կը փորուի 4-5 մեթր տրամագիծով շրջանակի մը մէջ: Ջրհոր կը բանան Օգոստոսի 2-րդ կեսէն ետք միայն: Ջրհոր բանալը չափազանց զգոյշ աշխատանք կը պահանջէ: Յատակին մէկը կը փորէ, միւսը հողը զամբիւղին մէջ կը լեցնէ, երկու հոգի ճախարակով զամբիւղը վեր կը քաշեն, մէկը զամբիւղը կը փոխէ, ուրիշ մը ջրհորին բերանը կեցած՝ այս աշխատանքը կը կառավարէ: Եօթերորդ անձ մը ջրհորին շուրջը կը հսկէ, որ հաւանական փլուզումէ զգուշացնէ:

Ջուրին հանդիպելու պարագային փորելը կը շարունակուի, որովհետեւ ատկակրնայ հաւաքուած ջուր մը ըլլալ, երբեմն ջուրը փորուածքին հետկը ցածնայ. այնքէ ջուրին երակը գտնելու շարունակել տակաւին մէկ մարդահասակ, մինչեւ որ ակը յատակէն բարձր մնայ: Ջուրին հանդիպելու պարագային ուրախութեան բացականչութիւններ կը լսուին, բանուորները տիրոջ աչքը կը լուսեն ու կերուխումի մը խոստումը կը խլեն անկէ: Ծեղի մը չափ ջուրը ակ կը նկատուի:

Երբեմն ջրհորները բոլորովին ցամաք կ'ելլեն: Աշխատանքը կը դադրեցնեն աւելի խոր իջնելու վտանգէն վախնալով: Կը պատեն: Ձմրան՝ ջրհորը մակերեսային ջուրերով կը լեցուի: Գիւղացին անով ակ կը գոհանայ, եթէ երբեք ջրհորը «ջուր բռնէ», այսինքն՝ հաւաքուած ջուրը շուտով ճամբայ գտնելով չերթայ ընդերք:

Փորուածքը աւարտելէն ետք վար կ'իջնէ որմնադիրը, օգնականի մը հետ: Վերջինը քարերով ծանրաբեռնուած զամբիւղները կը պարպուէ տկըղրկէ, որմնադիրին քարեր կը մեկնէ: Ջրհորին շարուածքը տարբեր վարպետութիւն կը պահանջէ, ատոր համար ակ տուներ կառուցող ամէն վարպետ ջրհոր պատել չի կրնար: Ջրհորը այնքէ կարասածել ըլլայ: Ջրհորի որմնադիրը գրեթէ մուրճ չի գործածեր, ո՛չ կշիռք ունի, ո՛չ չուան: Ան խոշոր քարերը այնպէս կ'ազուցէ իրարու, որ

գիրար բռնեն ու առաջ չսահին: Պատը կը շարունակվոր, թոնրածեւ, յատակը մեկէն մինչեւ մեկուկէս մեթր տրամագիծով, որ հետզհետէ լայննալով ջրհորի կիսուն կը հասնի շուրջ երկու մեթրի, ապակրկին կը նեղնայ, մինչեւ որ ջրհորի բերանը ունենայ յատակի մեծութիւնը, նոյնիսկ աւելի նեղ: Կան շատաւելի նեղ, ամենէն լայն տեղը մինչեւ մեկ մեթր տրամագիծ ունեցող ջրհորներ: Ծարուած վերջին քարին վրայ խոյ մը կը մորթեն եւ առատօղիով խորովածի սեղան կը բանան բան-ուորներուն համար:

Ջրհորին բերանը տախտակէ երդիք մը ամրացուած կ'ըլլայ, ապա ճախարակի յարմարանք ու տախտակէ դոյլ մը: Մեկ-երկու տարին անգամ մը ջրհորները մինչեւ յատակը կը պարպեն, կը մաքրեն (**արւղիլ**՝ պեղել) ու տարակ մը կիր կը թափեն անոր մէջ: Վերջինը ունի հակա-ետիչ յատկութիւն:

Քեսապի շրջանին ջրհորները ընդհանրապէս ունին 7-14 մեթր խորութիւն:

Ներկայիս այս տեղանակով ջրհորներ գրեթէ չեն բացուիր: 1980-ականներէն կ'ընդհանրանան արթեզեան ջրհորները:

Կան դարաւոր հնութիւն ունեցող ջրհորներ: Անոնց մասին անհոլութիւններ ու գրոյցներ կը պատմուին: Օրինակ՝ Քեսապի հրապարակին ջրհորը խոդ կը կոչուի: Բառը արաբերէն **հոլթ** է, որ վիշապկամ կ'ետծուկ կը նշանակէ: Խոդը Քեսապգիւղին ամենէն խոր եւ ջրառատ հորն է: Ժամանակին շրջակայ թաղերու բոլոր կիները անոր ջուրով՝ անոր եզերքը կ'ընէին իրենց լուացքը եւ կը լոգնային: Աւելի ըլլալով՝ ժողովուրդին մէջ անհոլութիւն՝ գրոյց մը շրջան կ'ընէ խոդի մասին, ըստորուն՝ խոդին յատակէն ճամբայ մը կ'երկարի մինչեւ Պարլում (ճեպէլ Աբրայի բարձունքին վրայ հին սրբավայր մը): Արդարեւ, կը հաստատուի, թէ ջրհորին յատակը խոշոր ծակ մը կայ դէպի լերան կողմը, որուն խորութիւնը չափող չէ եղած²: Անյիշելի ժամանակներէ մնացած այդ ջրհորը կը գտնուի Քեսապի արդի հրապարակին կեդրոնը: Զրապարակը կառուցել ու ատեն պէթոնով ծածկուած է: Գա-

² **S. Անդրեայ ան**, Սվեդիայի բարբառը, էջ 235:

լ է մտերեան թաղին կից Գապկոչ ու ող աղբիւրէն քիչ վեր, թաղի նախնի-ներէն մէկը, հակառակ գիւղացիներու ընդդիմութեան՝ ջրհոր կը բանայ ու կը գողնայ աղբիւրի ջուրը: Իրօք, երաշտ տարիներուն աղբիւրը ամբողջութեամբ կը ցամքի: Ասկէ իբր կը նեղուի քովի Գապի առասպել ական վիշապը՝ **արվանտը**: Քանի մը փորձանքներ պատահած են այդ ջրհորին գլխուն: Վերջինը պատահեցաւ 1 Յունիս 1971-ին, երբ ջրհորին մէջ տեղաւորուած շարժիչին արտանետած կազը կը թունաւորէ ջրհորին մօտեցողները, որոնք ուշաթափուելով՝ իրարու ետեւէն ջրհոր կ'իյնան, 11 հոգի: Գալ է մտերեան եւ Մանճիկեան թաղէն կը գոհուի հինգ մարդ:

Աղբիւրները միշտ բազմամարդ կ'ըլլային: Ամրան եղանակին լուացքի եւ լոգանքի օրերը յայտնի էին: Այրերը երեկոյեան կու գային բանջարանոցներուն մէջ աշխատելու:

Քեսաացիք բանջարանոցն ու բանջարեղէնը **է'ծօօք** (ածուք) կը կոչեն: Բանջարանոցները միակ ջրարբի գետիններն էին, հետեւաբար կ'ըլլային մինչեւ մատմը ջուր ունեցող աղբիւրներուն առջեւ, շատ-շատ՝ բաւարար ջուր ունեցող ջրհորներու շուրջը: Բանջարանոցները սովորաբար փոքրիկ տարածութիւններ էին: Կարգ մը գիւղերու մէջ սենեակի մը տարածութեամբ բանջարանոց ունեցողը բախտաւոր կը նկատուէր: Յարթ տարածութիւններու մէջ բանջարանոցները սահմանաբար կ'ունենային:

Բանջարանոցին մէջ քովէ-քով շարուած կ'ըլլային սմբուկի, պղպեղի, կանաչ լուբ-իայի, կաղամբի, վարունգի, պամիայի ածուները: Ասոնք ակօսին մէջ մէկ կամ մէկուկէս թիզ հեռաւորութեամբ կը տնկէին: Ածուին բերանը մէկ-երկու թուփ ռեհան դնելու չէին մոռնար: Յովը փչեր՝ հոտը աշխարհը կ'առնէր: Բանջարանոցի անկիւնները քանի մը փոսիկ դդումալ կը դնէին: Երկու տեսակ դդում կը ճանչնային՝ **մալ գապաղը**, որ կ'ըլլար կանաչ ու գլանաձեւ, եւ ձմրովին (-դեղին ու խոշոր): Պատի մը տակ կամ քարի մը անկիւնը կը տեսնէիր անանուխի բոյնը, սամիթի թուփը, ազատքեղի փոքրիկ ածուն:

Աղբիւրի ջուրը կը հաւաքուէր աւազաններու (**հալըզ**) կամ պանտերու մէջ: Ասկէ ջուրը առուներով կը հասնէր բանջարանոցները: -

Ձորադեմի լանջերուն քանջարանոցներուն ջուրը կը հասցնէին կախովի առուններով (**ՆԼԼՕԳ**): Ասոնք կը պատրաստուէին բարտի գերանները փորելով ու սիւներու վրայ ամրացնելով: Գլխաւոր առուններու, պանտերու եւ հասարակաց աւազաններու շինութեան կը մասնակցէին բոլորը: Ձրելու կարգ կը նշանակէին: Ձրբաժան երբեք չեն ունեցած: Կը ջրէին առտու կանուխկամ ու շերեկոյ, երբեմն լուսնակ գիշերով:

Ամրան՝ ածուները մարդաշատ կ'ըլլային: Չարաշահու թիւներ կը պատահէին՝ ջուր փախցնել, ածու գողնալ ... Երբեմն ածուներէն ձայներ կ'ելլէին, հոն ալ կը մարէին: Գողօնը ի՞նչ պիտի ըլլար որ, վարունգ մը, քանի մը պղպեղ, դդում մը, երկու բուռ կանաչ լուբիա...

Քեսապցի տիկինը բակի իր ծաղկանոցին մէջ, որ սովորաբար ծակ կարասներու ու կռիճներու շարք մը կ'ըլլար, ուներ իր փոքրիկ ածուն, որուն համար ուսով բերած իր ջուրէն բաժին կը հանէր: Այսպէս՝ հոս ազատքեղ, հոն անանուխ, քանի մը թուփռեհան՝ անպայման: Բայց բակերուն իւրայատուկ զարդերը կ'ըլլային լիֆն ու ջրադդում: Ասոնք դդմազգի բոյսեր են. լիֆը երկար ու հաստ, վարունգի ձեւով պտուղ մը ունի, որուն չորցած միջուկը, սպունգի պէս, լոգանքի ատեն կը գործածեն: Ձրադդումը (գըռնէպ) կ'ըլլայ երկու տեսակ. մին ունի երկար ու բարակ կոթ ու ձմերուկի մեծութեամբ գլուխ, գորջոր-ցնելէ ու պարպելէ ետք կը գործածեն իբրեւ շերեփ, ջրաման ու վանդակ, իսկ միւսը կ'ըլլայ աւելի կարճ, մէջտեղը նեղ. հովիւներու ջրաման կ'ըլլար: Ասոնց թուփերը կը մագլցին բակի արիշին վրայ ու պտուղները կը կախուին տօնածառի զարդերուն պէս:

Քեսապցիք անջրդի սոխն ու սխտորը կը տնկեն Նոյեմբերին: Գետնախնձորը կը տնկեն Փետրուարէն ետք, անպայման ջուր կու տան ատենը մէյ մը: Բերքը կը հանեն երեք ամիս ետք: Ծրջանին մէջ գետնախնձորի (**քաման**) մշակութեան սկսած են 19-րդ դարու 80-ական թուականներուն, իսկ լուիկը բերած են Ամերիկայէն վերադարձած քեսապցիք եւ որ տարածուած է տարագրութենէն վերադարձէն ետք: Լուիկը կը կոչեն **Ֆրանգը պէ'տիւնջուն**, իսկ լուիկի մածուկը՝ **պէ'տընճըռոսպ** Էփեօլ ու քը երկար տասնամեակներ գետնախնձորի մշակութեան մէջ

մրցակից չէ ունեցած:

Աման իշգէն, ձիր վեքանը եուօ կըննու, Աման աղջիկ, ձեր երկիրը
ն° Լ ր կ'ըլլայ ,

Շուօտմըժկըտլէ

Շատմի՛ շարժիր,

Շախօլ իդ մուրուօտկըննու,

քղանցքդ մորատկ'ըլլայ ,

Ախեուօ կընննու, չէ կըննու,

Ախ ն° Լ ր կ'ըլլայ , ի° նչ կ'ըլլայ ,

լայ ,

Քուզուլ օխքաման կըննու :

Էքիզուլ ուք գետնախնձոր կ'ըլլայ :

լայ :

Ներկայ իս, արթեզեան հորերու առկայ ութեան պարագայ ին՝ ոմանք լայնօրէն կը գբաղին բանջարանոցայ ին մշակութեամբ ու կը հասնին շուկայի պէտքին: Բանջարեղէնի տեսականին բազմացած է: Շրջանին մէջ ջերմոցայ ին բանջարանոցներու կարիք չէ զգացուած:

Ջուրի մասին այս բաժինը կ'արժէ լրացնել ժողովրդական ծեսով մը, որ երաշտեղանակներուն երկինքէն անձրեւ կը հայցէ: Յայերը «նուրին-նուրին» կը կանչէին: Նուրինը հայ դիցաբանութեան մէջ ջուրը անձնաւորող ոգի է: Նոյնացուած է Ծովինար աստվածուհիին հետ: Յայ աստանի տարբեր վայրերու մէջ Նուրինը տարբեր անուններ ունէր՝ Խուշկուրուրիկ, Խուրձկուլուլու, Չիչիմամա: Անտիոքի հայերը գայն կը կոչէին Չեօմչա Կելին: Ամէն պարագայի՝ Նուրին անուան արձագանգը կայ ջուրի սակաւութեան մասին հետեւեալ խաղիկին մէջ, ուր «նռնենի» եւ «նուռ» բառերուն ներկայութիւնը պատահական պէտք չէ նկատել .

Նռնենքը նոռ չիկէք,

Նռնենիներուն վրայ

նուռ չկայ ,

Պիթիւն Քեսուօպչէօր չիկէք:

Ամբողջ Քեսապ

ջուր չկայ :

Չեօմչա Կելինը կանացի ցնցոտիներով խրտուիլակ մըն է, գորմանուկները կը պտոցնէին տուններուն բակերը՝ յատուկ յանկերգը ձիգ-ձիգ վանկարկելով: Ե՛լ անունը, ե՛լ խաղերգը թրթրէն են, ինչ

որ խորթ չէ այս շրջանի հայոց համար³:

Չեօմչա կել ին նա՛ իսթեր,	Տնցուղ հարսը ի՞նչ
կ'ուզէ,	
Պիր գաջըճըգ սու իսթեր,	Դգալ իկ մը ջուր
կ'ուզէ,	
Կեօքսէն րահմէթ,	Երկինքէն
ողորմութիւն,	
Երսէն աբրէքէթ,	Գետնէն առատութիւն,
Վերալ ահըմ, վեր:	Տո՛ւր Աստուած իմ,
տուր:	

Էվտիւղէն հեվէտուղէն:

Յաւատացողի՛ն:

Վերջին տողը՝ **Էվտիւղէն հեվէտուղէն** (Յաւատացողի՛ն), որ կապ չունի բուն ծիսակարգին հետ, բարբառ է եւ վերաբերմունք կ'արտայայտէ ծեսին նկատմամբ:

Մեծ մայրերը՝ թաղի պառաւները, առանձին պնակներու մէջ ձաւար ու ձէթ կը դնէին եւ կ'ընկերային մանուկներուն մինչեւ աղբիւր, ուր կրակ կը պատրաստուէր մանուկներուն հաւաքած ցախերով ու կ'եփուէր «Չեօմչա Կել ինի կորկոտապուրը» (ձաւարով փլլաւ մը): Փոքրիկները ճաշը կ'ուտէին հոն, Չեօմչա Կել ինը առուին մէջ կը նետէին ու «Էվտիւղէն հեվէտուղէն» ըսելով կը վերադառնային տուն՝ մօտալուտանձրեւի սպասելով:

Անձրեւը կու գար, ջուրը կը յորդէր առուներէն, կը քշէր կը տանէր Չեօմչա Կել ինը, բայց հետաքրքրական է, որ ժողովրդական խաղիկը կ'ըսէ.

Չեօրը վիլլ ին եաւվընէն,	Ջուրը կը դարձնեն
առուներուն մէջ,	

Չուօրը ինկուօվ պաւվընէն:	Չարը ինկաւ պառաւներուն
մէջ:	

«Չար»ը մահտարածամն է: Չեօմճա Կել ինը անձրեւ կու տար, բայց

³ Ծիսական բնոյթի որոշ ասոյթներ ու խաղիկներ կը կատարուին թրքերէնով (կամ անհասկնալի բառակոյտով մը): Գերբնականը խաբել ո՞ւր թէ անոր հաճոյանալ ու համար՝ նորածիններ կորսնցուցած ամուլներ վերջին ծնունդին այլ ազգի անուն կու տան կամ մանչ գաւկի մագերը չեն կտրեր (սեռի այլափոխում): Այստեղ անձրեւ աղերսող աղօթքը օտար լեզուով կը կատարուի:

փոխարենը պառաւ ներս ալ կ'առնէր կը տանէր իրեն հետ⁴:

Բ.- Տանքը, հուկնձքն ու կալը.- Տանքերը կը կատարուէին սեփական սպառու մի համար. աւելցած բերքը ապրանքափոխանակութեան կը ծառայէր: Անշուշտ, քանի մը կալուածատէրերու պարագան նոյնը չէր: Պէտքի եւ տեղի համաձայն կը ցանէին ցորեն, ոսպ, սիսեռ, հուկնտլուքիա, իսկ անասնոց որպէս կեր՝ գարի, կորեկ, վարսակ եւ այլն: Տնամերձ փոքրիկ հողի մը վրայ կը ցանէին բակլայ եւ ոլոռն (**ճըլարուն՝** պիզելիա):

Տանքը կը կատարուէր աշնան, առաջին անձրեւներէն ետք, երբ հողը բաւական կը կակուղնար: Սիսեռը, բակլան եւ ոլոռնը կը ցանէին Փետրուար-Մարտամիսներուն, երբ որ եղանակը ձեռնտու ըլլար: «Նավը դուրիցուօվ» կ'ըսէին, այսինքն՝ եղանակը պայծառացաւ:

Մաճկալը սերմը կը դնէր մանտիքի երկու աչքերուն մէջ, կը զարներ ուսին ու ափով սերմը կը ցանէր մէկ օրավար հողի վրայ ու կը սկսէր հերկին: Յերկի միակ գործիքը արօրն էր, իսկ լծկան կենդանիները՝ եզները: Երբեմն մէկ եզի փոխարէն կով մը կը լծէին արօրին: Մակճալը միշտ օգնական մը կ'ունենար, որ փետատով կը փորէր խփին չհասած տեղերը՝ պատերուն վրան եւ տակը, խոպան մնացած տեղերը, արմատախիլ կ'ընէր մացառները, սնձոսկիի եւ մորմենիի թուփերը:

Աշնանացանը երբեմն մինչեւ Դեկտեմբեր կը տւէր: Տանքէն ետք կ'ըսէին.

- Ամակը միրմինիէն, պրաքաթը Աստուծմիէն (Ձանքը՝ մեզմէ, օրհնութիւնը՝ Աստուծմէ):

Գարնան, երբ արտերը կը կանաչէին, կիներուն գործ կը բացուէր: Քաղհանի ժամանակ էր: Օտար բոյսերը պէտք է արմատախիլ ըլլային ու դուրս թափուէին: Քաղհան ընող (**քախնուօղ**) կիներ անպայման շալակ մը խոտալ կը քաղհանէր հորթուկներուն համար եւ գոգ մըն ալ խոտ՝ խոհանոցին համար: Աղջիկները արտի ծաղիկներ կը փնջէին, անուշահոտ բոյսեր կը բերէին տուն:

⁴ Կայ այլ, այս հաւատալիքին հետ կապ չունեցող բնակչի մայական պատկերացում մը, որ կատարած է Փետրուար-Մարտամիսներուն: Այս ժամանակահատուածին տեղացի հայերը կուտան «Պըլտըր աճուզ» (արաբերէն «պարտըլ-աճուզ» ծերուկին ցուրտը) անունը: Ձմրան վերջին ցուրտը կը տանի ծերերը:

Մանուկները արտօժիտներ մտնեն:

Մայիս-Յունիս ամիսներուն հասկերն ու պճեճները կը լեցունէին կաթնահամ հատիկներով: Փունջ մը ցորենաբոյս կամ սիսեռի թուփթեթէ բոցի վրայ կը խարկէին: Յորենի խարկածին **աղա**(եղի) կ'ըսեն, իսկ սիսեռի խարկածին՝ **չ ու պան**: Մեծ ու պզտիկ կը հաւաքուէին անոնց շուրջը, կ'ուտէին ու կը կատակէին: Վերջաւորութեան զիրար կը մրոտէին, մանաւանդ երեսները, ու յետոյ կը վազէին բաղնիք. ատոր համար ալ սովորաբար ծաբաթ երեկոյ՝ լոգանքի երեկոն, չ ու պան եւ եղի կը պատրաստէին:

Քեսապցիք բակլան եւ ոլոռնը կանաչ վիճակով կ'ուտէին: Կանաչ բակլայով քանի մը տեսակ ճաշեր կը պատրաստէին: Հիւրերը բակլանոց տանիլը լաւ հիւրասիրութիւն կը նկատուէր, կը մտնէին բակլանոց, թէ՛ կը հաւաքէին եւ թէ՛ կ'ուտէին ու կը զրուցէին: Չոր հունտ բակլան եւ ոլոռնը հին քեսապցիք չէին գործածեր:

Հ ու ն ձ ք ք կը կատարուէր Յունիս-Յունիս ամիսներուն, այսինքն՝ ցած տեղերէն շուրջ մէկ ամիս ետք: Հ ու ն ձ ք քի ատեն բոլոր տնեցիներն ու կենդանիները արտերը կ'ըլլային: Յորենի հ ու ն ձ ք ք այրերը կը կատարէին, իսկ կիները խուրձ կը կապէին: Հ ու ն ձ ք ք միակ գործիքը մանգաղն էր: Կարգ մը հնձուորներ իրենց մատներուն (բացի ճկոյթէն եւ բթամատէն) կ'անցընէին երեք մատնածեւ երկար մատնոցներ, որ մէկ շարժումով աւելի շատ ցորենաբոյս առնեն ափի մէջ, այդպէս 3-4 մանգաղի շարժում թելին մէջ կը դառնար մէկ բռնատ, զոր կը նետէին գետին ու կ'անցընէին առաջ: Հ ու ն ձ ք ք կը կատարուէր տաք օդին, կիզիչ արեւին տակ:

Կիները բռնատը կը հաւաքէին (**բըռնուօտ ճուղիլ**) եւ խուրձ (**խորձ**) կը կապէին: Քանի մը բռնատ ցորենաբոյսը մէկ խուրձ կ'ըներ: - Խուրձը կը կապէին կեմով (**կիմ**), զոր կը շինէին ցորենաբոյսով կամ ալ **հիմքա** կոչ ու ող թուփի ոստերով: Կը հաւաքէին երկու տրցակ ցորենաբոյս ու հասկի կողմէն կը հանգուցէին իրարու, կը ստեղծուէր շուրջ մէկ մեթր երկարութեամբ կեմը: Խուրձերը բոլորածեւ կը դարսէին իրարու վրայ, հասկերը միշտ դէպի ներս: Խուրձերու դեզը կը կոչէին **մալ ալմա** Ասկէ խուրձերը կալ կը կրէին:

Տորենի հունձքը առանձին չէին կատարեր: Փոխօգնութեան եղանակով այրեր եւ կիներ իրարու կ'օգնէին: Բռնատհաւ արելու անպայման կու գային նաեւ այրի կիներն ու առանձին ապրող տարեց աղջիկները: Ասոնց քանի մը խուրձ ցորենաբոյս կը նուիրէին: Ասոնք խուրձերը տուն տանելով փայտէ մուրճով կը պարպէին հասկերը, իսկ ծղօտները կը պահէին հունձքի եղանակէն ետք ծեղէ ամաններ, սեղաններ եւ գլխարկներ հիւսելու համար: Այրի կիներուն իրաւունքներն էր նաեւ հասկաքաղը (**հէ'սկուօղ**), այսինքն՝ մանգաղի բերանէն դուրս մնացած կամ գետին ինկած հասկերուն հաւաքումը: Ագահ մարդու համար կ'ըսէին. «Ասոր տտելը հասկաքաղ չ'ըլլար»:

Յնձուորներու նախընտրած ճաշը թանապուրն էր (**գէ'թմէ'սէօր**, խաշած մանր ձաւարը թանով խառնած), որ թէ՛ արագ կը պատրաստուէր, թէ՛ կը զովացներ:

Խոզանին մէջ անասունները չէին մտցներ մինչեւ որ հասկաքաղը չվերջանար:

Խուրձերը կալ կը կրէին էշերով ու ջորիներով: Խուրձերը կորթոյնքին (համետ) երկու կողմերը կը կապէին՝ հասկերը դէպի վար դիրքով: Սովորաբար երկու քական խուրձ մէկ հանգոյցով կը բեռնային: Բեռը կրնար ունենալ մինչեւ 20 խուրձ: Լեռնային կածաններէն իշու բեռ չէր անցներ. գիւղացին ստիպուած իր շալակով կը կրէր խուրձերը: Հոս կրկին կիներուն կը վիճակուէր բեռին մեծ մասը:

Արմտիքի (սիսեռ, ոսպել այլն) հունձքը կիները մերկ ձեռքերով կը կատարէին: Հունձքը կը շարէին ճիւղերու վրայ ու շալակով կը բերէին կալ:

Կալ երը կ'ըլլային գիւղերէն ոչ հեռու բլուրի մը անջին կամ ձորի դիմաց բարձրադիր տեղ մը, որ «հով քաշէր»: Ծմակու փոս տեղերը կալ չէին շիներ: Կալ երը սովորաբար կ'ըլլային իրարու մօտիկ, երեք թէ չորս հատ, նայած գիւղի կամ թաղի մեծութեան: Կալը հաւաքական սեփականութիւն էր, կը պատկանէր քանի մը ընտանիքներու, գերդաստանի մը կամ ամբողջ գիւղին: Կալի ժամանակէն դուրս՝ կալերը կը դառնային արօտավայր, խաղավայր կամ հաւաքատեղի:

Կալին շուրջ բաց տարածութեան մը մէջ կը դիզէին հունձքը ու

կարգի կը սպասեին:

Նախ կը մաքրեին, կը հարթեին, կը ջրեին ու կը լողեին կալը: Ամեն կալ ուներ իր լողն ու լողտուրքը: Ամեն հերթափոխէ ետք կալը ջրել ու լողել անհրաժեշտեր:

Նախ կը կամներն խոշոր արմտիքը՝ սիսեռը, ոսպը, կորեկը, ապա ցորենը, իսկ ամենէն վերջը՝ գարին ու վարսակը եւ միւս անասնակերերը: Հունձքը կը փռէին կալին մէջ, խուրձերը կը քանդէին, կը քրքրէին ու օրը տաքնալէն ետք կը սկսէին կամնել ու:

Ամեն ընտանիք ուներ իր կալի գործիքները: Կամը կը քաշէր մէկ լծկան՝ էշը կամ ջորին: Կամին վրայ ոտքի կը կենար այր մարդ մը մինչեւ որ կալը նստէր, այսինքն՝ հունձքը բաւական կամնուած ու մանրուած ըլլար, ապա սանձը կը յանձնէին փոքրիկներուն: Կամը կը դառնար ու կը դառնար: Կալ ու որը նախ երկմատնի (**ըրկըմէ'տին**), ապա հինգ-մատնի (**հէնկմէ'տին**) գործիքներով ու հոսելիով (**հիսիլա**) կը խառնշտկէր կալը, տակը վրան կը բերէր, որպէսզի չփշրուած հասկ չմնար: Ոսպն ու սիսեռը օրը երկու երես կը հանէին, իսկ ցորենը՝ - հազիւ մէկ երես: Կամնուած հունձքը կը հաւաքէին կալի շրջանակին մէջ տեղը: Հաւաքող գործիքներն էին նախ հոսելին, ապա՝ ցախաւելը: Կալի ցախաւելը **սըլլուն** կը կոչեն, փշոտու գռուզ թուփմը, որ կապելով հաստկոթի մը ծայրին՝ կալի ցախաւել կը դարձնէին: Երկու երեք երես կամի թեղը երբ պատրաստըլլար՝ կը սկսէր երնել ու գործողութիւնը:

Ամեն իրիկուն կամը հակառակ ուղղութեամբ դարձնելով կը ջրեին, կայ ծքարի փոսիկները ջուրով կը լեցնէին: Առտուն պարապ փոսիկներուն մէջ կայ ծքարէ շեղբեր կը գամէին, միւսները կը փոխէին: Կայ ծքարը կը գտնէին գետահուներէն:

Խառն հովուն չէին երներ: Հովը որքան զօրաւ որ ըլլար՝ գործը նոյնքան լաւ կ'ընթանար: Եթէ կարելի ըլլար՝ երկու հոգիով կ'երնէին: Անոնք կը կենային թեղին առջեւ, դեմ դիմաց եւ հովին կու տային հոսելիով վերցուած կալը՝ հոսելիին երեսը քիչ մը հովուն կողմը թեքած: Կը շարունակէին մինչեւ թեղը վերջանար: Յարդը կը հաւաքէին կալին եզերքը:

Կինը թեղին ցորենը կալ ին մեջ երկու մաղէ կ'անցըներ, առաջին մաղը կը կոչուէր **ապարու**, իսկ երկրորդը՝ **սարուօտ** Այս մաղերուն մեջ կը մնայ ինչ մանրուած հասկերն ու շիւղերը՝ **գաղրղա** գորսաւնդի մեջ ծեծելէ ետք կրկին կ'երնէին: Ցորենը քուրցերով տուն կը փոխադրէին, ուր կինը ձրմաղէ կ'անցներ զայն, կը լուար, կը չորցներ սաւաններու վրայ, տանիքը: Ապա տան կիներն ու աղջիկները կ'ընտրէին, կը մաքրէին ցորենը, ցորենաչ ախիժներն ու շիւղերը, օտարոտի հունտերը դուրս կը թափէին: Տանտիկինը կը զատէր ձաւարի, ծեծածի, չորթանի ցորենը, իսկ մնացեալը կ'ամբարէին իբրեւ ալիւր-ցուել սերմնացու:

Յարդը կարելի փութով պէտք է մթերուէր հաւանական անձրեւէ մը չփճանալ ու համար: Յարդանոցը (**արդընուց**) առանձին սենեակ մըն էր՝ ախոռին կից կամ անոր մէկ անկիւնը՝ ճիւղերու ցանցով մը անկէ բաժնուած: Յարդը հոն կը պարպէին տանիքէն բաց-ուած երդիքէն, գորյետոյ կը փակէին:

Ներկայ իսքիչ երմիայն ցանք կը կատարեն՝ գլխաւորաբար գետինը խոպան չձգելու նպատակով: Թրաքթորի կողքին արօրը մինչեւ 1980-ական թուականները գործ կը տեսներ: Այսօր եւս հունձքը կը կատարուի մանգաղով. հնձող մեքենաները Քեսապի արտերը չեն կրնար մտնել, իսկ կամը կը կատարուի կամնող մեքենայով: Յանքի տարածու թիւնները մեծապէս նուազած են:

Գ.- Ծխախոտ եւ այլ անջրդի մշակութիւններ. - Ընտանիքի հիմնական եկամուտներէն մէկը ծխախոտէն կու գար: Ծրջանի ամենէն ընտիր հողերը կը յատկացուէին ծխախոտի մշակութեան: Ամէն ընտանիք միջին հաշուով երեք տէօնիւմ (1000 քառ. մետր) ծխախոտ կը տնկէր:

Ծխախոտի տնկումը կը կատարէին Մայիսի վերջին շաբաթէն - սկսեալ: Ծխախոտի գետինը անջրդի **հագուրան** է, զորս կը հերկէին երկու անգամ: Երկրորդ հերկէն ետք արօրով կ'ակօսէին: Ծխախոտը կը տնկուէր իրարմէ մէկ-մէկու կէս թիգ հեռաւորութեան վրայ: Տնկողը պէտք է հողի խոնաւութիւնը (**հուօյթ**՝ հիւթ) գտներ, ապա փորիչը մխրճէր հողին մեջ: Երկրորդ մը կը հետեւէր տնկողին ու գաւաթ մը ջուր կը պարպէր տունկին տակ:

Ծխախոտի ցօղունը կը բարձրանար կէս մարդահասակ, երբեմն աւելի, ու կոկոն կ'արձակէր: Տերեւներուն քաղը կը սկսէր վարէն, կը քաղէին միայն դեղնած տերեւները: Տերեւները միլով կը շարէին կանեփէ թելի մը վրայ, որ կ'ունենար մէկ թելաչափ երկարութիւն՝ մէկ ուսէն մինչեւ միւս ձեռքի ափը: Ծարոցները չորցնելու համար կը կախէին յատուկ կախարաններու վրայ: Անձրեւին կամ շատ խոնաւ օդին՝ տան սենեակներուն առատաղներէն կը կախէին, որովհետեւ խոնաւութիւնը կրնար սեւցնել քաղուած տերեւները: Չորնալէ ետք տերեւները մէկիկ-մէկիկ բանալով՝ կը կազմէին ծխախոտի հակերը:

Պետութիւնը ծանր տուրքեր կը գանձէր ծխախոտէն: 19-րդ դարու վերջաւորութեան Սուրիոյ ծխախոտին հաւաքման մենաշնորհը ստանձնեց ֆրանսական Ռեժի-ն: Թեւ տուրքը վերացաւ, բայց խիստ օրէնքներ սահմանուեցան: Ընկերութիւնը կ'որոշէր ծխախոտին չափը, տեսակն ու գինը: Ռեժի-ի պաշտօնեաները կը չափագրէին մշակելի հողը ու **թախիս** կը կատարէին, այսինքն հասանելի բերքին մօտաւոր չափը կ'որոշէին: Գիւղացին տուգանքէ ու տոյժէ խուսափելու համար կ'աշխատէր բերքը պահանջուած քանակին հասցնել կամ նախօրօք կաշառել պաշտօնեան աւելի ցած թախիս մը գրելու համար: Մաքսանենգութիւնը արգիլելու համար, Ծխախոտի Ընկերութեան տրամադրութեան տակ գտնուող ոստիկանական յատուկ ջոկատ մը անակնկալ կերպով կը կոխէր տուները, կը կտրէր ճամբաները եւ խուզարկութիւլներ կ'ընէր: Անոնց եւ ծխախոտի մաքսանենգներուն միջեւ զինեալ բախումներ կը պատահէին: Ընկերութիւնը ամէն տարի նորանոր պահանջներով կը ծանրացներ հողագործին գործը, կը ձգձգէր թէ՛ բերքին ստանձնումը, թէ՛ փոխարժէքին հատուցումը: 1898-ին «Բիւզանդիոն»ի թղթակիցը կը գրէ. «Այսօր գնա՛, վաղը եկո՛ւր, գալ շաբթու եկո՛ւր»ները կը շարունակուին. թէ՛ աշխատութեամբ եւ թէ՛ ծախքերով երեւան բերուած բերքին՝ Ռեժի-ի կողմէ 20 փարակամ 1-2 դրու շ գին կը տրուի»⁵:

Տարագրութենէն ետք ծխախոտի մշակութիւնը ու շ կը սկսի: 1924-

⁵ «Բիւզանդիոն», 21 Ապրիլ 1898:

ին գիւղացիք ծխախոտի մշակութիւն կատարելու համար դիմում կը կատարեն ֆրանսական գաղութային իշխանութիւններուն⁶: Ռեժի-ն կրկին կը ստանձնէ ծխախոտի գնման ու արդիւնահանման մենաշնորհը: Գիւղացին յոյսեր կը կապէ ծխախոտին հետ, բայց ընկերութեան սեղմումները կը շարունակուին նախկին ձեւով: 1960-ական թուականներուն գիւղացիք ամբողջապէս կը հրաժարին ծխախոտի մշակութենէն:

Ծխախոտի ցանքին եզերքը կամ մէկ անկիւնը դարձեալ անջրդի կը տնկէին լոլիկ, իսկ հոս ու հոն քանի մը փոսիկ ձմերուկ, սեխ ու աճում, իսկ պատերուն տակ՝ եգիպտացորեն, աւելաբոյս ու արեւածաղիկ: Ձմերուկի, սեխի եւ աճումի փոսիկները մէկ-երկու անգամ «կը պաղեցնեն» մինչեւ որ բուսնին:

Դ.- Պարտիզականութիւն.- Մինչեւ 1950-ական թուականները շրջանի պարտիզամշակութեան մէջ հիմնական տեղ ունէին թթենին, ձիթենին, թզենին եւ որթատունկը: Պարտեզները առհասարակ խառն ծառատեսակներ ունէին: Որթատունկերը կախուող այգիներ կը կազմէին, փայտէ արիշներու վրայ փռուած կամ այլ ծառերու մագլցած վիճակով: Բախտաւ որ ընտանիքներ կը նկատուէին քանի մը ընկուզենի, նշենի, նռնենի, տանձենի, խնձորենի, նորաշխարհի, կեռասենի, ադամաթզենի, դեղձենի, սերկելիլ, նարնջենի ու նեցողները:

Կային քանի մը ընտանիքներու կամ ամբողջ գերդաստանին կտակուած ընկուզե-նիներ: Յաճախ հողը ուրիշին կ'ըլլար, իսկ հոն գտնուող այս կամ այն ծառը մէկ ուրիշին՝ ով գիտէ քանի սերունդ առաջ մէկու մը օժիտտրուած: Կային դարաւոր ընկուզենիներ: Ընտիր է ընկուզենիին տախտակը: Ընկոյզի քաղին կը մասնակցէին բոլոր

⁶ «Չարթօնք», Աղեքսանդրէթ, 19 Ապրիլ 1924, էջ 16:
1930-ական թուականներուն Քեսապի շրջանը կ'արտադրէ տարեկան շուրջ 60 թոն ծխախոտ: Ծառ բարձր կը գնահատուի մանաւանդ Գարատուրանի ծխախոտը, որուն մասին Արտաւազդ Արք. Սիւրմէեան կը գրէ. «Գարատուրանի ծխախոտը ծխողներուն մօտ մեծ հաջակ ունի հիւսիսային Սուրիոյ մէջ իր մասնաւոր բոյրին համար: Այս ծխախոտը, իբր պէսախսութիւն, հանգիտութիւն ունի Ամերիկայի «Վիրժինիա» ծխախոտին հետ եւ որ Գարատուրանի մէջ միայն կ'արտադրուի: Եթէ մշակութեան մէջ բարեփոխութիւններ մտցուին, կարելի է գնորդներ գտնել արտասահմանի մէջ ալ, որովհետեւ ծխախոտի սուրիական այս միակ տեսակն է, որ կրնայ օտար ծխախոտներու հետ մրցակցութեան մէջ մտնել» (**Ա. Սիւրմէեան**, Սուրիա, Ա. հատոր, 3-րդ էջ, 1940, էջ 213-214):

բաժնեկիցները: Կը քաղէին ու տեղւոյն վրայ հատով կը բաժնուէին: Ընկոյզին կեղեւը հանելուն **թուլ թուալի** ու միջուկը հանելուն **աղբուրիլ** կ'ըսեն: Ծատեր փախլ աւացու եւ չիրին հետ ուտելու ընկոյզ եւ նուշ կ'ուսենային: Նարնջենիին կարելի էր հանդիպիլ ջրառատու ծմակ տեղերը: Փշաթգենիի (քաթթիւս, սըպպեր) քանի մը թուկար Գարատուրանի ծովու թաղին եւ Չաթալլէք գիւղակին մէջ: Նռնենիներու շարքը կ'երեւէր սովորաբար պարտեզներու սահմանագծին վրայ: Կային երեք տեսակները. քաղցր եւ **լըֆֆուս** (արաբ.՝ Լըֆֆան. - կիսաքաղցր) նուռերը կ'ուտէին, տօնական օրերու համար կը պահէին, իսկ թթու նուռը կիներ կը թօթուէին (հատիկները զատել), կը քամէին ու նռան թթու կը պատրաստէին:

Գրեթէ ամէն տուն ուներ իր թթենիի պարտեզը: Թթենիի տերեւը շերամին հիմնական կերն էր: Անոր ոստերով շերամատան դարակները (**գաջուօգ**) կը հիւսէին, իսկ կեղեւը (**խիշէլ**) կը գործածէին իբրեւ կապ: Թթենիի տախտակով կը պատրաստէին տնային ընտիր կահոյք, - դուռ ու պատուհան, տախտակամած: Կային ճերմակ ու բաց վարդագոյն թուրի քանի մը տեսակներ: Թուրը իր եղանակին ամենէն սիրելի պտուղն էր: ճերմակ թուրէն օղի կը պատրաստէին: Ռուպ պատրաստողներ ալ եղած են: Ամենէն ընտիր թուրը սեւն էր (**հուրու մթօթ**), որմէ օշարակի համար մածուկ կը պատրաստեն առայսօր:

Թգենիի բազմաթիւ տեսակներ կային: Կիները թուզը կը հաւաքէին ու տանիքը, հիմքայի ցախերուն վրայ թեթեւ մը կը ճգմէին հառհառ (**մըսթըհիլ**): Լաւապէս չորցնելէ ետք կողովով կաթսայի եռացող ջուրին մէջ կը պահէին պահ մը (**հուսպըլիլ**): Կրկին կը փռէին արեւուն տակ ու չորցնելէ ետք կը լեցնէին ամբարին մէջ: Թուզի չիրը քեսապի ընտանիքներուն հիմնական սնունդներէն մէկն էր: Յովիւներուն, մշակներուն, բան-ուորներուն օրուան սնունդը բաղարջ մը հաց ու գրպան մը չոր թուզ ըլլար՝ կը բաւէր: Թուզի չիրէն թուսդ օղի կը պատրաստէին:

Ձիթապտուղին (**տանըպրտոզ**՝ տան պտուղ) քանի մը տեսակները կը ճանչնային: Քաղը օրեր, երբեմն շաբաթներ կը տեւէր: Բերքը քուրցերու մէջ չէին պահեր, այլ՝ կը փռէին տան մէջ ու քանի մը օր ետք կը

տանեին ձիթհանք (**սպթոս**): Ամեն գիւղ, երբեմն թաղ ու ներ իր ձիթհանքը, որ սովորաբար աղբիւրին քով կ'ըլլար: Ձիթապտուղը կը ճգմուէր լողին տակ ու կը քամուէր: Նոր, չգտուած ձեթը **ծըննուէն** կը կոչէին, իսկ քամուած ձիթապտուղը՝ **ճիֆթ**: Կիները պտուկ մը մաքրուած ճիֆթ կը վերցնէին **ճիֆթուօն հուօց** պատրաստելու համար, իսկ մնացեալը անասուններու կեր կ'ըլլար: Յատձիթապտուղի երկու տեսակը պարէն կը դնէին՝ կանաչ ու սեւը: Կանաչը կը դնէին աղջուրի մէջ, մինչեւ որ դառնութիւնը երթար, ապա միսի քարի վրայ կը ճգմէին (**սըթըս-ցընիլ**) ու կրկին աղջուրի մէջ կը դնէին: Յասուն, սեւցած կամ չիր դարձած ձիթապտուղը **հադդէօն** կը կոչէին: Չայն ձեթով ու աղով շարելէ ետք՝ կը լեցնէին կարասին մէջ:

Ձիթենին անջրդի հողերուն մէջ դանդաղ աճող ծառ է: «Ձիթենին ուրիշի համար կը տնկեն» կ'ըսէին մեծերը: Ծառը կրնար շատ մեծնալ: Սեղանաչ ափկոճղ ու նեցող ձիթենիներ կային: Մեծ ձիթենիի ցօղունը կրնար խռոչներ ունենալ՝ բնական կամ փորուած, ուր գիւղացին իր ջրամանը, ու տելիքի պաշարը, մանգաղն ու միւս իրերը կրնար պահել: Կային դարաւոր ձիթենիներ, Գարատուրանի Քէօրքենց թաղի ձիթենին սրբատեղիէր, անոր խռոչներուն մէջ մոմ կը վառէին, ու խտիլաթեր կը կապէին ու թաղի փոքրիկներուն կը հաւատացնէին, թէ նորածինները անոր մէջէն կը հանեն...:

Շրջանին մէջ որթատու կը (**տուլլա**) գրեթէ անտառային բոյս է: Նոր արտբացող գիւղացին որթատու կի ոստերէն մէկը «կը թաղէ», որախօսի նոր արմատնետելով ծայրէն աւելի զօրաւոր ոստեր արծակէ: Որթատու կը Փետրուար ամսուն կը յօտէին: Գիւղացին որթատու կը կը պատուաստէ իր ուզած տեսակով, իր ուզած տեղը կը տնկէ արմատով կամ ճմմոյթով. վերջինը որթատու կի ճիւղաւորուած տեղէն ճղուած ոստն է, որ շուտով կրնայ արմատնետել:

Շրջանը հարուստ է ուտելու, գինիի եւ ռուպի խաղողի տեսակներով, որոնք իրարմէ կը տարբերին ողկոյզի եւ հատիկներու մեծութեամբ, խտութեամբ, կարծրութեամբ, գոյնով, քաղցրութեամբ ու անուկով:

Ռուպի խաղողը կը քաղուէր մէկ անգամէն: Ռուպ պատրաստելու

համար յատկապես տրամադրուած տեղը **մասարակը** կոչուեր: Մասարակը պատկաներ ամբողջ գերդաստանին, թաղին կամ գիւղին: Այդ պատճառով այ գեկու թքի կարգ կը նշանակուեր գիւղերուն մէջ:

Քեսապի գիւղերուն մէջ այ գեկու թքը տոնական բան մը ուներ: Այ գեկու թքէն օր մը առաջ տան պատանիները ծնողքի անունով **մասարայի** կը հրաւիրէին հեռաւոր գիւղերու ազգականներն ու բարեկամները, դուռ-դրացին: Այ գեկու թքի ժամանակը թաղէ թաղ կամ գիւղէ գիւղ կը տարբերէր, ցած վայրերը մասարան միշտ 15-20 օր առաջ կը սկսէին: Ատոր համար հեռաւոր թաղերու ազգականներն ու բարեկամները առհասարակ կ'ընդառաջէին հրաւերին: Խաղողաքաղին կը մասնակցէին բոլորը՝ մեծ ու պզտիկ, այր ու կին: Ամէն մէկը կողով մը առած կը մագլցեր ծառ մը կամ կը մտնէր արիշի մը տակ: Այ գիւղերը կանչերով կը լեցուէին: Խաղողը մեծ սնտուկներով գրաստին բեռնալով՝ մասարակը բերէին: Յոն տան մարդը մասարայի փայտը կը ջարդէր, մասարան կը կարգաւորէր:

Խաղողը մասարահասնելէ ետք գործը միայն այրերուն կը մնար: Խաղողը կը պարպուեր թաքնային (աւազան) մէջ: Երկու ափ **հալուրահող** վրան թափելէ ետք մարդ մը խաղողը կը կոխկռտէր: Յիւթը զտելու յատկութիւն ունեցող ճերմակ հողը՝ հալուրան, յատուկ հանքերէ կը բերէին: Յիւթը մեծ սանին (**արւղէնծ**) մէջ հանդարտօրէն տաքցնելէ ետք, երբ դիրտը (**քաֆըր**) երեսին կը ճեղքատուեր, ուրիշ մեծ լաղի մը մէջ «կը հանդարտեցնէին»: Յիւթը կը զտուեր: Չտուած ջուրը մեծ լաղին մէջ կը պարպէին ու կը բռնկեցնէին մեծ կրակը: Ասկէ ետք նոր հիւթը զտուելու համար կը տաքնար քովնտի սանին մէջ:

Մէկ հոգի կը կառավարէր եռացող լաղը: Երկրորդ մը կրակը կը կառավարէր: Լաղ մը հիւթը հազիւ երեք ժամէն կ'ելլէր: Ընթացքին՝ ուրիշ մը նոր լաղին համար խաղող կը ճզմէր:

Մասարայի գիշերները հետաքրքրական հաւաքոյթներ կ'ըլլային: Գիւղի մարդիկ, ազգականներ եւ բարեկամներ, հանդերձ ընտանեօք մասարակ'այ ցելէին: Կրակին դիմաց կը փռէին կարպետներ, կը դնէին բարձեր: Այրերը հոն կը նստէին ծալ ապատիկ, իսկ կիներն ու աղջիկները՝ բակին մէջ, շուքը կամ տունը: Մասարային շուրջ մարդ կը

վխտար: Յեռաւոր տեղերէ խումբ-խումբ երիտասարդներ կու գային: Յրաւիրեալներ կու գային լեցուն ձեռքով՝ շիշ մը օղի, բացառիկ պտուղ մը, մածուն, ինչ որ է... Քանի հրաւեր կայ՝ **ճըգգուն** պէտք է ըլլայ անպայման, այսինքն՝ տանտէրը աբլոր մը կամ քանի մը վառեակ մորթած կ'ըլլայ: Քանի մը տեղ սեղան կը բացուէր:

Լաղը կ'ելլէր ու ռուպը կը պարպուէր միջակ չափի լաղի մը մէջ: Մէկը գռնեպով (շերեփի դեր կատարող դոմագգի մը) կը փոփոցներ ռուպը ու «**փրփեօ՛ր, փրփեօ՛ր**» կը կանչէր: Լաղին շուրջ կը վազէին նախփոքրիկները, յետոյ մեծերը՝ աղջիկ, կին, բոլորը: Փրփուրը կ'ուտէին դափնիի տերեւով, որ ծղօտի մը անցընելով՝ դգալի ձեւ կ'առնէր: Ոմանք խոր պնակի մը մէջ «փրփուր քաղելով» տուն կը տանէին: Մասարայի գիշերներուն՝ երիտասարդ տղաք աղջիկ կ'ընտրէին, խօսք կը կապէին, սիրահարներ իրարու կը հանդիպէին: Մասարայի գիշերները զանազան խաղերու, մրցու մներու, ուրախութեան, երգի ու պարի առիթներ էին փոքրերու թէ մեծերու համար:

Մասարայի լաղը երբեմն շաբաթներ տեղը կը մնար, կրակը չէր հանգեր: Ռուպը հիմնական ու ամենօրեայ սնունդ կը նկատուէր: Կրնար գործածուիլ նաեւ շաբարաւ ազի փոխարէն: Ռուպի խաղողէն կը պատրաստէին պաստեղը, շուճուխը եւ այլ մթերքներ:

Չամիչի խաղողը քաղելէն մէկ-երկու օր առաջ տանտիկինը մոխրաջուր կ'եռացներ ու կը ձգէր, որ նստի՝ հանգչի: Գաւաթ մը ձեթ դնելէ ետք կրկին կ'եռացներ ու խաղողը անոր մէջ ողկոյզ-ողկոյզ թաթխելէ ետք տանիքը կը փռէր: Չորնալէ ետք կը հատէր, մաքուր ջուրով կը լուար ու կրկին կը փռէր չորնալ ու համար:

Նոյն միջոցին տանայրը կը քաղէր նաեւ գինիի խաղողը: Ոմանք հիւթը անպայման կրակի կը դնէին քաղցրահամ գինի ունենալ ու համար: Լաղէն երկու մատջուր պէտք է պակսէր կրակին վրայ: Խաղողէն օղի քաշողները առանձին սարք կ'ունենային:

Վերջին կէս դարուն ամբողջ շրջանը զարկ տուաւ գլխաւորաբար ինձորի ու մասամբ ուտելու խաղողի, սալորի, տանձի, դեղձի, ծիրանի, սերկելիլի եւ այլ պտուղներու մշակութեան: Ծրջանին մէջ պտուղը արդիւնաբերութեան համար հում նիւթի չէ վերածուած, ա-

Նոր կարիքը չէ զգացուած, որովհետեւ բերքը օրը օրին կը տեղափոխուի Յալէպի եւ Լաթաքիոյ գիւղատնտեսական հումքերու կեդրոնացեալ շուկաները ու կը վաճառուի: Անոնցմէ միայն անձնական սպառումի համար գիւղացին կ'արդիւնահանէ որոշ մթերքներ, ինչպէս՝ անուշներ, չիրի ու պաստեղի տեսակներ, ըմպելիներ եւ այլն:

Դ. Անտառային տնտեսութիւնը ունի իր բաժինը Քեսապի կեանքին մէջ: Նախ՝ քեսապցին իր ամբողջ վառելի անիւթը հայթայթած է անտառէն: Ամէն տունն իր փայտանոցը ունէր, իսկ թոնիքը՝ իր ցախանոցը: - Գիւղացին իր տան փայտը ինք կը հատէր, ցախը՝ նոյնպէս: Այրը փայտը կը բերէր տուն, իսկ կինը՝ ցախը: Կային արհեստով փայտահատներ, որոնք աւանի բնակիչներուն համար փայտ կը հատէին ու կը կրէին: - Գիւղական եկեղեցիներուն, դպրոցներուն եւ ակումբներուն փայտը գիւղացիք հաւաքաբար կը կտրէին ու կը կրէին: Երբեմն կարգ կը նշանակէին:

Կային արհեստով ածխագործներ: Ածուխի օճախը (ածուխ պատրաստելու տեղը) կը շինէին փայտին հատած տեղը: Ածուխի համար լաւագոյն փայտը փշոտ կաղնին էր: Նոր գետին բացողները անպայման քանի մը օճախածուխի փայտու արմատ կը հանէին: Ածուխը կը յանձնէին Քեսապի վաճառականներուն:

Տուններու ծածկերուն գերանները, մարդակները եւ տախտակները ընդհանրապէս կը հայթայթէին անտառէն՝ գլխաւորաբար ծրդի, եղեւնի (փիճի), բարտի, կաղնի ծառերէն, նաեւ թթենիէն:

Քեսապի տնտեսութեան մէջ շատ կարեւոր դեր ունեցած է եւ դեռ ունի դափնին (**կասլա**): Դափնին օրհնուած ծառ է քեսապցիին համար: - Ծատտուներու յոյսը եղած է դափնին: Ի գուր չէ ըսուած, որ քեսապցին այսլեռներուն կապողը դափնի ծառն է: Դափնիի անտառներ կան գրեթէ ամէն տեղ, բացի Տուզաղաճի, Վերի ու Վարի Պաղճաղազ գիւղերու շրջապատէն: Դափնիի պուրակին կամ անտառին **կէ'սլէօտ** (կասլուտ) կ'ըսէին: Յայրեր իրենց աղջիկներուն երբեմն կասլուտ մը օժիտ կու տային, այդ պատճառով ալ դեռ մինչեւ օրս կան վայրեր, ուր հողը մէկուն կը պատկանի, կասլուտը՝ ուրիշին: Կան նաեւ ընդհանուրին պատկանող դափնիի անտառներ:

Պտղահալ աքի կը մասնակցէին ընտանիքի բոլոր անդամները: Հոկտեմբերէն սկսած՝ պտղահալ աքը կրնար տեւել մինչեւ Նոր Տարի: Քաղը քարափներուն եւ բարձր ծառերուն վրայ չափազանց վտանգաւոր կ'ըլլար ուշ աշնան, երբ սաստիկ հովեր կը փչէին ու ծառերը օրօրուելով կը ճճճային: Բարձունքներուն վրայ քաղը կատարող անձը մէջքին կապած պարանը կ'օղակէր քանի մը ծառերու, որպէսզի իյնալ ու պարագային չգլորուէր անդունդն ի վար: Երկար ձողերով հարուածելով ոստերուն՝ պտուղը կը թօթուէին սաւաններու վրայ կամ ուղղակի գետինը ու անկէ կը հալաքէին:

Պտուղին եփը կը կատարէին բակին մէջ, խոշոր սանի մը մէջ, որ յատուկ շինուած քարէ կրակարանին վրայ կիսաթաղ կը տեղադրէին: Մէկ-երկու եռը կը բաւէր, յատուկ շերտփով մը կը ծեծէին եփը, կ'աւելցնէին ջուր ու կը ձգէին, որ պաղի: Ապա մակերեսէն կը քաղէին ձեթը ու կ'ամբարտէին տիկերու մէջ: Եփուած պտուղը կը չորցնէին, անասնոց կեր կ'ըլլար: Դափնեծեթի վաճառքով գիւղացին պարտքեր կը գոցէր կամ ալ շուկայէն բերուելիք իր ամենէն ժուժկալ պէտքերը կը գոհացներ: Դափնեծեթը կը գնէին ընդհանրապէս քեսապցի վաճառականները:

Կը պատմուի, թէ հայրենադարձ քեսապցիներ ուզած են իրենց ծննդավայրը խոր-հորդանշող յուշարձան մը կառուցել: Համագիւղացի մը կ'եսլուրջ-կ'ես կատակ ըսած է.

- Դափնի մը անեցուցէք՝ կը բաւէ: Մեր գոյութիւնը խորհրդանշող աւելի գեղեցիկ բան չունի ո՛չ Քեսապի բնութիւնը, ոչ ալ քեսապցին:

1925-ին դափնեծեթի ընդհանուր արտադրութիւնը եղած է 12 հազար հոխա, որ բերած է 650 օսմ. ոսկի եկամուտ⁷:

Դափնեծեթի հումքով օճառի արդիւնաբերութիւնը կը սկսի 1940-ական թուականներուն: Քեսապի շրջանին մէջ այսօր եւս կը շարունակեն գործել օճառի քանի մը գործարաններ:

Ներկայիս այս հումքի արտադրութիւնը կը շարունակէ եկամ-

⁷ «Սուրիահայ Տարեցոյց», Հալէպ, Բ. տարի, 1925, էջ 224:

տաբեր ըլլալ :

19-րդ դարուն, ընդհուպ մինչեւ Մեծ Եղեռն, քեսապցիք արտադրած են նաեւ բուժական խեժ մը, գոր **գաղըրանը ձիէթ** կ'անուանեն: Գաղըրանը եղեւնիի (փիճի) եւ ծրդիի կեղեւազուրկ գերանն է: Ասոնք մախր են, դիւրավառ ու բոցարծարծ փայտ, որ տեղացիք նախապէս գործածած են նաեւ լուսաւորութեան համար: Եղեւնին եւ ծրդին կը նկատուէին պետական ստացուածք: Օտար վաճառականները այս գերանները արտահանելու իրաւունք ձեռք կը բերէին: Տեղացի փայտահատները մնացեալ կոճղերէն ու ճիւղերէն խեժի արդիւնաբերութիւն կը կատարէին: Անոր համար նախ կը պատրաստէին օճախը, որ երկյարկանի ու գմբէթած եւ կառոյց ունէր: Վարի յարկը բուն օճախն էր, ուր բորբ կրակը կ'ըլլար, իսկ վրան կը դիզէին փայտը ու ամէն կողմէն լաւապէս կը ծածկէին քարով ու կրաշաղախով: Փայտերը սաստիկ տաքութենէն կ'արտաթորէին խեժը, որ մասնաւոր անցքէ մը կը հոսէր ամանի մէջ: Փոքր քանակութեամբ խեժ ունենալ ու համար տաշեղները կը շարէին թիթեղի մը մէջ, լաւապէս կը գոցէին բերանը, կը ծեփէին ցեխով ու կը դնէին կրակին մէջ: Թիթեղին մէկ կողմը դրուած խողովակէն խեժ կը հոսէր:

Բուժական խեժը կը քսէին բորոտութեամբ վարակուած այծերու վերքերուն. սպեղանի էր: Անկէ մեծ քանակութեամբ կ'արտածուէր Քեսապի շրջանէն:

Անտառներուն մէջ կան բազմաթիւ թուփեր ու ծառատեսակներ, որոնց պտուղները կերած, հաւաքած ու մթերած է քեսապցին, օգտագործած է խոհանոցին մէջ: Թուենք քանի մը հատը.

Բեւեկ (բուվիկ), ծառը՝ բեւեկնի, ունի ողկուզած եւ մանր պտուղ մը: Հասունը՝ մանուշակագոյն: Տոպրակ մը բեւեկը ձմրան երկար գիշերներուն համու հոտկու տար, կը խարկէին ու կը խառնէին խարկած սիսեռին ու ցորենին հետ, ընկոյզի, նուշի, չիրի, պաստեղի հետ սեղան կը դնէին: Բեւեկնիին գարնանային ծիլը **մուրջեկ** կը կոչեն: Կ'ուտուի, սեղան կը դրուի, քացախով սալաթ կ'ըլլայ: Բեւեկնին կը պատուաստեն ու կ'ունենան Հալէպի պիստակ:

Եղջիւր (աղջեր, արաբ.՝ խառնուա). կը գործածուի իբրեւ չիր,

նաեւ իբրեւ անասուններու կեր: Մեղրի չափ փնտռուած է եղջիւրի -
ռուպը, մեղրահամ ու մեղրագոյն: Եղջիւրը նախ կը ծեծեն ու կը
ճգմեն, խիւսը շաբաթ մը ջուրի մէջ կը պահեն, ապաջուրը կ'եռացնեն
խաղողի հիւթին պէս, մինչեւ որ ռուպըլլայ:

Վայրի սաւոր (հուրկումէլ). սաւորի ընտանիքին պատկանող վայ-
րի ու թթու պտուղ: Կեղուել է ու կորիզը թափել է ետք կ'աղային ու -
մածուկը պատեղ (**չարփանա**) կը շինէին: Թուփը տեղւոյն վրայ կամ
ուրիշ հող տեղափոխելով՝ կը պատուաստէին ծիրանի եւ սաւորի ը-
նտիր տեսակներ:

Մեղուառանձ (մաղվէկ տունձ). փոքրիկ կ'ըլլայ, սաւորի չափ ու
սնձածեւ: Ուշ կը հասուննայ: Հասունը հիւթեղ ու խնկաբոյր կ'ըլ-
լայ: Խակ վիճակով կը քաղեն ու կը մթերեն յարդանոցին մէջ, ուր
կրնայ մնալ մինչեւ Նոր Տարի:

Ձաղացքի սաւոր (Ձաղջը դամմէն). հին ջրաղացներու մօտ, առու-
ներու եզրին շատ կը հանդիպի: Պտուղը փոքր է ու սեւ, համով: Ժա-
մանակին միակ ծանօթ սաւորը եղած է: Նոյնին վրայ կը պատուաստ-
էին ընտիր տեսակներ: Աւելի փոքր տեսակն ալ կայ՝ **մախոխ**

Սինձ (սէնձ). մանր է, դեղին, թթու աշ: Առատ սինձ կ'ըլլար Կիւնիկ
լերան վրայ: Կը պատուաստեն ընտիր տեսակը, որ կրկնակի մեծու-
թեամբ պտուղ է:

Վարդապետի սինձ. փշոտ թուփ մը, որուն պտուղը կ'ըլլայ մանր, -
կարմիր ու քաղցր: Առատ պտուղը ողկոյզ-ողկոյզ կը կախուի ճիւղե-
րէն: Հովիւներն ու մանուկները կ'ուտէին: Ներկայիս հանրային -
պարտէզներուն մէջ կը հանդիպի իբրեւ տեքորաթիւ բոյս:

Գաւլապի. կ'աճի ծովահայ եաց տեղերը. ունի գինեգոյն ճիւղ. չա-
փազանց դիմացկուն է: Անոր փայտով դգալ, պատառաքաղ, շերտփեւ խո-
հանոցային այլ իրեր կը շինէին: Ուտելի պտուղը սեւ է ու մանր՝
գաւլապը մաթէօզ (ադամաթուզ>մաթուզ): Կայ նաեւ սովորական
ադամաթուզը (գարալ եոզ), գորնոյն պէս **մաթէօզ** կը կոչուի:

Մրտենի (մրտենի). պտուղը մանր է, հնտոտ. կայ երկու տեսակ՝ սեւ
ու ճերմակ: Պտուղը՝ մուրտը, կը ճանչնան օտար անունով՝ **հըմապ ո-**
լօս: Աշնանային թռչուններուն կերն է: Մանուկները **հմապ ա** ու-

տել ու խումբով կ'երթայ ին ու կը մտնէին հոտաւ Էտ թփու տներուն մէջ: Յմպալ ասէն օղի պատրաստողներ ալ եղած են: Պատու աստով կ'ուսնենան ընտիր տեսակը՝ սովորական պտուղէն կրկնակի մեծութեամբ:

Վայրի ձիթենի. ձիթենիի վայրի տեսակը, որ թփու տներու տեսքով կը հանդիպի յատկապէս Կիւնիկ լեռան վրայ եւ քիչ մը ամէն տեղ: Պտուղը սեւ ու դառն է: Կիրի ջուրին մէջ դառնութիւնը կը կորսնցնէ ու կը մթերուի: Թուփը տեղւոյն վրայ կամ ուրիշ հող տեղափոխուելէ ետք կը պատու աստուի ընտիր տեսակով:

Մոշ (մըրմընթէօթ). թուփը՝ **մրմիւս** (մորմենի), պատատու կ'է, կ'աճի գրեթէ ամէն տեղ: Ճամբաներուն եզերքը ձեռք մը երկարելով ափ մը հատել եւ ուտել գիւղացի կիսե-րուն եւ աղջիկներուն մեծագոյն հաճոյքն է:

Աղտոր (աղտուր). թուփը՝ աղտորենի, արագ աճող ու թփու տներու վերածուող բոյս մըն է, պտուղը կոնած եւ ողկոյզ է, մանր ու խիտհատիկներով, կաշուն, հասունը՝ կարմիր: Չափազանց թթու է, այնքան որ քաղի ատեն ձեռնոց կը դնեն: Չորցնելէ ետք կը ծեծեն ու մաղէ անցընելով՝ փոշին կը մթերեն խհանոցի համար: Ասոր թթուն ալ կը պատրաստեն. պտուղը ջուրին մէջ 1-2 օր կը պահեն, ապա ջուրը կ'եփեն, մինչեւ որ պնդանայ, մածուկը լլայ: Թանկարժէք համեմունք է:

3.2.- ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹԻՒՆ

Ա Տնայ ին կենդանիները. Գիւղերուն մէջ ամէն տուն ուներ կատու, շուն, էջ ու կով: Կովի փոխարէն կամ անոր կողքին քանի մը գլուխոջխար ու այծ պահողներ ալ կային:

Շուները կ'ըլլային տան, հովիւի եւ որսի: Յեռաւ որ ու առանձին տուները առանց շունի չէին ըլլար: Կատաղութեամբ բռնուած շուները վայրկեանին կը սպանէին: Լաւ շունը դռնէն ներս չէր մտներ, տան շուրջէն չէր հեռանար, տիրոջ ետեւէն չէր պտտեր, իմաստալից եւ տեղին կը հաջեր: Շան հաջոցէն տերը կրնար ենթադրել, թէ ախռէն անասուն մը դուրս փախած է, օտար կենդանի մը բակ մտած է, գազան մը կայ, օտարական մը կ'անցնի կամ ծանօթ մը (սոյնիսկ՝ այսինչը) կը մօտենայ:

Հովուական գամբռները սովորաբար գոյգ կ'ըլլային: Ասոնք և ալ ասպէս կը հասկնային հովիւին հրամանները, հօտէն չէին բաժնուեր. եթէ հրաման տրուէր, գոմէն ու փարախէն չէին հեռանար, կռուի կը բռնուէին արջին եւ գայլերուն հետ, վարազները թաքստոցներէն կը հանէին, աղուէսներն ու շնագայլերը կը խեղդէին:

Գիւղական միջավայրի մէջ առանց իշու տուն պատկերացնել կարելի չէր: Իշուն քամակը քեսապցիին միակ փոխադրամիջոցներ: Սայլ չկար: Եթէ գործերը շատ ըլլային՝ գիւղացիք իրարու էջ կը տրամադրէին: Տարածուած էր սել կամ մոխրագոյն էջը. սպիտակ էջը (-Կիպրոսի) քիչ կը հանդիպէր:

Իշուն քամակը բեռին համեմատ բան մը կը դրուէր: Եթէ պտոյտ էր՝ կը կապէին մինտար մը, վրան կը նետէին մանտիքը ու կը նստէին վրան: Լեցուն պարկերը կը բեռնային իշուն քամակին վրայ քուրծ մը դնելէ ետք: Այլ տեսակի բեռներու համար կը կապէին կորթոյնքը կամ **սամարը**: Կորթոյնքը գիւղացին կը շինէր: Սամարը բեռ կապելու յարմար թամբ է, որ իր արհեստաւորը ունէր (**սե'մե'րճի**): Բեռը երկու կողմերը կը շարէին: Ասոր վրայ կրնային նստիլ, իսկ իշու գաւակին ալ փոքրիկ ուղեւոր մը տեղաւորել: Ճամբորդութեան ատեն իշուն հետ կը պտտէր նաեւ ալ կամանը, որ մազէ կամ կանեփէ հիւսած պարկ մըն էր: Կերի պահուն վիզին կ'անցընէին:

Ջորին աւելի ծանր բեռներ կրող, աւելի մեծ, չարքաշ ու աւելի արագ փոխադրամիջոց էր, բայց ամէն գիւղացի ջորի պահելու պէտք չունէր: Մեծ կալուածատերերը ջորի կ'ունենային, իսկ ջորեպանները՝ երբեմն քանի մը հատ: Արհեստով ջորեպաններ շատ կային Քեսապի մէջ: Ասոնք խիզախ, կտրիճ մարդիկ էին, որ ամէն օր երթելէ կ'ընէին Քեսապ-Անտիոք, Քեսապ-Լաթաքիա, Քեսապ-Ճսըր Շուղուր, Քեսապ-Սուէտիաճամբաները, երեք օրէն կը հասնէին Յալէպ, Այնթապէս աւելի հեռուները: Ջորեպանները Քեսապը արտաքին աշխարհին կապող մարդիկ էին: Կը պատմեն, որ Գարատուրանի նաւահանգիստը իջած բեռը 40-50 ջորիով Քեսապի շուկան կը հանէին:

Ձին հարուստներուն կը պատկանէր:

Առանց կովու գրեթէ տուն չկար գիւղերուն մէջ: Մինուճար կի-

ներ ու մարդիկ գեթ ոչ խար մը եւ մէկ-երկու այ ծ կ'ու նենայ ին: «Չոր հացը առանց թացանի կ'ու տու ի՞», գիւղ տեղ առանց կթան կենդանիի տու ն կ'ըլլա՞ր» կ'ըսէին գիւղացիք: Առանց թացանի տունը աղքատ կը նկատուէր: Յացին ցորենը ամբարած ու կթան կենդանի մը ու նեցող գիւղացին ապրուստի յատուկ հոգ չ ու նէր:

Կովը տանտիկնոջ կը պատկանէր, անոր հարստութիւնն էր: Նորահարսին կեսրայ ըին կողմէ տրուած լաւագոյն նուէրը մէկ տարեկան մոզին էր... Կինը կը մաքրէր կովուն ախոռը, կը կերակրէր կենդանին, երբեմն կ'արածէր եւ արտերէն թարմ ու առատ խոտ կը բերէր շալակով անոր համար, կապոյտ հլ ու ն կը կապէր ճակատին, կը ծխէր, երբ չար աչքէ կասկած ու նենար:

Կովուն առաջին շաբթուան կաթը **դուօլ** (դալ) կը կոչէին: Եռացնելէն ետք պնակ-պնակ կը բաժնէին դրացիներուն: Ասոնք ալ «**տամրզ-լ աղնու**» (կաթը առատըլլայ) կ'ըսէին, կը շնորհաւորէին:

Գիւղական շրջանակի մէջ տարիներ առաջ համագիւղացիին կաթ ու մածուն ծախելը մեղք կը նկատուէր: Թացանէ կտրուած ընտանիքներ ալ կը պատահէին, կա՛մ կովը յղի կ'ըլլար, կաթէ կը կտրուէր, կամ ալ՝ կը հիւանդանար: Գիշերային այցելութիւններու գացող ամուսներ ատկահաշիւ կ'ընէին՝ դոյլ մը մածուն կամ թան կը տանէին: Մանուկ ու նեցողներուն թաս մը կամ դոյլ մը կաթ կ'երկարէին, խնոցիէն ետք «**պստուռ մը չէ՛նու**» (պատառ մը շաղակրատութիւն) ընելու պատրուակով դոյլ մը թան եւ կտոր մը կարագ կը բերէին:

Պարենի համար քամած մածուն, եփած մածուն, չորթան, կարագ ու պանիր շինելու համար մէկ-երկու կովու կաթը չէր բաւեր: Թաղի կիները իրարու հետլեզու կը գտնէին, կարգ կը նշանակէին ու իրենց կաթը, մածունը, թանը, պէտքին համաձայն, կը տրամադրէին մէկուն ու գործի պահուն կը վազէին ձեռք մը տալու:

Յորթը արօտավայր չէին տաներ: Տան մանուկները անոր կերին ու ջուրին հոգ կը տանէին: Պարտեզներէն թարմ խոտ ու բաղեղ կը բերէին հորթուկին համար, անոր հետ կը խաղային, նոյնպէս գառնուկին եւ ուլիկին: Տան այրը մէկ տարեկանը անցած մոզին կամ երինջը շուկայ կը տանէր ու կը ծախէր: Այդ գումարէն մանուկներուն **հալ**-

վօթ կը բերէր: Ծախուած անասունին գումարով շուկայէն գնուած քաղցրաւ ենին այ դախս կը կոչուէր:

- Լա՛ւ նայ եցէք հորթուկներուն, մեծցուցէ՛ք, գիրցուցէ՛ք: Բարեկենդանին,- կ'ըսէին մեծերը,- ձեզի հալ վօթ պիտի առնենք:

Գառնուկն ու ուլիկը կը պահէին յաջորդ Ծնունդին, Բարեկենդանին կամ Չատկին մորթել ու համար:

Լուծը երկու եզ (**ապխի**) կը պահանջէր: Ոմանք երկու եզ կը պահէին, իսկ ուրիշներ՝ մէկ: Վերջինները կը գործակցէին իրարու - հետ, իրենց արտերը միասին ու կարգով կը վարէին:

Կատաղի եզները 3-4 տարեկանին կը կրտէին: Կրտած եզները կը գիրնային ու արտի մէջ հերկի պահուս աւելի հանդարտու դիմացկուն կ'ըլլային:

Յովիւ ունեցող ընտանիքները քիչ էին, քանի մը հատ: Թաղ մը կամ ամբողջ գիւղ մը կրնար հովիւ մը պահել: Յօտն ու արջառըլեռը կը տանէին: Ընտանիքի անդամները, ըստ յարմարութեան, կարգով հովուութիւն կ'ընէին:

Կենդանիները կ'արածէին ազատարտերուն եւ խոզաններուն մէջ, գիւղին շուրջ, բացի հովիւներէն, որոնք կենդանիները կը քշէին հեռու արօտավայրերը: Ամրան՝ թաղի պատանիները հովուութիւն կ'ընէին: Տունը պէտք չեղող կենդանիները օրեր, երբեմն շաբաթներ կը լքէին լեռը. լեռնանցքներն ու կածանները կը փակէին:

Շուներուն, կովերուն ու եզներուն թրքերէն անուն կու տային:

Ներկայ իսէշն ու ջորին, այժն ու կովը վերացած են գիւղական շրջանակէն: Կան հոլ անտական կովեր պահող մէկ-երկու ազարակներ:

Բ. Խաշնարածութիւնը շրջան մը եկամտաբեր գործ էր Քեսապի մէջ: Շրջանին խիստ լեռնային ու մշտադալ արթիւտներով հարուստ ըլլալը հինէն իվեր նպաստած է, որ քեսապցիք զբաղին խաշնարածութեամբ ու պահեն այծերու հսկայ հօտեր (**սուրու**): Իւրաքանչիւր հօտ կրնար կազմուած ըլլալ 100-500 գլուխ այծերով: Մինչեւ 1000 գլուխ այծ ունեցող հօտատերեր (**սուրուճու**) ալ եղած են: Բոլոր գիւղերուն ու Քեսապաւանին մէջ եւս այծերու հօտեր ունեցողներ կային, բայց ամենէն շատ՝ Գարատուրան, Սել Աղբիւր եւ Պաշորտգիւ-

դերու և մեջ: 1920-ական թու ականներու և վերջերը միայն Գարատուրանի մեջ եղած է 62 հոտ:

Այ ծերու և հօտը թաղին կամ գիւղին մեջ չէին պահեր, ոչ ալ մերձակայքը: Բախտաւ որ պարագային՝ ձորադեմի և անջին կամ դիմացի և երան տակ կը շինէին անոնց ախոռներն ու փարախները, բայց առհասարակ՝ գիւղէն շատ հեռու իրենց կալուածներու և մեջ: Ծաւեր կ'օգտագործէին ծովադեմի և եռներու և վրայ գտնուող բազմաթիւ քարայրները: Միայն Մինծ Գարամաղարան, կ'ըսեն, թէ կը պատսպարէր բազմաթիւ հօտեր՝ աւելի քան երեք հազար գլուխայ ծ, հովիւներու կացարաններով: Հովիւները մինչեւ որ փոխարինող մը չապահովէին՝ չէին կրնար և քել հօտը ու իջնել գիւղ:

Այ ծերու և համար կեր չէին ամբարեր: Տարուան բոլոր եղանակներու և ալ կը քշէին և եռները: Այ ծին ամենէն սիրելի կերը ցախն է, կ'արածի թփուտներու և մեջ: Սաստիկ անձրեւներու և՝ հօտը կը բերէին մօտիկ քարափի (**սարփ**) մը տակ, ուր անձրեւ չէր դախար: Այ դախսի քարափներ շատ կային, ինչպէս՝ Գարատուրանի մեջ Քեօրքէն Սարփը, Ուշնօգի, Տիւնակի, Ուրանճըգի եւ Գարթընի սարփերը: Գիւղացիք հօտերու մակաղած տեղը կ'աւելին ու աղբը պարկերով կը կրէին իրենց պարտեզները: Այ ծին աղբը բացառիկ պարարտանիւթ է: Հունձքէն ետք արտերու տերերը կ'արտօնէին, որ հօտերը մտնեն իրենց արտերը:

Այ ծերու ախոռին կ'ըսէին **գըշլա** որու և համար ծմակ ու թեք տեղ մը կ'ընտրէին: Երեք կողմերէն կէս գետնափոր շինու թիւն մը, հազիւ մէկ հասակ բարձրութեամբ, չոր պատերով (առանց շաղափի): Առաջամասը պատչեր ու նենար, բացի հովիւի նկուղէն, որու և տեղ կը յատկացնէին անկիւնը: Տանիքի գերանները կը հանգչէին կեդրոնի մէկ-երկու սիւներու և վրայ: Տանիքը կը ծածկէին ցախով, ապա կապոյտ հողով ու կը և ողէին: Յատակը հող էր ու թեք, որպէսզի անասնոց մէզը չլճանայ: Ախոռին առաջամասը, ընդարձակ տարածութիւն մը ցանկապատով շրջափակուած բացօթեայ փարախը (**աղըլ**) կ'ըլլար: Այ ծերը ներս ու դուրս կը մակաղէին: Ուլերու և համար ախոռին մեջ առանձին փարախ մըն ալ կը գատէին ճաղերով:

Ապրիլ 5 – Օգոստոս 15, չորս ամիս, կիթի ժամանակ էր: Այ ծերը կը

քշէին բարձր լեռնալանջերը, յատկապէս Կասիոսի բարձունքները: - Զոն կը զարնէին **ալ աչ ոխը** կամ **ուսան**, որ հովուական վրաններու ամբողջութիւնն է: Այժի մագէ հիւսուած վրանին **չերդիկ** կ'ըսէին: Զինգ-վեց հովիւ, երբեմն աւելի, նոյն տեղը ալ աչ ոխ կը զարնէին ու համագործակցաբար, կարգով պանիր ու կարագ կը պատրաստէին: Բոլոր ամաններն ու խնոցիները հաւաքաբար կը գործածէին: Այս եղանակին խոյերն ու ուլերը կը բաժնէին այժերու հօտէն ու առանձին հովիւ մը կը զբաղէր անոնցմով: Այժերը բացօթեայ կը մակարէին:

Կարգն ստացող հովիւը արօտավայր չէր երթար: Տունէն օգնականներ կու գային: Կեսօրին այժերը ալ աչ ոխ կը բերէին: Կիթը կը տւէր մինչեւ իրիկուն: Կաթը կ'եռացնէին մեծ սաներու (**արւղէնծ**) - մէջ ու կը լեցնէին լաղերու մէջ: Չով օդին, մինչեւ առտու թանձր սերուցք կը բռնէր: Սերուցքը հաւաքելով՝ մածուն կը մակարդէին, իսկ կաթը կրկին տաքցնելէ ետք պանիր կը զարնէին:

Պանիրի մակարդը կը պատրաստուէր հովիւներու ձեռքով: Պատրաստութեան երկու միջոց կար: Սովորաբար այժին ճարպապատաղիքը (**հախուօսգ**) աղով կը լեցնէին ու չորցնելէ ետք կը մթերէին: Պանիր - զարնելէն մէկ օր առաջ աղը կը թափէին, աղիքը կը բրդէին կաթսայ մը ջուրին մէջ: Կես շերտփջուր կը բաւէր **քիւփէլիկ** (միջակ պղինձ) մը կաթը պանիր մերելու: Մէկ ժամ ետք կաթը կը պարպէին կտաւէ պարկերուն մէջ ու կը կախէին քամելու համար:

Մակարդի պատրաստութեան երկրորդ միջոցը **գարդաջան** կամ **մէ'նըշ կը մար** (մանուշակի մայր) բոյսին գխտորն էր: Այս տարեկան բոյսը քաղցրահիւթ ցօղունով հիրիկածեւ ծաղիկ մը կ'ունենայ գարնան, կապոյտ, ճերմակ ու մանիշակագոյն շերտերով: Գխտորը կը ծեծեն ու կը դնեն ջուրին մէջ: Այդ ջուրը կը գործածեն իբրեւ մակարդ:

Պանիրէն քամած ջուրը կրկին տաքցնելով՝ կը կտրէին ու անկէ ալ **տուր** կը քաղէին: Նուրը թարմ կ'ուտուէր, աւելորդը կը խառնէին եփած մածունին մէջ:

Մածունը յաջորդ առտու կը խնոցէին: Ալ աչ ոխի մէջ կը գործածէին տիկ ու սնտուկ խնոցիներ: Կաւէ խնոցիները կը գործածուէին շառ-շատերկու կով ու նեցող կիներու կողմէ:

Յոսվիւր արդար իւղէն, պանիրէն ու եփած մածուկէն կը հաներ իր ընտանիքին պարէնը, իսկ մնացեալը բեռներով կը տաներ շուկայ: Պարէնը տուն տանող օգնականը պղինձ մը պանիրով հալվա (**աբ'նսըրո-լօն հալ վիկ**) կը տաներ տնեցիներուն եւ դրացիներուն:

Ալաչոխի չորս ամիսներուն եռուզեռ կ'ըլլար Կասիոսի բարձունքներուն վրայ: Գիշերը հոս ու հոն խարոյ կներ կը վառէին ու հովիւներ, մակաղած հօտերուն կից, գրոյց կ'ընէին, կ'երգէին, շար կը հիւսէին, սրինգ ու գումնայ կը փչէին եւ շուրջապար կը դառնային:

Օգոստոսին ամբողջ հօտը կը խուզէին (**գըրդիլ**), հաւաքուած մազը կը ծախէին մազմանին կամ տան կիները ձմեռնի բուն իլիկի (**բէ'ր-մոլն**` քառման) եւ մանիչի (**մանեճ**) վրայ թել ու դերձան կը շինէին: Այծի մազի թելով կը հիւսէին **ապա** (հովիւի վերարկու), **չէրդիկ** (վրան), գետնի ծածկոց, ալկաման, մեծ ու ազտիկ պարկեր, պարան եւ այլն:

Ալաչոխի վերջաւորութեան խոյերն ու ուլերը կը խառնէին հօտին, ամէն հովիւ իր հօտը կը գատեր ու կամաց-կամաց կ'իջնէին գոմերը:

1928-ին համաճարակ մը մեծ վնաս կը հասցնէ այծերու հօտերուն: Ծաւեր կը լքեն գործը ու կը գաղթեն: 1939-ին Թուրքիոյ կը կցուին խաշնարածութեան համար չափազանց կենսական նշանակութիւն ունեցող հիւսիս-արեւմտեան լեռները: Զօտերը կը նուազին:

1950-ական թուականներուն այծերու հօտերը կը վերանան, որովհետեւ պետական հրամանագիր մը անտառային տարածութիւնները պաշտպանելու համար խտորէն կ'արգիլէ խաշնարածութիւնը անտառային շրջաններուն մէջ:

Գ.- Թռչնաբուծութիւն. Թռչնագոգիներէն Քեսապի մէջ գլխաւոր ընտանին հաւնէ: Ամէն ընտանիք, յատկապէս գիւղերուն մէջ, ունի 20-25 հաւ ու քանի մը աքլոր: Յնդկահաւ (**մալթըհոլօվ**), բարու սագ պահողներ եղած են: Քեսապաւ անին մէջ աղաւնի թռցնողներ գտնուած են, իսկ գիւղերուն մէջ` շատ հազուադէպ:

Ինչպէս առանց թացանի, այդպէս ալ առանց հաւ կիթի տուն պատկե-

րացնել դժուար էր գիւղերուն մէջ: Մէկ-երկու հաւ կիթ, հաւ մը կամ վառեակ մը սեղանին վրայ, կտոր մը թացանի հետերես կը ճերմկցներ: Աբլ որը կը պահէին բացառիկ առիթներու կամ Ս. Յակոբին:

Հաւերուն ձմեռնային կացարանը **խուշքեօշ** կը կոչուէր: Ասիկա մէկ-երկու սեղանի ծաւալով ու նոյնքան բարձր նկուղ մըն էր, որուն մէջտեղը կը գտնուէր ճիւղերով հիւսուած թառը: Հաւնոցը կ'ըլլար բակին մէկ հեռաւոր անկիւնը: Ամառ ատեն հաւերը կը թառէին բակի մէկ ծառին ճիւղերուն վրայ, ուր երբեմն թիթեղածածկ-թառ մըն ալ կրնային շինել անոնց համար: Հաւնոցը ամէն առտու կ'աւլուէր ու յատակը մոխիր կը ցանուէր:

Հաւաբոյնը, ուր հաւը կ'ածէր, հաւնոցէն դուրս կ'ըլլար, սովորաբար տան առջեւի պատին վրայ մէկ-երկու քարի բացուածք մը (**պէ'սղհնուօկ**), ուր միշտ հաւ կիթ մը դրուած կ'ըլլար՝ բունկալը (**բուկուօլ**): Հաւերը հոն կը բարձրանային պատին յետեւնեղ սանդուղքէն:

Թուխս նստող հաւը կը տեղաւորեն առանձին հաւաբոյնի մը մէջ, երբեմն ուռերէ շինուած զամբիւղի (**խէ'ֆէր**) մը մէջ: Թուխսին տակ կը դնեն 12-14 հաւ կիթ: Հաւ կիթը պէտք է առնուի աբլ որ ունեցող տուներէն: Պէտք է նոյն օրուայ հաւ կիթ ըլլայ: Թուխսի համար տրուած հաւ կիթը ո՛չ փոխկը տրուէր, ո՛չ դրամով կը ծախուէր, մեղք կը նկատուէր:

Ամէն տուն կը դնէ 1-2 թուխս (**ձագմար**): Թուխս կը դնեն գարնան եւ ամառնամուտին: Մինչեւ աշուն ձագերը պէտք է վառեակներ ըլլան: Ուշ թուխսի նստող հաւը, այն պարագային, երբ չեն ուզեր, որ թուխս նստի, քանի մը անգամ պաղ ջուրին մէջ կը թաթխեն, պոչն ու թելերը կը փետտեն, որ «պաղի», թուխս չնստի:

Հաւերու ջուրի կրեճին մէջ, որ բակին մէկ անկիւնը կ'ըլլայ, ժանգոտած երկաթի կտոր մը կը դնեն՝ հաւերը հաւանական հիւանդութիւններէ զերծ պահել ու նպատակով:

Դ.- Մեղուաբուծութիւն.- Քանի մը փեթակ մեղու ունեցող ընտանիքներ եղած են գրեթէ բոլոր գիւղերուն մէջ: Մեղրը սնունդէն բացի կը գործածէին որպէս սպեղանի: **Տեխափ** (որսորդական կաչուն մա-

ծուկ) պատրաստութեան մէջ ալ մեղրը անհրաժեշտ է:

Փեթակին ամանը **կիւճուօկ** (կոճակ) կը կոչեն: Ան տախտակէ պատրաստուած կ'ըլլայ, բայց շատ անգամ սովորական կուժ մըն է: Կոճակները կը շարեին տան արտաքին պատին մէջ բացուած խորշին մէջ կամ բակէն դուրս ապահով տեղ մը:

Մեղուի պարսեր ամրան օրերուն կը հանդիպէին նաեւ ազատ բնութեան մէջ: Լեռնային քանի մը անհասանելի խռոչներու մէջ մեղուի դարաւոր բոյներ կան:

Վերջին տարիներուն ոմանք լրջօրէն կը զբաղին մեղուաբուծութեամբ:

Ե.- Շերամաբուծութիւնը եղած է յատկապէս գիւղական շրջաններուն հիմնական զբաղումներէն մէկը: Շերամը լուրջ եկամուտ ապահոված է ընտանիքին: Շերամը կը բուծանէին առանձին սենեակներու մէջ: Աւելորդ սենեակի չգոյութեան պարագային այդ եղանակին ընտանիքը կը պարպեր տունը ու կը տեղաւորուէր բակը կառուցուած շուքին մէջ:

Սենեակին մէջ տան այրը մինչեւ առատադ հասնող ձողեր կ'ամրացներ եւ իրարու վրայ դարակներ կը շինէր: Իւրաքանչիւր դարակի տախտակամածը կը շինէր թեւնիի բարակ ոստերով հիւսուած խաիրով, գոր **գաջուօգ** կը կոչէին:

Շերամին հոգատարութիւնը գլխաւորաբար տան կինը կը ստանձներ: Լաթի մը մէջ փաթեւած սերմը (**անիծ**) կրակին քով կամ ծոցին մէջ դնելով կը տաքցներ՝ մինչեւ որ թրթուրել էր: Թրթուրները կը բաժներ ամաններու մէջ ու թեւնիի տերեւը մանրելով անոնց կեր կ'ըներ: Այդ ամանները (**գօռ**՝ գուն) դարձեալ կինը կը պատրաստէր կովու թարմ թրիքէն, որուն մէջ քիչ մը յարդ ալ կը խառնէր: Որոշ ժամանակ մը ետք շերամը կը տեղափոխէր դարակներուն մէջ: Ա'լ մեծցած կ'ըլլար, տերեւը առանց մանրելու կը տրուէր: Թեւնիին թարմ ոստերը կինը պարտեզէն կը բերէր, տերեւները կը քաղէր, ոստերը կը կեղուէր ու անոնց կեղեւով (**կիշէլ**) զանոնք իրարու կապելով նոր խաիրներ կը պատրաստէր:

19-րդ դարու վերջերէն մետաքսի արդիւնաբերութեան մենաշնոր-

հը ձեռք անցուցած էին Սուլեյմանյ եւ Անտիոքի վաճառականները: Այսուհանդերձ Քեսապի մէջ եւս խոզակ խեղդողներ կային եւ տեղական սպառումի համար ապրշու մի (**պըրըսեմ**) արտադրութիւն կը կատարուէր:

1925-ին շուրջ երեք հազար վերապրող բնակչութեան խոզակի տարեկան բերքը եղած է 20 հազար հոխա, որ բերած է 5500 օսմ. ոսկի եկամուտ⁸:

1950-ական թուականներուն շերամաբուծութիւնը ամբողջապէս լքուեցաւ:

2. Որսորդութիւնը գործ էր, բայց շատ սիրուած զբաղում էր նոյնիսկ կիներուն համար: «**Չէ՛տկըվին գըրընթէն շէօն չկըշտէ՛ցըն-իր**» (Չատկուան սեղանի աւելցուքը շունն չի կշտացներ) կ'ըսեն քեսապիք որսորդի մը ակնարկելով:

Որսորդական հրացանները կը նորոգուէին քեսապի վարպետներու կողմէ: Քեսապի երկաթագործները նոյնիսկ հրացաններ կը շինէին: Յրաշագործ էր Մաթաթ Վարպետը: Չինագործ Յաճի Արթինը իր կարգին եղած է որսորդութեան անօրինակ սիրահար մը ու որսորդական սուտլիկ մանրապատումներ պատմող մը:

Որսորդական հրացանի (բարբառով՝ **թըվուկ**) գործածութեան ատեն, ընդհուպ մինչեւ տարագրութիւն, կը պատմեն, թէ ոմանք, մասնաւորաբար հովիւները, տակաւին վարպետօրէն կը գործածէին նախնական զէնքերը, ինչպէս սուրը, նիզակը, պարսատիկը, նետն ու աղեղը եւ վերջապէս՝ **չաթալ**ը (երկճղի պարսէտ): Այս զէնքերով նշանառութեան խաղեր կը կազմակերպուէին Բարեկենդանի օրերուն եւ լաւագոյն նշանառուն կանչերով ուսի վրայ կը պտտցնէին: Որսորդական աղեղը կը կոչուէր **բնդըլ աղիէղ**: Պարսատիկը (**պախթ**) կ'ունենար ախաչակաշիէ աման մը: Յարսնցու աղջիկները ամբողջապէս այծի մազէ հիւսուած պարսատիկ կը նուիրէին իրենց փեսացուներուն:

Վարազի եւ խոզուկի որսը անհատորսորդներ կ'ընեն մութ գիշերով, սովորաբար քմնելով ու սպասելով պատսպարուած տեղ մը, ընդ-

⁸ «Սուրիահայ Տարեցոյց», Յալէպ, Բ. տարի, 1925, էջ 224:

հանրապետ արտի մը անկիւնը, ուր վարազները արածելու կու գան, կամ կածանի մը եզերքը: Վարպետ որսորդը մեզի հետքէն կրնայ գտնել խոզուկին բանուկ ճամբաները: Վարազի որսին կրնան օր-ցերեկով խմբովին երթալ . քանի մը որսորդներ կը բռնեն ձորի բերանն ու լեռնանցքները, իսկ ուրիշներ հարայ -հրոցով ու կրակոցներով դէպի վեր կը քշեն անտառի կենդանիները: Վարազի որսը շատ վտանգաւոր է, խուճափ մատնուած որսորդ մը կրնայ կրակել իր ընկերոջ վրայ կամ զոհ երթալ կատաղի վարազի մը ժանիքներուն: Քեսապցիք կ'ըսեն. «Ինձի որսին ընկերոջ հետգնա, բայց խոզի որսին՝ միայն եղբօրդ հետ»: Անտառին մէջ որսի մեծ կենդանիներու շարժումը ըստ հետքի հետապնդելը քեսապցիք **հիսիլ** (հետք բառէն) կը կոչեն: Որսի համար քեսապցիք լայնօրէն կը գործածէին նաեւ տարբեր չափի ու տեսակի թակարդները (**քարթուօյ**), զորս իրենք կը շինէին:

Շատ սիրելի զբաղում էր կաքաւի որսը: Կաքաւը կ'որսային ողջ կամ մեռած: Կաքաւի ձագը կ'ընտել անար ու մեծնալով բակը՝ հաւերուն հետ կ'արածէր: Կաքաւի ձագերը հալածելով կը բռնէին, որովհետեւ շրջան մը կաքաւը հաւ ու պէս պտտելով իր ձագերը կ'արածէ: - Տունը կաքաւը կը պահէին մրտենիի ճիւղերով հիւսուած խոշոր վանդակի մէջ (**խէ՛ճուօյ**): Կաքաւի խումբերը գետինը կ'արածին ու փոքրիկ շշուկէ մը ակնթարթի մը մէջ կը պահուըտին խտտերուն տակ ու խռոչներուն մէջ: Որսորդները կ'ըսեն. «Կաքաւը չորս աչք ունի, ասեղի ծակէն կը տեսնէ»: Յալածելով ու հետապնդելով կարելի է կաքաւ որսալ:

Ամրան ու աշնան կաքաւ որսալ ու համար **մաթալ մակը** շինէին (**մաթալ մաքէ՛րիլ**): Ասիկա խոզանի մը մէջ կաքաւներուն ծանօթ ու անոնց կողմէ նոր փորփորուած մրջիւնի բոյն մը կ'ըլլար: Որսորդները հոս ցորեն, սիսեռ ու յարդ կը թափէին, իսկ դիմացը, 10-15 մեթր անդին, ապահով ու գոց անկիւն մը որսորդի դիրքը կը շինէին: Այս դիրքին **է՛ճուէօն** կ'ըսէին: Որսորդը հոն ժամերով կը սպասէր, որ կաքաւները մաթալ մաիջնեն: Յրացանը լարուած կը պահէր: Երբեմն մաթալ մային մէջ աղջուրի մէջ դրած սիսեռ կը թափէին: Աղջուրը կը սպանէ կաքաւը, իսկ օղիի մէջ դրուած սիսեռը կը գինովցնէ զայն:

Կարգ մը որսորդներ կաքաւ ի որսի ատեն **ալ ու** կը գործածէին: Սա կանեփէ հիւս-ու ած քուրջ մըն է, որուն վրայ սեւ ու կապտա ուն շրջանակներ եւ ալ իքաւ որ գիծեր դաջ-ու ած կ'ըլլան: Անոր գազանի կերպարանք տալ ու համար երկու ծայրերը ականջի նմանող կաշիի երկու կտոր կը կապէին, իսկ մէջտեղը երկու անցք կը բանային: Որսորդը փողը մէկ անցքէն մտցուցած, միւսով ալ դիտելով կը մօտենար կաքաւներուն պահուըտած վայրին: Յոն կը շարժեր ու կը խաղցներ ալլան: Կաքաւները սարսափահար կը կանչէին ու քովէ քով կու գային. որսորդին սպասած պահը...

Որսորդը երբեմն տան կաքաւը իրեն հետ կը պտտցներ՝ վանդակը ուսին նետած: Յոս ու հոն կը կենար, ծայն կու տար, իսկ վարժ կաքաւը կը գեղգեղէր: Լերան կաքաւները կը պատասխանէին՝ մատնելով իրենց տեղը:

Ձմեռուայ քառասունքին կաքաւները նոյն տեղը կը թառին: Առտու կանուխ, անոնց գեղգեղէն որսորդը կ'որոշէր անոնց թառը, արեւմուտին կ'երթար, **Է'ֆսէօն** (որսորդի թաքստոց) կը շինէր ու կը սպասէր անոնց դարձը:

Թռչնորսի ամենէն արդիւնաւետ միջոցը եղած է որսորդական խէժը (**սփէխայ**՝ թըփըխ): Սա 40 սմ. երկարութեամբ բարակ ճիւղերու (օռ՝ ուռ) վրայ փաթթուած կաչ ուն մածուկ մըն է, որուն վրայ նստող մանր ու միջակ մեծութեամբ թռչունները դժուար թէ «փրթին»: Որսորդական խէժը կը պատրաստէին համանուն պտուղէն, որուն ծառը (**տըխափնա**) կ'աճի ծովամերձ տեղերը: Պտուղը կեռասի չափ կ'ըլլայ, անոր նման փնջած եւ, հասունը՝ դեղին: Կը հասուննայ Օգոստոսի կէսին, երկրորդ ծաղիկը պտուղ կու տայ Յոկտեմբերին: Խէժը պատրաստելէ առաջ՝ կոտրած, կեղուած ու խանձած կ'ըլլան ուռերը: Ասոնք ճկոյթէն քիչ բարակ, համաչափ ճիւղեր են, զոր կը հատեն մրտենիի կամ ուռենիի թուփերէն:

Խէժը պատրաստելու համար հինգ-վեց հոգի պտուղը կեղեւէն դուրս հրելով կը ծամեն ու կուտով միասին կը թքեն և աղի մը մէջ: Ասոր կ'ըսեն **սփէխայ թքնիլ**, որուն առհասարակ պատանիները կը մասնակցին: Մարդ բերնին մէջ հազիւ ափմը պտուղ կրնայ բաւեցնել՝ տա-

սը-տասնհինգ հատ: Յետոյ չորս քիլոպտուղի խիւսին կը խառնուի 200 կրամ մեղր կամ նոյնքան մը եռացուած շաքարաջուր: Մեղրը նախընտրելի է, խէժին կաչուևնու թիւնը երեք տարի կը պահէ: Այնուհետև վարպետը ափով լաւալէս կը ծեծէ խիւսը այնքան որ պտուղին հունտը ամբողջալէս լերկանայ, ապա մէկ քիլ բռնատեղ ձգելով՝ ուռերուն վրայ կը փաթթէ զայն: Չորս քիլոպտուղը պզտիկ թռչուններուն համար 12-14 ուռ կը շինէ, իսկ միջակ մեծութեամբ թռչուններուն համար՝ 8-9 ուռ: Ուռի կոթը երկու ասիւրուն մէջ արագօրէն կը տարուբերեն. այս շարժումէն պտուղին հունտերը մէկիկ-մէկիկ կը թափին: Ապա ուռերը կը տնկեն զամբիւղի մը բերանը եւ երկու-երեք օր կը ձգեն արելուն տակ:

Ուռերը կը փնջեն ու կը դնեն ուռենիի կամ մրտենիի ոստերով կամ եղեգով հիւս-ուած կապարճին մէջ (**տղխալ՝մուև**): Խէժը առաջին տարին մեղրագոյն կ'ըլլայ, ապա հետզհետէ կը սկսի սեւնալ, կը գործածուի մինչեւ երեք տարի: Ուռերը կը լարեն ճիւղէ ճիւղ, քարէ քար կամ կը տնկեն գետինը՝ կոթին կողմէ: Ուռերը իրարմէ դանակով կը բաժնեն:

Տեխարով որսորդութիւնը կ'ըլլայ երկու ձեւով՝ **պալլ ամա** (սպասելով) եւ **քշիլ Էօտը** (քշելով): Առաջին պարագային ուռերը կը փռեն առուի մը եզերքը, կամ թզենիի, բելեկնիի կամ դափնիի մը վրայ, ուր թռչուններ ջուրի կամ կերի կ'իջնեն: Ժամը մէյ մը կ'երթան բռնուած թռչունները հաւաքելու: Երբեմն բռնուած թռչունին քով բազէ մընալ կը պատահի, որ թռչունը որսալու համար սուրալով ինկերէ նոյն թակարդինմէջ, կը պատահին նոյնիսկ օձեր...: **Քըշիլ Էօտ** որսի պարագային որսորդը մէկ կամ աւելի օգնականներ կ'ունենայ, կամ քանի մը որսորդներ համաձայնաբար միասին որս կ'ընեն: Ուռերը կը փռեն յատուկ տեղ մը, որ **ուրագ** կը կոչուի: Ուրագը ձորին բերանը կամ անտառին բարձրադիր մէկ տեղը թփուտ մընէ, ուր որսի եղանակէն առաջ որսորդներ թուփերուն մէջ պահարանի պէս յօտած կ'ըլլան՝ ուռերը տեղաւորելու համար: Յետոյ ձորը երկու ասիւրէն - «կը քշեն» ու թռչունները կամաց-կամաց կը մղեն թակարդին մէջ: Որոշ եղանակներու՝ տեխարով որսը իրօք արդիւնաւետ կ'ըլլայ:

Օգոստոսէն մինչեւ Փետրուար որսի շրջան էր: Մեծ մասով գաղթող ու այդ շրջանին գիրցած մանր ու միջակ մեծութեամբ թռչունները կը բռնուէին մեծ քանակութեամբ: Որսորդը իւրաքանչիւր ուռէն մէկ, երբեմն քանի մը թռչուններ «կ'ազատէ»: Բռնուած թռչունները կը մորթէին, խեղդելը կամ վիզը ոլորելով սպանելը մեղք կը նկատուէր. արիւն պէտք է հոսէր:

Ձկնորսութիւնը Քեսապի մէջ ունի իր սիրահարները: Արհեստով ձկնորսներ չեն եղած: Ձկնորսները բաւարարուած են ափին մօտերը որսորդութիւն ընելով: Ծովուն վարժ մարդիկ գիտեն ծովուն ձուկերը, անուսով կը ճանչնան եւ գիտեն անոնց բնաւորութիւնը, թէ ի՛նչ եղանակի, տարուան ո՛ր շրջանին եւ օրուան ո՛ր ժամուն ափկրնան մօտեակ այսինչ տեսակի ձուկերը:

Ձկնորսները գլխաւորաբար կը գործածեն կարթը, թակարդը եւ ցանցը: Եղեգով ձկնորսութիւնը (**կէ'խվըսնիլը**` կախել բայէն) առանձին հաճոյք մըն է շատերուն համար:

Տուգադաճէն սկիզբ առնող վտակին մէջ ձկնորսութիւն կ'ընէին ուրիշ կերպ: Նախ վտակին դանդաղ մէկ տեղը պանտկը կապէին ու ամբարունող ջուրին մէջ կը թափէին փրփրող խիւս մը, զոր կը պատրաստէին խնկենիի պտուղէն (պտուղին կորիզը **գօզ** կը կոչեն): Ձուրին մակերեսը փրփուր կը բռնէր: Քիչ ետք պանտը կը բանային ու ջուրին դիմաց քթոցներ կը բռնէին: Ձուկերը հոսանքին հետ կու գային ու կ'իյնային քթոցին մէջ:

Դաշտային խխուսջը 1960-ական թուականներէն սկսեալ եկամուտի աղբիւր եղաւ: Ոմանք կը հաւաքեն ու կը ծախեն շրջուն վաճառակներին, որ իր կարգին խխուսջը կ'արտածէ արտասահման: Արտերուն մէջ պատանիները երբեմն խխուսջի խորոված կ'ուտեն, զոր կը պատրաստեն խխուսջը կայծերուն տակ թաղելով կամ` խաշելէ ու մաքրելէ ետք շամփուրի անցընելով: Խխուսջը տեղական խոհանոցին մէջ չէ մտած:

3.3.- ԱՐՅԵՍՏՆԵՐ ԵՒ ԱՌԷՏՈՒՐ

Ա Տնայ նագործութիւն եւ արհեստներ.- Գլխաւորաբար հողագործութեամբ եւ անասնապահութեամբ զբաղող գիւղացին իր գործին

անհրաժեշտ շատ գործիքներ ու սարքեր ինք կը շինէր, յատկապէս ոչ մետաղեայ առարկաները, ինչպէս՝ արօրը, լուծը, փորիչը, կամը, հոսելին, հնձուորի մատնոցները, տիկէ խնոցիները, ձեռնափայտեր, իշուկ կորթոյնքը եւ այլն, տնային գործածութեան բազմաթիւ առարկաներ, ինչպէս՝ փայտէ պնակներ, դգալներ, շերեփներ, դգալամաններ, արձակներ եւ այլն: Ան ուռէն կամ եղեգէն կը հիւսէր քթոցներ, զամբիւղներ, կապարճ ու վանդակ: Ամէն գիւղացի այր քիչ թէ շատ կը հասկնար այս գործերէն ու ի հարկին կը պատրաստէր իրեն պէտք եղող առարկաները, թէեւ եղած են վարպետի կոչում ստացած արօր ու լուծ, կամ ու կողով շինողներ: Գիւղին մէջ նոյնիսկ ամօթէր ամէն հասարակ պէտքի համար վարպետի դիմելը:

Գիւղացին գիտէր շինել իք առարկայ ինչ յարմար փայտի տեսակը որոշել: Ոմանք ճաշակ ու գեղեցկութիւն կը դնէին իրենց շինած իրերուն մէջ:

Աւելի բազմապիսի էին գիւղացի կնոջ շինած իրերն ու գործիքները, որոնք կը գոհացնէին ինչպէս տան, այդպէս ալ գիւղական աշխատանքի բազմաթիւ պէտքերը: Գիւղացի կինը ցորենի ծեղով կը հիւսէր սեղաններ, հացամաններ, ասեղաման, գոհարաման, պայուսակ ու գլխարկ: Ոմանք կը ներկէին ծեղը՝ հիւսուածքը գունազեղ ու նկարազարդ դարձնել ու համար. հիւսուածքին մէջ կը գործածէին նաեւ խոզուկի փուշը, որ առանձնայատուկ փայլք կու տար գործին:

Գիւղացի կինը կը պատրաստէր նաեւ շերամաբուծութեան մէջ անհրաժեշտ թթենիի ոստէ հիւսուած խիւրներն ու թրիքէ գունները: Ան նաեւ վարպետ ծեփիչ էր. տան պատերուն հողէ ծեփը ինք կը կատարէր ու տարին գէթերկու անգամ ճերմակ հողէ շինուած ջրիկ ցեխով կը փայլեցներ: Ան նոյնիսկ թոնիր կը շինէր, երբ վարպետ այր մը չէր գըտնուեր: Անշուշտ ան նաեւ անփոխարինելի խոհարար էր ու հացագործ միւս նոյն ատեն:

Կինը խոզակէն, այծի մազէն, ոչխարի բուրդէն **քառմուկ** (քառման՝ քառաթել իլիկ) ու **մանեճ** (մանիչ, սովորական իլիկ) կոչուող իլիկներով թել կը քաշէր՝ տարբեր հիւսուածքներով, կարի եւ ասեղնագործութեան մէջ գործածել ու համար: Կը հիւսէր մազէ

պարան, բուրդէ գուլ պայ, ապա, ելակ, մուճակներ, որոնց վրայ հլուներ ալ կը շարեր:

Գիւղացի կնոջ պարտադիր գործերէն մէկն ալ կարուծելն էր: Ան կը կապեր տան անկողինները, վերմակներն ու բարձերը, կը կարեր վարագոյրները, իր ու ընտանիքի միւս անդամներուն ներքին ու արտաքին բոլոր հագուստները. միայն այր մարդուն արտաքին հագուստները դերձակը կը կարեր:

Գիւղական միջավայրին մէջ ասեղնագործելը (**խարճ բէ'նիլ**) կանանց ամենէն սիրելի զբաղումն էր: Կինը գլխաւորաբար կը գործածեր յաճախի ձեռքով քաշուած ապրշու մէթելերը: 19-րդ դարու երկրորդ կիսուն մարաջի եւ այնթապի մեծ թուով ուսուցչուհիներ ու հարսեր կ'ըլլան Քեսապ, Քեսապի օրիորդներ կը յաճախէն Մարաշի Աղջկանց Երկրորդական Վարժարանը: Ասոնց միջոցով Քեսապի կանայք կը վարժուին Մարաշի եւ Այնթապի ասեղնագործութեան: Քեսապի կինը իր ձեռքի այդ շնորհքով ի հարկին նաեւ եկամուտ ապահոված է իր ընտանիքին: Բ. Յամաշխարհային Պատերազմի դժուար տարիներուն շատ կիներ ու աղջիկներ ապսպրանքով ծեղէ գլխարկներ հիւսած են ֆրանսական բանակին համար:

Սակայն կարգ մը աշխատանքներ կը պահանջէին ժամանակ, ատաղձ եւ վարպէտութիւն: Ատոր համար ալ գիւղական միջավայրին պէտքերը գոհացնող տարբեր տեսակի վարպէտարհեստաւորներ կային շրջանին մէջ: Սակայն պէտք է ըսել, որ արհեստը գիւղական պայմաններուն մէջ առհասարակ եղած է մարդոց երկրորդ զբաղումը: Մարդիկ ըստպէտքի եւ յարմարութեան՝ զբաղած են արհեստներով:

Քեսապի մէջ 19-րդ դարու կիսուն արհեստանոցները կը շատնան, երբ Քեսապ առեւտուրի եւ գիւղական հում նիւթերու կեդրոնացեալ շուկայ կը դառնայ ոչ միայն շրջակայ տասնեակ մը հայ, այլ եւ բազմաթիւ թուրքմէն ու ալ եւ ի գիւղերուն համար:

Արհեստները, ինչպէս ամեն տեղ, Քեսապի մէջ եւս հօրէ որդի կ'անցնին ու ձեւով մը կը դառնան ամբողջ ընտանիքին կամ գերդաստանին մասնագիտութիւնը, մականուն կը դառնան ոմանց համար:

Երկաթագործները կը շինէին բահ, բրիչ, խոփ, կացին, ցաքատ, ու-

րագ, մանգաղ, դանակ, սղոց եւ այլն, մանր գործիքներ՝ բանալի, կողպեք, ծխնի, մախաթ, շղթայ, լկամ եւ այլն: Կան Տեմիրճեան, Փոլատեան, Չիլիկիբեան եւ Յատեան գերդաստաններ:

Երկաթագործներու կողքին կը գտնուէին պայտարն ու գինագործը: Չինագործները ընդհանրապէս կը նորոգէին որսորդական զէնքեր, անոնց փայտեայ կամ մետաղեայ մասերը: Թակարդներ կը շինէին ու գաղտնի կերպով վառօդ ու արճիճ կը պատրաստէին: Կային Չագմագճեան, Գուստաքճեան, Նալպանտեան գերդաստանները:

Պղնձագործները կը շինէին պղինձէ տարբեր չափի ամանեղէն՝ պնակ, դգալ ու պատառաքաղ, դոյլ ու կաթսայ: Կլայեկները տարուանորոշ ամիսները կ'անցընէին մօտիկ ու հեռաւոր գիւղերուն մէջ ու թաղէ թաղ պտտելով կը կլայէին գիւղացիներուն պղնձեղէնը: Վարպետը իրեն հետ կը տանէր պատանի աշկերտը, որ կը շալկեր փոցը, ածուխն ու կլան: Կային Գալայճեաններ ու Քուփէլեաններ (**քուփէլիկ**ը միջակ չափի պղնձէ կաթսան է):

Կային հանքագործ-մետաղագործներ: Մեծ եղեռնէն առաջ Գարատուրան գիւղին մէջ կար Մատենճեան գերդաստանը: Թաղատեղը մինչեւ այսօր կը պահէ Մըտըղինց (Մետաղենց) անունը:

Քեսապի վերջին թամբագործը ատանացի հայ մըն էր, որ Քեսապ-հաստատուած էր Կիլիկիոյ պարպու մէն ետք: Թամբագործները կը պատրաստէին բեռնատար (**սամար**) ու մարդատար (**այար**) թամբեր:

Շուկային մէջ իրենց կրպակները ունէին կօշկակարները (**քուշկուօր**), որոնք կը շինէին հողագործի պարզ ու ճտաւոր ոտնամաններ. ասոնք աջ ու ձախչուսնին: Աւելի ուշ կը սկսին շինել աջ ու ահեակ ունեցող սանտալներ եւ սովորական կօշիկներ: Կան Քէօշկերեան, Փափուճեան, Եմենճեան գերդաստաններ:

Ջուլի հակագործութիւնը բազմաճիւղ արհեստ մըն էր: Ջուլի հակագործները առհասարակ տնայնագործ էին. քիչեր արհեստանոց ունէին: Արհեստանոցներու զարգացման գուգընթաց Քեսապներածուած ու մշակուած են նաեւ կանեփու բամպակ: Մինչեւ տարագրութիւն Քեսապի մէջ եղած են մետաքսագործներ, ասուագործներ, կտաւագործներ, կտաւի ներկարարներ ու տաջագործներ: Կան Յալլաճեան, Պոյա-

ճեան, Պասմաճեան մականուններ: Տարագրութենէն առաջ միայն Քեսապի մէջ գործած են շուրջ քառասուն ջուլի հակներ, որոնց արտադրութիւնը տեղական շուկան բաւարարելէ ետք արտածուած է հեռու քաղաքներ:

Ջուլի հակագործները այժի մազէն կը պատրաստէին յատկապէս գիւղական շրջանակներու մէջ լայնօրէն գործածուող հիւսուածքներ՝ պարան, ալկաման, մանտիկ, պարկեր, հովուական վերարկու (**ապա**), գետնի եւ վրանի ծածկոցներ: Ասոնք շատ անգամ կ'աշխատէին ապսարանքով. գիւղացին կը բերէր մազը ու գործ կ'առաջարկէր: Քեսապցին գետնի մազէ ծածկոցին տուած է արհեստին անունը՝ **ճըլլուօկ**: Բուրդէ թելերու կամ տարբեր կտորներու երիզներով կարպետ կը հիւսէին: Կան Քէնտիրճեան, Ապաճեան, Մազմանեան ու Քիլիմճեան մականուններ:

Արհեստանոց ունեցած է նաեւ գուլի պայագործը:

Դերձակներն ու սափրիչները նոյնպէս ունէին իրենց խանութները: Մինչեւ հայրենադարձութիւն՝ միայն արանց դերձակները արհեստանոց ունէին: Աւանդական տարազներ կարողները, կօշկակարներուն պէս, տարբեր էին:

Շուկային մէջ կային նաեւ մագործներ, մէկ-երկու փռապան, խոհարար եւ անուշավաճառ (**հալ վաճի**): Կը գործէին քանի մը սրճարաններ ու ճաշարաններ: Կային Յելվաճեան ու Փիլաւճեան գերդաստանները:

Շուկան ունէր իր ջորեպանները, բեռնակիրները, ջրկիրները եւ մուսետիկը:

Տարագրութենէն վերադարձէն ետք՝ մինչեւ հայրենադարձութիւն արհեստանոց ունեցած են նաեւ ոսկերիչն ու լուսանկարիչը:

Ատաղձագործները, տախտակագործները, որմնադիրներն ու քարկոփները արհեստանոց չունէին, կ'աշխատէին հոն ուր գործ կար, իսկ գործերը եղանակ ունէին: Ասոնք երբեմն ամիսներ կը մնային այս կամ այն գիւղը: Ասոնք թրքերէն՝ **ուստա** արաբերէն՝ **մուալլէմ**, իսկ տեղացիներէն **վէ'րափտ** կը կոչուէին: Գլխու վրայ տեղ ունէին հոն ուր մտնէին: Ամենէն յարգելի հիւրը կը նկատուէին: Գիւղացիք վար-

ձատրու թե՛ն էն զատնաեւ իրենց բերքերէն բաժին կը հանէին անոնց: Ատաղծագործը կը կապէր դուռ ու պատուհան, սնտուկ ու պահարան, օրօրոց, այլ կահոյք, նոր տուներու ծածկը: Ատաղծագործները կ'ունենային իրենց սղոցապաններն ու տախտակագործները: Սովորաբար ապարանքին տէրը կը տրամադրէր ատաղծի հումքը՝ թթենի մը, ընկուզենի մը, կաղնի մը եւ այլն:

Բացառիկ շնորհքի, երեւակայութեան ու կարողութիւններու - տէր եղած է Մաթաթ Վարպետը (Մատաթիա Կարպուշեան), որ թէեւ հիւսնէր, բայց նոյնքան շնորհալի երկաթագործ էր, գինագործ, ինքնուսմեքենագէտ: Ան կը կապէր կղմիստրէ շէնքերու եւ եկեղեցիներու առատաղները, կը կռէր ջաղացքի քարերը, կը շինէր իւրայատուկ սարքեր, զէնքերու առարկաներ:

Որմնադիրներէն կը յիշուի Քելը (Յովսէփ Թրթռեան), որ կառուցած է Քէօրքիւնէի աւետարանական եկեղեցին, 1898-ին: Պաշորտի մարմար քարը շինարարութեան մէջ կը մտնէ 1909-ի Աղէտէն ետք: Այդ ընտիր քարահանքի մշակումին քեսապցի վարպետներուն ձեռք կու տան այնթապցի որմնադիրներն ու քարկոփները: Որմնադիրները նաեւ քարկոփներ էին: Կը շինէին մեծ ու պզտիկ սանդեր, երկանք, լող, պաթօս, ջրդոն, տապանաքար եւ այլն: Տարագրութե՛ն էն առաջ Քեսապի գերեզմանաքարերը սովորաբար բնական սալ քարեր էին, որոնց հարթ ու ողորկ մակերեսին վրայ արձանագրութիւն ձգել կարելի կ'ըլլար: Յետոյ կը տարածուի Պաշորտի սրբատաշ քարով տապանաքարը: Շրջանին վերջին շնորհալի ու միակ քարտաշը եղաւ Փոր Սափտի Սիսուան որբանոցէն գարատուրանցի վարպետ Սերոբ Եարալեանը (Բարլուօյս), որ բացառիկ ինամքով կը տաշէր տապանաքար, արձանագիր, խաչարձան, սանդիկ ու քարէ թակեր:

Ասոնցմէ բացի, եղած են ջաղացապաններ, փայտագործներ, ածխագործներ, ծովէն աղ հաւաքողներ, գինեպաններ, կիր վառողներ: Քեսապցիներու պատմած հեքիաթներուն մէջ կ'այեկի աշկերտն ու ջաղացապանը շատ կը հանդիպին:

Բ. Առեւտուր.- Շուկային մէջ տիրապետող դեմքերը անպայման սառնաֆներն էին, այն առեւտրական-կապալ առուները, որոնց վարած ա-

առեւտուրի կերպէն ալ կախում ունէր շուկային կենսունակութիւնն ու ազդեցութեան ոլորտը: Կը պատմուի, որ մինչեւ իսկ Լաթաքիոյ շրջակայ գիւղացիք կը նախընտրէին Քեսապ գալ առեւտուր ընելու: - Քեսապի վաճառականները իւրայատուկ կերպով կը գործածէին վարկատուական դրութիւնը: Անոնք գրեթէ երբեք չէին գործածեր միւս կեդրոններուն մէջ օրէնք դարձած վարկի դեմ գրաւի դրութիւնը, ըստ որուն՝ գիւղացին ընդհանրապէս միամտայ ժամկետով վերցուցած ապրանքին կամ դրամին դիմաց գրաւի կը դնէր իր կալուածներէն մէկն ու մէկը, որ կրնար շատաւելի արժել քան իր պարտքը: Քեսապի մէջ սկզբնապէս գրաւի հարց չէին դնէր ու վարկը կը տրամադրուէր բերքին դիմաց: Ասիկա առհասարակ ապրանքային, երբեմն ալ դրամական վարկատուութիւն կ'ըլլար: Վարկը կը տրուէր առհասարակ առաջին բերքին դիմաց: Ասիկա ամենէն առաջ գիւղացին կը մղէր չափաւորելու իր գնումները, «ոտքը երկարել վերմակին համաձայն»:

Առաջին բերքով գիւղացին կ'ամ դեռ պարտական կը մնար, կ'ամ ալ կը մաքրուէր պարտքէն: Երկու պարագային ալ, բարոյական թեւիլթական պարտաւորութեամբ՝ կը կապուէր նոյն վաճառականին: Այսպիսով բաւարարելով գիւղացիութեան անհրաժեշտ բոլոր հիմնական պէտքերը՝ վաճառականը ինքնաբերաբար հաւաքած կ'ըլլար գիւղացիութեան բոլոր հիմնական արտադրութիւնները՝ ձիթափղը, դափնեձեթը, շերամի խոզակը, ծխախոտը, կալի բերքը, իւղն ու պանիրը, որոնք արտաքին առեւտուրի միջոցով ապրանքի ու դրամի կը վերածէր:

Եթէ պատահէր որ վարկառուն չկարողանար պարտքը վճարել առաջին բերքին, պարտքը կ'անցնէր երկրորդ, երրորդ, չորրորդ բերքերուն (ամէն գիւղացի տարին առ-նուազն երեք բերք կ'ունենար՝ ծխախոտ, շերամի խոզակ եւ դափնեձեթ): Վարկը կ'երկարած գուէր: Գիւղացին իր վարկը գոցելու համար աշխատանք ու ծառայութիւն կ'առաջարկէր վարկատու պարոնին (**պէ'րուս**) կալուածներուն մէջ կամ ալ ծախու կը դնէր իր կալուածը, զոր պարոնը անմիջապէս կը գնէր: Գիւղատնտեսական ապրանքներու բարձր շահաւետութեան ու աշխատութի առատութեան պայմաններուն մէջ վաճառականները կը նախընտրէին

իրենց դրամական աւելցուքը հողին կապել : Այ դախսով անոնք դեռ 19-րդ դարու կեսերուն ամենէն ընտիր հողերուն տերերը եղան : Այ դ հողերը երբեմն կէս, երբեմն մինչեւ երեք քառորդ բերքի դիմաց վաճակալու թեան կը տրուէին գիւղացիներուն ու մեծ շահ կ'ապահովէին :

Այս գործելակերպը վարկի դեմ կալուածային գրաւի դրու թենէն քիչ մը աւելի բարեխիղճ կը թուէր, սակայն չարաշահութիւնները անխուսափելի էին . վերջին հաշուով՝ հաշիւի տեսրակը վաճառականին ձեռքներ, իսկ գիւղացին առհասարակ հաշիւ-բան չէր գիտեր : Վաճառականը կը սիրէր կրկնել . **«Տէ'ֆթուօրը սէօտ չըխուսէր»** (Տեսրակը սուտ չի խօսիր) : Եւ վերջապէս՝ գիւղացիին բերած հոլմքին ու ասրանքին գինը պարոնը կը կտրէր...

Ոչ-հայ գիւղացիի պարագային վաճառականը կը կանչէր տեղի աղան կամ մեծաւորը, որ իր կարգին յաճախ վարկառու էր հայէն : Աղան կը վճարէր պարտքը, միւս կողմէ կը բռնագրաւէր գիւղացիին կալուածը :

Շուկային մեջ առհասարակ կը գործածէին Օսմանեան Պետութեան կողմէ ընդունուած չափու կշիռները : Յասակի համար կը գործածուէր հայ կական կանգունը (**կէ'ն-կէօն**) : Կարգ մը պարկեր ու ամաններ չափամանի դեր կը կատարէին ու անոնցմով ալ առելտուր կ'ընէին, - ինչպէս՝ **սէ'արկէկ, քօրց, խարալ** պարկերը, **տուլուօկ** (կոտ), **սընտաղ-բէկ** (ծեղ) ամանները, **արւղէնծ, քիւվէ'լիկ** պղինձէ մեծ ու միջակ կարթասները, նաեւ տարբեր չափի պղինձէ դոյլեր եւ այլն :

Գիւղական արտադրութիւններու եւ անասուններու առուծափի սակարկութեան մեջ (**սպզուօր**) տարածուած էր **գամսար սպզուօր** ձեւը, որ մօտաւոր կերպով գին կտրել կը նշանակէր :

Քեսապցիք դրամին **կուտուր** (կոտոր) կ'ըսեն : Օսմանեան ոսկեդրամը կը ճանչնային **դըղէն** (դեղին) եւ **կէ'րմէր** (կարմիր) անունով, - իսկ թղթադրամներու միաւորը **թօղթ** (թուղթ) կը կոչեն :

Պատկերացում մը տալու համար Քեսապի արհեստաւորներուն ու վաճառականներուն թիւին մասին՝ հոս բերենք Սիմոն Այանեանի 1920-ի Յունիսին կատարած մարդահամարին տուեալները : Նախկին բ-

նակչու թեան հազիւ մէկ երրորդը կազմող 2363 վերապրող քեսապցիներուն մէջ կան՝ 27 վաճառական, 45 կօշկակար, 14 կլայեկ, 23 ջուլիակ, 10 երկաթագործ, 9 դերձակ, 1 պղնձագործ, 7 հիւսն, 5 մազման, 4 մանրավաճառ խանութպան, 1 գուլպայագործ, 1 գինեպան, 2 մսագործ, 9 խոհարար, 17 ջորեպան, 4 որմնադիր, 2 ջաղացպան, 1 քարկոփ, իսկ շրջանի գիւղերուն մէջ՝ 2 կլայեկ, 4 կօշկակար, 2 ջուլիակ, 2 խոհարար, 2 ջաղացպան եւ մէկական քարկոփ, ծեփիչ, տախտակագործ, ածխագործ եւ առաղծագործ⁹:

Գիւղերուն մէջ առեւտուրը առհասարակ ասրանքափոխութեամբ կը կատարուէր: Գիւղական առօրեայ պէտքերուն կը հասներ փերեզակը (**Վիրիզէկ**), որ շաբաթը մէկ-երկու անգամ կը պտտէր գիւղերը: Անոր հեռուէն եկող ձայնը՝ «**Սաար՛ւն, թիլ-դարձո՛ւն, է՛սսիէ՛ղ, մախուօ՛թ...**», ճամբայ կը հանէր թաղին կիներն ու մանուկները: Կիները կ'առնէին քանի մը կաղապար օճառ, ասեղ, դերձան, այլ մանրուքներ ու համեմներ եւ մանաւանդ՝ **Յալպը ձուօյթ** (Յալէպի ձիթ), իսկ փոքրիկ տղոց՝ **գըրմէօշ** (փխրուն ու դիւրահալ շաքարեղէն մը): Փոխարէնը կու տային հաւկիթ, անասունի մորթի, բարձի յարմար փետուր կամ դրամ:

Ներկայիս քեսապի շուկան կը բաւարարէ բնիկներուն եւ գօսաշրջիկներուն պէտքերը: Գիւղական արտադրութիւններն ու հումքերը հաւաքելու գործը չի կատարեր: Խանութներու եւ վաճառատուներու կարելի է հանդիպիլ նաեւ գիւղերու մէջ: Ամէնէն բանուկ արհեստները նորերն են, ինչպէս ինքնաշարժի եւ ելեկտրական մեքենաներու նորոգութիւն, ալիւմինիւմի հիւսնութիւն, կահագործութիւն, շինարարութիւն եւ այլն, եւ այլն:

3.4. ՏՈՒՆԸ

Ա. **Տան կառոյցն ու տեսակները.**- քեսապցիներու կառուցողական աշխատանքի տեսակները բաւական շատ են ու կապու են տեղանքի աշխարհագրական պայմաններուն եւ ընձեռած կարելիութիւններուն

⁹ Սիմոն Այանեանի 1920-ի մարդահամարին ամբողջական պատկերը տե՛ս **Յակոբ Չոլպէան**, Գ. հատոր, էջ 230-291:

հետ: Մենք աշխատասիրու թեան համապատասխան բաժիններուն մէջ անդրադարձած ենք միջգիւղական ու գիւղամիջեան ճամբաներուն, կամուրջներուն, ջրհորներուն, ստորերկրեայ ջուրերը մակերես բերող փապանցքներուն, աղբիւրի արտաքին ճակատներուն, հնագոյն մատուռներուն, թոնրատան, գոմերուն (**գըշլա**), փարախներուն (**աղըլ**), կալերուն, արտերուն դարաւանդները ձեւացնող հսկայ պատերուն, խաղողի հնձանի, **գաղըրանի** ձեթի եւ կիրի օճախներուն շինութեան մասին:

Տան շինանիւթը մեծ մասով տեղական էր: Շինանիւթի հիմնական տարրեր էին քարը, սովորական հողէ կամ կիրէ պատրաստուած շաղախը, ճերմակ հողը, փայտն ու սալը:

Տան շինութեան համար քարի հիմնական տեսակներ էին. ա) **լօրջ քոլօր** (կապտաւուն քար), որ լեռնալանջերէն կը կտրէին. բ) **խէ'նկի քոլօր** (գետաքար), որ գետահուներէն կը հանէին. գ) **կէ'րմէր քոլօր**, ճերմակ բիծերով կարմիր քար, որ որոշ վայրերուն մէջ կը գտնուէր. դ) Պաշորտ գիւղի մօտակայ քէն հանուած սպիտակ քարը, որ կը տաշուէր ու սրբատաշ կը դառնար: Շինութեան քարը մուրճի տակ պէտք չէ փշրուէր, այլ տաշեղ-տաշեղ ձեւ ստանար: Շրջանի հնավայրերուն մէջ կը հանդիպի **քըստուէն քոլօրը**, որ հարաւի կողմերէն բերուած կալուղու թեթեւ քարէ, դիւրին կոփուող:

Շաղախը (**մուրուօտ**) կ'ըլլար հողէ կամ կիրէ: Յողէ շաղախին համար սովորական հողը մաղէ կ'անցընէին, մէջը կը խառնէին յարդ, այծի մազ կամ կանեփ: Կիրը գիւղացին կը պատրաստէր. կիրի շաղախունենալ ու համար մէջը աւազ կը խառնուէր: Աւազը կը բերէին ծովէն կամ գետահունէն: Տան ներսի պատերը կը ծեփէին ճերմակ հողէ պատրաստուած ցեխով: Փայտէն կը պատրաստէին գերանները, մարդակները, տախտակամածի տախտակները, կժանոցը եւ այլն: Տանիքի ծածկին համար տախտակէն բացի կ'օգտագործէին սալ քարը (**սուօլ քոլօր**), որ շերտ-շերտ քակելով կը բերէին յատուկ հանքերէ: Տանիքի ծածկին համար կ'օգտագործէին կապոյտ կամ դեղնաւուն քարը (**գուլ յոլօգ**), որ կը փշրուի ու թրջուելէ ետք լողի տակ կ'ամրանայ:

Տան պատերը կ'ըլլային երկշարք, շուրջ 50-60 սմ. լայնքով: Նախ անկիւնաքարէ անկիւնաքար մէկ շարքը կը շարէին, ապա՝ դիմացի

շարքը, երկու շարքերուն միջեւ մանր քար ու խիճ կը լեցնէին եւ քաւարար ցեխ: Ծարուող քարը պէտք է ճակատունենար, իսկ անկիւնաքարը՝ երկու ճակատ, երկայնակի եւ լայնակի: Պատի շարուածքի ատեն ներսի կողմէն կը կտրէին կժանոցի, պահարանի եւ անկողնոցի բաժինները: Պատին մէջ բացցուած այս խռոչները **աբ'տըհուն** (պուտուհան) կը կոչուէին: **Պե'տըհուն**ը որոշ բարձրութեան վրայ հաստմարդակներով կամ կամարածեւ քարէ շարուածքով կը ծածկէին. երկշարք պատը անոնց վրայ կը շարունակուէր: Յատակէն կը կտրէին օճախին - (**կրե'քուց**) բացուածքը եւ փուխերիկը: Արտաքին պատին վրայ ալ մէկ-երկու տեղ **աբ'տըհնուօկ** կը ձգէին, գործիքներ դնելու կամ հաւարոյնի համար եւ այլն:

Քովէ քով շարուած տուններուն թիկունքի կողմը պատուհան չէին ձգեր: Ծակատային կողմը կ'ըլլար դուռ մը եւ պատուհան մը, կողքին, եթէ մէկ կողմը տուն չկար, մէկ կամ երկու պատուհան եւս: Դուռերն ու պատուհանները կը կտրէին հաստմարդակներով: Դուռէն երեք կամ չորս շարք ելլելէ ետք կը շարէին գերանները, իսկ անոր վրայ տախակը, տախտակամածին վրայ՝ սալերը, ապա՝ փշրուած կապոյտ քարով (**գուլրուօգ**) կը ծածկէին: Տուիքը կը կառուցէին պատէն դուրս ցցուած (25 սմ.) մարդակներուն վրայ սալ կամ տախտակ շարելով ու քարով երիզելով: Կապոյտ ծածկը կը թրջէին ու կը լողէին՝ մինչեւ որ ամրանար ու ջուր չներծծէր: Ամէն անձրեւէ ետք կրկին կը լողէին: Ամէն տանիք իր լողն ու լողտուրքը կ'ունենար: Ախռններու եւ գոմերու տանիքը սալի եւ տախտակի փոխարէն կը ծածկէին ճիւղերով ու ցախով, ապա՝ կապոյտ հողով:

Չարուստ տունները տախտակամածի ու ղիղ եւ համաչ ափ գերաններն ու տախտակները կը ներածէին դուրսէն:

Տուները ունէին հետեւեալ ձեւերը.

1.- **Աշշաքլ ամա տուն**. - Ասիկա սովորական սենեակէ գրեթէ չորս անգամ ընդարձակ մէկ սենեկանի տուն էր: Տան կեդրոնը կը դրուէր սիւնը, ապա վրան կը տեղաւորուէր բարձիկը՝ փայտէ տաշուած խոյակը, որուն վրայ կը հանգչէր հանդիպակաց պատերը իրարու կապող երկար գերանը, որ **իէշ** (էշ) կը կոչուէր: Երբեմն ասիկա կ'ըլլար երկու

գերաններու ագուցումով, ապա, կը դրուէին երկու կողմի պատերը կապող գերանները (**հիծոն**): Սիւնը սենեակը կը բաժներ չորս հաւասար մասերու: Դրան կռնակի կողմը կ'ըլլար **ճարալըիւ** (կժանոցը), իսկ դրան կողմի պատին վրայ` **կրէ'քուց**ը (կրակարանը): Վերի անկիւնի պատին կ'ըլլար **եաթափլըգը** (անկողնոցը), իսկ դրան դիմացիվերի բաժինը մէկ աստիճան բարձր կ'ըլլար ու կը կոչուէր **պաղրմու**: Ան կը ծառայէր իբրեւ մառան: Սենեակը կրակարանէն անդին կ'ուսենար պատուհան մը կամ չէր ուսենար:

2.- Ճակատային մէկ սենեակով տուներ. - Միայն արկեւ երկյարկ ճակատային մասը` երկայնակի, աջ կողմը` դուռը, ձախ կողմը` պատուհան, մէջտեղը` փուխերիկ: Երբեմն թիկունքին շինուած կ'ըլլար նոյն ծաւալի սենեակ մը եւս. ասիկա երկու սենեկանի տունն էր: Երկրորդ սենեակը կը կոչուէր **նըքսըսէօն** (ներսի տուն): Երկյարկանի ըլլալու պարագային` երկրորդ յարկի սենեակը (**վըրըսէօն**` վերի տուն) կ'ուսենար առաջին յարկի (**նըքըսէօն**` վարի տուն) ծաւալը: Վերի տունէն վարի տուն իջնող տախտակէ ներքին աստիճանը ծածկուած կ'ըլլար փեղկով: Անհրաժեշտութեան պարագային` փեղկը կը բացուէր եւ երկու յարկերուն միջեւ ելեւէջ կ'ըլլար:

Արտաքին քարէ աստիճանը կը շինուէր ճակատի պատին` պատուհանէն մինչեւ դուռը հասնող վերելքով, ապա անկիւնի սիւնով մը վերի դրան առջեւ կ'ուսենար տախտակամած պատշգամ: Աստիճանները եւ պատշգամը բազրիք կ'ուսենային:

Նըքըսէօնը սովորաբար կը գործածէին իբրեւ ախոռ: Գիւղացին երբեմն առաջին յարկի համաչափութեամբ միայն արկ սենեակ մը կը կցեր տան` իբրեւ մառան, իսկ այդ սենեակին ալ` թոնրատունը:

3.- Մէկ կամ երկու կողմանի տուներ. - միայն արկեւ երկյարկ. երկու կամ երեք սենեկանոց այս տուներուն ճակատային մասը նեղ էր, կ'երկարէր դէպի ներս: Երկու սենեակ ըլլալու պարագային` բակին նայող մէկ սենեակին վրայ կը բացուէր դուռը: Ասիկա կը կոչուէր **միէկ կաչալ ասէօն** (մէկ կողմանի տուն): Երեք սենեակ ըլլալու պարագային` դուրսի դուռը կեդրոնի սենեակի ճակատին էր: Կողմի սենեակները կեդրոնի սենեակին կը կապուէին ներքին դուռերով: Այս

տուևը կը կոչուէր **երկը կաջալ ա** (երկկողմանի):

Այս տեսակի տուևը կրնար երկյարկ ըլլալ: Երկրորդ յարկի տան պատին կռթնած քարէ աստիճանները սիւնով մը տախտակէ պատշգամ մը կը ձեւացնէին առաջին յարկի դրան վրայ: Երկկողմանի տուևերը կրնային երկու կողմերէն աստիճաններ ունենալ (Յաւելուած թիւ 4 եւ 5):

4.- Սաքուով երկու եւ երեք սենեկանոց տուևեր.- միայարկ եւ երկյարկ. երկու սենեկանոց սաքուով տուևերէն մէկուն ճակատային մասը նեղ կ'ըլլար, իսկ կողքինը՝ երկայնակի: Երկայնակի սենեակին կողքի արտաքին պատը կու գար լայնքին դրուած սենեակին համաչափ, ու սիւնի վրայ դրուած երկու գերաններով կը կազմէր երեք կողմէն փակ տարածութիւն մը, որ կը կոչուէր **սե'քի** (սաքու): Սաքուն ներսի անկիւնէն երկու սենեակները տանող երկու դուռեր կ'ունենար: Սաքուի խորքի պատին վրայ կ'ըլլային կժանոցն ու պահարան մը, պահարան մը նաեւ՝ կողքի պատին վրայ:

Նման տուև մը կրնար երեք սենեկանոց ըլլալ՝ կեդրոնի երկայնակի սենեակին երկու կողմերը լայնքին դրուած երկու սենեակներով:

Այսպիսի տուևերը նոյնպէս կրնային երկյարկանի ըլլալ: Սովորաբար այսպիսի տուևերը լայնակի սենեակներուն արտաքին պատերուն կռթնած երկու կողմերէն աստիճաններ կ'ունենային, որոնք իրարու կը միանային գերանով մը հաստատուած բացօթեայ պատշգամով, որ սաքունին բացօթեայ մասը կը կազմէր: Վարի յարկի սաքուն կ'ընդարձակուէր (Յաւելուած թիւ 6):

5) Առանց սաքուի երկու սենեկանոց տուևեր.- միայարկ եւ երկյարկ. սենեակներէն մէկուն ճակատային մասը նեղ էր, միւսը՝ երկայնակի: Կրնար ունենալ երկրորդ յարկ նոյն ձեւով, աստիճանները տախտակէ պատշգամ մը կը ձեւացնէին երկու սենեակներուն կից դուռերուն առջեւ (Յաւելուած թիւ 7):

Ընդարձակ տուևերուն նստասենեակը, որ անպայման օճախ՝ **կրե'քուց** (կրականոց) կ'ունենար, կը կոչուէր **սըրհուօկ** (սրահ-իկ):

Քեսապաւանին մէջ եւս տուևերը մեծ մասով նմանատիպ էին,

նոյն ձեւով կառուցուած: Հիմնական երկու տարբերութիւններ կարելի էր նկատել. ա): Ուղղակի փողոցի վրայ գտնուող երկյարկանի տուները չունէին արտաքին աստիճան: Փողոցէն գետնայարկի դռնով ներս մտնելէ ետք տախտակէ աստիճաններով կը բարձրանային երկրորդյարկի մուտքի սենեակը: Երկրորդյարկը փողոցի վրայ երկարած քարէ յենակներու վրայ դրուած գերաններու վրայ պատշգամ կը ձեւանար: Պատշգամը երիզուած կ'ըլլար բազրիքով (Յաւելուած թիւ 8): Բ) Որոշ տուներու բակերը երիզուած էին բարձր պարիսպով, հետեւաբար բակ ելլողները փողոցէն չէին տեսնուեր: Տեղ-տեղ կային պարիսպով ու դարպասով բաժնուած ընդհանուր բակեր:

Բ. Տան կառոյցին արտաքինն ու ներքինը.- Պատուհանները սովորաբար տան ճակատի եւ մէկ կողմի պատերուն վրայ բացուած կ'ըլլային: Հողէ շաղախով տուները այդ պատերուն բացուած մէկական պատուհաններ կ'ունենային, իսկ կիրէ շաղախով շինուած տուները՝ երկու: Եթէ պատերէն մէկուն մէջ պահարան կամ կրականոց կար՝ մէկ պատուհան կը ձգէին, միշտ անկիւնի վրայ: Հին տուներու դռները միափեղկ էին, իսկ պատուհանները՝ երկփեղկ: Դռներուն ու պատուհաններուն վրայ թիթեղէ թերթ մը կ'ամրացնէին իբրեւ քիւ՝ զանոնք անձրեւներէն պաշտպանելու համար: Ծառ քիչ տուներու պատուհանները երկու կարգ փեղկեր կ'ունենային, առաջինը՝ ապակեպատ: Թիկունքի եւ մէկ կողմի պատերուն վրայ սովորաբար պատուհան չէին ձգեր:

Միայարկ տուներուն ճակատային պատին վրայ քառակուսի փոքրիկ խորշ մը (**ափ'տըհնուօկ**) կը ձգէին. հոս հաւերը կ'ածէին: Հաւուն համար պատին ամրացուած ճիւղերը աստիճանի դեր կը կատարէին: Ուրիշ աւելի ընդարձակ խորշ մը կրնար քանի մը **կոճակ** մեղուի համար նախատեսուած ըլլալ:

Երկյարկ տուներուն աստիճաններուն ճակատային կողմը երբեմն կամարած եւ կամ ուղիղ կտրուածքով խորշ մը կը ձգէին: Աստիճանները սովորաբար մէկ մեթր լայնք կ'ունենային: Այս խորշը փայտանոց կը դառնար կամ երկրագործական իրեր դնելու տեղ:

Աստիճանները եւ պատշգամը կրնային բազրիք չունենալ: Բազրիքը կոփուած մարդակներով կը շինէին ու կ'ամրացնէին պատին: Պատշգամները եւ առանց ծածկի սաքունները ամրան կը ծածկէին չոր ցախով: Գարնան՝ թիթեղի մը մէջ կամ ուղղակի գետինը տանտիկինը ջրադդում, լիֆ կամ որեւէ պատատուկ կը տնկէր ու կը տարածէր տան մուտքին: Ջրադդումը կը գործածէին իբրեւ շերեփ, իսկ լիֆը՝ իբրեւ լոգանքի շփոց:

Ներսի պատերուն մէջ կ'ըլլային հետեւեալ փորուածքները.

- Կժանոց (**ճարալ ըգ**). կ'ըլլար արտաքին դրան քով, կողմի պատին: Առանց փեղկի պահարան մըն էր, երեք բաժանումներով: Առաջին դարակին վրայ բացուած երկու **ալք**երուն մէջ կը զետեղէին ըմպելի ջուրին կուժերը: Վերի հարթ երկու դարակ-ներուն մէջ՝ սովորաբար կը դնէին թասեր, դոյլ երեւ այլ ամանեղէններ:

Կժանոցը երբեմն բացուած կ'ըլլար ծածկուած տիպի սաքուններուն մէջ, դուռին քով: Կրնար եւ մէկ կուժի համար ըլլալ:

- Անկողնոց (**եաթափլ ըգ**). սենեակի թիկունքի պատին վերի անկիւնը բացուած բաց պահարան մըն էր, ուր կը դարսէին անկողիները, ծածկոցներն ու բարձերը: Անկողնոցն ու կժանոցը սովորաբար վարագոյրով մը կը ծածկէին:

Մէկէ աւելի սենեակներ ունեցող տուներուն մէջ միայն ննջարանները անկողնոց ունէին:

- Պահարան (**սուլ ռօս**), որ կրնար մէկի տեղ երկու հատ ըլլալ՝ սովորաբար թիկունքի ու կողմի այն պատերուն վրայ, ուր այլ բացուածք չկար: Գիւղական փոքրիկ տուներէն շատերը պահարաններ չունէին: Ընդարձակ տուներուն մէջ անոնք սովորաբար միջնորմին մէջ բացուած կ'ըլլային: Այս պարագային երկերես կ'ըլլային, երկու սենեակներուն ալ կը ծառայէին: Ոմանք պահարանները վարագոյրով մը կը ծածկէին: Բարեկարգ տուներ բացուած խորշին մէջ ընտիր տախտակով **պահարան կապել** կու տային: Ասոնք ընդհանրապէս երկփեղկ կ'ըլլային:

- Կրականոց (**կըրէ'քիւց**). սովորաբար բացուած կ'ըլլար արտաքին դրան պատին մէջտեղ: Բացուածքը սովորաբար 1x1 մ. տարածու թեամբ

ու շուրջ 40 սմ. խորութեամբ խորշ մըն էր, որուն յատակը կը գտնուէր **կրրե՛քիւցը**: Կրականոցին ճիշդ առջեւը, անոր լայնքով, սալով ու ծեփով ծածկուած փոքրիկ տարածութիւնը տան տախտակամածը կը պաշտպանէր կրակէն:

Բացուածքին վերի անկիւններէն մէկ թիզ դուրս ցցուած քարէ երկու ելուներուն վրայ կը հանգչէր կամարածեւ **ճիւմարւտանը**, ծխնելոյզի հարթակը, որուն վրայ կը դնէին լամբարը, զարդեր եւ այլն: Գիւմարւտանէն վեր կը նեղնար **փիւխե՛րիկը** (ծխնելոյզ), որ տանիքի վրայ կը բացուէր շուրջ երկու թիզ բարձրութեամբ չորս ցից քարերու վրայ: Ասոնց վրայ կը հանգչէր ծխնելոյզի սալը, զոր պայծառ օրերուն վար կ'առնէին:

Տարին քանի մը անգամ երկար կոթով ցախաւ երով մը կը մաքրէին ծխնելոյզը, իսկ տանտիկինը տասնհինգ օրը մէկ անգամ ճերմակ հողի ցեխաջուրով կը մաքրէր կրակէն սեւցած կրականոցին բացուածքն ու ծխնելոյզին հարթակը:

Ընդարձակ տուներուն մէջ նստասենեակէն բացի՝ կրականոց կ'ունենար խհանոցը:

Գետնայարկի սենեակներէն մէկը կրնար նոյնապէս կրականոց ունենալ, բայց տարբեր պատի մէջ:

- Տախտակամածի փեղկ (**տամաթ**). տախտակամածին վրայ ամրացուած փեղկ մը, ուրկէ սանդուղքով մը գետնայարկ կ'իջնէին: Ասիկա կ'օգտագործուէր գիշերով ու անձրեւոտ եղանակներուն: Ծառտուներայ սափսի փեղկեր չունէին:

Նստասենեակի յատակը կը ծածկէին գորգերով (**խալի**), որ քիչ երկունենային, կարպետներով (**քիլիմ**), որ կը հիւսէին տեղացի մազմանները, օթոցներով, թիկնելու բարձերով: Դրուած կ'ըլլային քանի մը ցածկեկ աթոռակներ, անկիւնը մէկ երկու սնտուկով նստարան: Պատին կախուած կ'ըլլար գունազեղ ծեղով հիսուած սեղանը, որ կ'օգտագործուէր հիւրասիրութեան ատեն, ազգային կամ կրօնական նկար մը, երբեմն՝ ընտանեկան, փայտէ փոքրիկ խաչի մը վրայ կախուած կ'ըլլար ձիթենիի ոստ մը, որ Ծաղկազարդէ Ծաղկազարդ կը նորոգուէր, քովիկը՝ ցորենի հասկերով շինուած

խաչ բուռ մը (Յաւել ու ած թիւ 9):

Բարձր աթոռները եւ սեղանը գիւղական տուներուն մէջ յայտնուեցան 19-րդ դարու երկրորդ կեսէն սկսեալ, յատկապէս 1920-ական թուականներէն ետք:

Գ.- Մասանը.- Գիւղացիներուն մեծամասնութիւնը տան նեղութիւն ուներ: Բնակարանը մէկ կամ երկու սենեակէ կը բաղկանար: Եթէ տունը երկյարկանի էր՝ գետնայարկը անպայման ախոռն էր: Յետեւաբար գիւղացին այդ մէկ սենեակին մէջ կը նստէր, մթերքը կ'ամբարէր, կ'եփէր, կը թափէր, սեղան կը դնէր, հիւր կ'ընդունէր եւ կը քնանար:

Ընդարձակ տուներու պարագային մթերանոցը կ'ըլլար վարի սենեակներէն մէկը, բայց աւելի տարածուածը այն էր, որ գիւղացին իր երկյարկ տան կից նոյն համաչափութեամբ սենեակ մը եւս ունենար: Ասոր դուռը սովորաբար կը գտնուէր **վերի տան** աստիճաններուն սեմին քով: Այս սենեակը կը կոչուէր **նորքըստօն**:

Այս տունը միայն մէկ պատուհան ուներ, որ դարձեալ կը բացուէր բակին վրայ: Հոս տարբեր բաժանումներով շարուած կ'ըլլային տարեկան բոլոր մթերքներու ամբարները, սնտուկները, կաւէ կարասները, պտուկները, կուժերը, տախտակեայ տակառները, դարակներու մէջ տոպրակները, շիշերն ու սրուակները, դասդասուած կ'ըլլային մթերքներ պատրաստելու մեծ ամաններն ու իրերը՝ լաղերն ու լագանները, մեծ պղինձներն ու կաթսաները, թակերն ու շերեփները, տարբեր չափի մաղերը, խնոցիները, միս ծեծելու քարն ու թակը, քարէ ու տախտակէ փոքր ու միջակ սանտերը, երկանաքարը եւ այլն: Պատէն տեղ-տեղ կախուած կ'ըլլային նաեւ ծեղէ սեղաններ ու ամաններ, եղեգէ կամ ուռէ հիւսուած կողովներ, զամբիւղներ ու վանդակներ:

Դրան պատին մէջ կը գտնուէր կրականոցը: Անոր աջ հարթակին վրայ կը դնէին ունելին, ակիշը եւ կասկարան: Ճրագը դրուած կ'ըլլար ծխնելոյզի հարթակին վրայ: Եթէ տան մէջ մէկ կրականոց ալ ըլլար, ապա ատիկա ամէն պարագայի կնոջ կը պատկանէր: Կրակին անհրաժեշտ փայտը թէեւ մարդը կը բերէր, բայց մանր տաշեղները,

փոքր չափի չոր փայտերն ու ցախերը կինը կը հայթայթեր: Քեսապա
աւանին մէջ առաւել արար փայտածուխ կը գործածէին:

Քեսապի մէջ քարիւղէ օճախը (**փախոր**) ընդհանրացաւ անցեալ
դարասկզբին, իսկ բնական կազը եւ ելեկտրականութիւնը՝ 1960-ական
թուականներուն, երբ արդէն Քեսապի խոհանոցը գրեթէ
ամբողջութեամբ արդիականացաւ:

Գետնայարկը կը ծածկէին խաիրով, այծի մազէ հիւսուած
կարպետով կամ տարբեր կտորներէ կարուած թանձրկեկ ծածկոցով
(**սըլլու**), զոր տանտիկինը կը կարկտէր տան հին հագուստներու
կտորները իմիբերելով: Խաիրը կանեփէ հիւսուած գետնի ծածկոցն
էր, որ շուկայէն կը բերէին: Այծի մազէ սեւ կարպետը, զոր կը
հիւսէին տեղացի մազմանները, քանի մը տեղ զուգահեռ դեղնաւուն,
սրճագոյն, կամ ճերմակ գիծեր կ'ունենար: Ասով հովիւները **չերդիկ**
(հովուական վրան) կը լարէին ու յատակը կը ծածկէին: Մազէ
ծածկոցին վրայ, կրակին մօտիկ, կլոր ցածկեկ սեղաններ, որուն
վրայ քեսապի կինը խմոր կը բանար: Սեղանին շուրջը քանի մը
ցածկեկ աթոռակներ (**նստեփկ**) կ'ըլլային, հազիւ մէկ թիզ
բարձրութեամբ:

Այս սենեակին մէջ կիները շաղը կ'ընէին, ձաւարը կ'աղային ու
կը մաղէին, կաթը կը մշակէին, պանիր կը շինէին, մէկ սենեակի
պայմաններուն մէջ կատարուող ու պզտիկ կրակ պահանջող
պարէններով կը զբաղէին եւ ի հարկին կը գործածէին զայն նաեւ
իբրեւ խոհանոց:

Մառանի դրան բարաւ որին անպայման ձիու պայտմը կը կախէին:

Դ. Ախոռը.- Գիւղական շրջանակի մէջ, ի հակադրութիւն Քեսապի,
տուն չկար, որ ախոռ չունէր: Երկյարկ տուններուն պարագային
ախոռը միշտ գետնայարկը կ'ըլլար: Գետնայարկը մէկ սենեակ
ըլլալու պարագային կով մը կը տանէր: Ախոռին մէջ գիւղացին
ճաղերով կը բաժներ նաեւ հորթուկին բաժինն ու յարդանոցը: Երկու
սենեակ ըլլալու պարագային գիւղացին հանգիստ կերպով աւելի
անասուն կրնար պահել՝ մէկը ամբողջութեամբ ախոռի վերածելով,
իսկ միւսը յարդանոցին ու հորթուկներուն վերապահելով: Ախոռին

պատերուս վրայ հոս ու հոն քանի մը մսուրներ (**մըստօրք**) բացուած կ'ըլլային. անոնց քով փայտէ կամ մետաղէ օղակներ ամրացուած կ'ըլլային պատին՝ անասունները կապելու համար: Ախոռին յատակը դրան ուղղութեամբ թեթել թեթու թիւն մը կ'ունենար:

Վերը ննջարանն էր, որ կարելի ըլլար գիշերով տեղեակ ըլլալ կովերու շարժումներէն. կրնային հիւանդանալ, կրնային ծնանիլ. գիւղացին այդպիսի օրերուս քուն թէ արթուն, ականջը պտոռին դրած կ'ըլլար: Կովերն ու եզները գիւղացի մարդուն ամենէն թանկագին անասուններն էին, եթէ գողցուէին կամ սատկէին՝ ի՞նչ պիտի ըներինք: Ատոր համար ալ, երբ ամրան գիշերով կովերը բակի ծառերուն տակ կապէին, այր մարդիկ կը գիշերէին նոյն բակին մէջ, ծառի մը վրայ կամ սիւներու վրայ բարձրացած հիւղին (**շէօք**) մէջ:

Կիթը սովորաբար պառչգամին տակ, կամ՝ սաքուին մէջ կը կատարէին: Ամրան շատ տաք օրերուս գիշերով նոյն տեղը կը պահէին հորթուկները:

Միայնակ տուներու պտոռը առաւելաբար կը շինէին տան առջեւ: Տեղանքի թեթու թեան պառճառով ասոնք թիկունքէն լրիւ կէս գետնափոր կառոյցներ էին, որոնց տանիքը կը դառնար ընդարձակ բակ մը տան համար: Ախոռներուս առջեւ սովորաբար ցանկապատով բաց տարածութիւն մը կ'ըլլար՝ փարախը (**աղըլ**): Առանձին կամ կից պտոռները սովորական տունէն արտաքնապէս ոչինչով կը տարբերէին, սակայն բուխերիկ ու պատուհան չէին ունենար:

Յարդանոցը, ինչպէս տեսանք, կամ պտոռին մէջ ճաղերով զատուած բաժին մըն էր կամ կից սենեակ մը: Երկրորդ պարագային եւս բուն յարդանոցը բաժնուած էր ճաղերով: Միայնակ տուներու պարագային յարդը կը լեցնէին տանիքէն: Յարդին վրայ կը շարէին չոր խոտի շաւակները: Հոս մէկ անկիւնը դրուած մէկ-երկու ամբարներուն տարբեր աչքերուն մէջ կը պահէին հատանասնակերը՝ գարի, վարսակ եւ այլն: Հոս գիւղացին կը տեղաւորէր իր երկրագործական մեծ գործիքները պատէն կախուած, պատին կռթնած կամ անկիւնը քովէ քով շարուած վիճակով: Պատին կախուած կ'ըլլային մեծ ու փոքր սղոցները, մանգաղն ու մատնոցները, պարապ վանդակներ. դարակի մը

վրայ կ'երեւէին ուրագը, ցաքատը եւ այլ մանր գործիքներ: Յարդանոցի ճաղերուն կռթնած կ'ըլլային կամը, աղեղը, լուծն ու անոր բարձիկը՝ **քանտանու**, հոսելին, **ըրկըմէ'տին**, **հենկմէ'տին** կոչուող հոսելիները, **ալլ լ ու ն** ցախաւելը: Միւս պատին տակ արօրը, լուծը, մաճկալի գաւազանը՝ **մասուսա** մէկ անկիւնը՝ տարբեր չափի բրիչներ, թի, կացին, քլուսգու լծակ եւ այլն, առաստաղէն ու պատէն կախուած կողովներ ու զամբիւղներ: Դրան դիմաց գետինը կը դնէին իշուն համետն ու կորթոյնքը: Ձմրան օրերուն գիւղացի մարդը այս դրան առջեւ կը նորոգէր իր գործիքները կամ փայտեայ նոր իրեր կը շինէր իրեն կամ տիկնոջ համար:

Ձմրան՝ հորթուկը, ուլիկը կամ գառնուկը կը պահէին յարդանոցին մէջ:

Բնիկ քեսաացիք, ինչպէս նաեւ գիւղերու մէջ ոմանք տունէն հեռու վայրերու մէջ ախոռներ ունէին: Քեսապի մէջ, տուներու խողթեան պատճառով, գտնուած են հասարակաց ախոռներ ու փարախներ՝ վարձկան հովիւներու խնամքին տակ դրուած: Մեծ հօտերու (մանր եղջերաւ որներ) ախոռները **գըշ լ ու** կը կոչուէին եւ կը շինուէին տուներէ հեռու վայրերու մէջ:

Ե. Թոնրատունը.՝ Ի հակադրութիւն Սուրիոյ հիւսիսային շրջաններու շատ մը բնակավայրերու, ուր թոնիրը բացօթեայ է, Քեսապի շրջանին մէջ թոնիրը տեղաւորուած կ'ըլլար շուրջ 2.5x2.5 մ. տարածութիւն ունեցող յատուկ սենեակի մը մէջ:

Թոնրատունը ճակատային պատչուսեցող սենեակ մըն էր: Թոնիրը կը շինուէր խորքի պատէն քառորդ մեթր առջեւ, քիչ մը աջ: Անոր հաւասարութեամբ կը պատուէր ու կը շտկուէր: Երկու կողմերուն վրայ գոյացած հարթակը **ճիւ մարւ տան** կը կոչուէր: Ձախ կողմի լայն հարթակին վրայ կը դնէին հայսի քթեթն ու շաղիլ աղը, կը գնտէին ու կը բանային խմորը: Աջ կողմը նեղ հարթակին վրայ կը դնէին ունելին, ակիշը եւ խանդրոշը:

Կային ծխնելոյ գով եւ առանց ծխնելոյ գի թոնրատուներ: Ծխնելոյ գով թոնրատան հարթակները խորութիւն չէին ունենար, այդ պատճառով ալ ձախ հարթակը, ուր կը դրուէին տաշտն ու հայսի

քթեթը, կիսաբուլոր կառույց մը կ'ուսենար (Յաւելուած թիւ 10): Շրջանին մէջ տարածուած էր առանց ծխնելոյզի թոնրատուներ: Թոնրատան կողքին բաց տարածութիւնը կը կոչուէր ցախանոց (**ցախնուց**), ուր կիներ կը դիզէր թոնրի համար շալակով բերած չոր ցախը:

Տանտիկիներ միշտ մաքուր կը պահէր թոնրատուները, որ ունէր իր յատուկ ցախաւելը: Ատենը մէյ մը ան ճերմակ հողի ցեխաջուրով կը փայլեցներ թոնրատան ներսի ճակատն ու հարթակները: Թոնրատան ներսի պատերուն վարի կէսը միայն ծեփով ծածկուած կ'ըլլային:

Թոնրատան շէնքի կառույցը աւարտելէն ետք կը շինէին թոնիրը: Ան շուրջ մէկ մէթր խորութիւն կ'ուսենար, կարասածել էր: Փորի տրամագիծը կ'ըլլար շուրջ 60 սմ.: Թոնիրը կը շինէին գիւղացիք, նոյնիսկ կիներ, թէեւ կային թոնիր շինող վարպետներ եւս: Թոնիրը կը շինէին ճերմակ հողէ (ըսափտուօկ խուղ), որ, ինչպէս տեսանք, կը գործածուէր տան ծեփի համար: Հողը հանքէն փորելէ եւ տուն բերելէ ետք կը փռէին, կը չորցնէին ու ցրմաղէ կ'անցնէին: Ապա անոր մէջ այծի մազ ու գգուած կանեփ կը խառնէին ու թեթեւ ջուր տալով ցեխ կը շինէին: Տեխը պէտք էր փայտով այնքան ծեծել, որ ձիթի պէս ըլլար: Տեխին վրայ մատի հետքը կարագի պէս ողորկ ու սահուն պէտք է ըլլար: Ապա գունտմը առնելով սալքարի մը վրայ կը ծեծէին ու երկու թիզ երկարութեամբ ու բրիչի կոթէն քիչ բարակ աղիւսներու կը վերածէին: Թոնիրին տեղը նախապէս շրջագիծով մը որոշուած կ'ըլլար յատակին: Նախ կը տեղաւորէին առաջին շարքի աղիւսները ու մատնելով սուաղելով իրարու կը կցէին: Երկրորդ շարքի աղիւսները տեղաւորելէ ու մատներով կցել-սուաղելէ ետք կ'անցնէին երրորդ շարքին եւ այսպէս թոնիրը հետզհետէ ձել կը ստանար: Առաջամասին՝ վերը, որ **թոնիրին բերանը** կը կոչուէր, քիչ մը ցած կը պահէին մէկ-երկու աղիւսի հասակով: Վարը բացուած օդանցքը **աղլիէզ** կը կոչուէր: Յատկապէս ուշադրութիւն կ'ընէին, որ թոնիրը ներսէն շատողորկ ու ձելաւոր ըլլար: Թոնիրը ծածկչէր ուսենար: Անվարժ հաւերը երբեմն հոն մտնելով հաւ կիթ կ'ածէին:

Շարուածքը ամբողջացնելէ ետք կը ձգէին, որ թոնիրը քիչ մը

չորնայ, յետոյ ողորկ մակերես ունեցող մետաղեայ փոքրիկ թակով մը (**մուշտա**) կը ծեծէին: Ծատ թաց ըլլալ ու պարագային թակին հետ ցեխ կ'ելլէր. պէտք է այնքան չորնար, որ թակին տեղը ողորկ դառնար ու արտակարգ փայլք մը ձգէր: Ծեծի աստն թեթեւօրէն ջուր կը սրսկէին պատերուն: Կը ծեծէին օրը քանի մը անգամ, ներսէն: Թոնիրը կ'ամրանար ու ճեղքերը կ'անհետանային: Այս գործողութիւնը կը շարունակուէր շուրջ տասը օր, մինչեւ որ լաւ չորնար ու ճեղքեր չառաջացներ: Ապա կը պատէին կողքերը ու կը շտկէին վերի հարթակները: Առաջամասը սովորաբար թիթեղէ թերթերով կը պաշտպանէին: Լաւ ծեծուած թոնիրը դիւրութեամբ չի ճեղքուիր եւ հացին հետհող չի հաներ:

Թոնիրը գործածելէ առաջ մէկ-երկու օր կը վառէին, նախ մեղմ կրակ մը, որ պատերը կամաց-կամաց տաքնան: Թոնիրը նախ կը սեւնայ, ապա կը կարմրի եւ վերջապէս կը ճերմկնայ (**կըսաքսկի**): Թոնիրը պատրաստէ արդէն:

Խիտ թաղերու տուները սեփական թոնրատուն չունէին: Թոնրատունը թաղային սեփականութիւն կը նկատուէր ու կառուցուած կ'ըլլար թաղին մէկ ծայրը: Այդպէս էին թոնրատուները Քեսապաւ անին մէջ, ուր քսանական թուականներէն ետք փուռեր ալ կը գործէին: Քեսապի մէջ կային նաեւ հաց-թուխ կիներ, որոնք հարուստընտանիքներու հացը կը պատրաստէին:

Տեղ եւ միջոց ունեցողները կրնային ունենալ նաեւ սեփական թոնրատուն, որ սովորաբար կը գտնուէր բակին վերջին ծայրը, ախոռէն անդին, եթէ ասոնք մէկ շարքի վրայ ըլլային:

Թաղային թոնիրները կրնային դարաւոր հնութիւն ունենալ: Զեքիաթներու մէջ ոսկի կարասը կը յայտնուի թոնիրի փլած պատին մէջ:

Սեփական թոնրատան առաջամասին, ձախ պատին տակ քանի մը կրականոցներ շինուած կ'ըլլային միջակ ու փոքր չափի կաթսաներու համար: Ի պահանջեալ հարկին, տանտիկինը թոնրատան մէջ կ'ընէր լուացքն ու կ'եփէր ճաշը:

2.- Բակը.- Գիւղական շրջաններու մէջ բոլոր տուներն ալ բակ մը ունէին, որ մուտքէն կամ սաքուէն մէկ-երկու աստիճան ցած կ'ըլլար: Կային ընդարձակ բակեր՝ տան բակը, ախոռին բակը, թոնիրին բակը բաժիններով: Թեք տեղանքի պատճառով բակը կ'երիզէին պատով ու կը հարթեցնէին, երբեմն բազրիքով ալ կ'երիզէին: Ոմանք բակը կը ծածկէին սալ քարերով: Մուտքը երբեմն ճիւղերէ շինուած դռնակ մը կը դնէին (**գախապ ըգ**): Գիւղերու մէջ, ի հակադրութիւն Քեսապի, պարսպապատ բակեր չկային: Բակէն ամէն տեղ կ'երեւէր:

Տան բակին մէջ կարելի էր գտնել .

- Քարէ խոշոր սանդը, որ հաստատուած կ'ըլլար բաց տարածութեան մը մէջ, բարձր պատու անդանի մը վրայ :

- Ծան ու կատուին կրիճները:

- Բակին մէջ անպայման ծառ մը կ'ըլլար, գլխաւորաբար թթենի, ձիթենի, դափնի կամ կաղնի, որուն վրայ որթատունկ մը կը մագլցէր: Կարգ մը բակերու մէջ այս ծառերը այնքան մեծ էին, որ գիւղացին ծառի ցողունին խորշ մը բացած կ'ըլլար (**սք'տղհնուօկ**): Յոն սովորաբար կը դնէին ուրագն ու ցաքատը, կամ բունկալ մը, որ հաւերը հակիթ ածեն: Ծառի հաստաբեստ ճիւղերուն միջեւ մարդակներով տախտակամած կը շինէին ու շուրջն ու վրան կը ծածկէին վայրի թուփով մը՝ **հիմքա** Ասիկա ամառնային ննջարանն էր, որուն **շէօք** (շուք) կ'ըսէին: Ծուք կը բարձրանային յատուկ սանդուղքով մը: Այսպիսի ծառ մը չունենալ ու պարագային՝ գիւղացին փայտէ սիւներու վրայ շուքը կը շինէր: **Շէօք** կը կոչուէր նաեւ որթատունկի սարփինան:

- Տան բակին մէջ անկիւնը ոմանք բացօթեայ խոհանոց մը կը շինէին: Յոն կ'ըլլար կրականոց մը, ուր տանտիկինը յարմար եղանակներուն ճաշը կ'եփէր ու պնակները կը լուար: Ոմանք այդ բաժինը քիչ մը կը բարձրացնէին բուն բակէն ու ճիւղերով ծածկ մը կը պատրաստէին անոր համար:

Ախոռին բակին մէջ կարելի էր գտնել .

- Յաւնոցը (**իփլշքէօշ**), որ կրնար բակին մէջ մէկ անկիւնը ըլլալ: Յաւնոցին առջեւ սովորաբար խիտ ցանկապատ մը կը շինէին,

դրացի ցանքերուն վնաս չպատճառելու ցանկութեամբ հաւերը հոն բանտարկելու համար: Յաւնոցը նեղ դռնակով կիսագետնափոր խորշ մըն էր: Խորշին կէս բարձրութեան վրայ շինուած կ'ըլլար թառը: Այս հաւնոցին մէջ կը պահէին 10-15 հաւեր: Տանտիկինը հաւնոցը ամէն օր կ'աւելեր ու յատակին մոխիր, երբեմն կիր կը ցանէր: Ամրան հաւերը կը թառէին ախոռին բակը ծառի մը վրայ շինուած ու թիթեղէ թերթերով պատսպարուած թառի մը վրայ:

• Աղբիւսը, ուր բացառաբար կը հաւաքէին անասուններուն աղբը: Խոհանոցէն եւ բակէն հաւաքուած աղբը կը թափէին հեռու տեղ մը, պատի մը տակ, ուր պարբերաբար կրակ կը վառէին:

Թնրատան բակին մէջ կարելի էր գտնել .

• **Մասարու** (հնձան), ուր կը հաւաքէին խաղողը՝ ռուպ եւ այլ մթերքներ պատրաստելու համար: Յոս կ'ըլլար խաղողը ճմլելու եւ հիւթը քամելու աւազանը (**թէ'քնու**) եւ մեծ կրականոցը: Վերջինը, շուրջ մէկ մետր բարձրութեամբ, կ'ունենար երկու աչք՝ մէկուն վրայ կը դրուէր գտնուող պղինձը, իսկ միւսին վրայ՝ եփիլաղը: Կրակը կը վառէր լաղին տակ, իսկ անկէ ներքին անցքով մը ջերմութիւնը կը հասներ գտող պղինձին:

• Ասոր մօտիկ կը գտնուէր նաեւ ուրիշ մեծ կրականոց մը, ուր կ'ետէին դափնիի պտուղը՝ ձեթ հաւաքելու համար: Երկաթէ կաթսան սովորաբար կրականոցէն չէին վերցնէր:

Կարգ մը տեղեր մասարան թաղին կը պատկանէր:

• Երրորդ խշոր կրականոց մը՝ պղինձէ կաթսային եւ լաղին համար: Յոս կ'ետէին թթուները, լուիկի ջուրը, հատիկը եւ այլն:

Է.- Արտաքնոց.- Քեսապի մէջ ըլլայ թէ գիւղերուն մէջ՝ արտաքնոցը տունին մէջ չէր, ոչ ալ անոր կապած, այլ բակին կամ պարտեզին մէկ անկիւնը:

Քեսապաւ անին մէջ արտաքնոցը կը գտնուէր տուներուն փոքրիկ հողաշերտին մէջ, որ կամ տուներու թիկունքն էր, կամ աւառաջամասը: Ան առանձին կառոյց մըն էր, փոքրիկ ու նեղ շէնք մը, որ շինուած կ'ըլլար ուղղակի ամբարին վրայ կամ անոր մօտիկ: Ամբարը ջրհորի ձեւով շինուած ու ամրօրէն ծածկուած կ'ըլլար: Այսպիսի

քանի մը հասարակաց արտաբնոցներ ուներ նաեւ շուկան, ճիշդ լերան ստորոտին: Անոնց մաքրութեան կը հոգային շուկային աւելած ուն ու ջրկիրը:

Տան մէկ կողմը ընդարձակ տարածութիւն ունեցող տուները իբրեւ արտաբնոց կը գործածէին ճիւղէ կամ թիթեղէ լաթերով շինուած հիւղեր: Անոնք ընդհանրապէս բարձր պատի մը առջեւ տնկուած երկու սիւներուն վրայ փոքրիկ տախտակամած մը կը ներկայացնէին: Տախտակամածին անկիւնները կ'ամրացնէին ձողեր ու կը պատէին ցախերով: Մուտքը պատին վրայ կ'ըլլար: Իբր դուռ կը դնէին քուրջի կտոր մը: Աղբը կը հաւաքուէր պատին տակ բացուած բաց փոսի մը մէջ, ուր պարբերաբար քանի մը թի հող կը թափէին:

Քեսապի մէջ արտաբնոցը տան մէջ բաժին սկսած է ունենալ քսանական թուականներէն ետք: Քեսապ աւանը հասարակաց կոյուղիով կ'օժտուի 1960-ական թուականներուն:

1850-ական թուականներէն ետք Քեսապի մէջ սկսան երեւիլ կղմինտրաւոր թեք տանիքներով տուները: Ասոնք ամերիկացի միսինարներու սեփական բնակարանները, աւետարանական համայնքի դպրոցներն ու եկեղեցիներն էին: Նման ընդարձակ, երկյարկանի շէնքեր երեւցան յետ տարագրութեան տարիներուն եւս: Շրջանին մէջ երկաթ-պէթոնէ շէնքերը երեւցան 1950-ական թուականներէն սկսեալ: Նախկին քարաշէն տուները մեծ մասով պէթոնով սուադուցան, տանիքները թափեցին ու փոխարինեցին երկաթ-պէթոնով, Գիւղացիներէն շատեր իրենց տուները նախընտրեցին կառուցել թաղերու հին սահմաններէն դուրս, իրենց արտերուն ու պարտեզներուն մէջ:

1970-ական թուականներէն սկսեալ շրջանին մէջ մեծ թափ առաւ փառաշուք առանձնատուներու շինարարութիւնը: Ասոնք մեծ մասով կը պատկանէին հալէպցի հայոց ու արաբներու: Օդափոխութեան եւ գբօսաշրջիկութեան նպատակներով սկսան կառուցուիլ նմանատիպ կառոյցներու խմբաւորումներ ու բազմայարկ (մինչեւ ինը յարկ) շէնքեր: Քեսապն ու գիւղերը լրիւ կորսնցուցին իրենց նախկին կերպարանքը:

3.5.- **SURUՉԸ**

1850-ական թուականներեն սկսեալ քեսաացիի հին տարազը աստիճանաբար սկսած էր փոխուիլ, այնպէս որ 1970-ականներուն վերջին պատառիկներն ալ վերացան կենցաղէն: Ահա թէ ի՛նչ կարելի եղաւ գտնել տարազի մասին.

Ա.- **Կնոջ մազի յարդարանքը.**- Մազը կնոջ պատիւն ու շնորհքն էր: Անպարկեշտ կարծուած որեւէ արարքի համար, թէկուզ փաղաքշական շեշտով, կ'ըսէին՝ «**կըտրուը կըծօէք**» (կտրելիք մազեր): Կինը մազի թնճուկներն ու թելերը կը հաւաքէր ու կը դնէր տան պատին խռռչներուն մէջ, չէր թափեր, կրակին մէջ չէր այրեր: Մազի յարդարանքի հիմնական ձեւը **ծէ'միր** (ծամեր) կը կոչուէր: Ողորկ սանտրուած մազի իւրաքանչիւր փունջ **գուըճ** կը կոչուէր: Իւրաքանչիւր փունջ կը բաժնէին քանի մը երկրորդական փունջերու ու կը հիւսէին: Ծաւեր, երրորդ փունջի փոխարէն, գունաւոր ժապաւէն մը կը հիւսէին, իսկ հիւսակի կէսէն սեւ մետաքսէ ծոպեր կ'աւելցնէին: Իւրաքանչիւր հիւսակ **արլլ ուօկ** կը կոչուէր: 5-7 հիւսակ կը շինէին: Տարեց կիներն ու աղջնակները երկու հիւսակ կ'ունենային:

Պարմանուհիները կը կապէին գլխի **դաստրուօկ** (դաստարակ): Դաստարակին եզերքները ժանեակ կամ գունագեղ հլունաշար կ'աւելցնէին: Չափահաս աղջիկները եւ հարսերը կը կապէին **կարմիր շալէ դաստարակ**, անոր վրայ՝ կապոյտ բեհեզէ կոնաձեւ գլխարկ՝ **շէքքէ**: Անոր ճակատային մասը զարդարուած կ'ըլլար արծաթէ դրամներով ու կողմերէն արծաթեայ շղթաներով՝ **շէքէլ էթ**: Ասոնք կը զարդարէին ճակատն ու քունքերը: Ծէքքէն կը ծածկէին **շէրէ** կոչուող գունաւոր դաստարակով, որ կ'իջներ ուսերն իվար ու կրնար փաթթուիլ պարանոցին: Աղջիկները իրենց դէմքը չէին ծածկեր:

Տարեց կիներու գլխաշորը ուներ որոշ տարբերութիւններ. ա) **դաստրուօկ**, որ ետեւէն դարձնելով գլխուն վրայ կը հանգուցուէր. բ) **դակի** (գդակ), կարճ ու կարմիր **\$էս** էր, դաստարակը վարի ծայրերէն կ'երեւէր. գ) **կուր**, նեղ գօտի, ուրկէ շղթաներով կախուած կ'ըլլային ոսկեայ դրամներ՝ **դազգի, մահմուտիէ, ախշըափլլիք**: Կուրը կ'ամրա-

ցուեր գդակի ճակատին. դ) **խու մար**՝ բեհեզեայ ընդարձակ ծածկոց՝ կապոյտ, կարմիր կամ սեւ: Խու մարը կը ծածկեր ուսերը, կրնար հանգուցուիլ կզակին տակ: Դաստարակը, գլխարկը, կուրը եւ խու մարը իրարու ամրացուած կ'ըլլային անհամար ծամակալներով: Կիները ականջօղեր կը դնէին պարտադիր կարգով:

Բ.- **Կնոջ հագուստը**, որուն մասերն էին.

- **Շէ'աբկ**.- Ներքնագգեստ՝ կապոյտ, կարմիր կամ դեղին: Կը հասներ մինչեւ ծունկերը, թեւերը դաստակներուն քով կը նեղնային: Մարերուն շապիկին ճեղքը կ'ըլլար առջեւէն, որ կա՛մ կը կոճկուեր եւ կա՛մ երկու ծայրերուն ամրացուած երիզներով կը հանգուցուեր: Օձիքին բացուածքը եւ քղանցքը երիզուած կ'ըլլային ձեռագործ ժանեակներով:

- **Ճիւպպի**.- շրջագգեստ, որ վերէն վար բաց էր ու գօտիով կը գոցուեր: Քղանցքը՝ մինչեւ կրունկները կը հասներ, իսկ թեւերը՝ մինչեւ նախաբազուկ, ուր շապիկի թեւին վրայ կ'երեւէին ապարանջանները: Ճիւպպիին աջ կողմը կու գար ձախին վրայ եւ մէկ կոճակով կ'ամրանար: Հաստ ու գունաւոր ասեղնագործութիւն մը զարդարած կ'ըլլար թեւերուն եւ օձիքին բացուածքներն ու քղանցքը:

Տըստանը կը փոխարինէր ճիւպպին: Ան մէջքին կար կ'ունենար: Օձիքի փորուածքը կլոր կ'ըլլար, կուրծքի ճեղքուածը կոճակներով կը գոցուեր: Ծծկեր մանուկ չունեցող կիներու պարագային՝ ճեղքուածը ետեւը կ'ըլլար ու երիզներով կը հանգուցուեր:

- **Գուտա** (գօտի), որ հարուստներու պարագային արծաթէ **քամար** է, բայց առօրեային մէջ բոլորն ալ մետաքսէ կամ բամպակէ միագոյն կամ գծաւոր գօտի կը կապէին: Գօտին քանի մը անգամ փաթթելէ ետք կը հանգուցէին արտին վրայ: Փոքրերու պարագային՝ ճիւպպիին կողերուն ամրացուած երկու երիզները (**շըճըմէկ**) կը փաթթէին մէջքին:

- **Իլէ'կէկ**՝ անթեւ կարճ բաճկոնակ, որ առջեւէն կը կոճկուեր: Ան զարդարուած կ'ըլլար **գըլլապըտուն** կոչուող հիւսքով, հաստ ոսկեգոյն թելերով: Բաճկոնակը կը պատրաստէին **շալէ** (բամպակ) կտորով:

- **Էօմլըք, իւմլէ'կէկ**՝ գոգնոց, որ կ'ըլլար երկու տեսակ՝ վիզէն վար կամ մէջքէն վար: Առաջինը օղակով մը կ'անցընէին վիզին ու կո-

ղին ձգուած երկու երիզներով կ'ամրացնէին ետին: Կը գործածէին թոնիրին մէջ: Երկրորդ տեսակի գոգնոցը կը հագուէին տան ու արտին մէջ:

- **Թիզնէք** (թեզանիք), որ կը հագուէին թոնիրը: Ասիկա թել առակէն մինչեւ դաստակ կը հասներ, կը փաթթուէր երկար երիզով:

- **Վարտէք`** լայն վարտիք, որ սովորաբար կը կարէին **ալ անկըննիր** (**ալ անա**՝ մանուսա) կտորով: Կոճերու նքով կը նեղնար:

- **Իմէ'նու**` դեղին կօշիկ, որ կրունկ ու կապչուններ: Տան մէջ կը հագնէին **փախօճ**` դեղին հողաթափ կամ հլու ններով զարդարուած, խիրէ կամ թաղիքէ շինուած ոտնաման` **մուճուօկ** (մուճակ): Երիտասարդ կիները կը հագնէին դեղին մոյկ` **ճիզմու**, որ քթին կ'ունենար գոյնզգոյն ծոպ, իսկ կրունկը երիզուած կ'ըլլար պայտածել երկաթով: Վարտիքին վարի ծայրը կը խրէին մոյկին մէջ (Կնոջ տարագի նկար` յաւելուած թիւ 24):

Գ.- Այրերու տարագը.

Այրերը երկար մազ ու մօրուք չէին պահեր, կ'ունենային չափաւոր պէխ: Երկար պէխեր ունեցող մարդոց **մրզընիէխ** կ'ըսէին:

Յնագոյն գլխարկը` **սորգ** կը կոչուէր. ճերմակ թաղիքէ շինուած կոնածել գլխարկ մընէ: Պորքին վրայ կը փաթթէին մետաքսեայ փնջաւոր սել դաստարակ: Ոմանք միայն դաստարակ կը կապէին:

Հարուստները **Ֆէս** կը դնէին, ծոպով կամ առանց ծոպի: Անոր վրայ ոմանք **սարըխ** (փաթթոց) կը փաթթէին: Հնչակեաններու ատեն տարածուեցաւ **գալ փախը**:

Երկու տեսակ տարագ կար. ա) **շափկ** ու **շալ վար**, բ) **ճիւպի** (շրջագետ) կամ **զուարէն** (շրջագետ, որուն կուրծքի բացուածքը կը կոճկուէր) ու **վարտիք**: Միշտ կը կապէին կարմիր **անէմ** գօտի կամ գամերով զարդարուած **փալ ագա** (կաշի): Երկու պարագային ալ կը հագուէին **իշլէկէկ**` անթել բաճկոնակ, որ կը կոճկուէր: Ծափկին բացուածքները ասեղնագործուած կ'ըլլային: Օձիքին առջեւը կա'մ բաժակածել կ'ըլլար, կա'մ ալ կ'ունենար ճեղքուածք, որ կը կոճկէին:

Գօտիին ամրացուած կ'ըլլար ծխախոտի կաշիէ քսակը` **քասա** Պորտին վրայ կը խրէին դաշոյնը, պարսետը, աւելին շ` ատրճանակը (**ճի-**

թիւն), իսկ ետեւը՝ ցաքատը կամ ուրագը: Շալ վարին գրպանի ու ոտքի բացուածներուն վրայ կ'ամրացնէին ոսկեգոյն ասեղնագործ զարդեր՝ **չըմզոք**:

Երկու տեսակ վերարկու կար. ա) **ապա**՝ սեւ այծի մազէ, կը հասներ մինչեւ ծունկերը, թեւերը կը հասնէին մինչեւ արմուկները: Առջեւը բաց էր, եթէ հարկ ըլլար՝ գօտիով կը պահէին: Քեսապի մէջ ապա հիւսողներ կային: բ) **Մուշլահ**՝ ոչխարի մորթով, բուրդէ երեսը դէպի ներս կ'ըլլար, իսկ դուրսի երեսը կը պատէին սեւորակ կամ սրճագոյն կտորով: Մուշլահը, ցուրտօրերուն, կ'առնէին ուսերուն վրայ: Կարողներ կային:

Այրերու կօշիկներն էին.- **իմէ'նու**՝ դեղին կօշիկ էր, աչ ու ահեակ չունէր: Կապով կօշիկը՝ **սանտալ** կը կոչուէր: **Չէ'քմու**՝ դեղին մոյկ էր, մինչեւ ծունկերը հասնող. վիզին ծայրը կ'ունենար երկծալ ելուններ՝ ականջ:

Դ.- Կարուձեւ եւ ասեղնագործութիւն.- Զինէն ի վեր Քեսապի շուկան կը հայթայթէր կարուձեւի եւ ասեղնագործութեան բոլոր ատաղձները, որոնցմէ ոմանք տեղական էին, իսկ ուրիշներ՝ դուրսէն բերուած: Շուկային մէջ կային կերպասեղէն ու տարբեր տեսակի թելեր ու դերձաններ, կարուձեւի վերաբերեալ ատաղձներ ու նեցող վաճառատուներ, որոնց տերերը նաեւ տեղական տարբեր հումքեր հաւաքող ու արտածող վաճառականներ էին: Գիւղական շրջաններու բնակիչներէն շատեր կան-խիկ վճարումով հնարաւորութիւն չունէին գնում կատարելու. գիւղացին բերքի վրայ վաճառականէն կ'առնէր ինչ որ պէտք էր՝ կտաւ, մանուսա, տպածոյ կերպասեղէն, թել-դերձան եւ այլն ու կը բերէր կը յանձնէր տիկնոջ: Քեսապի շուկան ու նեցած է նաեւ պատրաստի հագուստեղէն, որ ձեռնտու չէ եղած բնակչութեան մեծ մասին համար. այս պատճառով ալ գիւղի պայմաններուն մէջ կարուձեւի վերաբերեալ գլխաւորաբար հում ատաղձներ, որ տուն կը բերուէր:

Կինը, Քեսապի թէ գիւղերուն մէջ, առհասարակ ինք կը ձեւէր

ու կը կարէր տնեցիներուն հագուստը: Հարսին օժիտին անխուսապէլ ի կերպով մաս կը կազմէր ասեղամանը, ուր կը դրուէր մկրատը, լաթէ կանգունը, ասեղաբարձիկը, մատնոցները, վերմակի ասեղները եւ տեսակաւոր դերձաններ: Աղջիկը մանկութենէն կարուձեւի կը վարժուէր. այդ կը պահանջէր գիւղական միջավայրը: Ամէն օր կարի ու կարկտանի համար ասեղամանը կը բացուէր: Նոյնիսկ ցախի կամ արտի գացող կիներ իր լամբակին ասեղ-դերձան մը կ'անցընէր:

Կիներ կը պատրաստէր նաեւ տան անկողիներն ու վերմակները, ծածկոցներն ու բարձերը, վարագոյրները, անձեռոցներն ու թաշկիւնակները:

Գիւղերուն մէջ միշտ ալ եղած են կարուձեւի մէջ ինքնուս վարպետութիւն ձեռք ձգած կիներ: Գիւղացի կիներ ու աղջիկներ կը դիմէին անոր ու կը սորգվէին անկէ: Տարազի արդիականացումէն ետք ալ ասիկա շարունակուած է. շրջան մը մեծ քաղաքներու մէջ ապրած ու արդիական կարուձեւէ հասկցող կիներ իրենց կարի մեքենայով բարիք մը եղած են գիւղական շրջանակներու մէջ: Այսուհանդերձ, կարու-ձեւը Քեսապի մէջ կանանց պարագային արհեստի չէ վերածուած գէթ մինչեւ տարագրութեան տարիները: Այնուհետեւ տուներու մէջ ապսպարանքով աշխատող դերձակուհիներ եղած են ու կան մինչեւ օրս: Քիչ մը տարբեր եղած է այր մարդոց տարազի պարագան. թեւէ այս պարագային ալ կիներ կը ձեւէր ու կը կարէր, սակային կային նաեւ արհեստավարժ դերձակներ. ոմանք առանձին տարազի մասնագիտութեամբ կը ճանչցուէին. կային **շարվարճիներ, ապաճիներ, մուշլահճիներ** եւ այլն: Հին եւ արդիական տարազի դերձակներ իրենց արհեստանոցները ունէին Քեսապի մէջ:

Մեծ կարելորութիւն կը տրուէր նաեւ ասեղնագործութեան: Ամէն կին ասեղնագործութենէ կը հասկնար: Նուրբ ասեղնագործութեան կարգ մը տեսակները Քեսապի մէջ զարգացան յատկապէս 19-րդ դարու երկրորդ կէսին, երբ մարաշցի եւ այնթապ-

ցի մեծ թուով վարժուհիներ Քեսապի դպրոցներուն մէջ իրենց պաշտօնավարութեան շրջանին իրենց այդ արուեստները սորվեցուցին քեսապցի կանանց եւ աղջիկներուն: Բողոքական օտար միսիոնարուհիներն ալ քաջալերեցին այդ զբաղումը: Ոմանք ոչ միայն անձնական պետքերու համար ասեղնագործութիւն կ'ընէին, այլ եւ կ'աշխատէին միսիոնարուհիներու, Քեսապի շուկային եւ հարուստ ընտանիք-ներու ապսարանքով: Տարեց աղջիկներու որբեւայրիներ, դեռ տարագրութենէն առաջ, իրենց ապրուստը ասեղնագործութեամբ կը ճարէին:

Քեսապցի կանայք տարբեր տեսակի դերձաններով ու ասեղներով կը հիւսէին զարմանահրաշ ժանեակներ, նկարագեղ վարագոյրներ, անկողնի ու սեղանի ծածկոցներ, բարձի երեսներ, եկեղեցական անօթներու ծածկոցներ ու թաշկինակներ: Կ'ասեղնագործէին նաեւ կտաւի, շալէ կտորի, բեհեզի եւ թաւիշի վրայ: Նրբահիւս ժանեակներով կ'երիզէին ծածկոցները, թաշկինակները, գլխաշորերը ներքին եւ արտաքին հագուստներու ծայրերը:

Իլիկի կամ մանիչի (**մէ'նէճ**) վրայ տարբեր նիւթերէ թել կը մանէին ու կը հիւսէին բաճկոնակներ, գուլպաներ, գլխարկներ, մուճակներ, գորկը զարդարէին հլու ններով:

Ծեղէ հիւսքը լայնօրէն ընդհանրացած ձեռագործ էր: Կալի շրջանին կիներու օրհորդներ խուրձերէն ծեղ կը հաւաքէին, կը ներկէին կապոյտ, կարմիր, մանիշակագոյն ու անոնցմով կը հիւսէին տան մէջ գործածուելիք այլ ազան ամաններ, ինչպէս՝

- Սեղան (**սըղուՆ**), որ հարթ ու փախլաւայի սինիի չափ կ'ըլլար: Կը գործածուէր իբրեւ ճաշասեղան:

- **Սընտաղբէ(կ)**, որ սաճի նմանող ու նոյն մեծութեամբ ծեղէ հիւսուածք էր, որ միշտ կնոջ ձեռքին տակ կը գտնուէր:

- Ճուճամիկ (**ճիւմէ'միկ**), որ սնտաղբէի նման, բայց աւելի խոր ու տարբեր չափեր ունեցող հիւսուածք էր: Լայնօրէն կը գործածուէր կալի եւ պարենաւորման աշխատանքներուն մէջ:

- Սկուտեղներ, որով պտուղ ու չոր միրգեր կը հիւրասիրէին:

- Կոթաւոր ու շրջանակ ունեցող ափսէներ:

- Տարբեր չափի ու ձեւի կափարիչով արկղներ, իբրեւ գոհարաման, ասեղաման եւ այլն: Ասոնք կը դրուէին **ճեհիզի** սնտուկին կամ պահարանին մէջ: Ասոնք կափարիչ ալ կ'ունենային:

- Գլխարկներ, յատկապէս լայն շրջանակ ունեցող տեսակէն:

Գունաւոր ծեղերու ստեղծած գիծերը գեղեցկութիւն մը կ'ապահովէին անոնց: Ոմանք անոնց շրջագիծերը կը հիւսէին խոզուկի փետուրով՝ տարբեր փայլք ու գեղեցկութիւն մը տալու համար:

Քեսաացի կինը մաքրատեր էր: Տունը մաքրութիւն կը բուրեր: Տարին անգամ մը անկողիներն ու վերմակները կը քակուէին, բուրդը կը լուացուէր, թակով կը ծեծուէր ջուրին մէջ: Շաբաթը գէթ անգամ մը **մոխրանոց** կ'երթար: Տնամերձ ջրհոր ունեցողները լուացքը կ'ընէին ջրհորին մօտիկ կամ թոնրատան առջեւ: Շատեր հեռաւոր աղբիւրներէն էշով կամ կռնակով ջուր կը կրէին լուացքի ու լոգանքի համար: Քեսապ աւանին մէջ ջրկիրներ կային: Լուացքի խաշին համար կը գործածէին պղինձէ **քիւփէ՛լիկը** եւ թիթեղէ **լականը**: Շաբաթը առնուազն մէկ անգամ լոգանք կ'ընէին, բայց ամէն իրիկունս ոտք, ձեռք եւ գլուխ կը լուային: Օճառը կամ լուացքափոշին շուկայէն կ'առնէին, իսկ գիւղական շրջանակներու մէջ՝ փերեզակէն: Փերեզակէն ասեղ-դերձան, Յալէպի ձիթ, շաքար, հատ սուրճ, թէյ, մախաթ ու հորիւն, համեմունքներ եւ քանի մը **կաղարւօր** օճառ գնող կանայք ընդհանրապէս ապրանքափոխանակութիւն կ'ընէին: Օճառի չգոյութեան պարագային լուացքը մոխրաջուրով կ'ընէին: Ամէն տուն արդուկ ունէր: Անոր համար ածուխկամ կրակին կայծերը կը գործածէր:

Դաշտային աշխատանքի պարագային մարդիկ իրենց ձեռքերը մաքրելու համար կը գործածէին բելեկնի ծառին տերեւը, որ կը փրփի ու անուշ հոտունի:

Քեսապի կինը գարնան օրերուն երբ խոտհարքի երթար արտերն ու լանջերը՝ կը հաւաքէր անուշահոտ խոտեր ու զանոնք կը տեղաւորէր սնտուկին, պահարանին ու անկողնոցին մէջ, որ լաթերը տարին ամբողջ անուշ բուրեն: Այդ բոյսերն են.

- **Յոլօց-հէ՛միմ** (հաց-համեմ). քիչ հանդիպող գետնատարած խոտ, որ ծաղկել է ետք եղջիւր կը հանէ: Չորը անուշահոտ է:

- **Յընտղօօգ** (հնդկահոտ). մանր տերեւներով ու աննշան ծաղիկով գետնատարած խոտմը: Չորը խիստ անուշաբոյր է:

- **Չօսանտաքանակ** (հովուածաղիկ). երկաթ կոթունով ծաղիկ մը, որ գնդածէ է, լեցուն՝ ձկանբերանի լեզուակ մը ունի: Չոր տերեւը անուշաբոյր է. կը դնեն գիրքերուն մէջ:

3.6.- ԽՈՅԱՆՈՅԸ

Քեսապի խոհանոցը գոնէ մինչեւ 1950-ական թուականները ուներ շատինքնատիպ ու անկախ բնոյթ եւ ինքզինք կը զանազաներ թուրքմէններու եւ ալեւիներու խոհանոցէն: «Ատիկամեր քով չ'ըլլար», «Ատիկա թուրքմէնը կ'ուտէ», «Թաթերը այդպէս սեղան կը նստին» կ'ըսէին: Նկատուած է, որ կարգ մը հումքերէ պատրաստուած ճաշատեսակներ երբեք չէին դնէր սեղանին վրայ, ինչպէս խաշած չոր բակլայէն պատրաստուող **ֆուլլը**, սիսեռի խիւսէն պատրաստուող **համմոսը**: Սիսեռն ու բակլան լայնօրէն կը գործածուէին Քեսապի խոհանոցին մէջ, բացի այդ երկու ճաշատեսակներէն. «**Չատարաքկիրը կուտին**» (ատիկա արաբները կ'ուտեն) կ'ըսէին: Մինչ հիմա այդ կերակրատեսակները մշտապէս գոյութիւն ունին մեր սեղանին վրայ: Ձեթով բոկեղը ամեն տոնի սեղանի վրայ կ'ըլլայ, արաբներն ու թուրքմէնները տոն շնորհաւորելու ատեն անյագօրէն կ'ուտեն ու տուն ալ կը տանին, բայց իրենց խոհանոցին մէջ անիկաչկայ:

Սեղանի սովորութիւններն ալ տարբեր էին: Օրինակ, քեսապիք սեղանի խոնջային շուրջ ծալապատիկ կը նստէին: Մէկը եթէ հացը ծունկի վրայ դնէր՝ կ'ըսէին «Դուն թո՞ւրքես», կամ հացը երեսնի վար դնէր սեղանին՝ կ'ըսէին «Դուն թա՞թես»: Ընտանիքներն ալ ունէին տարբեր սովորութիւններ, օրինակ՝ Սաղտըճեաններու նախնի-

ները սխտոր չէին գործածեր, սխտոր չէին տնկեր, սխտորի հոտելած տունէն ներս չէին մտներ, սխտոր տնկուած հողը պղծուած կը նկատէին...

Խոհանոցին մէջ գրեթէ բոլոր հումքերը գիւղացիին աշխատանքով հասած ու ստեղծուած մթերքներ էին: Գիւղացին ամէն եղանակի իր բերքերէն ու արտադրութիւններէն կը մթերէր բաւարար չափով. ամբարներուն մէջ կ'ըլլային ալիւրցու ցորենը, ալիւրը, ծեծած ցորենը, թարխանան (խաշած ծեծած ցորենը մածուկով շաղուած ու բրդոճ-բրդոճ չորցուած մթերք), խոշոր ու մանր ձաւարի տարբեր տեսակները, փոխինդը, եղինձը, արմտիքներէն՝ սիսեռը, ոսպը, աղացուած ոսպը, հատլուբիան, առաստաղէն կախուած կ'ըլլային սոխի ու սխտորի գալոցները, չոր բանջարեղէններու կապերը՝ սմբուկ, լուբիա, լուիկ, քանի մը դեղին դդում, ամբարներու մէջ դասդասուած կ'ըլլար չիրեղէնը՝ թուզը, չամիչը, նուշն ու ընկոյզը, եղջիւրը, բեւեկը, թուզի եւ խաղողի պաստեղները, խաղողի **սուճուխը** (ընկոյզի շարոցը խաղողի թանձր խաւով պատած մթերք), ռուպի **քամա** (խաշած ծեծած ցորենը ռուպով շաղուած ու չորցուած մթերք) եւ այլն: Կարասներու մէջ կ'ըլլային ձէթը, իւղը, գինին, խաղողի, թուզի ու թութի օղին, քացախը, խաղողի եւ եղջիւրի ռուպերը, միսի դաւուրման, ճգմուած ձիթապտուղը (**աղթըսցըցուօծ տանը աղտոյ**), սեւ ձիթապտուղը (**հաղդէօն**), առանձին պտուկներու մէջ կը մթերէին ծիրանի, թուզի, խաղողի, սերկեւիլի անուշները, պղպեղի ու լուիկի մածուկը, կաթնեղէնէն՝ պանիրները, սուրբին (համեմներով շաղուած, փոքր գնդակի չափով չոր թթու առ), թթու առը (**քէսնըք**), արդար իւղը, եփած մածուկը, սրուակներու մէջ՝ աղտորի, ազոխի ու նումի թթուները, օշարակներու մածուկները եւ այլն, չոր համեմներու՝ սամիթի, ռեհանի, քարանուխի, ծոթրինի, կարմիր պղպեղի եւ աղտորի փոշիները: Կարգ մը պտուղներ՝ նում, տանձ, խնձոր, մթերուած կ'ըլլային յարդանոցին մէջ: Գիւղացին պէտք է ինքնաբաւ ըլլար, իր կալուածէն ու կենդանիներէն կամ փոխանակութեան եղանակով ասոնք պէտք է մթերէր: Ծուկայէն կամ փերեզակէն կը գնէին շաքարաւ ազը, բրինձը եւ քանի մը տեսակ տարաշխարհիկ համեմներ: Աղը

կը քաղէին ծովէն:

Ճաշ ատեսակները սերտ կապեր ունէին տօն-տաղաւարի, աշխատանքի ու տարուան եղանակներուն հետ: Պահոց օրերուն պարտադիր էին ձէթով, դաշտային աշխատանքներուն ժամանակ (ցանք, հունձք եւ այլն)՝ ձէթով ու մածնեղէնով (մածնապուր, թանապուր), իսկ իւղալի կամ միսով կերակուրները՝ ազատ օրերուն: Խոշոր մսացուները կը մորթէին տներուն եւ յատուկ առիթներու:

Քեսաացիներու ճաշ ատեսակները կարելի է բաժնել քանի մը խումբերու, ինչպէս՝ հացեղէն, ապուրներ (**է'աբօր**), եփնիներու շորպաներ, սուխմիկներ, գլորներ եւ քիչ կիկներ, լիցքեր, սամպուսիկներ, տապածոներ, խորովածներ, աղցաններ եւ այլն:

Ա. Յացեղէն. Յացը (հուօց) կ'ըլլար նկանակի ձեւով. իւրաքանչ-իւրը կը կոչուէր բաղարջ: Կիները շաբաթը երկու անգամ թոնի կը մտնէին երկու թոնի հաց եփելու համար: Յացեղէն էին **ճիֆթուօն հուօց** (ճիթապտուղի խիւսով), **քէ'սնիկուօն հուօց** (թթու աշոռով), **ծղղրիսուօն հուօց** (ծոթիսով), **հէ'միմուօն հուօց** (համեմով՝ կծու պղպեղի ռուարով), **աբ'նափրուօն հուօց** (պանիրով): Քեսապի խոհանոցին ամենէն յայտնի հացեղէնը **բըկիեղ**ն է (բոկեղ). ձէթով օծուած խմորի գուստը գաւազանով կը բացուի մեծ նկանակի մը չափով, ծալ-ծալ կը հաւաքուի ու ծայրերը կը կցուին: Թոնիբէն հանել է ետք ձէթով կ'օծեն: Քեսապի բոկեղը Նոր Տարուան, Ս. Յարութեան, Ս. Աստուածածնայ տներուն անպայման հրամցուող խմորեղէն է: Տանտիկինը լաթին մէջ անպայման գուստ մը խմոր կը պահէ իբրեւ թթխմոր յաջորդ շաղին:

Բ. Ապուրներ (է'աբօր). Քեսաացին ապուր բառով կը ճանչնայ հիմնական ճաշ ատեսակները, որոնք առհասարակ կազմուած կ'ըլլան ապուր բաղարդիչով: Այսպէս՝

- **Կորկոտապուր (կիւրկիւտէ'աբօր).** **կիւրկիւտը** (կորկոտ) Քեսապի բարբառին մէջ խոշոր ձաւարն է, որ ամենէն շատ գործածուող նիւթն է Քեսապի խոհանոցին մէջ: Միայն խոշոր ձաւարով պատրաստուած կորկոտապուրը կը կոչուի **եալանէաբօր**: Սովորական փիլաւ է: Ձաւարի կողքին կրնան ուրիշ հումքեր ալ գործածել, որուն համաձայն -

ալ կերակրատեսակը կը կոչուի՝ սիսեռով, լուբիայով, գետնախնձորով, կանկառով, սերկեւիլով, բակլայով, միսով ու սիսեռով, հաւով ու սիսեռով կորկոտապուրներ: Հաւով սիսեռով կորկոտապուրը լայնօրէն ծանօթ է **կիղիցիկէ՛աբօր** (ուխապուր) անուանով, որովհետեւ մօտիկ ուխաւայրի մէջ գոհուած աբլորի միսով կը պատրաստուի ու տեղւոյն վրայ կը հրամցուի հրաւիրեալներուն:

- **Ճեծած ցորենով ասուրներ.**- Ամենէն յայտնին **հիրիսէ՛աբօր**ն է՝ հերիսան. կըլլայ չորս տեսակ՝ եզան եւ ոչխարի միսով, հաւով եւ կանկառով: Երեքն ալ պէտք եղած չափով իւղէ կ'անցընեն: Եզան կամ ոչխարի միսով հերիսան կը պատրաստեն հարսանիքներուն եւ համաժողովրդական ուխաւայրերուն մէջ, աբլորի միսով հերիսան՝ Ս. Յակոբին:

Ճեծածով պատրաստուած ուրիշ կերակրատեսակ է **մէ՛ծնուօն Է՛աբօր** (մածնապուր), առանց իւղի կամ ձէթի:

-Եղինձը արտի մէջ կ'ուտեին. հիները կը մթերեին. եղինձով ու իւղէ անցած փիլաւը կը կոչէին **ճըսէ՛աբօր** (ճիտապուր):

- **Քըրիէ՛նըէ՛աբօր.**- աղացուած ծեծած ցորենը մածունով եփած, բրդոճ-բրդոճ չորցուած ու մթերուած կըլլար: Ասիկա **թարխանա** կը կոչուէր: Անով երկու կերակրատեսակ կը պատրաստէին: Ափմը բրդոճ կը դնեն եռացող ջուրի մէջ, սոխմը շերտ-շերտ կը կտրեն. եթէ պինդ պահուի՝ կըլլայ **թըրիէ՛նըէ՛աբօր**, եթէ ջրալի՝ **թըրիէ՛նու շորափկ**. ձէթով կամ իւղով կ'անցընեն:

- **Կէ՛րմերէ՛աբօր** կամ **գուրըթէ՛նիկ.**- Քեսապի ամենէն սիրուած առօրեայ կերակրատեսակ է: Սոխը ձէթի մէջ կը կարմրցնեն, կ'աւելցնեն ջուր, մանրուած լոլիկ կամ լոլիկի մածուկ, կ'եռացնեն, ապա մանր ձաւարը կ'աւելցնեն: Ասիկա Քեսապի կարօտով տառապող մարդոց համար Քեսապի խորհրդանիշ է:

- **Խուտէկէ՛աբօր.**- Աշնան առաջին անձրեւներէն մինչեւ ուշ գարուն Քեսապի բոլոր վայրերուն մէջ կ'աճին ասուրցու բազմանուն ու բազմաթիւ խտեր: Տանտիկինը կը քաղէ, կը մաքրէ, կը մանրէ ու երկու դգալ ձէթի մէջ կրակին վրայ կը խամրեցնէ, կ'աւելցնէ ջուր ու մանր ձաւար: Որքան բազմատեսակ ըլլային խտորը՝ այնքան

համով կ'ըլլար խոտիկ ասպուրը: Բոլորը անունով կը ճանչնային այդ խոտերը՝ **խիւշիւրօք** (խոշորուք), **հե՛վիւրը կըստէկ** (հաւերուկտիկ), **թըփիը կէ՛թնէօկ** (թուփիկաթնուկ), **արտը կէ՛թնէօկ** (արտիկաթնուկ), **բուվկէօկ** (բելեկ-իկ), **իծօը մուրեօք** (այծամօրուք), **իրըսկընը արւրտ** (երեցկիհիարտ), **Է՛վիլէօկ** (աւելուկ), **խուսպագ** (փեփերթ), **կէ՛քվըճընիէգ** (կաքաւաճիռ), **հայլըմ** (ծնեբեկ), **քուռօթ** (քուռաթ), **շըգըգէկ** (կակաչ-իկ), **մէ՛նստըրը փիւշէկ** (մին-տարիփշիկ), **խուրուզը վարսէք** (աքլորիվարտիք), **մէ՛նիէխ** (մանեխ), **աըրըրը թիւթիւնէօկ** (վայրիծխախոտիկ) եւ այլն:

- **Վըսարլօն Է՛սթօր** (ոսպասար), որնոյն ոսպով ասուրն է, մեծ ձաւարի հետեփուած, որոնց ձեթի մէջ տապած սոխկ'աւելցնեն: Ծաւսօթ Է արաբերէն **մուճառարա** անունով:

- **Գէ՛թմէ՛սթօր** (թանասար).- խաշած խոշոր ձաւարը կը խառնեն առատթանով: Ամրան կերակրատեսակ է: Ջրալի է:

- **Լըվէկէ՛սթօր** (լուիկ ասար).- Լուիկը խոշոր տերեւներով վայրի խոտ է: Տերեւը թունաւոր է. կովերը չեն ուտեր: Կը հաւաքեն, կը բրդեն, վայրի սաւորի պաստեղին հետ կը խաշեն, կը քամեն, ապա կը տապեն ձեթով ու սիսեռով կամ ոսպով եւ ջրալի ու թթուաշ ճաշ կը պատրաստեն:

- **Պէ՛տըժնէ՛սթօր** (սմբուկով ասար).- Սոխարած ձեթին մէջ կը դնեն մանրուած լուիկ, լուիկ չըլլալու պարագային լուիկի եւ պղպեղի մածուկ, ջուր ու մանրուած սմբուկ, ապա՝ խաշած սիսեռ: Նոյնը կրնան պատրաստել իւղով, նաեւ միսով:

- **Տաուլլիը Է՛սթօր** (կանաչ լուբիայով ասար).- Տաքցած իւղին մէջ կը պարպեն մաքրուած ու կտրտուած կանաչ լուբիա, խոշոր կտրտուած խաշած գետնախնձոր, ջուրին կ'աւելցնեն լուիկի մածուկ, ճգմած սխտորով թթու: Նոյնը կը պատրաստուի նաեւ միսով-ոսկորով: Ասոր հետ կ'ըլլայ բրինձի, ձաւարի կամ ծեծածի փիւաւ:

- **Յէօնտ Ֆաուլլիը Է՛սթօր** (հատլուբիա).- Կ'ըլլայ երեք տեսակ՝ ձեթով, իւղով ու միսով: Թրջած լուբիան կը դնեն սոխարածին վրայ, կ'աւելցնեն ջուր, կ'եփեն: Միսով ու ոսկորով **Ֆաուլլիը Է՛սթօրը** հարսանեաց ճաշատեսակ էր: Ջրալի է:

- **Դըդդումե'աբօր** (դըմապուր).- Տաքցած իւղին մէջ կը պարպեն դը-
նում, խաշած սիսեռ, ջուրին հետ կ'աւելցնեն լոլիկի մածուկ: Ջրալի
կ'ըլլայ: Կ'աւելցնեն ճգմած սխտորով թթու: Նոյնը կը պատրաստուի -
նաեւ միսով: Ասոր հետ կ'ըլլայ բրինձի, ձաւարի կամ ծեծածի փիլաւ:

Գ.- Սուխմիկներ, գլորներ, քիչկիկներ, սուտ գլորակներ.- Մանր
ձաւարը քիչ մը ալիւրով կամ օսւլայով կը շաղեն տարբեր նիւթերու
հետ. ա) ծեծած միսով. բ) խաշած գետնախնձորով. գ) խաշած սիսեռով. դ)
խաշած ոսպով: Յարմար համեմներ կ'աւելցնեն: Ափի մէջ շինուած բ-
րդոճը **սուխմիկ** կը կոչուի: Կը հաւատան, որ ամէն կնկայ ձեռքէն
սուխմիկ չ'ուտուիր. շունչը թեթեւ պէտք է ըլլայ կ'ըսեն: Ձաւարը
եւ միւսները պէտք է «մեռնին» շաղեն: Սուխմիկը բրդոճով կը
հրամցնէին: Այդպէս կ'ուտուի:

Տարբեր տեսակի սուխմիկները կը հրամցնէին նաեւ հետեւեալ
կերակրատեսակներով.

ա) Գետնախնձորով սուխմիկը գետնախնձորով դաւուրմային հետ,
որ կ'ըլլայ իւղով կամ ձեթով: Խաշած ու ճգմուած գետնախնձորը սո-
խարած իւղին կամ ձեթի մէջ կը դարձնեն: Սուխմիկով կ'առնեն դա-
ւուրման ու կ'ուտեն: Առատ կանաչ եղէն կը պահանջէ: Պահքին՝ գե-
տնախնձորով սուխմիկը ձեթով կ'ըլլայ:

բ) Ծեծած միսով սուխմիկով տաք դաւուրմա առնելով կ'ուտեն:
Միսով դաւուրման մանրուած միսի սոխարած է:

գ) Սիսեռով սուխմիկը կ'ուտեն սիսեռով դահինով (շուշմայի իւ-
ղ) սոխարածին թաթխելով:

դ) Ոսպով բրդոճը կ'ուտեն այդպէս՝ առատ կանաչիի հետ, թթու
ջուրով, կամ քացախաջուրով:

Երբեմն դաւուրմային փոխարէն սուխմիկը կը թաթխեն ձեթով կծ-
ու պղպեղի մածուկին մէջ ու այդպէս կ'ուտեն:

Սուխմիկի շաղէն կը պատրաստէին **գլոր**:

Գլորը կը բանային պատրաստ խիւսով (ծեծած միսով, գետնախնձո-
րով, սիսեռով-դահինով): Գունտ մը խիւսը ափի մէջ կը բանան, անոր
մէջ կը լեցնեն համապատասխան դաւուրման (միսով, սիսեռով-դահի-
նով, գետնախնձորով), կը գոցեն՝ երկու ծայրերուն սուր ձեւ տալով:

Յետեւաբար կ'ըլլայ երեք տեսակ գլոր՝ միսով, սիսեռով, գետնախնձորով:

Գետնախնձորով գլորը կը տապկեն ու այդպէս կը հրամցնեն առատ կանաչիի ու թանի հետ: Սիսեռով գլորը կը խաշեն ու այդպէս կը հրամցնեն: Ամենէն յայտնին է միսով գլորը, որ երեք ձեւով կրնայ դրուիլ սեղանին՝ ա) խորոված, բ) տապած՝ ձեթով, գ) խաշած ու եռացած մածնաչուրի մէջ դրած: Վերջինը կը կոչուի **մէ'ծնուօն գլոր**: Ծիսական ճաշ է: Ոսպի խիւսով գլոր չեն շիներ:

Քիշկիկը (քիշկիկ) կը պատրաստեն գլորէն աւելցած խիւսէն: - Գունտը ափի մէջ կը տափակցնեն սուրճի ափսէի չափով ու կը հրամցնեն երկու ձեւով՝ տապած կամ խորոված:

Յաւաբական աշխատանքներէ ետք սովորաբար կը հրամցնեն ոսպով եւ գետնախնձորով սուխիկն ու գլորը: Պահքէն դուրս՝ թանով կը հրամցնեն:

Սուտգլորուկ (սէօտգլորուկ).- Խաշած սիսեռի ջուրով մանր ձաւար կը թրջեն, գլուխմը սոխկը մանրեն ու ալիւրով կը շաղեն, ապա խիւսը ափի մէջ գնդիկներու կը վերածեն ու կը պարպեն սիսեռի կաթսային մէջ: Սոխարածէ կ'անցընեն: Սխտոր, թթու եւ համեմներ կ'աւելցնեն: Պահքի ճաշ է:

Միսով սուտգլորուկը կը պատրաստուի սիսեռին հետմիս ու ոսկոր խաշելով: Սոխարածը իւղով կ'ընեն: Նոյն համեմները կը գործածեն:

Դ.- Եփնիներ եւ շորպաներ

Եփնիները ջրալի, լուիկի առատ մածուկով, ձեթով սոխարածով կերակրատեսակներ են, ինչպէս սոխով, լուբիայով, գետնախնձորով, - կանկառով եփնիները:

Բոլորն ալ ունին իրենց միս-ոսկորով տարբերակները:

Շորպաները առանց լուիկի մածուկի ջրալի տաք կերակրատեսակներ են, ինչպէս աղացած ոսպով ու սոխարածով (**մուլ խոթ**), խշոր ձաւարով ու կաթով (**կէ'թնուօն շուրաբ**), չորթանով ու սոխարածով (**- խաշլ ամու**), միսով չորթանով, հաւով շահրէով (վերմիշել) շորպաները:

Ե. Լիցքեր ու փաթաթուկներ.- Երկու թիվ համար ալ նոյն միջուկը կը պատրաստեն: Միջուկը կ'ըլլայ ձեթով կամ իւղով: Ձեթին կամ իւղին մէջ սոխարած կ'ընեն, մէջը մանրուած լոլիկ կամ լոլիկի առատ մածուկ ու տարբեր համեմներ կը դնեն, ապա կ'աւելցնեն բրինձ կամ ձաւար, կամ երկուքը համատեղ: Այս բոլորը կ'էստփ կ'ընեն ու կ'աւելցնեն մանրուած ազատքեղ: Միսով խիւսի պարագային կը խառնեն մանրուած միս: Ձեթով խիւսին կ'աւելցնեն նռան առատթիւ:

Լիցքի համար (**տու մու**) կը փորեն տարբեր բանջարեղէն՝ սմբուկ, դդում, վարունգ, գետնախնձոր, պղպեղ, լոլիկ:

Փաթաթուկի (**սարմա**) փաթեւ ու համար կ'օգտագործուին որթատունկի թեթեւ մը խաշած տերեւը (աղջուրի մէջ մթերուած կամ թարմ), կաղամբը, վայրի աւելուկը, բանջարը: Բաւարար ջուրով կ'ետփեն: Կաթսային մէջ, իբրեւ ծանրութիւն, պնակ մը ու վրան սխտործեծը կը դնեն:

2. Աղցաններ (սալաթու).- Երեք խումբի մէջ կը մտնեն.

- **Առանձին կերակրատեսակներ** նկատուող աղցանները կ'ըլլան խաշած գետնախնձորով (փաթաթեւ), հունտլու բիայով, կանաչ լուբիայով, խորոված սմբուկով: Ասոնք կը մանրեն, կ'աւելցնեն ազատքեղ, կանաչ կամ փոշի պղպեղ, սխտոր կամ սոխ, երբեմն՝ լոլիկ, վարունգ, առատթիւ (մածուկ, լեմոնի կամ ազոխի հիւթ), երկու դգալ ձեթ: Խաշած խտով կամ կանկառով աղցանին ազատքեղ, լոլիկ ու վարունգ - չեն դնէր:

Առանձին կերակրատեսակներ են նաեւ մանրուած սուրճիով կամ թթու աշոռով, քամած մածուկով եւ մանրուած լոլիկով ու ձեթով աղցանները:

- **Թարմ աղցաններ.**- Ասոնք կը պատրաստուին եղանակային առանձին բոյսերէ կամ վայրի ծառերու նորափթիթ մորջերէ, մանրուած ու համեմուած՝ քացախով, թթուով կամ ողկոյզ մը ազոխի կամ կիտրոնի հիւթով, ծեծած սխտորով ու ձեթով: Յայտնի էին մուրջիկով (բեւեկնիի մորջը), քարանուխի թարմ տերեւներով, վայրի ծոթրիկով, սմբուկ (**սընաֆօկ**) կոչուող խտով, ծովախտով (**ծուվը խուտէկ**), - փերփերով (**մառնօկ**) աղցանները:

- **Խառն բանջարեղենով** աղցանները բազմազան են: Շատ մանր բրդած լոլիկով ու սոխով աղցանը Անտիոքի շրջանի բոլոր հայերուն ծանօթ է: Օտարները գայն կը կոչեն «**հայ կական սալ աթ**»:

Է. Սամարասիկներ.- Բոլոր սամարասիկները (**սե՛մարասեկ**, թրթ.՝ պեօրեկ) կը պատրաստուին պարզ խմորով, որ լաւ ապէս թթուած պէտք է ըլլայ: Խմորը փոքրիկ գունտերու կը վերածեն ու գլանակով կը բանան, այսինքն՝ հացի խմորէն աւելի բարակ, ապա միջուկը կը դնեն անոր մէջ, մէկ անգամ կը ծալլեն ու ձեթով կը տապկեն կամ սաճի վրայ կ'ետեն (ներկայիս՝ փուռին մէջ):

• **Պանիրով սամարասիկին** միջուկը կ'ըլլայ ճգմուած պանիրով: Կարելի է աւելցնել մանր սոխ, ազատքեղ, կարմիր փոշի համեմ, քիչ մը անանուխի կամ ծոթրինի փոշի:

• **Միսով սամարասիկին** միջուկը մանրուած միս է, գոր կը խարկեն ու կ'աւելցնեն մանր սոխ, սել ու կարմիր համեմներ, աղ:

• **Ճիճթով սամարասիկին** միջուկը ճիճթն է, քամուած ձիթապտուղին համեմուած կեղեւը:

• **Թթու աշոռով սամարասիկ**, որուն համար առատ սոխ կը մանրեն, կ'աղեն ու կը ձգեն, որ ջուրը քամի. թեթեւօրէն խամրեցնել ձեթին մէջ, ապա աւելցնել թթու աշոռը ու խառնել: Այս սամարասիկին խմորը պիպարի ռուպով կը բանան:

Թթու աշոռ չըլլալ ու պարագային ոմանք սիւրգի մը մանրելով վերի խիւսը կը պատրաստեն:

• **Խոտիկով սամարասիկին** միջուկը կը պատրաստուի բանջարով, սպանախով եւ կնոջ քաղած տարբեր տեսակի վայրի խոտերով: Լաւագոյնը կը նկատուին միայն աւելուկով կամ միայն խորոզի վարտիքով պատրաստուած սամարասիկները:

Կանաչ եղենը լուալ, խոշոր մանրել, ապակիսախաշ ընել եւ ձգել որ քամի: Յետոյ ձեթին մէջ մանրուած սոխ խամրեցնել, պարպել վրան ու աւելցնել համեմներ՝ ըստճաշակի (քիչ մը սխտոր, սել ու կարմիր պղպեղ, թթու, եթէ կանաչ եղենը թթու չէ):

Պահքի օրերուն սպանախով ու բանջարով միջուկին վրայ դահին կ'աւելցնեն:

Ը. Խորովածներ.- Որսի եղանակներուն գրեթէ ամեն տունէ խորովածի (**խիրվուած**) հոտկը տարածուի իրիկունները. Որսը կրնայ ըլլալ խոզ, խոզուկ, նապաստակ, մեծ ու մանր թռչուններ, ձուկ: Մեծ որսի միսէն կը տրուէր դուռ-դրացիի: Գիւղացին մետաղէ շամփուր չէր գործածեր: Ամենէն ընտիր շամփուրը դափնիի ոստէ կը պատրաստէին: Անիկա իւրայատուկ բոյր կու տայ խորովածին:

Որսը առատ ըլլալ ու պարագային կը մթերէին կամ կը գործածէին տարբեր ճաշերու մէջ: Միսը մթերելու տեսակներն էին ապուխտը, երշիկն ու դաւուրման (մանրուած ու տապուած):

Միսին հետ կը խորովէին չոր սոխ, կամ եղանակին համաձայն՝ պիպար, սմբուկ, լոլիկ: Գետնախնձորը կը խորովէին տաք մոխրի մէջ. ասոր **քեօմմա** (թաղելով) կ'ըսէին: Մսացու կենդանիները տոներու, ուխտերու կամ առիթներու կը պահէին:

Քեսապի մէջ մսագործներ կային:

Մեծ կենդանիներու փորոտիքը պումպար կը շինէին, իսկ գլուխն ու վերջոյ թները՝ խաշ, որուն կու տային **քալ և ախալ** ամանունը:

Թ. Քաղցրա ենիք.- Քեսապի ամենէն յարգի քաղցրա ենին, անկասկած, **փախլ աւա** է: Ընտիր ալիւրով պատրաստուած խմորը շատ բարակ կը բանան, իւղով կ'օծեն ու կը փռեն իւղով օծուած մեծ սինիին մէջ, նախ երեք թերթ, վրան կ'աւելցնեն մանրուած ու փոշի ընկոյզ, ապա նոյնը կ'ընեն երկու-երկու. թերթերու թիւը պէտք է հասնի երեսուններեքի. ապա կը կտրեն խմորը շեղանկիւն-քառանկիւն ձեւով ու կը դնեն մաղմաղ կրակին վրայ՝ շերտփով հալած իւղաւելցնելով կտրուածքներէն: Պէտք է իւղով կշտանայ, ուռի ու կարմրի: Ապա տաք մոխրիին վրայ տեղաւորելով՝ շերտփ-շերտփ շաքարաջուր կը պարպեն վրան: Շաքարաջուրով (շիրա) պէտք է կշտանայ: Պաղելէն ետք կտոր-կտոր կը զետեղեն տախտակէ տու փերու մէջ (**տուլ ուօկ**):

Կար նաեւ ձեթով ու ռուպով, իւղով ու մեղրով պատրաստուած փախլ աւա:

Առանց փախլ աւայի Ս. Ճնունդ, Բարեկենդան ու հարսանիք չէր ըլլար:

Քաղցրա ենիքի այլ տեսակներ.

• **Չալվա (հալ վոլ).**- Իւղին մէջ ալիւրը տարուբերել մինչեւ որ հոտը երթայ, ուշադիր ըլլալ, որ այրածի հոտ չառնէ: Անդին շաքարաջուրը եռացնել ու քիչ-քիչ լեցնել ալիւրին վրայ ու խառնել որ գունտ չըլլայ, ապա ձգել որ եռայ: Գոցել բերանը լաթով ու կախարիչով որ հանգչի:

• **Պանիրով հալ վա (աբ'նսորուօն հալ վիկ).**- Կը պատրաստուի նոյն ձեւով, բայց եռալէն ետք աւելցնել բարակ շերտուած անլի պանիրը ու խառնել: Պանիրը պէտք է լուծուի հալ վային հետ, գունտ պէտք չէ մնայ: Ծածկել լաթով ու կախարիչով, որ հանգչի: Օպայի հովիւները, իրենց բաժին պանիրը պատրաստելէ ետք, կաթսայ մը պանիրով հալ վա պատրաստելով գիւղ կը դրկէին:

Յաճուլ մասու.- Իւղին մէջ ալիւրը տարուբերել մինչեւ որ հոտը երթայ, ուշադիր ըլլալ, որ այրածի հոտ չառնէ, ապա շերտի-շերտի վրան ռուպաւելցնել ու լաւ ապէս խառնել, որ գունտ չմնայ: Թանձր մածուկը իջեցնել կրակէն ու պաղելէ ետք բրդոճել ու շարել պնակին մէջ: Ոմանք ընկոյզի կամ նուշի պճեղ մըն ալ կը դնէին իւրաքանչիւր բրդոճի վրայ: Ունեւորները նոյնը շաքարաջուրով կը պատրաստէին:

• **Իէ'Ֆէսկ.**- Ձաւ արի ալիւրը կամ փոխինդը (գալօդ), առաւել՝ ռուպ կամ շաքարաջուր (շիրա): Կը պատրաստուի հաճուլ մասայի ձեւով:

• **Յաճիկ.**- Իւղին մէջ ալիւրը տարուբերել մինչեւ որ հոտը երթայ, ուշադիր ըլլալ, որ այրածի հոտ չառնէ, ապա վրան կտրել քանի մը հաւ կիթ, խառնել ու եփել: Վրան առատօրէն շաքար ցանել ու հրամցնել: Աւանդական քաղցրեղէն էր, որ կը հրամցնէին նոր փեսային՝ պսակի գիշերը: Նոյնը դրացիներուն կը հրամցնէին շերամ պահող կիները, երբ շերամը ցախի վրայ կը սկսէր խոզակ շինել:

• **Սըլէ'գէկ** (սղինգն-իկ) - Լաւ ապէս թթուած խմորը դդալ-դգալ կը գետեղէին տաք ձէթին մէջ: Խմորը եփելով կ'ուռեր ու գունտի ձեւ կը ստանար: Ծաքարաջուրով կշտացնելէ ետք կը հրամցնէին: Ասիկա **շէ'քրուօն սըլէ'գէկ** կը կոչուէր:

Ծաքարաջուրի փոխարէն շատ անգամ ռուպի մէջ կը թաղէին

(ըռարւօն սըլ է'գէկ):

Խմորին փոխարէն երբեմն թանձր հացի կտորներ կը գործածէին:

• **Ռուարվ գարտա (ըռարւօն գարտա).**- Ծեծած ցորենը կամ բրինձը խաշելէ ետք վրան կ'աւելցնէին ռուպ, կը խառնէին ու քիչ մը եփելէ ետք կը պարպէին լայն ու ոչ խոր պնակի մը մէջ, վրան մանրած ընկոյզ ու չամիչ կ'աւելցնէին: Պաղելէ ետք քառանկիւն ձեւով կտրելով կը հրամցնէին:

Ռուարվ գարտան նաեւ կը մթերուէին՝ վրան քիչ մը նիշա (օսլա) ցանելով:

• **Կաթով գարտա (կէ'թնուօն գարտա).**- Կաթը եռացնելէ ետք կ'աւելցնեն շաքար ու լաւ մը խառնելէ ետք կ'աւելցնեն բրինձ ու կը ձգեն որ եփի ու բաւականաչափ պնդանայ: Կը պարպեն գաւաթներու մէջ ու կը ձգեն որ պաղի:

Վրան կրնան դնել ընկոյզի եւ կասիայի փոշի:

• **Կաթով բոկեղ (կէ'թնուօն բոկիեղ).**- Ալիւրը կը մաղեն, կաթին մէջ կը լուծեն շաքար ու քիչ մը թթիւմոր, իւղը կը հալեցնեն, ապա այն բոլորը իրարու խառնելով կը շաղեն: Կրնան աւելցնել փոշի համեմուկներ: Խմորը կը ծածկեն ու քանի մը ժամ կը ձգեն:

Խմորը հանգչելէ ետք պողունց մը խմոր առնելով սեղանին վրայ կը տարուբերեն ու մատի հաստութեամբ ձողիկներու վերածելէ ետք օղակներ կը շինեն ու կը փռեն ծեղէ սեղանին վրայ: Այս գործը վերջացնելէ ետք կը տանին թոնի որ պատին կը փակցնեն: Ներկայիս տնային փուռին մէջ կ'եփեն:

Մեծ Ձատիկ ու Ս. Աստուածածին տօներուն կաթով բոկեղ կը պատրաստեն:

• **Գարսանպաճ.**- Ձիւնը դնելով պնակին մէջ՝ վրան կը պարպեն բաւականաչափ ռուպ, կը խառնեն ու կ'ուտեն ձմրան գիշերներուն, երբ դուրսը ձիւն նստած ըլլայ: Կը պատահէր, որ տարին մէկ-երկու անգամ ձիւն նստէր գետինը:

Վերջին կէս դարուն մեծապէս փոխուեցաւ Քեսապի խոհանոցը: Սննդեղէն մթեր-րելու սովորութիւնը գրեթէ վերացաւ: Ծուկան ամէն ինչ կ'ապահովէ: Մառանները, եթէ պահուած են, վերածուած են

խոհանոցային եւ հնձաններու հին իրերու եւ ամաններու անպաշտօն թանգարանի: Պարբերաբար մարդիկ կը յիշեն այս կամ այն քաղցրաւենին, հացեղէնը, ճաշատեսակ մը: Կանանց հաւաքներուն կը վերապրին քանի մը կերակրատեսակներ: Ծիսական կերակրատեսակները ինամքով կը պահպանուին: Չբօսաշրջութեան զարգացման հետ թոնիրը վերակենդանացաւ. տեղական հացատեսակներ արտադրելը ոմանք գործի վերածեցին:

3.7.- ՏՈՒՐՔԵՐ

Օսմանեան իշխանութեան ատեն տուրքերը բազմաթիւ ու բազմատեսակ էին: Ոմանք կը վերաբերէին միայն քրիստոնեաներուն: Այսպէս, ըստ ճանապարհորդ Մոնտրելի (Maundrell (H.), A Journey from Aleppo to Jerusalem, London, 1848) կը գանձուէր **ղուֆր**՝ քրիստոնեաներու առեւտրական կարաւանները յելուզակներէ եւ գողերէ պաշտպանելու իբրեւ վարձատրութիւն, բայց «անոնք կը շահագործեն ճամբորդները, կը գանձեն անտրամաբանական գումարներ եւ նուերներ: Փոխանակ անոնց կողմէ պաշտպանուելու՝ անոնց մէջ գողերու կը հանդիպինք» կը պատմէ ան¹⁰:

Մաքսատուները քրիստոնեաներէ կը գանձէին նաեւ **տիէ**: Ըստ ճանապարհորդ Քորանչէզի՝ «ճսըր Շուղուրի մաքսատան տիէն երկու դրուշէ, բայց աւելի կը պահանջեն, զէնքով կը սպառնան¹¹»:

Քեսապցիները իրենց արտադրութիւնները ճսըր Շուղուրի պագարը տանելու ատեն քանի մը մաքսատուներէ կ'անցնէին:

Ենիջերիներու օժանդակ զօրքեր ունէին **սիփահի**ները: Անոնք գիւղական շրջաններու մէջ ժառանգաբար անցնող իշխանութիւններէին, կը հսկէին ու խաւորներու ճամբուն ու հարկեղած ատեն կը մասնակցէին ենիջերիներու կռիւներուն: Անոնց զօրքերուն ծախսերը պէտք է հոգացուէին քրիստոնեայ գիւղերէ հաւաքուած տուրքերէ: Այսպէս՝ Էքիզօլուք գիւղը տրատու էր խաամացի սիփահի

¹⁰ **Տ. Գոսպրա** Ալ-Բահիալ ա Ֆի Մուհաֆազաթ Իտլէպ (ճանապարհորդները Իտլէպի Նահանգին Մէջ), Բ. հատոր, Յալէպ, 1988, էջ 139-140:

¹¹ Նոյնը, էջ 138:

Ահմէտ աղայի ընտանիքին, Տուգաղաճ գիւղը՝ Անտիոք բնակող սիփահի Յաճի Իսա աղա ընտանիքին, Տեսթիւր գիւղը՝ Էյիրճիցի սիփահի Յաճի Օսման ընտանիքին¹²: Այս տուրքերը վերացան Իպրահիմ փաշայի իշխանութեան շրջանէն:

Միւս գլխաւոր տուրքերն էին.

1.- Աշար կամ **տասանորդ**: Ասիկա ամենէն ծանր ու հոգեհան տուրքն էր: Տուրքէն աւելի ծանր էր գանձումը, որ կը կատարէր՝ **թահսիլ տարը**, այսինքն՝ հարկահաւաք կապալառուն: Կայ սրութեան մէջ հարկահաւաքման իրաւունքը կը տրուէր կապալով: Վալին կապալը աճուրդի կը դնէր: Աճուրդն ալ առանց կաշառքի չէր ըլլար: Անոր շատ կը վճարէր ու կը կաշառէր՝ կը ստանար տուրքերը գանձելու իրաւունքը: Գլխաւոր կապալառուն իր իրաւունքը կը վաճառէր միջակ կապալառուի մը, սաալ՝ աւելի մանրին, որ ամբողջ նահիէի մը կամ անոր մէկ շրջանին հարկահաւաքը կ'ըլլար:

Կապալառուն գիւղ կը մտնէր աստիճանաւորներու ամբողջ վոհմակով մը, գոնէ քանի մը զինուորներով ու մահակակիր հետեւորդներով: Ու՝ հարկահաւաքումը կը կատարուէր ախորժակին համաձայն: Նախ՝ տարին ամբողջ իր մարդիկը գիւղերը կը կոխէին, հոս ու հոն կը խուզարկէին, թէ ի՛նչ ունի գիւղացին, ի՛նչ բերքեր կը հանէ: **Ուշորը**, ինչպէս քեսապիք կ'ըսեն՝ կ'առնէին հողի բոլոր բերքերէն: Տասանորդը անունն էր միայն, իսկ գանձումը կը հասներ երբեմն 50 տոկոսի:

Մանաւ անդ հունձքի ու կալի ժամանակ թահսիլ տարը հոգեհան կը դառնար: Ան գիշերը կը **թաշմէր** (դրոշմել) թեղը: Գիւղացին չէր կրնար եռնել: Կրնար անակնկալ անձրեւը փճացնել հունձքը, հովն ու աղու էսները կրնային խառնշտկել դրոշմը: Գիւղացին գողութեամբ կը մեղադրուէր. հետեւաբար կը յօժարէր, որ անոնք առնեն, որքան որ յարմար կը տեսնեն: Քեսապի շրջանին մէջ տասանորդին նուազագոյնը 15 տոկոս էր:

2.- Էմլաք վերկըսը կամ **կալ ու աճահարկ**, որ կը վճարուէր արտին,

¹² **Տոքթ. Ա. Ինճեճիքեան**, Քեսապ եւ իր Բարբառը, տե՛ս Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. Յատր, Էջ 50-51:

ած ու ի ն, պարտե գին, տան, ախոռին ու հաւ նոցին համար, արժեքին մէկ առ հարիւր չ ափով:

3.- **Աղնամ վերկըսը** կամ **անասահարկ**, որ տարեկան քառորդական մեծիտով կը վճարուէր ամէն գլ ու խէշի, ջորիի, ձիու, կովու, այ ծի եւ ոչխարի համար:

4.- **Թփրսք փարսը** կամ **եօլ քըրսը** (ճանապարհահարկ), տարեկան - քառորդ մեծիտ՝ քսանհինգ տարեկանէն վերիւրաքանչիւր այրէ:

5.- **Արը փարսը** (մեղուահարկ), որ կը վճարուէր մեղուին համար:

6.- **Պատպ իասաքարիէ** (գինուորական փրկագին), որ կը վճարուէր - ամէն տարի չորս մեծիտ՝ իւրաքանչիւր 20-50 տարեկան այրերու համար:

7.- **Թեմէթթին** (շահատուրք) կը գանձուէր վաճառականներէ ու արհեստաւորներէ՝ տարեկան շահին երեք առ հարիւրը:

1867-ին 2000 անձերէ բաղկացեալ հայ բնակչու թիւնը կառավարու լ թեան կը վճարէ 727,3 օսմ. ոսկի, միջին հաշուով ամէն տրատու՝ մէկ ոսկի: Կառավարու թիւնը 5000 օսմ. ոսկի պարտքի պահանջներով կը չարչարէ ժողովուրդը¹³:

Նոյնը եղած է գրեթէ ամէն տեղ: Ահա թէ ինչ կը գրէ «Սիօն»ի թղթակիցը Արամօ գիւղին մասին. «Տեղական իշխանութիւնն ալ կարեալս ծանրացած է խեղճերուն վերայ, որու ձիաւորները թէ՛ պատճառաւ եւ թէ՛ առանց պատճառի երբեք պակսած չեն անոնց բնակարաններէն, թէ՛ իրենք կը կերակրին եւ թէ՛ իրենց ձիանքը: Ծաբաթն երկու երեք անգամ հաւալէ կ'ուղարկեն վերանին, մերիի, \$երտիէի ու պետելիէի տուրքերը պահանջելու իրենցմէ: Տասնորդական տուրքը, որ ըստկանոնի եւ օրինաց տերու թեան՝ 10 առ % է, իրենք չորսին մէկ կ'առնուն հասըլէն (բերքէն – Յ.Չ.)»¹⁴:

Ֆրանս. իշխանութեան շրջանին կար հարկահաւաք պաշտօնեայ: - Գանձուած են միայն կալուածահարկ, անասնահարկ, պատպ իա եւ ճանապարհահարկ: Վերջինը գիւղացիք հատուցած են անվճար աշխատան-

¹³ **Տ. ճ. Կրլ ոբեան**, Ոսկեմատեան ,,, Ա. հատոր, էջ 355:

¹⁴ **Զաքարիա Վարդապետ** Լաղաքիոյ Դայարնակ Գիւղօրէից Ստորագրու թիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը, «Սիօն», 1866, թիւ 7, 1 Յունլիս, էջ 100:

քով:

Սուրիոյ անկախութենէն ետք տասանորդը, անասնահարկը եւ ճանապարհահարկերացան: Բանակի ծառայութիւնը քաղաքացիական պարտադիր պարտականութիւն դարձաւ տասնութը տարեկանը բոլորած՝ մօր կողմէ եղբայր ու նեցող բոլոր այրերուն: Չինուորական փրկագինը սահմանուեցաւ միայն որոշ օտար երկիրներ ապրող քաղաքացիներուն համար: Բոլոր հողերը չափագրուեցան իբրեւ անհատական սեփականութիւն: Սակայն գիւղացին չկրցաւ տէր ըլլալ քանի մը տարի խոպան մնացած կամ հեռաւոր վայրերու մէջ գտնուող իր արտերուն. խոպան գետինները, անտառներն ու լեռները նկատուեցան պետական կալուած:

Պետութիւնը կը քաջալերէ գիւղատնտեսութիւնը: Գիւղին մէջ կը գործէ Սուրիոյ Յողագործներու Համագործակցութեան մասնաճիւղը, որ դիւրութիւններ կը մատուցէ հողագործին սերմի, սածիլի, դեղի ու պարարտանիւթի հայթայթման տեսակէտէն: Գիւղացիք լայնօրէն կ'օգտուին Սուրիոյ Գիւղատնտեսական Դրամատան տրամադրած, յարաբերաբար ցած տոկոսով ու երկարաժամկէտ վարկերէն, որոնք ձեռք կը բերեն դրամատան Լաթաքիոյ մասնաճիւղերէն:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՅՈՑԵՒ ՈՐ ՄՇԱԿՈՅԹ

4.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՒՆՆԵՐ

Առանց հասարակական յարաբերություններու կարելի չէ պատկերացնել գիւղական ընտանիքը: Ան այդ յարաբերություններուն մէջ կը գտնէ իր տեղն ու դիրքը հասարակութեան մէջ:

Հասարակական յարաբերությունները բաժնուած են չորս գլխաւոր խումբերու.

Ա.- **Ազգականական յարաբերություններ.**- Գիւղացի ընտանիքները առօրեայ սերտ կապերու մէջ էին իրարու հետ: Առանց այդ յարաբերություններուն գիւղական կեանք կարելի չէր պատկերացնել: Նահապետական հիմունքներով կազմուած գիւղերու մէջ մարդիկ զիրար կը ճանչնային ազգականական բառերով՝ **ամուկ** (հորեղբայրենք), **ամօղլիկ** (հորեղբորորդիենք), **քառուկ** (քեռիենք), **լէլ կիկ** (հորաքոյրենք), **մուրքուրուկ** (մօրաքոյրենք), **չըպիկ** կամ **պէ'արուկ** (կնքահայրենք), **խընէ'մուկ** (խնամի ընտանիքներ): Ազգականական կապի գիտակցութիւնը կ'անցնէր սերունդէ սերունդ, մարդիկ իրարու կը դիմէին **ամօղլի**, **տայօղլի** կամ պարզապէս **հընտանա**(ընտանի) բառերով, նոյնիսկ եթէ ազգականական առաջին պորտը արդէն մոռացութեան մատնուած ըլլար: Ամուսնութեան պարագաներուն՝ մինչեւ եօթը պորտը կը հաշուէին, «**հէ'րումի, քուօյր աղբար կը հիսապլէն**» (Մեղք է, քոյր եղբայր կը նկատուին) կ'ըսէին: Բազմաթիւ ասոյթներով ազգականական կապը կը դրուաւտէին, իրարու թիկունք կեցող ազգականները կը գովերգէին:

Ազգականներու հանդէպ սերն ու յարգանքը նահապետական բարքերուն մաս կը կազմէր: Տօն-տաղաւարին առաջին այցելությունները ազգականներուն կը տրուէին: Կնունքը, ածիկունքն ու հարսանիքը առանց ազգական ընտանիքներուն ներկայութեան չէին ըլլար: Յարգանքի եւ այցելություններուն մէջ նահապետական կարգ ու կանոնը խստագոյն կերպով կը պահպանուէին, «**Ան ետանճի քան ըզմիպը**» (ան աւելի առաջ է

միւսէն) կ'ըսէին: Օրինակ՝ ազգական եղբայրներու ընտանիքներուն տրուած այցելու-թիւնը կը սկսէիր մեծ եղբօր տունէն, միւս եղբայրները հոն կու գային բարի գալուստի, ապա կ'անցնէիր երկրորդ եղբօր, երրորդ եղբօր տունները: Բոլորը գոհ կը մնային: Կարիքի կամ դժբախտութեան, ինչպէս ձեռք պահանջող աշխատանքներու ժամանակ ազգականները օգնութեան կը փութային. **«Սաղ ընտուն հընստ'նէքը, մայտուն չըն թուղօ զը»** (ողջ մասն ազգականները, մէջտեղ չեն ձգեր զինք) կ'ըսէին: «Ձիրար վերցնող» ազգականները գովեստի կ'արժանանային:

19-րդ դարու վերջին, նահապետական փոքր ընտանիքի քայքայումին հետ, թաղերու եւ գիւղերու բնակչութեան պատկերը սկսաւ փոխուիլ: Արիւնակից ընտանիքներու թաղերուն մէջ սկսան երեւիլ ուրիշ ընտանիքներ: Շուկայական յարաբերու-թիւններու զարգացման հետ ազգականական, մասնաւոր արիւնակից ազգականներու յարաբերութիւնները, որոշ փոփոխութիւններ կրեցին: Ոչ ազգակից դրացի ընտանիքներ գիւղական կեանքի պայմաններուն մէջ իրարմէ անմիջական կախուածութիւններ կ'ունենային: Ասոնք սերտ յարաբերութիւններ մշակելու առիթներ կը դառնային: **«Եսպանճը դըրէ'ցեն քէ'նըզ հառօ հընստ'նէն աղուր ի»** (օտարական դրացին հեռու ազգականէն աղէկ է) ասացուածքը այդ շրջանի փորձառութենէն կու գայ:

Բ.- Դրացիական յարաբերութիւններ.- Առօրեայ այցելութիւնները կը կոչուէին **լ ազըրթէն** (զրոյց, խօսակցութիւն): Դրացիներ ամէն օր իրարու կ'այցելէին մարդու երես տեսնելու, բարեւ մը տալու, դէսէն-դէնէն խօսելու համար: Քեսապցիներու դրացիական յարաբերութիւնները շատ սերտ եղած են. մասնաւորաբար կանայք իրարու տուն ելումուտ կ'ընէին ազատ-համարձակ: Որեւէ պէտքի համար՝ պտղուց մը աղ, երկու բաղարջ հաց, կաղապար մը օճառ փոխառնելու համար դրացիին դռնէն ներս մտնելը անյարմար չէր նկատուեր: Նոյնիսկ տունը մարդ չ'ըլլար՝ դուռը կը հրէր կը մտնէր ներս: Մօտիկ արտերը գացած տանտիկինը դուռը չէր կղպեր, կղպեր ալ՝ ամէն ոք գիտէր բանալիին տեղը, դրան վերի

փայ տին վրայ : Ասով հանդերձ գիւղացին կըսէր. **«Դօռըդ ամօր փէ՛կի՝ դըրէ՛ցէդ հարամա մը հէ՛նի»** (դուռը ամուր փակէ՛՛ դրացիդ գող մի՛ հաներ):

Կիներ իրարու կը հանդիպէին նաեւ աղբիւրը, մոխրանոցը, ուր կարգով լուացք ու լոգանք կ'ընէին: Յատկապէս հետաքրքրական կ'անցնէին թոնրատան հանդիպումները այն պարագային, երբ բոլորը մէկ թոնրատուն կը գործածէին: Գիւղի բոլոր հարցերը, նորութիւնները հոն նիւթ կը դառնային: Թոնրատունը կիներուն ակումբն էր փաստօրէն: Յացը միշտ նոյն օրը կ'եփէին, ու կարգով կ'որոշուէր, թէ ո՞վ առաջինը պիտի վառէ թոնիրը: Չէ՞ որ առաջին վառողը, մինչեւ որ թոնիրը **«ըսալտկի»**, շատ ցախափտի սպառէր:

Նստելու ու գրուցելու համար ամբողջ օրը դռնէ դուռ իյնալով նստելու տեղ մը փնտռելը եւ ուրիշը **ալարու** (անգործ) ընելը լաւ երեւոյթ մը չէր նկատուեր: **«Բուս-գործ չուսա սաղդան աքրի իլէն դօռը հաջանկի»** (Բան-գործ չունի՞, առտու ընէ ուրիշին դուռը կը շատախօսէ) կ'ըսէին: Խօսք տանող-բերող կիներուն, ներսի խօսակցութիւնները մտիկ ընելու նպատակով ուրիշին պատու հանին տակ տնտեսացող կիներուն երես չէին տար, կը զգուշանային անոնցմէ:

Այր մարդիկ զիրար կ'այցելէին գործի ատեն՝ արտին մէջ, կալը, բանջարանոցը: Աշխատող մարդուն կը դիմէին հետեւեալ ձեւով.

- **Բէ՛րիվ, դըրացա քիզ Էօժ, ալ ընասաղլ ըք** (բարե՛ւ, դրացի, քեզի ուժ, ձեռքերդ ողջ մնան):

Եթէ գործը փորելու պատել էր, կ'ըսէին **«թիթիվ ու գու»** (թեթել գայ), իսկ եթէ բերքահաւաք էր՝ կ'ըսէին՝ **«աքրէքէն, պարաքաթլ ա ըննու»** (շատնայ, շատըլլայ):

Կը նստէին կամ զիրար կը կանչէին շունչ մը առնելու: Պարտեզէն ու տելու բան մը կը տանէին, իրարու ծխախոտի քսակ կը հրամցնէին, որափսու թիւն կը հարցնէին, խելք կու տային կ'առնէին, կը խօսէին դեսուս-դեսէն:

Գիւղին մէջ սովորութիւն էր ճամբէն անցնող-դարձողը տան դռնէն դիմաւորել, բարեւ ընդունիլ, շունչ մը առնելու հրաւիրել:

Անցորդը շալ ակը կը դնէր դրացիի բակի պատին վրայ, կ'ելլէր բակի ծառին տակ կը նստէր: Եթէ արտէն կու գար՝ երբեմն թարմ պտուղ մը՝ բան մը հրամցնելիք կ'ունենար: Եթէ Քեսապ կ'երթար՝ «Պընտիլ էք ունէ՞ք» (ապսարանք մը ունի՞ք) կը հարցներ: Տանտիրուհին պաղ ջուր մը, թան մը կամ սուրճ մը կը հրամցներ:

Գիւղին մէջ այր մարդիկ, ահիլներն ու ալ եւորները կ'եսօրուայ տաքուն կամ երեկոյեան հաւաքավայր ունէին: Իրօք, գիւղերուն կամ թաղերուն մէջ հանդիպման վայրեր էին մեկու մը տանիքը, սաքուն կամ բակը, ծառի մը տակ, տեղ մը վերջապէս, ուր որոշ ժամերու մեկիկ-մեկիկ կու գային, կը բարեւէին զիրար, կը նստէին ու կը խաղային մանդալա, նարտի, թղթախաղ: Ծառեր համրիչ կը գործածէին: Երիտասարդներուն տեղը յայտնի չէր ըներ, **«անոնց գործը ուրիշ է»** կ'ըսէին մեծերը:

Գիշերները մարդիկ դարձեալ սովորաբար կը հանդիպէին նոյն տեղը: Բնական սովորութեամբ մը ատիկա կ'ըլլար նոյն տունը, **աշշաքլ ամա** (կեդրոնական սիւնով մեկ սենեկանի ընդարձակ տուն) տուն մը, ուր բարձերու թիկնած՝ գիշերը կը մաշէին զրոյցով ու խաղով:

Գիւղերուն մէջ ընթրիքը կանուխ կ'ընէին. կրնայ իր կռահել, թէ դրացիները ընթրիքը ըրա՞ծ են, թէ ոչ: Դրացիին շունը եթէ դրան առջեւ է ու գլուխը դէպի ներս՝ ըսել է թէ դրացիները ընթրիքի են: Ընտանեկան այցելու թիւները սովորաբար տեր եւ տիկին կ'ընէին: Կինը իր հետծրար մը ածու կամ դոյլ մը կաթ կամ մածուն կը տանէր, նայած թէ այդ ընտանիքը ի՞նչ չունի այս եղանակին: Փոքրիկները սովորաբար չէին վերցներ իրենց հետ՝ զանոնք մեծ մօր հսկողութեան տակ ձգելով: Բարի գալուստի սովորական խօսքերէն ետք կը խօսէին գործէն-բանէն, գիւղի նորութիւններէն, քաղաքականութենէն: Չրոյցի ընթացքին կը պատմէին հինէն-նորէն: Չուարճախօս, ըսող-պատմող մարդիկ կ'ըլլային: Այր մարդիկ թուղթ կամ այլ խաղեր կը խաղային, իսկ կիներ կը շարունակէին իրենց զրոյցը ձեռքի տոպրակէն հանելով իրենց ձեռքի անբաժան գործը՝ իլիկը, ասեղնագործութիւնը կամ հիւսքը: Տան տիկինը կը բովեր

ցորեն, սիսեռ, բեւեկ ու միրգերու հետ կը հրամցներ: Մարդոց խաղը կրնար երկարիլ ու կիներէն ոմանք **կը գիւժե՛րկէին** (կը մրափէին) նստած տեղը: Երթալ ու ժամանակ էր: Տանտէրը կտոր մը մախր վառել ով կու տար մարդուն ձեռքը ու ճամբու կը դներ:

Գ.- Աշխատանքային յարաբերութիւններ.- Աշխատանքային այցելու թիւները առհասարակ առանց հրաւերի կ'ըլլային: Մթերքներու պատրաստութիւնը, գիւղական աշխատանքի բազմաթիւ տեսակներ օգնական ձեռք կը պահանջէին: Փոխօգնութիւնը գիւղին ամէնէն գեղեցիկ երեսներէն մէկը կը ներկայացներ: Դուռ-դրացի կիներ ի հարկին ձեռք կ'երկարէին դրացուհիին, երբ ան տուեալ պարագային ուրիշ անյետաձգելի գործ ունենար կամ օգնական ձեռքի մը կարօտ զգար: Դրացուհին կը վազեր՝ խնոցին կը վերցներ, թոնիր կը մտներ, շաղը կ'ըներ, մաղը կը վերցներ, կապ մը ծխախոտ կը շարեր, լուիկի ջուր եփել ու ատեն դանակ մը առած լուիկ ճզմել ու կ'երթար, բոկեղ բանալ ու կը վազեր եւ այլն:

Բայց կային նաեւ այնպիսի աշխատանքներ, որոնց հաւաքական բնոյթը աւանդութեամբ սրբազործուած էր: Այդպիսի աշխատանքներու ն ձայն մը տալը բաւական էր, որ կիներ ու մարդիկ փութային եւ աշխատանքի մէջ բաժին վերցնէին: Այս պարագաները ինքնաբերաբար կը վերածուէին կերուխումի, ուրախութեան, երգի, պարի ու խաղի առիթներու:

Արտէն ու պարզտեզէն բերուած բերքէն պարէնի պատրաստութիւնը այսպիսի հաւաքական աշխատանքներու առիթներ կ'ընծայէր: Թուենք քանի մը հատը.

ա.- Տորեն խաշելը (**ցիրին կիշիւր**).- կալէն ետք տանտիկնոջ առաջին գործը կ'ըլլար ցորենը լուալն ու չորցնելը: Ապա կը զատէր տարբեր մթերքները: Նախ ցորեն կը խաշէին, որպէսզի վայրկեան առաջ ամբար լեցուէր ձաւարի պաշարը:

Տան մարդը ինք կը պատրաստէր պղինձի կրակը, կը նայէր կրակին, խաշած հատիկը կը հանէր տանիք, ուր կիներ սաւաններու վրայ կը փռէր զայն: Օգնող ձեռքի գրեթէ պէտք չկար, բայց սովորութիւն էր անցնող դարձողին հրաւեր կարդալը: Խաշած ցորենը տանիք հանել ու

պահուեն կիւնը «**դըրե'ցնիր, հայ տը, արւյրուսուզ հե'տէկ ուտիլը**» (դրացիներ, հայ տէ, հրամեցէք հատիկ ուտելու) կը կանչէր: Կու գային, կը կանգնէին պահ մը, **աբրեքէն** կ'ըսէին: Տանտիկիւնը կը հրամցներ տաք հատիկը, գոր կ'ուտէին վրան քիչ մը շաքար ցանելով: Թաղի բոլոր պատիկներն ալ կը կանչէին հատիկ ուտելու:

Բ.- Ձաւար ծեծելը (**արլ դօր ծիծիլը**). ցորենի խաշէն շաքար մը վերջ կու գար ծեծելու կարգը: Օրը կ'որոշուէր, մէկ-երկու հոգիի լուր կը տրուէր, մարդիկ եւ երիտասարդներ կը հաւաքուէին իրարու լուր տալով: Կը հաւաքուէին նաեւ քանի մը կիւներ: Տորենը կը ծեծէին սանդիւն մէջ, ճիշդ նոյն ձեւով, որով կը ծեծեն հերիսայի ցորենը:

Յաճախ քանի մը տան ձաւարը մէկ գիշեր կը ծեծէին: Պերեքէն ըսողը կու գար դիտելու կամ ձեռք մը տալու: Այդպիսի գիշերները տօնի կը վերածէին: Յետոյ կը բացուէր սեղան: Ծինուած կ'ըլլար սիսեռով կորկոտապուր (**սիսիռուօն կիւրկիւտէ'աբօր**) եւ սմբուկով ճաշ (**սիսիռուօն աբ'տինճուեն է'աբօր**): Սեղանին կը դրուէր թասով մածուն: Օղին անպայ ման կու գար: Թուզի, խաղողի ժամանակ կ'ըլլար:

Յետոյ յանկարծ կը փչէր սրինգը, քանի մը հոգի շուրջպարի կ'անցնէին: Ծարքը կ'երկննար, պարերգներուն եւ շուրջպարերուն կը մասնակցէին նաեւ կիւներն ու աղջիկները:

Գ.- Ձաւար աղալը (**արլ դօր աղիլը**), որ կանանց ու աղջիկներու հաւաքական գործն էր: Նախ կ'ընտրուէր հատիկը, կը մաքրուէր պատահական քարերէ, շիւղերէ եւ այլ ընդեղեններէ: Յետոյ կը պատրաստուէր երկանաքարը, որ կը դրուէր մինտարի մը վրայ: Երեք չորս կիւներ ծալապատիկ կը նստէին երկանքին շուրջ ու աջ ձեռքերով կործը բռնած կը դարձնէին գայն: Անոնցմէ մէկը ձախափով, արագ, վարժ ու համաչափ շարժումներով հատիկը պէտք է լեցնէր երկանքին ձագարին մէջ: Երբ աղցուած հատիկը դիզուէր երկանքին շուրջ՝ կը կենային ու մէկը գայն մէկ կողմ կը քաշէր, ասոր **տօրը քիշիլ** (կարգը քաշել) կ'ըսէին:

Քիչ անդին երկու կիւներ քաշուած հատիկը մաղէ կ'անցնէին, առաջին մաղով կը զատէին խոշորն ու մանրը, յետոյ մանրը երկրորդ

մաղեն կ'անցնեին: Երկրորդ մաղեն անցած շատ մանր ձաւարը **գալօդ** (փոխինդ) կը կոչուէր: Փոխինդին վրայ քիչ մը շաքար ցանելով կու տային փոքրիկներուն, որոնք անհամբերութեամբ անոր կը սպասէին: Փոխինդով **խէ՛ֆէսկ** կոչուած անուշեղենը կը պատրաստէին:

Ձաւար աղալու այս աշխատանքը խաղի, երգի ու պարի առիթ էր կանանց ու աղջիկներուն համար: Ասիկա կ'արտայայտուի նաեւ ժողովրդական խաղիկներու մէջ: Կայ նոյնիսկ առանձին պարերգ մը.

Ուզվիլ լիցեք, սուզվիլ լիցեք, Յուշիկ-յուշիկ
դարձուցեք,

Սուստըր արլ դօր աղիցեք: Մանտր ձաւար աղացեք:

Տանտիկինը սեղան կը բանար: Գետնախնձոր կը խաշէր, ազտիկները կը սիրեն խաշած գետնախնձոր ուտել: Այդ օրուան յայտնի ճաշը կ'ըլլար **քէ՛մէ՛նուօն սուխաիկ** (գետնախնձորով բրդօճ): Ասոր քով սեղանին կը դնէին լոլիկով աղցան, հետը թանկամածուն: Ձաւարի տարբեր տեսակները տոպրակներու մէջ դրուելով կը մթերուէին, նոյնպէս ծեծած ցորենը:

դ.- Թարխանա բրդոճել (**թըրխէ՛նու սուզմիլ**).- լաւապէս խաշած ծեծած ցորենը մածուկով կը շաղէին ու բրդոճ-բրդոճ (սուխաիկ) ընելով կը փռէին տանիքը չորցնելու համար: Այս մթերքը կարգով կը շինէին: Թաղին բոլոր կիները այդ օր իրենց մածուկը թարխանա շինողին տրամադրած կ'ըլլային ու իրենք ալ կ'երթային ձեռք մը տալու: Տանտիկինը հիւրերուն կը հրամցներ նորեփ թարխանան: Գունտի մը վրայ կը դրուէր շերեփ մը մածուկ, դգալ մըն ալ կարագ: Մէկական պնակ ալ կը դրկէր տնեցիներուն:

Թարխանան չորցնելէ ետք տոպրակներու մէջ կը մթերուէր:

ե.- Հաւաքական աշխատանքի ու այցելութեան բացառիկ առիթ էր այգեկութիւնը եւ ռուպի պատրաստութիւնը, որ օրեր, նոյնիսկ շաքարներ կը տուէր: Ասոր կարգով կը մասնակցէին աղջիկներ, տղաք, երիտասարդներ, դրացիներ, ազգականներ: **Մասարայի** (հնձան) տիրոջ տունը ու բակը գիշեր-ցերեկ մարդ կ'ըլլար, օգնութեան եկողներ, դիտողներ, փրփուր ու տողներ:

զ.- Նոր տան տանիքը հողով կամ սիմէնթով ծածկելու (**տընիէսկ**

Ֆիրթիլ) կամ նոր բացուած ջրհոր մը պատելու ատեն ազգական ու դրացի այր մարդիկ օգնութեան կը հասնէին, որովհետեւ այս գործերը պէտք է արագ ըլլային: Աւարտելէն ետք տերը **«վիրէն կը հէ՛նի»** (արիւն կը հանէ), այսինքն՝ ուլ մը կամ խոյ մը կը մորթեր, ճաշ կը նստեցներ, սեղանին վրայ օղի եւ խորոված դնելով:

- Շնորհաւոր ըլլայ, բարով նստիք անոր մէջ, աղուոր օրեր ապրիք անոր մէջ, սեւ օր չտեսնէք անոր մէջ,- կը մաղթէին տան պարագային:

- Ակը չչորնայ, ջուրը անպակաս մնայ,- կը մաղթէին ջրհորի պարագային:

Դ.- Պարագայ սկան այցելութիւններ էին.

- Բարի գալուստի այցելութիւնները.- Բարի գալուստի կ'երթային ոչ միայն տնեցիներէն մեկուն, այլ եւ այդ ընտանիքի հիւրերուն: Ամօթ կը համարէին եկուորին կամ հիւրին այցելութեան չերթալը, բարի գալուստ չըսելը: Զիւրը ամբողջ գիւղին հիւրն էր: Տնուորին **աչքը լուսելը** պարտականութիւն կը նկատէին: Եթէ դրացի է՝ այցելութիւնը կ'ըլլար անմիջապէս: Եկուորը մօտիկ մերձաւորներէն ոմանց մանր նուերներ բերած կ'ըլլար, բարի գալուստի եկողներուն բերանը **քաղցրացնելիք** բան մը:

Դրացիները հիւրեր ընդունող տան օգնութեան կը փութային, գաղտնօրէն անկողին ու ծածկոցներ կը հասցնէին, դոյլ մը մածուն կամ ծրար մը բանջարեղէն, կամ որեւէ բան, որ դրացին կարողանար **երես ճերմկցնել** հիւրին ներկայութեան:

Տանտերը իր կարգին հիւրը այցելութեան կը տանէր բարի գալուստի եկածներուն տուները: Ասիկա կարգ էր:

- Շնորհաւորանքի այցելութիւններ.- գիւղական կարգ մը աշխատանքներու աւարտը ընտանիքին համար ուրախառիթ իրադարձութիւն էր: Իրենց ուրախութեան մասնակից կը դարձնէին նաեւ դրացիները: Այսպէս՝

ա.- Քանի մը հովիւներ ամրան **ուպս** կ'ելլէին: Լերան բարձրադիր մէկ տեղը անոնք վրաններ կը գարնէին, հօտերը միասին կը

պառկեցնեին ու կարգով պանիր կը քաշէին: Որուն որ կարգը վերջանար՝ **քիւփէ՛լիկ** մը (միջակ պղինձ) **ափ՛նտըրուօն հալ վիկ** (պանիրով հալ վա) կը շինէր ու կը դրկէր գիւղ: Ատկէ բոլոր դրացիներուն բաժին կը հանուէր: Դրացիները պնակը վերադարձնել ու ատեն կը շնորհաւորէին եւ **ափրէքէն** կ'ըսէին:

բ.- Նոր ծնանած կովուն դալը եռացնելով ու վրան շաքար ցանելով պնակ-պնակ կը բաժնուէր դրացիներուն: Դրացիները կու գային շնորհաւորանքի, «**լ ուօյս իչ վէդ, տամըզլ ա ըննու**» (լ ոյս աչքերնիդ, առատ կաթ տայ) կ'ըսէին: Կով մը կամ պարտեզ մը գնելէ ետք նոյնապէս՝ դրացիները շնորհաւորանքի կու գային: Տանտերը **լ ոխու մ** կը հրամցներ:

գ.- Տան հայրը, երբ **պազար** անասուն մը ծախէր՝ երինջ, գառնուկ, ուլ եւ այլն, տան պզտիկներուն անուշ կը բերէր, չէ որ պզտիկները արածեր ու կերակրեր են գայն: Այս առթիւ բերուած անուշեղէնը **հալ վուօթ** կը կոչուէր ու անկէ բաժին կը հանէին նաեւ դրացի փոքրիկներուն:

դ.- Շերամ պահող կիներն ալ ուրախութեան առիթ մը կ'ունենային: Գիտենք, որ շերամագործութիւնը լրիւ կնոջ վերաբերող գործ մըն էր, որուն ամբողջ տունը տրամադրուած կ'ըլլար: Կու գար խոզակ կապելու ժամանակը: Կինը լեռնէն ցախաւելի նմանող թուփ մը կը հաւաքէր ու կը փռէր շերամի դարակներուն վրայ: Շերամը կը բարձրանար անոր վրայ ու կը սկսէր խոզակ շինել: Այլ եւս փաստօրէն կը վերջանար կնոջ գործը. ամէն օր շալակով թթենի ոստեր բերել ու եւ շերամը կերակրել ու դժուարին գործը կը վերջանար: Այս ուրախ առիթով ան կը հրաւիրէր դրացի կիներն ու աղջիկները **հաճճէք** կամ **հաճճիկ** ուտել ու: Փոքրիկները կը հաւաքուէին բակը կամ տանիքը ու քաղցրեղէնը ուտելէ ետք փայտէ ձի կը խաղային:

- Բարի ճանապարհի այցելութիւններ, որ համագիւղացիք կու տային բոլոր այն ընտանիքներուն, որոնք ճամբորդ ունէին: Ծամբորդը շաքթու մէջ նախ ինք կ'այցելէր համագիւղացիներու տունները, «**բէ՛րըմնաք**» (մնաք բարով) ըսել ու: Ոմանք ճամբորդին

յատկանշական նուէր մը կը բերէին, օրինակ՝ իրենց պարտեզին մէջ գտնուող բացառիկ պտուղ մը, ծովացին՝ քանի մը ձուկ, որսորդը՝ քանի մը թռչուն եւ այլն, որ ճամբորդը ուտէր ու այդպէս մեկներ գիւղէն: Ծամբորդը կը բեռնաւորուէր ասոր-անոր բերած իրենց հարազատներուն տարուելիք նամակներով ու փաթեթներով կամ նոյնիսկ կողովներով: Ծամբորդը բազմաթիւ կատակներով ու բարեմաղթութիւններով ճամբու կը դնէին:

- **Անցած ըլլայ ի այցելութիւններ**, որոնք կը տրուէին հիւանդի մը, բանտէ արձակուածի մը, կամ որեւէ արկած կամ դժբախտութիւն անցուցած անհատի մը համար: Այս այցելութիւնները կը տրուէին ընտանիքին, եթէ նոյնիսկ ինդրոյ առարկայ անհատը տեղւոյն վրայ չէր գտնուէր կամ նոյնիսկ ծանօթ չէր գիւղացիներուն:

- **Թաղում.** Գիւղին կոչնակը երեքական ընդհատ հարուածներով մահուան գոյժը կը տարածէր գիւղին մէջ: Կիները տանիք կ'ելլէին եւ իրարու ձայն կու տային, թէ ո՞վ է, ե՞րբ եղեր է, ի՞նչ էն եղեր է: Ապա «**վայ, Աստուծ ուղուրմա հիգգէն**» (վայ, Աստուած ողորմի հոգիին) ըսող կիները սեւ հագած կամ գլխուն սեւ թաշկինակ մը կապած մեռելատուն կը վազէր: Օտար չկար, բոլորը՝ այր թէ կին, հոն կը շտապէին: Քանի մը երիտասարդներ կը վազէին միւս գիւղերը ազգական ու բարեկամ ընտանիքներու գոյժը հասցնելու: «**Չաղուր իէ'արւօրը ուշէտ կը հասնա**» (գոյժը շուտ տեղ կը հասնի) կ'ըսեն քեսապցիք: Յարազատ կիներ դիակին շուրջ նստած ողբեր կ'ըսէին (**սէ'րիլ**):

Քանի մը հասկցող մարդիկ կամ գիւղին ատաղձագործը դագաղը կը շինէին, իսկ ուրիշներ ներս մտնելով կը փոխէին հանգուցեալին հագուստները: Սովորութիւն էր, որ քեսապցիք մեռելին հագցնէին իր ամենէն նոր ու ընտիր հագուստները, իսկ դագաղին մէջ դնէին անոր ամենէն սիրած բանը՝ ծխախոտ, շիշ մը օղի եւ այլն: Դագաղին կափարիչը կը գոցէին միայն տունէն հանելու պահուն:

Բահ-բրիչ առած խումբ մը երիտասարդներ, մէկ երկու ահիլ եւ ծերունիներ գերեզմանատուն կ'երթային փոսը փորելու: Ծերերը անպայման տեղին համար դիտողութիւն մը կ'ունենային: Կարգով

գերեզմանը կը փորէին, ուրիշներ գերեզմանատան թուփերն ու փուշերը կը կտրէին, կրակի կու տային կամ մէկդի կը դնէին: Ամէն թաղում գերեզմանատունը մաքրել ու առիթ կը դառնար:

Կը հնչէր թաղման կոչնակը: Երիտասարդներ ու այր մարդիկ դագաղը ուսած տունէն դուրս կ'ելլէին: Անոնց առջեւէն կը քալէր քահանան սարկաւազին հետ մեռել-լական շարականներ երգելով: Ճամբան ամէն քայլի ուսէ ուս կ'անցնէր դագաղը: Ետեւէն կու գար նախ մարդոց, ապա սեւազգեստ կիներու բազմութիւնը: Յարազատներ մտած կ'ըլլային սգաւոր կիներուն ու մարդոց թելերը: Գիւղի մանուկներն ու պատանիները հեռուէն քայլ կը պահէին թափօրին հետ:

Գիւղերուն մէջ, ուր եկեղեցի չկար, մեռելը ուղղակի գերեզմանատուն կը տանէին: Դագաղը փոսը իջեցնելէ առաջ կիները անպայման դագաղը անգամ մըն ալ բանալ կու տային: Ողբը կը բռնէր գիւղին մթնոլորտը: Եկեղեցականը հողը օրհնելէ ետք ամէն ոք ափ մը հող կը թափէր գերեզմանին մէջ ու կ'ըսէր **թիթիվ ու գու** (թեթել գայ):

Վերջերս, երեք համայնքներու հոգեւոր հայրերու համատեղ որոշումով փորձ եղաւ արգիլել կիներու ներկայութիւնը թաղման պահուն:

Թաղումէն ետք մեռելատուն կը դառնային: Դրացի կիներ սուրճ մը կը հրամցնէին: Անոնք եօթը օր տունը չէին ձգեր, եկող-գացող շատ կ'ըլլար, ընտանիքին եւ սգաւոր հիւրերու սեղանը իրենք կը պատրաստէին: Տաւակցութիւն յայտնելու համար սովորաբար կ'ըսէին.

- **Աստուծ ուղուրմա հիգգէն, Էօմըրը Էր Եակրիցը, Աստուծ սաարլըք թըղ ուտու** (Աստուած ողորմի հոգիին, կեանքը իր սիրելիներուն, Աստուած համբերութիւն թող տայ): Մեռելին ակնարկելու համար կը գործածէին **իշուօծբէ'րէն** բառը (յիշած-բարին՝ բարեյիշատակը):

Երկրորդ առաւօտ խումբ մը կիներ գերեզմանատուն կ'երթային, նաեւ եօթնօրին, քառասունքին ու տարելիցին: Վերջին երկու

առիթներուն տունը հոգեճաշ կ'ըլլար ու սեղանին կը նստէին բոլոր հարազատները: Հոգեճաշին մեծ ծախսեր ու ծեսեր չեն յիշուիր Քեսապի մէջ: Ամենէն ընթացիկ ճաշերը կ'ըլլան միսով սիսեռով կորկոտապուրը եւ հերիսան, միշտ պնակ մը մածունի հետ: Քառասունքի ճաշին ոմանք օղի կամ գինի ալ կը հրամցնեն:

Հարազատներ գերեզմանատուն կ'այցելեն նաեւ տարուան հինգ մեռել ոցներուն: Դաշտային ծաղիկներ կը դնեն շիրիմներուն վրայ, մոմ կը վառեն ու խուսկ կը ծխեն:

Այս առիթներէն դուրս գերեզմանատուն այցելել ու ողբ հիւսելը չի քաջալերուիր շրջանին մէջ: **«ՅԵ՛ՆԿԵՍՈՒ ԹՈՒՂԵՔ ԸՂԿԻՍՍՈՒԾՆԵՆ»** (Հանգիստ ձգեցէք մեռելները) կ'ըսեն:

4.2.- ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ընտանիքի կազմութիւնը կը կատարուէր որոշակի ծեսերով ու կ'անցներ հետեւեալ հանգրուաններէն.

Ա Նախամուսնական տարիք.- Գիւղին մէջ այրերը ունէին չորս խմբաւորումներ՝ **չ ու ճ ու ք ն ա** (մանուկներ), **ճ ի հ ալ ն ա** (երիտասարդներ), **ա հ ի լ ն ա** (ամուսնացած այրեր) եւ **հ Ե՛Ղ Ե՛Վ ը ր տ ա ք** (ալ եւ որներ՝ ծերունիներ): Ասոնք առօրեայ հաւաքոյթներու համար տարբեր վայրեր ունէին:

Քեսապի մէջ եւս մանչ զաւակը հօր տան սիւնը կը նկատուէր, - հայրական տան **«տուլ ու օղ»**ը՝ հարստութիւնը: Ան իր մանկութեան եւ պատանեկութեան առաջին տարիները կը մեծնար իր հօր տեղը անցնելու, հօր հարստութիւնը, իշխանութիւնը եւ մականունը ժառանգելու եւ իր կարգին հայր ըլլալ ու յորդորներով: Ան պէտք է մեծնար չար-քաշ, առողջ, տղամարդ ըլլալ սորվէր, որ ամուսնանալ ու արժանի ըլլար: Տղան երիտասարդ կը նկատուէր **ա ճ ի լ ու ն ք**ի արարողութենէն ետք, որ գիւղին մէջ յատուկ արարողակարգ մը ունէր: Քահանան առաջին ածելին եւ երկու կաղապար օճառ կը նուիրէր ծնրադիր տղուն: Ածիլ ու նքէն ետք տղան այլ եւս **ճ ի հ ալ** կը նկատուէր: Ան դրամական նուէր մը կու տար երիտասարդներու պարագլուխին (**Ե ի կ ի տ ա ք ի**) ու կը մտներ գիւղի կամ թաղի երիտասարդներու խումբին մէջ եւ կը մաս-

նակցեր անոնց բոլոր հասարակական գործունեութիւններուն՝ խաղ, հարսանիք, թաղում, խմբային աշխատանք, հացկերոյթ (**զիսֆար**):

Քեսապի մէջ տղան կ'ամուսնացնէին 20-22 տարեկանին, թէեւ 17-18 տարեկանին ալ ամուսնացողներ կ'ըլլային: Սիրային արկածախնդրութիւններու սկսած տղուն համար հայրը կ'ըսէր. «**Շունը ականճը կտրիլ արդուօվ**» (Շան ականջը կտրել իքեղաւ): Ասիկակը նշանակէր՝ ամուսնացնել պէտք է:

Աղջիկները ցանկալի ծնունդ չէին, բայց ծնած օրէն հարսնցու կը նկատուէին, ու օրօրոցային երգերէն մինչեւ անոր մեծնալը ամուսնական բախտ կը ցանկային: Աղջիկը **փփկ աւակ** կը կոչուէր: Աղջիկ հարս ընելը **աղջիկ ծափել** կը կոչուէր, **աժան ծափեց** կամ **լաւ ծափեց** կ'ըսէին: Գիւղական շրջանակի մէջ աղջկան հարս ըլլալը երագ էր: Հարս եղած աղջիկներուն համար **սըթըրվեցուօվ** կ'ըսէին, որ կը նշանակէ պարտկուեցաւ, հասարակական չարիքներէ փրկուեցաւ: Աղջիկ գաւակը մայր ըլլալու կը պատրաստուէր, կը սորվէր եփել-թափել, լուալ-մաքրել, ալել-շտկել, կարել-կարկտնել, հիւսել, այտռիել արտի աշխատանքներուն վարժուիլ:

Նահապետական ընտանիքին մէջ աղջկան ամուսնութիւնը հայրը կ'որոշէր: Աղջկան կամքը բանի տեղ չէր դրուէր, մինչդեռ ժողովրդական խաղիկներուն մէջ սիրոյ վրայ հիմնուած ամուսնութիւնը կը քաջալերուէր, ու կը քննադատուէր հօր կամքը: Ամուսնական գոյգընտրելու համար կ'ըսէին «**միր գընեփիլը իլէն չընք կարցընի**» (մեր ընտիր ցորենը ուրիշին չենք կերցներ), կամ «**միր զիվունը աղուր է քանզ իլէն գընեփիլը**» (մեր վարսակը լաւ է, քան ուրիշի ընտիր ցորենը): Այսուհանդերձ սիրոյ վրայ հիմնուած ամուսնութիւնը ամէն պարագայի սահման չէր ճանչնար ու խաղիկներու մէջ կը գնահատուէր:

Տնիեր վեզգին կը թընսու, Տանիքի վրայ՝ շուրջպար կ'ընեն՝ կը թնդայ,

Մեքթուպկու գու թայ Հընսու,

Հնդկաստանէն նամակ կու գայ,

Իշգէնն ուզուծէն սըվեք,

Աղջիկն ուզածին տուէք՝

Իզսասակուրթու կը խընսու: Կը մեռնի կ'երթայ կը խնդայ :

Աղջիկ ընտրել ու հարցով շատ բաներ կը փնտռէին: Ամենէն հիմնականը մայրական դաստիարակութիւնն էր՝ «**Նախմայրը սէս, յետոյ աղջիկը առ**» կ'ըսէին: Յետոյ կու գար **ճընսը**, այսինքն՝ տոհմը. ժամանգական, տոհմային արատներու կը հաւատային: Յետոյ՝ աչքէ կ'անցնէին մարմնական յատկանիշները, աշխատասիրութիւնը, **հիւսարներու նենալը** եւ այլն:

Բ.- Նշանախօսութիւն, որ կ'անցնէր քանի մը փուլերէ.

1) **Խնամախօսութիւն (ըխտիարլըք)**.- Կը կատարուէր որոշ ծիսակարգով. նախ տղուն մօր կողմէ բանակցութիւն կը տարուէր աղջկան մօր հետ, որուն միջոցով ալ հօր հաւանութիւնը ձեռք կը բերուէր: - Յաջորդ փուլին խնամախօսները կը ներկայանային աղջկան ծնողքին: Խնամախօսներ կ'ըլլային տղուն հայրը, հօրեղբայրը, մեծ եղբայրը. խումբին ղեկավարը կ'ըլլար գիւղին քահանան, չըլլալու պարագային՝ որեւէ մօտիկ տարեց մարդ: Կ'ըլլար թատերական խօսակցութիւն մը խնամախօսին ու աղջկան հօր միջեւ, ուր նիւթը կը բացուէր «**Աստուծոյ ամրով**», «**Աստուած եթէ յարմար սէսնէ**» արտայայտութիւններով: Հայրը վճռական պատասխան տալէ կը խուսափէր, կնոջ, աղջկան եղբայրներուն ու քոյրերուն կարծիքը կը հայցէր: «**Եթէ յարմար կը սէսնէք՝ մենք ըսել իք չունինք**», «**Եթէ մեր քոյրը կ'ուզէ...**» կ'ըլլային պատասխանները: Նման բան կ'ըսէին նաեւ տան միւս անդամները՝ մեծ մայր, մեծ հայր, հօրեղբայր, հօրաքոյր. երբեմն քեռին ալ հրաւիրուած կ'ըլլար: Իվերջոյ աղջկան կարծիքը կը պահանջուէր, այդ ալ՝ «**Դէօն ի գիւտիս, հայրիկ**» (Դուն գիտես, հայրիկ) կ'ըլլար: Հայրը «**տուի**» կ'ըսէր: Կը շնորհաւորէին զիրար:

2) **Նշանսուք (նըշուսն դնիլը)**.- Խնամախօսութենէն անմիջապէս ետք կը կատարուէր նշանդրէք կամ նշանտուք: Քահանան կամ տղուն հայրը աղջկան հօր, մեծ հօր, կնքահօր կամ քեռիին կը յանձնէր նշանը՝ օղլանջախաչ, ապարանջան: Մատանի չէր տրուէր: Աղջիկը կը համբուրէր հօր ու մօր եւ խնամախօսներուն ձեռքերը: Խնամախօսներէն մէկը դուրս ելլելով հրացանը կը պարպէր քանի մը անգամ: «**Միկէն վեզը ֆիգգիցէն**» (Մէկուն վիզը ծռեցին) կ'ըսէին հրացանի ձայնը

առնողները: Աւետարանականները ստեղծած էին ուրիշ նշան՝ մատանի մը, Աստուածաշունչ մը եւ հոգեւոր երգարան մը: Քահանայ չըլլալ ու պարագային՝ նշանդրէքը կը կատարուէր շաբաթավերջի օրը:

3) **Փախլ աւան պատրաստելը**.- Չենքի ձայնը առնելէն անմիջապէս ետք տղուն տնեցիները **ճըգգուն**, այսինքն քանի մը աբլոր կը մորթէին՝ ինամախօսներուն ու հարագատներուն ի պատիւ: Մինչեւ առտու ուրախութիւն կ'ըլլար, **տիլ անի** (շուրջպար) կը բռնէին: Ատով յատուկ արարողակարգերու շարք մը կը սկսի, որուն կը մասնակցին տղուն կողմիները: Կիները փախլ աւաբանալ ու կը պատրաստուին՝ դուռ-դրացիներէն կլոր սեղաններ աւելցնելով: Փախլ աւան կիները կը բանան, իսկ այրերը անոր եփին կը հսկեն «մաղմուօղ» կրակին վրայ: Ընտիր փախլ աւան կը պատրաստուի իւղով ու շաբարաւ ազով. պայման էր որ քանի մը սինին այդպէս ըլլար, միւսները ձեթով ու ռուարով կ'ըլլան: Փախլ աւայի կողքին **լոխում ու ղուրէյ պաալ** կը բերէին շուկայէն ու կը տեղաւորէին յատուկ դորակներու՝ «**տուլ ուօկ**»ներու մէջ: Լաթէ ծրարներու մէջ կը պատրաստուէին նաեւ միւս նուերները, որոնք նախատեսուած կ'ըլլային հարսնցուին, հօր ու մօր, մեծ հօր ու մեծ մօր, քոյրերուն ու եղբայրներուն եւ միւս մերձաւորներուն համար: Ասոնք լաթեղէն կ'ըլլային՝ հագուստցուներ, շալ վարցու, գլխարկ, անձեռոցներ, լաչակներ, գուլպաներ, թաշկինակներ եւ այլն:

4) **Փախլ աւատանիլը**.- Յարսնցուին տուն կը մեկնէին յաջորդաբար: Ասիկա կը կոչուէր փախլ աւատանիլը: Երթը կը սկսէր հրացանաձգութեամբ, հարսանեկան «**տօ՛ւ տօ՛ւ**» կանչերով, կիներու «**լ ուլ ուլ**»ներով (**զըլ ղէդ**): Առաջինը կը շարժէր ձիաւոր **եփկիտաքի** (երիտասարդներու աւագը): Ասոր կը հետեւէին ա) երիտասարդները՝ նուագածու, պարող, երգող, «տօս» կանչողներ, բ) երիտասարդ կիներն ու աղջիկները, որոնք սինիները, դորակները եւ ծրարները գլխովրայ դրած կ'ըլլային, գ) տարեց կիներն ու պառաւները, դ) իսկ մանուկներն ու պատանիները կը վազվզէին դէս ու դէն:

Յարսնեւորները բակ կը մտնէին հրացանաձգութեամբ, կանչերով: Յատուկ պարերգներ կը կատարուէին, ու կիները կ'ընդունու-

ւ էին ներս: Աղջկան մայրը իր քով կը նստեցներ տղուն մայրը: Յարսնցուն ոտքի կը մնար, ձեռքերը խաչածել՝ կուրծքին վրայ: Աղջկան մայրը լացակումած կը գովէր իր աղջկան բարեմասնութիւնները, մանաւանդ տնտեսող ըլլալը: Տղուն մայրը կը գովէր խնամին: Գովասանական գրոյց մը կը զարգանար երկուքին միջեւ, մինչ միւս կիները կը պարէին ու կ'երգէին: Յիւրասիրութիւնը կ'ըլլար լոխումել օշարակ (**շարպաթ**):

5) **Փախլ աւառուտելը**.- Նոյն գիշերն իսկ խնամին իր տունը կ'ընդունէր փեսացուն, խաչեղբայրը եւ եհկիտպաշին իրենց մերձաորներով: Սուֆրան կը փռուէր: Այրեր կը կատարէին հիւրասիրութիւնը: Փառաւոր ճաշ պատրաստուած կ'ըլլար: Յետոյ փեսացուն առջեւ կը դրուէր սինի մը փախլ աւա: Ան իր դաշոյնով կը կտրէր փախլ աւան եւ կեդրոնի կտորին տակ մէկ դեղին ոսկի կը դներ: Բոլորը կը հրաւիրուէին փախլ աւառուտելու: Իրականութեան մէջ ասիկայ դեղին ոսկին փախցնելու խաղ կ'ըլլար: Խաչեղբայրը եւ եհկիտպաշին ոսկին պէտք է պահէին: Ամէն ուտող դրամական նուէր մը կը դներ սինիին մէջ: Վերջին ուտողը խաչեղբայրը կ'ըլլար: Խնամին այդ գումարը կ'օգտագործէր աղջկան օժիտը պատրաստելու համար:

Յարսնացուն եւ միւս կիները այս հաւաքին ներկայ չէին ըլլար: Աղջկան մայրը կը կազմակերպէր փախլ աւա կերցնելու եւ բաժնելու արարողութիւնը: Պնակ-պնակ կը դրկուէր աղջկան մերձաորներուն, որոնց իրաւունքը կը նկատուէր ատիկա:

6) **Նշանուած շրջանը**.- Ասիկակրնար ամբողջ տարի մը տեւել: Այս միջոցին նշանուածները ամանձին հանդիպելու արտօնութիւն չունէին: Բայց օրէնքի կարգէր, որ խնամիները փոխադարձաբար միասին ըլլային հաւաքական աշխատանքներու ժամանակ՝ ձաւար խաչել, աղալ, չորթան շինել, մոխրանոց միասին երթալ՝ լուացք եւ լոգանք ընել: Յարսնցուն այնտեղ ձեռք կու տար լուացքին, կեսուրին կուժը կը լեցնէր: Փեսացուն եւ իրենները կ'օգնէին խնամին ծխախոտ տնկելու, մասարային, ցորեն ծեծելուն եւ այլ առիթներու: Ասոնք առիթներ էին, որ տղան ու աղջիկը իրարու մօտենան, իրարու հետ խօսին բոլորի հայեացքին տակ: Տօն-տաղաւարին կանայք կ'այցելէին խ-

նամիներուն՝ հարսնցուին նուէրներ տանելով:

Այս արարողակարգը արդէն լրիւ փոխուած է որոշ փոխակերպումներէ անցնելով: Ներկայիս ինամախօսութեան կրնայ մասնակցիլ տղան եւս, կամ միայն տղան: Խօսքկապի (առանց քահանայի) կամ նշանտուքի (քահանայով) ատեն մատանի կ'անցընեն աջ ձեռքի մատնեմատին: Տղան կամ անոր ծնողները անպայման փախլաւամբ կը տանին ինամիին՝ այնպէս անհականութեան ուժով:

Գ.- Հարսանիք.- ճիշդ մէկ շաբաթ կը տեւէր եւ ուներ հետեւեալ ծէսերը.

1) **Գումաշ կտրիլը կամ կարուծելը.**- Ասիկա հարսանեաց հագուստներուն կարուծելի արարողութիւնն էր, որ տեղի կ'ունենար պակէն ճիշդ մէկ շաբաթ առաջ, Շաբաթօր: Խումբ մը կիներ ու աղջիկներ կերպասեղէնը կը տանէին հարսնցուէնց տունը, ուր հաւաքուած կ'ըլլային աղջկան ազգականու հիներն ու ընկերու հիները: Կը բացուէին հարսին, փեսային եւ փեսեղբօր կերպասեղէնի ծրարները: Հագուստցու մը կ'ըլլար նաեւ աղջկան մօր, մեծ մօր ու մերձաւոր կիներուն, շալվարցու մը՝ հօր, մեծ հօր ու հօրեղբօր համար: Հարսնցուն եւ իր ընկերու հիները տեղւոյն վրայ կը կտրէին ու կը ձեւէին հարսին, փեսային ու փեսեղբօր կտորները: Վերջիններուն չափը տղուն մայրը բերած կ'ըլլար: Այս բոլորը կ'ըլլային հարսանեկան կանչերով, կատակներով ու մաղթանքներով: Գումաշ կտրողները ճաշի կը մնային. խմիչք կը հրամցուէր: Մերձաւորները իրենց հետեւած հաւ ու անուշեղէն բերած կ'ըլլային:

1920-ական թուականներէն ետք գումաշ կտրելու ծիսակարգը ամբողջապէս փոխուած է: Փեսացուն երկու կողմէն խումբ մը կանանց ու հարսնցուին հետքաղաք կ'իջնէ, կը գնուին փեսային եւ հարսին հարսանեկան հագուստները, կօշիկը, գլխարկը, մերձաւորներուն հագուստեղէնը, նուէրները եւ այլն: Փեսացուն կիները խորտիկարան կը տանի: Հիմանշանուած գոյգերը կ'ընեն այս գործը:

2) **Օծիտքաճնելը.**- Շաբթուն մէջ տղուն կողմէ խումբ-խումբ աղջնակներ ու տղաք **ուժէթք** կը բաժնէին դում-դում պտտելով ու տալով նուէրը՝ գուլպայ, թաշկինակ մը, բաճկոնակ, վերնաշապիկ, հա-

գուստցու եւ այլն: Նուէր ստացողները կը շնորհաւորէին ու տարօսը կ'ըսէին այս տղոց ու աղջնակներուն: Ասիկա փաստօրէն հարսանեաց հրաւեր էր: Օժիտ ստացողը պարտաւոր էր իր կարգին հարսանիքին նուէր մը պատրաստել:

Այս սովորոյթը ամբողջապէս վերացած է: 1950-ական թուականներէն ետք տարածուեցաւ պսակի ու հարսանեաց հրաւերի բացիկը:

3) **Ծրար դնելը**. - Կ'ըլլար ամբողջ շաբթու ընթացքին: Աղջկան մերձաւոր ընտանիքներու կանայք, բոլոր անոնք, որոնք աղջկան փախլաւ ան կերած էին, խմբովին կուգային աղջկան տունը՝ ծրար դնելու: Ծրարը կազմուած կ'ըլլար զանազան նուէրներէ՝ կերպասեղէն, - գուլպաներ, թաշկինակներ, մուճակներ, ժանեակներ, ծեղով, խաիրով, եղէգով ու ոստերով բանուած իրեր՝ հացաման, սկուտեղ, ասեղաման, սեղան, դգալ աման, սփռոց, գետնի ծածկոց, ինչպէս նաեւ թել-դերձան, ասեղ, մկրատ, սանրեր, կաւե ու պղինձէ ամաններ, օճառ եւ այլն: Ծրարը հայրական օժիտին մաս կը կազմէր:

4) **Յայրական օժիտը** (ճեհիզ). - Ծրար դնող կանայք ու աղջիկներ աւարտին կը պատրաստէին նաեւ հայրական օժիտը: Ասոր գլխաւոր տարրերը կ'ըլլային հարսի սենեակին անկողինը, վերմակները, զոյգ բարձ, կարպետներ, օթոցներ, բարձեր, սաւաններ, ասեղնագործ վարագոյրներ, ծածկոցներ, անձեռոցներ, թաշկինակներ եւ տեսակաւոր ժանեակներ: Անկողինները կը պատրաստուէին բուրդով: Փետուրէ քանի մը բարձնալ ընտիր կը նկատուէր:

Յայրական օժիտին խորհրդանիշը կը նկատուէր «ճեհիզի սնտուկը», որ պատրաստուած կ'ըլլար ընկուզենիի կամ թթենիի փայտէ: Գեհիզի սնտուկին եւ այլ արկղներու մէջ կը տեղաւորուէին հարագատներուն բերած նուէրները: Անկողնի հակերը, սնտուկը եւ արկղերը պատրաստվիճակի մէջ կ'ըլլային:

Այս ծեսնալ ամբողջապէս փոխակերպու մներու ենթարկուած է:

5) **Տորեն լուալը**. - Յինգշաբթի իրիկուն տղուն մերձաւորները՝ երիտասարդներ ու երիտասարդուհիներ, այրեր, կիներ ու մանուկներ կը հաւաքուէին փեսացուն ին բակը: Յրացանաճ գութիւն, կանչեր, պարերգներ, շուրջպար՝ զուռնայի եւ թմբուկի ընկերակցութեամբ

կամ միայն սրինգով: Հերիսայի ցորենը պիտի ծեծուի: Եիկիտպաշին - կ'առաջնորդեր խումբը դիպի աղբիւր կամ ջրհոր: Անոր կը հետեւէին երիտասարդները, նուազածուները, ապա ցորենով և ցուն միջակ և աղեր գլուխին դրած կամ կուժեր շալկած կիներն ու աղջիկները: Մանուկները կը թավռային հոս ու հոն: Երգ ու պարի ընկերակցութեամբ կիները կը և ուային ցորենը: Նոյն ձեւով կը վերադառնային տուն: Աղջիկները կուժերը ջուրով և ցուն ցած կ'ըլլային:

Ծիսակարգը կը շարունակուէր թաղին հրապարակը, ուր քարէ խոշոր սանդը կար կամ փեսացունին տան բակը, ուր բերուած կ'ըլլար փայտէ խոշոր սանդ մը: Սանդին շուրջը կը շարուէին 5-7-9 մինչեւ իսկ 11 երիտասարդներ ու ցորենը կը ծեծէին հրաշալի ռիթմով: Տարեց-կին մը երբեմն կը նայէր սանդին, կը խառներ ու թակ մը եւս հրահանգ կու տար, որովհետեւ **«հիրիսէսըն ցիրիները սիւնաղ կիփա»** (հերիսայի ցորենը սանդին մէջ կ'եփի) համոզումը կար: Այս միջոցին պարն ու շուրջպարը կը շարունակուէին: Յետոյ կերու խումբ կ'ըլլար: Այս ալ իսպառ վերացած է:

6) **Հարսանիքի գիշերը.**- Հարսանիքի օրը Ուրբաթ է: Հարսանեաց օրուան արարողութիւնները կ'ունենային հետեւեալ հերթականութիւնը.

- **Ուտեստի պատրաստութիւն.**- Առտու ընէ մինչեւ կէսօր կիները կնքամօր (**պապմար**) ղեկավարութեամբ կ'եփէին հարսանիքի հացն ու ձէթով բոկեղը: Խմորը շաղելու ատեն **«Աստուօծ շընըֆըրի»** (Աստուած թող շնորհաւոր ընէ) կ'ըսէին:

Կէսօրէ ետք առաջին արարողութիւնը կ'ըլլար մսացու կենդանիներուն զենումը: Մեծագոյն մսացուն փեսացուի հայրը կը տրամադրէր. տղուն մերձաւորներն ալ մսացուներ բերած կ'ըլլային: Չենուն մէն առաջ մսացուներուն ափով աղ կը կերակրէին, իսկ զենումը կը կատարէին հարսանեկան կանչերով:

Կերակուրներու պատրաստութեան համար երեք տեղ որոշուած կ'ըլլար: ա) Սենեակներէն մէկը, ուր կիները կարմիր միսը կը ծեծէին, **սուխիկ** (չիքէօֆթէ), **գլուօր** (գլոր՝ քէօֆթէ) եւ ուրիշ տեսակի աղանդեր կը պատրաստէին: Գետնախնձոր կը տապկուէր: բ) Թնրատունը,

ուր խորովածի միսը կը խորովուէր դափնիի ոստերէ շինուած շամփուրներով: Այստեղ քանի մը մարդ կ'աշխատէր: գ) Տունէն հեռու մեկուսի տեղ մը խոշոր կաթսաներու համար յարմար օճախներ կը շինուէին, կաթսաները կը տեղաւորուէին, ու հարսանեաց հերիսան եւ հատլոբին կ'եփէին: Ասիկակը տեւէր մինչեւ յաջորդ օրուան կէսօր:

Խոհանոցի այս երեք բաժինները ունէին իրենց պատասխանատուները՝ փեսացուն ին մերձաւոր մարդիկ, որոնք կը հսկէին պատրաստութեան: Այս բաժինները գործ չունեցողներուն մտնելը խստիւ արգիլուած կ'ըլլար:

Հատուկ բիայի փոխարէն նախապէս սոխապուր կը պատրաստէին:

- **Կերուխում.** Տան սենեակները կը պատրաստուէին կերուխումի համար: Երիտասարդներն ու աղջիկները կը փռէին ճաշի սփռոցներ (**սոֆրա**) ու բարձեր, կը դնէին անհրաժեշտ անակեղէն, օղիի եւ գինիի բաժակներ, կանաչ եղէն, լոլիկ, վարունգ, չորեղէն: «**Շընըֆուր ձիր խնամը**» (շնորհաւոր ձեր ուրախութիւնը) ըսողին տարօս կուտային փեսացուն հայրը, փեսացուն, խաչեղբայրը, եհկիտապաշին, մեկերկու ուրիշ տարեցներ ու կը հրաւիրէին ներս: Ճահիլներու, ահիլներու եւ ալ եւորներու սենեակները տարբեր կ'ըլլային: Հիւրերը ծալապատիկ կը նստէին, յարգելի մարդոց բարձ կը հրամցնէին: Սեղանները կը լեցուէին խորովածով, սուխմիկով, գլորով: Տեսակաւոր օղի կը հրամցուէր՝ խաղողի, թուրթի, մուրտի... Ամէնէն շատ սպառող օղին թուրթի օղին կ'ըլլար: Կիներուն առանձին սեղան կը բացուէր, բայց, որպէս կանոն, անոնք գործ պէտք է կատարէին:

Սենեակները կ'ունենային իրենց ղեկավարները, որոնք խնճոյքը կը վարէին, սեղանին պէտքերը կը յուշէին, կարգուսարքը կը պահէին:

Այսուհանդերձ՝ երգերու ընտրութեան ատեն յաճախ վեճեր կը պատահէին, կռիւներ, ձգող-հեռացողներ կ'ըլլային: Ասոնք կը պատահէին, երբ ոմանք թրքերէն կ'երգէին: Հին սերունդի մարդիկ այդ երգերէն դժուար կը բաժնուէին: Այդ պատճառով ալ այդպիսիներուն սեղանը երբեմն առանձին սենեակի մը մէջ կը դրուէր: Աւելի տաք վեճեր կը ստեղծէին կուսակցական երգերը: Այդպիսի երգերը յետագա-

յ ին դուրս դրուեցան նման խնճոյ քներու երգացանկէն:

- **Յինայ ում (գընա)**.- Յինայ ումի երկու արարողութիւնները կը կատարուէին անջատաբար՝ փեսացուին տունը եւ հարսնցուին տունը: Արարողութիւնը կը կատարուէր այն սենեակին մէջ, ուր սեղան-բացուած էր պետական պաշտօնեաներուն, հիւրերուն ու գիւղի աւագանիին համար: Եիկիտպաշին պղնձէ տաշտին մէջ կը սկսէր հինան շարղել: Փեսան եւ խաչեղբայրը նստեցուցած կ'ըլլային աւագներուն մէջտեղ: Շարղի ընթացին ներկաները փոխնիփոխ կը կատարէին «**Գընաե-ախամ**» թրքերէն երգը¹⁵: Առաջին տունը անպայման կը կատարէր եիկիտպաշին, ապա կը մօտենար փեսացուին ու ներկանե-րէն՝ թրքերէն լեզուով հինայելու արտօնութիւն կը խնդրէր: «Եօ՛ք» (Ոչ) կ'ըլլար թրքերէն պատասխանը: Այս հարցումը ամեն տուն երգելէ ետք կը կատարէին երեք անգամ՝ միշտ միեւնոյն պատասխանը ստանալով:

Յետոյ միեւնոյնը կը հարցնէր Քեսապի բարբառով.

Ըսախտուօկ մուրէօք,	Սպիտակ մօրուք,
Սիվ մուրէօք,	Սեւ մօրուք,
Յուօրս, փիսու,	Յարս, փեսայ,
Մինծ, աղզսէկ,	Մեծ, պզտիկ,
Յէ՛րէօստ, ախքուօտ,	Յարուստ, աղքատ,
Իշգէն, սղղու,	Աղջիկ, տղայ,
Ըմմընիէդ իզնուօն,	Ամենուդ հրամանով,
Պիսէ՛ծուօն	Կամքով
Յինի՞մ մը:	Յինայ ե՞մ:

- **Յօ՛վը, հօ՛վը** (այո, այո),- կ'ըլլար պատասխանը բարբառով:

Փեսացուն եւ խաչեղբայրը կը հինայուէին:

Ասիկա մէկ կողմէն պետական պաշտօնեաները յարգելու, միւս կողմէ հայոց հարսանիքը, հարսանեաց ծիսակարգը անպայման հայերէնով (բարբառով) կատարելու պահանջքի արտայայտութիւն էր:

Նոյն պահուն խումբ մը աղջիկներ հարսնցուն կը հինայէին միեւնոյն արարողութիւններով: Յոն երգը բարբառով կը

¹⁵ Երգը տե՛ս **Յակոբ Չոլ սքեան**, Քեսապ, Գ. հատոր, Էջ 533-534:

կատարուէր, որովհետեւ հարսնցուին տունը պետական հիւրեր հրաւիրուած չէին ըլլար: Փեսացուին կողմէ խումբ մը աղջիկներ եւ կիներ հոն կ'երթային: Յինայ ումէն ետք փեսային տարազը առած կը վերադառնային:

Աւելի ուշ հինայ ումի արարողութիւնը տեղի փոփոխութիւն կրեց: Տղուն կողմէ մեծ խումբ մը երիտասարդներ ու կիներ կ'երթան հարսնցուին տունը: Եիկիտապաշին տաշտը գլխուն վրայ դրած կը տանի: Յինայի գունտին վրայ խոշոր կարմիր խնձոր մը դրուած կ'ըլլայ: Անոնց կ'ընկերանայ նաեւ փեսացուն: Հարսնցուի տան շեմին, երգի ու պարի մթնոլորտին մէջ, հարսնցուին մօտիկ աղջիկներ ու երիտասարդներ կը յարձակին խնձորը գողնալ ու համար: Փեսացուին խումբը կը փորձէ պաշտպանել խնձորը: Վերջապէս փեսացուն ու հարսնցուն քով-քովի կը նստին ու հինայ ումի ծիսակարգը կը կատարուի նախկին ձեւով: Յինայի երգը կը կատարուի Քեսապի բարբառով:

- **Խնձոյք**.- Կերու խումբէ կշտացած երիտասարդները փեսացուի տան բակին կամ մօտիկ արտի մը մէջ հսկայ խարոյկ կը վառէին: Կանչեր եւ հրացանած գութիւն: Նուագարաններէն կը գործածուէին - գուննաու թմբուկ, սրինգ եւ **շուպպապի** (երկփող սրինգ): Կը կատարուէր Քեսապի շուրջպար, որ **սիլանի** կը կոչուի¹⁶: Նուագածուներուն **սապաք** (դրամական նուէր) կու տային այն երիտասարդները, որոնք պարը առաջ քաշել կ'ուզէին, **սէյ մանապաշի** ըլլալ ուզէին: Հոս խնդիրներ կրնային ծագիլ: Հրապարակի պատասխանատուն **մէյ տանապաշի** կը կոչուէր:

Երբեմն կը փչէր մենապարի եղանակը: Թելերը կը քակուէին ու ծափը կը սկսէր: Պարագլուխը մենապարի կ'իջներ, յետոյ կարգով բոլորը՝ ծեր, երիտասարդ, մանուկ: Մենապարը երբեմն կը վերածուէր ճամպազի, երբեմն կը յայտնուէին աճպարարներ, փեհլիւաններ ու լարախաղացներ: Դարձեալ տաւուլ-գուննայի ընկերակցութեամբ կը կատարուէին թրախաղ ու դաշու նախաղ:

Ըմբշամարտի ազատ ոճի խաղեր կը կատարուէին: Կը փչէր գուննա-

¹⁶ Քեսապի պարեղանակներու եւ պարերու շարքը տե՛ս **3. Չուպեան**, Քեսապ, Բ. հատոր, էջ 476-488:

ն, ու մենամարտը կը սկսեր: Յաղթողին դիմաց կ'իջներ ուրիշը: Յաղթողը կը պատուէին, տեղ կը հրամցնէին աւագներու սեղանին: Ամեն ազգի ըմբիշներ ներկայ կ'ըլլային, հրաւեր կը դրկուէր:

Կը կատարէին կենցաղային կատակ խաղ մը՝ **խորտաբօ**. Երկու հոգի կը ծպտուէին իբրեւ այր ու կին: Այստեղ կը ծաղրուէին անպարկեշտ-կնոջ ու անբան ամուսինի տիպարները:

Կարգը կու գար պարերգներուն ու խաղիկ հիւսելուն: Ասիկա ամենէն գեղեցիկ բաժինն էր երեւի: Պարերգներու մէջ մենակատարները բնական փոխասացու թեամբ նոյն նիւթին մասին խաղիկներ կը շարէին: Եւ ոյթ կ'ունենային լաւագոյն շար (խաղիկ) հիւսողները: Պարերգներուն նիւթերը կ'ըլլային սերը, ազատ սիրոյ հիման վրայ կազմուած ընտանիքը, աղջկան գեղեցկութիւնը, տղուն կտրիճութիւնը, մարդկային առաքինութիւնները՝ աշխատասիրութիւն, բարեգործութիւն, պատուախնդրութիւն, ծանրօրէն կը քննադատուէին աղջիկը կանուխ տարիքին ամուսնացնելու, օտարի տալու, շահադիտական առուծափի առարկայ դարձնելու երեւոյթները, օտար բարքերն ու քաղթենիութիւնը, սիրոյ մէջ խաբէութիւնն ու անպարկեշտութիւնը, կը ծաղկուէին կենցաղային որոշ արատներ՝ բոզութիւնը, գողութիւնը, բամբասանքը, չարախօսութիւնը, թրքախօսութիւնը, արտագաղթը եւ այլն: Խաղիկները կ'արտայայտէին շրջանին մէջ տեղի ունեցած տնտեսական եւ ընկերային փոփոխութիւնները: Ծարեր կը հիւսուէին խաչեղբօր, փեսացուին, յայտնի մարդոց մասին: Ասոնք երգիծական բնոյթ կ'ունենային: Ամենէն հետաքրքրականը **բանակոռ-ւային շար**ն էր, ուր երկու մենակատարներ կը վիճէին իրարու հետ, ձեռք կ'առնէին գիրար: Հոս կ'երեւէր շար հիւսելու իրենց կարողութիւնը¹⁷:

Պարերգները ընդհանրապէս բարբառով էին: Կային նաեւ թրքերէն պարերգներ, թրքերէն շարողներ, նաեւ հայերէն պարերգներ «**Սուաեար**», «**Իմ Չինարի եարը**» եւ այլն: Պարերգները կը շարունակուէին մէկը միւսին ետեւէն: Առաւօտեան դէմ, երբ ժողովուրդը կը նօս-

¹⁷ Քեսապի ժողովրդական խաղիկներու մեր հաւաքածոն տե՛ս **Յ. Չոլսպեան**, Քեսապ, Բ. հատոր, էջ 277-315:

րանար, շուրջ պար բռնողները կը կատարէին «**Մէկ, Երկու, Երեք**» պարերգը¹⁸, որ կը նշանակէր՝ վերջ, ա՛լ լ բան չմնաց երգելու:

7) **Յարսանեկան ճաշ ու խնճոյք**.- Շաբաթ կէսօրին փեսացուն ի բոլոր հարազատները կը հաւաքուէին: Պնակներով կը հրամցուէր հարսենական ճաշը՝ հերիսան, միս-ոսկորով հատուբիան կամ սոխապուրը բրինձէ փիլաով: Յերիսային պնակին վրայ կը դրուէր շերտփմը դաւուրմա: ճաշը նոյն բծախնդրութեամբ կը բաժնուէր դուրսը վազվզող պատանիներուն ու փոքրերուն, երիտասարդներուն, կանանց եւ աղջիկներուն: Յարս բերելը դիւրին պիտի չըլլար, ուրեմն՝ կերէ՛ք: ճաշէն ետք ալ կը շարունակուէր գինարբուքը: Ոմանք օղիի շիշերը ձեռամբարձ՝ բակին մէջ կը պարէին: Անոնց կը հրամցուէր սուխմիկով դաւուրմա, տապած կամ խորոված գլոր: Մեծերուն սուրճ կը հրամցնէին: Կը սկսէին պարն ու շուրջ պարը:

Յարսնեւորները իրենց լաւագոյն տարազները հագած կ'ըլլային:

8) **Փեսան հագցնելը (վիսան սե'զգիլը)** .- Փեսացուն եւ խաչեղբայրը (**աղբըրքեր**) հագած կ'ըլլային **ասեղնագործ շապիկ**, իսկ վրան շրջագգեստ՝ **ճիւլափ** կամ մետաքսեայ **զուարէն (հինսիէ)**, կարմիր երկարավիզ կօշիկ՝ **ճիզմու**: Երիտասարդները «տօս-տօս»երով զանոնք դուրս կը բերէին հագուստի վերջին ծիսակարգը ընելու: Տակաւին երկու կտոր հագուստ երիտասարդները պէտք է հագցնէին՝ «**անէմ**» կարմիր գօտին, «**կատիֆէ ելէկ**»ը (**իշլէկէկ** կամ **չուխա ֆերմանա**)՝ բաճկոնակը: Երիտասարդներու խումբը կ'երգէր «**Չարթի՛ր, Որդեակ**» հայրենասիրական երգը: Փեսացուն գօտին եւ չուխա ֆերմանին պէտք է եիկիտապաշին հագցնէր, իսկ խաչեղբօրը՝ մէկ ուրիշը: Երգին առաջին տունէն ետք անոնք երեք անգամ գօտին կը դարձնէին փեսային եւ խաչեղբօր գլխուն վերեւ, մինչ երիտասարդները երեք անգամ կը կրկնէին «**Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի**»): Երկրորդ տունէն ետք նոյն ձեւով կը կատարուէր չուխա ֆերմանայի տարազումը:

¹⁸ Այս եւ միւս բոլոր պարերգները տե՛ս նոյնը էջ 489-528; Գ. հատոր, էջ 542-543:

«Չարթի՛ր, Որդեա՛կ» հայրենասիրական երգով փեսան հագցնելը Քեսապի հարսանիքներուն ամենէն հանդիսաւոր արարողութիւններէն մէկն է: Այդ երգով ընտանիքի կազմութիւնը ազգային պարտակալութիւն կը դառնայ: Ծերերը չէին յիշեր, թէ նախապէս ի՛նչ երգով կը կատարուէր այդ ծեսը:

1920-ական թուականներէն ետք պաշտօնական տարագր դարձաւ քութիւմը: Փեսան հագցնելու ծիսակարգը կը շարունակուի: Երիտասարդները նոյն կարգով կը հագցնեն փողկապն ու ժաքէթը:

9) **Յարսը հագցնելը**. - Փեսացուն խումբ մը կանանց ու ծերերու հետ կը մեկնի եկեղեցի ու հոն կը սպասէ, մինչ հարսնեւորները թափօր կազմած՝ երգերով, տառուլ-գուռնայով կ'երթան հարսը բերելու: Որքան կը մօտենան խնամիենց տան՝ հրացանաձգութիւնը, երգն ու կանչերը այնքան կ'աւելնան: Բակը մտնելու նախ կիները կ'ելլեն հարսը հագցնելու, մինչ հարսերը, երիտասարդներն ու այրերը շուրջպար կը բռնեն շարք մը պարերգներով: Անոնցմէ առաջինը կ'ըլլայ «**Ախջէօր մը, եանաեանա**»¹⁹: Յարսնեւորները յոգնած են, ջուր կ'ուզեն: Առիթ կը տրուի, որ վերը հարսը հագցնեն: Յարսնունս իրեններուն օգնութեամբ մազերը արդէն յարդարած, կապոյտ շապիկին վրայ **կարմիր ճիւղիկ** (շրջագեստ) կամ **կարմիր աղա ֆըստանը** (կանացի միակտուր հագուստ) հագած կ'ըլլար: Յարսնեւոր կանայք եւ աղջիկներ «լու-լու» կանչելով ներս կը խուժէին: Յարսը բոսիկ ոտքերով կը նստեցնէին մէջտեղը ու կ'երգէին բաժանումի տխուր երգեր: Կ'երգէին հայերէն ու թրքերէն երգեր: Աղջկան մերձաւոր կանայք ողբի եղանակով բարբառով խաղեր կը հիւսէին (ասիկա **աբ'րիլ**՝ պարել կը կոչէին):

Յետոյ խումբը կը սկսէր երգել «**Ըրէ Ինձ Յալալ**» երգը²⁰, ուր մեկական համար նուիրուած է հօր, մօր, քրոջ ու եղբօր: Առաջին տունէն ետք աղջիկները **արծաթե գօտի**ն երեք անգամ կը դարձնէին հարսին գլխուն՝ երեք անգամ կրկնելով «**Աստուօժ շնըֆըրի**», ապա յաջորդ տուներուն՝ կարգով կը հագցնէին ճերմակ բաճկոնակը (**շալ է ե-**

¹⁹ Երգը տե՛ս **Յ. Չոլսթեան**, Քեսապ, Բ. հատոր, էջ 517-518:

²⁰ Երգը տե՛ս **Յ. Չոլսթեան**, Քեսապ, Գ. հատոր, էջ 531:

լ էկը), **շըքքէ** կոչուող կարմիր գլխարկն ու **շէրէ** կոչուող մետաքսեայ գունաւոր թաշկինակները, հուսկ՝ դեղին մոյկը՝ **ճիզման**: Արծաթե գօտին կը կապէր հայրը, շալ է ել էկը՝ կը հագցներ մայրը, շըքքէն ու շէրէները՝ քոյրերը, դեղին ճիզման՝ եղբայրը: Այս ծիսակարգը կը կատարուէր կանչերով, լացով, գրկընդխառնու մով:

1920-ական թուականներուն հարսի տարագը հիմնովին փոխուեցաւ: Անոր մէջ դեր ունեցած էին Արեւմուտքի հետ տեղացիներու շփումները: 1950-ական թուականներէն ետք հարսին հագուստը հագցնելու ատեն կ'երգեն «**Յարս եմ Գնում**» երգը: Հագցնելու ծիսակարգը նոյնը կը մնայ, սակայն առանց ողբի: Նոյն արարողակարգով կը հագցնեն հարսանեկան նոր զգեստի մասերը՝ թագը, քօղերը, գօտին ու կօշիկները:

10) **Հարսնառը**.- Հարսը հագցնելէ ետք տղուն կողմի կանայք դուրս կ'ելլեն: Խնամին ալ կը յայտնուի դրան շեմին: Հարսնեւորները կրկին կը բռնեն շուրջ պարու կը կատարեն «**Խնամա**» պարերգը: Պարերգի մենակատարները կը հիւսեն խնամին գովաբանող խաղիկներ: - Մարդիկ կը քաջալերեն պարողները՝ զգուշացնելով, որ կրնայ խնամին հրաժարիլ աղջիկը յանձնելէ: Կատակները կը շարունակուին: - Նոր պարերգներ կը կատարուին: Երկու կողմի մարդիկ երգի ու պարի մէջ թատերական խօսակցութիւն մըն ալ կը զարգացնեն: Փեսացուն կողմէ մարդիկ հարսնցուն առնել երթալ կ'ուզեն, կը շտապեցնեն, միւս խումբի մարդիկ «**Ի՞նչ է, գետնէ՞ն գտաք, այ դալս առնել չ'ըլլար, ո՞ւր է ձեր շնորհքը**» կ'ըսէին: Շնորհքը երգի ու պարի մէջ էր: Ու յանկարծ լուր կու գայ, որ հարսը դուրս կ'ելլէ: Դուռը սպասող երկիտաքիս եւ խումբը «**մէջալլահէ՛ յ հէ՛ յ**» կը կանչեն, հրացաններ կ'որոտան: Հարսնցուն կ'երեւի երկու կիներու ընկերակցութեամբ: Նոր պարերգ մը կը սկսի. «**Հոլօս, Հոլօս**» յուզիչ պարերգը: Ձին կը բերեն շուրջ պար ընող տղոց շրջանակին մէջ: Շուրջ պարը կը կենայ, մինչ երգը կը շարունակուի քանի մը խաղիկով ու ծափով, մինչեւ որ հարսնցուն դնեն ձիուն վրայ: Եղբայրը կը բռնէ ձիու պախուրցէն, միւս կողմը կը կենայ խաչ եղբայրը: Հարսնքոյրերը երկու կողմէն կը բռնեն հարսին ոտքերը:

Չուռնաճին կը փչէր հարս տանելու եղանակը՝ հարսնառը²¹: Եկկիտպաշին դեմքը երիտասարդներուն ու հարսին՝ թելերը թափահարելով ետեւ-ետեւ կը քալէր: Իր եւ երիտասարդներուն միջեւ բացուած տարածութեան մէջ ուր-մուր մենապարեր կ'ընէին շատերը: Յարսնառի պարը կրնար կատարուիլ քանի մը անգամ: Կը կատարուէին նաեւ հայ երէն ազգային երգեր: Ճամբան կիները կը վազէին տուները ու պատշգամներէն ու տանիքներէն հատիկ կը թափէին հարսին վրայ: Յրացաններ կ'որոտային: Թաղին տղաքը կը կտրէին ճամբան, պարանով կամ գիրար թելանցուկ բռնած: Անոնք **թաշճըլըք** (տանողչէք) կը պահանջէին: Կը կատարուէր անխուսափելի հրմշտուք: Խաչեղբայրը բուրդին ներկայութեան կը խոստանար անոնց տալ ոչխար մը, թիթեղ մը օղի կամ դրամ: Ճամբան կը բացուէր շնորհաւորութիւններով:

Ներկայիս հարսնառը կը կատարուի ծաղկազարդ ու ճերմակինքնաշարժով: Յարսնառի ինքնաշարժերու կարաւանը կրնայ երկար ըլլալ: Չենքի ու պարերգներու փոխարէն կը գործեն ինքնաշարժներու շջակները:

11) **Պսակը**.- Յարսնեւորները եկեղեցւոյ մօտենալուն պէս եկեղեցւոյ կոչնակը երկարօրէն կը հնչէր, կը դադրէին երգն ու պարը, կանչերն ու հրացանածգութիւնը: Եկեղեցւոյ բակը սպասող փեսացուին հետ կը կատակէին անոր հարազատները. տակաւին հարսը ձիուն վրայ է, ի՛նչ կրնայ պատահիլ՝ ո՛վ գիտէ. **«Յուօրսը ձիէօն, գըսմադը օ՞մ»** (հարսը ձիուն վրայ, բախտը որո՞ւն կ'ըլլայ):

Յարսը եկեղեցի կը մտնէր իր եղբօր հետթելանցուկ: Փեսան եկեղեցի կը մտնէր խաչեղբօր հետ: Երիտասարդներ կը հրմշտկէին, ասեղով կը խողտէին փեսային մարմինը, գաղտնօրէն կը տփոցէին ետեւէն: Պսակը կը կատարուէր: Եկկիտպաշին եկեղեցւոյ կոչնակը երեք անգամ կը զարներ՝ տանգ տանգ տանգ, իբրեւ սգոյ նշան. ճահիլները կ'ըսէին. **«Աս իլի մառռուօվ, սրբիցէք զանէօնը»** (Այս մէկն ալ մեռաւ, ջնջեցէ՛ք անունը), իսկ ահիլները կ'ըսէին.

«Էսիւրնալ աֆօրքը ինկուօվ,

²¹ Յարսնառի եղանակն ու պարը տե՛ս **3. Չուլ սրեան**, Քեսապ, Բ. հատոր, 488-489:

Ասոր ալ գդակը ինկաւ ,

Ըղուօվ ալ ըննէս պարասուօր:

Եղաւ բոլորիս հաւասար:

Պսակէն ետք տղուն հարսնելորները հարսնու փեսան կը տանէին փեսային տունը, իսկ հարսին հարազատները կը ցրուէին, ամէն ոք իր տունը:

Երկայիս պսակադրութեան կը մասնակցին խաչեղբայրը եւ - հարսնքոյրը: Փեսան եկեղեցւոյ դռնէն աղջկայ հօր կամ եղբօր թեւէն կ'առնէ հարսը ու կը յառաջանայ դէպի խորան: Պսակէն ետք երկու կողմի հարազատները հարսնու փեսային կողքին կեցած շնորհաւորութիւններ կ'ընդունին: Հարազատներ իրենց զարդեղէն նուէրները - կը յանձնեն հարսին:

12) **Հարսը տուն բերելը.**- Եկեղեցիէն ելլելով հարսնու փեսան կը նստէին առանձին ձիերու վրայ . խաչեղբօր ձին առջեւէն կ'երթայ : Հարսնելորները երգով, պարով ու նուագով կ'ուղղուէին դէպի փեսային տունը: Եկեղեցւոյ բակէն մինչեւ տուն առջեւէն պարելով կ'երթար փեսային հայրը՝ մանուկներու ընկերակցութեամբ: Ան ատով իր ուրախութիւնը կ'արտայայտէր. տղան տուն-տեղ ըրած էր, ամուսնացուցած, հարսնու փեսան իր բացած նոր տունը կ'առաջնորդէր: Ան կը ծափահարուէր բարձրաձայն քաջալերանքով:

Տան առջեւ կը կատարուէին հետեւեալ ծեսերը.

- Փեսային մայրը խնկամանով կ'ելլէր դիմաւորութեան, կ'օրհներ ամուլը ու մխացող խնկամանը դէս ու դէն պտտցնելով կ'առաջնորդէր տուն: Այս ծեսով ան չարքերը կը վանէր:

- Տան սեմին հարսնելորները **գէնկընլիք** (հարստութիւն) կը պահանջէին հարսին համար: Կեսրայրը հարսին կու տար կով մը, երինջ մը կամ երկու այծ, որոնք նոյն հօտին մէջ կը մնային, բայց կը նկատուէին հարսին սեփականութիւնը: Միւս ազգականներն ալ կու տային ձագմայր մը ճուտիկներով, քանի մը վառեակ, ծնանելիք կովուսն հորթուկը, ձիթենի, թթենի, դափնի կամ այլ ծառ մը:

- Հարսնու փեսան ձիէն իջնելով կը մօտանային դրան: Հոն հարսը նուազ մը կը զարներ գետին: Առաջին հարուածին ջարդուելու պարա-

գան բարեբաստիկ կը նկատուէր: Ծախահարու թիւններ ու բացագանչ-
ու թիւններ կ'ըլլային:

- Դրան մուտքին խաչ եղբայրը մանր մետաղադրամներով ու շա-
քարներով լեցուն փարչ մը նետելով կը փշրէր հարսին ոտքերուն ա-
ռջեւ: Մանուկներ գիրար կը հրմշտկէին մետաղադրամներն ու շա-
քարները հաւաքելու համար:

- Տան մէջ հարսը կարգով կը համբուրէր սկեսրոջ, սկեսրայրին
ու տան միւս աւագներուն ու ազգականներուն ձեռքերը: Կեսուրն ու
ազգական կիներ հարսին կը յանձնէին իրենց նուէրները՝ զարդե-
ղէն, սանրեր, ծամակալներ... Ասոնց մէջ կ'ըլլային ոսկիէ ու արծաթէ
ապարանջաններ, վզնոցներ, օղեր, ճարմանդներ, ճակատակալներ եւ
այլն:

- Խնճոյքը կը շարունակուէր: Կեսուրը կը պարէր: Պարի ատեն
անոր գլխուն մաղ մը կը դնէին:

Մեկնողներուն վերջին մաղթանքը կ'ըլլար.

- **Շընըֆուր ըննու, մէիէկ բարձը մընաք, թէն իլ ան փուտու օտը ա-
նճաթըղ բիժնիս ըզձի** (շնորհաւոր ըլլայ, մէկ բարձի մնաք, թին ու
փետաւոր միայն թող բաժնեն ձեզ):

Ներկայիս այս ծիսակարգը ամբողջապէս վերացած է: Հարս ու փե-
սան տուն կ'երթան, յետոյ հարսանեկան խրախճանքի կ'իջնեն: Պսակէն
ետք բոլորը, հարսին ու փեսային հարազատներն ու հրաւիրեալները
կ'ուղղուին ճաշարան մը՝ հարսանեկան խրախճանքին մասնակցելու:
Կ'ըլլան կերուխում, երգ ու արդիական պարեր, երբեմն կը կատարու-
ւին հին երգերն ու պարերգները: Ոմանք իրենց զարդեղէն նուէր-
ները կը յանձնեն հարսին ու փեսային, իսկ դրամական նուէրները -
կը դրուին նորապսակներուն կից դրուած արկղի մը մէջ:

13) **Ճեհիզը բերելը**.- Նոյն օրը երեկոյեան հարսին եղբայրն ու
կնքահայրը մէկ-երկու ուրիշներու հետ կը բերէին հարսին հայրակ-
ան օժիտը՝ ճեհիզը, էշերու կամ ջորիներու վրայ բեռցած: Փեսային
մօտիկ երիտասարդներն ու եիկիտպաշին կը սպասէին այս ժամուն ու
ձեռք կը դնէին թանկագին բեռին վրայ: Ասոնք հարս բերողէք կը
պահանջէին: Փեսան բան մը կը խոստանար՝ թիթեղ մը օղի, ուլ մը, դր-

ամ եւ այլն:

Երիտասարդները կը ցրուէին:

Ներկայ իս հայրական օժիտը հարսնցուն տունը կը տանի անձամբ՝ պսակէն քանի մը օր առաջ:

14) **Յաճճիկ ուսէլը.** - Գիշեր չեղած՝ խաչ եղբայրը փեսան իր տունը կը տանէր: Մինչեւ Կիրակի իրիկուն ան փեսան ազգականներու տուները կը պտտցներ անուշեղեն կերցնելու: Յատկապէս կը կերցնէին **հաճճիկ**՝ իւղով, շաքարով, հաւ կիթով եւ ալ իւրով պատրաստուած քաղցրեղենը: Կը շնորհաւորէին ու յաջողութիւն կը մաղթէին անոր, մինչ հարսը կը մնար խաչ եղբօր կնոջ հետեւ օժիտը կը դասաւորէր, անկողինը կը շտկէր, վարագոյրները կը կախէր, բարձերուն, վերմականերուն եւ անկողինին ծածկոցները կ'անցըներ: Այս ընթացքին՝ խաչ եղբայրը կամ տարեց ազգականները՝ փեսային, իսկ հարսնքոյրն ալ հարսին ամուսնական գաղտնիքներ կը բացատրէին:

15) **Առագաստմանէլը.** - Կիրակի իրիկուն փեսան գիւղի քահանային հետտուն կը վերադառնար: Դրան առջեւ մայրը կը դիմաւորէր որդին: Քահանան փեսան կը մտցներ հարսին սենեակը, հարսին գլուխէն կը վերցներ նարօտը (**հարսքօյը**) ու կ'օրհներ նորակազմ ընտանիքը: Երկուշաբթի առաւօտուն կեսուրը կը մտներ նորապսակներուն սենեակը, աչք մը կը նետէր առագաստի անկողինին վրայ ու գոհ կը մնար, եթէ ճերմակ սաւ անին վրայ արեան քանի մը հետքեր տեսներ:

Այսօր բոլորովին դուրս դրուած է այս ծիսակարգը: Պսակէն ետք նարօտը կը հանուի, գոյգերը խրախճանքի կը մասնակցին ու անկէ մեղրալուսնի կը մեկնին:

Դ.- Նորակազմ ընտանիքը.

1.- **Նորահարսը տան մէջ.** - Կինը ամուսնոյն տան մէջ մերձաւոր աւագներուն կողմէ կը կոչուի **հուօրս** կամ **հարսնա** բայց աւելի շատ, կեանքի ամբողջ տեւողութեան, կը ճանչցուէր կամ կը կոչուէր իր հայրական մականունին արմատով՝ **Մանճա** կամ **Մանճա հուօրս**, **Չահողուօր աղբրկէն**, **Չիւրկէկ նանար**, **Գալ ամտար պտուօվ** կամ գիւղին կամ քաղաքին անունով՝ **Էրզրումցը նանար**, **Պաղցը հուօրս**, **Պաղտաացը**, նոյնիսկ ազգութեան կամ յարանուանութեան անունով՝ **Թաթօկ** -

Նանար, Արաբկ հոլօրս, Յոլոնոլմ հոլօրս, Կաթոլլ աեւ այլն: Ամուսինը կը դիմեր կնոջ առանց լրացեալի՝ **Մանճա Չահ-դոլօր** եւ այլն:

Հարսը կեսուրին կը դիմեր **մումե** կամ **մայրիկ** ձեւով, կեսրայրին՝ **տե'տե** կամ **հայրիկ** ձեւով, տագրոջ՝ **տե'գրե'րիվ** (տագր-արեւ), մեծ ներոջ՝ **վե'րաղսկէն**, տալին՝ **տալ տղկէն**, ներին՝ **նարտղկէն**:

2.- **Առջընգօրք** կամ **առջընգոլօրք**.- Ասիկա ամուսնութեան յաջորդ Ուրբաթ առաւօտ հարսին առաջին այցելութիւնն է հայրական տուն: Բառին երկրորդ բաղադրիչը **գոլրիլ**՝ այցելել բառին արմատն է: Սովորաբար կեսուրը, տալը, ները կամ ամուսինին մօրաքոյրը կ'ընկերային անոր: Հարսը նուերներ կը տաներ ծնողքին ու ընտանիքի միւս անդամներուն՝ գուլպաներ, թաշկինակներ, հագուստցու, հօր համար՝ համրիչ, ճերմակեղէն: Ընկերակիցները ճաշի կը մնային, ապա կը վերադառնային տուն: Հարսը կը մնար հօրանց տուն: Երկու օր ետք փեսան կու գար կինը վերցնելու, աներոջ հիւր ըլլալու: Կրնար հոն գիշերել, եթէ հեռու գիւղէր: Այդ օր փեսային անպայման դիմապուր կը կերցնէին:

Բաժանումի պահուն հայրը աղջկան **մարաս** (ժառանգութիւն) կու տար՝ ընկուզենի մը, թթենի մը, թզենի մը, մեկ-երկու ձիթենի, դափնիի օճախ մը: Ծառը քանի կ'ապրեր կամ ետ կը նորոգուեր՝ կը մնար հարսին կամ անոր ժառանգներուն: Կը պատահէր, որ հողը տէր կը փոխէր, բայց մարասը կը մնար անձեռնմխելի:

Փեսան աներոջ կը դիմեր **ամմա** (հօրեղբայր), իսկ զոքանչին՝ **աղբըրկէն** (բառացի՝ եղբօր կին) անուսով:

Ասկէ ետք հարսին հայրական տուն այցելութիւնը յաճախ կ'ըլլար: Փեսան այդ կողմերը տեսնողները կ'ըսէին. «**Հաւ կոլօյթ ու տիլը իկի հա**» (հաւ կիթ ու տել ու եկար հա): **Աղբըրկինը** փեսային ձուածեղ կը կերցներ:

3.- **Հարստես**.- Տղուն մօտիկ ու հեռաւոր ծանօթները հարս տեսնելու կու գային առջընգօրքէն ետք: Կը տէւեր մեկ-երկու ամիս: Կիները նդհանրապէս կը բերէին խոհանոցին պիտանի բան մը՝ պղնձէ, կաւե ու ծեղէ ամաններ: Հարսը կը համբուրեր տարեց կիներու ձեռքը ու բարեմաղթութիւններ կ'ընդունէր:

Յարստեսի կրնայ ին գալ նաեւ փեսայ ին բարեկամները՝ բերելով պարկ մը ցորեն, արմտիք, շալ վար մը, գլխարկ, ապա, կամ կաթնտու ալ ծմը: Դրամ տուողներ ալ կ'ըլլայ ին:

4.- **Ճննդաբերութիւն.** Յղութիւնը ծածկախօսաբար կը տարածուէր գիւղին մէջ. «**պատղվուրի**» (պտղաւորէ), «**ըրկըքքէքի**» (երկու հոգիէ), «**մէօյը մտիր է կէ'րուսը**» (մուկը կարասը մտեր է): Յղութեան շրջանին կինը յատուկ խնամքի տակ չէր դրուէր. թոնիր կը մտներ, շալակ կը տանէր, աղբիւրէն ջուր կը բերէր, քաղհանի կ'երթար եւ այլն: Կ'ըսէին, որ կնոջ աշխատանքը կը դիւրացնէ ծննդաբերութիւնը: Կը պատմեն, թէ արտը քաղհանի կամ լեռը ցախի գացած կիներ մանուկով կը վերադառնային: Երբ վիժումի դէպքեր պատահէին՝ կ'ըսէին «**Յուօսը իսգիրի գաթողը**» (Յարսը ձգեր է պտուղը):

Յղութեան ատեն՝ ապագայ հայրը պատրաստել կու տար օրօրոցը, որուն ատաղձը նորածինին հօրական մեծ հայրը կը տրամադրէր, իսկ բուրդէ անկողինն ու փետուրէ բարձը՝ հօրական մեծ մայրը:

Ճննդաբերութեան ատեն տունը կ'ըլլայ ին կեսուրը, քանի մը տարեց կիներ: Յարսին մայրը բերել կու տայ ին: Ծնունդը ընդունողը անապշտօն կամ վկայ եալ դայ եակ մը կ'ըլլար: Ան **մինծմար** կամ **տէ'տիմար** կը կոչուէր: Ան կը կտրէր պորտը ու կը լոգցներ նորածինը: Ան հօրը կու տար աւետիսը, «լոյս աչքդ, շնորհաւոր ըլլայ». եթէ «ընկո՛յ գբեր» ըսէր՝ ծնունդը մանչ էր, եթէ «լոխո՛ւ մբեր» ըսէր՝ ուրեմն ծնունդը աղջիկ էր: Ընկոյզը կամ լոխումը կը բաշխուէր իբրեւ **քառսանէք**: Այդպէս կը կոչուէր զաւկի ծնունդի առթիւ բաշխուած քաղցրաւ ենին կամ չիրեղէնը: Եթէ աղջիկ զաւակ էր՝ աւկանջը կը ծակէին եւ մոմած դերձան կը կապէին անցքին: Օղը կը դնէին երկու տարեկանէն ետք: Մանչ զաւակը տան սիւնը կը նկատուէր, նորածիլ մորջը, իսկ աղջիկը՝ շաքարով փախլաւ ան: Առաջին զաւակին մանչ ըլլալը ամեն ոք կը փախաբէր: Մանչը մէկ հատիկ պէտք չէ մնար, անպայ ման եղբայր մը կը սպասէին:

Յօրական մեծ հայրը եւ հայրը չմկրտուած մանուկը չէին գրկեր: Քառասունքէ ելլելէ ետք անմիջապէս կը մկրտէին: Կը հաւատային, որ մկրտութիւնը բուժիչ խորհուրդ մը ունի:

Քառասունքը չել ած կնկան **դուղե'ցկու** կ'ըսէին: Կեսրայ րն ու կնքահայ րը անոր ձեռքէն քառասունքի ընթացքին բան չէին ուտեր, այդ տունը օտար մարդ չէր մտներ: Յարսին մայրը եւ կեսուրը տնային գործերուն ձեռք կու տային:

Նորածինին անունը հօրական մեծ հայրը կամ մեծ մայրը կ'որոշէր, անդրանիկ մանչը՝ հօրական մեծ հօր, իսկ աղջիկը՝ հօրական մեծ մօր անունով կը կոչէին: Եկեղեցական տօներուն ծնածները կը կոչուէին համապատասխան սուրբերու անունով: Բողոքականութեան եւ լատինականութեան մուտքէն ետք շատ տարածուեցան Սուրբ Գրային անուններու անգլերէն ու ֆրանսերէն տարբերակները՝ ճորճ, ճոզէֆ, Փոլ, ճանի, Ժան եւ այլն. աւելի առաջ բարբառին մէջ տեղ գտած էին արաբերէն համարժեքները՝ Յաննա, Եագուպ, ճըրճի եւ այլն:

Քեսապի կանայք բազմազաւակ էին, միջին թիւը 5-8 զաւակ էր: 12-18 փոքր յղացող կիներ շատ կային²²:

5.- Մանուկի դաստիարակութիւնը. Մանուկի առաջին մէկ տարուան մէջ մօր չափդեր ունէր հօրական մեծ մայրը: Ամէն քայլ ափոխի մեծ մօր խորհուրդը կար, ան ներկայ էր մանուկի լոգանքին, օրօրոցին ու խաղին մէջ: Դաշտային աշխատանքներու ընթացքին մանուկը լրիւ կը յանձնուէր մեծ մօր խնամքին: Քանի մը տարեկան եղած մանուկները աւելի շատ ժամանակ կ'անցընէին մեծ մօր ու մեծ հօր հետ: Մանուկը պէտք է սիրէր մայրը, վախճար հօրմէն ու յարգէր մեծերը: Պզտիկ մը սաստելու համար «Գնա՛ մօրդ» կ'ըսէին: Մանուկին դաստիարակութեան մէջ մեծ դեր ունէին խաղերը. մեծ մայրը, ապա մեծ հայրը կը շինէին անոր առաջին խաղալիքները: «Պզտիկը խաղով կը մեծնայ, խաղով կը սորվի» կ'ըսէին: Մանկական առաջին խաղերգներն ու խաղերը մեծերը կը սորվեցնէին: Ամէն տարիք ու սեռ իր խաղը ունէր: Խաղի միջոցով փոքրիկը ձեռք կը բերէր մարմնական եւ իմացական որոշ կարողութիւններ ու ճանաչողական մեծ հմտութիւն²³:

²² Ուշացած յղութեան, չբերութեան, մանուկի ծնելու կերպին, զաւակի համար կատարուող ուխտերուն եւ ուխտավայրերուն, մանկանց հիւանդութիւններուն, մկրտութեան հետ կապուած ուխտերուն ու հաւատալիքներուն մասին տե՛ս **3. Չոլսքեան**, Քեսապ, Բ. հատոր, էջ 60-64:

²³ Քեսապի օրօրոցայինները, մանկական խաղերգներն ու հանելուկները տե՛ս Նոյնը, էջ 316-337:

Քեսապի փոքրիկները հայրական մեծ մօր **նանար** կ'ըսեն, մայրական մեծ մօր՝ **քառմար**, հօր՝ **տե'տե** կամ **տուօտ**, մօր՝ **մար** կամ **մումե**, իր դայեակին՝ **տե'տիմար**, կնքահօր՝ **արօպ** կնքամօր՝ **մում**, կնքահօր քրոջ՝ **պարքուօյր**, մօրաքրոջ՝ **մուրքուօյր**, ասոր ամուսնոյն՝ **մուրքըրար**, հօրաքրոջ՝ **հուրքուօյր**, ասոր ամուսնոյն՝ - **հուրքըրար**, հօրեղբօր՝ **ամմա** անոր տիկնոջ՝ **աղբըրկէն**, քեռիին՝ - **քառա** անոր տիկնոջ՝ **քառկէն**, մեծ աղջիկներուն՝ **լէ'լօ**:

Ե.- Ընտանիքի բնոյ թը.

1.- **Նահապետական փոքր ընտանիք.**- Ինչպէս ցոյց կու տան գերդաստանային թաղամասերու ծագման պատմութիւնն ու ընտանեկան անդուծութիւնները, 19-րդ դարու կիսուն Քեսապի մէջ արդէն տեղի ունեցած էր նահապետական մեծ ընտանիքներու կամ տոհմերու տրոհումը - փոքր ընտանիքներու, թէեւ յատկապէս անտապետական իշխանութիւններ ունեցողները կ'ապրէին նահապետի, այսինքն՝ պարոնի (**պէ'րու**) անմիջական հովանաւորութեան տակ: Նահապետական փոքր ընտանիքը տակաւին այդքան ալ փոքր չէր, կար նահապետը, անոր զաւակները իրենց ընտանիքներով, թոռները եւ ծոռները: Գարատուրանցի Գրիգոր Դաւիթի Սաղտըճեան կը պատմեր, որ իր մանկութեան իրենց ընտանիքին այրերը սեղանի կը նստէին եօթանասուն հոգիով: Միայն Գրիգորի հայրական ճիւղը գիւղին մէջ կը ճանչցուէր **տըրուզ օղլի** անունով, այսինքն՝ ինը մանչերու ընտանիքը:

Նահապետական փոքր ընտանիքի կեդրոնը կը մնար հայրը, որ իր հովանիին տակ կը հաւաքէր իր ամուսնացած զաւակները՝ իրենց ընտանիքներով: Ամուսնացեալ որդիները, անոնց կիներն ու զաւակները տնտեսապէս կախեալ էին հօրմէն, կ'աշխատէին անոր կալուածներուն մէջ, կը վարէին մէկ տնտեսութիւն ու կ'օգտուէին միեւնոյն ամբարէն ու սեղանէն: 19-րդ դարուն կը սկսի զատելու՝ բաժնելու - գործունէութիւնը, այսինքն ամուսնացած մանչը բաժնել ընտանիքէն իր տնտեսութեամբ ու տունով, որ սովորաբար կ'ըլլար հայրական տան կցուած բաժին մը, հասարակաց կը մնային ջրհորը, աղբիւրը, սանդը, պաթօսը, թոնիրը եւ որոշ ծառատեսակներ, ինչպէս ընկուզենիները, դափնուտները եւ այլն:

Գլխաւորաբար հողագործութեամբ ու խաշնարածութեամբ զբաղող գիւղացի ընտանիքին համար ամեն տարիքի ու սեռի համար առատ գործ կար: Որքան աշխատող ձեռք ըլլար ընտանիքին մէջ՝ այնքան առատաբարիք կը հոսէր ամբարներուն մէջ:

Նահապետական փոքր ընտանիքին մէջ գլխաւոր իշխանութիւնը հօրն էր: Զայրը բացարձակ յարգանք կը վայելէր: Զօրտուածը տուած էր, զատածը՝ զատած: Զօր աջ բազուկը երեց որդիին էր: Ամուսնանալու կարգն ալ տարիքով մեծէն փոքրին կու գար: Նոյնն էր աղջկայ պարագային, թէեւ «աղջկայ բախտը չեն սպասեցներ» ըսողներ ալ կային: **«Տիւնէն Չառէն քան մինծ Չէ՛տէ յը եարանջ կու գու»** (Պղտիկ Չատիկը - Մեծ Չատիկէն առաջ կու գայ) ըսելով կ'արդարացնէին կարգի խախտումը աղջիկներու պարագային:

Նահապետական փոքր ընտանիքին մէջ մեծ դեր ունէր խաչեղբայրը (**աղբորքեր**), կը հսկէր նահապետական նիստուկացին վրայ, ներընտանեկան վեճերը կը հարթէր, հոգատար էր նոր կազմուած ընտանիքին հանդէպ ու պարտականութիւններ ունէր անոր զաւակներուն հանդէպ, որոնց կնքահայրն (**արւօայ**՝ պապ) էր: Խաչեղբօր չափ իշխանութիւն կը վայելէր նաեւ մեծ եղբայրը (**վիսաղբար**), որ նաեւ կրնար եղբօր խաչեղբայր ըլլալ: Խաչեղբայրներ զիրար **չըսէն** (արաբերէն՝ քաւոր) կը կոչեն:

2.- Զայրական ժառանգութիւն. - Զայրը իր ամուսնացած մանչը զատելու, այսինքն՝ անկախացնելու պարագան կը կատարէր հետեւեալ կերպ.

- Ամուսնացած տղան իր հայրական տան մէջ մէկ սենեակ կը զբաղեցնէր: Չատելու պարագային՝ հայրը իր տան կից հողակտոր կը յատկացնէր որդիին ու կը մասնակցէր նոր տան շինութեան: Բազմազաւակ ընտանիքի ամուսնացեալ զաւակներուն տուները կը շարուէին քովէ քով, կամ զառիթափի մը վրայ՝ աստիճանածէլ: Այսպէս կը գոյանային գերդաստանական թաղերն ու գիւղերը:

- Զայրը կը տրամադրէր ցորենի եւ արմտիքի արտ, ծխախոտի գետին, պարտէզ՝ ձիթենի, թզենի, թթենի եւ այլ պտղատու ծառեր, որթատունկ, պատառ մը ջրարբի գետին: Ասոնք գիւղական շրջանակներու

մէջ տնտեսութիւնը պահելու հիմնական ստացուածքներ էին: Կենդանիներէն գոնէ երիւնջ մը եւ թուխա մը կը տրուէին: Թոնիրն ու ցախանոցը, աղբիւրն ու ջրհորը կը դառնային ընդհանուր սեփականութիւն:

Կը պատահէր, որ հայր մը իր բոլոր ամուսնացեալ զաւակները - մէկ անգամէն զատեր: Զողերուն բաժանումը կը կատարուէր գիւղապետին (մուխթար), պարոններուն, կնքատօր ու զաւակներուն ներկայութեան: Զայրը կտոր մը կը պահէր իրեն, կնոջ ու տունմնայ աղջկան համար **եմաքլըք** (ապրուստի) ու կը մտնէր մէկ զաւակին, աւանդաբար՝ անդրանիկին, հովանաւորութեան տակ: Ծնողներու մահէն ետք այդ որդին կը ժառանգէր այդ կալուածը: Քրոջ ամուսնութեան պարագային՝ եղբայրը պարտաւոր էր հայրական օժիտը պատրաստել:

Կինն ու աղջիկ զաւակը անշարժ գոյքի բաժնեկից չէին նկատուէր: Զարս եղող աղջկան օժիտին մէջ հողը չէր մտնէր: Մանչ զաւակ չունենալու պարագային՝ կ'որդեգրուէր նոյն գերդաստանէն փոքրիկ մը, գլխաւորաբար եղբօրորդի մը, որ ան ժառանգէր նահապետական կալուածը: Այդպէս չըլլալու պարագային՝ կինն ու աղջիկը ժառանգորդ կ'ըլլային: Տան-փեսայ ունենալու պարագային՝ կը խաթարուէր նահապետական թաղին բնոյթը:

Այրի կինը կրնար վերամուսնանալ: Նոր ամուսինը անոր կալուածները չէր խառնէր իրեններուն: Անոնք կնոջ առաջին ամուսնութենէն ունեցած որդիներուն կը պատկանէին: Չաւակ չունեցող այրի կինը երկրորդ անգամ ամուսնանալու պարագային կը զրկուէր առաջին ամուսնութենէն իրեն հասանելի ք հողերէն:

4.3.- ՏՕՆԵՐԸ

Քեսապի մէջ շարք մը եկեղեցական տօներ կը կատարուէին ժողովրդական տօնախմբութեամբ ու համապատասխան ծիսակարգով: Այդպիսի տօներ էին.

Ա- Նոր Տարի (Նիւր Տարակամ ԿաղուՆա). Նոր Տարուան գիշերուան համար տանտիկինը ամենէն առաջ տան ծխնելոյ զը կը մաքրէր երկար ցախաւելով եւ կրականոցին շուրջը կը փայլեցներ ճերմակ հողի ցե-

խաջ ու բով: Տու նը, թոնիրն ու բակերը մաքրու թիւն կը բուրէին: Ամբարէն կը հանէր թուզի ընտիր տեսակները, չիւրը, չամիչը, պաստեղը, խաղողի «շուճուխ»ը, թուզի «մըլ պի»ն (պաստեղ), ընկոյզը, կը բովէր - բելեկ, դդու մի կուտ, թրջած ցորեն ու սիսեռ, կը խառնէր իրարու: Չոր միրգերն ու բովածը (**գալուրմու**) կը դնէր ծեղէ ամաններու մէջ (**սընտաղբէկ**), մէջտեղ կը հանէր պահուած պտուղները՝ խնձոր, տանձ, նուռ, նարինջ, սերկելիլ, ադամաթուզ: Ասոնք օղիին ու գինիին հետ-Նոր Տարուան գիշերէն սկսեալ սեղանէն անպակաս կ'ըլլային մինչեւ Ս. Ծնունդի երկրորդ շաբաթը:

Նոր Տարուան գիշերը ոչ ոք տու նը կը լքէր կամ ճրագը կը մարէր: Կես գիշերին կը հնչէր եկեղեցւոյ կոչնակը, կ'որոտային հրացանները: Գիւղացիք դուռը կը բանային՝ հին տարուան չարքերը դուրս դնելու եւ Նոր Տարուան բարիքները ընդունելու համար, ապա կարգով կը շնորհաւորէին իրարու Նոր Տարին:

- **Շընըֆուր Նիւր Տէ'րէդ** (շնորհաւոր Նոր Տարիդ):

- **Բէ'րը Նիւր Տարաըննու** (բարի Նոր Տարի ըլլայ):

Փոքրիկները կը համբուրէին հօր ու մօր, նանարին եւ պապուկին ձեռքերը, իսկ անոնք նուէրներ կու տային փոքրիկներուն: «**Կաղիւնտը իբից**» (Կաղանդը բերաւ) կ'ըսէին: Մեծերն ալ իրարու նուէրներ կու տային:

- **Բէ'րը Կաղիւնտըննու, Շընըֆուր ըննու** (բարի Կաղանդ ըլլայ, շնորհաւոր ըլլայ),- կ'ըսէին իրարու՝ համբուրուելով ու ձեռք սեղմելով:

Կաղանդի առաջ օտթաղին պզտիկները, կտաւէ պայ ու սակ մը ուսած, կ'երթային դուռ-դուռ «**կաղընտել**» ու: Այդ օրուան համար շինուած «**դու նդուլ պազա**»ով (թակիչ) կը գարնէին դուռը, կը շնորհաւորէին - ու կաղանդչէք կը հաւաքէին: Պատանիները երկրորդ գիշերը «**կախըսնիլը**» («կախել» բային պատճառակերպը) կ'երթային: Թիթեղէ տու փի մը կանեփէ չուան մը կը կապէին ու գաղտագողի կ'ելլէին տանիք, ծխնելոյզին սալը կը հանէին ու թիթեղէ տու փը կամացուկ մը կ'իջեցնէին վար: Տանտիկինը արդէն պատրաստած կ'ըլլար «կաղանդ»ը: Եթէ նուէրէն գոհ չմնային՝ ափմը աղ կը թափէին փուխերիկն ի վար ու

կը փախչէին: Կայ ծերը կը ճաթռտէին վարը:

Նոր երեւոյթներ են Կաղանդ Պապան եւ Կաղանդի Ծառը: Այժմ Կաղանդը կը տօնեն համատեղ՝ միութեան մը կամ դպրոցի մը կազմակերպութեամբ, ճաշարանի մէջ:

Բ.- Ս. ԾՆՈՒՆՂ (ՏՈՒՆԵՆ ՉԷ՛ՄԵՂ կամ ՊՂՂԱՆԿ ՉԷ՛ՄԵԿ). - Գլխաւոր անուշեղէնը փախլաւ անէր, որ կը պատրաստուէր մեծ արարողութիւններով: Յացեղէնը տեսակաւոր կ'ըլլար՝ բոկեղ, ծոթրինով հաց, ճիֆթով (ծիթապտուղի խիւս) հաց, պանիրով կամ կաթնաշոռով հաց: Ասոնք - Քեսապի թոնիրին բարիքները կը նկատուէին:

Կը մորթուէր մսացուն: Կը պատրաստուէին Ծնունդի գլխաւոր ճաշերը՝ ծեծած միսով **սուխմիկ** (չիքէօֆթէ), **ղավուրմա** (մանրուած սոխարած միս), **գլոր** (քէօֆթէ), զոր կը տապէին ու կը խորովէին: Ծնունդի օրուան ճաշներ մածունով գլորը:

Խթման գիշերը խումբ-խումբ կու գային «Աւետիս» կանչողները: Յետագային այս տաղը կամաց-կամաց մոռցուեցաւ եւ սկսաւ կատարուիլ «խորհուրդ մեծ եւ սքանչելի» տողով սկսող ծննդեան շարակալները: Աւետարանականները կ'երգէին «Սուրբ գիշեր, լուռ գիշեր» թարգմանուած երգը:

Տարագրութենէն առաջ, Խթման գիշերը դեռ սովորութիւն մը կ'ապրէր: Կէս գիշերը անց, երբ լուսաստղը (**ԼՈՒՍՈՒՍՈՒՍՏՂ**) կ'երեւէր, տարեց կիներ տան պատանիները կ'արթնցնէին՝ հին ծէս մը կատարելու համար: Քանի մը տղայ մէկ եղած, բոլորովին մերկաւակով՝ մէկ շունչով կը վազէին մօտիկ ձմեռնային գետակը, կը սուզուէին մաքուր կուփի մը յատակը, անկէ փոքրիկ քար մը կը վերցնէին եւ առանց ետեւ նայելու՝ վազելով կը մտնէին պարտեզու քարը կը դնէին այն-ծառի բունին, որմէ յաջորդ տարի շատ բերք կ'ակնկալէին: Ապա դարձեալ առանց ետեւ նայելու՝ վազելով տուն կը մտնէին: Մեծ մայրը այդ ժամուն կրակը բորբ վառած կ'ըլլար:

- Ապրի՛ք,- կ'ըսէր տղոց,- գալ տարի պարտեզին մէջ առատութիւն պիտի ըլլայ:

Գ.- Տեառնընդառաջ (Տառնտա). - Նախառնակի ժամերգութենէն առաջ՝ թաղերուն մէջ կանչ մը կը փրթէր՝ «**տարնտա՛ ս, տարնտա՛ ս**»:

Ամեն մարդ իր կարողութեան համեմատ ցախու փայտ կը բերեր: Ու խաւար կ'իներ հեռաւոր անտառներէն շալակով ցախ կը բերէին: Նոր փեսաներուն ու փեսացուներուն համար պատուի հարց էր, թէ որքան մեծ փայտ կամ ամբողջ կոճղ մը կը բերեն:

Ժամերգութենէն ետք թափօրը եկեղեցիէն դուրս կ'ելլէր: Կը պատահէր, որ Տեառնընդառաջին ձիւնը ծածկած ըլլար եկեղեցւոյ բակը: Այդպիսի տարին բերքերը առատ պիտի ըլլային: Աւանդաբար՝ խարոյկը վառողները նոր փեսաները կ'ըլլային: Քահանային ազդանշանին վրայ՝ անոնք զիրար հրմշտկելով կը մօտենային ցախակոյտին: Մրցակցութիւնը կը սկսէր, թէ ո՞վ պիտի ըլլայ առաջին «**տառնտառ վառողը**»: 20-րդ դարու սկիզբէն ատիկա աճուրդով սկսաւ ըլլալ: Ծառ դրամ տուողը կ'ըլլար կրակը բռնկցնողը:

Նոր հարսերն ու նոր փեսաները երեք անգամ խարոյկին շուրջ կը դառնային, յետոյ, երբ բոցը կը կարճնար ու քամակ կը ծռէր, փեսաները կը ցատկէին անոր վրայէն, ապա նոյնը կ'ընէին բոլոր երիտասարդներն ու պատանիները, իսկ մանուկները կը ցատկառէին կրակին շուրջ: Ամեն ոք խանձող մը կը խլէր կրակէն կամ մոմ մը կը վառէր. անով տան ճրագը կը վառէին ու կը բռնկցնէին տան կրակը: Եթէ մոմը ճամբան մարէր՝ չարագուշակ կը նկատէին ու անպայման կը վառէին ուրիշի մը կրակէն: Խանձողը մարելէ ետք կը դնէին ցորենին ու կորկոտին ամբարին մէջ կամ կը նետէին այգիին ու արտին մէջ, ծառի մը տակ, որպէսզի ամբարները չպակսին ու բերքը առատ ըլլայ, չարաչք չդախայ: Գիւղացիին ըմբռնումով՝ այդ գիշեր կը վերջանար ձմեռուան «քառասունքը»:

Կիները յաջորդաբար կը վազէին եկեղեցւոյ բակը՝ պնակ մը մոխիր առնելու: Մոխիրը կը տանէին աճու ու կը դնէին հոն ուր դդում պիտի տնկէին: Կը հաւատային, որ այդ մոխիրին մէջ աճած բոյսին դդումը չի վերջանար:

Դ.- **Բարեկենդան (Բե'րկընդաք)**.- Բարեկենդանը հին քեսապիներուն ամենէն ժողովրդական տօնն էր, որուն տօնակատարութիւնը կը տւէր ուղիղ մէկ շաբաթ: Տեսակ մը մարգական տօն էր: Խաղերը կը կատարուէին ամբողջ գիւղական բնակչութեան ներկայութեամբ

ու մեծ հանդիսաւ որով թեամբ ու կը հովանաւ որով էին գիւղին աւազանիին կողմէ՝ գիւղապետ, «պարոն»ներ եւ յատկապէս քահանայ : Խաղերը առհասարակ կը սկսէին կէսօրին ու կը տւէին մինչեւ իրիկուն : Կ'ըլլային փոքրերու, պատանիներու, երիտասարդներու եւ տարեցներու խաղեր : Բազմամարդ ու հետաքրքրական կ'ըլլային երկսեռ ու ամէն տարիքի խաղցող ընդգրկող խաղերը : Յաղթականները կը փառաբանուէին : Խաղերու կատարման ու պարգեւատրման պարագան ունէր ծիսական որոշ կարգ ու կանոն մը, որ այսօր կարելի չէ վերականգնել դժբախտաբար :

Բարեկենդանի խաղերը կը կազմակերպուէին գիւղական հրապարակներուն եւ գիւղամերձ սածիլ անոցներուն մէջ, ընդարձակ տանիքներուն վրայ, աղբիւրին առջեւ եւ այլն : Եզրափակիչ խաղերը կ'ըլլային Կիրակի օրը՝ եկեղեցւոյ մօտիկ հրապարակի մը մէջ : Ասոր կը մասնակցէին միւս բոլոր թաղերուն ու հեռաւոր գիւղակներուն լաւագոյն խաղցողներն ալ : Խաղի հրապարակներ կը դառնային Քեսապի խողը, որ ջրառատջրիհորով մը ընդարձակ ու սեզով ծածկուած հարթավայր մըն էր, իսկ Գարատուրանի մէջ՝ վերի թաղի տուններուն տանիքները : Այս թաղին մէջ կը գտնուէր 1860-ին քանդուած եկեղեցին : Կիրակի օրուան գլխաւոր մարգածեւը նշանառութիւնը կ'ըլլար : Կը կատարէին նաեւ խմբային բազմաթիւ խաղեր :

Բարեկենդանի Կիրակի օրուան երիտասարդական խաղերուն կը մասնակցէին նաեւ ալ եւի, յոյն ու թուրքմէն ըմբիշներ, նշանառուներ, աճպարարներ, լարախաղացներ ու բազմաթիւ հիւրեր :

Խաղերուն առընթեր կը փչէր սրինգը, տեղ-տեղ՝ գուռնան, կը թնդարթմբուկը, ու մէկը միւսին կը յաջորդէին շուրջպարերը : Կիները ուրիշ տեղ պարերգներ կ'ընէին, որուն կամաց-կամաց այրեր ու երիտասարդներ ալ կը մասնակցէին :

Բարեկենդանին համար մսացու մը գիրցուցած կ'ըլլային՝ գամ մը կամ ուլ մը, գոր կը մորթէին շաբթու մէջ : Այդ շաբթ գլխաւորաբար մսեղէն կ'ուտէին : Սեղանը կը զարդարէին տապած գլորով, քիչ-կիկով, փախլաւայով : Կիրակիին գլխաւոր ճաշերը կ'ըլլային մածունով գլորն ու խորովածը : Նոր փեսաները այդ Կիրակի հանդերձ

ընտանեօք աներոջ տունը կ'այցելէին, ուր անոնց միսով դոմապուր կը հրամցնէին:

Բուն Բարեկենդանի գիշերը պատանիներն ու երիտասարդները «**գէ'ջմուօր**» կը խաղցնէին: Երկու երիտասարդներ կը ծպտուէին արտառոց և արթնով, մին արական, իսկ միւսը կանացի կերպարանքով: Ամէն ճիգ կը թափէին, որ հագուստ-կապուստը ծիծաղաշարժ ըլլար: Երեսները կը մրոտէին անճանաչելի ըլլալու աստիճան: Յետագային սկսան դիմակներ գործածել: Երբեմն միայն մէկ հոգի կը ծպտուէր: «Գաշմարը» վիզին անցուցած կ'ըլլար պարապ խխուսջներով շինուած քանի մը վզնոցներ, որոնք ամէն շարժումի ծնծղայի պէս կը հնչէին: «Գաշմար»ներուն ընկերացող տղաք փողոցներուն մէջ թիթեղ մը կամ և աղ մը թմբկահարելով՝ ահագին աղմուկ կը հանէին ու մունետիկի պէս կը կանչէին.

Յէ'ստէ տիկէն,	Յաստէ՛ տիկի՛ն,
Յէ'ստէ տղկէն,	Յաստէ՛ տիկի՛ն,
Փակա չիջնա	Փակի, չիջնէ
Շէ'բթունց շէ'բուօդ	Շարթէ շարթ,
Է'մսունց Է'մէս,	Ամսէ ամիս,
Տէ'րունց տարա	Տարուն է տարի,
Յէ'ստէ տիկէն,	Յաստէ՛ տիկի՛ն,
Յէ'ստէ տիկէն:	Յաստէ՛ տիկի՛ն:

Կարելի չէ եղած մեզի պարզաբանել **հէ'ստէ տիկէն** (հաստէ՛ տիկին) արտա-յայ տու թիւնը. **հէ'ստէ** բառը կը նշանակէ «կռթնիլ, յենիլ, ապաւինիլ կամ ապաւեն դառնալ, հաստիլ»:

Ապածափով կը կրկնէին հետեւեալ պարային կանչը.

- Ղօմարտը գաշմար, դիրանի նագաշմար:

Տնեցիները ծափով ու նոյն յանկերգով կը դիմաւորէին զայն: Ընկերակցողներէն մէկը, դրան առջեւ կեցած, պարեղանակ մը կը փչէր: «Գաշմար»ը կը պարէր հնարաւորին չափ արտառոց շարժումներով: Ծիծաղը կը պայթեր տուններէն ներս: «Գաշմար»ը իբրեւ նուէր կ'առնէր նուշ, ընկոյզ, չիրու չամիչ, նուռ, երբեմն՝ դրամ:

Կերուխումը վերջ կը գտներ, ու կը սկսէր քառասնօրեայ պահե-

ցողուն թիւերը: Կիները նոյն գիշերն իսկ տաք մոխրաջուրով կը լուսային անակեղէնը, որպէսզի իւրին հոտը երթար: Առաւօտուն կլայելը կու գար ու տուներէն կը հաւաքէր պղինձէ անակները՝ կլայել ու համար: Պահեցողութեան շրջանին՝ ճաշերը կը պատրաստէին կաւէ կաթսաներուն մէջ:

Գիշերուն կերու խումբէն ետք տան այրերը կը խաղային «**ըրկան Է՛գէն**» (երկայն ագին) եւ «**ապրտլիլը**» (արաբ. **ապրտ**՝ սեւամորթ, ստրուկ բառէն. մրոտուիլը): Առաջինը իւրայատուկ խաղ մըն էր, զոր կը խաղային միայն այդ գիշեր: Թելով խանձող մը կը կախէին առաստաղէն ու ձեռքերնին ետեւ կապած՝ կը բոլորուէին անոր շուրջ: Խաղը վարողը հրաման կու տար, որ բոլորը միասին փչեն: Ամբողջ շունչով կը փչէին, որպէսզի դեմը գտնուողներուն փչոցին պատճառով խանձողը երեսին չդախար: Փախուստ չկար, անպայման թեթեւ այրուցք մը ունեցող կ'ըլլար: «**Ըրկան Է՛գէն մըտուօվ իքի**» (երկար ագին մէջդ մտաւ) կ'ըսէին անոր: Կը փչէին մինչեւ որ կայծը բոլորովին մոխրանար: Փոքրիկներն ալ նոյնը կը խաղային: Զետաքրքրական է, որ գիշերով կայծերուն հետ խաղալը պատկաներուն արտօնուած չէր, «տակդ կը թրջես» կ'ըսէին, բայց այդ գիշեր կ'արտօնէին: «Երկար ագին» առտուն սկսող Մեծ Պահքն էր:

Երկրորդ խաղը կ'ըլլար անմիջապէս ետք: Սեղանին վրայ մնացած աղը կը թափէին կրակի կայծերուն վրայ: Աղը կը ճաթուտէր՝ կայծեր թոցնելով հոս ու հոն: Տնեցիք հոս ու հոն ցատկելով կայծերը կը մարէին: Այդ ատեն այրերը իրենց կթղայի մնացած օղին կարգով կը թափէին կրակին վրայ: Կարմիր-կապոյտ բոց մը կը բարձրանար, սենեակի կիսամութին մէջ մարդոց դեմքերը կ'այլափոխուէին՝ դեղին-կանաչ գոյն մը ստանալով: Վախազդու մթնոլորտ մը կը տիրէր սենեակին մէջ: Այդ պահուն մէկը լայն անակ մը կը բռնէր բոցերուն վրայ. անակին տակը սեփ-սեւ կ'ըլլար: Յետոյ կը սկսէր մրոտուել ու խաղը. հրմշտկոցներով ու ճիչերով՝ անակը ձեռքէ ձեռք կ'անցներ: Չիրար կը մրոտէին, ձեռք-երես կը մրոտուէր, ամէն ոք «**ապրտ**» (սեւամորթ) կ'ըլլար:

Միջինքին տարածուած ճաշ ատեսակներէին «**սէօտգըլ ուրուօկ**»ը

(սուտ գլորակ), «**լ ը վ է կ է ' ա ֆ օ ր**»ը (լ ու ի կ ապուր), «**ս ը ս ը ռ ու օ ն գ ը լ ո -
լ օ ր**»ը (ս ի ս ե ռ ո վ գ լ ո ր), «**ք է ' մ Է ' ն ու օ ն գ ը լ ու օ ր**»ը (գ Ե տ ն ա փ ն ճ ո ր ո վ գ -
լ ո ր) Ե Լ ձ Է թ ո վ ու ձ աւ ար ո վ պատրաստուած շարք մը «**խ փ Լ տ ա Է կ է ' ա
ֆ օ ր**»ներ (խոտապուր):

Ե.- **Ս. Սարգիս**.- Յատկապէս աղջիկներն ու նշանուած օրիորդները կը բռնէին Ս. Սարգիսի ծոմապահու թիւնը: Ս. Սարգիսը աղջիկներուն - պաշտպան կը նկատուէր ու անոնց բախտ կը բերէր: Բախտաւորութեան գաղափարը ընդհանրապէս կապուած էր այս տօնին հետ: Փոքրիկ տղաքն ու աղջիկները ամբողջ շաբաթը անտառներէն տաշեղներ ու նոր բացուած արտերու քովէն չորրցած արմատներ (**քիւթէքէկ**) կը հաւաքէին Ս. Սարգիսի գիշերու անկրակին համար, որ մինչեւ լոյս պէտք է վառէր:

Այդ գիշեր մայրը կամ մեծ մայրը «**Է' Լ Լ ը Բ աղ ա ր ջ**»ը (անլի բաղարջ) կը պատրաստէր: Ան քիչ մը ալ իւր կը մաղէր, առանց թթխմորի եւ աղի խմոր կը պատրաստէր ու անկէ կը շինէր երկու գունտ: Կը բանար մէկը եւ անոր վրայ հաւասար հեռաւորութեամբ կը շարէր հայրական հարստութիւնները խորհրդանշող նիւթեր, ինչպէս դափնիի տերեւ մը, ձիթապտուղ մը, չամիչ մը, թուզ մը, կտոր մը պանիր եւ արծաթադրամ մը: Ապա երկրորդ բաղարջով մը կը ծածկէր առաջինը ու կեդրոնէն կը շերտէր այնպէս, որ իւրաքանչիւր շերտի մէջ դրուած նիւթերէն - մէկը մնար միայն: Դափնիի տերեւը կը խորհրդանշէր դափնիի անտառը, ձիթապտուղը՝ ձիթաստանը, չամիչը՝ այգին, չոր թուզը՝ պարտեզը, պանիրը՝ կովը, իսկ մանր արծաթադրամը կը խորհրդանշէր հայրական տունը. ասիկա «**տ Լ Լ ու օ ղ**»ն է՝ (տովլաթ), այսինքն՝ բուն հարստութիւնը:

Մեծ մայրիկը սալ քարը կը տեղաւորէր կրակին վրայ, իսկ միւս երեսը կը սրբէր ու վրան կը դնէր «**Է' Լ Լ ը Բ աղ ա ր ջ**»ը: Ոմանք սալը կը ծածկէին լաղով մը:

Այնուհետեւ մեծ մայրիկը պգտիկները անկողին կը դրկէր, թէ, «քնացէ՛ք, որ առտու կանուխ արթննաք, Ս. Սարգիսը իր ձիով ու մտրուկով պիտի գայ՝ ձեր բախտը պիտի բերէ, կանուխ արթնցէ՛ք»: Պգտիկները անկողին կը վազէին:

Մեծ մայրիկը առտու կանուխ կ'արթննար, ընկոյզի **խ Ե վ ո ր**ով (կէս

ընկոյզի պատեանը) քանի մը տեղ կը դրոշմէր (**թաշմիլ**) մոխրին վրայ ու կը կանչէր.

- Վայ ձագուկնե՛ր, ել է՛ք, ել էք տեսէք, Սուրբ Սարգիսը եկեր է - գացեր, վա՛յ ծոյլեր, վա՛յ :

Ու փոքրիկներուն ցոյց կու տար Ս. Սարգիսի մտրուկի «սմբակին հետքերը»:

- Յիմա տեսնենք, թէ Սուրբ Սարգիսը զո՞վ ամենէն բախտաւորը նշանակեր է,- կ'ըսէր մեծ մայրիկը:

Բաղարջը կը հանէին ու ամեն ոք կ'ընտրէր իր բաժինը: Ամեն ոք բանով մը կը բախտաւորուէր: Անշուշտ ամենաբախտաւորը «**տուլ ու Լօդ**» առնողը կ'ըլլար, որովհետեւ հօր գլխաւոր ժառանգորդը կը նկատուէր: Աղջիկներու պարագան կը փոխուէր. եթէ «տուլ ու Լօդ»ը աղջիկներէն մեկուն ինկաւ՝ ըսել է թէ հարուստտուն հարս պիտի երթայ, եթէ պանիրը ինկաւ՝ ըսել է թէ հովիւի հարս պիտի երթայ եւ այլն:

Ս. Սարգիսի առաւօտուն կիները կը պատրաստէին «**աբ'նադրուօն հալ վիկ**» (պանիրով հալ վա), «**հաճճիկ**» (խարկած ալիւրով, իւղով, հալկիթով՝ շաքարաւ ազ ցանած) եւ «**հաճուլ մասու**» (խարկած ալիւրով ու ռուարով) կոչուող անուշեղենները:

2.- Ծաղկազարդ (Ծառզարդուօր).- Տղաք ու աղջիկներ կը հագուէին նոփ-նոր զգեստներ: Ձմեռնային հագուստները կը փոխարինուէին - գարնանայիններով: Ատենին, գիւղական դպրոցներու փոքրիկները - Շաքաթօր (ազատօր էր) խումբ-խումբ կ'երթային ծմակները, լեռնալանջերն ու հեռու արտերը՝ ծաղիկ հաւաքելու: Եօթը բուրաւ էտ ծաղիկներ ու խտեր Շաքաթ իրիկուն կը դնէին ջուրին մէջ: Առտուն այդ ջուրով ձեռք-երես կը լուային: Այս ջուրին «**իւթնիւս**» կ'ըսէին: Լուացուելէն առաջ լաթի մը վրայ եօթը խթա սետ դերձան կ'անցընէին, ապա մնացեալ դերձանը եօթը անգամ կը հանգուցէին ու լաթը պարտեզ կը նետէին: Ասոր «**քօրսդ կըմ կէ'ափլ**» (հանգոյց ընել) կ'ըսէին:

Ծաղկազարդի առաւօտուն նոր փեսաները ձիթնիի ճիւղեր կը բերէին եկեղեցի ու կը զարդարէին եկեղեցին: Եւ երբ քահանան Աւետա-

րանէն կը կարդար «Եւ այլ քոստս ի ծառոց հատանէին» բառերը, ժողովուրդը կը յարձակէր ձիթենիի ոստերուն վրայ՝ ճիւղ մը փրցնելու համար: Եկեղեցիէն բերուած ձիթենիի ճիւղը կը կախէին տան պատին կամ կ'ամրացնէին պատին դրուած նկարի մը շրջանակին ու կը պահէին մինչեւ յաջորդ Ծաղկազարդ: Երիտասարդները երկու տերեւներ իրար անցընելով՝ խաչ կը շինէին ու կ'ամրացնէին իրենց ձախլ ամբակին:

Ծաղկազարդի գլխաւոր կերակրատեսակներն էին **«սըսըռուօն գըլ ուօր»** (սիսեռով գլոր), **«սէօտգըլ ուրուօկ»** (սուտգլորիկ), **«թըթը գըլ ուրուօկ»** (թթու գլորիկ) եւ **«քէ'մէ'նուօն գըլ ուօր»** (գետնախնձորով գլոր):

Է.- Մեծ Չարիկ կամ Յարութեան Տօն (Մինծ Չէ'սէկ). - Չատկուան անուշեղէնին ու խմորեղէնին մէջ առանձին տեղ կը գրաւէր **«կէ'թնուօն բըկիէղ»**ը (կաթով բոկեղը), զոր Շաբաթօր կիները կարգով իրարու ձեռք տալով կ'եփէին թոնիրին մէջ:

Բոլոր տուներուն մէջ յատուկ արարողակարգ էր սոխի կեղեւով հաւ կիթ խաշելն ու կարմրցնելը: Յաճախ սոխակեղեւի ջուրով նոյն կաթսան կը պտտէր տուներուն: Շաբաթ առտու ընէ կը սկսէր հաւ կթամարտը: Մանուկներն ու պատանիները պարզապէս համբերել չէին կրնար: Ամէն ոք գրպանած կ'ըլլար **«ամմօր»** (ամուր) հաւ կիթ մը: Խաշուած հաւ կիթներուն մէջէն ամուրը ընտրելը արարողութիւն էր: Մէկ ականջը մէկ աչքին հետգոցելով հաւ կիթը արագ-արագ կը զարնէին առջեւի ակռաներուն պատին ու ձայնէն կ'որոշէին, թէ պատեանը փտո՞ւկ է, բարա՞կ է, թէ՞ կարծր ու տոկուն: Հաւ կթախաղը Քեսապի մէջ **«կըռնակիլ»** կը կոչուի, բառը հաւ անաբար կու գայ «կռիլ» արմատէն: Ամբողջ շաբաթ մը կը տւէին հաւ կթամարտի տեսակաւոր խաղերը:

Երկու շաբթին Մեռելոց է: Գերեզմանատուները խուսկ ու ծաղիկ կը բուրեն:

Ը.- Վարդալառ (Պալ ու մ, Պարլ ու մ). - Վարդալառը, ինչպէս ամբողջ Քեսապի, այդպէս ալ Անտիոքի, ճսըր Շուղուրի, Լաթաքիոյ շրջակայքի, իսկ 1920-էն ետք ամբողջ Սուրիոյ հայու թեան համար համաժողովրդական ու խոստանալու թեան տօն էր: Ու խոստանալու Պարլ ու մ կը

կոչուէր (նաեւ՝ Պալլում, Պարլամեն): Ուխտավայրի անուկով ալ կը կոչուի տունը: Ուխտավայրը կը գտնուի Քեսապէն շուրջ երկու քիւմեթր հիւսիս, Կասիոսի արեւելեան լանջին, Թեքնեճոք կոչուող փոքրիկ աղբիւրէն ոչ հեռու:

Կասիոս Անտիոքի շրջանի բոլոր կողմերէն երեւցող գագաթ է (1750) մ.: Ան Ք. Ա. երկրորդ հազարամեակին գոյութիւն ունեցող Ուկարիթ քաղաք-պետութեան սուրբ լեռն է: Ուկարիթի մէջ գտնուած բաբելացիներու աստուածներու ցանկին մէջ կը կոչուի Խազի, ուր կը բնակի շանթի եւ մրրիկի աստուած Անաթը, իսկ քանանական աստուածներու ցանկին մէջ կը կոչուի Սաֆոն, ուր կը բնակի դարձեալ շանթի ու մրրիկի աստուած Պաալը: Ուկարիթեան դիցաբանութեան մէջ Պաալ աստուածը լերան վրայ յաղթական կռիւ կը մղէ Եակ-Նահար աստուածուհիին դէմ: Աւելի ուշ՝ Պաալ աստուծոյ եկաւ փոխարինելու Չեւսը:

Միջին դարերուն քրիստոնեայ շրջապատին համար լեռը կը շարունակէ սուրբ նկատուիլ: Հոն կը գործէ վանք մը: Հելենիստական ճարտարապետութեան բացայայտ ոճը կրող աւերակները կը վերագրուին քրիստոնեական տաճարին, որ, ըստ ուսումնասիրողներու, կառուցուած է աւելի հին տաճարական հիմքի մը վրայ, որ Չեւսի տաճարը միայն կրնայ ըլլալ: Լատին դքսութեան շրջանին լեռը վերանուանուած է Պարլերի (Parleri), իսկ վանքը կը յիշուի իբրեւ Abbatian Montis Parleri²⁴: Վանքին բուն անունը չի յիշատակուիր:

Անոր լանջին գտնուող վերոյիշեալ տաճարական համալիրն ալ կը դառնայ Անտիոքի հայոց համաժողովրդական սիրելի ուխտավայրը, որուն անունք կ'ուտան Պարլում կամ Պալլում անունը:

²⁴Հայր Ղեւոնդ Ալիշան կը գրէ. ' ' Եւ միւս եւս վանք՝ որոյ ոչ յիշի սրբազան անուն, այլ կոչի վանք Պարլերոյ լերին (Abbatian Montis Parleri), որ իցէ թերեւս վանքն Պառլահոյ, այն գոր յիշատակեցաք ի թիւս վանորէից Սել Լերանց ' ' (Միսուն, Վենետիկ, 1885, էջ 424): Ալիշանի ենթադրաբար արտայայտած այս միտքը որդեգրելով՝ շատեր նոյնացուցած են Կասիոսի Պալլումը Պառլահոյին հետ: Իսկութեան մէջ չկայ Պառլահոյ անուն վանք մը: Ասորերէն բառը, որ կը թարգմանուի ' ' դրախտ Աստուծոյ ' ', կը տրուի Սել լերան, որ յաչս քրիստոնեաներուն՝ իր բազմաթիւ եկեղեցական ու վանական կառոյցներուն համար սուրբ կը նկատուէր (**Չուսքեան 3.**, Քեսապ, Ա. Հատոր, Հայ Էպ, 1995, էջ 38-39): Կասիոսը կը գտնուի Որոնդէսի գետաբերանին հարաւ ու մաս չի կազմեր Ամանոսեան լեռնաշղթայի Սել Լերան:

Ի դեպ, ուխտավայրի անունը իր այս ձեւով պահուած է միայն տեղացի հայոց մէջ, եւ անալ, լատին պատմիչներու կողմէ յիշուող Abbatian Montis Parleri-ի հետ, կը դառնայ սրբավայրի անուան ու ծագման մասին եղած ուսումնասիրութիւններուն ելակետը:

Ըստ Պարլամի մասին միջնադարուն արաբերէն եւ վրացերէն պատմուած վարքերուն՝ ան եղած է հովիւ, ապա ուխտի գացած է Երուսաղէմ ու վերադառնալով՝ կռուած է Կասիոսի վրայ տիրող սատանաներուն դէմ, զանոնք բանտարկած է քարայրի մը մէջ ու լերան վրայ հաստատած Քրիստոսի իշխանութիւնը²⁵:

Սրբավայրը Անտիոքի շրջանի հայոց ամենէն սիրելի ուխտավայրն էր, ուր կը կատարուէին Վարդավառի ուխտագնացութիւնը եւ տօնակատարութիւնները: Ուխտավայրն ու Վարդավառի տօնակատարութիւնը այնքան սերտօրէն կապուած են իրարու, որ շրջանի հայերը Վարդավառի տօնը նոյնապէս կը կոչեն Պալլու մկամ Պարլում: Սուրբին անունը կու գայ փոխարինելու հայ եկեղեցւոյ տաղաւարներէն մեկուն անունը:

Իրօք, շրջակայքը ապրող ժողովուրդներէն՝ ալեւի, արաբ, քիւրտ, թուրքմէն, հոռոմ, ո՛չ մէկը լերան եւ այս ուխտավայրին հետ կապուած այնքան անդութիւններ ու հաւատալիքներ ունի, որքան հայ բնակչութիւնը:

Վարդավառի ուխտաւոր ընտանիքները հոս կ'ելլէին դեռ Ուրբաթ օրու ընէ, ուխտավայրին շուրջ տեղ կը գրաւէին, կը մաքրէին իրենց տեղը փուշերէ, քարերէ, վրան կը զարնէին կամ շուք մը կը շինէին: Անոնք իրենց հետ կը բերէին ծածկոց, կարպետ, հագուստեղէն, պնակեղէն եւ առատ ուտեստ: Շաբաթ երեկոյեան ուխտավայրը կը

³ **Mésérian, J., S. J.**, Exédition archéologique dans L'Antioche Occidentale, Beyrouth, 1964. p. 61-67: Եր. Քասունի մեծ նմանութիւն կը տեսնէ Եակ-Նահար աստուածուհիին դէմ Սաֆոն լերան բնակիչ Պալլաստուծոյ եւ սատանաներուն դէմ Ս. Պարլամի մղած կռիւներուն միջեւ: Ասկէ ելլելով սուրբին անունը կը նոյնացնէ Սաֆոն լերան Պալլ (Ս. Գիրք՝ բահաղ) աստուծոյ անունին հետ ու կ'եզրակացնէ, որ միջնադարուն Պարնիէ, Պարնոն եւ Պառլահոյ (Վերջինը՝ թիւրիմացաբար կապուած է այս շարքին հետ. Յ.Չ.) անունները աղաւաղուած տարբերակներն են Պալլումի, յառաջացած՝ Պալլ-Բաաղամ-Պարղամ- Պալլում հնչիւնական գարգացումով (**Աբելեան Ա Ս**, Քեսապ եւ իր գիւղերը, Պէյրութ, 2002, տե՛ս խմբագիր Երուանդ Քասունիի ծանօթագրութիւնը, թիւ 9, էջ 147): Այստեղ Պալլ բառին նախ Պարղամ, ապա Պալլում ձեւերու վերածումը համոզիչ չէ, որովհետեւ չեն բացատրուիր ընդէլ եւ ամ>ում հնչիւնական յաւելումները: Անուան պալ (հայոց ԲԷԼ եւ բահաղ) բաժինը հեշտութեամբ կարելի է կապել Պալլ աստուծոյ անուան հետ, բայց հոս անբացատրելի կը մնայ ում-ը:

լեցու էր բազմութեամբ: Քահանան կը ժամանէր, ժամերգութիւն տեղի կ'ունենար, ու խոր կ'ընէին, մատաղացուները կը գենէին: Յերիսայի կաթսաները դրուած կ'ըլլային յատկապէս անոնց համար պատրաստուած կրակարաններուն վրայ:

Երիտասարդներ ու այր մարդիկ մինչեւ լոյս կը հսկէին հերիսայի կրակին, փայտը կը բերէին, կը ջարդէին, հերիսան կը ծեծէին: Խորովածի հոտը լեռը կ'առնէր: Կիները իրենց հետ բերած խաշած հաւ կիթով ու գետնափնձորով սալաթ կը պատրաստէին: Կը սկսէր կերու խումը, ապա կը փչէր գուննան, շատ անգամ սրինգը, ու տիլանին մինչեւ լոյս կը տեւէր: Տիլանի կը կոչուի շրջանի հայոց շուրջպարերու շարքը: Ներկայ կ'ըլլային սուէտացի, անտիոքցի, ղնեմիացի, արամոցի, գնեացի, եագուպիացի եւ լաթաքիացի հայեր, ինչպէս նաեւ շրջակայ գիւղերէն թուրքմէն, քիւրտ, հոռոմ, արաբ եւ ալ եւի հետաքրքիրներ:

Կիրակի օրուան Ս. Պատարագը կը կատարուէր աւերակին մէջ, արեւելեան խորանածեւ կիսապատին առջեւ: Կ'օրհնուէր հերիսան: Ամէն խումբ կամ ընտանիք արդէն պատրաստած կ'ըլլար իր սեղանը, օրհնուած հերիսան ալ կու գար, ու կրկին կերու խումբ, կատակ, հրաւեր, բարեմաղթութիւններ եւ շուրջպար: Աւարտին կ'ըլլար աւանդական ջրախաղը (ջրուիւր):

Իմ հաւաքագրումներուն ու սերտողութիւններուն ընթացքին նկատած եմ, որ տեղւոյն հայոց աւանդադրոյցներն ու հաւատալիքները շրջանի հնագոյն եւ հայկական լեռնաշխարհի հայոց աւանդներուն իւրայատուկ բաղադրութիւնները կը ներկայացնեն: Յայկական իւրաքանչիւր ծէս, հաւատալիք ու աւանդադրոյց ձեւով մը շարկապուած կը թուի այս վայրերուն վերաբերող տեղւոյն հնագոյն դիցաբանական պատկերացումներուն հետ, որոնք շատ անգամ իբրեւ վերապուկ կը յայտնուին:

Այսպէս, նախնշենք, որ Պարլումի ու խտավայրի մէջ կատարուած ամէնէն տարած-ուած ու խտերը կապուած էին մանչ գաւկի մկրտութեան, հերահատութեան եւ առաջին ածիլունքի հետ: Կապ մը ունի՞ արդեօք հայր աստուած Չեւսի հետ, որուն նուիրուած

տաճարին աւերակներուն վրայ կ'ըլլար ուխտը: Մանուկ Ձեւսը սնանեցաւ այժի կաթով եւ մեղրով: Այս եղանակին լերան բարձունքներուն անհասանելի ծերպերէն, ուր մեղուի անձեռմխելի բոյներ կային, մեղրը կաթ-կաթ կը հոսէր: Մանչ գաւակները «արծիւի կաթով», «մեղրով-կարագով» մեծցնելու ակնարկութիւններ կան տեղի ժողովրդական երգերուն մէջ եւս:

Յետաքրքրական պիտի ըլլար նշել նաեւ, որ Կասիոս լեռը բոյսի մը առնչութեամբ կը կապուի անգուսպ առնականութեան գաղափարին, որ Ձեւսի յատկանիշն է (Ձեւսը բազմաթիւ կիներ ունէր ու բազմաթիւ գաւակներ, հողին թափած անոր սերմահեղուկի շփումով առաջացած յղացումէ ծնունդ եւ այլն): Կասիոսի բարձրադիր լանջերուն կ'աճի խոտ մը, որ **չաշըր** կը կոչուի: Երկու տեսակ կ'ըլլայ: Մին այժերը չեն արածիր, իսկ միւսը շատ կը սիրեն: Այդ խոտը իբր խոյերու առնականութիւնը գրգռող ու զօրացնող, իսկ այժերու կաթնատուութիւնը աւելցնող յատկութիւն ունի: Կ'ըսեն իբր չաշըրը նոյն ներգործութիւնը կ'ունենայ մարդոց վրայ: Սեռային անկարողութենէ ու տկարութենէ տառապող մարդիկ այս խոտէն պատրաստուած թէյ կը խմեն: Այս խոտին մասին գրոյցները այնքան շատ են, որ հեռաւոր տեղերէ չբեր ամուլներ այս խոտը կու գային փնտռելու: Մինչեւ այսօր ալ մարդիկ սահմանը հասելով այդ եղանակին կ'երթան չաշըր բերելու:

Ասկէ բացի՝ նոյն Պալլու մի ուխտավայրին հետ կ'առնչուին այլ հաւատալիքներ եւս, որոնք կապուած են մայր աստուծութեան, Աստղիկ ղիցուհիի ու ջուրի պաշտամունքին հետ: Հոս եւս տեղական ու հայկականը ընդելուզուած են իրարու: Այսպէս՝ ոմանք կը կարծեն, թէ տեղացի հայոց Պալլում բառը եւ անոր միւս տարբերակները առաջացած են Պաալ՝ աստուած եւ Ում՝ մայր բառերէն: Սելեւկեաններու օրով մայրաքաղաք Անտիոքի անվտանգութիւնը խորհրդանշող մայր աստուածուհիի արձանը գետեղուած էր Որոնդէս գետի ափին: Մեծն Տիգրանի դրամին վրայ կայ նոյնը, նստած ժայռաբեկորներու վրայ, ձեռքին արմաւենիի ճիւղ մը, ոտքերուն տակ ջուրի աստուածութեան անձնաւորումը՝

լ ողացող մարդու մերկանդամ կերպարանքով: Ու խտավայրի անուանայ սպիսի մեկնութիւն ընողները այնտեղ նախապէս մայրաստուածուհիին տաճարը ըլլալու ենթադրութիւնը կ'ընեն, Ձեւսի տաճարին կից: Միւս կողմէ՝ Պարլումի ու խտագնացութեան ու Վարդավառի որոշ ծեսեր առնչութիւններ ունին հայոց Աստղիկ աստուածուհիին հետ: Մօտիկ միակ աղբերակը՝ Թեքնեճոքը, մատմը ջուրով, կը գտնուի Ու խտավայրէն աւելի ցած դիրքի մը վրան: Լերան հարաւային լանջին Քեսապի շրջանն է, ուր ամրան եղանակին խիստ կը նիհարնան աղբիւրները, իսկ ոմանք կը ցամքին: «Երկնքի, որոտի, ամպրոպի եւ կայծակի, աշխարհի տիրակալ» Ձեւսի լեռը սաստիկ տապէն կը տոչորի այդ եղանակին: Ատիկա արտայայտութիւն գտած է նաեւ ժողովրդական երգերուն մէջ:

Քեսաբ վիրիվը Պալում, քեսապի վերելը
Պալում,

Յայ վառեր եալ ըմ-եռլում: Կը վառեր եալ ըմ-
եռլում:

«Եալ ըմ-եռլում»՝ սաստիկ, կիզիչ տաքը բացատրող արտայայտութիւն մըն է:

Պարլումի ու խտագնացութեան աւարտին՝ կը սկսէր ջուրի խաղը, փարչերուն ու կուժերուն մէջ մնացած քանի մը գաւաթ ջուրը կը թափէին իրարու վրայ ու կ'իյնային ճամբայ: Ջրախաղը հոն չէր վերջանար: Ջուրի խաղը, երգն ու պարը երիտասարդուհիները կը շարունակէին Քեսապի հրապարակին մէջ՝ Խոդը, իսկ երիտասարդները Գարատուրանի ծովեզերքը: Ճամբան երկու խումբերն ալ հանդիպած աղբիւրներուն առջեւ ջրախաղը կը շարունակէին:

Երիտասարդները երեկոյեան կը հասնէին ծովափ ու կը նետուէին ծով, ու կը սկսէր անոնց խելագար ջրախաղը: Թաղի մարդիկ կրնային առաջին թուգով ու խաղողով հիւրասիրել հիւրերը: Յոս թուգն ու խաղողը երկու-երեք շաբաթ առաջ հասունցած կ'ըլլան արդէն: Թուգը ժողովրդային պատկերացումով կը խորհրդանշէ իգականութիւն, իսկ չօրհնուած խաղողը՝ արգիլուած պտուղը:

Յատկապէս երիտասարդները վաղահաս թուզն ու դեռ չօրհնուած խաղողը կ'ուտէին կատակներով ու կը խօսէին Գարատուրանի ծովանոյշին մասին ու ձեռք կ'առնէին այն երիտասարդները, որոնք կը պնդէին, թէ նախորդ Պարլումին (Վարդավառ) տեսած են զայն: Ուշ երեկոյեան շատերը կը հեռանային ծովէն: Զեռու գիւղերէն եկողները կը գիշերէին վերի թաղերու ծանօթ-ազգական հայրենակիցներու մօտ, իսկ ուրիշներ կը մնային ծով՝ կառթով ձկնորսութիւն ընելու համար: Կառթով ձկնորսութեան՝ տեղացիք **կախըցնիլը** (կախել բայ էն) կ'ըսեն:

Ձկնորսները ծովածոցի հարաւային լեռնապատեզրին խոյացող խարակներուն մէջ ծուարելով իբր ձկնորսութիւն կ'ընէին ամբողջ գիշերը: Ամէն մէկը իրեն համար անկիւն մը կը գտներ: Զաւատացողներուն համար ասիկա ծովահարսը (բարբառ՝ **ծուվը իշգէն** – ծովու աղջիկ) տեսնելու պատրուակ էր: Յիշենք Մշոյ Մեղրագետի մէջ առաւօտկանուխ լոգանքի իջած Աստղիկ դիցուհին լրտեսելու եկած երիտասարդները: Արդարեւ, շատերը կը պատմեն, իբր, ծովանոյշը կը յայտնուէր ծովածոցի հարաւարեւելեան անկիւնը, ծովուն մէջ գտնուող ժայռի մը վրան: Այդ ժայռը Չափարօ կը կոչուի, ու յաճախ ալ եկոծ օրերուն ջուրով կը ծածկուի: Կը պատմեն, թէ ծովանոյշը ձուկի արչ ու աղջկայ կերպարանք ունի, կը նստի քարին վրայ ու մազերը կը սանրէ: Չինք տեսնողներ եղած են: Ու կը պնդէին, որ տեսած են:

Կը պատմեն, որ ծովանոյշը քաղցր ջուրով իր լոգանքը կ'ընէ ծովածոցի հիւսիսային կողմը, ծովուն մէջ ու ժգին բխող ջուրի մը մէջ: Բարձր խարակներով երիզուած այդ փոքրիկ ծովածոցը գիւղացիք Զուտուօծ ջէօր (նեխած ջուր) կը կոչեն: Ակը կը գտնուի ծովափէն ոչ հեռու, բայց մութին զարնող խորութենէ մը մինչեւ ծովուն մակերեսը բարձրացող հոսանքի զօրութիւնը զգալի է: Կը հաւատան, որ անոր ջուրերը կու գան Կասիոսի ընդերքէն, Պալլումի տակէն ու կը բխին ծովուն մէջ, այդտեղ: Ծովանոյշը քաղցր ջուրով իր լոգանքը ընելէն ետք կու գայ կը նստի Չափարոյի վրայ ու մազերը կը սանրէ:

Յետաքրքրական է ըսել, որ խելքը գլուխը այս մարդիկ չէին քաշուեր իրենց տեսածը պատմելեն, որովհետեւ ե՛լ իրենք, ե՛լ ունկնդիրներեն ոմանք կը հաւատային ջրանոյշի գոյութեան:

Պարլումի ուխտագնացութեան աւարտին աղջիկները տուն հասնելէն ետք կամ ճամբուն վրայ կ'իջնէին Քեսապի խողը: Այն իշելի ժամանակներու կառոյց էր Քեսապի այժմու մեծ հրապարակին ջրհորը, որ կը գտնուէր Սպիտակ եկեղեցւոյ (Յայ Աւետարանական եկեղեցւոյ ժողովրդական անունը) առջեւ: Յրապարակը իր անունը կ'առնէ ջրհորէն, որ խող կը կոչուի: Սա արաբերէն **հուլթ** բառն է, որ կը նշանակէ կետ ձուկ: Բարբառին մէջ կայ նաեւ օձի պատկերացումով **արվանտ** անունը, որ համազօր է մեր վիշապաբառին:

Այս անունը մեզի բնականաբար կը յիշեցնէ Յայաստանի ձկնակերպ հսկայ վիշապաբարերը: Վիշապաբարը կը խորհրդանշէր տարերքի անսանձ ոյժը, բնութեան զարթօնքը, պողաբերութիւնն ու առատութիւնը: Վիշապը պաշտուած է իբրեւ ջուր, անձրեւ ու հարստութիւն պարգեւող ոգի, ու մեր նախնիներու կողմէ մարմնաւորուած է քարէ հսկայ ձկնակերպ արձաններով: Վիշապը նաեւ նկատուած է ջուրերու ակունք-ներուն ու գանձերուն հսկող ահարկու հրէշ, որուն կոյսեր կը զոհաբերէին: Քեսապի խողը կը նոյնանայ վիշապին հետ: Խող իջնող աղջիկներու ջրախաղն ու լոգանքը ջուրի ակունքներուն մէջ ապրող վիշապին հաճոյանալ ու հնազոյն ծեսերէն մեկուն վերապրուկը կը թուի:

Թ- Ս. Աստուածածին.- Կը գուգադիպի Օգոստոսի կէսին ամենամօտ Կիրակիին: Խաղողը կ'օրհնուի Կիրակի օրուան պատարագին: Մինչեւ այս արարողութիւնը հաւատացեալները խաղող չէին ուտեր: Փոքրիկները կը հաւատային, որ երբ խաղողը թթու է՝ մեղք է գայնուտելը: Մեծերն ալ կը հաւատային, որ Աստուածածնայ հաղորդութիւնը անզօր կ'ըլլայ, եթէ խաղող կերած ըլլային:

Տօնի Կիրակին անպատճառ սմբուկով ու սիսեռով ճաշ կը շինէին (**սըսըռուօն աբ'տինճուլն է'աբօր**): Սմբուկը սովորաբար ածուին առաջին բերքը կ'ըլլար: Այնքան տարածուած էր այս ճաշը, որ դրացի

թուրքերը Աստուածածնայ տօնը կը ճանչնային «**սաղնճան սայրամը**» անունով:

Աստուածածնայ Շաբաթ օրը շրջանի բոլոր թոնիրները կը վառէին: Կիները այդ օր ձեթով բոկեղ կը պատրաստէին: Բոկեղին հոտը կը բռներ ամբողջ գիւղը:

Շրջանին մէջ Աստուածածնայ Պատարագը կը կատարուէր Քեսապի եւ Գարատուրանի առաքելական եկեղեցիներուն մէջ: Երկուքն ալ՝ - Սուրբ Աստուածածին կը կոչուին:

Խաղողն ու բոկեղը կը դիզուէին դասին մէջ: Պատարագէն ետք քահանան կ'օրհներ խաղողը, նոյնպէս՝ բոկեղը: Հաւատացեալները բոկեղ մը ու ողկոյզ մը խաղող առնելով՝ կը շնորհաւորէին տօնը ու մուրագ կ'ուզէին.

- Է'մըն տարաա ու օրը (ամէն տարի այս օրը):

Հաւատացեալները խաղողէն քանի մը ճճմոյթ անպայման տուն կը հասցնէին:

Աստուածածնայ շաբթուն ծնած աղջիկներուն սովորաբար կու տային Մարի, Մարօ, Մարիամ անունները:

Պարլումի համաժողովրդական ուխտավայրին Թուրքիոյ կցումէն ետք՝ Աստուածածնայ տօնին առթիւ հետզհետէ սիրելի ուխտավայր կը դառնայ Ներքի Գիւղի (Էսկիւրէն) «Կիղիցիկ»ը՝ փոքրիկ սրբատեղի մը, որ կը գտնուի գերեզմանատան մէջ, հաստաբեստ սօսիին տակ, յորդաբուխ աղբիւրին կից: Ան ներկայիս ինչպէս ամբողջ Քեսապի, այդպէս ալ Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան համար Աստուածածնայ Վերափոխման Տօնին համաժողովրդական ուխտավայրն է, ուր ուխտագնացութիւնն ու տօնակատարութիւնները կը կատարուին նախկին Պարլումի ուխտագնացութեան կարգով: Ուխտի ճաշը հերիսան է:

Ժ.- Ս. Խաչ .- Սեպտեմբերի երկրորդ Կիրակիին եկող այս տօնը աշնանամուտ կը նկատուի: Քեսապին թրքերէնով կ'ըսէ.

Խաչ,

Խաչ,

Ա՛լ Եօրդանը,

Վերմակը ա՛ռ,

Իջ Էրի գաչ:

Ներս փախ՛ր:

Ս. Խաչը ժողովրդական տօնակատարութիւն մը չունի Քեսապի մէջ:

Բայց ան Սուէտիոյ կարգ մը գիւղերուն մէջ կը տօնուէր այնպէս, ինչպէս Աստուածածինն ու Վարդավառը՝ Քեսապի մէջ: Սուսալերան մէջ համաժողովրդական ուխտագնացութիւն կ'ըլլար Կիրակի օր ու կը տեւէր մինչեւ երկուշաբթի երեկոյ: Ուխտավայրը՝ **Սուլթումու** կամ **Թումմա Առսքուօլ**, կը գտնուէր Եողուն-Օլուք գիւղին մօտիկ: Այս ուխտագնացութեան կը մասնակցէին նաեւ բազմաթիւ քեսապցի ընտանիքներ եւ անհատներ:

ԺԱ- Ս. Յակոբ (Սուք Է'կիւք). Կու գայ Դեկտեմբեր ամսուան երրորդ ծաբաթ օրը: Ձմեռնամուտէ: Եթէ Կասիոս լեռը ձիւնով ծածկուի՝ գիւղացիք բարեբեր տարի մը կ'ակնկալեն ու նայելով լերան ճերմակ գագաթին՝ կ'ըսեն.

- **Սուք Է'կիւքը մուրեօքը ըսաքսկըցեօք** (Սուք Յակոբը մօրուքը ճերմկցուց):

Քեսապցիք այս տօնին անպայման աքլորի միսով հերիսակ'եփէին: Ոմանք հերիսայի ծեծածը կանուխէն պատրաստած կ'ըլլային, բայց աւելի տարածուած ձեւը նոր-նոր ծեծելն էր: Գիւղացիք առհասարակ իրենց ցանքերը վերջացուցած եւ արօրն ու լուծը կախած կ'ըլլային - պատին: Կինը ամուսնոյն յիշեցուցած կ'ըլլար, որ անպայման «**սընտաղբիկ**» (ծեղելայն աման) մը ցորեն պահէ ճերմակ ցորենի սերմնցուէն՝ Ս. Յակոբի տօնի հերիսային համար: Այս ցորենը կինը կը ծեծէր տան փոքրիկ սանդիւն մէջ:

Ծաբաթներ առաջ արդէն խօսք եղած կ'ըլլար, թէ ո՛ր աքլորը Ս. Յակոբին հերիսացու պիտի ըլլար: Սովորաբար մեծ աքլորը կ'ըլլար ատիկա: Սովորութիւն էր, որ տան փոքրիկներուն կնքահայրը մորթէր հերիսայի աքլորը: Աքլորներու գենումը տօնական մթնոլորտի մէջ կ'ըլլար, յատկապէս խիտտուներ ու նեցող թաղերուն մէջ: Ծաբաթ երեկոյ, հաւերը թառը մտնելէ ետք կը բռնէին աքլորը ու կը տանէին գիւղի հրապարակը, ուր կը հաւաքուէին հայրեր, կնքահայրեր ու մանաւանդ թաղին բոլոր տղաքը: Երբ բոլոր աքլորները բերուած ըլլային՝ տղաք կը սկսէին իւրայատուկ գրաւ մը, թէ որո՞ւն աքաղաղը գլխատուելէ ետք ոտքի պիտի ելլէ ու ամենէն երկար թփոտայ ու տապակի: Գրաւը կ'ըլլար տասը հատ ընկոյզի, երկու նուռի, գրպան

մը թուզի կամ ափ մը չամիչի վրայ : Ասոր համար կարգ մը պգտիկներ կ'ուզեին, որ իրենց աբլորը այսինչը կամ այնինչը մորթէ, որովհետեւ լսած կ'ըլլային, թէ անոր «ձեռքը թեթեւ է» : Կնքահայրեր կը մորթէին աբլորները, եւ գլուխն ու արիւնոտ դանակը ձեռքին կը հետեւէին գլխատուած աբլորի շարժումներուն : Յետոյ գլուխը կը նետէին զառիթափէն վար, արիւնոտ դանակը կը սրբէին մոյկի ճիտին ու ծալելով կը դնէին գրպանը : Ասիկա կ'ըլլար հանդիսաւոր կերպով : Մորթուած աբլորը կը տրուէր տղոց, որոնք կը շտապէին տուն, որպէսզի վայրկեան առաջ մաքրուէր ու դրուէր կաթսային մէջ :

Ս. Յակոբի Շաբաթօրը երիտասարդներու այրեր սովորաբար որսի կ'երթային : Որսը առատ ըլլալու պարագային՝ քանի մը մօտիկ ընտանիքներ կ'այցելէին Յակոբի մը տունը : Ամէն թաղի մէջ քանի մը Յակոբ կը գտնուէր : Կնքահայր, բարեկամ կամ ազգականներ ալ կու գային «**Է՛նունունօղ Է՛արէս**» (անունովդ ասորիս) ըսելու : Խորոված կ'ընէին : Նոր գինին առաջին անգամ այս գիշեր կը դնէին սեղանին :

Ս. Յակոբի հերիսան կ'ուտէին Կիրակի կէսօրին :

Տօնակատարութիւնները ներկայիս կա՛մ բոլորովին ջնջուած են, կա՛մ ենթարկուած փոխակերպումներու : Չեն մոռցուած Նոր Տարին չիրեղէնը, Ս. Ծնունդին բոկեղն ու գլորը, Բարեկենդանին փախլաւան եւ անուշեղէնը, Մեծ Պահքի ճաշերը, Ս. Չատկին կաթով բոկեղը եւ հակիթ «**կռնալիլ**»ը, Ս. Յակոբին աբլորով հերիսան : Նկատելի է, որ անփոփոխ մնացած են գլխաւորաբար տօնական ճաշերը : Կը մնան նաեւ որոշ ծեսեր ու խաղեր, ինչպէս՝ Տառնտասի խարոյ կը, Բարեկենդանի Գաջմարը (խամաճիկ), առաւօտուն թուրան խաղալը, Ծաղկազարդին՝ **իւթնիւս** ջուրով ձեռք-երես լուալը, Վարդավառին՝ ջրուիլը եւ այլն : Նոր Տարին եւ Ս. Յարութեան տօնը՝ Մեծ Չատիկը, սկսած են սովորաբար միութեան, եկեղեցւոյ կամ դպրոցի մը շրջանակին մէջ տօնել, ճաշարանի մէջ :

Յարանուանական պառակտումներէն ետք, 1850-ականներէն, ժողովրդական տօներն ու տօնախմբութիւնները տեղ-տեղ փոխեցին իրենց բնոյթը : Այսպէս, աւետարանական շրջանակներու մէջ խամրեցաւ Տեառնընդառաջի, Բարեկենդանի, Վարդավառի, Ս. Աստուածածնայ, Ս. -

Խաչի, այդպես ալ Ս. Սարգիսի եւ Ս. Յակոբի տոներուն հետ կապուած ծիսակարգը: Կաթողիկէները Ս. Ծնունդը կը տօնեն Դեկտ. 25-ին, իսկ - Տեառնը նդառաքը՝ Փետրուար 2-ին: Անոնք յաջողած են քանի մը տներ ժողովրդական ծիսակարգի մէջ մտցնել, այսպէս՝ Մայիսեան աղօթքներուն՝ կիները կը հագնին կապոյտ ճիւղապի, ճերմակ գօտիով, Ս. Ռիթայի տօնին՝ սեւ ճիւղապի, իսկ Ս. Անտոնի տօնին՝ ուխտունեցող մայրերը իրենց տղայ գաւակներուն կը հագցնեն սրճագոյն ճիւղապի եւ ուխտը իր լրումին կը հասցնեն նախապէս որոշուած եկեղեցւոյ մէջ:

4.4.- ԽԱՂԵՐԸ

Խաղը կարելի է անջատել գեղջուկ կեանքի շատերէն յ թներէն: Խաղը ներկայ է հաւաքական աշխատանքներուն, ընտանիքի առօրեայ կեանքին, նիստուն կացին, հասարակական յարաբերութիւններուն եւ տօնակատարութիւններուն մէջ:

Խաղը ամենէն առաջ դաստիարակչական ու ճանաչողական միջոց էր: Մանկական խաղերգներէն ու անոնց ընկերակցող շարժումներէն մինչեւ մեծահասակներու խաղերը ունին այդ բովանդակութիւնը: Միշտ է որ հաճելի ժամանց են խաղերը, այլ՝ սեփական կամ հաւաքական առաւելութիւն մը հաստատելու միջոց: Յատկապէս տղոց խաղերը կ'օգնեն որ անոնք մեծնան չարքաշ, առողջ, վազել-ցատկել, ու ժգործածել, ծանրութիւն վերցնել, դիպուկ զարնել սորվին: Աղջիկներու խաղերուն մէջ նկատելի է մատներու ճկուն գործածութիւնը: Փոքրիկները նմանողական խաղերով կը սորվեին ցանել-հնծել, եփել-թափել, կարել-կարկտնել, հայրըլլալ, մայրըլլալ եւ այլն:

Բաւական հարուստ է Քեսապի ժողովրդական խաղերու ցանկը, ուր տեղ կը գտնեն ծիսական, մարտական, կենցաղային, նմանողական եւ այլ ու այլ բնոյթի խաղեր: Քեսապի մէջ կատարուած խաղերը բաժնածեմ գանազան խումբերու, ինչպէս՝ բերդախաղեր, պահմտոցիկներ, արագավագուրթեան, ցատկի, ծանրաբարձութեան, ուժական, նշանառութեան, հաշուական, հնարամտութեան խաղեր: Փոքրիկները ունեին բազմաթիւ նմանողական խաղեր եւ վիճակախաղեր: Եւ դեռ բազմաթիւ խա-

ղեր՝ կապուած կենդանիներու եւ բոյսերու հետ:

Ճատխաղերու կ'ընկերանան որոշ կանչեր, ծաղրերգներ, խաղերգներու հաշուերգներ:

Խաղի համար բոլոր իրերը կը պատրաստուէին տեղւոյն վրայ, այսպէս՝ **թուրանը** շինելու համար կ'ոլորէին շալէ գօտին կամ շապիկը, **չարոխ** խաղին համար՝ տունէն բերուած պարանը, յօտած որթատունկի երկար ոստմը եւ մէկու մը կօշիկը, բերդախաղերուն համար՝ մօտիկ պատէն քակուած քար մը, մանղալայի համար՝ դափնիի պտուղը կամ խնկենիի պտուղին կորիզը, խէճին համար՝ գետահունէն հաւաքուած մանր խիճերը, գնդակ կը շինէին քրտնած կովուն փորը շփելով ափի մէջ հաւաքուած թաց մազերը գունտի վերածելով եւ այլն: Մանուկներու համար տիկնիկներ կը պատրաստէր մեծ մայրիկը, իսկ տղոց համար տարբեր տեսակի խաղալիքներ՝ մեծ հայրիկը:

Խաղի տարբեր տեսակներուն էին կատարման յատուկ պայմաններ: Ամէն խաղ չէ; որ կը կատարուէր խաղի համար, ամէն պահու: Այսպէս՝

Ա՝ Ծիսական խաղեր.- Ասոնք ընդհանրապէս արարողակարգի մը մաս կը կազմէին: Այս աշխատութեան տարբեր գլուխներուն մէջ ընտանիքի կազմութեան տարբեր փուլերուն եւ սոնակատարութիւններուն նկարագրութիւնը տալու ընթացքին տեղյատկացուեցաւ անոնց կատարումին հետխորապէս կապուած կարգ մը ծիսական խաղերու եւս, ինչպէս ընտանիքի կազմութեան մէջ **հինայումը**, **խորտաբօ** երգիծախաղը, Նոր Տարիին՝ **կաղիւնտ շընըֆըրիւը**, **կախըսնիւը**, **աւետիս կանչելը**, ճրագալոյցի լողը, Տառնտասի խարոյկը, Բարեկենդանի **գաջմարը**, **ըրկան Է՛գէն**, **ապըտլիւը**, Սուրբ Սարգիսի **Է՛լլը բաղարջը**, ճաղկազարդի **քէօրսիկիմ կէ՛ափլը**, **ութնուսը**, Չատկուան հակթախաղերէն **կըռնալիւը** եւ **սըրու քիշտիւը**, Վարդավառի **ջըրվիւը**, երաշտի ատեն կատարուող **չէօմչակելին** եւ այլն: Այս խաղերը սօներէն եւ առիթներէն դուրս երբեք չէին կատարուեր:

Բ.- Կազմակերպուած խաղեր.- Այս խաղերը կը կազմակերպուէին առիթներով, արձակուրդի եւ մեծ հաւաքներու միջոցին, ղարոցական գբօսանքներուն ու պտոյտներուն: Փոքրիկները եւ մեծերը խաղեր

կազմակերպել ու առիթներ կը ստեղծեին: Յատկապէս ուշագրաւ էին Բարեկենդանի շաբթունս կազմակերպուող խաղերը, ուր աչքի կ'իյնային բերդախաղեր, պահմտոցիկներ, արագավազութեան, ցատկի, ծանրաքար-ձութեան, ուժական, նշանառութեան խաղերը: Ասոնք մեծ մասով խմբային էին: Խմբային խաղերու մէջ շատ տարածուած էին շարք մը բերդախաղեր: Մէկը կը կոչուէր **թուրան** եւ ուներ աւելի քան հինգ տարբերակ: Բերենք քանի մը հատը.

Թուրանը (թրք.՝ թուրա) հոս երկու թելաչափ երկարութեամբ, ծայրը թաց և արծրով գունտ շինած պարան մըն է կամ և աւ ոլորուած սաւան մը, շատ անգամ՝ մէջքի գօտին:

Թուրանով կը խաղան շարք մը խաղեր: Բոլորն ալ նոյն անունը կը կրեն:

Առաջինը բերդախաղ մըն է:

Շուրջ երկու մեթր տրամագիծով շրջանակ մը, որուն կեդրոնը դրուած է բերդը կամ **պարը (արևօր)**՝ կոճղ մը կամ քար մը:

Բերդապահը թուրանին տէրն է: Յարձակողները՝ 5-6 հոգի, շրջագիծէն դուրս կը գտնուին: Թուրանին տէրը կը պտտի շրջանակէն ներս ու չի ձգեր, որ մէկը համարձակի ներս մտնել: **Կը մեռնի** ան, որ շրջագիծէն ներս թուրանի հարուած մը կը ստանայ: Թուրանին հարուածները ուժգին ու ցաւ ցնող կ'ըլլան:

Թուրանին տիրոջ նպատակն է բերդը պահել ու **մեռցնել** յարձակողները, իսկ վերջիններուն նպատակը՝ բերդը գրաւել: Բերդը գրաւողը թուրանին կը տիրէ:

Երբ բերդապահին ոտքը բերդին վրայ է՝ բերդը չի գրաւուիր: Բերդապահը անկէ հեռացնել ու համար յարձակողները զինք բարկացնող արտայայտութիւններ կ'ունենան:

Երկրորդը դարձեալ բերդախաղ է: Բերդը կամ պարը սիւն մը կամ ծառի մը ցողունն է, որուն 1.5-2 մեթր երկարութեամբ պարանով մը մէջքէն կամ գօտիէն կը կապուի բերդապահը: Բայց խաղին նպատակը բերդը գրաւելը չէ, այլ՝ բերդապահը ծեծելը, իսկ բերդապահին նպատակն է ծեծ ու տել ու դերեն ազատիլը: Բոլոր խաղցողներն ալ թուրան կ'ունենան: Ասոնք կը յարձակին բերդապահին վրայ ու կ'աշ-

խառն միայն հարուածել ու անդադար կը պոռան.

Թուգգաճ պըր ուտի Սիրոբը, Սերոբը ծեծ պիտի ուտե,

Թուգգաճ պըր ուտի Սիրոբը: Սերոբը ծեծ պիտի ուտե:

Ու կը յաջողին հարուածներ իջեցնել այս կամ այն կողմէն: Բերդապահը կը նահանջէ, հարուածներէն կը խուսափի, յարձակիլ կը ձեւացնէ. այս ալ կը բաւէ, որ բոլորը փախուստ տան թուրանի հասողութեան սահմաններէն դուրս: Կրկին յարձակում: Բերդապահը վերջապէս կը յաջողի հարուածել մէկը ու ազատիլ իր կապէն: Յիմա ծեծ ուտել ու կարգը միւսին է:

Բերդապահը կրնայ մեջքէն կապել ու փոխարէն՝ ձախ ձեռքով բռնել պարանը: Բերդը, սիւնի կամ ցօղունի մը փոխարէն երբեմն կ'ըլլայ խաղցողներէն մէկը, որուն դերը միայն պարանը բռնել կ'ըլլայ:

Երրորդ թուրանը դարձեալ ռազմական բնոյթ ունի: Հարթ գետնի մը վրայ երեք գիծեր կը քաշեն: Ծայրի գիծերը կեդրոնէն նոյն հեռաւորութիւնը կ'ունենան, 5-6 մետր: Երկու խումբերը, 4-5-ական հոգի, տեղ կը գրաւեն դեմ դիմաց, ծայրի սահմանագիծէ-րուն վրայ: Իւրաքանչիւր խումբ ունի իր խմբապետը: Այս խաղին մէջ խմբապետը կարեւոր դեր ունի, նախ ինք իր տարեկից տղոց մէջ ֆիզիքապէս բացայայտ առաւելութիւններ ունի ու իր հրամանը կը կատարուի: Ան կը կառավարէ խաղը. կ'որոշէ յարձակողը ու նահանջի հրաման կու տայ:

Իւրաքանչիւր խումբ մէկ թուրան ունի: Թուրանի խաղը կը կատարուի միշտ երկու հառակակորդներու միջեւ, կեդրոնի գիծին վրայ:

Խմբապետները վիճակով կ'որոշեն, թէ ո՞ր խումբը պիտի սկսի խաղը: Ա. խմբապետը կը դրկէ իր յարձակողը, Բ. խմբապետը ատոր համաձայն ալ կ'որոշէ ու կը դրկէ իր խումբէն մէկը: Հակառակորդները գիծին երկու կողմերը կեցած կը հարուածեն զիրար, կը փորձեն զիրար, բայց ոչ ոք **կը մեռնի** այնքան ատեն, որ սահմանը անցած չէ: Ի վերջոյ մէկը կը թափանցէ հակառակորդ խումբի կալուածէն ներս ու մենամարտի կը բռնուի հակառակորդին

հետ, բայց պետք է զգուշանայ թուրանի հարուած ուտելէն, որովհետեւ՝ հակառակորդի կալուածէն ներս հարուած ուտելու պարագային **կը մեռնի**: Ան կրնայ հասնիլ մինչեւ հակառակորդի սահմանագիծը ու անխնայ ծեծել հոն գտնուողները: Հակառակորդ խումբի խմբապետը գաղտնօրէն որոշուած ձեւով իր զինուորը սահմանագիծ կը կանչէ ու թուրանը կ'առնէ կամ կու տայ ուրիշի մը:

Այս պարագային, յարձակողը, եթէ վախնայ՝ կը նահանջէ ու թուրանը կը յանձնէ իր խումբին (ամնողը խմբապետին կողմէ որոշուած ու շարքին առջեւ կեցած է) կամ եթէ խմբապետը թելադրէ՝ ծայրի իրենց գիծին վրայ կոխելէ ետք ետ կը դառնայ եւ իր կալուածին մէջ գտնուող զինք հալածողին հետ մենամարտի կը բռնուի, եթէ զարկաւ՝ **կը մեռցնէ**: Հալածուողը, այսինքն հակառակորդի կալուածէն ներս մտնելէ ետք իր խումբին կալուածին մէջ մտնողը չի կրնար **մեռցնել** զինք հալածողը, պետք է իր խումբի սահմանագծին հասնի, կոխէ գիծին վրայ, թուրանը փոխանցէ իր ընկերոջ կամ՝ ետյարձակի:

Հակառակորդի սահմանը մտնելէ ետք հարուած ստացողը կը մեռնի, այլեւս թուրանը գործածելու իրաւունք չունի, ան ծեծ կ'ուտէ. ուրեմն՝ պետք է արագ վազքով հասնի իր գիծին ու թուրանը խումբին յանձնելէ ետք խաղէն դուրս ելլէ:

Հակառակ խումբի բոլոր անդամները **մեռցուցած** խումբը յաղթական կը կոչուի:

Խաղի ընթացքին սահմանագծին վրայ կեցած խումբերը կը քաջալերեն ու կը զգուշացնեն իրենց ընկերը: Եթէ խմբապետը խաղին մէջ մտնէ ու **մեռնի**՝ խումբը անմիջապէս նոր խմբապետ կ'ունենայ:

Չորրորդ թուրանը նոյնպէս մարտական բնոյթ ունի:

8-10 հոգի կը բաժնուին երկու հաւասար խումբերու: Ասոնցմէ մէկը վիճակով յարձակող կ'ըլլայ:

Միւս խումբի անդամները, բացի մէկէն, ձեռքերը իրարու ուսին դրած խիտ շրջանակ մը կը շինեն, գլուխները ներս պահած կը կծկուին: Վերջին ընկերը թուրանով կը պաշտպանէ ընկերները՝ անոնց շուրջ դառնալով: Յարձակողները թուրան ունին, ասոնց

նպատակն է յարձակիլ խումբին վրայ, թուրանով զարնել, կսմրթել, բռունցքով կամ աստակով զարնել օղակուած խումբի անդամներուն՝ ուսերուն ու յետոյքներուն եւ չստանալ խումբը պաշտպանողին թուրանին հարուածը: Պաշտպանն ալ հարուածներու թիրախ կը դառնայ: Ասոր հարուածը ստացողը **կը մեռնի**: Այսպէս՝ մինչեւ վերջինը: Խումբերու դերերը կը փոխուին:

Պաշտպանը պէտք է լաւ պաշտպանել գիտնայ իր խումբը եւ շուտ **մեռցնէ** յարձակողները:

Հինգերորդ թուրանը անկանոն գզուըռտութիւն կը յիշեցնէ: Այս թուրանը Բարեկենդանի Կիրակի առաւօտ մինչեւ վերջերս կը կատարուէր միայն Ներքի Գիւղի մեծ սօսիին տակ, աղբիւրին առջեւը, ուր կը գտնուին Ս. Աստուածածին մատուռը եւ արդի Քեսապի մեծագոյն ու խաւայրը:

Խաղաղայրը տարիներու սովորութեամբ ունի իր բնական սահմանները: Խաղը ծառի շուքէն դուրս չ'ելլեր:

Խաղը կը սկսի յանկարծակի: Տօնական տրամադրութեամբ հոն հաւաքուած բազմութիւն մը կ'ըլլայ՝ մանուկներ, երիտասարդներ, տարեցներ, աղջիկ, կին, նոյնիսկ ծերեր: Ներկաներէն մէկը յանկարծ գօտին քակելով **թուրա՛ն** կը կանչէ սպառնալով ծերունիի մը, պառաւի մը կամ մանուկի մը: Սպառնալիքները փաղաքջօրէն կը հասկցուին, կը փոխանակուին: Գօտիները եւ գլխու ծածկոցները կը քակուին, տուներէն սաւաններ կու գան, կ'ոլորուին: Մեծերը ծանր կը զարնեն իրարու, պզտիկներուն ծանր հարուածել կը ձեւացնեն, պզտիկներուն հարուածին տակ իբրեւ թէ կը ցաւին, ա՛լ ճիչ, աղաղակ, օգնութիւն ու ծաղր...: Ծերեր դիմադրելով տոտիկ-տոտիկ կը փախին հրապարակէն, կ'անցնին բնական սահմանը...: Հրապարակը կը մնայ ուժեղներուն, յամառ մանուկներուն: Տկարներ կը միանան զօրաւորին դէմ, շուտով խումբերը կը փոխուին, թուրան կը պտտցնեն, կը հարուածեն, կը հալածեն, կը սպառնան...

Կը քրտնին, կը յոգնին ու մէկ-մէկ կը փախին հրապարակէն, որ տակաւ առ տակաւ կը պարպուի:

Տուներէն, տանիքներէն դեռ ձայներ կը լսուին,

սպառնալիքներ՝ յաջորդ Բարե-կենդանին...:

Բարեկանդանին, համաժողովրդական ու խտագնացութիւններուն ու հարսանիքներուն յայտնի ըմբիշներուն մենամարտը սպասուած խաղ էր ու կը կոչուէր թե՛րվէն (ըմբշամարտ): Բառը հայերէն **ընդհարուիլ** բային բայանունն է **իւն>էն** ածանցով, բառակզբի **ըն** մասի սղումով եւ **դհ>թ** հնչիւնափոխութեամբ, որոնք օրինաւոր երեւոյթներ են բար-բառին մէջ:

Ըմբշամարտը կ'երեւի թէ քեսապի մէջ շատ սիրուած ու քաջալերուած խաղ եղած է: Պզտիկ տղաք **թե՛րվէլ ու** գաղտնիքները մեծերէն կը սորվէին: Մեծերը մեծ հաճոյքով ըմբշամարտի կը հրաւիրէին զանոնք՝ երբ հաւաքուէին տանիք մը, կալը, կամ ընդարձակ տան մը մէջ: Անոնց հաճելի գրադումը կ'ըլլար պզտիկ տղոց ոտքի մնալ ու եւ հակառակորդին կռակը անպայման գետին բերել ու մաքառումը, թեւէ մեծերը գործը հոն չէին հասցներ ու երկուքն ալ **կտրիճ** յայտարարելով խաղը կը վերջացնէին ոչ ոքի:

Յովիւ պատանիներ առանց ըմբշամարտի իրարմէ չէին բաժնուեր: Շատ անգամ իրենք կը կազմակերպէին զայն, իսկ շատ անգամ ալ՝ տեսնես յանկարծ իրար գրկեցին երկու հոգի ու սկսան զիրար քաշքշել: Միւսները զանազան բացականքութիւններով աւելի կը գրգռէին մենամարտողները:

Նախապէս, ինչպէս կը պատմեն, առանց ըմբշամարտի չէին անցներ հարսանեաց գիշերները, Բարեկենդանը եւ Պարլումի ու խտագնացութիւնը: Ըմբշամարտի մրցումներ տեղի կ'ունենային նաեւ յոյն ուղղափառներու Սիվտիկիսի (Ներքի Գիւղի մօտ) եւ աւելիներու Չուհուրիէի ու խտագնացութիւններուն: Վերջինը կ'ըլլար նոյնանուն ուխտավայրին մէջ, որ կը գտնուի Պասիթի ծովափին, Կոնկուրայի գետաբերանի ձախափին, փոքրիկ հրուանդանի մը վրայ: Այս ուխտագնացութիւններուն քեսապիք ներկայ կ'ըլլային, ինչպէս որ այլ ազգիներ ու յոյներ ներկայ կ'ըլլային Պարլումի հայոց տոնին եւ Բարեկենդանի մեծ խաղերուն: Չուհուրիէի մէջ ըմբշամարտը տեղի կ'ունենար ծովե-գերեայ աւազուտքին վրայ. ըմբիշները բացառաբար հրապարակ կ'իջնէին

միայն շալվարով ու իրենց մարմինը ձեռով կ'օժեին: Յաղթողը գօտի կը ստանար:

Տօնակատարութեանց ընթացքին զուռնան ոտքի կը հաներ ըմբիշները, թմբուկը մկանները կը թօթուէր, ու հրապարակ կը նետուէին յայտնի ըմբիշները:

Յաղթող ըմբիշը **պարոն**ներուն սեղանը կը նստեցնէին, կը յարգէին, պատիւներ կ'ընէին: Այս տօնակատարութիւններուն ընդունուած կարգ էր հրաւիրել նաեւ այլազգի ըմբիշները: Խաղերու ընթացքին կրնային անախորժութիւններ պատահիլ, բայց պարոնները կը հսկէին ընդունուած կարգին ու կը սաստէին հիւր ըմբիշին դեմ դաւադրութիւն պատրաստել ու զոհները:

Քեսապի ըմբիշներէն կը յիշուի Գեորգ Յաննէեան անուն գարատուրանցի մը, ծովու թաղէն, որ հողագուրկ գիւղացի մըն էր: Ան նոր արտեր կը բանայ Սրնըխի լեռնալանջին: Վայրի թուփերը քաշելով արմատախիլ կ'ընէ, ահեղ ժայռերը ծովն ի վար կը գլորէ ու մէկ-երկու հասակ բարձրութեամբ ահագին պատեր կապելով սարաւանդներ կը շինէ: Այդ պատերը տակաւին կանգուն են ներկայիս անտառներով ծածկուած այդ լեռնալանջին վրայ: Սերմը գրպանը դրած արտէ արտ մագլցելով կը ցանէ եղեր լեռնալանջերը ու ընտանիք կը պահէ: Մանրակազմ, բայց ահեղ ու ժիտեր էր Յաննէեանը: Կը պատմեն, որ սովորական կամէ գէթ եռակի մեծութեամբ իր կամին հակառակ երեսին կը դիգէ մէկ կալ կազմող խուրձերը, 50-60 խուրձ, ու քաշելով կալ կը տանի ու կամը ինք կը քաշէ եղեր:

Մարդիկ հիացումով ու զարմանքով կը դիտեն եղեր Յաննէեանի առասպելական ուժին գործը:

- Կորկոտապուրն է, ես չեմ այդ ուժին տերը,- կ'ըսէ եղեր Յաննէեանը:

Կորկոտապուրը խոշոր ձաւարով փիլաւն է:

Օր մը Մուրսալէք թուրք գիւղին մէջ նշանտուքի մը ներկայ կ'ըլլայ ան: Ըմբշամարտը կը սկսի: Հրապարակը կը մնայ արՖալցի թուրքի մը: Յաննէեանը խաղի չ'իջներ:

- Տղաք,- կ'ըսէ,- տասը օր է՝ դգալ մը կորկոտապուր կերած չեմ,

հիմնատեղ չէ:

Կը ստիպեն: Ճարտատեղի չեն ու կը պարտուի:

- Ըսի ձեզի,- կ'ըսե,- կորկոտապուր կերած չեմ:

- Նշանտուքը հարսանիք ալ կ'ունենայ,- կ'ըսեն զինք մխիթարել ու զոդ հայրենակիցները:

Ժամանակ կ'անցնի: Կալերը կ'ելլեն եւ Յաննէեանի ամբարները ձաւարով կը լեցունին: Հարսանիքը կ'ըլլայ Չանտըր թրքական գիւղին մէջ: Յաննէեան հոն է: Ըմբռամարտը կը սկսի: Հրապարակը կրկին նոյն թուրքին կը մնայ:

- Յաննէեան, իջի՛ր այլ եւս,- կ'ըսեն Օրտուի աղաները,- մենք ալ սակռակդ գետնին տեսնենք ալ՝ հաւատանք:

Յաննէեան ապան կը նետէ մէկ կողմը ու կը ցատկէ հրապարակ:

- Ինչպե՞մ,- կը հացնէ իր մրցակիցին:

- Ձեռքէդ չեկածը ոտքովդ ըրէ,- կը պատասխանէ գոռոզ մրցակիցը:

Յաննէեան ափը կը զարնէ ըմբիշի ձախ կուրծքին ու ոտք մը նետել ունայեւս (**ըզգուիլ**)՝ մարդը կռակին վրայ գետնին կը փռէ:

Ու շագնաց ըմբիշը թիթեղ մը ջուրով հազիւ ուշքի կը բերեն:

- Մարդուն չար բախտէն,- կ'ըսէ Յաննէեան,- այս քանի շաբաթ է կորկոտապուրէն զատբան չէր իջած կոկորդէս:

Օր մը Յաննէեան իշուկը առած **Պագուօր** (շուկայ. այսպէս կը կոչուէր ճսրը ծուղուր գիւղաքաղաքը) կ'երթայ քուրց մը ցորեն գնել ու: Ծուկային մէջ լուր կը տարածուի, որ **կեակուր** ըմբիշը հոն է, այն որ գետնին փռած է չանտըրցի թուրքը: Հրապարակին մէջ այդ կողմերէն յայտնի ըմբիշ մը կ'ուզէ տեղւոյն վրայ չափուիլ հայուն հետ:

- Կեակուր տեօլը (անհաւատի զաւակ),- կ'ըսէ,- հետս պիտի խաղաս:

Յաննէեան չի կրնար օձիքը ազատել: Ճսրի աղաները, որոնք շուկայի մէջ մեծ վաճառականներ էին նաեւ, հրապարակ կը բանան ու կը հովանաւորեն խաղը: Մուսե-տիկը ամբողջ շուկան ոտքի կը հանէ:

Մենամարտը կարճ կը տեւէ: Յաննէեան յաղթամարմին ըմբիշը երկու ոտքերէն բռնելով կը շարտէ աղաներուն ոտքին առջեւ, կը նստի կուրծքին ու գլուխը կ'անցընէ տակը:

Հոս ԵԼՍ օրենքը կը յարգուի: Վաճառականները կը պատուեն զինք, երկու ջորիի բեռ ցորեն կը նուիրեն անոր, իշուկին պախուրցը կը կապեն մէկ ջորիին, ու զինք ալ ձիու մը նստեցուցած խումբ մը պահակներու հետՔեսապկը ճամբեն:

- Այդ առտու կուշտ կորկոտապուր մը դգալ ած էի, որ իրիկուներ տուն դարձայ, կորկոտապուր կերած չըլլայի՝ դիակս կը բերէին Պազարէն,- կ'ըսէ եղեր Հաննէեանը:

Գ.-Եղանակային խաղեր. ասոնք կապուած էին բնակլիմական պայմաններուն հետ եւ բնական պայմաններու չգոյութեան մէջ չէին կատարուեր: Բերենք քանի մը օրինակ.

- **Մուշտուկը** կը խաղային ձմրան, յորդառատ անձրեւներէ ետք, երբ գետինը կակուղ կ'ըլլայ, մանաւանդ սածիլ անոցներուն մէջ կամ հեղեղներու բերած թաց տիղմերուն վրայ: Խաղցողները կ'ունենան կէսէն մէկ կանգուն երկարութեամբ ու բթամատի հաստութեամբ, ուղիղ ու ծայրը խնամքով սրած ցափկներ, որոնք **մուշտուկ** կը կոչուին: Ատկէ՝ խաղին անունը: Մուշտուկով կը խաղային քանի մը խաղեր: Տանք մէկը.

Նախ կ'որոշուի, թէ ո՛ւր պէտք է խրուի ցափկը. Ապա կ'որոշեն հեռաւորութիւնը ու գիծ մը կը քաշեն: Այդ գիծին վրայ են պէտք է արձակուի ան: Վիճակով ընտրուած մէկը գիծին վրայ են կ'արձակէ իր ցափկը, որ որոշ թեքութեամբ մը կը խրուի որոշուած տեղը: Եթէ ձախողի խրել՝ կրկին անգամներ նետել ու իրաւունք ունին բոլորը: Նետումը կ'ըլլայ նիզակ արձակելու ձեւով, ցափկը կը բռնեն մատներով ու ձեռքը օդը բարձրացնելով նշան առնելու համար մէկ-երկու անգամ առջեւ բերել-ետ տանելէ ետք՝ կ'արձակեն: Միւսներուն նպատակն է իրենց արձակած ցափկներով տապալել կամ թռցնել գետնի ցափկներէն մէկը՝ միեւնոյն ատեն իրը խրելով գետին: Նետողը իր տապալած ցափկին տերը կ'ըլլայ կամ միաւոր կը շահի, իսկ իրը կը ձգէ գետին: Տափկը տապալելէ ետք եթէ իրը չխրի գետին՝ կրկին կը նետէ խրելու համար միայն:

Խաղին կը մասնակցին տասնեակ մը պատանիներ՝ մէկական ցափկներով: Նետումները կարգով կ'ըլլան: Տափկը կորսնցնողը

խաղեն դուրս կ'ելլէ, գարնողը կը տիրէ անոր: Շարքը վերջանալ է ետք
ցափկները կը մնան: Շարքին առաջինը կը վերցնէ իր ցափկը ու կը
հարուածէ այսպէս՝ մինչեւ որ յոգնին կամ մէկը կարողանայ
գրաւել բոլոր ցափկները:

Յաղթողները իրենց ցափկները ուրախութեան կանչերով կը
բերեն ու կը նետեն Տարընտասի կրակին մէջ: Շատեր ամբողջ ձմրան
շահած ցափկները կը պահեն այս օրուան համար: Խարոյկին շուրջ
մեծերը գնահատանքի խօսք կ'ըսեն ասոնց:

Կօշիկները չաղտոտել ու կամ չցեխոտել ու համար տղաք իրենց
ոտնատեղերուն սալ քարեր կը դնեն՝ գիծէն մինչեւ նիզակներուն
խրուած տեղը:

- **Չաթուօլ վիտ** (երկճղի ոտք). այսպէս կը կոչուէին բազուկի
հաստութեամբ երկու հաւասար երկճղի փայտեր: Անոնք վարի ծայրէն
շուրջ մէկ կանգուն բարձր՝ ոտքի տեղ ունէին, որոնք սովորաբար
բնական ելուններ կ'ըլլային: Կ'անցնէին անութներուն տակ,
ոտքերը կը դնէին ելուններուն վրայ ու կը քալէին: Վարժութիւն
կը պահանջէր: Նախապէս քալելու այս ձեւին կը վարժուէին բոլոր
պզտիկները: Քեսապի գիւղացի դպրոցականները դպրոցի ճամբուն
վրայ ձմեռնային գետակներու մօտայ դափսի ճիւղեր կը պահէին, ու
զանոնք կ'օգտագործէին յորդառատ անձրեւներու ժամանակ, երբ
քարէ քար ցատկելով հնարաւոր չէր ըլլար միւս ափը անցնիլ:

- **Կիժէօյը** կը խաղային գարնան, փարթամ սեզով ծածկուած հարթ
արօտավայրերու կամ կալերու մէջ: Ծանրաբարձի խաղ է: Խաղին կը
մասնակցին երկու կամ ասելի գոյգեր, ընդհանրապէս 12 տարեկանէն
վեր տղաք: Չոյգերը կ'ըլլան սովորաբար հասակակից եւ նոյն
ամրութեամբ տղաք: Նախ վիճակով կ'որոշուի, թէ ո՞վ պիտի ըլլայ
շալկողը, ո՞վ՝ շալկուողը:

Ուրեմն՝ շալկողները քանի մը մեթր տրամագիծով շրջանակ մը
կը կազմէին: Միւսները կը բարձրանային անոնց ուսերուն ու
ոտքերը կ'ամրացնէին շալկողի անութներուն տակ: Մէկը միւսին
ուսին ելլելու այս ձեւէն կ'երեւի կու գայ խաղին անու-նը՝
կիժէօյը (փոքրիկ կուժը):

Ծալ ակին նստողները այդ դիրքով գնդակ կը խաղային: Մեկը կը նետեր, միւսը կը բռներ ու կը փոխանցեր երրորդին կամ ուրիշներին: Ասոնք պետք է աշխատէին գնդակը գետին չծագել, անպայման բռնել: Իսկ շալկողները այդ պահուն կը փորձէին զանազան շարժումներ ընել, ցատկոտել, վազել, որպէսզի ո՛չ գնդակը փոխանցողը ճիշդ փոխանցեր, ոչ ալ միւսը բռնել կարողանար: Նստողը կրնար գետին գլորին: Ան որ գնդակը բռնել չէր կրնար՝ կ'ըլլար շալկող, իսկ միւսը կը բարձրանար անոր ուսերուն: Խաղը կը շարունակուէր մինչեւ որ բոլորը յոգնէին:

Խաղը ուներ երկրորդ տարբերակ մըն ալ: Եթէ մեկը գնդակը բռնել չյաջողէր՝ անմիջապէս կ'իջներ ընկերոջ ուսէն ու կը փախէր: Ծալկողը կը վազէր, կ'առներ գնդակը ու կ'արձակէր փախող ընկերոջ ետեւէն: Եթէ կրցաւ հարուածել՝ այս անգամ ինք կ'ելլէր միւսին կռակը, այլապէս՝ նոյն դերը կրկին վերցնելով խաղը կը շարունակուէր:

Դ.- Զանգիստի պահերու խաղեր. կը բաւեր, որ երկու հոգի կամ չորս հոգի քովէ քով գային, օրինակ՝ հօտաղներ, քաղիան ընող աղջիկներ, թաղի յայտնի հանգստավայրին մէջ մեկ-երկու ծերունի, միջօրէի հանգիստընող այրեր, կը սկսէին նստակեաց խաղի մը:

Այդպիսի խաղ մըն է **ՎԷԳՐ (ԳԱՋՐՈՂ)**, զոր երկու հոգիով կը խաղան: Առանձին ալ կը խաղցուի:

Վեգը նարտիի քարի պէս գետին նետելով միաւոր կը հաւաքուի: Վեգին Ա. ծայրը ունի 1000, Բ. ծայրը՝ 100, Ա. նեղ կողը՝ 20, Բ. նեղ կողը՝ 10 միաւոր: Վեգին տափակ ու լայն կողերը միաւոր չեն բերեր: Այնքան ատեն որ վեգը միաւոր կը բերէ՝ խաղը կը մնայ առաջին խաղցողին, իսկ երբ վեգին տափակ կողմերը գան գետին՝ խաղը կ'անցնի երկրորդ խաղցողին:

Խաղը աստիճաններ ունի.

Առաջին աստիճանը 100 միաւոր է: Այսքան միաւոր հաւաքողը **հոլտմը** կը շահի, կ'ըսէ.

- Զոլտմը դըրաի քի:

10 հոլտը հազար միաւոր է:

Երկրորդ խաղցողը եթե **հոլտ** մը շահի՝ կ'ըսէ .

- Զոլտ մը հէ՛նիցա

Ամէն նիստի անպայ ման մէկ **հոլտ** կը խաղան :

Տասը **հոլտ** շահողը բացարձակ յաղթական կը նկատուի : Խաղը կրնայ օրեր, շաբաթներ, ամիսներ տեւել , կամ բախտ է՝ տեսնես մէկ նետումով ալ 1000 միաւորը բերիր : Խաղը ինչպէս մանուկներ, այդպէս ալ մանաւանդ ամէն օր միեւնոյն տեղը ժամանցի եկող ծերունիներ կը խաղան :

Խաղը աւելի արագ վերջացնելու համար կրնան երկու , նոյնիսկ երեք վեգով խաղալ : Խաղցողը երեք վեգերն ալ մէկ անգամէն կը նետուի հաւաքուած միաւորները կը գումարէ : Մէկէ աւելի վեգերով խաղալու պարագային եթէ մէկ վեգն իսկ միաւոր բերէ՝ խաղը տակաւին խաղցողին ձեռքը կը մնայ :

Ե. Պատահական խաղեր. ասոնք կը կատարուէին յանկարծ, պարզապէս աշխատանքի մաս կը կազմէին, աշխատանքի ընթացքին կը ծնէին - ու կը կատարուէին, ինչպէս՝ ճամբորդութեան, հունձքի, բեռ կրելու, աղբիւրէն ջուր լեցնելու, կուժը շալկելու եւ բազում այլ առիթներու ժամանակ :

- Գիւղերու մէջ սովորութիւն էր խոպան արտերուն մէջ **խուրա տընկիւղ** (խուրա տնկել) : **խուրան** արտին զանազան կողմերը, սահմաններուն, թումբերուն ու պատե-րուն վրայ իրար վրայ դիզուած երեք կամ աւելի քարերու բուրգն էր : Խուրաներ ունեցող արտին մէջ կենդանիներ արածելը, խաղալը, անկէ ցախկտրելն ու խոտ քաղելը արգիլուած էին : Խուրա տնկել պարզապէս ըսել էր **արտա մի՛ մտներ** : Անշուշտ, արտին տէրը խուրա տնկելու լուրջ պատճառներ կ'ունենար երբեմն : Ձմրան կամ գարնան անձրեւներէ ետք այդպիսի արտի մը մէջ երթելէ կը, զայն արօտավայրի վերածելը՝ հողը կ'ամրացներ : Գարնանային հերկի ընթացքին հողը **չէր քակուեր**, արօրը կը կոտրուէր, եզները կը յոգնէին, բրիչը քարի զարնուելու պէս ետ կը դառնար ու կը դժուարացներ հողագործին գործը : Կրնար տուևը կապած անասուններուն համար այդ արտին խոտը քաղել, կամ իր անասունները ամէն օր հոն կը կապեր ու ինք ուրիշ գործի կ'երթար :

Բայց արտերուն մեջ մեկտեղ եկած հովիւ տղոց համար խուրան չարածի խաղի մը սկիզբն էր, մանաւանդ երբ աղքատ արօտավայրերու դիմաց այդ արտը ծածկուած ըլլար փարթամ խտերով: Զովիւ տղաք կը կազմէին շարք մը եւ ափի մեջ առած քարերով կը սկսէին թիրախ դարձնել զանոնք: Կը տապալէին վերի երկու քարերը միայն: Խաղը կարգով կ'ըլլար. ամենէն աւելի խուրա քանդողը կը պարծենար...: Յետոյ՝ հօտն ու նախիրը կը մտցնէին ներս: Տեսէ՛ք, ազատ գետին է, խուրա չկայ...: Անշուշտ՝ ուշ կամ կանուխտերը կու գար եւ՝ ասոր խօսք մը, անոր խօսք մը՝ գիւղին մեջ **տակվէնը** (վեճ, վիճաբանութիւն) կը սկսէր...: Գաղտնիքը մեջտեղ կ'ելլէր, խնդիրը կը հասներ քանի մը տղոց ծեծին: Դրացիները բարկացած հայրերու ձեռքերէն կ'ազատէին պզտիկները ու խրատով կը վերջացնէին: Խուրա տնկողն ալ կ'ամչնար, եթէ լուրջ պատճառ մը չունենար խուրա տնկելու...

- **Իեղը հե'նիցա** (իւղը հանեցի) կ'ըսէր ան, որ կարողանար ձմրան օրերուն արեւկող պատի մը տակ իրարու սեղմուած տղոց սեղմ շարքին մեջ ուսերու եւ թիկունքի ուժով իրեն ալ տեղ բանալ ու շարքը աւելի սեղմել: Բոլորին ձեռքերը գրպաններուն մեջ կ'ըլլային. ձեռքը եւ ոտքը պէտք չէր գործածուեր: Ծարքի տղաքը կուրծքով կը փորձէին ընդդիմանալ, ուս-ուսի տալ, որ նորեկը տեղ չգտնէ: Այս խաղը տարածուած էր դպրոցականներու մեջ, զբօսանքներուն: Տաքնալ ու համար ստեղծուած կատակախաղ էր:

- Մեծերն ալ ունէին նման խաղ մը՝ **տակըշմա** Կը կատարուէր երկար ճամբորդութեան ընթացքին, օրինակ, շուկայի օրը, երբ այսինչ գիւղի մարդիկ Քեսապ երթալ ու ճամբուն վրայ կը հասնէին այլ գիւղի մը խաչմերուկին, ու հոն, պատի մը տակ ծնկածալ նստած շունչ մե կ'առնէին: Ասիկա շատ հանդիպող երեւոյթ մըն է գիւղերուն մեջ: Յանկարծ միւս գիւղին մարդիկ կը յայտնուէին խաչմերուկին: Ասոնք գաղտնապէս կ'որոշեն խաղ ընել: Կը մօտենան, կը բարեւեն ու յանկարծ ամեն ոք վազելով կը փորձէ տեղաւորուիլ նստողներէն մեկուն գիրկին մեջ: Նստողը ձեռքի եւ ոտքի կոշտ շարժումներով կը փորձէ նստողը գետին հրել կամ տակէն փախիլ, միւսն

ալ իր ամբողջ ուժով կը փորձե տեղաւորուիլ : Ոմանք կը ձախողին, գետին կ'իյնան, իսկ ուրիշներ կը յաջողին տակինը անշարժ պահել :

- Կակուղ տեղը ձգած՝ մարդ չորս քարին վրայ կը նստի՞, - կ'ըսէին:

4.5.- ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Գիւղին մէջ ընթացիկ հիւանդութիւնները՝ հարբուխ, գլխացաւ, մարմնի քերուըտուք, պաղառութիւն, փորհարութիւն, սրտխառնուք, - կոտորտուք, դող, աչքի կարմրութիւն՝ առաջին հերթին կը կապէին եղանակին եւ օդերեւութաբանական փոփոխութիւններու հետ, կ'ըսէին՝ **«ՊԼՕՂՁ ՄՂՍՈԼՕԾ Ի ԻՔԻ»** (պաղ մտած է քեզի), **«Է՛րիվ քիշտ-ԼՕԾ Ի զը»** (Արեւը զարկած է), **«ԳՕՐՍՂ ԲՈՆՈԼՕԾ Ի զը»** (դողը բռնած է), **«Տըրթանու դիարւօծ Ի եի»** (հովը զարկած է) եւ այլն: Կը կապէին նաեւ սնունդին հետ. **«Խըշխըշ կիրուօծ Ի»** (խըշխըշ՝ բանջարեղէն կերած է), **«ՈԼՄԻԼ ԷՆ դիարւօծ Ի եի»** (կերակուրը դպած է), **«ՊԼՂՈԼՕՂ ԶՈԼՆԱ»** (կոկորդ չունի, իմա՝ քիչ սնունդ կ'առնէ): Կամ կը վերագրէին արտաքին միջամտութեան մը՝ ականջին մէջ ջուր մտնելուն, աչքին մէջ շիւղ մտնելուն, խայթոցի մը եւ այլն:

Յիւանդութիւններէն ոմանք կը կապէին տարիքի հետ. ջերմութիւնը՝ ակռայ հանող մանուկներուն, ծունկի ցաւը՝ հասակ նետող տղոց, ուշագնացութիւնը՝ դաշտանի շրջանին հասած աղջիկներուն, սրտխառնուքը՝ նոր յղացած կնոջ եւ այլն: Վաթսունը անց՝ առողջական ամեն բողոքի ատեն կ'ըսէին «անկէ է, անկէ», այսինքն՝ ծերութեան կ'ակնարկէին:

Յիւանդութիւններէն ոմանք ժառանգական կը նկատուէին, ինչպէս կանխահաս մահը, խոֆածութիւնը, խլութիւնը, կուրութիւնը, ձեռքերու դողը, կարգ մը ի ծնէ քերութիւններ, ջղայնոտութիւնը: - Ժառանգական կը սեպուէին նոյնիսկ բարոյական գիծեր՝ գողութիւնը, կնամուլութիւնը, հայհոյելը, նենգամտութիւնը եւ այլն, թէեւ **«Չարթէն վոլօրդ կըննի սպաղը»** (փուշէն երբեմն վարդ կ'ելլէ) կ'ըսէին:

Յիւանդութիւններ չարիքի փոխատուցում կը նկատուին. **«Է՛նիսկ**

կուլ երրվան» (անէծք կայ վրան), **«ԻԼ ԷՆ միէիկը սըր խաղդիէ զը»** (ո-
ւրիշի մեղքը պիտի խեղդէ զինք):

Ուրիշ հիւանդութիւններ չարի ազդեցութիւն կը նկատուէին. «-
Թըլ ըսըմ ինկուօծ ի ի մի» (հմայիլ ինկած է մեր մէջ), **«Գեր կէ'արւօծ
ի»** (գիր կապած է), **«Աշգ դիարւօծ ի եի»** (աչք դապած է), **«Լիզզէօ ի ա»**
(լեզու է ասիկա, այսինքն՝ չարախօսութեան հետեւ անք է):

Անբուժելի հիւանդութիւնները, յատկապէս՝ համաճարակները,
չուօր կը կոչուէին. **«Չուօրը գընսուօց զը»** (չարը տարաւ զինք), **«Աս
չուօր ի, չըջուղնուօր»** (ատիկաչար է, չի բուժուիր), **«Չուօրը ինկո-
ւօվ պառվընէն»** (չարը ինկաւ պառաւներուն մէջ): Չարը անէծք է
նաեւ. **«Չուօրը տանազըսքի»** (Չարը տանի քեզ), **«Չուօրը իյնաի քի»**
(չարը մէջդ իյնայ՝ չարով վարակուիս) եւ այլն:

Մահացու համաճարակները՝ մահտարածամները քեսապցիները **մո-
ւօհ** կը կոչուէին: Քէօրքիւնէի մէջ հարիւր տարեկանէն վեր կին մը՝ -
Չաթուօլ Պառուօվը, կը յիշէ եղեր 1830-ական թուականներու Մահը:
Մահի տարին ու թը-տասը տարեկան աղջիկ է եղեր: Մահին՝ դիակներն
ու անոնց հագուստները կը վառեն եղեր:

1850-ական թուականներէն իվեր Եւրոպա ու Ամերիկա ուսած
բժիշկներ եղած են Քեսապու աշխատած տեղւոյն հեքիմներուն հետ:
1890-էն ետք մէկէ աւելի քեսապցի բժիշկներ, անասաբոյժներ,
ակնաբոյժներ պարբերաբար Քեսապ կ'ելլէին իրենց աշխատանքի
հիմնական տեղերէն՝ Աստիոքէն, Այնթապէն, Յալէպէն, Լաթաքիայէն,
բայց մարդիկ աւելի համարում ունեցած են ժառանգաբար իւրացուա-
ծ բուժամիջոցներուն վրայ: Այդ բուժամիջոցներն են.

ա) **Բուսական դեղամիջոցներ.**- Քեսապցին դեռ մինչեւ օրս կը
ճանչնայ բուժական յատկութիւններ ունեցող բոյսեր՝ տերեւ, ցօ-
ղուն, ծաղիկ, արմատ, որոնք կը հաւաքէ ու կը գործածէ տարբեր ձեւե-
րով՝ թէյ, քսուկ, հիւթը կաթեցնել եւ այլն:

բ) **Կենդանական դեղամիջոցներ.**- Իշու կաթ կը խմցնէին կապոյտ-
հագով վարակուածներուն համար. օձի շափկը կը խառնէին գորտուկ
ու նեցողներուն ճաշին մէջ. շիշ մը ձէթին մէջ մուկ կը դնէին ու ա-
կանջացաւի ատեն կ'օգտագործէին՝ ականջին մէջ կաթեցնելով եւ այ-

լ ն:

գ) **Մարդկայ ին ու կենդանական կղկղանքն ու մեզը**.- Ձեռքին պատռու ածքին վրան միզել կու տայ ին, քոսը բուժել ու համար սեփական կղկղանքը կը քսեին վրան, կը գործածեին շան ու կատուի կղկղանքը - դեղամիջոց պատրաստել ու համար, կ'ըսեին «**գաղտուտու թենը աղտուտու թենը կը տանա**» (աղտոտու թիւնը կը տանի աղտոտու թիւնը):

դ) **Տարբեր նիւթերու օգտագործումը**.- Ծծմբաջուրով կը լոզցնէին բորոտը, մոխրաջուրով կը լոզցնէին քոր ու նեցողները, աղը կը գործածուէր վերքերու բուժման մէջ:

ե) **Խարել ով**.- Օրինակ՝ ոտքի մկանացաւը (**եէլ**) բուժել ու համար կտոր մը արեթ կը վառէին, կը դնէին վրան ու կը սպասէին մինչեւ որ մոխրանայ, ապա սիսեռի հատիկ կը կապէին բացուած վերքին, որպէսզի այրուցքը չբացուի ու ջուրերը քամին: Արեթով կը խարէին նշագեղծերու յաճախակի բորբոքում ու նեցող մարդոց վիզը, կգակին տակը եւ այլն:

զ) **Յմայական դեղամիջոցներ**.- Առատօրէն կ'օգտագործուէին: Այսպէս՝ գորտու կ ու նեցողը կը համրէր, թէ քանի գորտու կ ու նի, այդքան սիսեռ կը թրջէր ու նորալ ուսնի շաբաթը, գիշերով, կ'երթար հեռու գերեզմանատուն մը, կ'աղօթէր ու կը մտներ ներս, թրջած սիսեռը փուշերու վրայ կը տնկէր ու կը հեռանար առանց ետեւ նայելու:

է) **Կախարդական միջոցներ**.- Օրինակ՝ «գրեցնել» «գիր քակել», «արճիճ թափել», «ծխել», «ուխտընել» եւ այլն: Իլ ուրդենց Աղջիկը քոսը կը կտրէր միայն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը: Աչք դպած փոքրիկը բուժել ու համար բակերէն խեշերանք կը հաւաքէին կամ կակածեալ էն գաղտնօրէն կտոր մը լաթ կը գողնային, կը վառէին ու մանուկը «կը ծխէին», շալկելով՝ այդ ծուխին վրայ կը պահէին:

Գիւղացիք հիւանդներուն հետ յատուկ վարմունք կ'ունենային, որոշ ըմբռնումներով կը մօտենային անոնց: Այսպէս՝ փոքրիկները կը դնէին հարսանիթով վարակուած հիւանդին անկողինին մէջ, որպէսզի վարակուի, որովհետեւ, «Մեծ տարիքին վարակուածները այդ հիւանդութիւնը դժուար կ'անցընեն» կ'ըսէին: Հասանիթով վարակ-

ուած փոքրիկներուն առատ քաղցրեղէն կը կերցնէին, այ ցել ուները անուշեղէն կը բերէին, հիւ անդները ուրախ կը պահէին: Գիւղին մէջ - դուռ-դրացի այրեր ու կիներ օրը մէկ-երկու անգամ կ'այ ցել էին հիւ անդին տունը: Կը հարցնէին որպիսութիւնը, փաղաքշական ու քաջալերական խօսքեր կ'ըսէին: Սովորութիւն էր հիւ անդին ու տել իքներ բերել՝ եղջիւրի ռուպ, մեղր, բուժական բոյսեր, պտուղներ: Յոգեվարքի մէջ գտնուող հիւ անդի տնեցիները առանձին չէին ձգեր, կը հսկէին հիւ անդին սնարին մօտկամ բակը կը հաւաքուէին:

Մկաններու պրկումը, ճողուածքը, ոսկրային պրկումը, կոտորուածքները, պատռուածքներն ու այրոյցքները կը բուժէին տեղւոյն վրայ: Այրոյցքները բուժելու ամենէն տարածուած ձեւը տաք ձեթին մէջ կարմրցուած կտաւէլաթերով ծածկելն էր: Գիւղին մէջ միշտաւ եղած են այս գործերէն հասկցող մարդիկ: Ոսկրային պրկումներն ու ոսկրային կոտորուածքները կը բուժէին նախկին հովիւները. ոսկորը կը բռնէին, կը քաշէին, տեղը կը բերէին կամ կոտորուածքը կը կապէին բարակ տախտակներով: Փոքրիկ պատռուածքները բուժելու համար վրան միզել կու տային, կը կապէին լաթին մէջ աղով ձեթ դնելով: Թարախակաւ ածվերքերն ալ աղ-ձեթով կ'օծէին: Արիւնահոսութիւնը կասեցնելու համար կաշի կը քերթէին ու այդ քերթուած փոշին կը դնէին պատռուածքին վրայ: Մարմնի վրայ շատ պատռուածքներ ու բեկումներ ունեցող ծանր վիրաւորը կը ծածկէին տեղւոյն վրայ մորթուած այծի տաք մորթով ու պատգարակին վրայ դնելով կը տանէին մինչեւ հոն՝ ուրկէ քաղաք տեղափոխել հնարաւոր ըլլար:

Գիւղացի անասնապահը կը ճանչնար նաեւ կովերու եւ այծերու շարք մը հիւ անդութիւններ ու ինք կը կատարէր անոնց բուժումը: Այսպէս.

ա) **Բոր**. վերքերը կը բուժէին **գաթըրանի** ձեթով:

բ) **Թաքուօգ**. անասունին մարմինը եւ լեզուն կը վերքոտէին, եղունգները կ'իյնային, չէր կրնար քալել, բերանը կը փրփրէր: Լուիկ կը կերցնէին, լեզուն վրայ աղտոր կը քսէին, ճերմակ հողով պատրաստուած ցեխին մէջ կը կայնեցնէին:

գ) Մարմնին վրայ բացուած պատռուածքները կրնային վերքի

վերածուիլ ու որդնոտիլ : Կեօքճանկարի (**լրջօկ հըննօկ**) փոշի կը թափէին վերքերուն վրայ : Ճանճերը վրան չէին նստեր, իսկ որդերը կը թափէին :

դ) Կովը կամ այ ծը կը նիհարնայ , չի կրնար քալել , կաթը կը քաշուի : Ծիկացած երկաթով կը խարէին ոտքերուն վարի մասերը եւ եղջիւրներուն մէջ տեղը : Ոտքը արեթով կը վառէին , տեղը սիսեռ կը կապէին , սիսեռին տեղը գոյացած փոսիկէն կը սկսէին «ջուրեր» հոսիլ :

ե) **Եանիգարա** կովուն կռնակը , դունչը , շունչը պաղ կ'ըլլան . կը պառկի , ձիգ շարժումներ կ'ընէ , գլուխը գետին կը զարնէ : Պոչին ծայրը կը կտրեն , կռնակին վրայ երեք տեղ զմեկ իով կը բանան եւ վրան աղու ձեթ կը սեղմեն , ճզմուած սխտոր կը քսեն :

զ) **Յամր**. երբ կենդանին չափէն աւելի հացահատիկ ու հացեղէն կերած կ'ըլլայ : Կրնայ «ճայ թիլ» : Ծիշ մը թթու կը լեցնեն բերնին մէջ :

է) **Պնդու թիւն**. եղեգին ծայրը սիկառէթ կը վառեն ու կը դնեն յետոյ քին : Կը փորձեն մինչեւ որ մուխը ներս քաշուի , ու կովը սկսի թրթել :

ը) **Փորքշուք** (ցըրրիլ) . սովորական տարբերակներէն զատկայ համաճարակը : Անբուժելի է : 1928-ին այ սպիսի համաճարակէ մը շատ հօտեր փճացան :

4.6.- ԶԱՒՍՏԱԼ ԻՔՆԵՐ

Այս աշխատութեան տարբեր գլուխներուն մէջ , տեղին համաճայն , յաճախ անդրադարձում եղած է քեսապցի հայուն կարգ մը ըմբռնումներուն , պատկերացումներուն եւ հաւատալիքներուն : Կրկնութենէ խուսափելու կարելի ճիգով մը հոս կը բերուի շարք մը եւս , առանց ամբողջը տալու յաւակնութեան : Այսպէս .

Ա.- Մեղքն ու ամօթը նիստ ու կացի , հասարակական յարաբերութեան , անհատական վարքի շատ ու շատ երեւոյթներուն եւ հաւատալիքներուն հիմք կը հանդիսանան : Մեղքի ու ամօթի թելադրանքով կը պահուէին ծիսական կանոնակարգի մէջ մտած շատ

երեւել թներ: Այ դպէս՝

Ճաշի կը նստեին ծալ ապաստիկ՝ ծեղէ անոտ կամ փայտե ցածլիկ կլոր սեղանին շուրջ: Փոքրիկ աղամանը սեղանին դրուած կ'ըլլար, իսկ համացանն ու ջուրի թասը դրուած կ'ըլլային քովնտի տեղ մը: Տանտիկինը նախ տան մեծ անդամներուն պնակները կերակուր «**կը թափէր**»։ փոքրիկները մեծերը յարգել ու համբերել պետք է գիտնային: Տան անդամներէն մէկը կ'աղօթէր, կամ մեծին հետեւելով բոլորը կը խաչակնքէին **Իսսիւս Քըրըստիւս** ըսելով: Կշտացողը սեղանէն քիչ մը կը քաշուէր ու խաչ կը հանէր փառք տալով: Ոմանք հանդերձ ընտանեօք գոհութեան աղօթք մը կ'արտասանէին: Ոչ ոք ոտքի կ'ելլէր քանի դեռ ուտող կար: Ճաշի ատեն սեղանէն հեռանալը մեղք կը նկատուէր: Ատիկա արտօնուած էր միայն տանտիկնոջ համար:

Ուտելու ընթացքին անհրաժեշտութեան պարագային միայն ջուր կը խմէին, ինչպէս՝ երբ մէկը կծուէր, կամ պատառը **կոկորդը մնար**: Վերջին պարագային կռնակին դոփելով (**թըբըռիլ**) «**հալալ ըլլայ, սառանային կոկորդը մնայ, այդ որո՞ւն բաժինը կերար միթէ**» կ'ըսէին: Ուրեմն, կշտանալէն ու սեղանէն քաշուելէն ետք միայն ջուր կը խմէին: Խմողը նախազտիկներուն ջուր կ'առաջարկէր, ապա կը խմէր: Չուրը նախազտիկին էր: Բայց մեծ ամօթ էր, երբ ազտիկը մեծէն ջուր ուզէր:

Ճաշի ատեն երբ հիւր գար՝ ոտքի չէին ելլեր, չէին ձեռնուեր: Ատիկա սեղանը արհամարհել կը նշանակէր. Մեղք ունէր: Տան մեծը նստած տեղէն **բէ'րէյկի** (բարի եկար) կ'ըսէր ու կը հրաւիրէր, որ մասնակցի սեղանին: Երկուքէ աւելի պնդելը ամօթ կը նկատուէր:

Օրէնք էր, որ, երբ խմիչք ըլլար սեղանին վրայ, տան երէց անդամը հիւրին երկարեր գաւաթը. ամօթ էր մերժելը: Զիւրը **սաղլըք ըննու** (կենացդ, կամ ողջութիւն ըլլայ) կ'ըսէր, ու մայմը կ'առնէր ու գաւաթը տիրոջ կը վերադարձնէր: Տանտերը «**է'ննէօշ ըննու, բէ'րուօվ իկուօծ իս**» (անուշ ըլլայ, բարով եկած ես) կ'ըսէր ու պատառ մը աղանդեր կը հրամցներ անոր: Զիւրը այդ պատառն ալ կ'առնէր «**աբրէքէն իշնա ձիր սըղուներ**» (օրհնութիւն իջնէ ձեր սեղանին) կամ համով պատառին համար տանտիկինը գնահատելով «-

տիւմին ձառվէդ» (ձեռքերդ միշտ մնան) կ'ըսէր:

Մեղք կը նկատուէին ջուրին, հացահատիկին, հացին եւ աղին հետ կապուած հետեւեալ արարքները.

Ջուր խմողին հետ խօսիլը, զայն ձեռնելը, անոր զարնելը կամ վախցնելը: «**Ջուր խմած ատեն նոյնիսկ օձը սաքանելը մեղք ունի**» կ'ըսէին:

Յոսող ջուրին համար կռիւ ընելը, իմս-քուկդ ըսելը մեղք էր: Ամէն ոք ամէն ջրհորէ ջուր խմելու իրաւունք ունէր: Մեղք էր անցորդին ջուր չտալը:

Մեղք էր ցանքը կոխկռտելը, անոր մէջէն ճամբայ բանալը:

Տորենի հասկը գետին ձգելը մեղք ունէր: Խոզանը անասուն չմտցուցած, տան մանուկները, խուրձ կապող կիները, բայց առհասարակ մինուճար ու այրի կիներ հասկաքաղ կ'ընէին (**հէ'սգըղիլ**): Արտեն կալ ձգուող ճամբաները նեղ ու թուփերով երիզուած կ'ըլլային, շալակէն հասկեր կը մնային հոս ու հոն: Արտատէրը կը հաւաքէր զանոնք: Տարեց մարդիկ կը վերցնէին գետին ինկած հասկը, կը փշրէին ափի մէջ ու ցորենը կը դնէին բարձր քարի մը վրայ, թռչուններուն համար կամ ափով կու տային անասուններուն:

Թնրի պատին փակած հացի կտորին, որ այրած կ'ըլլայ, **գըրմէօշ** կ'ըսէին: **Գըրմէօշը** փոքրիկներուն կու տային ու կը հաւատացնէին, թէ այրած հաց ուտողը հարուստափտի ըլլայ:

Հացի կտորը գետին տեսնելն ու անցնիլը յանցանք կը նկատուէր: Կը վերցնէին, կը համբուրէին, ճակատին կը տանէին, ապա անասունի կու տային կամ բարձր տեղ մը կը դնէին: Ճաշասեղանը չսրբած՝ հացի փշրանքները առանձին կը հաւաքէին ու կը դնէին կրիճին մէջ:

Հացը **նուր նաղ'մաթ** (արբ.՝ լոյս շնորհք) կը համարէին: Սեղանին վրայ փոքրիկ-ներուն հացի հանդէպ յարգանք կը սորվեցնէին: «**Յէ'ցցեն խալ իշուօղը է'նութա կը մընու**» (հացին ծուռ նայողը անօթի կը մնայ) կ'ըսէին: Հացը երբեք ծուռնկի վրայ կամ երեսնի վար չէին դնէր: Հացը դանակով կտրելը մեղք կը նկատուէր:

Հացը փոխ կը տրուէր: Հացին փոխը չվերադարձնելը մեղք կը

Նկատու էր:

Աղին հետկապուած հետեւեալ ըմբռնումները ունէին.

Աղը հացին պէս սուրբ կը նկատու էր: Զացը առատութիւն է, իսկ աղը՝ համ:

Աղն ու հացը բարեկամութեան, սիրոյ ու հաւատարմութեան նշաններ են: **«Ուօղիոց կու միր միէջ»** (աղ ու հաց կայ մեր միջեւ) կ'ըսէին, երբ կարիք ըլլար հաստատել ու բանի մը ճշմարտութիւնը: Մեկու մը սեղանին գտնուիլ կը նշանակէր **աղ ու հաց** հաստատել տանտիրոջ հետ:

Աղով ափ կը կերցնէին մորթուող կենդանիներուն, մանաւանդ մատաղցուններուն: Օրհնուած աղը կը պահէին ամբարին մէջ: Գետին թափած աղը շուտով կ'աւլէին ու կրակը կը թափէին: Աղը գետին թափող փոքրիկին կ'ըսէին. **«Մեղք ունի, միւս աշխարհին մէջ թափած աղին հարկները թարթիչ ներովդ փոխի հաւաքես»:**

Աղը կը գործածէին բուժումներու ատեն: Աղը լայն տեղ ունէր կախարդական բուժումներուն մէջ եւս:

Աղը կը պահէին յատուկ պտուկի մէջ: Աղի պտուկը պատին կախուած կ'ըլլար: Ոմանք տունը կառուցելու ատեն աղի կարասը ուղղակի կը շարէին պատին մէջ: Կարասը որոշ թեքութեամբ կը դրուէր, որպէսզի զայն ներսէն գործածելը կարելի ըլլար: Աւերակ թաղերու մէջ դեռ այդպիսի հետքերու կարելի է հանդիպիլ: Կարդ Բդոյեանը ուսումնասիրելով Անահիտ դիցուհին խորհրդանշող կանացիակերպ աղամանները՝ կու տայ նաեւ պատին մէջ շարուած աղամանի մը գծանկարը՝ Քեսապէն²⁶: Զեղինակը կը յայտնէ, որ ան իր նիւթը քաղած է քեսապցի Պետրոս եւ Կարօ Մախշիկեան եղբայրներու **«Քեսապի Զայ կական Շրջանի Ազգագրական Նիւթեր»** ձեռագիրէն, ուր կը յայտնուի, որ Քեսապի մէջ թոնրատուն կառուցելու ատեն, պատի ներսի երեսին, հորիզոնական դիրքով, կը թաղէին կճուճ-աղամանը՝ բերանը դէպի սենեակը ուղղելով, ապանկարի ծանօթագրութեան մէջ կը գրէ. **«Բացի գործնականից, աղամանը պատի մէջ թաղելն ըստ**

²⁶ Վ. Բդոյան, **Զայ կական աղամաններ**, Երևան, 1986, նկար 86, էջ 137:

Երևույթին ուներ Անահիտի ծայրալստամունքի հետքեր՝ պարի մեջ թաքցնել անհատական մատուցները քրիստոնեության ավերմունքներից փրկել ու համար»²⁷:

Վերը նշուած թերատուները Քեսապի սովորական թերատուները չէ, այլ՝ մառանը:

Մեղք կը համարուէին նաեւ հետեւեալ արարքները.

- Տան կրակին վրայ ջուր թափելը կամ միզելը: Կրակը սուրբ կը նկատուէր: Փոքրիկներուն գիշեր ատեն կրակին հետ խաղալ չէր արտօնուէր: «**Տակդ կը թրջես**» կ'ըսէին:

- Հաշմանդամը կամ մարդկային բնական թերու թիւն մը ծաղրելը կամ կապելը:

- Մատը երկինք բարձրացնել ով աստղերը համրելը:

- Կիրակի կամ զատիկ օր աշխատիլը:

- Դրացիին ձագմայրին համար հաւ կիթ փոխտալը կամ ծախելը: Ձրի կը տրուէր:

- Նոր ծնած կովու դալէն պնակ-պնակ դուռ դրացիին կու տային, որ կովուն կաթը առատըլլար: Չտալը մեղք ունէր:

- Մեղք ունէր հայ հոյելը, գողնալը, մէկը չարաչար աշխատցնելը, իբրեւ պատիժ մէկը անօթի ձգելը, չարաչար ծեծելը, նոյնիսկ անասուններուն հանդէպ անգութ վարուիլը, հիւանդը կամ անկարը երեսի վրայ ձգելը:

- Մեղք ունէր ամէն ինչի վատնումն ու մսխումը, ագահութիւնը, տան պգտիկներուն կոկորդէն բան գրկելը, անոնց ապրուստին հանդէպ անտարբեր գտնուիլը, մանաւանդ մեղք ունէր չունենոր փոքրիկներուն տեսած ուտելիքէն զանոնք գրկելը, բուրող ուտելիք մը յղի կնոջ չհրամցնելը:

- Մեղք ունէր թուխի նստած թռչունին բոյնը քանդելը, ճուտիկները գողնալը, որսի կենդանիներուն ձագերը կամ անոնց մայրը սպանելը:

Ամօթ կը նկատուին շատ մը վարմունքներ, ինչպէս՝

²⁷ Նոյնը, էջ 90, նկ. 86:

- Ուրիշին խօսքը ընդմիջելը, մեծի ներկայ ութեան համարձակ խօսիլը, մեծերուն հետանունով խօսիլը:

- Մեծէ ջուր պահանջելը, գայն գործի մղելը, անոր թել ադրանք ընելը, մեծին բարեւ չտալը, անկէ բարեւ ակնկալելը:

- Տան մէջ բարձր խօսիլը, դրացիներուն հետ բարձրաձայն վիճաբանիլը, ուրիշին տան մէջ խօսուածին ականջ դնելը, բամբասանքը, չարախօսութիւնը, հայրենակից-ներուն մասին օտարին առջեւ վատաբանութիւնը, մէկը շատ հարցուփործելը, ուրիշի գործերով յաճախ հետաքրքրուիլը:

- Կարգը խանգարելը կամ անտեսելը, օրինակ՝ մեծը սեղան չնստած ուտելու սկսիլը, մեծ եղբայրը ամուրի եղած տեղը պզտիկին ամուսնանալը, այցելութեան ատեն մեծը անտեսելը եւ այլն:

- Օտարին կամ անցորդին պատառ մը հաց զլանալը, դրացիին պէտք եղած գործիքը չտրամադրելը:

- Մեռել ատան մէջ խնդալը, կնոջ համար՝ խնդալը ընդհանրապէս, հեռուէ հեռու մէկը կանչելը:

- Ուրիշին սուգը ծաղրելը, մեծահասակները կապկելը:

- Դուռ-դրացիին վնաս հասցնելը, անոնց բարի կամեցողութիւնը, պարկեշտութիւնը, առատածեռնութիւնը, միամտութիւնը եւ ընդհանրապէս բարութիւնը շահագործելը:

- Յագուստ-կապուստի մէջ ամէն համարձակ նորածեւութիւն ամօթ կը նկատուէր:

Այստեղ կարելի է յիշել, որ բարոյական չափանիշներու պահպանումին մէջ համայնքային պատկանելիութիւնը երբեմն կարելորդ դեր ունեցած է: Աւետարանական համայնքին մէջ, մասնաւորաբար, ինչպէս կ'ըսուի, **հոգեւոր արթնութեան** ժամանակներուն, շեշտուած բժախնդրութիւն մը կը նկատուի: Այդպէս պատկեր մը մեզի կու գայ 1893 թուականէն, այնթապցի Յակոբ Ծնորհօքեանի կողմէ: Յիշեալին վկայութիւնը հետաքրքրական կը մնայ մեր վերի հաստատումին համար, որքանալ վկայողը իբրեւ ուսուցիչ-բարոզիչ **հոգեւոր** մթնոլորտ մը ստեղծելու ճիգ մը դրած է անոր մէջ: Ահաւասիկ վկայութիւնը.

1.- Քեսապցիները եկեղեցաւեր են: Այդ ատեն Քեսապ 12.000 բնակչութիւն ունէր, 1/3-ը՝ բողոքական: Գիւղին հարստութեան 80 տոկոսը բողոքականներուն կը պատկանէր: Եկեղեցւոյ զանգը հնչելէն հինգ վայրկեան ետք՝ այր, կին, մեծ, պզտիկ, բոլորո՛վ, եկեղեցւոյ մէջ կ'ըլլային: Պատուելին ամալին հասնելու դժուարութիւն կ'ունենէնար, եթէ հակառակ պարագային երկու վայրկեան ուշացումով գար: Ժողովուրդը սիրով պաշտամունք կը կատարէր եւ երկնային խաղաղութիւնը կը վայելէր:

Այր մարդոց եւ կանանց շարքերուն մէջ տեղ, արեւելեան պատին տակ, կէս կանգուն բարձրութեամբ տախտակեայ պատուանդան մը կը գտնուէր, որուն վրայ դրուած էր ամալինը: Ամալինին առջեւէն տարիքի կարգով ժողովուրդը խճողուած կ'ըլլար: Մօրուքաւոր ծերունիները ծնկաչոք կը նստէին եւ անոնց հետ, դարձեալ ծնկաչոք, անոնց թռնիկները: Խորհրդաւոր լռութիւն մը կը պատէր եկեղեցին: Անոնց անունները եւ դիմագիծերը լուսանկարի մը պէս աչքերուս առջեւ են տակաւին:

2.- Իմ կեցութեանս շրջանին Քեսապի մէջ ես հայ հոյանք չլսեցի: Ամբողջ գիւղին մէջ մէկ հատիկ հայ հոյող մարդ կար: Այդ մարդն ալ կարծես զազրախօսութեան հետ համաձայնութիւն կնքած էր, որ ամէն խօսքին սկիզբն ու վերջը ահաւոր կերպով կը հայ հոյէր: Ժողովուրդն ալ անոր հայ հոյանքէն պժգացած չհայ հոյել որոշած էր:

3.- Օղի չկար. եթէ երբեք դեղի համար օղիի պէտք ըլլար՝ այդ հայ հոյող մարդուն տունը երթալ ու ստիպուած էին: Ուրիշ ո՛չ մէկ տան մէջ օղի կը գտնուէր: Կը մտածեմ, թէ արդեօք հայ հոյանքին եւ ոգելից խմիչքին միջեւ գաղտնի դաշի՞նք մը կայ: Ամենայնդէպս իրականութիւնը ասիկա էր:

4.- Կիրակի սուրբ օր էր: Եթէ առանց բացառութեան, բողոքական, լուսաւորչական եւ կաթոլիկ, Կիրակիին յարգանք ընող տեղ մը կայ, այդ ալ Քեսապն է: Կիրակի օր գացող-եկող չէր ըլլար: Կիրակին եկեղեցւոյ օր էր, ընթերցանութեան օր էր, Տէրունական օր էր: Գիտեմ ընտանիքներ, որոնք ճաշի պահուն Կիրակի օրով պարտեզէն

սոխ փրցնելը մեղք կը համարէին: Իսկէնտէրունի մէջ բոլոր վաճառատուներուն եւ նաւերուն բեռնակիրները քեսապցիներ էին. անոնք Կիրակի օր բեռ չէին վերցնէր: Այս պատճառով վաճառանաւերը այնպէս կ'ընէին, որ Կիրակի օր Իսկէնտէրուն չհասնին²⁸:

Բ. Չարի ըմբռնումը զօրաւոր էր ու կը ստիպէր զգօն ըլլալ ամէն քայլ ափոխի, թէեւ կը հաւատային, որ չարը կայ ու գոյութիւն ունի մարդուն կամքէն անկախ:

Չար ժամուն, չար օրուան, չար ճամբուն, չար մարդուն, չար աչքին ու չար լեզուին կը հաւատային:

Կը մաղթէին.

- **Աստուծ չուօր ուրի, չուօր ճանկքի, չուօր մարդի հառօ** պիհի (Աստուած չար օրէ, չար ճամբայէ, չար մարդէ հեռու պահէ):

- **Աստուծ չուօր իչի, չուօր սըսդի, չուօր լիզվի հառօ** պիհի (Աստուած չար աչքէ, չար ժամէ, չար լեզուէ հեռու պահէ):

- **Ամին, Աստուծ բարնիէդ լըսսի** (Ամէ՛ն, Աստուած բերանէդ լսէ),- կը պատասխանէր միւսը:

Չար աչքին կը հաւատային: Ձախորդութեան մը պարագային՝ կով մը սատկէր, ծառ մը չորնար, ջրհոր մը ցամքէր, մէկը հիւանդանար՝ **ազգ դիարւօվ ի** (աչք դպաւ անոր) կ'ըսէին: **Չար աչք** ունեցողներուն ետեւէն «**ըրկը ազգը կուրնու**» (երկու աչքերը կուրնան) կ'անիծէին, անոր կոխած տեղերէն խեշերանքներ կը հաւաքէին կամ գաղտնօրէն անոր մազէն կամ հագուստէն կտոր մը կտրելով կը վառէին ու մուխը տան մէջ ու հիւանդին շուրջը կը պտտցնէին: Մէկը կամ բան մը չար աչքէ հեռու պահելու համար կրակ վառելուն **ծըխփիլ** կ'ըսէին, իսկ չար աչք դպցնելուն՝ **Է՛յ մըսփիլ** (ակն մտանել): Կը հաւատային, որ կապոյտ աչքեր ունեցողը **Է՛յ մըսել ու** կարողութիւն ունի: Ատոր համար ալ կապոյտ հլուն կը դնէին մանուկներու խանձարուրին վրայ, մանր տղոց լամբակին վրայ, ձիու թամբին, իշու կորթոյնքին, կովուն ճակատէն անցնող գօտիին, եզան եղջիւրին վրայ: Ձիու պայտ մը կը դնէին տան գլխաւոր դրան վրայ: Յին կօշիկ մը կամ եղջերաւոր

²⁸ **Յ. Շնորհոքեան**, Օթուգ Սէքիզ Սէնէ Էվվէլին Քեսապը, «Նոր Աւետարներ» (հայատառ թրքերէն՝ Երեսուն երկու տարի առաջ ունի Քեսապը), 1931, թիւ 18, էջ 435):

անասունի գանկ մը կ'անցընէին պարտեզի ցանկապատին մէկ ճիւղին վրայ կամ ուղղակի կը կապէին ծառին:

Ձախող ընթացող գործին մէջ չարը կը տեսնէին. կ'ըսէին. «**չ ու օ րը ի ն կ ու օ վ ի մ աք**» (միթէ չա՞րը մտաւ մէջը): Չարը վանելու համար ամէն գործէ առաջ «**ե ա հ ս ս ի ւ ս Ք ը ր ը ս տ ի ւ ս**» կ'ըսէին: Կաւէ կամ ապակեայ աման մը գետին իյնալով կտրուելու ատեն «**զ ա ր ու օ ր չ ի ւ ն ա, չ ու օ րը գ ը ւ օ ի ը ի կ ի ք**» (վնաս չունի, չարը գլուխին եկաւ) կամ «**չ ու օ րը ի ւ ու օ վ**» (չարը ելաւ) կ'ըսէին: Եթէ չկտրուէր՝ իրենք կը կտրէին «**չ ու օ րը թ ը ղ ս ա կ կ ա**» (չարը թող սատկի) ըսելով:

Չարը նշաններով կը ճանչնային: Աւելի ճիշդ, բնութեան որոշ փոփոխութիւններ, իրերու դասդասման որոշ խանգարում, շրջապատի որոշ շարժումներ ոչ բարեղէպ (**թաքս**) կը նկատուէին, այսինքն՝ կը հաւատային, որ անոնք չարին նշաններն են ու կ'աշխատէին չարի ճամբան խափանել: Այսպէս՝

- Դրան առջեւ հակառակին դարձած կամ զոյգերը հակառակ դրուած կօշիկները. Անմիջապէս կը շտկէին:

- **Կըռկըռը**, այսինքն ընտանիքի անդամներուն միջեւ ելած երկարատեւ վէճը: Կը հաւատային, որ կըռկըռ եղած տունէն օրհնութիւնը կը փախչի: «**Է՛ ս ի ւ ր ի ս տ է ն ը չ ա ղ ու ր ի, մ ի կ է ն գ ը ւ օ ի ղ ա ը ր ու տ ի ն**» (ասոր վերջը լաւ չէ, մէկուն գլուխը պիտի ուտեն) կ'ըսէին երկարատեւ վէճին ակնարկելով:

- Բաց մնացած դանակին շեղբը կամ մկրատը: «**Չ ու օ ր լ ի զ զ Ե օ ի**» (չարախօս լեզու է) կ'ըսէին ու կը գոցէին:

- Գիշերով ձիթ ծամելը: Ատիկա **ոսկոր ծամել** կը նշանակէր:

- Բուի մօտիկ վայոցը: Աման մը ջուրը առած դրան առջեւ կ'ելլէին եւ եօթ ափ ջուր կը թափէին: Ամանին մէջ ջուր պէտք չէ աւելնար: Ոմանք հողաթափը դրան առջեւ ծունռ կը դարձնէին:

- Գիշեր ատեն սուլելը:

- Ծան ոռնոցը: Կը հաւատային, որ տիրոջ վնաս կը բերէ: Ոռնացող ու կաղկանձող շունը կը քարկոծէին, բաց դանակը գետին կը խրէին:

- Առտու կանուխ ճամբորդին ճամբան կտրող սեւ կատուն: Ընդհանրապէս կատուին սեւը չէին սիրեր տունը պահել:

- Անախորժ հիւրին ետեւէն եօթ ափ ջուր կամ եօթ ափ հող կը նետէին:

- Յաւուսն աքլորի նմանող կանչը: Անմիջապէս կը մորթէին:

- Աջ աչքի **խաղալը** բարի, իսկ ձախաչքի **խաղալը**՝ չար կը նկատէին: Ոմանց քով հակառակը կրնար պատահիլ: Չար աչքի կոպին վրայ շիւղ մը կը թքոտէին, կը դնէին:

- Գունաւոր խոշոր բզեզ մը՝ **քապալ աք**, երբ տուն մտնէ՝ կը հաւատային, որ լուր կամ հիւր կը բերէ. «**Եթէ բարի ես՝ մնացիր, եթէ չար ես՝ հեռացիր**» կ'ըսէին: Ու կը հետեւէին շարժումներուն:

Չարը վանելու համար «**Իսսիւս Քըրըստիւս**» կ'ըսէին ու կը խաչակնքէին: Ատիկա կ'ըլլար գրեթէ ամէն նոր շարժումէ մը առաջ. այսպէս՝

- Ամբարը բանալու, որեւէ մթերք առաջին անգամ գործածելու, պարէնը ամբարելու կամ կարասին մէջ լեցնելու ատեն, ալիւրը ամբարէն առնելու եւ խմոր պատրաստելու ատեն, իսկ շաղը վերջացնելէ ետք ափով կը ծեծէին խմորին երեսը եւ աջ ափի կողմով երեքական հարուածով երկու գիծերով խաչ կը շինէին **Իսսիւս Քըրըստիւս** ըսելով: Նաեւ՝ խմորը գնտելու, թոնիր մտնելու, ճաշը կաթսայէն առաջին պնակին մէջ պարպելու (**թէ'փիլ**՝ թափել՝ ճաշը պնակին մէջ լեցնել), հացը կտրելու, հացի փշրանք մը գետին ձգելու եւ վերցնելու, առտու ախոռին դուռը բանալու, կովը կթելու, կաթը մերելու եւ **մածունը կտրելու** ատեն:

- Ճամբորդելու կամ դաշտային որեւէ աշխատանք սկսելու պահուն: Ջրհոր բացողները նոյնը կ'ըսէին հետեւեալ մաղթանքով.

Եաիսսիւս Քըրըստիւս,

Ո՛վ Յիսուս Քրիստոս,

Տըսնըսվըրկը տիճէը միէգ փիւս:

Տասներկու տաճիկը

մէկ փոս:

Բարբառին մէջ թուրքին **տաճիկ** կ'ըսէին:

- Մութ տեղ մը մտնելու, ճրագը վառելու եւ մարելու, գիշերը դուռը գոցելու, անկողին մտնելու, առտու կանուխ դուռը բանալու ատեն:

- Փայլակի, որոտումի եւ երկրաշարժի վայրկեանին, չար երագէ

մը ընդոստել էլ ու պահուն, չարագուշակ խօսք մը կամ եկեղեցւոյ մեռել ական կոչնակը Լսել ու պահուն, որեւէ վախէ ետք:

- Լոգոնոյ մանուկին վրայ ջուրի առաջին գաւաթը թափել ու, նորածին մը ուրիշի գիրկէն կամ օրօրոցէն վերցնել ու պահուն:

- Տաք ջուրը գետին թափել ու ատեն: Իբրեւ թէ սատանաները քշել ու համար **քո՛ շ, քո՛ շ, քո՛ շ** կը կրկնէին:

- Ասուպմը անցնել ու պահուն: **Մուրազ** կ'ուզէին:

- Սրբավայրի մը կամ գերեզմանոցին քովէն անցնել ու ատեն առտու կանուխկամ ուշ ժամու մը:

- Նորալուսինը առաջին անգամ տեսնել ու ատեն՝ ամենասիրելի մէկուն դեմքին նայել ով անոր համար մուրազ կ'ուզէին:

Կարգ մը երեւոյ թներու իւրովի մէկնութիւն կու տային.

- Երբ պզտիկ մը յաճախ գետին իյնար՝ **«Ի՞նչ է, կերածը թե՞ փէ»** կ'ըսէին. մայրը եկեղեցիին աւել կը տանէր:

- Եթէ խմորդ շուտքացիւր՝ կ'ըսէին **ամուսինդ քեզ շատկը սիրէ:**

- Երբ կատուն թաթով երեսը շոյէր՝ **Լուար**, կ'ըսէին, թէ հիւր պիտի բերէ: Նմանապէս, երբ մանուկ մը երկարօրէն չորեքթաթ քալէր սենեակին մէջ կամ ծռելով երկու ոտքերուն մէջէն ետեւ նայէր:

- Երբ հաւը շատքրքրուէր, կ'ըսէին, թէ անձրեւ պիտի գայ:

- Երբ ոտքիդ տակը քերուէր՝ **«ճամբորդութիւն պիտի ընես»**, իսկ եթէ կռնակդ քերուէր՝ **«ծեծ պիտի ուտես»** կ'ըսէին: Երբ աջ աիդ քերուէր՝ **«բարի եկար պիտի ըսես»**, իսկ երբ ձախ աիդ քերուէր՝ **«- դրամ պիտի տա»** կ'ըսէին:

Գ. Առասպել ականը կ'ապրէր որոշ հաւատալ իքներու մէջ. Կարգ մը կենդանիներու առասպել ական յատկութիւններ կու տային ու կը հաւատային կարգ մը առասպել ական էակներու գոյութեան: Այսպէս՝

- **Օձը մարդուն դեմ քէն կը պահէ**, - կ'ըսէին: Օձ տեսնողը երբ օգնութիւն կանչէր, կ'ըսէր. **«հոս մարդ մը կայ»**, կամ **«մարդը պատը մտաւ, զենքը բերէք»**, այսինքն օձին դիմաց «օձ» բառը չէին ըսեր:

- Սեւ օձէն (**հանաք**) թէեւ կը խրտչէին, բայց կ'ըսէին, թէ թունաւոր չէ ու սերունդէ սերունդ նոյն շրջանին մէջ կը բնակի ու մարդոց հետ կը բարեկամանայ: Կ'ըսէին, թէ սեւ օձը գեղեցիկ

աղջկան կրնայ սիրահարիլ ու մանաւանդ գեղեցիկ երգին ու նուագին կը մօտենայ : Գարատուրանի մէջ Կընտըր Նանան կերակուր կը դնէր իր կիսաւեր տան մէջ բոյն դրած սեւ օձին եւ թոյլ չէր տար, որ սպանեն զայն : Մեղք է կ'ըսէին :

- Կը հաւատային, որ արջը կրնայ սիրահարուիլ սիրուն կնոջ, կրնայ առեւանգել զայն ու անկէ կէս արջ-կէս մարդ զաւակներ ունենալ : Իբր թէ պատահած դէպքի մը մասին ալ կը պատմեն, անուն ու վայր կը նշեն, իբր արջը շալակտար դեռատի կին մը կը փախցնէ, կը տանի իր քարայրը, զայն կը հոգայ, գիւղէն կուժ, հացի տաշտ, ալիւր, մեղուի կոճակ կը գողնայ կը տանի կնոջ, գոյգ զաւակներ կ'ունենայ, գիւղէն օրօրոց կը տանի, իսկ երբ մարդիկ կը գտնեն որջը եւ արջը սպանել կ'ուզեն, կատաղօրէն կը պաշտպանէ կինն ու զաւակերը :

- Գիւղացիք կը հաւատային, որ որոշ հնավայրերու մէջ պահապանի դերով օձեր կ'ապրին : Անոնք դարաւոր կեանք ունին ու միշտ կը հսկեն աւերակին մէջ գտնուող գանձերուն վրայ : Ասոնք իբր կարճ ու հաստ կ'ըլլան, պսպղուն ու լուսաւոր եղջիւրներ կ'ունենան, երբ դուրս ելլեն՝ ոչ թէ կը սողան, այլ կը թաւալին : Գիեշրով միայն կրնան դուրս ելլել : Գարատուրանի ծովափնեայ աւերակներուն մէջ այդպիսի օձի մը գոյութեան մասին շատեր կը պատմեն, իբր տեսնող ալ եղեր է :

- **Արվանտը** հաստ ու երկար վիշապ մը կը պատկերանար գիւղացիներուն, որոնք կը հաւատային, որ ան կիղիցիկներուն ու հին սրբավայրերուն կամ անոնց մօտիկ աղբիւրներուն մէջ կ'ապրի : Ան կը նկատուի **Կիղիցիկ պապուկ**ին պահակը : Գարնան, մանր քարերուն տակէն կռնակը արեւուն ցոյց կու տայ եղեր. այսպէս կը պատմեն :

- Գիւղացիք կը հաւատային նաեւ Կիղիցիկ պապուկի գոյութեան, որ իբր սպիտակամօրուս ծերունի մըն է եւ որ կ'ապրի աւերակ եկեղեցւոյ մէջ : Իբր՝ Գարատուրանի վերի թաղին եւ Քէօրքիւնէի **Կիղիցիկ**ները ունին այսպիսի **պապուկ**ներ : Ծառերու մտքին մէջ անիկա գիւղին եկեղեցւոյ վերջին ուխտապահ քահանան եղած է : Կը հաւատային, որ անմեռ է : Քէօրքիւնէի **Կիղիցիկ պապուկ**ը նոյնիսկ

անուն ունի, Ս. Ստեփանոս, որ իբր վերջին քահանա եղած է ու յանկարծ անյայտացած:

- **Կիղիցիկ** կոչուած աւերակներէն, ուր վայրի պուրակ մըն ալ կ'աճի, անասուն-ներուն թարմ ցախ կամ կրակին համար վառելիք բերելը խստիւ արգիլուած էր, նոյնպէս՝ մետաղադրամ հաւաքելը: Կիղիցիկ պապուկը գիշերով քունէն կ'արթնցնէ ու ետ կը պահանջէ կ'ըսէին:

Կիղիցիկ պապուկի հաւատալիք մը ունին գրեթէ բոլոր կիղիցիկները: Քանի մը տեղ անիկա կը ներկայանայ իբրեւ կին, ինչպէս Եագուպիէ գիւղի Ս. Աննա ու խոսվայրի Ս. Աննան կամ Ներքի Գիւղի Սիվտիկիսի համանուն սրբուհին՝ Սիվտիկի կամ Սիվտիկինը (Սուրբ Տիկիինը): Այս հաւատալիքներով այս սրբատեղիները պաշտպանուած էին ամեն տեսակի մարդկային չարիքներէ, ինչպէս սրբավայրի պատկանող հողամասէն բաժին մը սեփականացնելը, պուրակէն փայտ ու ցախ կտրելը, շինարարական քար հաւաքելը, սրբավայրի պնակին մէջ դրուած դրամական նուէրները իւրացնելը եւ այլն:

- Քեսապցիք կը հաւատային կէս մարդ-կէս անասուն էակներու գոյութեան: Կը հաւատային, թէ գոյութիւն ունի վարի մասը ձուկ, իսկ իրանով ու գլուխով աղջիկ էակ մը Գարատուրանի ծովուն մէջ: Կը յիշեն քանի մը մարդոց անուններ, որ իբր անջատաբար տեսած են զայն ծովուն մէջ գտնուող Չափարօ կոչուող քարին վրայ նստած, մազերը սանրել ու պահուս...:

Դ. **Ուխտի գօրութեան** կը հաւատային: Ուխտ կը կատարէին հարազատ հիւանդի մը ապաքինման, մեկնումին, հարցի մը բարեդէպ աւարտին, կորուսեալի մը յայտնութեան, յղութեան, մուրազի մը, ակնկալուած յաջողութեան մը, սպասուած լուրի մը համար եւ այլն: Ուխտի կատարման եղանակներն ալ տարբեր կ'ըլլային, օրինակ՝ մանչ զաւակ ունենալ ու պարագային մինչեւ եօթ տարեկան մազերը չկտրել, մինչեւ մէկ տարեկան ուրիշի լաթերով մեծցնել: Կային բոպիկ ոտքով եկեղեցի երթալ ու, եկեղեցւոյ մաքրութիւնը ընել ու, աբլոր մը զենել ու եւ կիղիցիկին մէջ ուխտապուր պատրաստել ու

ու խտեր: Գեշ երազի վրայ ու խտ կ'ընէին, նուէր մը կը ձգէին մօտիկ կիղիցիկի մը մէջ՝ սրբանկար, սուրբ գիրք, դրամ. Լաթի երիզներ կը կապէին ու խտավայրի մօտիկ սուրբ համարուած ծառի մը ոստերուն: Ներկայիս այդպիսի ծառ մըն է Գարատուրանի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ առջեւ գտնուող դափնին: Սուրբ ծառեր նկատուած են նաեւ ձիթենին եւ փշոտ կաղնին: Ննջեցեալներու համար հոգեհանգիստ կատարել կու տային, գերեզման կ'այցելէին: Վարդավառի ու խտագնացութեան կը մասնակցէին, խոյ մը մատաղցու կը տանէին, եկեղեցւոյ համար նուէր կ'առնէին՝ մեծ սրբանկար, կանթեղ, մոմակալներ, վարագոյր եւ այլն: Բացի Քեսապի Պալլումէն, այժմ՝ Թուրքիա, ու խտի կ'երթային Մուսալեռ՝ Ս. Թովմաս առաքեալի վանքը, Եագուպիէի Ս. Աննա եւ Արամոյի Ս Գեորգ եկեղեցիները: Քեսապի տարածքին մէջ տասնեակներով մանր ու խտավայրեր՝ կիղիցիկներ կային: Նախապէս, երբ արգելք չկար, Երուսաղէմ ու խտի կ'երթային, ձեռքի վրայ դաջուածքով կը վերադառնային ու **հաճի** կամ **մուղտուսի** կը կոչուէին:

Ներկայիս, առաւել յայտնի ու խտակատար վայրեր են Գարատուրանի Ս, Ստեփանոս եկեղեցին, վերի թաղի Կիղիցիկը, Քեսապի Ս. Մարութէն ու Ներքի գիւղի մատուռը եւ Սիվտիկինը:

Ե. Անէծքի ուժին կը հաւատային: Անուղղայ վարմունքի համար **անիծուօծ** (անիծած) կը կոչէին ենթական: Մէկու մը դժբախտութիւնը բացատրելու համար «**անիէսկ կու երրվան**» կ'ըսէին: Կը թելադրէին այնպիսի վարմունք ունենալ, որ անէծքի չ'արժանանաս: Կ'ըսէին նաեւ, որ ամէն մարդու անէծքը չի բռներ: Կը զգուշացնէին մօր անէծքէ: Աղջկայ մը հետ գաղտնօրէն տեսակցող տղուն մայրը կը զգուշացներ. «Աղջկան մեղքը չմտնես, յետոյ երեսի վրայ ձգես. անէծքը շատ ծանր կ'ըլլայ» կ'ըսէր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ատենախօսու թիւերը կը յանգի հետեւեալ գլխաւոր եզրակացութիւններուն.

- Քեսապի այժմու հայկական գաւառակը կազմուած է 15-16-րդ դարերուն՝ Անտիոք, Աֆամիա եւ Լաթաքիա քաղաքներու շրջանակին մէջ միջնադարուն գոյութիւն ունեցող հայ հոծ բնակչութեան տարտղնումին, յարատեւ տարածք ու թիւ կորսնցնելուն ու մնացածներէն մէկ հատուածին այս մեկուսի շրջանակին մէջ համախմբումին հետեւանքով: Նոյն ձեւով կը կազմուին Անտիոքի մինչեւ մեր օրերը հասած հայկական միւս մեկուսի բնակավայրերը՝ Պէյլանի եւ Սուէտիոյ գաւառակները, Ռուծի հովիտի, ՔիւրտՏաղի եւ Լաթաքիոյ մերձակայ գիւղերը եւ այլն:

- Օսմանեան տիրապետութեան յետագայ դարերուն շրջանի հայերը գոյատեւած են յաճախ իրարու հանդէպ սուր հակամարտութիւններ ունեցող թուրքմէն շրջաններու աղաներու ենթակայութեան տակ, տեղացի քեհիաներու միջոցով, ծառայած են անոնց ու երբեմն օգտուած են անոնց հակամարտութիւններէն: Իրենց ազգային ու կրօնական ինքնութիւնը կրցած են պահել գլխաւորաբար բարբառը, նիւթական ու հոգեւոր մշակոյթի միւս բաղադրիչները անաղարտ պահելով:

- Եգիպտոսի Մուհամմէտ Ալիի որդի Իպրահիմ փաշայի կարճատեւ իշխանութիւնը (1832-1842) քրիստոնեաները ազատեց ծանր տուրքերէ

եւ թուրք կառավարիչներու եւ աղաներու կամայական բռնութիւններէն: Ասիկա ալ պատճառ հանդիսացաւ, որ Քեսապի մեկուսի հայութիւնը առեւտուրի միջոցով բացուի արտաքին աշխարհին:

- 19-րդ դարու կէսէն սկսեալ շրջանը ասրեցաւ արեւմտահայութեան բոլոր մեծ իրադարձութիւնները՝ օտարադաւանութեան մուտքը ու կրօնական համայնքներու ստեղծումը, հայ առաքելական համայնքի թեմական եւ եկեղեցական տկարութիւնը, ազգային գաղափարներու ներհոսքը, 1890-ական թուականներու համիտեան բռնակալութիւնը, 1909-ի աղէտը, անոր յաջորդող վերականգնումի տարիները, 1915-ի տարագրութիւնը, երբ կորսնցուց իր բնակչութեան աւելի կան երկու երրորդը:

- 1850-ական թուականներէն շրջանի հայութեան մէջ եկեղեցական յարանուանութիւններու կազմութիւնը ունէր արտաքին եւ ներքին պատճառներ: Օտարադաւանութիւնը կը թելադրուէր ինչպէս օսմանեան իշխանութիւններէն ու աղայական կամայականութիւններէ պաշտպանուելու, այնպէս ալ տնտեսական ու կրթական գետնի վրայ ապահով կռուաններ ապահովելու համար: Քեսապի պարագան ցոյց կու տայ, որ ազգային գաղափարախօսութեան ազդու հոսանքներն ու ազգային դաստիարակութիւնը կրնան օղակել այս տարանջատումները:

- Օսմանեան բանակի պարտութենէն ետք, Առաջին աշխարհամարտէն անմիջապէս ետք, վերապրողները կը վերադառնան Քեսապ, ուր՝ մինչեւ ֆրանսական գաղութատիրութեան հաստատումը՝ 1922 թուական, Քեսապը կառավարեցին նախկին լեզեոնականներէ կազմուած Չինուորական Իշխանութիւնն ու Ազգային Միութիւնը: Անոնցմով պայմանաւորուած էր վերապրողներու վերադարձը եւ Քեսապի վերականգնումը:

- 1939-ին, հակառակ թուրքիոյ կամքին, Քեսապ կը մտնէ Սուրիոյ Լաթաքիոյ նահանգի կազմին մէջ՝ տարածքին գրեթէ կէսը կորսնցնելով: Աղեքսանդրէթի սանճաքի մաս կազմող Պէյլանի, Սուէտիոյ, Գրըգխանի եւ Քուրտ Տաղի հայերը, կը հեռանան իրենց

դարաւոր բնակավայրերէն: Քեսապսեպմըն է իրեն հարաւ-արեւելեան թուրքմէնական շրջաններու թուրքիոյ կցուելու ճամբուն վրայ: Ատովալ կը բացատրուի 2014 թուին թուրքիայէն ու անոր հովանաւորութեամբ կատարուած ներխուժումը Քեսապի շրջան: Յեղասպանութիւնը շարունակուող գործընթաց է թուրքիոյ համար:

- Մինչեւ 1950-ականները քեսապին համեմատաբար նոյն ժառանգութիւնը կը կրէր երկրագործութեան, անասնապահութեան, անտառային տնտեսութեան, տնայնագործութեան ու արհեստներու, տան կառոյցին ու յարդարանքին, խոհանոցին ու տարազին մէջ: Ունէր փակ տնտեսութիւն. գիւղացին իր արտադրութիւնը կը մթերէր իր ապրուստին համար ու աւելորդի ապրանքափոխանակութեամբ կ'ապահովէր անհրաժեշտը: Դրամական եկամուտը կու գար ծխախոտէն, շերամի խոզակէն, դափնիի ձէթէն, աւելորդ բերքէն, գորս քեսապի վաճառականները կ'արտածէին:

- Այժմ Քեսապը գլխաւորաբար պողպատեւորութեան շրջան է: Ան նաեւ Սուրիոյ ամենայայտնի ամառանոցներէն մէկն է: Բնակչութեան եկամուտի հիմնական աղբիւր-ները կը հանդիսանան ամառանոցային ու զբօսաշրջութեան ծառայութիւնները՝ մանր առեւտուրը, ճաշարանային սպասարկութիւնը, պանդոկային ու տնային վարձակալութիւնը եւ այլն: Յայտնի է նաեւ դափնիի օճառի արդիւնաբերութեամբ:

- Հոգեւոր մշակոյթին մէջ Քեսապի շրջանի հայերը աչքի կ'իյնան ընտանիքի կազմութեան իրենց նահապետական ըմբռնումներով ու ծեսերով, հասարակական յարաբերութիւններով, տոներով ու տոնակատարութիւններով, խաղերով ու հաւատաւիքներով, որոնք նոր ժամանակներու մէջ, նիւթական մշակոյթի փոփոխութեան հետ, իրենց կարգին, կենցաղավարութենէ դուրս կու գան կամ կը փոխակերպուին:

- Վերջին հարիւր տարուան մէջ երեք անգամ տեղահանութիւն ապրած Քեսապի շրջանը, հակառակ բնակչութեան նուազումին ու օտար տարրի մը շրջան կայք հաստատած ըլլալուն՝ կը շարունակէ իր գոյութիւնը: Գաղութը թեմական-եկեղեցական, ազգային-

մշակութային ու կրթական իր բոլոր օղակներով սերտորեն կապուած է հայ ինքնութեան հետ: Արեւմտահայերէնը բոլորին գրաւոր ու խօսակցական լեզուն է: Այսուհանդերձ բոլորին մօտկայ բազմաշերտ մշակութային առօրեայ մը. բոլորը կը տիրապետեն պետական լեզուին՝ արաբերէնին, խօսակցական թէ գրաւոր, իսկ դպրոցի միջոցով նաեւ գիտեն անգլերէն: Ծանօթ են թրքերէնին:

- Բարբառը տակաւին հաղորդակցութեան լեզու է չափահաս հայրենակիցներու միջեւ: Հասարակական համախմբումի տարբեր առիթները՝ տօները, հարսանիքները, յուղարկաւորութիւնները ու միջավայրը, ուր ապրած են դարերով, զբօսաշրջութեան զարգացումը ու «պատար մը Հայաստան» տեսնել փափաքող հայ այցելուներն պատճառ կը դառնան, որ մարդիկ ապրեցնեն հինօրեայ նիւթական ու հոգեւոր մշակոյթի որոշ տարրերը:

Քեսապափտի շարունակէ հետաքրքրութեան առարկայ ըլլալ հայ բարբառագիտութեան, բանագիտութեան ու ազգագրութեան համար:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒ ԱՃ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒ ԹԵԱՆ ՑԱՆԿ

1.- ԴԻԼ ԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒ ՂԹԵՐ

- 1.1. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Դ., Սահակ Բ. - Խապայան Կաթողիկոս Կիլիկիո (1891-1940 թթ.), կազմեց՝ Սանտրո Բեհբունդյան, Երևան, 1997:
- 1.2. Դիլան Յալեպի Թերրա Սանթա Ֆրանչիսկեան վանքի, 1909-ի Աղետին Գնիէի լատին համայնքի եւ Յալեպի Թերրա Սանթա վանքի միջեւ փոխանակուած հեռագիրներու թղթածրար, Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004, էջ 365-375:
- 1.3. Դիլան Լաթաքիոյ Յայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ. Սովետս Վրդ. Ոսկերիչեան, «Լազքընէյի եւ ճիսիրի Առաջնորդարանի Վիճակաց Յայ Գիւղերու Ընդհ. Յուլցակը», 1911, Ա. եւ Բ. տոմարներ, Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Ա. հատոր, Յալեպ, 1995, էջ 393-455:
- 1.4. Դիլան Լաթաքիոյ Յայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ. Ս. Փ. Ա. (Սիմոն Փ. Այանեան) «Քեսապի եւ Շրջ. Գիւղերու Ընդհ. Բնակչութեան Տուժար, 6/6 920 (ը. թ. 3/16)» եւ «Պաղճաղաս Գիւղի Արձանագրութեան Տետրակ, 24 Յուլիս 1920», Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004, էջ 231-292:
- 1.5. Դիլան Լաթաքիոյ Յայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ. ստացուած նամակներու թղթածրար, Լաթաքիա, Սուրիա:
- 1.6. Ֆրանսական բանակի փաստաթուղթեր - Քեսապի ինդիրները, Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004, էջ 394-405:
- 1.7. Քեսապի հայ աւետարանական համայնքի եկեղեցիներու եւ Յալեպի Շրջանային Միութեան Վարչութեան (Սթասիոն ժողով) միջեւ փոխանակուած նամականի, 1930-1940, Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004, էջ 411-461:
- 1.8. Դիլան Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի. Քաղաքական ժողովի ատենագրութեանց 1944-1960-ի տոմարներ, Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, Յալեպ, 2004, էջ 470-485:

- 1.9. Դիւան Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի. Ուսումնական Խորհուրդի ատենագրութեանց տոմարներ, Յալէպ, Սուրիա:
- 1.10. Դիւան Յալէպի Յայ Կաթողիկէ Առաջնորդարանի, խառն նամակներու թղթածրար, Յալէպ, Սուրիա:

2.- ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԻՐՔԵՐ

Ա. ՀԱՅԵՐԷՆ

- 2.1. Աբէլեան, Ալպերթ Ս., Քեսապէլ Իր Գիւղերը, յառաջաբան ու ծանօթագրութիւններ՝ Երուանդ Յ. Քասունի, Պէյրութ, 2002:
- 2.2. Աբրահամյան Աշոտ Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Ա. հատոր, Երևան, 1964:
- 2.3. Աբրահամյան Աշոտ Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Բ. հատոր, Երևան, 1967:
- 2.4. Ալիշան Ղեւոնդ Յ., Սիսուան, Վենետիկ, 1885:
- 2.5. Ալպոմ Քեսապի Ել Շրջակայից, հրատարակութիւն Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէյրութի Մասնաճիւղի, Պէյրութ, 1955:
- 2.6. Ալսոյաճեան Արշակ, Պատմութիւն Յայ Գաղթականութեան, Ա. հատոր, Գահիրէ, 1941:
- 2.7. Ալսոյաճեան Արշակ, Պատմութիւն Յայ Գաղթականութեան, Բ. հատոր, Գահիրէ, 1955:
- 2.8. Ալսոյաճեան Արշակ, Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը Ել Յայերը, Գահիրէ, 1960:
- 2.9. Աղաւնունի Մկրտիչ Եսս., Միաբանք Ել Այցելուք Յայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:
- 2.10. Աճառյան Հրաչյա, Հայոց Լեզվի պատմութեան, Բ. հատոր, Երևան, 1951:
- 2.11. Աճառյան Հրաչյա, Հայ գաղթականութեան պատմութեան, Երևան, 2002:
- 2.12. Աճառյան Հրաչյա, Քննութեան Կիլիկիայի բարբառի, Երևան, 2003:
- 2.13. Անդրեասեան Տիգրան Վեր., Չէյթունի Տարագրութիւնը Ել -

- Սուլետիոյ Ապստամբութիւնը, Բ. տպագրութիւն, Յալէպ, 1935:
- 2.14. Անդրեասյան Տիգրան, Սվեդիայի բարբառը կամ Քիստինիգիլեզուն, Երևան, 1967:
- 2.15. Աշըգեան Շողիկ Դոկտ., Քառորդ Դար Յայերը Տուպայի Եւ Յիւսիսային Էմիրութեանց Մէջ, Տուպայ, 2008:
- 2.16. Ասատուրեան-Մանճիկեան Սեւան, Քեսապ Շրջանի Յայութեան Վիճակագրութիւն, 2006-2007, Յալէպ, 2010:
- 2.17. Ատանալեան Կարապետ Վեր., Յուշարձան Աւետարանականաց Եւ Աւետարանական Եկեղեցւոյ, Ֆրէզնո, 1952:
- 2.18. Բայրամյան Ալիշան, Ալեքսանդրեոսի սանջակի հարցը և միջազգային դիվանագիտութիւնը (1936-1939 թթ.), Երևան, 1998:
- 2.19. Գրիգորյան, Ա. Ծ., Յայ բարբառագիտութիւնն դասընթացք, Երևան, 1957:
- 2.20. Գրիգոր Տղա, Բանաստեղծութիւններ և պոէմներ, աշխատասիրեց՝ Ա. Ծ. Մնացականյան, Երևան, 1972:
- 2.21. Գուշագճեան Մարտիրոս, Մատուռեան Պօղոս (Խմբ.ներ), Յուշամատեն ՄուսաԼերան, Պէյրութ, 1970:
- 2.22. Գուշագճեան Մարտիրոս, ՄուսաԼերան Յայկական Գաղթօճախը, Պէյրութ, 1988:
- 2.23. Եղիայեան Բիւզանդ, Ատանայի Յայոց Պատմութիւն, Անթիլիաս, 1970:
- 2.24. Եղիայեան Բիւզանդ, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Յայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975:
- 2.25. Էպլիղաթեան Մելքոն Մ., Կեանք մը Ազգիս Կեանքին Մէջ, Անթիլիաս, 1987:
- 2.26. Թաւուզճեան Տ. Ներսէս Աւագ Քհն., Տառապանքի Օրագիր, Պէյրութ, 1991:
- 2.27. Թեմիրեան Ալպէռ Ս., Քեսապ, Պէյրութ, 1956:
- 2.28. Թերզեան Յակոբ Յ., Կիլիկիոյ Աղետը, Կ. Պոլիս, 1912:
- 2.29. Թիլքեան Կարապետ Ս. Վեր., Իննսուսնիսնգամեակ Քեսապի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ, 1853-1948, Պէյրութ, 1948:
- 2.30. Թորգոմ Պատրիարք, Սուրբք Եւ Տօնք Յայաստանեայց Եկե-

ղեցւոյ, Գ. տպագրութիւն, Անթիլիաս, 1981:

- 2.31. Թորոսյան Շմալոն Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987:
- 2.32. Թովուզյան Յովհաննես, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթածախների պատմութիւն (1841-1946), Երևան, 1986:
- 2.33. Իսկէնտէրեան Յակոբ, Սուէտիոյ Ապստամբութիւնը, Գահիրէ, 1915:
- 2.34. Խըլոբեան Տիգրան ճ., Ոսկեմատեան Յայ Աւետարանական Միութեան Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու, Ա. հատոր, Պէյրութ, 1950:
- 2.35. Ծոցիկեան Ս. Ս., Արեւմտահայ Աշխարհ, Նիւ Եորք, 1947:
- 2.36. Յանանյան Գ. Կ., Սվեդիայի բարբառը (Խորբեկի խոսվածքը), Երևան, 1995:
- 2.37. Յալէշեան Թովմաս, Սուսա-Տաղի ՊապեՆական Արձագանգներ, - Պէյրութ, 1986:
- 2.38. Յովհաննիսյան Ն., Սարգսյան Յ. Ս., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975:
- 2.39. Ղազանճեան Կիրակոս, Խառն Նամակներ Ուղեւորութեան, Կ. - Պոլիս, 1886:
- 2.40. Ղարիբյան Արարատ, Յայ բարբառագիտություն, Երևան, 1953:
- 2.41. Ղարիբյան Արարատ, Յայերեն նորահայտ բարբառների միևոր խումբ, Երևան, 1958:
- 2.42. Նազլեան Յովհ. Արք., Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Յայ Քոյրերու Միաբանութեան, Պէյրութ, 1948:
- 2.43. Շահպազեան Մովսէս, Յայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920), Սուրիա-Քեսապ, 1965:
- 2.44. Չոլաքեան Յակոբ, Քեսապի ժողովրդական Երգարուեստը, Յալէպ, 1980:
- 2.45. Չոլաքեան Յակոբ, Յամբած Աղբիւրը Նորէն Կը Բիւի, Յալէպ, 1981:
- 2.46. Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Ա. հատոր, Յալէպ, 1995:
- 2.47. Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Բ. հատոր, Յալէպ, 1998:

- 2.48. Չոլ արքեան Յակոբ, Քեսապ, Գ. հատոր, Չալ էպ, 2004:
- 2.49. Չոլ արքեան Յակոբ, Քեսապի Բարբառը, Չալ էպ, 1986, Բ. տպագրու-
թիւն, Երեւան, 2009:
- 2.50. Չոլ արքեան Յակոբ, Անտիոքի Մերձակայ Ռուճի Յովհիտի
Յայերը, Պատմա-ազգագրական Ուսումնասիրութիւն,
Անթիլիաս, 2006:
- 2.51. Չոլ արքեան Յակոբ, Ոսկեմատեան Քուէյթի Ազգային Վարժա-
րանի, 1961–2011, Քուէյթ, 2011:
- 2.52. Չոլ արքեան Յակոբ, Քեսապի Երեք Օրերը, 21-23 Մարտ 2014, Երե-
ւան, 2014:
- 2.53. Չոլ արքեան Յակոբ, Քեսապ, «Արեւմտեան Յայաստանի Եւ Կիլի-
կիոյ Յուշամատեններ» մատենաշարի 8-րդ հատոր, Անթի-
լիաս, 2015:
- 2.54. Պալապանեան Սարգիս (Պալապան Խոճա), Կեանքիս Տաք Ու Պաղ
Օրերը, Այնթապ-Քեսապ-Չալ էպ, Չալ էպ, 1983:
- 2.55. Պաճագեան Յովհաննէս, Գիւղական Պատկերներ, Պէյրութ,
2002:
- 2.56. Պուրսալեան Յ. Գ., Մուսաւերան Յերոսամարտը, Չալ էպ, 1954:
- 2.57. Պօղոսեան Յակոբ Պ., Յաճընի Ընդհանուր Պատմութիւնը Եւ
Շրջակայ Գոգան-Տաղի Յայ Գիւղերը, Լոս Անճելըս, 1942:
- 2.58. Պօյաճեան Տ., Յայկական Լեզուներ, Պատմական
Յուշագրութիւն, Ուոթըրթաուն, 1965:
- 2.59. Ջահուկյան Գևորգ, Յայ բարբառագիտութեան ներածութիւն
(վիճակագրական բարբառագիտութիւն), Երևան, 1972:
- 2.60. Սարաֆեան Գեորգ Ա., Պատմութիւն Անթէպի Յայոց, Ա. հատոր, Լ-
ոս Անճելըս, 1953:
- 2.61. Սարգիսեան Գարեգին Բ. Կաթողիկոս, Խորհէ՛ Եւ Մտի՛ր, Անթի-
լիաս, 1984:
- 2.62. Սարգիսեան Շահան Եպս., Յիշատակի Գիրք Գարատուրանի Ս. Աս-
տուածածին Եկեղեցւոյ Նաւակատիքին Եւ Օծման, Չալ էպ, 2-
009:
- 2.63. Սիւրմէեան Արտաւազդ Արք., Սուրիա, Ա. հատոր, Չալ էպ, 1940:

- 2.64. Սիւրմէեան Արտաւ ազդ Արք., Պատմութիւն Զալէպի Զայոց, Գ. հատոր, Փարիզ, 1950:
- 2.65. Սվազլյան Վերժինե, Կիլիկիա - Արևմտահայոց բնակչորականությունը, Երևան, 1994:
- 2.66. Սվազլյան Վերժինե, Զայոց Յեղասպանություն - ակնառեսվերապրողների վկայություններ, Երևան, 2000:
- 2.67. Վարժապետեան Սիսակ Յ., Զայերը Լիբանանի Մէջ, Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1982:
- 2.68. Վրացեան Սիմոն, Կեանքի ուղիներով, Գ. հատոր, Պէյրութ, - 1963:
- 2.69. Տէմիրճեան Վարդան Եսս., Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Զայոց թեմերու Առաջնորդութեանց, Ա. հատոր, Անթիլիաս, 1980:
- 2.70. Տէր Ղազարեան Յարութիւն, Զայկական Կիլիկիա - Տեղագրութիւն, Անթիլիաս, 1966:
- 2.71. Տէր-Միքայէլեան Նուպար Գ., Եգիպտահայ Գաղութը 10-15րդ - Դարերում, Պէյրութ, 1980:
- 2.72. Տունկեան Գրիգոր, Նիւթեր Լաթաքիոյ Եւ Շրջակայքի Զայ Ազգաբնակչութեան Պատմութեան, Զալէպ, 1983:
- 2.73. Քասունի Եղիա Վեր., Լուսաշաւիղ Պատմութեան Զայ Աւետարանական Շարժման, Պէյրութ, 1947:
- 2.74. Քեսապն Ու Քեսապին (յօդուածներու ժողովածուն), հրատարակութիւն Ամերիկայեան Քեսապիներու Ուսումնասիրաց Միութեան, Քեքսթիր, Միչըկըն, 2011:
- 2.75. Քորթոշյան Րաֆֆի, Քեսապի շրջանի պատմական հուշարձանները, Երևան, 2014:
- 2.76. Օրմանեան Մաղաքիա Արք., Ազգապատում, Գ. հատոր, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1961:

F. ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ

- 2.77. Apelian, Albert S., The Antiochians, Boston, 1960.

- 2.78. Atamian Piérre P., Histoire de la Communauté Arménienne de Damas, Beyrouth, 1964.
- 2.79. Brézol, George, Les Turcs ont passé-là. La vérité sur les massacres d'Adana de 1909, Paris, 1911.
- 2.80. Downey Gl., Ancient Antioch, Princeton University Press, New Jersey, 1963:
Տե ս ա ծ ե ն ք Դ ո կ տ. Ի պր ա հ ի մ Ն ա ս հ ա յ ի պր ա բ եր ե ն թ ա ր գ մ ա ն ու լ -
թ ի ւ ն ը ` ճ ի ւ ա ն վ ի ի Ն ա ու ն ի, Ա ն թ ա բ ի ա ա լ -Գ ա տ ի մ ա, Գ ա հ ի ր ե , -
1967:
- 2.81. Jackout, Paul, Antioche, centre de tourisme, Beyrouth, 1931.
- 2.82. Jalabert, L. et Mouterde, R., Inscriptions Grécques et Latins de Syrie, tome III, Paris, 1953.
- 2.83. Kévorkian, Raymond H. et Paboudjian, Paul B., Les arméniens dans l'Empire ottoman a la valle du génocide, Paris, 1992.
- 2.84. Sanjian Avedis K., The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion, Harvard University Press, 1965.
- 2.85. Schrader, F. de, Atlas de géographie historique, Paris, Librairie Hachette et C^{ie}, 1896, Etats France de Syrie au XII^{me} Siécl.
- 2.86. Mésérian, Jean, S. J., Expédition archéologique dans L'Antioche Occidentale, Beyrouth, 1964.
- 2.87. Rey, E., Les colonies franques de Syrie, Paris, 1883.
- 2.88. Ternon, Yves, Les arméniens - Histoire d'un génocide, Paris, 1977.
- 2.89. The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Document presented to Viscount Grey of Falladon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, London, 1916.
- 2.90. Գ ո ս ա ր ա Ֆ ա յ Է գ , Ա լ -Բ ա հ հ ա լ ա Ֆ ի Մ ու լ հ ա Ֆ ա գ ա թ Ի տ լ Է ա (Ճ ա ն ա պ ա -
ր հ ո ր դ ն եր ը Ի տ լ ի ա ի Ն ա հ ա ն գ ի ն Մ Է ջ) , Ա . հ ա տ ո ր , Չ ա լ Է ա , 1985:
 . فايز قوصرة, الرحالة في محافظة ادلب, الجزء الأول, حلب, 1985 .
- 2.91. Գ ո ս ա ր ա Ֆ ա յ Է գ , Ա լ -Բ ա հ հ ա լ ա Ֆ ի Մ ու լ հ ա Ֆ ա գ ա թ Ի տ լ Է ա (Ճ ա ն ա պ ա -
ր հ ո ր դ ն եր ը Ի տ լ ի ա ի Ն ա հ ա ն գ ի ն Մ Է ջ) , Բ . հ ա տ ո ր , Չ ա լ Է ա , 1988:
 . فايز قوصرة, الرحالة في محافظة ادلب, الجزء الثاني , حلب, 1988 .
- 2.92. Ե ու ս Է Ֆ Է լ -Չ ա բ ի մ , Ս ու ը ի ա Ու Է լ -Ա հ տ Է լ -Ու ս մ ա ն ի (Ս ու ը ի ա ն
Ե լ Օ ս մ ա ն Ե ա ն Դ ա ր ա շ ր ջ ա ն ը) , Բ . տ պ ա գ ր ու թ ի ւ ն , Պ Է յ ր ու թ , 1980:

- 2.93. Մուլալ ԷՖ Մաճհուլլ, Մուզաբարաթ Թարիխի Է Ան Յամլ Էթ Իպրահիմ Փաշա Ալա Սուրիա (Անանուս հեղինակ, Յուշագրութիւններ Իպրահիմ փաշայի Սուրիա Կատարած Արշաւանքի Մասին), - Խմբագրեց ու ներկայացուց իրաւաբան Ահմետ Ղասսան Սիպանո, «Գութէյաթ» հրատարակչատուն (առանց վայրի ու թուականի նշումի):
- 2.94. Շալհութ ճըրճոս, Լուղաթ Յալապաս-Սըրիանի Է (Յալէպի Ասորերէնը), Բ. տպագրութիւն, Յալէպ (թուական չ ունի): جرجس شلحت, لغة حلب السريانية, طابعة ثمانية, حلب.
- 2.95. Ուարտ Նախլ Է, Յատարաթ Անթաքիա Ապրալ-Ուսուր (Անտիոքի - Մշակոյթը Դարերու Ընդմէջէն), Սան Փաուլօ, 1956: نخلة ورد, حضارة انطاكية عبر العصور, سان باولو, 1956.
- 2.96. Պախաշ Նաում, Ախապր Յալապ (արաբ.՝ Յալէպի Լուրեր), Յալէպ, 1985: نعوم بخاش, أخبار حلب, الدفتر الأول, حلب, 1985.
- 2.97. Պիթար Ղայտիլիաս, Ալ-Լազգի Է Ապրալ Զաման (Լաթաքիան Ժամանակի Ընթացքին), Ա. հատոր, Դամասկոս, 2001 غيد إلياس بيطار, اللاذقية عبر الزمن, الجزء الأول, دمشق, 2001.

3.- ՅՈՂԻ ԱՃՆԵՐ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

- 3.1. Աբէլեան Ալպերթ, Էջ Մը Քեսապի Գաւառաբարբառէն, «Յուզամեայ Զրոյցներ», Պոսթոն, 1928, էջ 408:
- 3.2. Ադամեան Պետրոս Յ., Անտիոքի Անտոնեան Թեմը Եւ Քեսապի Ու Շրջակայքի Յայ Կաթողիկէ Առաքելութիւնը (1851-1948), «Աւետիք» ամսագիր, Պէյրութ, 1948, թիւ 7-8:
- 3.3. Ազգային Առաջնորդարան Բերիոյ Թեմին, Սուրիահայութեան Տագնապը Եւ Քեսապահայութեան Տեղահանութիւնը - Ամփոփ-Տեղեկագիր, «Յասկ» ամսագիր, Անթիլիաս, 2014, թիւ 5, Մայիս, էջ 484:
- 3.4. Ազգեան Յուրի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Յովուապետական Այցելութիւնը Սուրիահայութեան, «Գանձասար» շաբաթաթերթ, Յալէպ, Յոկտեմբեր Ե., 2009:

- 3.5. Ալ աթյ անեան Արշակ, Հայ Գաղութներու Ներկայ Կացութիւնը, «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ-Եորք, 1929, թիւ 3:
- 3.6. Անստորագիր, Թղթակցութիւն Լադաքիոյ, «Սիօն» ամսագիր, Երուսաղէմ, 1866, թիւ 10, 1 Հոկտեմբեր, էջ 150-154:
- 3.7. Անստորագիր, Կիլիկիոյ Վիճակը, «Արեւելեան Մամուլ», 2-միւռնիա, 1880, Սեպտեմբեր, էջ 298-301:
- 3.8. Անստորագիր, Քեսապի Դէպքը (Ականատեսի Պատմութիւն, «Լուսաբեր-Արեւ», Գահիրէ, 13 Մայիս 1909:
- 3.9. Անստորագիր, Սրտաճմլիկ Լուրեր Անտիոքէն, «Տաճար», Կ. Պոլիս, Բ. տարի, 1911, թիւ 4, 31 Յունուար, էջ 70-71:
- 3.10. Անստորագիր, Կիլիկիա՝ Հոգեւորապէս Եւ Նիւթապէս, «Տաճար», Գ. տարի, 1912, թիւ 2, 14 Յունուար, էջ 29:
- 3.11. Անստորագիր, Կիլիկեան Արձագանգ, Արժանաւոր Քահանաներու Սովը, «Տաճար», Գ. տարի, 1912, թիւ 18:
- 3.12. Անստորագիր, Լադաքիոյ Հայ Գաղութը, «Սուրիահայ Տարեցոյց», Հալէպ, Բ. տարի, 1925, էջ 216-220:
- 3.13. Անստորագիր, Քեսապ, «Սուրիահայ Տարեցոյց», Հալէպ, Բ. տարի, 1925, էջ 223:
- 3.14. Անստորագիր, «Քսան Կախաղանները» Քեսապի Մէջ, «Սուրիական Մամուլ», Հալէպ, 1926, թիւ 575:
- 3.15. Անստորագիր, Գարատուրանի Աղետը, «Հասկ» ամսագիր, 1942, թիւ 1-2, էջ 27 եւ 103:
- 3.16. Անստորագիր, Հոգշ. Գնէլ Վրդ. Գարատուրանի Մէջ, «Հասկ», 1942, թիւ 7-8, էջ 122:
- 3.17. Անստորագիր, Վեր. Յովհ. Էսքիճեան, «Ձանասէր», Պէյրութ, 1956, թիւ 17-18, էջ 45-48:
- 3.18. Անստորագիր, Քեսապի Ուսումնասիրաց Միութիւնը. Հարցազրոյց՝ Վարչութեան Ատենապետ Խաչիկ Թիթիգեանի Հետ, «Գանձասար», 10 Մարտ 1994:
- 3.19. Անստորագիր, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսը Սուրիոյ Մէջ, «Հասկ», Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 2009, էջ 843-852:
- 3.20. Գ(ալ ֆայեան) Բ(իւզանդ) Յ., Քեսապ Դարերու Ընթացքին,

«Ձանասեր», ՊԵՅՐՈՒԹ, ՍԵՎՈՒՆ-ԴԵԿՏ. 1941, Էջ 95:

- 3.21. Գապաբենճեան Գ., Սուրիա Քաղաքական, Կրօնապատմական, Կրթական Եւ Տնտեսական Տեսակետով, «Տաթեւ» տարեգիրք, Յալէպ, Բ. տարի, 1926, Էջ 274-312:
- 3.22. Գապաբենճեան Գ., Սուրիա Քաղաքական, Կրօնապատմական, Կրթական Եւ Տնտեսական Տեսակետով, «Տաթեւ» տարեգիրք, Գ. տարի, 1927, Էջ 224-256:
- 3.23. Գարատուրան, Յայր Սուքիաս Էփրիկեան, «Բնաշխարհիկ Բառարան», Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Վենետիկ, 1903-1905, Էջ 496:
- 3.24. Գարտաշեան Արտաշէս Յ., Նիւթեր Սուրիոյ Յայ Գաղութիւն Պատմութեան համար, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Գ. գիրք, Յալէպ, 1985, Էջ 280-295:
- 3.25. Գլընճեան, ՏԵՐ Արամ Քահանայ, Քեսապի Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Վարժարանը Երէկ Եւ Այսօր, «Գանձասար», 7-Յունիս 1994:
- 3.26. Գուշազճեան Մարտիրոս, Սուսա Լերան Գոյամարտը, Մարտիրոս Գուշազճեան Եւ Պօղոս Մատուռեան (Խմբ.ներ), «Յունշամատեան Սուսա Լերան», ՊԵՅՐՈՒԹ, 1970, Էջ 319 ; Սուսա Լեռնցիք Այնճարի մէջ, Նոյն տեղը, Էջ 496-500:
- 3.27. Դիտող (ՊԵՅԼԱՆԷՆ), Կիլիկեան Արձագանգ - Արժանաւոր Քահանաներու Սովը, «Տաճար», Գ. տարի, 1912, թիւ 18, 12 Մայիս, Էջ 259-260:
- 3.28. «Եգիպտոս» յօդուածի «Յայերը Եգիպտոսում» ենթաբաժինը, «Յայկական սովետական հանրագիտարան», Գ. հատոր, Երևան, 1977, Էջ 481-483:
- 3.29. Եղիայեան Բիւզանդ, Յայեր Սուրիոյ Եւ Լիբանանի Մէջ, «Յայաստանի Կոչնակ», 1948, թիւ 29, շաբաթաթերթ, Էջ 677-679:
- 3.30. Չարմայր Քահանայ, Խմբագրական - Կիլիկիան Եւ Իր Ստիպոդական Պետքը, «Տաճար», Բ. տարի, 1911, թիւ 18, 14 Մայիս, Էջ 281-283:

- 3.31. Չաքարիա Վարդապետ, Լադաքիոյ Յայաքնակ Գիւղօրէից Ստորագրութիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը, «Սիօն» ամսագիր, 1866, թիւ 7, 1 Յունիս, էջ 97-103:
- 3.32. Էպլիղաթեան Մելքոն, Քեսապի Մակդիրները, «Բագին» ամսագիր, Պէյրուս, 1993, թիւ 1-2, էջ 108:
- 3.33. Էպլիղաթեան Մելքոն, Կոչ Քեսապցիներուն, «Ազդակ» օրաթերթ, Պէյրուս, 26 Յունիս 1990:
- 3.34. Էպլիղաթեան Մելքոն, Քեսապ, «Արեւելք» օրաթերթ, Յալէպ, 7 Օգոստոս 1948:
- 3.35. Թղթակից Բերիոյ, Կիլիկեան Մոռցուած Անկիւններ, «Արեւելեան Մամուլ», 1906, թիւ 49, 29 Նոյեմբեր, էջ 1199-1203:
- 3.36. Թղթակից Բերիոյ, Կիլիկեան Յարցեր, «Արեւելեան Մամուլ», 1907, թիւ 5, 31 Յունուար, էջ 134-136:
- 3.37. Ժոզէֆ Թիթիզեանի պատմածը, Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Գ. Խատր, Յալէպ, 2004, էջ 494-502:
- 3.38. Ինճեճիքեան Աւետիս Տոքթ., Քեսապ եւ Իր Բարբառը, Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Գ. Խատր, Յալէպ, 2004, էջ 11-178:
- 3.39. Իսկէնտերեան Չօրա, Բռնագաղթ եւ Տեղահանութիւն, Գուշագճեան Մարտիրոս, Մատուռեան Պօղոս (Խմբ.ներ), Յուշամատեան Մուսալերան, Պէյրուս, 1970, էջ 304; Ժողովուրդը Ինչ ո՞ւր էնքին Փարեցաւ, Նոյն տեղը, էջ 311-318:
- 3.40. Իրազեկ (Սեդրակ Սեմիզեան), Նոր Արշակաւան Մը եւ Իր Ապաստանեալները, «Սուրիական Մամուլ», 1926, 601-611 թիւեր:
- 3.41. Լրատու, Քեսապը Մեր Մէջ, «Մասիս» շաբաթաթերթ, Պէյրուս, 29 Ապրիլ 1947, էջ 14:
- 3.42. Խորասանեան Գ., Նիժէ Շոգենաւին Մէջ, «Բիւզանդիոն» օրաթերթ, Կ. Պոլիս, 28 Ապրիլ 1909, էջ 1, Բ. սիւնակ:
- 3.43. Կարդես, Քեսապ, «Չարթօնք», Աղեքսանդրէթ, 1924, թիւ 11:
- 3.44. Կարդես, Ազգային Կեանքը Քեսապի Մէջ, «Չարթօնք», Աղեքսանդրէթ, 1924, թիւ 28:
- 3.45. Կիլիկիան եւ Իր Ստիպողական Պետքը, Խմբագրական, «Տարճար», Բտարի, 1911, էջ 281:

- 3.46. Կիլիկեան Քահանայ ական Միոլթիլնը (տեղեկագիր), «Տաճար»,
Բ. Տարի, 1911, էջ 656:
- 3.47. Կիլիկեան Վահան Քահանայ, Կիլիկիոյ Աղետեն Վերջ, «Տա-
թեւ» կրօնական տարեցոյց, Հալէպ, Դ. տարի, 1928, էջ 232:
- 3.48. Հայ կական Բարեգործական Ընդհանուր Միոլթիլն - Տարեկան
Տեղեկագիր 1909-1910:
- 3.49. Հ. Բ. Ը. Միոլթեան Հնգամսեայ Տեղեկագիրը, «Տաճար», Բ. տարի,
1911, թիւ 30, 6 Օգոստոս, էջ 485-486:
- 3.50. Հովհաննէս Բոյմուշակյանի պատմածը, տե՛ս Վերժինէ Սվազլ-
յան, Հայոց Յեղասպանությունն, ականատես վերապրողների
վկայությունները, Երևան, 2000, էջ 312:
- 3.51. Ղազանճեան Կ(իրակոս), ճամբու Եօթեր, «Մասիս», Կ. Պոլիս,
թիւ 2523, 12 Յունուար 1880:
- 3.52. Ղարիբյան Արարատ, Հայ բարբառների դասակարգման հարցի -
շուրջը, «ՀՍՍՀ ԳԱԱ տեղեկագիր», Երևան, 1952, թիւ 8, էջ 41-58:
- 3.53. Մանճիկեան Ասպետ, Ակնարկ Քեսապի Հայ Կեանքին Վրայ, «Ազ-
դակ» օրաթերթ, Պէյրուս, 16 Դեկտ. 1992:
- 3.54. Մատուռեան Խ., Փոր Սաիտի Հայ Գաղթականաց Վրանաբաղաբը, -
Մարտիրոս Գուշագճեան, Պօղոս Մատուռեան, «Յուշամատեն -
ՄուսաԼերան», Պէյրուս, 1970, էջ 397:
- 3.55. Մատուռեան Պօղոս, 1909-ի Աղետը Եւ Մուսալեռ, Գուշագճեան
Մարտիրոս, Մատուռեան Պօղոս (խմբ.ներ), Յուշամատեն Մու-
սաԼերան, Պէյրուս, 1970, էջ 300; Հայրենի Կտուրին Տակ,
նոյն տեղը, էջ 489-490:
- 3.56. Մինասեան Միհրան, Նմոյշներ Քեսապի ժողովրդական երգե-
րէն, «Հասկ» Հայագիտական Տարեգիրք, 1983-1984, Անթիլիաս,
էջ 353-364:
- 3.57. Մինասեան Միհրան, Նմոյշներ Քեսապի ժողովրդական Խաղիկ-
ներէն, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Ժ.հատոր, 1984, -
Պէյրուս, էջ 287-298:
- 3.58. Նուարդ Ասպետ, Արամ Ասպետ, «Կիլիկեան Տարեցոյց», Ատանա,
Կ. Պոլիս, 1922, էջ 244-246:

- 3.59. Շահնագար, Կիլիկեան Քրոնիկ, «Արեւելեան Մամուլ», 1905, թիւ 15, 6 Ապրիլ, էջ 411-415:
- 3.60. Շերամեան Կ. Վ. (Կոմիտաս Վրդ. Պիւճիքեան), Պատմական Ուրուագիծ Քեսապի Յայ Կաթողիկէ Յամայնքին, «Չուարթնոց» ամսագիր, Չմմառ, 1984, թիւ 5:
- 3.61. Ովսաննա Սողոմոնեանի պատմածը, տե՛ս Չուլաքեան Յակոբ, - Քեսապ, Գ. հատոր, Յալէպ, 2004, էջ 502-508
- 3.62. Չուլաքեան Յակոբ, Քեսապի ժողովրդական Բանահիւսու թիւնը, «Ահեկան» մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրուս, 1969, Դ. տարի, թիւ 4, էջ 23-58:
- 3.63. Չուլաքեան Յակոբ, Քեսապի գրոյցներ, «Ահեկան» մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրուս, 1970, Ե. տարի, թիւ 1-2, էջ 91-108:
- 3.64. Չուլաքեան Յակոբ, Քեսապի Շրջան, «Հասկ Յայագիտական Տարեգիրք», Նոր շրջան, 2. տարի, Անթիլիաս, Լիբանան, 1994, էջ 309-329:
- 3.65. Չարլքճեան Պ., Ալաուիթ Պետութիւն - Վարչաձեւը, Սահմանները եւ Ազգաբնակչութիւնը - Յայերը Ալաուիթ Պետութեան Սահմաններուն Մէջ, «Սուրիահայ Տարեգիրք», Պէյրուս, Ա. տարի, 1929, էջ 128-140:
- 3.66. Պաճագեան Յովհաննէս, Պասիթ... Անմոռաց Օրեր, «Արարատ» օրաթերթ, Պէյրուս, 20 Մարտ 1986; Յայրենասէր, Կորովի Յեղափոխական Շաւարշ Շիշմանեան, Նոյն տեղը, 22 Փետրուար 1988, էջ 2; Իմ Յայրենի Բնաշխարհս, Նոյն տեղը, 26 Սեպտ. 1989; Արդարութիւնը Պէտք է Կատարուի, «Արարատ» օրաթերթ, 29 Դեկտ. 1989:
- 3.67. Պայան (Գերպայան) Յովհաննէս, Քեսապցիների պարը, «Յայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան, 2 Սեպտ. 1987:
- 3.68. Պապուճեան Մաղաքիա, Քեսապը Յայաստանում, Չուլաքեան Յակոբ, Քեսապ, Գ. հատոր, Յալէպ, 2004, էջ 293-352:
- 3.69. Պասթաճեան Սողոմոն Պ., Էյթունի Ապստամբութիւնը եւ Յնչակեան Կուսակցութիւնը, տե՛ս Գէորգ Ա. Սարաֆեան, Պատ-

- մոլ թիւն Այնթափ Յայոց, Ա. հատոր, Լոս Անճելըս, 1953:
- 3.70. Պարսու մեան Յ. Ս., Շուղուրի Կաթողիկոսարանը, «Յակ», 1941, թիւ 5-6, էջ 68-70:
- 3.71. Պերդուտեան Լեւոն, Ուրուագիծ Սուրիոյ Յ. Բ. Ը. Միոլթեան - Պատմութեան, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Ա. գիրք, 1975, էջ 473-489:
- 3.72. Պերպերեան Ա. Կ., Պատմութիւն Յ. Աւետ. Եկեղեցւոյ Էքիզօլուքի եւ Քեօքիլեի Մէջ, «Նոր Աւետաբեր», Յալէպ, 1929, թիւ 8:
- 3.73. Պողկանց Յակոբ, Քեսապի Բարքեր (Վարդավառ), «Որբաշխարհի Աստղ», Պէյրութ, 1927, թիւ 29, էջ 446:
- 3.74. Ս., ճամբու Նօթեր, «Որբաշխարհի Աստղ», 1925, թիւ 4, էջ 9, թիւ 5, էջ 5:
- 3.75. Սաստէ Կապրիէլ, Յայերու Ներկայութիւնը Սուրիական Ծովափին Վրայ, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, 1976-1978, Բ. գիրք, էջ 273:
- 3.76. Սահակեան Ս., Առածներ Քեսապի Ժողովրդական Բարբառով, «Ազդակ», 26 Դեկտ. 1964, էջ 2:
- 3.77. Ս(արգիսեան) Գ(արեգիս) Ա(բեղայ), Գարատուրանի Եկեղեցւոյ Յիմնարկէքը, «Յակ», 1960, թիւ 8-9, էջ 345:
- 3.78. Սարամագեան-Չիւրիքեան Մարիամ, Ինքնակենսագրութիւն, - Չոլաքեան Յակոբ, Քեսապ, Գ. հատոր, Յալէպ, 2004, էջ 181-230:
- 3.79. Սեդրակեան Յուսիկ Քահանայ, Տէր Պետրոս Քահանայ Բաբուճեան, «Գանձասար», 1993, թիւ 2(52):
- 3.80. Տամատեան Միհրան, Սուէտիոյ Դիւցազներգութիւնը, «Արեւ» օրաթերթ, 15 Յոկտեմբեր 1915:
- 3.81. Տեմիրճեան Աւետիս, Փելթէք Չաուշի Չգետնումը (Աբրահամ - Չոլաքեանի մահուան առթիւ), «Նայիրի» պարբերաթերթ, Պէյրութ, 4 Ապրիլ 1998, էջ 5:
- 3.82. Տէր Խաչատուրեան Արտաշէս, Քեսապի եւ Շրջակայքի Յայութեան Ներկայ Վիճակը, «Ազդակ», 8 Օգոստոս 1985:
- 3.83. Քեսապցի, Քեսապ, «Մասիս», Պէյրութ, 3-7 Մայիս 1947; 28 Մայիս

1947:

- 3.84. Քորթոնշյան Ռաֆֆի, Քեսաբի բնակչությունը 1906-2006 թթ., «Վարձք» հանդես, Երևան, թիվ 4, Մայիս-Հոկտեմբեր 2011, էջ 58:
- 3.85. ***, Հալեպ (նամակ խմբագրություն), «Արեւելեան Մամուլ», Թ. տարի, 1879, Օգոստոս, էջ 172-175:
- 3.86. ***, Բերիոյ Վիճակը, «Արեւելեան Մամուլ», 1886, Նոյեմբեր, էջ 499-502:
- 3.87. Շնորհօքեան Յակոբ, Օթուզ Սէքիզ Սէնէ Էվվէլին Քեսապը (- Հայ առաքելութիւն՝ Երեսունութ Տարի Առաջուն Քեսապը), «Նոր Աւետաբեր», Հալեպ, 1931, թիվ 18:
- 3.88. Wylie, Mattie R. and Patton, Zada, News of Churches Abroad, “Olive Trees”, “Olive Trees” (known as “Herald of Mission News” from 1887 to 1897. Published by the Reformed Presbyterian Church of North America, New York and Philadelphia), 1909, pp. 151-152. թարգմանութիւնը, ծանօթագրութեամբ հանդերձ՝ տե՛ս Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, էջ 377-380:
- 3.89. Trowbridge, Stephen van R., The Sack of Kesab, “Olive Trees” (known as “Herald of Mission News” from 1887 to 1897. Published by the Reformed Presbyterian Church of North America, New York and Philadelphia), 1909, pp. 205-250. թարգմանութիւնը, ծանօթագրութեամբ հանդերձ՝ տե՛ս Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, էջ 380-392:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍԻԼ

- 3.90. «Ազդակ» օրաթերթ, Պէյրուս, 22 Մարտ 2014, էջ 1; 27 Մարտ 2014, էջ 1; 28 Մարտ 2014, էջ 10; 31 Մարտ 2014, էջ 1; Ապրիլ 2014, էջ 4; 16 Յունիս 2014, էջ 1:
- 3.91. «Ամենուն Տարեգիրքը», Բ. տարի, 1955, էջ 372;
- 3.92. «Ամսօրեայ Տեղեկագիր Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան Եգիպտոսի Շրջանակին», Գահիրէ, Ա. տարի, Ապրիլ 1938, էջ 37-38; Գ. տարի, Փետրուար 1940, էջ 38-39:
- 3.93. «Արեւելեան Մամուլ», Չմիւռնիա, 1906, թիվ 50, էջ 1228-1231; 1907, էջ 96:


- 3.94. «Արեւելք» տարեգիրք, Հայ Էպ, Ա. տարի, 1948, էջ 157-158:
- 3.95. «Աւետիք», Պէյրոս, 1946, թիւ 7-8, էջ 148; թիւ 11-12, էջ 220; 1947, թիւ 1-2, էջ 32:
- 3.96. «Բիւզանդիոն», 21 Ապրիլ 1898: 16 Ապրիլ 1909, էջ 3; 20 Ապրիլ, էջ 3; էջ 3; 22 Ապրիլ, էջ 3; 24 Ապրիլ, էջ 3; 25 Ապրիլ, էջ 1; 28 Ապրիլ, էջ 1; Նոյնը, էջ 3; 30 Ապրիլ, էջ 2-3; 1 Մայիս, էջ 3; 2 Մայիս, էջ 1; 4 Մայիս, էջ 3; 5 Մայիս, էջ 3; 6 Մայիս, էջ 2; 8 Մայիս, էջ 1; 17 Յունիս, էջ 1; 20 Յունիս, էջ 2:
- 3.97. «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, թիւ 25, էջ 399:
- 3.98. «Եփրատ», օրաթերթ, Հայ Էպ, 30 Մայիս 1931:
- 3.99. «Զարթօնք», օրաթերթ, Պէյրոս, 22 Հոկտ. 1967:
- 3.100. «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1904, էջ 390:
- 3.101. «Խօսնակ», Պէյրոս, 1960, պրակ Գ.; 1961, պրակ Բ.-Գ., էջ 36:
- 3.102. Թեոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», Ը. տարի, Կ. Պոլիս, 1914, էջ 322-323:
- 3.103. «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 1921, թիւ 14, էջ 487; 1923, թիւ 46, էջ 1459; 1929, թիւ 27, էջ 858; 1932, թիւ 45, էջ 1132:
- 3.104. «Հասկ», ամսագիր, Անթիլիաս-Լիբանան, 1932, թիւ 8-10, էջ 42; 1933, թիւ 5-6, էջ 32; 1935, թիւ 2, էջ 24; 1936, թիւ 3-4, էջ 30; 1938, թիւ 5, էջ 80; 1939, թիւ 3, էջ 48; 1940, թիւ 3, էջ 41; 1940, թիւ 5, էջ 80; 1941, թիւ 3-4, էջ 55; 1942, թիւ 7-8, էջ 122 եւ 125; 1944, թիւ 5-6-7, էջ 100; 1944, թիւ 5-7, էջ 102; 1945, թիւ 1-2, էջ 32; 1950, Յունիս-Օգոստոս, էջ 24-26; 1951, Փետր.-Մարտ, էջ 75:
- 3.105. «Մասիս», Կ. Պոլիս, 7 եւ 11 Մարտ 1879; 15 Յունիս 1880:
- 3.106. «Նոր Աւետարեր», Հայ Էպ, 1928, թիւ 26, էջ 205; 1929, թիւ 18, էջ 494; 1930, թիւ 3, էջ 47; նաեւ՝ 15 Սեպտ. 1930, էջ 240; 21 Մարտ 1-931, էջ 85; 21 Սեպտ. 1932, էջ 331:
- 3.107. «Զանասէր», Պէյրոս, 1947, թիւ 7, էջ 291-222; թիւ 11, էջ 376; 1951, թիւ 5, էջ 159; թիւ 13, էջ 415; 1952, թիւ 4, էջ 108; թիւ 15, էջ 445; 1953, թիւ 15, էջ 439-440; թիւ 17, էջ 551; 1963, էջ 42-43:

- 3.108. «Տարբեւ » տարեգիրք, Չալ էպ, Բ. տարի, 1926, էջ 250:
- 3.109. «Տաճար», Կ. Պոլիս, 1911, Բ. տարի, թիւ 3, էջ 18, 34, 47; 1911, թիւ 18, էջ 282-283; թիւ 34, էջ 545:
- 3.110. «Սալնամէ Ուիլայէթ Չալապ» (Չալէպի Նահանգի Տարեգիրք), Չալ էպ, Չիճրի 1317 տարի, էջ 233, 251; Չիճրի 1321 տարի, էջ 290 եւ 319 (արաբերէն):
- 3.111. «Սաֆիր» օրաթերթ, Պէյրուս, 16-6-2014; 18-6-2014 (արաբերէն):


ՅԱԲԵԼՈՒԱԾ

ՔԵՆՍԱՒԻ ԵՐՁԱՆ

	Հայտնի գյուղ
	Հայտնի խոտ գյուղ
	Քարամու
	Քրիստոնեական գյուղ
	Հայր սուրբի տուն, ապարակ, վերանակ
	Մայրիկական առկայություն
	Մանուկատուն
	Ծածկալ
	Իրիցք-տոբիական առանձնավայր
	Բարձրաշեն եր. ամրություններ
	Ելքային
	Գետակ
	Մուսուլմանական կղերականություններ
	Անուանումները նույն թարգմանակ




2. ՔԵՆՍԱՒԻ ԵՐՁԱՆԸ :




3. Քեսապցիներու տարագրու թեան ճամբաները (1915-


- ↗ Տարագիր կարաւաններու ուղղութիւնները
- ◄ Փախտականներու ուղղութիւնը
- Գաղթակայ աններ ուղղութիւնները
- ◆ Աւաններու քաղաքներ




4. ճակատայ ին մէկ սենեկանոց երկյ արկանի տունը, կողքին կցուած սենեակը (սըրհուօկ) եւ թոնրատունը:



5. Երկկողմանի տունը (իրար կից երեք սենեակով «ըրկը կաջալ ա»):




6. Երկկողմանի (երեք սենեակով, «ըրկը կաջ ալ ա») Երկյ արկանի սաքունով տունը:



7. Առանց սաքունի Երկյ արկանի տունը:



8. Տուներ փողոցի վրայ, Քենսապ:




9. Գիւղական տան մը գլխաւոր սենեակը.

1. Կժանոց: 2. Աթոռակներ: 3. Կօշիկներ:

4. Գետնայ արկ տանող փեղկը: 5. Պահարան մը: 6. Անկողնոցը:

7. Օրօրոցը: 8. Սնտուկը: 9. Սեղանը: 10. Բարձեր, օթոցներ եւ գետնի ծածկոցներ: 11. Ծխնելոյ զիհարթակը (ճիւլմափլ տան):



10. Ծխնելոյ զով թոնրատուն:



11. Քեօրքիլևէ գիւղը՝ հիկն ուկ սորը:



12. Քեսապի Աւետարանական եկեղեցին, որ 1915-1970 առանց ծածկի մնացած էր:



13. Գարատուրանի հովիտին հիւսիս-արեւելեան հատուածը:




14. Քենսապի Ուսուցման մասնաճյուղի ճեմարանը :



15. Ուսուցման մասնաճյուղի Միուսթեան համալիրը՝ դպրոցական շենքերը, Սարդարապատ սրահը եւ պանդոկը (նախկին դպրոցը):



16. Յամեցող յիշատակներ հին օրերու Քեսապէն՝ լքուած տուներ:




17. Հին գոբիներէն մէկը:

18. Հին շուկայէն

ամսու յիմո՛ւ:



19. Երկիր էլ
Մշակոյթ
Միութեան
ջանքերով
վերանորոգուած
ամսու յիմո՛ւ Քեսապի



20. Տարագրու թեկեն առաջ տապանաքարը առհասարակ տեղական սալ քարներ, մեծ մասով՝ հայ առաջ թրքերեն



21. Տարագրու թեկեն ետք տապանաքարերը եղան Պաշոփ սրբատաշ քարով, հայերեն տարածված էր:

22. Վարի Պաղճաղազի գերեզմանատան մուտքը:




23. Մեր ժամանակներուն տարածուած են մեկ կամ երկու աստիճանով կամ առանց աստիճանի քառանկիւն գերեզմանները: Հիները կառուցուած են Պաշոփ քարով, տապանագիրով ու կանգուն խաչարձանով: Վերջերս տարածուած են բերրոյւթ միակտուր տապանաքարով:



24. Ձախին՝ Մարի Աբել Եանը. 1911թ.

Մարաշի Աղջկանց Գոլ Էճ, հայ կական տարազներու ցուցահանդեսին՝
Քեսապցի կնոջ տարազով, կողքին՝ Մշոյ տարազով օրիորդ մը:



25. Ներքի գիւղի աղբիւրը 15-16-րդ դարու խաչքարով:

21 Մարտ 2014, Քեսապը կրակի տակ:



26. 21 Մարտ 2014, Քեսապը կրակի տակ:



27. Համացանցի եւ տեղեկատուական տարբեր ուղիներով միջոցով Քեսապի ազատագրում թեան գորակցել ու կոչեր:



28. Միսաքեան Մշակու թային Կեդրոնի նախկին պատկերը
էւ պատերազմի աւերը:



29. Տապալ ած ու ջարդու ած գերեզմաններ ու խաչքարեր: